



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ОПЕРЫ ГОЛОДЧИКОВЪЯРЪ ФРОГИРИЧЪ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

*Л.Н.Толстой*

ВОЙНА  
И  
МИР

В ЧЕТЫРЕХ ТОМАХ



ТОМ  
ТРЕТИЙ

Перевод  
Стефана Зорбяна

ИЗДАТЕЛЬСТВО „АЙАСТАН“, ЕРЕВАН – 1976

*Լ.Ն. Թուստյու*

ՊԱՏԵՐԱԶՄ  
ԵՎ  
ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ  
ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՒ



ՀԱՏՈՐ  
ԵՐՐՈՐԴ

Բարգավաճութանը  
Կոմիտաս Զորյանի

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ – 1976

ԱՐԱՋԻՆ ՄԱՍ

P 1  
S 80

$$S \frac{70301(2006)}{701(01)75} 243\ 76 «\$»$$

1

1811 թվի վերջերից սկսվեց Արևմտյան Եվրոպայի եռանդուն գինումն ու ուժերի կենտրոնացումը, և 1812 թվին այդ ուժերը՝ միլիոնավոր մարդիկ (Հաշվելով և նրանց, որ տեղափոխում ու կերակրում են բանակը) շարժվեցին արևմուտքից դեպի արևելք, դեպի Ռուսաստանի սահմանները, դեպի որոնք ճիշտ նույնպես գնում-հավաքվում էին Ռուսաստանի ուժերը։ Հունիսի ամսամերկուսին Արևմտյան Եվրոպայի ուժերն անցան Ռուսաստանի սահմանները, և պատերազմն սկսվեց, այսինքն կատարվեց մարդկային բանականությանը և մարդկային ողջ էությանը հակառակ մի դեպք։ Միլիոնավոր մարդիկ միմյանց դեմ կատարում էին անթիվ-անհամար շարագրծություններ, խաբեություններ, դավաճանություններ, գողություններ, կեղծիքներ և տպում էին կեղծ թղթադրամներ, կատարում էին կողմանություններ, հրդեհներ ու սպանություններ, որոնց չի կարող ամբողջ գարերի լութացքում հավաքիլ, հաշվի առնել աշխարհի բոլոր դատարանների տարեգրությունը, և որոնց վրա, այդ ժամանակամիջոցում, մարդիկ, այդ ամենը կատարող մարդիկ, չեին նայում որպես ոճագործության վրա։

ինչն առաջացրեց այդ անսովոր գեպքը։ Որո՞նք էին զրա  
պատճառները։ Պատմագիրները միամիտ վստահությամբ ա-  
սում են, թե այդ գեպքի պատճառներն էին՝ Օլգենբուրգի հեր-  
ցոգին հասցված վիրավորանքը, կոնտինենտալ սխստեմի խախ-

© «Հայաստան» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1978

տումը, Նապոլեոնի իշխանասիրությունը, Ալեքսանդրի անդրդդ. վելիությունը, դիվանագետների սիալները և այլն:

Հետեարար, բավական էր միայն Մետերնիմբը, Ռումյան, ցեղ կամ Թալերանը, դադարի և ռառութի արանքում, մի լալ աշխատեին և ճարտարորեն մի թուղթ գրեին, կամ Նապոլեոնը գոեր Ալեքսանդրին՝ Monsieur, mon frère, je consens à rendre le duché au duc d'Oldenbourg<sup>1</sup>, — և պատերազմն էլ չէր լին:

Հասկանալի է, որ բանն այսպես էր պատկերանում ժամանակակիցներին: Հասկանալի է, որ Նապոլեոնին թվում էր, ի՞ն պատերազմի պատճառը Անգլիայի բանսարկություններն էին (ինչպես և այդ ասում էր նա Ս. Հեղինեի կղզում): Հասկանալի է, որ անգլիական պալատի անդամներին թվում էր, թե պատերազմի պատճառը Նապոլեոնի իշխանասիրությունն էր, որ Օլդենբուրգի իշխանին թվում էր, թե պատերազմի պատճառն իր գեմ կատարած բռնությունն էր, որ վաճառականներին թվում էր, թե պատերազմի պատճառը կոնտինենտալ սիստեմն էր, որը բանդեց Եվրոպան, որ տարիքավոր զինվորներին ու գեներալներին թվում էր, թե գլխավոր պատճառը իրենց՝ պատերազմում գործադրելու անհրաժեշտությունն է եղել. այն ժամանակվա լեզվակիմիստներին թվում էր, թե անհրաժեշտ էր վերականգնել les bons principes<sup>2</sup>, իսկ այն ժամանակվա դիվանագետներին՝ այն, թե ամեն ինչ ծագեց նրանից, որ Ռուսաստանի՝ Ալյուտիայի հետ ունեցած 1809 թվի դաշնակցությունը բավականաշափ հմտորեն չէին թաքրել Նապոլեոնից և որ Ա 178 տեմօրան-ը (Հուշագիրը) համարձակ չէր գրված: Հասկանալի է, որ այս և այլ անթիվ-անհամար պատճառներ (որոնց քանակը կախված է անթիվ տեսակետների տարրերությունից) էին ներկայանում ժամանակակիցներին. բայց մեզ՝ հետնորդներիս համար, որ կատարված դեպքի մեծությունը դիտում ենք իր ամբողջ ծավալով և խորանում ենք նրա պարզ ու սարսափելի իմաստի մեջ, այդ պատճառները մեզ անբավարար են թվում: Մեզ համար անհասկանալի է, որ մի- թոնավոր մարդիկ-քրիստոնյաներ, սպանեցին և տանջե-

<sup>1</sup> Տեր եղբար իմ, ես համաձայնում եմ հերցոգությունը վերադարձնել Օլդենբուրգի հերցոգին:

<sup>2</sup> Բարի սկզբունքներ:

ցին միմյանց նրա համար, թե Նապոլեոնն իշխանասեր է, Ալեքսանդրն անդրդվելի, Անգլիայի քաղաքականությունը խորամանկ և Օլդենբուրգի հերցոգը վիրավորված: Անհասկանալի է, թե այս հանգամանքներն ի'նշ կապ ունեն սպանության ու բռնության փաստի հետ. թե ինչո՞ւ միայն այն պատճառով, որ հերցոգը վիրավորված է, եվրոպայի մյուս ծայրից եկած հազարավոր մարդիկ սպանում ու ավերում էին Սմոլենսկի և Մոսկվայի նահանգների մարդկանց և սպանվում նրանց ձեռքով:

Մեզ համար՝ հետնորդներիս, ոչ պատմաբաններիս համար, որ չենք տարված ուսումնասիրության ընթացքով, և հետեարար շմթագնած, առողջ դատողությամբ դիտում ենք դեպքը՝ նրա պատճառներն անհամար են թվում: Որքան ավելի ենք խորանում պատճառների ուսումնասիրության մեջ, այնքան ավելի շատ պատճառներ ենք գտնում, և յուրաքանչյուր առանձին վերցրած պատճառ կամ մի շարք պատճառներ հավասարապես արդարացի են թվում ինքնին, և հավասարապես կեղծ իրենց չնշինությամբ համեմատած դեպքի մեծության հետ, և հավասարապես կեղծ՝ կատարված դեպքն առաջացնելու իրենց ոչ իրական բնույթով (առանց մյուս բոլոր գուգագիպած պատճառների մասնակցության): Նապոլեոնի մերժումը՝ իր գորքերը տեղափոխել Վիսլայի մյուս ափը և վերադարձնել Օլդենբուրգի հերցոգությունը, նույնպիսի պատճառ է, ինչպիսին մեզ թվում է այն, որ առաջին ֆրանսական կապրալը ցանկանար կամ ցանկանար կրկին անգամ ծառայության մըտնել. որովհետև եթե նա ցանկանար ծառայության մտնել և նույնը ցանկանար երկրորդ, երրորդ և հազարերրորդ կատարելն ու զինվորը, այնքան ավելի քիչ մարդ կլիներ նապանի գործում, և պատերազմ էլ չէր կարող լինել:

Եթե Նապոլեոնը չվիրավորվեր Վիսլայի մյուս ափը նահանջելու պահանջից և զորքին շհրամայեր հարձակման դիմել՝ պատերազմ չէր լինի: Բայց եթե բոլոր հիսնապետներն էլ ցանկանային կրկին անգամ ծառայության մտնել, դարձյալ պատերազմ չէր լինի: Նմանապես պատերազմ չէր լինի, եթե Ալիներն Անգլիայի դավերը և Ալիներ Օլդենբուրգի իշխանը և Ալեքսանդրի վիրավորանքի գգացումը, եթե ինքնակալ իշխանություն Ալիներ Ռուսաստանում, եթե Ալիներ ֆրանսական

ունույուցիան և նրան հաջորդած դիկտատորությունն ու միապե. տությունը և այն ամենը, ինչ Ֆրանսիայում ունույուցիան առաջ ացրեց և այլն։ Առանց այդ պատճառներից մեկնումեկի ոչինչ չէր կարող լինել։ Հետեաբար այդ պատճառները — միշտար. դավոր պատճառներ — զուգագիպեցին նրա համար, որ առաջ ացնեն այն, ինչ եղավ։ Եվ ուրեմն ոչ մի բան դեպքի բացառիկ պատճառ շդարձավ, իսկ դեպքը պետք է կատարվեր միայն այն պատճառով, որ պետք է կատարվեր։ Պե ոք է, որ միլիոնավոր մարդիկ, հրաժարվելով իրենց մարդկային զգացմունքներից և իրենց բանականությունից, շարժվեին արևմուտքից դեպի արևելք և ոչնչացնեին իրենց նմաններին ճիշտ այնպես, ինչպես մի քանի դար սրանից առաջ արևելքից արևմուտք էին արշավում մարդկային բազմություններ, ոչնչացնելով իրենց նմաններին։

Նապոլեոնի և Ալեքսանդրի գործողությունները, որոնց խոսքից էր կարծես կախված այն, որ դեպքը կատարվի կամ շփառարվի, նույնքան սակալ ինքնահամ էին, ինչպես և յուրաքանչյուր զինվորի գործողություն, որ արշավանք էր զնում վիճակով կամ զորակոչի ենթարկվելով։ Այդ այլ կերպ չէր կարող լինել այն պատճառով, որպեսզի նապոլեոնի և Ալեք. սանդրի կամքը (այն մարդկանց, որոնցից կարծես կախված էր դեպքը) կատարված լինի՝ անհրաժեշտ էր անթիվ-անհամար հանգամանքների զուգադիպում, հանգամանքներ, առանց դը. բանցից մեկնումեկի՝ դեպքը չէր կարող կատարվել։ Անհրա. ժեղու էր, որ միլիոնավոր մարդիկ, որոնց ձեռքին էր գտնվում իրական ուժը, — զինվորներ, որոնք կրակում էին, մթերք ու թնդանոթներ էին տանում, — պետք է որ նրանք համաձայնին կատարել հատուկնութույլ մարդկանց այդ կամքը և այդպես վարվեին անթիվ-անհամար բարդ ու բազմապիսի պատճառների բերումով։

Ֆատալիզմը պատմության մեջ անխուսափելի է անմիտ երևոյթները բացատրելու համար (այսինքն այն երևոյթները, որոնց բանական լինելը մենք չենք հասկանում)։ Որքան ավելի ենք աշխատում բանականորեն բացատրել պատմության արդ երևոյթները, այնքան նրանք ավելի անմիտ ու ահհասկանալի են դառնում մեզ համար։

Յուրաքանչյուր մարդ ապրում է իր համար, ազատություն է վայելում իր անձնական նպատակների համար և իր ամբողջ էությամբ զգում է, որ նա այժմ կարող է այս կամ այն գործողությունը կատարել կամ շփառարել. բայց հենց որ նա կատարի այն, ապա այդ գործողությունը, որ կատարվել է տվյալ պահին, դառնում է անդառնալի և պատմության սեփականություն, որտեղ նա ոչ թե ազատ, այլ նախորդոշված նշանակություն ունի։

Յուրաքանչյուր մարդու կյանք երկու կողմ ունի. անձնական կյանք, որն այնքան ավելի ազատ է, որքան ավելի վերացական են նրան շահերը, և՝ տարերային, պարսային (րօւեայ) կյանք, որտեղ մարդն անխուսափելիորեն կատարում է իրեն առաջադրված օրենքները։

Մարդ գիտակցորեն ապրում է իր համար, բայց ծառայում է որպես անգիտակից գործիք՝ պատմական, հանրամարդկային նպատակների հասնելու համար։ Կատարված արարքն անդառնալի է, և նրա ազգեցությունը, ըստ ժամանակի զուգագիպելով այլ մարդկանց միլիոնավոր գործողություններին, պատմական նշանակություն է ստանում։ Որքան մարդ հասարական սանդուղքի վրա ավելի բարձր է կանգնած, որքան սպելի շատ մարդկանց հետ է կապված, նա այնքան ավելի շատ իշխանություն ունի ուրիշների վրա, այնքան ավելի ակներև է նրա յուրաքանչյուր արարքի նախորդոշվածությունն ու անխուսափելիությունը։

«Սիրտ թագավորի ի ձեռս սսոծո»։

Թագավորը — պատմության ստրուկն է։

Պատմությունը, այն է՝ մարդկության անգիտակից, ընդհանրական, պարսային կյանքը թագավորների կյանքի յուրաքանչյուր րոպեն օգտագործում է իր համար, օգտագործում է որպես միջոց իր նպատակների համար։

Նապոլեոնը, չնայած նրան, որ իրեն թվում էր, թե այժմ՝ 1812 թվին ավելի, քան երբեմն իրենից է կախված նամակում ու թափել կամ չթափել որպես օգտագործում է իր համար, արդաւոր արդաւոր արարքի նախորդոշվածությունն ու անխուսափելիությունը։

<sup>1</sup> Թափել կամ չթափել որ ժողովուրդների արդաւոր արդաւոր արարքի նախորդոշվածությունը։

գրել էր նրան Ալեքսանդրը) այժմ ավելի, քան երբեք ենթակա էր այն անխուսափելի օրենքներին, որոնք նրան հակ սդրում էին (որոնց ազդեցությունը, ինչպես նրան էր թվում, իր նկատմամբ կամայական էր) ընդհանուր գործի համար, պատմության համար անել այն, ինչ պետք է կատարվեր:

Մարդիկ արևմուտքից արևելք էին շարժվում նրա համար, որ ոչնչացնեն միմյանց: Եվ պատճառների զուգադիպության օրենքով իրենք իրենց հարմարվեցին ու այդ դեպքին զուգադիպության հազարավոր մանր պատճառներ՝ այդ շարժման և պատերազմի համար. նախատինք՝ կոնտինենտալ սիստեմը իւախտելու համար, այնուհետև Օլդենբուրդի իշխանը, զորքերի շարժումը դեպի Պրուսիա, որը (ինչպես թվում էր Նապոլեոնին) նախաձեռնված էր միայն նրա համար, որ զինված հաշտություն կնքեն. և ֆրանսական կայսեր պատերազմելու սերն ու սովորությունը, որ զուգադիպել էին իր ժողովրդի տրամադրությանը. հսկայական պատրաստություններով տարվելը և նրանց հետ կապված ծախքեղը. և այդ ծախքեղը ծածկելու համար անհրաժեշտ շահ ձեռք բերելու պահանջը, և շացնող մեծարանքները Դրեզդենում, և այն դիվանագիտական բանակցությունները, որոնք ժամանակակիցների կարծիքով, տարվում էին հաշտություն կնքելու անկեղծ ցանկությամբ, և որոնք միայն խայթում էին երկու կողմերի ինքնամրությունը, և միլիոնավոր ու միլիոնավոր այլ պատճառներ, որ զուգակցվեցին, զուգադիպեցին կատարվելիք դեպքին:

Երբ խնձորը համում է ու ընկնում — ինչու է ընկնում: Արդյո՞ք այն պատճառով, որ ձգտում է դեպի երկիրը. արդյո՞ք այն պատճառով, որ կոթը շորանում է. արդյո՞ք այն պատճառով, որ արկի տակ շորանում է, որ ծանրանում է, որ քամին թափ կտա, թե այն պատճառով, որ ներքեւ կանգնած տղան ուզում է ուտել այն:

Դրանցից ոչ մեկը պատճառ չէ: Այդ բոլորը միայն զուգադիպություն է այն պայմանների, որոնցում կատարվում է յուրաքանչյուր կենսական, օրգանական տարերախն երևութեավ այն բուսաբանը, որը կգտնի, թե խնձորն ընկնում է այն պատճառով, որ բջջանյութը քայլքայլում է և այլն, նույնքան իրավացի կինի, ինչպես և ներքեւ կագնած այն երեխան, որը կասի՝ թե խնձորն ընկալ այն պատճառով, որ ինքն ուզում էր

ուստեղ այն, որ ինքն աղոթում էր այդ մասին: Նույնքան իրավացի և անիրավացի կլինի նա, ո՛վ կասի, թե նապոլեոնը Մոսկվայի վրա արշավեց այն պատճառով, որ նա այդ ուզեց, և կործանվեց այն պատճառով, որ Ալեքսանդրը ցանկացավ նրա կործանումը, — որքան և' իրավացի, և' անիրավացի կլինի նա՝ ո՛վ կասի, թե տակը փորած միլիոն փթանոց սարը նստեց այն պատճառով, որ վերջին բանվորը քլունգով վերջին հարվածը հասցրեց նրան: Այսպես կոչված մեծ մարդիկ պատմական ուեպքերում սոսկ պիտակներ են, որ անուն են տալիս դեպքերին, որոնք, ինչպես և պիտակները, ամենից ավելի քիչ կապ ունեն իրեն՝ դեպքի հետ:

Նրանց յուրաքանչյուր գործողությունը, որն իրենց ինքնակամ է թվում, պատմական իմաստով ինքնակամ չէ, այլ կապված է պատճության բովանդակ ընթացքի հետ և նախորշչած հենց սկզբից:

## II

Մայիսի 29-ին Նապոլեոնը դուրս եկավ Դրեզդենից, ուր նա մնաց երեք շաբաթ՝ շրջապատված արքունիքով, որ կազմը մըլած էր արքայազն իշխաններից, հերցոգներից, թագավորներից և անդամ մի կայսրից: Նապոլեոնը մեկնելուց առաջ փայփայեց իշխաններին, թագավորներին և կայսեր, որոնք դրան արժանի էին. նախատեց այն թագավորներին ու իշխաններին, որոնցից գգոռն էր. իր սեփական, այսինքն՝ ուրիշ թագավորներից վերցրած, մարդարիտներն ու գոհարները նվիրացերեց ավստրիական կայսրություն և, քննչորեն գրկելով կայսրութիւն Մարիա-Լուիզային, ինչպես իր պատմագիրն է ասում, թողեց նրան անշատումից վշտահար, անշատում, որը նա՝ այդ Մարիա-Լուիզան, որ համարվում էր Նապոլեոնի կինը, չնայած որ Փարիզում մնացել էր մյուս կինը, — թվում էր տանել շեր կարող: Չնայած այն բանին, որ դիվանագետները տակալին հաստատ հավատում էին խաղաղության հրարավորությանը և զանամիրությամբ աշխատում էին այդ նպատակով, չնայած այն բանին, որ նապոլեոն կայսրը ինքը նամակ էր գրել Ալեքսանդր կայսեր, անվանելով նրան տօռ-

sieur mon frère<sup>1</sup> և անկեղծորեն հավատացրել, թե ինքը պատերազմ չի ցանկանում և թե միշտ պետք է սիրի ու հարգի նրան, — նա գնում էր գեպի իր բանակը և յուրաքանչյուր կայարանում նոր կարգադրություններ էր անում, որոնց նպատակն էր շտապեցնել բանակի շարժումը արևմուտքից դեպի արևելք: Նա գնում էր վեց ձի լծած ճամփորդական կառեթով, շրջապատված պամերով (մանկալավիկներով), ադյուտանաներով և ուղեկցուրդով. գնում էր Պողեն, Տրոն, Դանցիդ և Քյոնիգսբերգ տանող ճանապարհով: Այդ բաղաքներից յուրաքանչյուրում հազարավոր մարդիկ դիմավորում էին նրան սրտատրոփ ու խանդավառությամբ:

Բանակը շարժվում էր արևմուտքից դեպի արևելք, և շուտ-շուտ փոխվող վեցյակը նրան տանում էր նույն կողմը: Հունիսի 10-ին նա հասավ բանակին և գիշերեց Վիլկովիսյան անտառում իր համար պատրաստված բնակարանում, լեհական կոմսի կալվածում:

Մյուս օրը նապոլեոնը, բանակից առաջ անցնելով, կառք նստած մոտեցավ նեմանին և, որպեսզի դիտի գե ։ ն անցնելու աեղը, վերնազգեստը փոխելով լեհական մունզիր հագավ ու գնաց ափը:

Տեսնելով գետի մյուս կողմը les cosaques<sup>2</sup> ու փոված տափաստանները (les steppes), որոնց կենտրոնում էր Մոսcou, լա վիլ սանտե<sup>3</sup> մայրաքաղաքն այն պետության, որ Հիշեց-նում էր սկյութական պետությունը, ուր արշավանք էր կատարել Ալեքսանդր Մակեդոնացին, — նապոլեոնը բոլորի համար անսպասելի և ինչպես ուզմական, նույնպես և դիվանագիտական նկատառումներին հ կառակ՝ հրամայեց հարձակվել, և մյուս օրը նրա գորքերը սկսեցին անցնել նեմանը:

Ամսոի 12-ին, վաղ առավոտյան, նա դուրս եկավ այն վրա-չից, որը հետու այդ օրը խփել էին նեմանի ուղղաձիգ ձախ ուժին, և հեռադիտակով նայեց Վիլկովիսյան անտարից դուրս էկող իր գորքի հոսանքը, որ տարածվում էր նեմանի վրա գյաված երեք կամրջով: Զորքը գիտեր կայսեր ներկայության

<sup>1</sup> Տեր եղբայր իմ:

<sup>2</sup> Կազակներին:

<sup>3</sup> Մրգալան բաղաք Մոսկվան:

մասին, հայացքով որոնում էր նրան, և երբ սարի վրա վրանի առջև գտնում էին նրա՝ շքախմբից բաժանված, սյուրթուկով ու լլյապայով կերպարանքը, զինվորները զիխարկները նետում էին վեր ու գոչում. «Vive l'Empereur!» և մեկը մյուսի ետևից անվերջ, դուրս էին թափվում, շարունակ դուրս էին թափվում հսկայական, մինչ այդ իրենց ծածկող անտառից, և մասերի բաժանվելով՝ երեք կամրջով անցնում էին մյուս ափը:

— On fera du chemin cette fois-ci. Oh! quand il s'en mêle lui même ça chauffe... Nom... de Dieu... Le voilà!.. Vive l'Empereur!.. Les voilà donc les steppes de l'Asie! Vilain pays tout de même.— Au revoir, Beauché; je te réserve le plus beau palais de Moscou. Au revoir! Bonne chance...— L'astu vu, l'Empereur? Vive l'Empereur!.. preur!— Si on me fait gouverneur aux Indes, Gérard, je te fais ministre du Cachemire, c'est arrêté.— Vive l'Empereur! Vive! vive! vive!— Les gredirs de Cosaques, comme ils silent. Vive l'Empereur! Le voilà! Le vois-tu? Je l'ai vu deux fois comme je te vois. Le petit caporal... Je l'ai vu donner la croix à l'un des vieux...— Vive l'Empereur!..<sup>2</sup>,— Խոսում էին այսպիս ծեր և ջահել, ամենատարբեր բնավորության դիրքի տեր մարդկանց դիմքին կար ուրախության մի ընդհանուր արտահայտություն՝ վաղուց սպասված արշավանքն սկսելու առթիվ և հիացում ու նվիրվածություն դեպի մոխրագույն սյուրթուկով մարդը, որ կանգնած էր սարի վրա: Հունիսի 13-ին նապոլեոնին բերին արաբական մի փոքրիկ զտարյուն ձի, և նա նստեց ու սրար-

<sup>1</sup> Կեցցե կայսրը:

<sup>2</sup> Հիմա մենք լավ արշավանք կկատարենք: Օ, եթե նա ինքը գլուխ անցնի, գործը լավ կերթա: Երդում եմ աստծով: Ահա նա, ուսա՞: Կայսրը: Սրբանք են ահա ասիական տափաստանները: Բայց վա՛տ երկիր է:— Յտեսություն, Բոշե, ես քեզ համար կպատրաստեմ ամենալավ պալատը Սոսկայում: Յտեսություն, հաջողություն...— Դու տե՛սար կայսրին: Կեցցե՛ կայսրը:— Ոթե ինձ Հնդկաստանի նահանգապետ դարձնեն, Գերարդ, ես քեզ կդարձնեմ Չաշիմիրի մինիստր, զա որոշված է... Կեցցե՛ կայսրը: Անա՞ հատ: Տիանո՞ւմ ես: Ես նրան երկու անգամ տեսել եմ, ինչպես քեզ եմ տեսնում: Փոքրիկ կապալը... ես տեսա, թե ինչպես նա խաչ տվեց ծերունիներից մեկին— Կեցցե՛ կայսրը:

շավ թշեց դեպի նեմանի կամուրջներից մեկը, որն անընդհատ լցվում էր խանդավառ բացականչություններով, որ կայսրը, ըստ երևույթին, հանդուրժում էր միայն այն պատճառով, որ չէր կարելի արգելել նրանց՝ այդ բացականչություններով արտահայտել իրենց սերը դեպի իր անձը. բայց այդ բացականչությունները, որ ուղեկցում էին նրան ամենուրեք, ճնշում էին նրան և ուշադրությունը հեռացնում ուղմական հոգեւրից, — հոգսեր, որ պաշարել էին նրան այն օրից, երբ նա միացել էր զորքին: Նա նավակների վրա օրորվող մի կամուրջով անցավ մյուս ափը, ուղիղ թեքվեց դեպի ծախ և պարշավ գնաց կովնոյի ուղղությամբ. կայսեր առջևից երշանկության զգացումով լցված ու խանդավառ տրամադրությամբ գնում էին գվարդիայի հեծյալ եգերները՝ ճանապարհ բանալով: Նրանց առաջից գնացող զորքերի միջով մոտենալով լայնատարած վիսլա գետին, նա կանգ առավ ափին գտնվող լեհական ուլանական գնդի մոտ:

— Վի՛վատ, — նույնական խանդավառությամբ ձայնեցին լեհերը, շարքերը քանդելով ու իրար ոտնատակ տալով, որ տեսնեն կայսեր:

Նապոլեոնը դիտեց գետը, իշավ ձիուց և նստեց ափին ընկած մի գերանի: Անխոս նշանի համաձայն հեռադիտակը տվին նրան, նա դրեց այն մոտ վազող երջանիկ մանկլավիկի մեջքին ու սկսեց նայել գետի մյուս կողմը: Ազա խորասուզված նայեց քարտեզը, որ փուլած էր գերանների արանքում: Առանց զուլսը բարձրացնելու, նա ինչ-որ բան ասավ, և նրա երկու աղյուտանտները սլացան դեպի լեհական ուլանները:

— Ի՞նչ: Ի՞նչ ասավ, — լսվում էր լեհական ուլանների շարքերում, երբ աղյուտանտներից մեկը մոտեցալ նրանց:

Հրամայված էր, գետի ծանծաղուտը գտնելով, անցնել մյուս ափը: Լեհական ուլան գնդապետը, գեղեցիկ ծեր մի մարդ, կարմրած և հուզումից խոսքերը շփոթելով, հարցրեց աղյուտանտից, թե իրեն թույլ կտրվի արդյոք իր ուլաններով լողալով անցնել գետը, առանց ծանծաղուտ որոնելու: Նա մերժում ստանալու ակներե երկյուղով, ինչպես մի տղա, որ թույլտվություն է խնդրում ձի նստել, խնդրում էր, որպեսզի թույլ տրվի իրեն լողալով գետն անցնել կայսեր աշքի առաջ:

Աղյուտանտն ասավ, թե կայսրը, հավանորեն, դժգուհ չի լինի այդ ավելորդ ջանասիրությունից:

Հենց որ աղյուտանտն ասավ այդ, ծեր, երկարաբեղ սպան երջանիկ դեմքով ու փայլող աշքերով, թուրք վեր բարձրացնելով, գոչեց. «Վիվատ» և, կարգադրելով ուլաններին՝ հետեւ իրեն, խթանեց ձիում ու սլացավ դեպի գետը: Նա շարացած հրեց իր տակ տրորվող ձիում ու նետվեց զրի մեջ, դիմելով դեպի գետի խոր, արագընթաց հոսանքը: Հարյուրավոր ուլաննեւ հետեւցին նրան: Գետի մեջտեղում, ուր հոսանքն արագընթաց էր, չուրք սառն էր ու սարսափելի: Ուլանները բռնում էին իրարից, ընկնում էին ձիերից: Ձիերից մի քանիսը խեղդվեցին, խեղդվեցին և մարդիկ, մնացածներն աշխատում էին լող տալ՝ ո՞րը թամբի վրա, ո՞րը ձիու բաշից բռնած: Նրանք աշխատում էին լողալ առաջ՝ դեպի մյուս ափը և, չնայած այն բանին, որ անցատեղը կես վերստ հեռու էր, նրանք պարծենում էին, որ իրենք լողում ու խեղդվում էին այն մարդու աշքի առաջ, որը նստած էր գերանին և նույնիսկ չէր նայում, թի նրանք ի՞նչ են անում: Երբ վերադրած աղյուտանտը, հարմար ռոպե ընտրելով, թույլ տվեց իրեն կայսեր ուշադրությունը դարձնել լեհերի՝ դեպի իրեն ցուցաբերած անձնվիրության վրա, մոխրագույն սյուրթուկ հագած փոքրիկ մարդք վեր կացավ և, Բերտյեին իր մոտ կանչելով, սկսեց նրա հետ երթևեկել ափին, կարգադրություններ անելով նըրան և երբեմն դժգուհ խեղդվող ուլաններին, որ հաճելի կերպով գրաղեցնում էին նրա ուշադրությունը:

Նրա համար նոր չէր այն համոզումը, թե իր ներկայությունը աշխարհի բոլոր ծայրերում, Աֆրիկայից սկսած մինչև Մոսկվայի տափաստանները, մարդկանց հավասարապես շշլացնում է և խելագար ինքնամոռացման գիրկը նետում: Նա հրամայեց ձին բերել և գնաց իր կայանը:

Զնայած օգնության ուղարկված նավակներին՝ քառասուն ուլան խեղդվեց գետում: Մեծամասնությունը ետ դարձավ այս ափը: Գնդապետն ու մի քանի մարդ լողալով անցան գետը և դժվարությամբ դուրս եկան մյուս ափը: Բայց հենց որ թըրշված, չուրք վրայից թափվող հագուստաներով դուրս եկան, նրանք բացականչեցին՝ «Վիվատ», խանդավառությամբ նա-

յելով այն տեղին, ուր կանգնած էր Նապոլեոնը, բայց ուր նա այժմ չկար, և այդ րոպեին նրանք իրենց զգում էին երջանիկ:

Երեկոյան Նապոլեոնը երկու կարգադրության արանքում, — մեկն այն մասին, թե որքան կարելի է շուտ բերել պատրաստած ոռւսական կեղծ թղթադրամները Ռուսաստան ներմուծելու համար, և մյուսն այն մասին, որպեսզի գնդակահարեն այն սաքսոնացուն, որի մոտ բոհված նամակում տեղեկություններ գտնվեցին ֆրանսական բանակին արած կարգադրությունների մասին, — արագ երրորդ կարգադրությունը՝ առանց կարիքի դետը նետված լեհ գնդապետին համարել պատվո լեգիոնի մեջ (légion d'honneur), որի գլուխը Նապոլեոնն ինքն էր:

Quos vult perdere — dementat<sup>1</sup>.

### III

Մինչ այդ ոռւսաց կայսրն արդեն ամսից ավելի ապրում էր Վիլնոյում, մասնակցելով զորատեսների ու զորախաղերի: Ոչ մի բան պատրաստ չէր պատերազմի համար, պատերազմ, որին բոլորն սպասում էին և որի պատրաստության համար կայսրը եկել էր Պետերբուրգից: Զկար գործողության ընդհանուր ծրագիրը: Տատանումներն այն մասին, թե առաջարկվող բոլոր ծրագիրներից ո՞րը պետք է ընդունվի, էլ ավելի ուժեղացան կայսր՝ զլիսավոր կայանում մի ամիս մնալուց հետո երեք բանակն էլ ունեին առանձին հրամանատարներ, բայց բոլոր բանակների գլխավոր շկար ընդհանուր մի պետ, և կայսրը չէր ուզում իր վրա վերցնել այդ կոչումը:

Որքան ավելի երկար էր ապրում կայսրը Վիլնոյում, այնքան ավելի քիչ էին պատրաստվում պատերազմին, հոգնած լինելով նրան սպասելուց: Թագավորին շրջապառող մարդկանց բոլոր ձգտումները հանգում էին միայն այն բանին, որ ստիպեն թագավորին, ժամանակը հաճելի անցկացնելով, մոռանա առաջիկա պատերազմի մասին:

Շատ պարահանդեսներից ու տոնակատարություններից հետո, որ տեղի էին ունենում լեհ մագնատների մոտ, պալատականների մոտ և հենց իր՝ թագավորի մոտ, — հունիս ամսին

թագավորի լեհական գեներալ-ադյուտանտներից մեկը միտք հղացավ ճաշկերուցիթ և պարահանգես կազմակերպել թագավորի պատվին՝ գեներալ-ադյուտանտների անունից: Այդ միտքն ուրախությամբ ընդունվեց բոլորի կողմից: Թագավորը հայտնեց, իր համաձայնությունը: Գեներալ-ադյուտանտները ըստորագրությամբ փող հավաքեցին: Այն կինը, որ կարող էր թագավորին ավելի հաճելի լինել, հրավիրվեց որպես պարահանդեսի տիրութիւն: Կոմս Բենիգսենը, որ Վիլնոյի նահանգի կալածատեր էր, իր՝ քաղաքից գուրս գտնվող տունն առաջարկեց այդ հանդեսի համար, և հունիսի 13-ին նշանակվեց պարահանդես, ճաշկերուցիթ, նավակներով զբոսանք ու հրթիռ ջակրետում, կոմս Բենիգսենի տանը, որ գտնվում էր քաղաքից գուրս:

Հենց այն օրը, երբ Նապոլեոնը Նեմանն անցնելու հրաման տվեց և նրա զորքի առաջապահ մասերը, կազակներին նեղելով, անցան ոռւսական սահմանը, Ալեքսանդրն այդ երեկո Բենիգսենի ամառանոցում էր՝ պարահանդեսում, որ սարքել էին գեներալ-ադյուտանտները:

Ուրախ, փայլուն հանդես էր գիտակ մարդիկ ասում էին, թե հազվադեպ էր, որ այդքան գեղեցկուհի հավաքվեր մի տեղ: Կոմսութիւն Բենիգսենից անցանց թվում՝ թագավորի ետևից՝ Պետերբուրգից եկել էր Վիլնո, այդ պարահանդեսում էր և իր ծանր, այսպես անվանված ոռւսական սիրունությամբ նսեմացնում էր նրբակազմ լեհ տիկիններին: Նա կատվեց և թագավորը նրան պարի արժանացրեց:

Բորիս Դրուբեցկոյը, ու գացոն<sup>1</sup>, ինչպես ինքն էր ասում, կողը Մոսկվայում թողած, նույնպես այդ պարահանդեսումն էր և, թեև գեներալ-ադյուտանտ չէր, բայց մի մեծ գումարով մասնակցել էր պարահանդեսի համար բացված ստորագրության: Բորիսն այժմ հարուստ մարդ էր, արդեն բավական հարգված, այլևս հովանավորություն շփնտրող, բայց բարձր զիրք ունեցող իր հասակակիցների հետ հավասար ոտ մեկնող և Վիլնոյում հանդիպեց էլենին, որին վազուց չէր տեսել, և որ հիշեց անցածը. բայց որովհետև էլենը վայելում էր շատ կարեոր անձնավորության ողորմածությունը, իսկ Բորիսը քիչ առաջ

<sup>1</sup> Եթե մեկին ուզում ես կործանել ինքն առև

ամուսնացել էր, ուստի նրանք մոռեցան իրար որպես զին լավ բարեկամներ:

Գիշերվա ժամը 12-ին դեռ պարում էին: Էլենը արժանավոր մի կավալեր չունենալով, ինքը Բորիսին առաջարկեց մազուրկա պարել: Նրանք երրորդ հերթին էին: Բորիսը անտարբեր նայելով էլենի փայլուն, հոլանի ուսերին, որ գուրս էին ևկած նրա ոսկեղող գազե զգեստից, պատմում էր հին ծանոթների մասին և միաժամանակ թե՛ իրեն և թե՛ ուրիշների համար աննկատելի կերպով ոչ մի վայրկյան չէր դադարում դիտել թագավորին, որ գոնվում էր նույն դահլիճում: Թագավորը չէր պարում. նա կանգնած էր դռան մեջ և մերթ սրան, մերթ նրան կանգնեցնում էր այն փաղաքշական խոսքերով, որ միայն ևս էր կարողանում ասել:

Մազուրկայի սկզբում Բորիսը նկատեց, որ գեներալ-ադյուտանտ Բալաշեր, որ թագավորի ամենամերձավոր անձերից էւէն էր, մոտեցավ կայսեր և արքունիքում շրնդունքած ձևով էւնգնեց թագավորի մոտ, որ խոսում էր մի լեհ տիկնոջ հետ, և ուսեղով տիկնոջ հետ, թագավորը հարցական նայեց և, ըստ Երեսութին, հասկանալով, որ Բալաշեր այդպես վարվելը լուրջ պատճառներ ուներ, թեթևակի գլուխ տվեց տիկնոջը և դարձավ ընկի Բալաշեր: Հենց որ Բալաշեն սկսեց խոսել՝ թագավորի գնդին զարմանք արտահայտվեց: Նա թևանցուկ արավ Բալաշեն և նրա հետ միասին անցավ դահլիճի միջով, անդիտակցաբար երեք սաժեն լայնությամբ ճանապարհ բանալով՝ երկու կողմից ետ քաշված բազմության միջով:

Բորիսը նկատեց Արակչենի հուզված դեմքը այն միջոցին, երբ թագավորը գնաց Բալաշեր հետ: Արակչենը, հոնքերի տակից թագավորին նայելով և կարմիր քթով ֆսացնելով, առաջ եկավ բազմության միջից, կարծես սպասելով, թե թագավորը կդիմի իրեն: (Բորիսը հասկացավ, որ Արակչենը նախանձում է Բալաշեն ու դժգոհ է, որ ինչ-որ, ըստ Երեսութին մի կարեռ նորություն իր միջոցով չի հաղորդված թագավորին):

Թայց թագավորն ու Բալաշեր, Արակչենին չնկատելով, ելքի դանից անցան լուսավորված այգին: Արակչենը, թուրք բըռնած և բարկությամբ շուրջը նայելով, քսան քայլ հեռավորությամբ հետևեց նրանց:

Մինչ Բորիսը շարունակում էր մազուրկայի ֆիգուրները,

նրան անդադար տանջում էր այն միտքը, թե ի՞նչ նորութ ո նէ բերել Բալաշեր և ի՞նչպես իմանալ այն բոլորից առաջ:

Այն ֆիգուրում, ուր նա պետք է դամա ընտրեր, էլենին շշնչաց, թե նա կամնենում է ընտրել կոմսուհի Պոտոցկային, որը, կարծես, գուրս եկավ պատշգամբ, և Բորիսը, պարկետի վրա թեթևորեն սահելով, ելքի դռնով վազեց այգին ու, նկատելով Բալաշերի հետ տերրասը մտնող թագավորին, կանգ առավ:

Թագավորը Բալաշերի հետ գալիս էր դեպի դուռը: Բորիսը, փուլիկոտ, իբր թե շկարողանալով ետ քաշվել, հարգալիր սեղմվեց շեմափայտին ու գլուխը խոնարհեց:

Թագավորը անձնապես վիրավորված մարդու հուզումով ասում էր հետեւյալը.

— Առանց պատերազմ հայտարարելու մտնել Խուսաստանու ծա կհաշտվեմ միայն այն ժամանակ, երբ որ մի զինված թշնամի չի մնա իմ հողում, — առաջ նաև:

Ինչպես Բորիսին թվաց, թագավորին հաճելի էր արտասանել այդ խոսքերը. Նա գոհ էր իր մտքերն արտահայտելու ձեզից, բայց դժգոհ եղավ, որ Բորիսը լսեց դրանք:

— Որ ո՞ւ ոք չիմանա, — ավելացրեց թագավորը, հոնքերը կիտելով:

Բորիսը հասկացավ, որ այդ իրեն է վերաբերում, և, աշքերը փակելով, գլուխը խոնարհեց թեթևակի: Թագավորը կրկին դահլիճ մտավ և մի կես ժամ գարձալ մնաց պարահանդեսում:

Բորիսն առաջինը լսեց այն լուրը, որ Փրանսական զորքերն անցել են Նեմանը, և դրա շնորհիվ առիթ ունեցավ մի քանի կարեռը անձնավորությունների ցույց տալ, թե շատ բան, որ ուրիշներից ծածուկ է մնում, իրեն հայտնի է լինում, և դրա միջոցով առիթ ունեցավ բարձրանալ այդ անձնավորությունների աշքում:

Փրանսացիների՝ Նեմանն անցնելու անսպասելի լուրն առանձնապես անսպասելի էր մի ամիս անօգուտ սպասելուց հետո, և այն էլ պարահանդեսում: Թագավորը, լուրն ստանալու առաջին րոպեին, հուզմունքի և վիրավորանքի ազդեցության ներքո, գտավ այն, հետո արդեն նշանավոր գարձած խոսրը, որ իրեն իսկ դուր եկավ և լիովին արտահայտում էր նրա գուա-

ցումները։ Պարահանդեսից տուն վերադառնալով, թագավորը գիշերվա ժամը երկուսին մարդ ուղարկեց քարտուղար Շիշկովի ետևից և պատվիրեց՝ զորքերին հրաման գրել, իսկ ֆելդարշալ իշխան Սալթիկովին մի հրովարտակ, որի մեջ նա անպայմանորեն պահանջեց, որ խոսք լինի այն մասին, թէ ինքը չի հաշտվի մինչև այն ժամանակ, քանի դեռ գեթ մի գինված քրանսացի կմնա ոռւսական հողում։

Մյուս օրը նապոլեոնին գրվեց հետեւյալ նամակը։

«Monsieur mon frère. J'ai appris hier que malgré la loyauté, avec laquelle j'ai maintenu mes engagements envers Votre Majesté, vos troupes ont franchis les frontières de la Russie, et je reçois à l'instant de Pétersbourg une note par laquelle le comte Lauriston, pour cause de cette aggression, annonce que Votre Majesté s'est considérée comme en état de guerre avec moi dès le moment où le prince Kourakine a fait la demande de ses passeports. Les motifs sur lesquels le duc de Bassano fondait son refus de les lui dé livrer, n'auraient jamais pu me faire supposer que cette démarche servirait jamais de prétexte à l'agression. En effet, cet ambassadeur, n'y a jamais été autorisé comme il l'a déclaré lui-même, et aussitôt que j'en fus informé, je lui ai fait connaitre combien je le désapprouvais en lui donnant l'ordre de rester à son poste. Si Votre Majesté n'est pas intentionnée de verser le sang de nos peuples pour un malentendu de ce genre et qu'elle consente à retirer ses troupes du territoire russe, je regarderai ce qui s'est passé comme non avenu, et un accommodement entre nous sera possible. Dans le cas contraire, Votre Majesté, je me verrai forcé de repousser une attaque que rien n'a provoquée de ma part. Il dépend encore de Votre Majesté d'éviter à l'humanité les calamités d'une nouvelle guerre.

Je suis, etc.

(signé) Alexandre».<sup>1</sup>

<sup>1</sup> «Տեր իմ եղբայր. երեկ լուր ստացա, որ չնայած նրան՝ ես ուղղամտորեն կառարել եմ ձերդ կայսերական մեծության վերաբերմամբ իմ ստանձնած պարտավորությունները, ձեր զորքերն անցել են ոռւսական ստանձնը, և հենց

#### IV

Հունիսի 13-ի գիշերվա ժամը 2-ին թագավորը, Բալաշելին իր մոտ կանչելով և նապոլեոնին գրած իր նամակը նրան կարգալով, պատվիրեց նրան այդ նամակը տանել և անձամբ հանձնել Փրանսական կայսեր։ Բալաշելին ճանապարհ գնելով՝ թագավորը նորից կրկնեց իր խոսքը, թե նա չի հաշտվի մինչ այն ժամանակ, քանի դեռ մի զինված թշնամի կմնա ոռւսական հողում, և պատվիրեց այդ խոսքերն անպայման հայտնել նապոլեոնին։ Թագավորն այդ խոսքերը չէր գոել նապոլեոնին ուղղած նամակում, որովհետև նա իր տակտով զգում էր, որ այդ խոսքերն անհարմար է գրել այն բոպեին, երբ հաշտության վերջին փորձն է արվում, բայց նա պատվիրեց Բալաշելին այդ խոսքերն անպայման հայտնել անձամբ նապոլեոնին։

Դուրս գալով 13-ի և լույս 14-ի գիշերը, Բալաշելը, մը փողհարի և երկու կազակի ուղեկցությամբ, լուսադեմին եկավ Ռիկոնտի գյուղը։ Նեմանի այս կողմը գտնվող Փրանսական առաջապսատերը։ Ֆրանսական հեծելակային պահակները կանգնեցրին նրան։

այժմ միայն Պետերբուրգից կոմս Լորիւտոնից հայտագիր ստացա, որ վ նա այդ ներխուժման առթիվ ինձ տեղեկացնում է, թե ձերդ մեծությունը մեր հարաբերությունները թշնամական է համարում այն պահից, եսր իշխունությանը պահանջել է իր անցագործը։ Այն պահանջները, ու նոց հիման վրա հերոս թասանոն հրաժարվել է տալ այդ անցագործը, բնակ չէին կարող հարկադրել ինձ ենթագրելու, որ իմ գենակնի վարմությը հարձակման առիթ կծառայիր։ Եվ իրոք, նա ինձնից այդպիսի կարգագործություն չի ունեցել, իւրաքանչյուր էլ հայտարարել է և հենց որ սև իմացա աղ մասին անմիջապես եւ իմ գգունությունը հայտնացի իշխան Կուրակինին, հրամայելով առաջապես կատարել իրեն վրա դրամական պարտականությունները Եթե ձերդ մեր հետությունը հակամետ չէ նման թյուրիմացության պատճառով թափել մեր հապակների արլունը, և եթե դուք համաձայն եք ձեր զորքերը դուրս բերել ոռւսական հողից, այդ դեպքում ես անուշադրության կմատնեմ ամբողջ կատարվածը, և համաձայնությունը մեր միջն նարավոր կլինի։ Հակառակ, դեպքում ես ստիպված կլինեմ ետ մշել հարձակմանը, որն առաջ բերելու որևէ առթիվ չեմ ավել ես։ Տակավին ձերդ մեծությունը հնարավորության ունի մասնակությունն աղատել նոր պատերազմի աղետներից։

Ես և այլն։

Ալեքսանդր»։

Ֆրանսական հուսարական ենթասպան, որ մոռագույն մունդիր ուներ և մազոտ գդակ, բղավեց մոտեցող Բալաշեր վրա, հրամայելով նրան կանգ առնել: Բալաշն իսկույն նեթ կանգ շառավ, այլ շարունակեց քայլով առաջ գնալ:

Ենթասպան, գեմքը խոժուելով և ինչ-որ հայույանքներ քրթմնչալով, ձիու կրծքով շարժվեց գեպի Բալաշեր, ձեռքը տարավ գեպի թուրը և կոպտորեն բղավեց ոռւս գեներալի վրա, թե նա խուզ վի արդյոք, որ վի լսում ինչ են ասում իրեն: Բալաշեր հայտնեց իր ո'վ լինելը: Ենթասպան մի զինվոր ուղարկեց սպայի մոտ:

Ուշ շդարձնելով Բալաշեր վրա՝ ենթասպան սկսեց ընկերների հետ խոսել իր գնդի գործերից, և չեր նայում ոռւս զիներալին:

Բարձրագույն իշխանությանն ու հզորությանը այնքան մոտ լինելուց հետո, երեք ժամ առաջ թագավորի հետ զրուցելուց հետո և ընդհանրապես, ըստ իր պաշտոնի, սովոր լինելով մեծարանքի, Բալաշեր համար շահազանց տարօրինակ էր տեսնել այստեղ, ուսական հողի վրա, այդ թշնամական, և մանավանդ կոպիտ ուժի անհարգալիր վերաբերմունքը գեպի իրեն:

Նրեր նոր միայն սկսում էր բարձրանալ ամպերի ետևից, ողբ թարմ էր և ցողավետ: Գյուղի ճանապարհով հոտը քշում էին հանդը: Դաշտում մեկը մյուսի ետևից, ինչպես պղպջակ ները ջրում, ճովոյունով վեր էին թոշում արտույտները:

Բալաշեր շուրջը նայելով, սպասում էր սպային, որ պիտի գար գյուղից: Մուս կազակներն ու փողհարը և ֆրանսական հուսարները երեմնակի անխոս նայում էին իրար:

Ֆրանսական հուսար գնդապետը, ըստ երևույթին, հետո անկողնից ելած, դուրս եկավ գյուղից մի գեղեցիկ գեր մոխրագույն ծի հեծած, և երկու հուսարի ուղեկցությամբ: Թե՛սպան, թե զինվորները և թե նրանց ձիերը գոհ և պանկած տեսք ունեին:

Այդ՝ պատերազմի այն առաջին օրերն էին, երբ գորքերը դեռ կանոնավոր վիճակում էին, որ հիշեցնում էր խաղաղ, զորատեսային պայմաններ, միայն հագուստի շքեղազարդ ուազմասիրության երանգով և պատերազմների սկզբնավորությանը միշտ ուղեկցող ուրախության ու ձեռներեցության բարոյական շեշտության գործում:

Ֆրանսացի գնդապետը գծվարությամբ էր զսպում հորանչը, բայց հարգալիր էր և, ըստ երևույթին, հասկանում էր Բալաշերի բովանդակ նշանակությունը: Նա Բալաշերին տարավ իր զինվորների մոտով՝ զորաշղթայի ետև, և հայտնեց, որ նրա՝ կայսեր ներկայանալու ցանկությունը, հավանորեն անմիջապես կատարվի, որովհետև կայսերական կայանը, որքան նա գիտի, հեռու չի գտնվում:

Նրանք անցան Ռիկոնտի գյուղը ֆրանսական հուսարական ծի սկապարանների, պահակների և զինվորների մոտով (որ ւայրիկ էին տալիս իրենց գնդապետին և հետաքրքրությամբ էիտում ուսւական մունդիրը), ու գուրս եկան գյուղի մյուս կողմբ: Գնդապետի ասելով երկու կիլոմետրի վրա էր գտնվում զիվիզիայի պետը, որը պետք է ընդուներ Բալաշերին և առաջնորդեր կայսեր մոտ:

Արևն արդեն բարձրացել և ուրախ փայլում էր վառ կանաչների վրա:

Նոր միայն նրանք բարձրացել էին պանդոկի ետևի սարը, երբ նրանց առջև սարի տակից երևաց ձիավորների մի խումբ, որի առջևից արևի տակ փայլող ձիասարդով սկ ծի նստած գայլու էր փետրազարդ գլխարկով և մինչև ուսերն իշնող ոլորուն ու մագերով մի բարձրահասակ մարդ՝ կարմիր պատմուճանով ու երկար ոտներով, որ նա առաջ էր ցցել այնպես, ինչպես ձի են նստում ֆրանսացիները: Այդ մարդը սրարշավ գալիս էր Բալաշերի դեմ: Հունիսյան պայծառ արեկի տակ փայլում ու ծածանվում էին նրա վրայի փետուրները, գոհարներն ու ոսկեղոծ տրեզները:

Բալաշն արդեն երկու ձիու տարածություն հեռու էր իր գեմն եկող՝ ապարանջանների, փետուրների, մանյակների ու ոսկու մեջ կորած հանդիսավոր-թատերական տեսքով ձիավորից, երբ Ցուլները, ֆրանսացի գնդապետը, հարգալիր շշնջաց «Le roi de Naples»<sup>1</sup>. իսկապես, դա Մյուրատն էր, որ այժմ կոշվում էր նեապոլի թագավոր: Թեև միանգամայն անհասկանալի էր, թե նա ինչո՞ւ էր նեապոլի թագավոր, բայց նրան անվանում էին այդպես, և նա ինքն էլ համոզված էր այդ բանում, ուստի և ավելի հանդիսավոր ու մեծավայել

1 Բաղավորը նեապոլի:

տեսք ուներ, բան առաջի նա այնպես էր համոզված այդ բանում, թե ինքն իրոք նեապոլի թագավոր է, որ, երբ, նեապոլից մեկնելու նախօրեին, կնոջ հետ նեապոլի փողոցներում գրունելու ժամանակ, մի բանի իտալացիներ ձայնեցին. «Վիճակը ուշադիր է, նա տխուր ժպտալով դարձավ դեպի կինը և ասավ. «Les malheureux, ils ne savent pas que je les quitte demain!»<sup>2</sup>:

Բայց չնայած որ նա հաստատ համոզված էր, թե ինքը նեապոլի թագավոր էր և թե ցավում էր, որ լքելու է իր հոգատակներին վշտահար անելով նրանց, վերջերս, այն բանից հետո, երբ նրան հրամայվեց կրկին ծառայության մտնել. և մանավանդ Դանցիգում նապոլեոնի հետ տեսակցելուց հետո, եղբ օգոստափառ աներձագը նրան ասավ. «Je vous ai fait roi pour régner à ma manière, mais pas à la vôtre»<sup>3</sup>, — նա ուրախությամբ ձեռնամուխ եղավ իրեն ծանոթ գործին և, որպես կերած-կշտացած, բայց զիրացած հովատակ, իրեն զգալով լծասարքի մեջ, խաղս եղավ կողաքեղիների արանքում, և գարդարվելով որքան կարելի է խայտարդես ու թանկարժեք, զարթ ու գոհունակ արշավում էր լեհաստանի ճանապարհներով, ինքն էլ զիտենալով ուր և ինչո՞ւ:

Մուս գեներալին տեսնելով՝ նա արքայավարի, հանդիպավոր ձևով մինչ ուսերն իշնող ոլորուն մազերով գլուխը ետքեց և հարցականորեն նայեց ֆրանսական զնդապետին: Գնդապետը հարգալիր հայտնեց նորին մեծության թալաշկի ո՞վ և ի՞նչ լինելը, որի ազգանունը նա չէր կարողանում արագասանել.

— De Bal-macheve!<sup>4</sup>, — ասավ թագավորը (իր վճռականությամբ հաղթահարելով զնդապետի ներկայացած դրժությունը), — charmé de faire votre connaissance, général!<sup>5</sup>, — ավելացրեց նա արքայական-ողորմած շարժումով:

<sup>1</sup> Կեցցե թագավորը:

<sup>2</sup> Դժբախտներ. Նրանք չգիտեն, որ վաղը թողնում եմ իրենց:

<sup>3</sup> Ես ձեզ թագավոր եմ դարձել, որ դուք թագավորեք իմ, և ու թե ձեզ առաջի պես:

<sup>4</sup> Ին թալ-մաշկ:

<sup>5</sup> Ես հաճելի է ծանոթանալ ձեզ հետ, գեներալ:

Հենց որ թագավորն սկսեց բարձր ու արագ խոսել, նրա թագավորական ամբողջ արժանավորությունը վայրկենապէս հեռացավ նրանից, և նա, ինքն էլ չնկատելով, անցավ բարեհոգի մտերմական եղանակի: Նա իր ձեռքը դրեց թալաշկի ձիու բաշին:

— Eh bien, général, tout est à la guerre, à ce qu' il paraît!<sup>1</sup>, — ասավ նա, կարծես ցալիով մի բանի համար, որի մասին նա չէր կարող դատողություն ունենալ:

— Sire, — պատասխանեց թալաշկը, — l'Empereur mon maître ne désire point la guerre, et comme Votre Majesté le voit<sup>2</sup> — ասավ թալաշկը, բոլոր հոլովներում գործածելով Votre Majesté տիտղոսը կրկնելու անխուսափելի աֆֆեկտացիայով, դիմելով մի անձնավորության, որի համար այդ տիտղոսը դեռ նորություն էր:

Մյուրատի դեմքը փայլում էր անմիտ գոհունակությամբ, երբ լսում էր տոնսիր դելաչոֆ-ին<sup>3</sup>. բայց ցուած օհլից<sup>4</sup>, նա անհրաժեշտություն զգաց խոսել Ալեքսանդրի դեսպանի հետ պիտական գործերի մասին, որպես թագավոր ու դաշնակից: Նա ձիուց իշավ և, թալաշկին թևանցուկ անելով, մի բանի բայլ հեռանալով հարգալիր սպասող շքախմբից, սկսեց նրա հետ քայլել ետ ու առաջ, աշխատելով խոսել նրանակալից: Նա ասավ, որ նապոլեոն կայսրը վիրաւորված է զորքը Պրուսիայից դուրս հանելու պահանջներից, մանավանդ այն ժամանակ, երբ այդ պահանջը բոլորին հայտնի դարձավ և երբ դրանով վիրավորվեց Ֆրանսիայի արժանապատվությունը:

Թալաշկն ասավ, թե այդ պահանջի մեջ վիրավորական ովնչ չկա, որովհետեւ... Մյուրատը ընդհատեց նրան:

— Ուրեմն գուք պատճառը Ալեքսանդր կայսեր շե՛ք համարում, — ասավ նա անսպասելի բարեհոգի-հիմար ժպիտով:

Թալաշկն ասավ, թե ինչու է ինքը, իսկապես, կարծում, որ պատերազմը սկսողը նապոլեոնն է:

<sup>1</sup> Է, գեներալ, կարծեմ, պատերազմ է:

<sup>2</sup> Ձեր մեծություն, իմ թագավոր կայսրը պատերազմ չի ցանկանում, ինչպես ձերդ մեծությունը բարեհաճում է տեսնել:

<sup>3</sup> Պարոն թալաշկին:

<sup>4</sup> Թւակ վոր կոչումը պարտավորեցնում է:

— Eh, mon cher général, — նորից ընդհատեց նրան  
Եյուրատը, — je désire de tout mon coeur, que les Empre-  
reurs s'arrangent entre eux et que la guerre commencée  
malgré moi se termine le plus tôt possible<sup>1</sup>, — ասավ նա  
սպասավորների խոսակցության եղանակով, որոնք ցանկա-  
համ են մնալ լավ բարեկամներ, չնայած տերերի միջև ծագած  
լուսին:

Եվ ապա նա սկսեց հարց ու փորձել մեծ իշխանի մասին,  
նրա առողջության մասին, հիշեց և նրա հետ նեապոլում անց-  
կացրած ուրախ, զվարճալից ժամանակը: Հետո հանկարծ,  
կարծես հիշելով էր թագավորական արժանավորությունը,  
Եյուրատը հանդիսավորապես ուղղվեց, ընդունեց նույն դիրքը,  
ինչ ընդունել էր թագավորության ժամանակ, և աշ ձեռքով նը-  
շան անելով ասավ.

— Je ne vous retiens plus, général; je souhaite le  
succès de votre mission<sup>1</sup>, — և, կարմիր պատմուճանն ու  
գետավաները ծածանելով և վրայի թանկարժեք զարդերը փայ-  
լեցնելով, նա գնաց դեպի շքախումբը, որ հարգալիր պատասում  
էր իրեն:

Բալաշել ձին քշեց առաջ, ըստ Մյուրատի ասածի, ենթա-  
դրելով, որ շատ շուտով ինքը կներկայացվի իրեն՝ Նապոլեոնին:  
Բայց նապոլեոնի հետ շուտ հանդիպելու փոխարեն Դավուի  
հետեւ զորաբանակի պահակները նորից պահեցին նրան հե-  
տեւալ գյուղի մոտ, ինչպես և առաջալոր զորաշղթայում, և  
զորաբանակի հրամանատարի կանչված աղյուտանտը նրան  
տարավ գյուղ՝ մարշալ Դավուի մոտ:

## V

Դավուն նապոլեոն կայսեր Արակիլենն էր — ոչ վախկոտ  
Արակիեն, բայց նույնքան կարգապահ, դաժան և անկարող իր  
նվիրվածությունն արտահայտել այլ կերպ, քան դաժանու-  
թյամբ:

<sup>1</sup> Ախ, սիրելի գեներալ, ես ամբողջ սրտով ցանկանում եմ, որ կայսերն-  
ու բանը վերցանեն իրենց մեջ և որպեսզի պատերազմը, որ սկսված է ոչ իմ  
ցանկությամբ, վերջանա որքան կարելի է շուտ:

<sup>2</sup> Սս այլևս չեմ պահում, զեներալ, ձեր առաքելությանը հաջողություն  
եմ ցանկանում:

Պետական մարմնի մեխանիզմի մեջ հարկավոր են այդ  
մարդիկ, ինչպես գայլերը հարկավոր են բնության օրգանիզմի  
մեջ, և դրանք միշտ կան, միշտ հանդես են գալիս ու մնում  
են, որքան էլ անհարիբ է թվում նրանց ներկայությունը և մո-  
տիկությունը կառավարության գլուխ կանգնած մարդուն:  
Միայն այս անհրաժեշտությամբ կարելի է բացատրել այն, թե  
ինչպես դաժան, անձամբ գրենադիրների բեղերը պոկող և  
նյարդերի թուլության հետևանքով վտանգը տանելու անկա-  
րութ, անկիրթ, պալատական հատկություններից զուրկ Արակ-  
չիկը կարող էր մնալ և այդպիսի ուժ ունենալ ասպետորեն  
ազնիվ ու մեզմ բնավորություն ունեցող Ալեքսանդրի կողքին:

Բալաշել մարշալ Դավուին գտավ գյուղական խրճիթի  
սարայում, ուր նա փոքրիկ մի տակառի վրա նստած, զբաղ-  
ված էր գրավոր աշխատանքով (նա հաշիվներ էր ստուգում):  
Աղյուտանտը կանգնած էր նրա կողքին: Հնարավոր էր գտնել  
ավելի լավ շենք, բայց մարշալ Դավուն մեկն էր այն մարդկան-  
ցից, որոնք դիտմամբ իրենց դնում են ամենամոայլ պար-  
մանների մեջ, որպեսզի մոռայլ լինելու իրավունք ունենան:  
Դրա համար էլ նրանք միշտ շտապ ու համառորեն զբաղված  
են լինում: «Այստեղ էլ ինչպես կարող ես մտածել մարդկային  
կյանքի երջանիկ կողմի մասին, երբ, տեսնում եք, կեցուու  
սարայում տակառի վրա նստած աշխատում եմ», ասում էր  
նրա գեմքի արտահայտությունը: Այդ մարդկանց գերազույն  
բավականությունն ու պահանջը այն է, որ, կյանքի աշխատ-  
խութությունը տեսնելով, այդ աշխատության աշքը խոթեն  
իրենց մոռայլ, համառ գործունեությունը: Այդ բավականու-  
թյունն էր պատճառում իրեն Դավուն, երբ Բալաշելին տարան  
նրա մոտ: Նա էլ ավելի խորասուզվեց իր աշխատանքի մեջ,  
երբ ներս մտավ ոուս գեներալը, և, ակնոցի միջով նայելով  
Բալաշելի գեմքին, որ աշխատացել էր սքանչելի առավտաի և  
Մյուրատի հետ ունեցած զրուցի տպավորության ներքո, վեր  
շկացավ, անգամ շշարժվեց, այլ ավելի ևս խոժոռեց ու զայրա-  
ցած ժամանակ:

Բալաշելի գեմքին նկատելով, թե ի՞նչ անհաճո տպավորու-  
թյուն թողեց իր այդ ընդունելությունը, Դավուն գլուխ բարձ-  
րացրեց և սառնությամբ հարցրեց, թե նա ի՞նչ է ուզում:

Ենթադրելով, թե Դավուն իրեն այդպես կարող էր ընդունել միայն այն պատճառով, որ զփտեր, թե ինքը Ալեքսանդր կայսեր գեներալ-ադյուտանտն է և անգամ կայսեր ներկայացուցիչն է Նապոլեոնի մոտ, Բալաշն շտապեց հայտնել իր ո'վ և ի'նչ լինելը։ Նրա սպասածի հակառակ, Դավուն, Բալաշնին լսելով, դարձավ է'լ ավելի խիստ ու կոպիտ։

— Ո՞ւր է ձեր նամակը, — ասավ նա։ — Donnez-le moi, je l'enverrai à l'Empereur<sup>1</sup>.

Բալաշն ասավ, թե ինքը պատվեր ունի նամակը հանձնել անձամբ կայսեր։

— Ձեր կայսեր հրամանները կատարվում են ձեր բանակում, իսկ այստեղ, — ասավ Դավուն, — զուք պետք է անեք այն, ինչ ձեզ ասում են։

Եվ կարծես նրա համար, որ ոուս գեներալին է'լ ավելի զգացնել տա նրա կախումը կոպիտ ուժից, Դավուն ադյուտանտին ուղարկեց հերթապահի ետևից։

Բալաշն հանեց կայսեր նամակն ամփոփող ծրարը և դրեց սեղանի վրա (սեղանը մի դուռ էր, որի վրա կախված էին պոկված օղակներ, և որը դրված էր երկու փոքրիկ տակառի վրա)։ Դավուն ծրարը վեցրեց և մակագրությունը կարդաց։

— Դուք միանգամայն իրավունք ունեք ինձ հարգել և չարգել, — ասավ Բալաշն։ — Բայց թույլ տվեք նկատել, որ ես պատիվ ունեմ նորին մեծության գեներալ-ադյուտանտի կոչումը կրելու։

Դավուն անխոս նայեց նրան, և Բալաշնի դեմքին արտահայտված թեթև հուզումն ու շփոթությունը, ըստ երկութիւն, նրան բավականություն պատճառեցին։

— Զեզ ցույց կտրվի հարկ եղածը, — ասավ նա և, ծրարը գրպանը դնելով, դուրս եկավ սարայից։

Մի րոպեից հետո ներս մտավ մարշալի ադյուտանտ պ. դհ.-Կաստրին և Բալաշն տարավ նրա համար պատրաստած բնակարանը։

Բալաշն այդ օրը ճաշեց սարայում, մարշալի հետ միան, տակառներին դրված նույն տախտակի վրա։

Հետեւյալ օրը, վաղ առավոտյան Դավուն մեկնեց և, Բալաշնին իր մոտ կանչելով, ազգու կերպով ասավ, թե նա խնդրում է նրան մնալ այստեղ, ճանապարհվել իր իրերի հետ միասին, եթե այդ մասին կարգադրություն լինի, և շխոսել ու ոքի հետ, բացի պարոն դե-Կաստրեից։

Չորսօրյա առանձնությունից, ձանձրույթից, ենթակայության ու չնշնության գիտակցությունից հետո, որ զգալի էր մանավանդ հզորության այն միջավայրից հետո, ուր նա զըտնրիում էր քիչ առաջ, մարշալի իրերի հետ, ֆրանսական գորքերի հետեւից (որ գրավել էին այդ ամբողջ շրջանը) մի քանի տեղափոխություններ կատարելուց հետո, Բալաշնին վիճու (որ այժմ գրավել էին ֆրանսացիները), նույն այն ուղեկալը (զատավա), որտեղից մեկնել էր շորս օր առաջ։

Մյուս օրը կայսերական կամերճեր monsieur de Turenne<sup>1</sup> եկավ Բալաշնի մոտ և հայտնեց, որ Նապոլեոն կայսրը ցանկանում է ունկնդրության արժանացնել նրան։

Չորս օր առաջ նույն այդ տան մոտ, ուր բերին Բալաշնին, կանգնած էին Պրեոբրածենսկի գնդի պահակները. իսկ այժմ կանգնած էին երկու ֆրանսացի գրենադեր՝ կուրծքներով բաց կապույտ մունիդիրներով և մազուտ գդակներով, ուղանների ու հուսարների ուղեկցուրդը և ադյուտանտների, մանկլավիկների ու գեներալների փայլուն շքախումբը, որ սպասում էին Նապոլեոնի դուրս գալուն՝ շրջապատած սանդուղքի մոտ կանգնած նստելու ձին և նրա մամելուով Ռուստանին։ Նապոլեոնը Բալաշնին ընդունեց Վիլնոյում գտնվող հենց այն տանը, որտեղից ճանապարհել էր նրան Ալեքսանդրը։

## VI

Չնայած Բալաշնը սովոր էր պալատական հանդիսավորության, բայց Նապոլեոնի արքունիքի շքեղությունն ու փարթամությունն ապշեցրին նրան։

Կոմս Տյուրենը տարավ նրան ընդարձակ ընդունարանը, ուր սպասում էին շատ գեներալներ, կամերճերներ և լեհ մագնատներ, որոնցից շատերին Բալաշնը տեսել էր ոուս կայսեր ար-

<sup>1</sup> Տղեք ինձ, ես և ողարքեմ կայսեր։

ք. միքում: Դյուրոկն ասավ, թե նաւողեռն կայսրը ոուս գե-  
նչչալին կըն լունի իր զբուանքից առաջ:

Մի քանի րոպէ սպասելուց հետո հերթապահ կամերհերը  
գուշս եկավ մեծ ընդունարանը և, հարգանքով զլուխ տալով  
թուլաշեն, հրավիրեց նրան հետեւ իրեն:

Բալաշնը մտավ փոքրիկ ընդունարանը, որի մի դուռը տա-  
նում էր գետի առանձնասենյակը, այն իսկ առանձնասենյակը,  
որտեղից ճանապարհ դրեց նրան ոուս կայսրը: Բալաշնը մի  
եղիւ րոպէ կանդնեց սպասելով: Դուան ետքից լսվեցին շտապ  
քայլերի ձայներ: Արագ բացվեցին դուան երկու փեղկն էլ,  
ամեն ինչ լուց, և առանձնասենյակից լսվեցին ուրիշ հաս-  
ատուն վճռական քայլեր, դա նապուենն էր: Նա հենց նոր  
էլ վերջացրել իր տուալետ՝ ձիով զրոսանք կատարելու հա-  
մար: Նա հագել էր կապույտ մունդիր, որը կոճկված էր և որի  
տակից երեսում էր կլորիկ փորի վրա իշնող սպիտակ միլետը,  
և սպիտակ իշայժեմնի վարտիք, որը պիրկ զրկում էր նրա  
կարճիկ ոտների պարարտ ազդրերը, ու երկարածիտք կոշիկ-  
ներ: Նրա կարճ մազերը, ըստ երեսույթին, հենց նոր էին սա-  
նցրված, բայց մազերի մի փունչ իշնում էր ցած, նրա լայն  
ճակատի մեջտեղը: Նրա ճերմակ, փափլիկ վիզը որոշակի  
դուռս էր ցցվել մունդիրի սկ օձիքից: Նրանից օդեկուոնի հոտ  
էր բուրում: Նրա ջահել, դուրս ցցված կզակով, լեցուն դեմքի  
վըս կար կայսերական ողորմած ու վեհապանն ողջույնի ար-  
տահայտություն:

Նա արագ դուրս եկավ, ամեն քայլափոխին վեր ձգվելով  
և գլուխը փոքրինչ ետ ցցած: Նրա ամբողջ գիրացած, կարճ  
մաշմինը՝ լայն, հաստ ուսերով և ակամա առաջ ցցած փորով  
ու կրծքով, ուներ մի այնպիսի տպավորիչ ու վեհ տեսք, որ-  
պիսին ունենում են ճանդիս կյանքով ապրող քառասուն  
տարեկան մարդիկ: Բացի դրանից երեսում էր, որ նա այդ օրը  
դունվում էր ամենալավ տրամադրության մեջ:

Նա գլխով արավ, պատասխանելով Բալաշնի խոնարհ ու  
հարգալիր բարեին, և, նրան մոտենալով, իսկույն ևեթ սկսեց  
խոսել, որպես մի մարդ, որ թանկ է գնահատում իր ժամա-  
նակի լուրաքանչյուր րոպեն և չի իշնում այն աստիճան, որ  
իր ճառերը նախապատրաստի, այլ վստահ է, թե միշտ լավ  
կամի և թե կասի այն, ինչ հարկավոր է ասել:

— 30 —

— Բարեկ, գեներալ, — ասավ նա: — Ես ստացա Ալեք-  
սանդր կայսեր նամակը, որ դուք բերել էիք, և շատ ուրախ  
եմ ձեզ տեսնելուս: — Նա իր խոշոր աշքերով նայեց Բալաշնի  
դեմքին և իսկույն էլ հայացքը գցեց նրա կողքով:

Ակներն էր, որ նրան բնավլ չեր հետաքրքրում Բալաշնի  
անձնավորությունը: Երեսում էր, որ նրա համար հետաքրքիր էր  
միայն այն, ինչ կատարվում էր իր հոգում: Այն ամենը, ինչ  
իրենից դուրս էր, նրա համար նշանակություն չուներ, որովհետեւ  
աշի արհում ամեն ինչ, ինչպես նրան թվում էր, կախված էր  
միայն իր կամքից:

— Ես պատերազմ չեմ ցանկանում և չեմ ցանկացել, —  
ասավ նա, — բայց ինձ հարկադրեցին այդ բանին: Ես այժմ էլ  
(նա այդ բառն ասավ շեշտելով) պատրաստ եմ ընդունել այն  
բոլոր ռացատրությունները, որ դուք կարող եք տալ ինձ:

Ել նա սկսեց պարզ ու հակիրճ մի առ մի թվել ոուս կառա-  
վարության դեմ ունեցած իր անբավականության պատճառ-  
ները: Դատելով Փրանսական կայսեր խոսելու շափակոր,  
հանգիստ և սիրալիր տոնից, Բալաշնը հաստատ համոզված  
էր, որ նա հաշտություն էր ցանկանում և մտադիր է բանակ-  
ցությունների մեջ մտնել:

— Sirèl L'Empereur, ոու տանիք,<sup>1</sup> — սկսեց Բալաշնը  
վաղուց պատրաստած ճառը, երբ նապուենը, իր ճառը վեր-  
շացնելով, հարցականորեն նայեց ոուս գեսպանին: բայց կայսեր  
աշքերի սեեսուն հայացքը շփոթեց Բալաշնին: «Դուք շփոթ-  
ված եք, ուշքի եկեք», կարծես ասավ նապուենը, հազիվ նը-  
կառելի ժամանակակից ժամանակակից մունդիրն ու թուրը:

Բալաշն իրեն հավաքեց ու սկսեց խոսել: Նա ասավ, որ  
Ալեքսանդր կայսրը պատերազմ սկսելու բավականաշափ պատ-  
ճառ չի համարում այն, որ Կուրակինը անցագրեր է պահանջել,  
որ Կուրակին այդպես վարվել է ինքնակամ կերպով և առանց  
կայսեր համաձայնությունն առնելու, որ Ալեքսանդր կայսրը  
պատերազմ չի ցանկանում և որ Անգլիայի հետ ոչ մի հարա-  
բերություն չկա:

— Դեռ չկա, — վրա բերեց նապուենը և, կարծես վախե-  
նալով տարվել իր զգացումներով, խոժոռեց և գլուխը շար-

<sup>1</sup> Զերդ մեծություն, իմ տեր կայսր...

ժեց թեթևակի, դրահով զգացնել տալով Բալաշեկին, որ նա կարող է շարունակել:

Արտահայտելով այն ամենը, ինչ իրեն հրամայված էր, Բալաշեն ասավ, որ Ալեքսանդր կայսրը հաշտություն է ցանկանում, բայց բանակցություններ չի ձեռնարկի այլ կերպ, բան այն պայմանով, որպեսզի... Այսուղի Բալաշեր կանգ առավ. նա հիշեց այն խոսքերը, որ Ալեքսանդր կայսրը չէր դրել նամակում, բայց պատվիրել էր դրանք անպայման մտցնել Սալթիկ վին ուղարկվելիք հրավարտակի մեջ, իսկ Բալաշեկին պատվիրել էր հայտնել այդ՝ Նապոլեոնին: Բալաշեր հիշում էր այդ խոսքերը. «մինչև որ ոչ մի զինված թշնամի չի մնա ոռւսական հողում», բայց ինչ-որ մի բարդ զգացում պահեց նրան: Նա չկարողացավ այդ խոսքերն ասել, թեև ցանկանում էր այդ անելու նա կանգ առավ և ասավ պայմանով, որպեսզի ֆրանսական գորքերը նահանջեն նեմանի մյուս կողմը:

Նապոլեոնը նկատեց Բալաշեի շփոթությունը վերջին խոսքերն արտասանելիս. Նրա գեմքը դողաց, ձախ ոտի ձկնամիսն սկսեց համաշափորեն դողալ: Տեղից չեռանալով նա սկսէց խոսել առաջվանից ավելի բարձր ու արագ ձայնով: Նրա այդ վերջին ճառի միջոցին Բալաշեր, մի քանի անգամ աշքերը խոնարհելով, ակամա նկատեց Նապոլեոնի ձախ ոտի ձկնամսի դողը, որ սաստկանում էր այնքան ավելի, որքան ավելի էր բարձրացնում ձայնը:

— Ես հաշտություն ցանկանում եմ Ալեքսանդր կայսրից ոչ պակաս,—սկսեց նա: — Ես չեմ արդյոք, որ տասնութ ամիս ամեն բան անում եմ, որ այդ հաշտությունը լինի: Ես տասնութ ամիս է սպասում եմ բացատրության: Բայց բանակցություններ սկսելու համար ի՞նչ են պահանջում ինձնից, — ասավ նա, դեմքը խոժողելով, և իր փոքրիկ սպիտակ ու փափլիկ ձեռով եռանդուն հարցական շարժում անելով:

— Որ գորքերը նահանջեն նեմանի մյուս ափը, — ասավ Բալաշեր:

— Նեմանի մյուս ափը, — կրկնեց Նապոլեոնը: — Ուրեմն դուք այժմ ցանկանում եք, որ նահանջենք նեմանի մյուս ափը, միայն նեմանի մյուս ափը, — կրկնեց Նապոլեոնը, ուղիղ Բալաշեին նայելով:

Բալաշեր հարգալիր խոնարհեց գլուխոր:

Չորս ամիս առաջ արված՝ Պոմերանիայից նահանջելու պահանջի փոխարեն այժմ պահանջում էին նահանջել միայն նեմանի մյուս ափը: Նապոլեոնն արագ շուր եկավ և սկսեց գնալգալ սենյակում:

— Գուք ասում եք, որ ինձնից պահանջում են նահանջել նեմանի մյուս ափը՝ բանակցություններ սկսելու համար. բայց ճիշտ այդպես երկու ամիս առաջ պահանջեցին ինձնից նահանջել Օդերի և Վիսլայի այն կողմը, և, չնայած դրան, գուք համաւայն եք բանակցություններ վարել:

Նա լուր անցավ սենյակի մի անկյունից մինչև մյուսը և նորից կանգ առավ Բալաշեի դիմաց: Բալաշեր նկատեց, որ նրա ձախ ոտն էլ ավելի արագ էր դողում, քան առաջ, և դեմքը կարծես քարացել էր իր խիստ արտահայտության մեջ: Զախ ձկնամսի այդ դողը Նապոլեոնն ուներ. La vibration de mon mollet gauche est un grand signe chez moi<sup>1</sup>, — ասում էր նա հետագայում:

— Այդպիսի առաջարկները, ինչպիսին է Օդերն ու Վիսլան մաքրելու առաջարկը, կարելի է անել Բաղենի իշխանին, բայց ոչ ինձ, — իր համար միանգամայն անսպասելի գրեթե ճշաց Նապոլեոնը: — Եթե գուք ինձ տայիք Պետերբուրգն ու Մոսկվան, ես չէի ընդունի այդ պայմանները: Դուք ասում եք՝ ես եմ սկսել պատերազմը: Իսկ առաջ ո՞վ եկավ բանակը: — Ալեքսանդր կայսրը, այլ ոչ թե ես: Եվ գուք առաջարկում եք բանակցություններ, այն ժամանակ երբ ես միլիոններ եմ ծախսել, այն ժամանակ, երբ գուք Անգլիայի հետ դաշնակցության մեջ եք, և երբ ձեր դորւթյունը վատ է, գուք ինձ առաջարկում եք բանակցություններ: Իսկ ի՞նչ նպատակ ունի ձեր դաշնակցությունը Անգլիայի հետ: Նա ի՞նչ տվեց ձեզ, — ասում էր նա շտափ, ըստ երևույթին, իր ճառն ասելով ոչ թե նրա համար, որ արտահայտի հաշտություն կնքելու շահավետությունը և քննության առնի նրա հնարավորությունը, այլ միայն նրա համար, որպեսզի ապացուցի թե՛ իր իրավացիությունը, թե՛ իր ուժը, և որպեսզի ապացուցի Ալեքսանդրի անիրավացիությունն ու սխալները:

1 Զախ ձկնամս դողը — մեծ նշան է ինձ համար:

Նրա ճառի նախաբանն, ըստ երկությին նպատակ ուներ արտահայտել իր դիրքի առավելությունը և ցույց տալ, թե չնայած դրան, նա ընդունում է բանակցություններ սկսելու առաջարկը: Բայց նա արդեն սկսեց խոսել, և որքան շատ էր խոսում, այնքան ավելի քիչ էր կարողանում դեկամարել իր ճառու:

Այժմ արդեն նրա ճառի նպատակն այն էր, ըստ երևութին, որ միայն բարձրացնի իրեն և վիրավորի Ալեքսանդրին, այսինքն անի հենց այն, ինչ ամենից քիչ էր ցանկանում իր տեսակցության սկզբում:

— Ասում են դուք հաշտություն եք կնքել թուրքերի հետ :  
Բալաշը դրականորեն խոնարհեց գուշակը :

— Հաշտությունը կնքված է... — սկսեց նաև Բայց Նապոլեոնը շխողեց նրան խոսել: Նա, ըստ երեսութին, կարիք էր զգում, որ միայն ինքը խոսի, և նա շարունակեց խոսել այն պերճախոսությամբ ու անզուսապ բարկությամբ, որին այնպես հակամետ են փայտիալված մարդիկ:

— Այս, ես գիտեմ, գուք թուրքքերի հետ հաշտություն եք կնքել, շատանալով Մոլդավիան ու Վալախիան։ Իսկ ես ձեր թաղավորին կտայի այդ նահանգները այնպես, ինչպես տվի նրան Ֆինլանդիան։ Այս՝ — շարունակեց նա, — ես խոստացել էի և կտայի Ալեքսանդր կայսեր Մոլդավիան ու Վալախիան, իսկ այժմ նա չի ունենա այդ սրբանշելի նահանգները։ Սակայն նա կարող էր դրանք միացնել իր կայսրությանը, և իր թագավորության օրովք նա կարող էր նույսաստանն զնդարձակել Բոտ-Նիկական ծոցից մինչև Դանուբի գետաբերանը։ Մեծն Եկատերինան ավելի չէր կարող անել, — ասում էր նապոլեոնը, Հնադիետե ավելի տաքանալով, սենյակում երթեւեկելով ու կրկնելով Բաւշակին գրեթե այն խոսքերը, ինչ ասել էր իրեն Ալեքսանդրին՝ *Տիգիթում*։ — Tout cela il l'a fait dû à mon amitié. Ah! quel beau règne, quel beau règne ! — կրկնեց նա մի քանի անգամ, կանգ առավ, գրպանից հանեց քթախոտի ոսկե տուփը և ագահարար քաշեց քթով։

— Quel beau règne aurait pu être celui de l'Empereur Alexandre<sup>2</sup>.

Նա ափսոսանքով նայեց թալաշկին, և հենց որ թալաշկն ուզեց ինչ-որ բան նկատել, նա նորից շտապելով ընդմիջեց նյան:

— *ի՞նչ կարող էր նա ցանկանալ և որ շփնդեր իմ բարեկամության մեջ...* — ասավ նա, տարակուսանքով ուսերը թոթվելով: — *Ոչ, նա ավելի լավ համարեց իրեն շրջապատել իմ թշնամիներով,* և *ի՞նչ մարդկանցով,* — շարունակեց նապուտով: — *Նա իր մոտ կանչեց Շտեյններին,* Արմֆելդներին, *թե իդսններին,* *Վինցենգերողեներին:* Շտեյնն իր հայրենից ից վոնդված դավաճան է. Արմֆելդը — անառակ և բանսարկու. Վինցենգերողենը — Ֆրանսիայի փախստական հպատակ, Բենիգուսնը — փոքր-ինչ ավելի զինվորական է, քան մյուսները, բայց և այնպես անընդունակ է, որ ոչինչ չկարողացավ անհել 1807 թվին և որը պետք է որ Ալեքսանդր կայսեր մեջ սարսափելի հիշողություններ գարթնեցներ... Ասենք, եթե նրանք ընդունակ լինեին, կարելի էր նրանց օգտագործել, — շարունակեց նապուտոնը, խոսքով հազիվ կարողանալով հասնել անընդհատ ծագող մտքերի հետեւց, որ ցուց էին տալիս նրան իր արդարացի լինելը կամ ուժը (որ նրա հասկացողությամբ միևնույն բանն էր), — բայց այդ էլ չկա. Նրանք պիտանի չեն ո՛չ պատերազմի համար, ո՛չ խաղաղության համար: Բարկլայն, ասում են, բոլորից բանիմաց է. բայց ևս այդ շեմ կարող ասել, դատելով նրա առաջին շարժումներից: Իսկ նըրանք ի՞նչ են անում, ի՞նչ են անում այդ բոլոր պալատականները: Պֆուլն առաջարկում է, Արմֆելդը վիճում է, Բենիգուսնը յանարկում է, իսկ Բարկլայը, որ կոշված է գործելու, շգիտի ի՞նչ անի. և ժամանակն անցնում է պապարդյուն: Խազմական մարդ միայն Բագրատիոնն է: Նա հիմար է, բայց ունի փորձառություն, աչքի շափ և վճռականություն... Եվ ի՞նչ դեր է խաղում ձեր երիտասարդ թագավորը այդ խայտառակ բազմության մեջ: Նրանք վարկաբեկում են նրան և ամբողջ կատարվածի պատասխանատվությունը գցում նրա վրա: Ան սուներain ne doit être à l'armée que quand il est général,<sup>1</sup> — ասավ նա, ըստ երեսութիւն այդ խոսքերը որպես մարտակու ուղղելով

<sup>1</sup> Այդ բոլորով նա պարտական կլինիկը իմ բարեկա ըսթիանը, օ՛, ինչ սքանչելի թագավորություն, ինչ սքանչելի թագավորություն:

<sup>2</sup> Որքան սցանչելի կարող էր լինել, Ալեքսանդրի թագավորությունը:

<sup>1</sup> Թագավորը բանալիի մոտ պիտի գտնվի միայն այն ժամանակ, եթե նա զրագված է:

Ալեքսանդրին: Նապոլեոնը գիտեր, թե Ալեքսանդր կայսրը որքան է ցանկանում զորավար լինել:

— Արդեն մի շաբաթ է, ինչ պատերազմն սկսվել է, և դուք շկարողացաք Վիլնոն պաշտպանել: Դուք բաժանված եք երկու մասի և քշված եք լեհական նահանգներից: Զեր բանակը տիրապետում է:

— Ընդհակառակը, ձերդ մեծություն, — ասավ Բալշակը,  
հազիվ կարողանալով մտքում պահել այն, ինչ ասում էին իրեն,  
և դժվարությամբ հետեւով խոսքերի այդ հեղեղին, — մեր  
գորքերը բուռն ոգեսրության մեջ են...

Նապոլեոնը բարկացած քմծիծաղ տվից և թախոտի որւ-  
փը նորից մոտեցրեց քթին:

Բալշակն ուզում էր Նապոլեոնի յուրաքանչյուր խոսքին առարկել, և առարկելիք ուներ. Նա շարունակ՝ ինչ-որ բան ասել ցանկացող մարդու շարժումներ էր անում, բայց Նապոլեոնն ընդհատում էր նրան: Նվեդներին խենթ հայտարարելու դեմ Բալշակն ուզում էր ասել, թե Նվեդիան մի կղզի է, երբ Ռուսաստանը նրա կողմն է. բայց Նապոլեոնը ճշաց բարկացած, որպեսզի խլացնի նրա ձայնը: Նապոլեոնը գտնվում էր այնպիսի բորբոքված վիճակում, երբ պետք է խոսել, խոսել մէայն նրա համար, որպեսզի ինքն իրեն ապառուի եռ տարա-

րացիությունը։ Բալաշեն իրեն վատ էր զգում. նա որպես գես-  
պան վախենում էր զցել իր արժանապատվությունը և առարկե-  
լու անհրաժեշտություն էր զգում. բայց որպես մարդ, նա բա-  
րոյապես ճնշվում էր այն անառիթ զայրույթի ինքնամոռացու-  
թյան հանդեպ, որի մեջ, ըստ երևույթին գտնվում էր Նապո-  
լեոնը։ Բալաշենը գիտեր, որ բոլոր խոսքերը, ինչ հիմա ասում  
էր Նապոլեոնը, նշանակություն չունեն, և որ ինքը, երբ զգա-  
տանա, կամաշի այդ խոսքերից։ Բալաշեն, աշքերը խոնարհած,  
կանչնել նայում էր Նապոլեոնի շարժվող հաստ ոտներին, և  
այսի ստում էր խուսափել նրա հայցքից։

— Բայց ինչի՞ս են ձեր այդ դաշնակիցները, — ասում էր Նապոլեոնը: — Իմ դաշնակիցները՝ լեհերն են. նրանք 80 հազար են, կովում են առյօտծի պես: Եվ նրանց թիվը կհասնի շուրջ հազարի:

Եվ, հավանորեն, ավելի ևս զայրացավ այն բանից, որ այդ ասելով, նա բացահայտ սուտ ասավ, և որ Բալաշնը նույն ճակատագրին հնազանդ դիրքով անխոս կանգնել էր իր առաջ, նա միանգամից շրջվեց, մոտեցավ Բալաշնի դեմքին և իր սպիտակ ձեռներով եռանդուն ու արագ շարժումներ անելով, գըրեթե ճագ.

— Գիտեք, որ եթե գուք Պրուսիային տրամադրեք իմ գեմ, իմացեք, որ ես նրան կզնչեմ Եվրոպայի քարտեզից, — ասավ նա գունատ, բարկությունից աղավաղված դեմքով, իր մի փոքրիկ ձեռի եռանդուն շարժումով խփելով մյուսին։ Այս, ես ձեզ կշպրտեմ Դվինայի այն կողմոր, Դնեպրից գենը և ձեր գեմ կկանգնեցնեմ այն պատնեշը, որ Եվրոպան, Հանցավոր ու կույր լինելով, թույլ է տվել քանդել։ Այս, ահա թե ինչ կտեսնեք, ահա թե ինչ շահեցիք ինձնից հեռանալով, — ասավ նա ու անխոս մի քանի անգամ անցավ սենյակով, իր հաստ ուսերը ցնցելով։

Նա քթախոտի տուփը զրեց ժիլետի գրպանը, նորից հանեց, մի քանի անգամ մոտեցրեց թիին և կանգնեց Բալաշեկի առաջ: Նա լույս, հեղինաբար նաև Բալաշեկի ուղիղ աչքերին և ասայ ցածր ձայնով:

— Et cependant quel beau règne aurait pu avoir votre maître!»

<sup>3</sup> Ազնիկի խոսք, որ Վեհակի այս կողմը են ունեմ 530 հազար մարդ:

<sup>1</sup> Убийства виновных в преступлениях против общества и государства, совершенные в период с 1945 по 1953 годы, не подлежат уголовной ответственности.

Բալաշեր, առարկելու անհրաժեշտություն զգալով, ասավ, որ Ռուսաստանն իրերի գրությունն այդքան մուալլ չի պատկերացնում։ Նապոլեոնը լուս էր, շարունակելով հեգնաբար նայել նրան և, ըստ երեսութին, նրան չէր լուս ։ Բալաշն ասավ, թե Ռուսաստանում պատերազմից շատ լավ՝ բան են սպասում։ Նապոլեոնը ներողամտաբար գլխով արավ, կարծես ասելով, «գիտեմ, այդպես է ասում ձեր պարտավանությունը, բայց գուք ինքներդ դրան չեք հավատում, ե՞ս համոզեցի ձեզ։»

Բալաշնի ճառի վերջում Նապոլեոնը նորից հանեց քթախոտի տուփը, հոտ քաշեց նրանից և, իրու ազգանշան, երկու անգամ ոտով խփեց հատակին։ Դուռը բացվեց. հարգալիր խոնարհված կամերհերը կայսեր մատուցեց գլխարկն ու ձեռնոցները, մյուսը՝ թաշկինակը։ Նապոլեոնը, առանց զրանց նայելու, դարձավ Բալաշնին։

— Վստահեցրեք իմ անունից Ալեքսանդր կայսեր, — ասավ նա, գլխարկը վերցնելով, — որ ես առաջվա պես նվիրված եմ նրան, ես միանգամայն ճանաշում եմ նրան և շատ բարձր եմ գնահատում նրա բարձր հատկությունները։ Je ne vous retiens plus, général, vous recevezrez ma letter à l'Empereur!.

Եվ Նապոլեոնն արագ գնաց գեպի դուռը։ Ընդունարանից բոլորը նետվեցին առաջ և սանդուղքներով իշան ցած։

## VII

Այն բոլորից հետո, ինչ ասավ իրեն Նապոլեոնը, զայրույթի այդ բռնկումներից հետո և վերջին շորությամբ ասված այն խոսքերից հետո, թե «Je ne vous retiens plus, général, vous recevezrez ma letter», Բալաշնը համոզված էր, որ Նապոլեոնն այլևս ոչ միայն չի ցանկանա իրեն տեսնել, այլև կաշխատի շտեսնել նրան՝ վիրավորանք կրած դեսպանին և, գրիսպորը, իր անվայել բռնկումների վկային։ Բայց, ի զարմանս իր, Բալաշնը Դյուրոկի միջոցով հրավեր ստացավ՝ այդ օրը կայսեր սեղանին մասնակցելու։

<sup>1</sup> Ես ձեզ այլև չեմ պահում, գեներալ, դուք կստանաք իմ նամակը կայսերն ուղղած։

Ճաշին ներկա էին Բեսսիերը, Կոլենկուրը և Բերտիեն։

Նապոլեոնը Բալաշնին դիմավորեց ուրախ և սիրալիր դեմքով։ Նրա գեմքին չկար ոչ միայն ամաչկոտության արտահայտություն կամ իրեն կշտամբելու նշան՝ առավոտյան բռնկումի համար, այլ նա, ընդհակառակը, աշխատում էր քաշալերել Բալաշնին։ Երկում էր, որ վաղուց արդեն Նապոլեոնի համար նրա համոզմունքով գոյություն չուներ սխալների հնարավորություն և որ նրա հասկացողությամբ այն բոլորը, ինչ անում էր ն' քը, լավ էր ո՛չ թե այն պատճառով, որ զուգադիպում էր այն պատկերացմանը, թե ի'նչն է լավ ու վատ, այլ այն պատճառով, որ ինչն էր անում այդ։

Կայսրը շատ ուրախ էր ձիով արած իր զբոսանքից հետո, զրուանք, որ կատարել էր Վիլոյի փողոցներով, ուր ժողովրդի բազմությունները խանդավառությամբ ընդունել ու ժանապարհ էին դրել նրան։ Նրա անցած փողոցների բոլոր լուսամուտներում կախված էին գորգեր, դրոշակներ, դրված էին նրա վենցիները և լիճ տիկինները նրան ողջունելով, թաշկինակներ էին ծածանում նրա առաջ։

Ճաշին, Բալաշնին նստեցնելով իր կողքին, Նապոլեոնը նրա հետ ոչ միայն սիրալիր էր, այլև վարվում էր այնպես, կարծես Բալաշնին էլ համարում էր իր պալատականներից մեկը, մեկն այն մարդկանցից, որոնք համակիր էին նրա ծրագիրներին և պետք է որ ուրախանային նրա հաջողություններով։ Այլ զրույցների հետ միասին՝ նա խոսեց Մոսկվայի մասին և ակսեց հարցնել Բալաշնին ոուս մայրաքաղաքից, ոչ միայն այնպես, ինչպես հարցնում է հարցածեր հետաքրքիր ճանապարհորդը այն նոր վայրի մասին, ուր մտադիր է այցելել, այլ կարծես մի համոզումով, թե Բալաշնը, որպես պետք է շոյվի այդ հետաքրքրությունից։

— Որքա՞ն բնակիլ ունի Մոսկվան, քանի՞ տում։ Ճի՞շտ է արդյոք, որ Moscou անվանում են Moscou la sainte<sup>1</sup>, քանի՞ եկեղեցի կա Մոսկվայում, — հարցնում էր նա։

Եվ պատասխան ստանալով, թե երկու հարյուրից ավելի եկեղեցի կա, նա ասաց։

— Ինչի՞ համար են այդ անթիվ, անհամար եկեղեցիները։

<sup>1</sup> Սրբազն Մոսկվա,

— Ըուսները շատ բարեպաշտ են, — պատասխանեց Բալաշել:

— Ասենք, եկեղեցիների և վանքերի շատությունը միշտ նշան է ժողովրդի հետամնացության, — ասավ Նապոլեոնը, նայելով Կոլենկուրին՝ այդ կարծիքի գնահատականն ստանալու ակնկալությամբ:

Բալաշել հարգալիր թույլ տվեց իրեն չհամաձայնել ֆրանսական կայսեր կարծիքի հետ:

— Յուրաքանչյուր երկիր իր սովորություններն ունի, — ասավ նա:

— Բայց Եվրոպայում ոչ մի տեղ արդեն նման բան չկա, — ասավ Նապոլեոնը:

— Ներողություն եմ խնդրում ձերդ մեծությունից, — ասավ Բալաշել, — Ըուսաստանից բացի կա նաև Իսպանիա, ուր նույնպես շատ եկեղեցիներ ու վանքեր կան:

Բալաշել այդ պատասխանը, որ ակնարկում էր ֆրանսացիների վերջերս Իսպանիայում կրած պարտությունը, բարձր գնահատության արժանացավ, Բալաշել պատմելով, Ալեքսանդր կայսեր արքունիքում և շատ քիչ գնահատվեց այժմ՝ Նապոլեոնի ճաշի սեղանի մոտ ու անցավ աննկատ:

Պարոնայք մարզալների անտարեր ու տարակուսող դեմքերից երևում էր, որ նրանք տարակուսում էին, թե ինչումն է կայանում այն սրամտությունը, որ ակնարկում էր Բալաշելի ինտոնացիան: «Եթե կար էլ այդ սրամտությունը՝ մենք չհասկացանք, կամ այն բնավ սրամիտ չեր» — ասում էր մարշալների դեմքերի արտահայտությունը: Այնքան քիչ գնահատվեց այդ պատասխանը, որ Նապոլեոնն անդամ բոլորովին չնկատեց այն և միամտորեն հարցրեց Բալաշելից, թե այսուեղից ուղիղ Մոսկվա գնացող ճանապարհը ո՞ր քաղաքներով է անցնում: Բալաշել որ ճաշի ամբողջ ընթացքում զգուց էր, պատասխանեց, որ comme tout chemin mène à Rome, tout chemin mène à Moscou<sup>1</sup>, որ շատ ճանապարհներ կան և այդ տարբեր ճանապարհների թվում կա և մի ճանապարհ, որ տանում է դեպի Պոլտավա, որն ընտրել էր Կարլ XII, — ասավ Բալաշել,

<sup>1</sup> Ինչպես ամեն ճանապարհ տանում է Հռոմ, այդպես էլ ամեն ճանապարհ տանում է Մոսկվա:

ակամա կարմրելով այդ հաջող պատասխանի բավականությունից: Բալաշել հազիվ էր ավարանի վերջին Poltawa բարը, Կոլենկուրն արդեն սկսեց խոսել Պետերբուրգից Մոսկվա տանող ճանապարհի անհարմարությունների և իր Պետերբուրգյան հիշողությունների մասին:

Ճաշից հետո անցան սուրճ խմելու նապոլեոնի առանձնաշնչակում, որ չորս օր առաջ Ալեքսանդր կայսեր առանձնաշնչականին էր: Նապոլեոնը նստեց, շոշափելով Սկրի գավաթով սուրճը և Բալաշելին մատնացուց արավ իր կողքի աթոռը:

Մարդու մեջ կա ետճաշյա մի հայտնի տրամադրություն, որը ամեն տեսակ բանական պատճառներից ավելի ստիպում է մարդու իրենից գոհ լինել և բոլորին իր բարեկամը համարել: Նապոլեոնը գտնվում էր այդ տրամադրության մեջ: Նրան թըվում էր, թե ինքը շրջապատված է իրեն պաշտող մարդկանցով: Նա համոզված էր, որ Բալաշելն էլ իր տված ճաշից հետո իր բարեկամն ու պաշտողն է: Նապոլեոնը դիմեց նրան մի գուրեկան ու փոքրինչ հեգնական ժպիտով:

— Ինչպես ինձ ասել են, սա այն սենյակն է, որի մեջ ապրել է Ալեքսանդր կայսրը: Տարօրինակ է. այնպէս չէ, գեներալ, — ասավ նա, ակներեւաբար չկասկածելով, որ իր այդ դիմումը չէր կարող հաճելի լինել իր խոսակցին. որովհետեղ դա ապացուցում էր իր՝ Նապոլեոնի գերազանցությունը Ալեքսանդրի հանդեպ:

Բալաշել դրան ոչինչ չէր կարող պատասխանել և անխոս խորհրդակց գլուխը:

— Այս՝, այս սենյակում չորս օր առաջ խորհրդակցում էին Վենցենգերոդեն և Շտեյնը, — նույն հեգնական, վստահ ժպիտով շարունակեց Նապոլեոնը: — Մի բան, որ շեմ կարողանում հասկանալ, — ասավ նա, — այդ այն է, որ Ալեքսանդր կայսրը իրեն մոտեցրել է բոլոր իմ անձնական թշնամիներին: Ես այդ շեմ... հասկանում եմ չի մտածել, որ ես էլ կարող եմ ամել նույնը, — հաբակումով դիմեց նա Բալաշելն, և, հավանաբեր այդ հիշողությունը նորից առթնացը առավոտյան գայրույթը, որ տակալին թարմ էր նրա մեջ:

— Եւ թող նա իմանա, որ ես այդ կանեմ, — ասավ Նապոլեոնը, ելնելով և ձևով եմ մղելով իր գավաթը: — Ես կը վսնգեմ Գերմանիայից նրա բոլոր ազգականներին՝ Վիբ-

տեմբերգի, Բաղենի, Վեյմարի իշխաններին... այո, ես կը-վանդեմ նրանց: Թող նա նրանց համար ապաստան պատրաստի Ռուսաստանում:

Բալաշել գլուխ խոնարհեց, իր այդ դիրքով ցույց տալով, թե նա կցանկանար հրաժեշտ տալ և լսում է միայն այն պատճեռով, որ նա չի կարող լսել այն, ինչ ասում են իրեն: Նապոլեոնն այդ արտահայտությունը չէր նկատում. նա Բալաշենի դիմում էր ոչ որպես իր թշնամու դեսպանի, այլ որպես մի մարդու, որ հիմա լիովին նվիրված է իրեն և պետք է ուրախանա իր նախկին տիրոջ ստորացումով:

— Եվ ինչո՞ւ է Ալեքսանդր կայսրը վերցրել զորքերի հրամանատարությունը: Ինչո՞ւ համար է այդ: Պատերազմը իմ արհեստն է, իսկ նրա գործն է՝ թագավորել, և ոչ թե զորքեր վարել: Ինչո՞ւ է նա իր վրա այդպիսի պատասխանատվություն վերցրել:

Նապոլեոնը նորից վերցրեց քթախոտի տուփը, մի քանի անգամ լուր անցավ սենյակով և հանկարծ անսպասելի մոտեցավ Բալաշենին և թեթև ժայիտով այնպես վստահ, արագ, հասարակ կերպով, կարծես ասում էր մի որևէ ոչ միայն կարեռ, այլև Բալաշենի համար հաճելի բան, ձեռը բարձրացրեց ղեկի քառասուն տարեկան ոռու գեներալի ղեմքը և, նրա ականջը բռնելով, թեթևակի բաշեց, ժայիտով միայն շուրթերով:

«Avoir l'oreille tirée par l'Empereur!»<sup>1</sup> համարվում էր մեծագույն պատիվ ու ողորմածություն ֆրանսական արքունիքում:

— Eh bien, vous ne dites rien, admirateur et courtisan de l'Empereur Alexandre?<sup>2</sup> — ասավ նա, կարծես ծիծաղելի էր նրա ներկայությամբ որևէ մեկի courtisan-ը և admirateur-ը լինել, բացի իրենից՝ նապոլեոնից:

— Զիերը պատրաստ են արդյոք գեներալի համար, — ավելացրեց նա, թեթևակի գլուխը խոնարհելով ի պատասխան Բալաշենի ողջեւնի: — Տվեք նրան իմ ձիերը. նա հեռու է գնալու:

Բալաշենի բերած նամակը եղավ նապոլեոնի վերջին նամակը Ալեքսանդրին: Ձրաւցի բոլոր մանրամասնությունները հաղորդվեցին ոուս կայսեր, և պատերազմն սկսվեց:

### VIII

Մոսկվայում Պիեռի հետ տեսակցելուց հետո իշխան Անդրեյը գործով մեկնեց Պիեռբրուրդ, ինչպես առավ իր հարազաններին, բայց, էապես՝ նրա համար, որ աշնտեղ հանդիպի իշխան Անատոլ Կուրագինին, որին տեսնելը նա անհրաժեշտ էր համարում: Բայց Կուրագինը, որի մասին նա տեղեկացավ Պիեռբրուրդ գալով, այլևս այնտեղ չէր: Պիեռն իմացրել էր իր աներձագին, թե իշխան Անդրեյը գալիս է նրա ետևից: Անատոլ Կուրագինն անմիջապես նշանակում ստացավ ուզմական մինիստրից և մեկնեց Մոլդավական բանակը: Նույն այդ ժամանակ Պիեռբրուրդը իշխան Անդրեյը հանդիպեց Կուտուզովին, իր նախկին, դեպ իրեն միշտ լավ տրամադրված գեներալին, և Կուտուզովին առաջարկեց նրան մեկնել իր հետ միասին մոլդավական բանակը, որի հրամանատար էր նշանակված ծեր գեներալն ինքը: Իշխան Անդրեյը, պաշտոն ստանալով գլուխալոր կայանի շտաբում, մեկնեց Թուրքիա:

Իշխան Անդրեյն անհարմար էր համարում նամակ գրել Կուրագինին և նրան մենամարտի կանչել: Մենամարտի ուրիշ առիթ շտալով՝ իշխան Անդրեյը կարծում էր, որ իր կողմէց արված մարտահրավերը կվարկաբեկեր կոմսուհի Ռուսովովային, ուստի և աշխատում էր անձամբ հանդիպել Կուրագինին, մտադրություն ունենալով մենամարտի նոր առիթ գտնել: Բայց Թուրքիայում եղած բանակում նույնպես նրան շնաջողվեց հանդիպել Կուրագինին, որը շուտով իշխան Անդրեյի թուրքական ճակատի բանակը գալուց հետո, վերադրել էր Ռուսաստան: Նոր երկրում ու նոր պայմաններում իշխան Անդրեյի կյանքն ընթանում էր ավելի հանգիստ: Իր հարսնացուի դավաճանությունից հետո, որ այնքան ավելի էր խոցում նրան, որքան նա ավելի էր աշխատում ծածկել բոլորից իր վրա թողած տպագործությունը, նրա համար ծանր էին կյանքի այն պայմանները, որոնց մեջ երջանիկ էր եղել, և էլ ավելի ծանր էին պատությունն ու անկախությունը, որ նա այնպես թանկ էր գնահա-

<sup>1</sup> Կայսեր կողմից ականչ բաշելը:

<sup>2</sup> Խշո՞ւ դուք «չինչ չեք խոսում, Ալեքսանդր կայսեր երկրպագու և պատասկան»:

**տում առաջ:** Նա ոչ միայն չէր խորհում նախկին այն խոհերը, որ առաջին անգամ պաշարեցին նրան Առւտերլիցի դաշտում՝ երկնքին նայելիս, որոնք նա սիրում էր զարգացնել Պիեռի հետ և որոնք լցնում էին նրա առանձնությունը՝ բարու չարովոյում, և ապա Նվեյցարիայում ու Հռոմում, այլ նա վախենում էր անգամ հիշել այդ խոհերը, որոնք անսահման ու պայծառ հորիզոններ էին բանում: Այժմ նրան հետաքրքրում էին միայն ամենամոտիկ, նախկինների հետ կապ չունեցող, գործնական շահերը, որոնց նա կառչում էր այնքան ավելի մեծ ագահութամբ, որքան ավելի հեռու էին նրանից նախկինները: Կարծես թե այն անսահման, նրանից վեր, հեռու տարածվող երկնակամարը դարձել էր ցածրիկ, իրեն ճնշող որոշ մի կամար, որի մեջ ամեն ինչ պարզ էր, բայց ոչինչ չկար մշտնցինական ու խորհրդավոր:

Նրան մատչելի աշխատանքներից զինվորական ծառայությունը ամենապարզն ու ծանօթն էր իրեն։ Կուտուզովի շտաբում հերթապահ գեներալի պաշտոնի մեջ լինելով՝ նա համառորեն ու զանասիրությամբ զբաղվում էր գործերով, Կուտուզովին զարմացնելով աշխատանքի նկատմամբ ունեցած իր սիրով ու ճշշտապահությամբ։ Կուրագինին Թուրքիայում շտանելով, իշխան Անդրեյը անհրաժեշտ համարեց վաղել նրա հետեւ Ռուսաստան։ Բայց այդ բոլորով հանդերձ նա գիտեր, թե որքան էլ ժամանակ անցնի, նա չէր կարող, Կուրագինին հանդիպելով, շնայած նրա հանդեպ ունեցած իր արհամարհանքին, շնայած այն բոլոր ապացուցներին, որ բերում էր իրեն համար, թե շարժի ստորանալ մինչև նրա հետ ընդհարպելու աստիճանը, նա գիտեր, որ նրան հանդիպելով, ինքը չէր կարող նրան մենամարտի հկանչել, ինչպես քաղցած մարդը չի կարող շհարձակվել ուտելիքի վրա։ Եվ այն գիտակցությունը, թե վիրավորանքի համար դեռ վրեժինդիր չի եղել, թե բարկությունը դեռ չի թափել, այլ մնում է սրտում, թունավորում էր այն արհեստական հանգստությունը, որ իշխան Անդրեյը Թուրքիայում գտնում էր այնքան ժամանակ ու եռանդ կլանող և որոշ շափով նրա փառափրությունն ու սնափառությունը գոհացնող գործունեության մեջ։

12 թվին, երբ Նապոլեոնի հետ պատերազմելու լուրը հասավ Բուխարեստ (ուր երկու ամիս ապրեգ Կուտուզովը, օգոստոս

ու գիշերներն անցնելով իր վալախուհու մոտ), իշխան Անդրեյը խնդրեց Կուտուզովին՝ տեղափոխել իրեն արևմտյան քանակը: Կուտուզովը, որին արդեն ձանձրացրել էր Բալկոնսկին իր գործունեությամբ, հանդիսանալով մի տեսակ կշտամբանք իր պարապությանը, — Կուտուզովը մեծ սիրով թողեց և հանձնարարություններով ուղարկեց նրան Բարեկայ-դե-Տոլլիի մոտ:

Նախքան բանակ գնալը, որը մայիսին գտնվում էր Դրիս-  
սայի ճամբարում, իշխան Անդրեյը գնաց Լիսի Գորի, որ  
ոտնվում էր իր ճանապարհի վրա, Սմոլենսկի մեծ ճանապար-  
հից Յ վերստ այն կողմք: Վերջին երեք տարում իշխան Անդրեյի  
նյանքում այնքան շատ փոփոխություններ էին եղել, այնքան  
շատ էր նա խորհնել, կշռադատել, վերապրել ու տեսել (նա  
ըրչել էր և արևմուտքը, և արևելքը), որ Լիսի Գորի մտնելիս  
ու րան տարօրինակորեն ու անսպասելի զարմացրեց ամեն ինչ,  
ամեն ինչ ճիշտ նույն էր, ամենայն մանրամասնությամբ  
Ելյանքի նույն ընթացքը: Նա, ինչպես մտնի մի կախարդված  
քնած դղյակ, մտավ ծառուղին և լիսոգորյան տան բարե դար-  
բասը: Նույն ծանրաբարոյությունը, նույն մաքրությունը,  
նույն անդորրությունը տան մեջ, նույն կարասիները, նույն  
պատերը, նույն հնչունները, նույն բուրմունքն ու նույն երկ-  
չոտ դեմքերը, բայց փոքր-ինչ հնացած ու ծերացած: Իշխանա-  
դուստր Մարիան էլի նույն ամօթխած, տգեղ, պառավող աղ-  
ջիկն էր, երկյուղի ու մշտական բարոյական տանջանքների  
մեջ, որ առանց օգուտի և ուրախության ապրում էր իր կյանքի  
լավագույն տարիները: Բուրիենը նույն՝ իր կյանքի յուրաքան-  
չչուր վայրկանից ուրախորեն օգտվող և ինքն իր համար ուրու խ-  
ռոււսերով լցված, իրենից գոհ, կոկետ աղջիկն էր: Նա դարձել էր  
միայն ավելի զստահ, ինչպես թվաց իշխան Անդրեյին: Շպեյ-  
ցարիայից իր հետ բերած զամտիարակ Դիսալը հագել էր  
ուսւական ձևի սյուրթուկ, լեզուն աղավաղելով՝ ուսւերեն  
խոսում էր սպասավորների հետ, բայց էլի նույն սահմանա-  
փակ-խելացի, կրթված, առաքինի ու մանրակիլիտ զաս-  
տիարակն էր: Ծեր իշխանը ֆիզիկապես փոխվել էր միայն նը-  
րանով, որ բերանի մի կողմք նկատվում է մի ատամի պակասը,  
բարոյապես էլի նույնն էր, ինչ որ առաջ, միայն էլ ավելի  
շարացած ու թերահավատ դեպի այն ամենը, ինչ կատար-  
վում էր աշխարհում: Նիկոլուշկան էր միայն միծացել, փոխ-

վել, կարմրել. գլուխը ծածկվել էր թուխ գանգուր մազերով և, ինքն էլ այդ շիմանալով, ծիծաղելիս թե ուրախանալիս, գեղցիկ դեմքի վերին շուրթը բարձրացնում էր ճիշտ այնպես, ինչպես բարձրացնում էր այն հանգուցյալ փոքրիկ իշխանուհին: Նա էր միայն, որ չէր լսում այդ կախարդված, քնած զլյակում տիրող անփոփոխելիության օրենքը: Բայց արտաքուստ թեև ամեն ինչ մնացել էր հինը, ներքուստ բոլոր այդ մարդկանց հարաբերությունները փոխվել էին այն ժամանակից ի վեր, ինչ Անդրեյը չէր տեսել նրանց: Ընտանիքի անդամները բաժանված էին երկու բանակի, խորթացած ու թշնամացած իրար, որ այժմ հավաքվում էին նրա ներկայությամբ, նրա համար փոխելով իրենց սովորական ապրելակերպը: Մի բանակի էին պատկանում ծեր իշխանը, նուրիենը և ճարտարապետը, մյուսին՝ իշխանադրության Մարիան, Դեսալը, նիկոլուշկան և բոլոր դայակներն ու ստնտունները:

Քանի իշխան Անդրեյը գտնվում էր լիսին Գրիգոր բոլոր տնեցինները ճաշում էին միասին, բայց բոլորն էլ անհարմար էին գցում իրենց, և իշխան Անդրեյն գգում էր, որ ինքը հյուր է, որի համար բացառություն են անում, և որ ինքն իր ներկայությամբ նեղում է բոլորին: Առաջին օրը ճաշին իշխան Անդրեյը, ակամա գգալով այդ, լուռ էր, և ծեր իշխանը, նկատելով նրա վիճակի անբնականությունը, նույնպես մոռյուրեն լոեց և ճաշից անմիջապես հետո գնաց իր հարկաբաժինը: Երեկոյան դեմ, երբ իշխան Անդրեյը գնաց նրա մոտ և, աշխատելով նրան աշխուժացնել՝ սկսեց պատմել երիտասարդ կոմս Կամմնսկու արշավանքի մասին, ծեր իշխանն անսպասելի սկսեց խոսել նրա հետ իշխանադրության Մարիայի մասին, զատապարտելով նրան իր սնահավատության համար, ու ուղարկելով շափելու համար, որը միայն ծեր իշխանի ամելով, իսկապես նվիրված էր իրեն:

Եեր իշխանն ասում էր, թե եթե ինքը հիվանդ է, ապա իշխանադրության Մարիայի ձեռից, թե նա դիտմամբ տանջում ու ցղայնացնում է իրեն. թե նա երես տալով և համար զրուցներով փշացնում է փոքրիկ իշխան նիկոլային: Եեր իշխանը շատ լավ գիտեր, որ ինքն է տանջում աղջկան, որ դստեր կյանքը շատ ծանր էր, բայց գիտեր նույնպես, որ չէր կարող նրան շտանջել, և որ դուստրն արժանի է դրանք՝ «ինչո՞ւ հապա-

իշխան Անդրեյը, որ տեսնում է այդ, ոչինչ չի ասում ինձ քը-բոց մասին, — մտածում էր ծեր իշխանը: — Ի՞նչ է նա մտածում, որ ես, շաբագործ ու ծերացած հիմարս, առանց պատճառի եմ սառել աղջկանիցս և ֆրանսուհուն մոտեցրել ինձ: Նա չի հասկանում, ուստի և պետք է բացատրել նրան, հարկավոր է, որպեսզի նա լսի ինձ», մտածում էր ծեր իշխանը: Եվ նա սկսեց բացատրել այն պատճառները, որոնց համար չէր կարող տանել դստեր հիմար բնավորությունը:

— Եթե զուք հարցնում եք ինձ, — ասավ իշխան Անդրեյը, առւտնեց հորը նայելու (նա կյանքում առաջին անգամն էր դատապարտում հորը), ես չի ուզում խոսել, բայց քանի որ հարցնում եք, ապա ես պարզորեն կասեմ ձեզ իմ կարծիքը այդ բոլորի նկատմամբ: Եթե ձեզ և Մաշայի միջն կան թյուրիմացություններ և անհամաձայնություններ, ապա ես ոչ մի կերպ շեմ կարող մեղադրել նրան. ես գիտեմ, թե ինչպես է նա ձեզ սիրում և հարգում: Քանի որ արդեն հարցնում եք ինձ, — շարունակեց իշխան Անդրեյը, ջղագրգռվելով այն պատճառով, որովհետև վերջիրս միշտ պատրաստ էր գրգռվելու, — ապա ես միայն մի բան կարող եմ ասել. Եթե կան թյուրիմացություններ, ապա դրանց պատճառը այն չնշին կինն է, որը շահետք է քրոջս ընկերուհին լիներ:

Սերունին սկզբում կանգ առած աշքերով նայեց որդուն և անբնականորեն ժամանակով ցույց տվեց երկրորդ ատամի պակասը, որին իշխան Անդրեյն ընտելանալ չէր կարողանում:

— Թնդ ընկերուհի, սիրելիս: Հը՞ Այ բան ասի՞ր: Հըմ:

— Հայր, ես չի ցանկանում դատապար լինել, — ասավ իշխան Անդրեյը մաղձոտ ու չոր տոնով, — բայց զուք ստիպեցիք խոսեմ, և ասացի ու միշտ կասեմ, որ իշխանադրության Մարիան մեղավոր չէ, այլ մեղավոր են... մեղավոր է այդ ֆրանսուհին...

— Այս, դատապարտեցի՛ր..., դատապարտեցի՛ր, — ասավ ծերունին կամացուկ ձայնով և, ինչպես իշխան Անդրեյին թըլաց, շփոթված, բայց հետո հանկարծ նա վեր թռավ ու բղավեց, — Դո՛ւրս, դո՛ւրս! Շունչդ այստեղ Ալինի...

Իշխան Անդրեյն ուզում էր անմիջապիս մեկնել, բայց իշխանադուստր Մարիան խնդրեց մի օր էլ մնալ: Այդ օրն իշխան Անդրեյը շտեմպեց հոր հետ, որ փուրս չեկավ և ոչ ոքի շթողեց իր հարկարաժինը, բացի ու-ըլլե Բուրիենից և Տիխոնից, ու մի քանի անգամ հարցրեց, թե որդին մեկնել է արդյոք: Հետեւյալ օրը, մեկնելուց առաջ, իշխան Անդրեյը գնաց որդու հարկարաժինը: Առողջ, մոր պես գանգրահեր տղան նստեց նրա ծննդերին: Իշխան Անդրեյն սկսեց պատմել նրան Կապույտ Սորուրի հերիքաթը, բայց չվերջացրած, մտածմունքի մեջ ընկալ: Նա մոտածում էր ոչ թե սիրունիկ տղա-որդու մասին այն միջոցին, երբ նրան պահել էր իր ծննդերի վրա, այլ մտածում էր իր մասին: Նա սարսափով որոնում ու իր մեջ չէր գտնում ոչ զոջում այն բանի համար, որ չդադրգուեց հորը, ոչ էլ ափսոսանք, որ ինքը (կյանքում առաջին անգամ խոռվ) հեռանում է նրանից: Ամենից գլխավորն այն էր, որ նա որոշում ու իր մեջ չէր գտնում նախկին բնիքությունը գեպի որդին: Նա հույս ուներ այդ զգացումը հարուցանել իր մեջ որդու փայփայելով ու ծննդերին նստեցնելով:

— Դե՛, պատմիր է՛, — ասում էր որդին:

Իշխան Անդրեյը, շպատասխանելով, որդուն իշեցրեց ծննդերից և դուրս եկավ սենյակից:

Հենց որ իշխան Անդրեյը թողեց իր ամենօրյա զբաղումները, մանավանդ հենց որ մտավ նախկին կյանքի պայմանների մեջ, որոնց մեջ գտնվում էր դեռ այն ժամանակ, երբ երջանիկ էր, կյանքի թախիծը նորից պաշարեց նրան առաջվան ուժով, և նա շտապեց որքան կարելի է շուտ հեռանալ այդ հիշողություններից և շուտով մի որևէ գործ գտնել:

— Դու հաստատ մեկնում ես, Անդրե, — ասավ քույրը Էրան:

— Փառք աստծու, որ կարող եմ մեկնել, — ասավ իշխան Անդրեյը. — շատ ցավում եմ, որ դու չես կարող:

— Դու այդ ինչո՞ւ համար ես ասում, — ասավ իշխանապետը Մարիան. — ինչո՞ւ դու այդ ասում ես այժմ, երբ գրնում ես այդ սարսափելի պատերազմին մասնակցելու, և նա սովորա՞ն ծեր է: Ա-ըլլե Բուրիենն ասում էր, որ նա հարցի ել է քո մասին...

— 48 —

Հենց որ նա սկսեց խոսել այդ մասին, նրա շուրթերը դռղացին, և արցունքները կաթեցին աշքերից: Իշխան Անդրեյը երեսը շրջեց քրոշից և սկսեց գնալ-գալ սենյակում:

— Ա՛խ, աստված իմ, աստված իմ, — ասավ նա: — Երբ մտածում ես, թե ինչը և ո՞վ — որպիսի ոչնչություն կարող է լինել մարդկանց դժբախտության պատճառ, — ասավ նա զայրույթով, որը վախեցրեց իշխանադուստր Մարիային:

Նա հասկացավ, որ եղբայրը խոսելով մարդկանց մասին, որ նոց համարեց ոչնչություն, նա նկատի ուներ ոչ միայն ու-ըլլե Բուրիենին, որը նրա դժբախտության պատճառն էր, այլ և այն մարդուն, որը խորտակեց նրա երջանկությունը:

— Անձը, միայն մի բան եմ խնդրում, աղաջում քեզ, — ասավ նա, ձեռք դիպանելով եղբոր արմունկին և արցունքի միջից փայլող աշքերով նրան նայելով: — Ես հասկանում եմ քեզ (իշխանադուստր Մարիան աշքերը խոնարհեց): Մի կարծիք, թե վիշտը մարդիկ են ստեղծել: Մարդիկ — նրա գործիքն են: — Նա նայեց իշխան Անդրեյի գլխից փոքր-ինչ վեր, վստահ, սովորական հայացքով, որով նայում են պատկերի ծանոթ տեղին: — Վիշտն ուղարկել է նա, այլ ոչ թե մարդիկ: Մարդիկ՝ նրա պոշտիքներն են, նրանք մեղավոր չեն: Եթե քեզ թվում է, թե որևէ մեկը մեղավոր է քո առաջ, մոռացիր այդ ու ներիր: Մենք իրավունք չունենք պատժելու: Եվ դու կհասկանս սներելու երջանկությունը:

— Եթե կին լինեի, ես այդ կանեի, Մարի: Դա կնոց առարինությունն է: Բայց տղամարդը չպետք է և չի կարող մոռանալ ու ներել, — ասավ նա, և թեև մինչ այդ րոպեին նա չէր մտածում Կուրագինի մասին, նրա շարտահայտված վրեժիքնդրություն գգացումը հանկարծ զարթնեց նրա սրտում:

«Եթե իշխանադուստր Մարիան արդեն համոզում է ինձ ներել, ապա նշանակում է ես վաղուց պետք է պատժեի», մտածեց նա: Եվ, այլևս իշխանադուստր Մարիային շպատամանելով, նա սկսեց այժմ մտածել վրեժիքնդրության այն ուրախալի րոպեի մասին, երբ կհանդիպի Կուրագինին, որը (նա զիտի) զտնվում է բանակում:

Իշխանադուստր Մարիան աղերսում էր եղբորը ուղարակ մի օր ևս, խօսեց այն մասին, որ զիտի, թե որքան դժբախտ կլի՛ հայրը, եթե Անդրեյը մեկնի՝ նրա հետ հաշտված. բայց իշխան

Անդրեյը պատասխանեց, թե, հավանորեն, շուտով նորից կզարանակից, թե անպատճառ կզրի հորը և թե այժմ որքան երկար մնա, այնքան ավելի կրորորքի երկպառակությունը:

— Adieu, André. Rappellez-vous que les malheurs viennent de Dieu, et que les hommes ne sont jamais coupables<sup>1</sup>, — այս վերջին խոսքերն էին, որ նա լսեց քրոջից, երբ նրան հրաժեշտ էր տալիս:

«Ուրեմն այդպես պետք է լինի, — մտածեց իշխան Անդրեյը, դուրս գալով լիսոգորյան տան ծառուղուց։ Մարիան՝ խղճուկ, անմեղ մի էակ, մնալու է ցնդած ծերունուն կեր։ Ծերունին զգում է, որ մեղավոր է, բայց չի կարող փոխել իրեն։ Տղաս աճում է և ուրախանում կյանքով, ուր նա լինելու է այնպիսին, ինչպես բոլորը՝ խարված կամ խարվող։ Ես բանակ եմ գնում, ինչո՞ւ — ինքս չփիտեմ, եցանկանում եմ հանդիպել այն մարդուն, որին արհամարհում եմ, հանդիպել նրա համար, որ նրան առիթ տամ ինձ սպանելու և վրաս ծփծաղելու։ Առաջ կային կյանքի նույն այդ պայմանները, բայց առաջ նրանք բոլորը հյուսվում-կապվում էին միմյանց, իսկ հիմա բոլորը ցրիվ է եկելու իշխան Անդրեյին ներկայանում էին մեկը մյուսի ետևից, միայն անմիտ-անիմաստ երկութներ, առանց որևէ կապի։

## IX

Իշխան Անդրեյը բանակի գլխավոր կայանն եկավ հունիսի վերջին։ Առաջին բանակի գորքերը, այն բանակի, ուր գտնվում էր թագավորը, տեղալորչած էին Դրիսսայի մոտ՝ ամրացրած ճամբարում։ Երկրորդ բանակի գորքերը նահանջում էին, ձգտելով միանալ առաջին բանակին, որից, ինչպես ասում էին, նրանք կտրված էին ֆրանսական մեծ ուժերով։ Բոլորը դժո՞հ էին ուզմական գործերի այն ընդհանուր դրությունից, որ տիրում էր ոռւսական բանակում։ Բայց ոռւսական նահանգները ներխուժելու վտանգի մասին ոչ ոք չէր էլ մտածում։ Ոչ ոք չէր էլ ենթադրում, որ պատերազմը կարող է տեղափոխվել արևմտյան լեհական նահանգներից այս կողմ։

<sup>1</sup> Գնաս բարով, Անդրեյ։ Հիշեր, որ գմբախտությունները գալիս են աստծուց և որ մարդիկ երեք մեղավոր չեն։

Իշխան Անդրեյը թարկայ-դե-Տոլիին (որի մոտ նա նշանակված էր) գտավ Դրիսսայի ափին։ Որովհետև ճամբարի շրջակայքում ոչ մի մեծ գյուղ կամ ավան չկար, ուստի և բանակում նղած բազմաթիվ գեներալներն ու պալատականները տեղավորված էին տասը վերստի շափ շրջագիծ կազմող գյուղերի լավագույն տներում՝ գետի երկու ափերին։ Թարկայ-դե-Տոլիին գտնվում էր թագավորի կայանից շորս վերստի վրա։ Նա շոր ու սառն ընդունեց թալկոնսկուն և իր գերմանական առգանությամբ ասավ, որ թագավորին կզեկուցի նրա մասին՝ պաշտոնի նշանակելու համար, իսկ այժմ խնդրում է մնալ իր շաբում։ Անատոլի Կուրագինը, որին իշխան Անդրեյը հույս ուներ գտնել բանակում, այդտեղ չէր։ Նա Պետերբուրգում էր. և այդ լուրը հաճելի էր Բալկոնսկուն։ Տեղի ունեցող հակայական պատերազմի կենտրոնն իր հետաքրքրությամբ զբաղեցրեց իշխան Անդրեյին, և նա ուրախ էր գեթ որոշ ժամանակ պատվել այն հուզված վիճակից, որ առաջանում էր նրա մեջ ամեն անգամ, երբ նա մտածում էր Կուրագինի մասին։ Առաջին շորս օրվա ընթացքում, երբ ոչ մի տեղից նրա վերաբերյալ պահանջ չեղավ, իշխան Անդրեյը շրջեց ամբողջ ամրացրած ճամբարը և իր գիտելիքների ու գիտակ մարդկանց հետ ունեցած խոսակցությունների միջոցով աշխատեց պարզորդ գաղափար կազմել նրա մասին։ Բայց այն հարցը, ին որքան ճեռնտու ու հարմար էր այդ ճամբարը, իշխան Անդրեյի համար մնաց չլուծված։ Նա իր ուզմական փորձով արդեն եկել էր այն համոզմունքին, որ ուզմական գործում ոչ մի նշանակություն չունեն ամենախորիմաստ ու լրջորեն մտածված ծրագրներն անգամ (ինչպես նա այդ տեսել էր Առւսերիցի արշավանքի ժամանակ), որ ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպես են պատասխանում թշնամու անսպասելի և աննախատեսելի գործողություններին, որ ամեն ինչ կախված է այն բանից, թե ի՞նչպես են՝ վարում ամբողջ գործը։ Որպեսզի իր համար պարզի այս վերջին հարցը, իշխան Անդրեյը, օգտվելով իր դիրքից ու ժանոթություններից, աշխատում էր հասկանալ բանակ կառավարելու սկզբունքները և պարզել բանակի կառավարմանը մասնակցող անձանց ու պարտիաների բնույթը։ Այդպիսով իրերի դրությունը նրան պատկերացավ հետեւյալ կերպով։

Այն ժամանակ, երբ թագավորը դեռ Վիլնոյումն էր, բանակը բաժանված էր երեք մասի. 1-ին բանակը գտնվում էր Բարիլայ-դե-Տոլլիի հրամանատարության ներքո, 2-րդը՝ Բագրատիոնի հրամանատարության ներքո, 3-րդը՝ Տորմասովի հրամանատարության ներքո: Թագավորը գտնվում էր առաջին բանակում, բայց ոչ որպես գլխավոր հրամանատար: Հրամանների մեջ ասված էր, որ թագավորը ոչ թե հրամանատարություն է անելու, այլ միայն ասված էր, որ թագավորը կլինի բանակում: Բացի դրանից, անձամբ թագավորի մոտ չկար գրւագոր հրամանատարի շտար, այլ կար կայսերական գլխավոր կայանի շտար: Նրա մոտ էր կայսերական շտարի պետք, բանակապետը՝ գեներալ իշխան Վոլկոնսկին, գեներալներ, ֆիզիկապյուտանաններ, դիվանագիտական աստիճանագորներ և մեծ թվով օտարերկրացիներ, բայց բանակի շտար չկար: Բացի դրանից, առանց պաշտոնի՝ թագավորի մոտ էին գտնվում Արակչենը՝ նախկին ռազմական մինիստրը, կոմս Բենիգսենը՝ դեներալներից աստիճանով ավագը, մեծ իշխան թագաժառանգ Կոնստանտին Պավլովիչը, կոմս Ռումյանցենը՝ կանցլերը, Շտենը՝ նախկին պրուսական մինիստրը, Արմֆիլդը՝ շվեյցական գններալը, Պֆուլը՝ արշավանքի ծրագրի գլխավոր կազմողը, Պաուլուչին՝ սարդինացի գեներալ-ադյուտանտը, Վոլցուչենը և շատ ուրիշները: Թեև այդ անձինք առանց ռազմական պաշտոնների էին գտնվում բանակում, բայց իրենց դիրքով ազգեցություն ունեին, և հաճախ կորպուսի պետք և նույնիւր գրւագոր հրամանատարը զգիտեր, թե որպես ի՞նչ է այս կամ այն բանը հարցնում կամ խորհուրդ տալիս Բենիգսենը, կամ մեծ իշխանը, կամ Արակչենը, կամ իշխան Վոլկոնսկին, և զգիտեր՝ արդյոք նրանից, թե թագավորից է բխում ու չամաց կամ կարգադրությունը խորհրդի ձևով, և պետք է արդյոք կատարել այն, թե շպետք է կատարել: Բայց դա արտաքին կողմն էր: Մինչեռ թագավորի և այդ բոլոր պալատական անձանց (իսկ թագավորի ներկայությամբ բոլորը պալատական են դառնում) ներկայության էական իմաստը բոլորի համար էլ պարզ էր: Այդ իմաստը հետեւալն էր. Բագավորն իր վրա չէր վերցնում գլխավոր հրամանատարի կոշում, բայց կարգադրությունը էր անում բոլոր գորաբանակներին. իսկ այն մարդիկ, որոնք շշագատում էին նրան, նրա օգնականներն էին: Արակչենը

կարգի հավատարիմ պահապան-կատարող էր և թագավորի թիկնապահը. Բենիգսենը Վիլնոյի նահանգի կալվածատեր էր, որ եկել էր երկրի պատիվն ու հարգանքը մատուցելու, իսկ էապես լավ գեներալ էր, օգտակար՝ խորհուրդների համար, ինչպես նաև նրա համար, որ հարկ եղած դեպքում Բարիլային նրանով փոխարինեն: Մեծ իշխանն այդտեղ էր այն պատճառով որ ինքն այդպես էր ուզում: Նախկին մինիստր Շտենն այդտեղ էր այն պատճառով, որ օգտակար էր խորհուրդների համար, ինչպես նաև այն պատճառով, որ Ալեքսանդր կայսրը բարձր էր գնահատում նրա անձնական բարեմասնությունները: Արմֆիլդը նապուենի մոլի ատողն էր և գեներալ, որը վստահ էր իր վրա, մի հանգամանք, որը միշտ էլ ազդեցություն ուներ Ալեքսանդրի վրա: Պաուլուչին այդտեղ էր այն պատճառով, որ նա համարձակ էր և կտրուկ էր ճառերում: Գեներալ-ադյուտաններն այդտեղ էին այն պատճառով, որ նրանք ամեն տեղ էին, ուր թագավորն էր, և վերջապես, գլխավորը — Պֆուլն այդտեղ էր այն պատճառով, որ նա էր կազմել նապուենի դեմ մղվող պատերազմի ծրագիրը, և ստիպելով Ալեքսանդրին՝ հավատալ այդ ծրագրի նպատակահարմարությանը, ղեկավարում էր պատերազմի ամբողջ գործը: Պֆուլի մոտ էր Վոլցուչենը, որը Պֆուլի մտքերն ավելի մատշելի ձևով էր արտահայտում, քան ինքը Պֆուլը, որը խիստ, մինչ ամեն ինչ արհամարհելու շափ ինքնավտահան կարինետային տեսաբան էր:

Բացի զնորհիշյալ անձնավորություններից, ուստի ներկայություն ունեին, և հաճախ կորպուսի պետք և նույնիւր գրւագոր հրամանատարը զգիտեր, թե որպես ի՞նչ է այս կամ այն բանը հարցնում կամ խորհուրդ տալիս Բենիգսենը, կամ մեծ իշխանը, կամ Արակչենը, կամ իշխան Վոլկոնսկին, և զգիտեր՝ արդյոք նրանից, թե թագավորից է բխում ու չամաց կամ կարգադրությունը խորհրդի ձևով, և պետք է արդյոք կատարել այն, թե շպետք է կատարել: Բայց դա արտաքին կողմն էր: Մինչեռ թագավորի և այդ բոլոր պալատական անձանց (իսկ թագավորի ներկայությամբ բոլորը պալատական են դառնում) ներկայության էական իմաստը բոլորի համար էլ պարզ էր: Այդ իմաստը հետեւալն էր. Բագավորն իր վրա չէր վերցնում գլխավոր հրամանատարի կոշում, բայց կարգադրությունը էր անում բոլոր գորաբանակներին. իսկ այն մարդիկ, որոնք շշագատում էին նրան, նրա օգնականներն էին: Արակչենը

Այդ հսկայական, անհանգիստ, փայլուն ու հպարտ աշխարհում եղած մտքերի ու ձայների մեջ իշխան Անդրեյը տեսնում էր ուղղությունների ու պարտիաների հետեւալ որոշակի ստորաբաժանումները:

Առաջին պարտիան էր՝ Պֆուլը և նրա հետեւալները, պատերազմի տեսաքաններ, որոնք հակառակ էին այն բանին, որ կա ռազմական զիտություն և որ այդ զիտությունն ունի իր ան-

Փոփոխ օրենքները, դիմադարձ շարժման, շրջանցի և այլ օրենքները: Պֆուլը և իր հետևողները պահանջում էին նահանջել երկրի խորքը այն ճշգրիտ օրենքների համաձայն, որ առաջարկում էր պատերազմի կարծեցյալ թերթիան, և համենայն դեպքում մի շեղում այդ թերթիայից, նրանք միայն բարքարություն, տղիտություն կամ շարամտություն էին համարում: Այդ պարտիային էին պատկանում գերմանական իշխանները, Վոլցոգենը, Վինցենցերոգեն և ուրիշները, առաջելապես գերմանացինները:

Երկրորդ պարտիան առաջինի հակառակն էր: Ինչպես միշտ լինում է, մի ծայրահեղության հանդեպ կային մի այլ ծայրահեղության ներկայացուցիչներ: Այդ պարտիայի մարդիկ նրանք էին, որոնք պահանջում էին՝ Վիլնոյից արշավել և հաստանի վրա և ազատ լինել ամեն տեսակի նախապես կազմված ծրագրներից: Բացի այն, որ այդ պարտիայի ներկայացուցիչները խիզախ գործողությունների ներկայացուցիչներ էին, որա հետ միասին նրանք և ազգության ներկայացուցիչներ էին, և այդ պատճառով էլ ավելի ևս միակողմանի էին գառնում վեճերում: Դրանք սուսներ էին՝ Բագրատիոնը, որ իր պաշտոնով ու դիրքով նոր էր բարձրանում, երմոլովը և ուրիշները: Այդ ժամանակ տարածված էր երմոլովի հայտնի կատակեայն մասին, որ իր թե նա թագավորից խնդրել էր միայն մի ողորմածություն՝ իրեն գերմանացի դարձնել: Այդ պարտիայի մարդիկ Սուլվորովին հիշելով, ասում էին, որ չպետք է մրտածել, չպետք է քարտեզն ասեղներով ծակծել, այլ պետք է կովել, հարվածել թշնամուն, նրան նուսաստան շթողնել և թույլ շտալ, որ զորքը վհատի:

Երրորդ պարտիային, —դեպի որն ավելի մեծ վատահություն ուներ թագավորը, —պատկանում էին երկու ուղղությունների միջև գործարքներ կատարող պալատականները: Այդ պարտիայի մարդիկ, մեծ մասամբ ոչ զինվորականներ, որին պատկանում էր Արակշենը, մտածում և ասում էին այն, ինչ սովորաբար ասում են մարդիկ, որոնք համոզմունքներ շունեն, բայց որոնք ցանկանում են ձևացնել ընդհակառակը: Նրանք ասում էին, որ անկասկած պատերազմը, մանավանդ երբ հրապարակում կա այնպիսի հանճար, ինչպիսին է Բոնապարտեն (նրան դարձյալ Բոնապարտի էին անվանում), պահանջում է

ամենախորամիտ կշռացատումներ, խորունկ ծանոթություն գիտությանը, և որ այդ գործում Պֆուլը հանճարել է: Բայց դրա հետ միասին չի կարելի լրնդունել, որ տեսաբանները հաճախ միակողմանի են լինում, ուստի և չպետք է ուժը ըստովին վստահել Շառլուանց, պետք է լսել և այն, ինչ ասում են գործնական մարդիկ, ուազմական գործին հմուտ մարդիկ, և այդ բոլորից վեցներ միշտներ: Այդ պարտիայի մարդիկ պնդեցին, որ Պֆուլի ծրագով համաձայն պահպանելով Դրիսսայի ճամբարը, պետք է փոխել մյուս բանակների ուղղությունը: Թեև այդ գործելակերպով նրանք չեն հասնում ոչ այդ և ոչ այն նպատակին, բայց այդ պարտիայի մարդկանց այդպես ավելի լավ էր թվում:

Չորրորդ ուղղությունն այն ուղղությունն էր, որի ամենից ավելի աշքի ընկնող ներկայացուցիչն էր թագաժառանգ մեծ իշխանը, որը չէր կարողանում մոռանալ իր առատերլցյան հիմասթափությունը, ուժ նա, ինչպես զորատեսի գնալիք, սաղավարտով ու կաշերանկոնով ծի հեծած դուրս եկավ գվարդիայի առաջ, հույս ունենալով քաջարար ջարդել ֆրանսացւներին, և անսպասելի կերպով ընկնելով առաջին զորագիքը, հազիվհազ պրծավ ընդհանուր խուճապի մեջ: Այդ պարտիայի մարդիկ իրենց դատողությունների մեջ հանդիս էին բերեմ անկեծության և՝ թերությունը, և՝ առավելությունը: Նրանք վախենում էին նապոլեոնից, նրա մեջ ուժ էին տեսնություն իրենց մեջ՝ թուլություն, և շիտակորեն արտահայտում էին այդ: Նրանք ասում էին՝ «Ոչինչ՝ բացի զժբախտությունից, խոյտառակրւթյունից ու կորստից չի դուրս գա այդ բոլորից»: Ահա մենք թողինք Վիլնոն, թողինք Վիտեբսկը, կթողնենք և Դրիսսան: Միակ խելացի բանը, որ մեզ մնում է անել, այդ հաշություն կնքելն է և որքան կարելի է շուտ, քանի դեռ մեզ չեն բշել Պետերբուրգից»:

Այդ տեսակետը, որ խիստ տարածված էր բանակի բարձր շրջաններում, պաշտպանություն էր գտնում և Պետերբուրգում, և Կանցլեր Ռումյանցեի կողմից, որը այլ պետական պատճառաներով նմանապես հաշտության կողմնակից էր:

Հինգերորդները Բարկլայ-դե-Տոլլիի կողմնակիցներն էին, որոնք նրան պաշտպանում էին ոչ այնքան որպես մարդու, ոչ-

քան որպես ուազմական մինհստրի և գլխավոր հրամանատարի: Նրանք ասում էին, «Ինչ որ է (միշտ այդպես էին սկսում), և ազնիվ, խելացի մարդ է, և նրանից լավը չկա: Տվեք նրան իսկական իշխանություն, — որովհետեւ պատերազմը չի կարող հաջող ընթանալ առանց միասնական հրամանատարության, — և նա ցուց կտա այն, թե ինքն ինչ կարող է անել, ինչպես նա իրեն ցուց տվեց Ֆինլանդիայում: Եթե մեր բանակը կազմակերպված և ուժեղ բանակ է և եթե նա մինչեւ Դրիսսա նահանջեց՝ առանց որևէ պարտություն կրելու, ապա դրանով մենք պարտական ենք միայն Բարկլային: Եթե հիմա Բարկլային փոխարինեն Բենիգսենով, ապա ամեն ինչ կործանվի: Որովհետև Բենիգսենը 1807 թվին արդեն ցուց տվեց իր անընդունակությունը», ասում էին այդ պարտիայի մարդիկ:

Աեցերորդները, Բենիգսենականներն, ընդհակառակն ասում էին, որ այնուամենայնիվ Բենիգսենից ավելի խելացին ու հմուտը չկար, որ ինչքան էլ դես ու դեն ընկնեն, վերջիվերջո գարձյալ նրան են դիմելու «Թո՛ղ հիմա սխալներ անեն». և այդ պարտիայի մարդիկ պացառցում էին, որ մեր ամբողջ նահանջը մինչեւ Դրիսսա՝ ամենաամոթալի պարտություն ու սխալների մի անվերջ շարան է եղել: «Որքան ավելի շատ սրբալիներ անեն, այնքան ավելի լավ. գոնե ավելի շուտ կհասկանան, որ այդպես չի կարող շարունակվել», ասում էին նրանք: «Եսկ հարկավոր է ոչ թե ինչ-որ Բարկլայ, այլ այնպիսի մի մարդ, ինչպիսին է Բենիգսենը, որը 1807 թվին արդեն իրեն ցուց է տվել, որին ըստ արժանվույն գնա՛ւատել է ինքը նապուլոնը, և այնպիսի մարդ, որի իշխանությունը սիրով ընդունեցին, և այդպիսի մեկն է միայն Բենիգսենը»:

Ցոթերորդներն այն անձննք էին, որոնք միշտ կան, մանավանդ երիտասարդ թագավորների ժամանակ և որոնց թիվն առանձնապես մեծ էր Ալեքսանդր Կայսեր օրոք, — դրանք գեներալներ և Փլիկել-ադյուտանտներ էին, որոնք զերմագին նվիրված էին թագավորին ոչ որպես կայսեր, այլ որպես մարդու, որոնք անկեղծորեն ու անշահաղիտաբար պաշտում էին նրան, ինչպես նրան պաշտում էր Ռոստովը 1805 թվին, և որոնք նրա մեջ տեսնում էին ոչ միայն բոլոր առարինությունները, այլ և բոլոր մարդկային բարեմասնությունները: Թեև այդ մարդիկ հիանում էն թագովրի համեստությամբ, որը

հրաժարվում էր զորքերի հրամանատար լինելուց, բայց դատապարտում էին այդ ավելորդ համեստությունը և միայն մի բան էին ցանկանում ու պնդում, որ պաշտելի թագավորը, մի կողմ դնելով զեպի իր անձն ունեցած ավելորդ անվագուածությունը, բացահայտորեն հայտարարի, որ ինքն անցնում է զորքերի գլուխ, իր համար գլխավոր հրամանատարի գլխավոր կայսեն կազմակերպի և, խորհրդակցելով երբ հարկ լինի, հմուտ տեսաբանների ու պրակտիկ մարդկանց հետ, ինքն առաջնորդի իր զորքերը, որոնց միայն այդ կարող է հասցնել բարձր ոչեվորության:

Ութերորդ, ամենամեծ խումբը, որն իր բազմամարդությամբ մյուս պարտիաների հետ կազմում էր նույնպիսի հարաբերություն, ինչպես 99-ը և մեկը, բազկացած էր և այն մարդկանցից, որոնք չէին ցանկանում ոչ հաշտություն, ոչ պատերազմ, ոչ հարձակողական գործողություններ, ոչ պաշտպանողական ճամբար՝ ոչ Դրիսսայում և ոչ էլ մի այլ տեղ, ոչ Բարկլային, ոչ թագավորին, ոչ Պֆուլին, ոչ Բենիգսենին, բայց որոնք ցանկանում էին միայն մի բան, և ամենաէականը՝ ամենամեծ շահն ու բավականությունն իրենց համար: Այն խաշաճեկող ու հյուսվող ինտրիգների պղտոր ջրում, որոնցով լի էր թագավորի գլխավոր կայսենը, կարելի էր հաջողեցնել շատ այնպիսի բաներ, որոնք աներեսակայելի էին մի այլ ժամանակ: Մեկը, միայն ցանկանալով զրկվել իր շահավետ գիրքից, այսօր համաձայնում էր Պֆուլի հետ, վաղը նրա հւկառակորդի հետ, մյուս օրը պնդում էր, որ ոչ մի կարծիք շունի իրեն ծանոթ առարկայի մասին, միայն նրա համար, որսինուի խուսափի պատասխանատվությունից և հաճոյանա թագավորին: Մյուսը, որ ցանկանում էր շահել, իր վրա էր դարձնում թագավորի ուշագրությունը, բարձրածայն հայտարարելով նույնը, ինչ թագավորն ակնարկել էր երեկ, վիճում ու գոռում էր խորհրդում, իր կուրծքը ծեծելով և շահամածայնողներին մենամարտի կանչելով և դրանով իսկ ցուց տալով, որ ինքը պատրաստ է զոհվել ընդհանուրի օգտի համար: Երրորդը լրազապես աղերսանքով երկու նիստերի արանքում և թշնւաների բացակայությամբ միանվագ նպաստ էր ստանում իր հավատարիմ ծառայության համար, գիտենալով, որ հիմա մերժելու ժամանակ չի լինի: Զորքորդը՝ աշխատանքով ծան-

բարեռնված՝ շարունակ աշխատում էր հանկարծակի երևալ թագավորի աշքին։ Հինգերորդի՝ իր վաղեմի նպատակին հասնելու՝ թագավորի մոտ ճաշի արժանանալու համար մուլգնորեն ապացուցում էր նոր առաջ եկած կարծիքի նշմարիտ և ոչ նշմարիտ լինելը և դրա համար քիչ թե շատ ուժեղ և արդարացի ապացուցներ էր բերում։

Այդ պարտիայի բոլոր մարդիկ՝ ոռւբլիներ, խաչեր, աստիճաններ էին որսում և այդ որսի միջոցին հետևում էին միայն ցարի ողորմածության հողմացույցի ուղղությանը, և հենց որ նկատում էին, որ հողմացույցը դարձել է մեկ կողմ, ապա բանակի այդ ամբողջ բոռային բազմությունն սկսում էր փշել նույն կողմ, այնպես որ թագավորի համար ավելի ևս դժվար էր լինում հողմացույցը դարձնել հակառակ կողմը։ Տիրող պայմաններում, երբ դրությունն անորոշ էր, երբ լուրջ վտանգ էր սպառնում, մի վտանգ, որն ամեն ինչի առանձնապես տագնապալի բնույթ էր տալիս, երբ ինտրիգների ու դավերի, ինքնափրությունների և զանազան կարծիքների ու զգացմունքների բախումների մի փոթորիկ էր առաջացել և վերջապես այդ բոլոր անձնավորությունների այլացեղության պայմաններում, — այդ ութերորդ, անձնական շահերով տարված մարդկանց ամենամեծ պարտիան ավելի ևս խառնում ու խճանում էր ընդհանուր գործը։ Ինչպիսի հարց էլ որ բարձրանում էր, բուռքի այդ պարսլ գեն իր երգը շվերշացրած մի թեմայի շուրջը, թոշում անցնում էր մի այլ նյութի և իր բզզոցով խլացնում և մթագնում էր վիճող անկեղծ ձայները։

Հենց այն ժամանակ, երբ իշխան Անդրեյը բանակ էր եկել, այդ բոլոր պարտիաներից բացի հավաքվել էր ևս մի նոր, իններորդ պարտիա, որ սկսել էր իր ձայնը բարձրացնել։ Դա մի պարտիա էր, որը բաղկացած էր հին, խելացի, պետական գործերում փորձված ու հմտացած մարդկանցից, որոնք շրաժանելով հակառակ կարծիքներից և ոչ մեկը, կարողանում էին վերացականորեն դիտել այն ամենը, ինչ կատարվում էր գըլխավոր կայանի շտաբում և միջոցներ խորհել՝ դուրս գալու այդ անորոշությունից, անվճականությունից, խճճվածությունից ու թուլությունից։

Այդ պարտիայի մարդիկ ասում և կարծում էին, որ շարիքի ամբողջ պատճառը թագավորի և նրա հետ միասին պալա-

տական զինվորականների ներկայությունն է բանակում, որ բանակ է տեղափոխված հարաբերությունների այն անորոշ, պայմանական ու տատանվող անկայունությունը, որը հարմար է արքունիքում, բայց վնասակար բանակում։ Այնուհետև այդ մարդիկ ասում էին, որ թագավորը պետք է թագավորություն անի, և ոչ թե զորք կառավարի, որ այդ դրությունից միակ ելքն այն կլինի, որ թագավորն իր պալատականներով հեռանա բանակից, որ հենց թագավորի ներկայությունն անդամալույժ է ղարձնում այն 50 հազար զորքին, որը հարկավոր է նրա անձնական ապահովության համար, որ ամենավատ, բայց անկախ գլխավոր հրամանատարը ավելի լավ կլինի ամենալավ, բայց թագավորի ներկայությամբ և իշխանությամբ կաշկանգված հրամանատարից։

Հենց այն ժամանակ, երբ իշխան Անդրեյն առանց գործի ապրում էր Դրիսսայի ճամբարում, պետական քարտուղար Շիշկովը, որն այդ պարտիայի գլխավոր ներկայացուցչիներից մեկն էր, մի նամակ գրեց թագավորին, որը համաձայնեցին ստաբագրել Բալաշեն ու Սրակչեն։ Այդ նամակում, նա, օգտրվելով այն թույլտվությունից, որ տվել էր նրան թագավորը՝ գործերի ընդհանուր ընթացքի մասին կարծիք հայտնելու վերաբերյալ, հարգավիր կերպով և մայրաքաղաքի բնակչությանը պատերազմի համար ոգեսրելու անհրաժեշտության պատրվակով առաջարկում էր թագավորին թողնել զորք։

Այն, որ թագավորը պետք է ոգեսրել ժողովրդին և հայրենիքը պաշտպանելու կոչ աներ նրան, հենց ժողավրդական այն ոգեսրությունը (որչափ այն առաջացավ զնորդիվ թագավորի ներկայությանը Մոսկվայում), որն նուևաստանի հաղթանակի գլխավոր պատճառը եղավ, ահա այդպիսի ոգեսրություն առաջացնելու անհրաժեշտությունը ներկայացվեց թագավորին և ընդունվեց նրա կողմից, որպես բանակը թողնելու պատրվակ։

## X

Այդ նամակը դեռ չէր հանձնված թագավորին, երբ Բարկլայը ճաշի ժամանակ Բալկոնսկուն հայտնեց, թե թագավորը ցանկանում է անձամբ տեսնել իշխան Անդրեյին նրա համար, որպեսզի հարց ու փորձ անի նրան թուրքիայի մասին, և որ

իշխան Անդրեյը պետք է երեկոյան ժամը վեցին ներկայանա  
թենիգսենի բնակարանը:

Նույն այդ օրը թագավորի բնակարանում լուր ստացվեց նապուենի նոր առաջխաղացման մասին, որը կարող էր զրտանգավոր լինել բանակի համար, — մի լուր, որը հետագայում չճշտվեց: Նույն այդ առավոտ գնդապետ Միշոն թագավորի հետ միասին դիտում էր Դրիսսայի ամրությունները և ապացուցում թագավորին, որ այդ ամրացրած ճամբարը, որը կազմակերպել էր Պֆուլը և որը մինչ այդ ուղամական գործելակերպի գլուխգործոց համարվելով պետք է կործաններ նապոլեոնին, — ահա այդ ճամբարն անհեթեթություն է և ոռւսական բանակի համար համար կորուստ է բերելու:

Իշխան Անդրեյը եկավ գեներալ Բենիգսենի բնակարանը, որը գտնվում էր մի փոքր կալվածատիրական տան մեջ՝ ուղիղ գետի ափին: Ոչ Բենիգսենը և ոչ թագավորն այնտեղ չէին. բայց Զերնիշովը՝ թագավորի ֆլիգել-աղյուտանտն ընդունեց Քալկոնսկուն և հայտնեց նրան, թե թագավորը գեներալ Բենիգսենի և մարկիզ Պաուլուչի հետ այդ օրը երկրորդ անգամ գնացել է դիտելու Դրիսսայի ճամբարի ամրությունները, որի հարմար լինելու մասին սկսել էին խիստ կասկածել:

Զերնիշովը առաջին սենյակի պատուհանի մոտ նստած Գրանսական վեպ էր կարդում: Այդ սենյակն ըստ երեսութին արագ դաշիճ էր եղել. այդտեղ զեռ երգեհոն կար, որի վրա ինչ-որ գորգեր էին կիտված, իսկ մի անկյունում էլ դրված էր Բնիգսենի աղյուտանտի ծալովի մահճակալը: Այդ աղյուտանտն այդտեղ էր: Նա, ըստ երեսութին, խրախճանքից կամ աշխատանքից հետո խիստ հոգնած նստել էր ծալած անկողնու վրա ու նիրհում էր: Դահլիճը երկու դուռ ուներ. մեկը բացվում էր ուղղակի դեպի նախկին հյուրասենյակը, մյուսը՝ դեպի աշ՝ առանձնասենյակը: Առաջին դոնից լսվում էր գերմաներն և երբեմն ֆրանսերն խոսակցություն: Այնտեղ, նախկին հյուրասենյակում, թագավորի ցանկությամբ հավաքված էին ոչ թե ուղամական խորհուրդը (թագավորն անորոշություն էր սիրում), այլ որոշ անձինք, որոնց կարծիքը առաջիկա դրվարությունների մասին նա ցանկանում էր իմանալ: Դա ուղամական խորհուրդ չէր, այլ որպես թե ընտրյալների խորհուրդ, որը պետք է որոշ հարցեր պարզաբաներ անձնապես

— 60 —

թագավորի համար: Այդ կիսախորհրդակցությանը հրավիրված էին՝ շվեդական գեներալ Արմֆելդը, գեներալ-ազյուտանտ Վոլցոգենը, Վինցենցերողեն, որին նապուենը փախած ֆրանսահպատակ էր անվանում, Սիշոն, Տոլը, բոլորովին ոչ զինուրական մարդ կոմս Շտեյնը և վերջապես, ինքը Պֆուլը, որն ինչպես իշխան Անդրեյը լսել էր, ամբողջ ձեռնարկության և cheville օսորիերե-ն<sup>1</sup> էր: Իշխան Անդրեյն առիթ էր ունեցել յավ դիտել նրան, քանի որ Պֆուլը եկել էր նրանից անմիջապես հետո և գնացել էր հյուրասենյակը, միայն մեկ րոպե կանոյ առնելով՝ Զերնիշովի հետ խոսելու համար:

Պֆուլն իր ոռւս գեներալի մունդիրով, որը նրա վրա նստած էր անճոռնիաբար, ինչպես զուգվածի վրա, առաջին հայացքից կարծես ծանոթ թվաց իշխան Անդրեյին, չնայած որ վերջինս նրան երբեք չէր տեսել: Նա հիշեցնում էր և Վեյրոտերին, և Մակին, և Շմիդտին, և շատ այլ գերմանական տեսաբանդներալների, որոնց իշխան Անդրեյը տեսել էր 1805 թվին բայց Պֆուլն ավելի տիպիկ էր նրանց բոլորից: Այդպիսի տեսաբան-գերմանացու, որն իր անձի մեջ միացնում էր այն ամենը, ինչ կար այդ գերմանացիների մեջ, իշխան Անդրեյը գեռ երբեք չէր տեսել:

Պֆուլը բարձրահասակ չէր, շատ նիշար էր. բայց լայնոսկը, կոպիտ, առողջ կազմվածքով, լայն կոնքով և կմախքացած թիակներով: Նրա դեմքը շատ կնճուտ էր, խոր ընկած աշխարհությունը: Նրա մազնըն աւշեցից՝ բունքերի մոտ, ըստ երեսութին, լուգանակով հապճեակ կոկված էին, իսկ հետեւ փնջերով անհաջորդեած ցցված: Նա, ահճանզիստ ու բարկացկոտ հեռ-եւ հաւելով մտավ մեծ սենյակը, որտեղ կարծիս ամեն ինչ նրան երկուուր էր պատճառում: Նա անհարմար շարժումներով բռնեց թուրք և զիմեց Զերնիշովին, գերմանիերին հարցնելով թագավորի տեղը: Ըստ երեսութին նա ցանկանում էր որքան կարելի է շուտ անցնել սենյակները, վերջացնել ողջույններն ու գլուխ տալը և շուտ գործի անցնել բարտեզի առաջ, որտեղ նա իրեն զգում էր իր տեղում: Զերնիշովի խոսքերին նա փութկութ կերպով դլխով էր անում և հեգնաբար ժամանում էր իմանալ: Դա ուղամական խորհուրդը չէր, թե թագավորը դիտում է հենց այն ամրությունները, որոնք ստեղծվել են իրեն՝ Պֆուլի թեորիայով: Նա թավ ձայնով

<sup>1</sup> Գլխավոր կոպանակը:

ու խստորեն, ինչպես խոսում են ինքնավաստահ գերմանացիները, ինքն իրեն փնթփնթաց. ծստմկօր... կամ՝ zu Grunde die ganze Geschichte... կամ՝ s'wird was geschiehtes d'r aus werden!՝ իշխան Անդրեյը լսեց և ուզում էր անցնել, բայց Զերնիշովն իշխան Անդրեյին ժանոթացրեց Պֆուլի հետ, նըկատելով, որ իշխան Անդրեյը եկել է Թուրքիայից, որտեղ պատերազմն այնքան բարեհաջող է վերջացել: Պֆուլը թեթե՛վակի նայեց ոչ այնքան իշխան Անդրեյին, որքան նրա վրայով և ծիծաղելով ասավ. «Da muss ein schöner tactischer Krieg gewesen sein»<sup>2</sup>: Եվ, արհամարհանքով ծիծաղելով, նա մտավ այն սենյակը, որտեղից ձայներ էին լսվում:

Ըստ երևույթին, Պֆուլը, որն առանց այդ էլ միշտ պատրաստ էր հուզվել ու հեգնել, այժմ առանձնապես զգայնացած էր այն բանից, որ համարձակվել էին նրա ճամբարը դիտել առանց իրեն և դատողություններ անել նրա մասին:

Իշխան Անդրեյը Պֆուլի հետ ունեցած այդ մի կարճատեսակցությամբ, շնորհիվ իր առևտերլիցյան հիշությունների, պարզ գաղափար կազմեց այդ մարդու բնավորության մասին: Պֆուլը մեկն էր այն անհուսորեն, անդավաճանորեն ցմարտիրոսություն ինքնավաստահ մարդկանցից, որպիսին լինում են միայն գերմանացիները, և հենց այն պատճառով, որ միայն գերմանացիներն են ինքնավաստահ լինում վերացական գաղափարի՝ գիտության հիման վրա, այսինքն կատարյալ ճշմարտությունն իբր թե իմանալու հիման վրա: Ֆրանսացին ինքնավաստահ է լինում այն պատճառով, որ նա իրեն անձնապես թե իսելով և թե մարմնով անհաղթահարելիորեն կափարժիշտ է համարում թե տղամարդկանց և թե կանանց համար: Անգլիացին ինքնավաստահ է այն բանի հիման վրա, որ նա աշխարհի ամենաբարեկարգ պետության քաղաքացի է, ուստի և որպես անգլիացի, նա միշտ գիտի, թե ինչ պետք է անի, և գիտի, որ այն ամենը, ինչ նա անում է որպես անգլիացի, անկասկած լավ է: Խտալացին ինքնավաստահ է այն պատճառով, որ նա հուզված է և հեշտությամբ մոռանում է և՝

<sup>1</sup> Հիմարի գլուխ... կամ՝ մեզ կորուստ սպասում... Դրանից անպայման մի խայտառակություն դուրս կղաւ:

<sup>2</sup> Ե՞լ թե ինչու պատերազմը բոլոր ուազմական կանոնների համաձայն է եղել:

իրեն և՝ ուրիշներին: Ուուսն ինքնավաստահ է հենց նրանով, որ նա ոչինչ զիտի և գիտենալ չի ուզում, որովհետև չի հավատում որ կարելի էր որևէ բան իմանալ: Կերմանացին ինքնավաստահ է բոլորից ավելի, բոլորից ավելի անդրդվելի է ու զգվելի, որովհետև նա երևակայում է, որ գիտե ճշմարտությունը, գիտությունը, որն ինքն է հնարել, բայց որը նրա համար բացարձակ ճշմարտություն է:

Պֆուլը բայց երևույթին այդպիսին էր: Նա ուներ իր գիտությունը՝ դիմադարձ շարժման թեորիան, որը նա մակաբերել էր Ֆրիդրիխ Մեծի պատերազմների պատմությունից, և այն ամենը, ինչ հանդիպել էր նրան նորագույն ուազմական պատմության մեջ, թվում էր անհեթեթություն, բարբարություն, այլանդակ ընդհարում, որտեղ երկու կողմն էլ այնքան սխալներ են գործել, որ այդ պատերազմները շէին էլ կարող պատերազմները կոչվել: Այդ պատերազմները թեորիային շէին համապատասխանում և շէին կարող գիտության առարկա լինել:

1806 թվին Պֆուլը մեկն էր այն պատերազմի ծրագրերը կազմողներից, որը վերջացավ իննայով և Առւերշտետով, բայց այդ պատերազմի վախճանի մեջ նա իր թեորիայի անջտության ոչ մի, անգամ աննշան ապացուց չէր տեսնում: Ընդհակառակը, նրա թեորիայից կատարված շեղումները, նրա կարծիքով, ամբողջ անհաջողության միակ պատճառն էին, և նա իրեն հատուկ ուրախ հեգնանքով առում էր. «Ich sage ja, dass die ganze Geschichte zum Teufel gehen werde»<sup>1</sup>.

Պֆուլը մեկն էր այն տեսաբաններից, որոնք այնքան են սիրում իրենց թեորիան, որ մոռանում են թեորիայի նպատակը՝ այն գործնականում կիրառելը: Սիրելով թեորիան նա ասում էր ամեն պրակտիկա և չէր էլ ուզում գիտենալ այն: Անհաջողության հանդեպ նա նույնիսկ ուրախանում էր, որովհետև ամեն մի անհաջողություն, որ տեղի էր ունենում գործնականում թեորիայից շեղվելու պատճառով, նրա աւքում ապացուցում էր միայն իր թեորիայի ճշմարիտ լինելը:

Իշխան Անդրեյին ու Զերնիշովին նա մի քանի խոսք ասավ ներկա պատերազմի մասին այնպիսի արտահայտությամբ,

<sup>1</sup> Զէ որ ես ասում էի, թե ամրող գործը խայտառակությամբ կվերջանաւ  
— 63 —

ինչպես ասում էր այն մարդը, որը նախապես գիտի, թե ամեն ինչ վատ է զերշահնալու և թե ինքը նույնիսկ դժգոհ է դրանից։ Ծոծրակի վրա ցցված մազերի շահնրած փնջերը և հապճեպ սահրած քունքամազերն առանձնապես պերճախոս կերպով այդ էին մկայում։

Նա անցավ մյուս սենյակը, և այդտեղից անմիջապես լսվեցին նրա ձայնի թավ և փնթինթան հնչունները։

## XI

Իշխան Անդրեյը գեռ չէր կարողացել հայացքով ուղեկցել Պֆուլին, երբ շտապ քայլերով սենյակ մտավ Բենիգսենը և, զլխով Բալկոնսկուն բարեկլով, առանց կանգ առնելու, անցավ առանձնասենյակը, ինչ-որ կարգադրություններ անելով իր ազյուտանտին։ Թագավորը գալիս էր նրա ետևից, և Բենիգսենն շտապել էր առաջ, որպեսզի որոշ բան պատրաստի և կարողանա դիմավորել թագավորին։ Զերնիշովն ու իշխան Անդրեյը գուրս եկան սանդուղքի գլուխը։ Թագավորը հոգնած տեսրով իջնում էր ձիուց։ Մարկիզ Պառլուշին ինչ-որ բան էր ասում թագավորին։ Թագավորը, գլուխը դեպի ձախ թեքած, դժգոհ տեսքով լսում էր Պառլուշին, որ խոսում էր առանձնապես տաքացած։ Թագավորն առաջ շարժվեց, ըստ երեսութիւն, ցանկանալով վերջ տալ խոսակցության, բայց կաս-կարսիր կտրած, հուզված իտալացին, պատշաճավերությունը մոռանալով, գնաց նրա ետևից, շարունակելով խոսել։

— Quant à celui qui a conseillé ce camp, le camp de Drissa, — ասում էր Պառլուշին այն ժամանակ, երբ թագավորը, ոտք սանդուղքի վրա դնելով և իշխան Անդրեյին նկատելով, ուշադրությամբ նայում էր իրեն անծանոթ դեմքին։

— Quant à celui, Siré, — շարունակեց Պառլուշին հուսահառությամբ, կարծես անկարող լինելով իրեն զսպելու, — qui a conseillé le camp de Drissa, je ne vois pas d'autre alternative que la maison jaune ou le gibet<sup>1</sup>.

<sup>1</sup> Ինչ գերաբերում է այն մարդուն, որ խորհուրդ է տվել ճամբար դնել Դրիսսայի մոտ, առ իմ կարծիքով, նրա վերաբերմամբ պետք է անել երկուս այս մեկը՝ իամ դեկին տուն (դժանոց) կամ կախաղան։

Մինչև վերջը ականջ շնկելով և կարծես շլսելով իտալացու խոսքերը, թագավորը, Բալկոնսկուն ճանաչելով, ողորմածաբար դարձավ նրան։

— Եսու ուրախ եմ քեզ տեսնելուս, անցիր այնտեղ, ուր նրանք հավաքվել են, և սպասիր ինձ։

Թագավորն անցավ առանձնասենյակը։ Նրա ետևից գնացին իշխան Պյոտր Միխայլովիչ Վոլկոնսկին, բարոն Շտեյնը, և դուռը ծածկվեց նրանց ետևից։ Իշխան Անդրեյը, թագավորի թույլտվությունից օգտվելով, Պառլուշի հետ, որին ճանաշում էր Թուրքիայից, անցավ հյուրասրահը, ուր հավաքվել էր իտորհուրդը։

Իշխան Պյոտր Միխայլովիչ Վոլկոնսկին մի տեսակ թագավորի շտաբի պետի պաշտոն ուներ։ Վոլկոնսկին դուրս եկավ առանձնասենյակից և, քարտեզներ բերելով հյուրասրահ ու դասավորելով դրանք սեղանի վրա, Հաղորդեց մի շարք հարցեր, որոնց մասին ուզում էր լսել հավաքվածների կարծիքը։ Բանն այն էր, որ գիշերը լուր էր ստացվել (հետո այդ սուտ դուրս եկավ), թե Փրանսացիները շարժվել են դեպի Դրիսսայի ճամբարի թիկունքը։

Առաջինը խոսել մկնեց գեներալ Արմֆելդը, անսպասելիորեն, առաջացած դժգարությունից խուսափելու համար, առաջարկելով բոլորովին նոր, ոչնչով (բացի այն, որ ցանկություն ուներ ցույց տալ, թե ինքը նույնպես կարող է կարծիք ունենալ) շարդարացվող դիրքեր՝ Պետերբուրգի և Մոսկվայի ճանապարհներից դուրս, ուր, իր կարծիքով, բանակը պետք էր միացած սպասեր թշնամուն։ Երեսում էր, որ Արմֆելդը վազուց էր կազմել այդ ծրագիրը, և որ այժմ նա բացատրում էր այն ո՛չ այնքան առաջարկված հարցերին պատասխանելու նպատակով, որոնց այդ ծրագիրը պատասխան չէր տալիս, որքան այդ ծրագիրը շարադրելու առիթն օգտագործելու նպատակով։ Դա միլիոնավոր առաջարկներից մեկն էր, որ նույնպես հիմնավոր, ինչպես մյուսները, կարելի էր անել, հասկացողություն շունենալով այն մասին, թե ինչ բնույթ կստանա պատերազմը։ Ոմանք վիճարկում էին նրա կարծիքը, ոմանք պաշտպանում այն։ Երիտասարդ գնդապետ Տոլլը մյուսներից ավելի տաքացած հերքեց շվեդական գեներալի կարծիքը և վեճի միջոցին կողքի գրպանից հանեց գրոտած մի տետրակ ու թույլտվու-

թյուն ինդրեց կարդալ: Ընդարձակորեն հազմված գրությամբ Տուն առաջարկում էր պատերազմի մի ուրիշ, թե Արմֆելդի, թե Պֆուլի ծրագրին միանգամայն հակառակ ծրագրի: Պառ-լիչին, Տոլին առարկելով, առաջարկեց առաջ շարժվելու և հարձակում գործելու իր ծրագիրը, որը միայն նրա ասելով, կարող էր դուքս բերել մեզ անհայտությունից և ծուզակից, ինչպես անվանեց նա Դրիսսայի ճամբարը, որի մեջ գտնվում էինք: Այս վիճաբանությունների միջոցին Պֆուլն ու նրա թարգման Վոլցոգենը (նրա կամուրջը պալատական հարաբե-րությունների մեջ) լուր էին: Պֆուլը միայն արհամարհան-քով փնշացնում էր և երեսը շրջում, ցույց տալով, թե երբեք չի ստորանա առարկելու այն անհեթեթության դեմ, որն այժմ լուր է: Բայց երբ վիճաբանությունները դեկազարդ իշխան Վոլկոնսկին առաջարկեց նրան հայտնել իր կարծիքը, նա առավ միայն.

— Ել ինչո՞ւ եք ինձ հարցնում: Գեներալ Արմֆելը հիա-նալի դիրքեր առաջարկեց բաց թիկունքով, կամ հարձակումը von diesem italienischen Herrn, sehr schön<sup>1</sup>, կամ նահանջը — auch gat<sup>2</sup>: Ել ինչո՞ւ եք ինձ հարցնում, — ասավ նա: — Զէ որ դուք ամեն բան ինձնից լավ գիտեք:

Բայց երբ Վոլկոնսկին, հոնքերը կիտելով, ասավ, թե ինքը նրա կտրծիքը հարցնում է թափազոր կայսեր անունից, այդ ժամանակ Պֆուլը ոտի կանգնեց և, հանկարծ ոգկորվելով, սկսեց խոսել.

— Ամեն ինչ փշացրել են, ամեն ինչ խնճեցին, բոլորն ուղղում են ինձնից ալիքի լավ իմանալ, իսկ հիմա եկել են ինձ մոտ: Ինչպես ուղղել: Ալղելու բան չկա: Պետք է ճշտու-թյամբ կատարել իմ առաջադրած հիմունքները, — ասում էր ոսկրոտ մատներով սեղանը թխացնելով: — Ինչո՞ւմն է դր-վարությունը: Դատարկ բան է, Կինդերսպիէլ<sup>3</sup>.

Նա մոտեցավ քարտեզին և սկսեց արագ խոսել, շոր մատը քարտեզին դեմ անելով և պացուցելով, թե ոչ մի պատահա-կանություն չի կարող փոխել Գրիսսայի ճամբարի նպատակա-

հարմարությունը, թե ամեն ինչ նախատեսած է և եթե թէ: Նամին իր ու Բիկինաց շարժում կտաարի, ապա թշնամին ան-խուսակելորեն պիտի ոչնչանա:

Պատույչին զերմաներեն շիմանալով, սկսեց Փրանսերէն հարցեր առաջ նրան: Վոլցոգենն օգնության հասավ իր պետին, որ վատ էր խոսում ֆրանսերեն, և սկսեց թարգմանել նրա խոսքերը, հազվակ հասնելով Պֆուլի ետևից, որ արագորեն ապացուցում էր, թե ամեն ինչ, ամեն ինչ, — ոչ միայն այն, ինչ եղել է, այլև ամենը, ինչ կարող է լինել, — ամեն ինչ նա-խան ուսնված է իր ծրագրում, և եթե այժմ կան գժվարություն-ներ, ապա ամբողջ մեղքը նրանումն է միայն, որ ամեն բան նշմարաւությամբ չի կատարվել: Նա շարունակ հեզնաբար ծիծաղում էր, ապացուցում և, վերջապես, արհամարհանքով թողեց ապացուցելը, ինչպես մաթեմատիկոսն է թողնում խնդրի մի անգամ արդեն ապացուցված ճշտությունը տարբեր ձևերով ստուգելը: Վոլցոգենը փոխարինեց նրան, շարունա-կելով գրանսերեն շարադրել նրա մտքերը և երբեմն գանալ Պֆուլին. «Nicht wahr, Exellenz»<sup>4</sup>. Պֆուլը, ինչպես կուլում տարացած մարդն է խփում յուրաքիններին, բարկացած ը-զավում էր նաև Վոլցոգենի վրա:

— Nun ja, was soll denn da noch expliziert werden?<sup>5</sup>

Պատույչին ու Միջոն երկուսը միասին՝ ֆրանսերենով հար-ձակեցին Վոլցոգենի վրա: Արմֆելը զերմաներեն դարձավ Պֆուլին: Տոյն սուսերեն բացատրում էր Վոլկոնսկուն: Իշխան Անդրէյն անխառ լսում էր ու դիմում:

Բոլոր այդ մարդկանցից իշխան Անդրէյի սրտում ամենից ավելի էաքնչկցություն էր գարթեցնում շարացած, կտրուկ և անմատութեանքնակստահ Պֆուլը: Այստեղ ներկա գտնվողների մեջ միայն նա' էր, որ բատ երևույթին, ոչինչ չէր ցանկանում իր համար, թշնամություն չէր տածում ոչ մեկի նկատմամբ, այլ միայն մի բան էր ցանկանում — որ իրագործեն իր՝ տա-րիների աշխատանքով ստացած թեորիայից մակարերած ծք-րագերը: Նա ծիծագելի էր, տհաճ էր իր հեզնությամբ, բայց զրա հետ միասին նա ակամա հալքանք էր ներշնչում նրանով,

<sup>1</sup> Այս իտալացի պարոնի, հիանալի է:

<sup>2</sup> Նույնպես լավ է:

<sup>3</sup> Մանկական խաղալիքներ:

<sup>4</sup> Ճիշտ չէ, ձերք գերազանցություն:

<sup>5</sup> Է Հա, ել ի՞նչ կորիք կա այստեղ բացատրելու:

որ անսահմանողեն նվիրված էր իր գաղափարին։ Բացի դը-  
րանից, բոլոր խոսողների բոլոր ճաներում կար, բացառությամբ  
Պֆուլի, մի ընդհանուր գիծ, որ չկար 1805 թվին սազմական  
խորհրդակցությանը, — այժմ դա այն, թեն քողարկված, բայց  
պանիկային սարսափին էր Նապոլեոնի հանճարի հանդեպ, որն  
արտահայտվում էր յուրաքանչյուր առաղկության մեջ։ Նա-  
պոլեոնի համար ամեն ինչ հնարավոր էին համարում, սպասում  
էին նրան ամեն կողմից և նրա ահավոր անունով խորտակում  
էին մեկը մյուսի ենթադրությունները։ Միայն Պֆուլն էր, որ  
կարծէս Նապոլեոնին էլ համարում էր նույնպիսի բարրարոս,  
ինչպես և իր թերիայի բոլոր հակառակորդներին։ Բայց, հար-  
գանքի գգացումից բացի, Պֆուլը իշխան Անդրեյին ներշըն-  
չում էր և խղճահարության գգացում։ Այն տոնից, որով պա-  
լատականները դիմում էին նրան, այն բանից, ինչ Պառլո-  
ւին թույլ տվեց ասել կայսեր, բայց մանավանդ իր՝ Պֆուլի  
որոշ հուսահատական արտահայտություններից երեսում էր,  
որ մյուսները գիտեն, և ինքն էլ գգում էր, թե իր անկումը մոտ  
է, և իվ չնայած իր ինքնալլստահությանն ու գերմանական քըրթ-  
մրցացող հեգությանը, նա խղճալի էր՝ իր քունքերին սղա-  
ւած և ծոծրակին կախված մազափնչերով։ Նա, ըստ երեսվթին,  
թեն թաքցնում էր այդ բորբոքման ու արհամարհանքի տակ,  
հուսահատված էր, որ միակ առիթը, երբ նա կարող էր հսկա-  
յական փորձով ստուգել և ամբողջ աշխարհին ապացուցել իր  
թերիայի հշտությունը, խուսափում էր նրանից։

Վիճաբանությունները շարունակվեցին երկար, ու որքան  
շատ էին երկարում, այնքան ավելի էին բորբոքվում վեճերը,  
հասնելով ճիշերի ու անձնավորությունների և այնքան ավելի  
քիչ հնարավորություն կար մի որևէ ընդհանուր եզրակացու-  
թյուն հանելու բոլոր այդ արտահայտումներից։ Իշխան Անդ-  
րեյը լսելով այդ բազմակեզու խոսակցությունը և այդ ենթա-  
գրությունները, ծրագրերը և հերքումներն ու ծիչերը, զարմա-  
նում էր միայն, որ նրանք բոլորը խոսում էին Վաղուց, իր  
սազմական գործունեության ժամանակ հաճախ իրեն այցե-  
լած այն մտքերը, թե չկա և չի կարող լինել ոչ մի սազմական  
գիտություն, ուստի և չի կարող լինել ոչ մի, այսպես անվան-  
ուած սազմական հանճար, այժմ դարձան նրա համար ակներև  
համարտություն։ «Ել ի՞նչ թերիա ու գիտություն կարող էր

լինել մի գործում, որի պայմաններն ու հանգամանքներն ան-  
հայտ են և չեն կարող որոշվել, որի մեջ պատերազմի գործիշ-  
ների ուժը ալելի ևս քիչ կարող են որոշվել։ Ոչ ոք չէր կարող  
և չի կարող իմանալ, թե ինչ դրության մեջ կինի մեր և թշնա-  
մու բանակը մի օր հետո, և ոչ ոք չի կարող իմանալ, թե ի՞նչ  
ուժ է ներկայացնում այս կամ այն զոկատը։ Երբեմն, երբ  
առջեռում վախկոտ չկա, որ բղավի՝ «մենք կտրված ենք» ու  
փախչի, այլ առջեռում մի ուրախ, համարձակ մարդ է, որը  
կրացականչի՝ «ուռա՛»—5 հազարանոց զոկատն արժի 30  
հաշարանոցի, ինչպես Եենգրաբենի տակ էր. իսկ երբեմն 50  
հազարը փախչում է 8 հազարի առաջ, ինչպես Սուստերլիցի  
տակ։ Էլ ի՞նչ գիտություն կարող է լինել մի այնպիսի գործում,  
որի մեջ, ինչպես ամեն մի պրակտիկ գործում, ոչինչ չի կարող  
որոշվել և ամեն ինչ կախված է բազմաթիվ պայմաններից,  
որոնց նշանակությունը որոշվում է մի բոպեռում, բոպե, որ ոչ  
ոք չգիտե, թե երբ կդա։ Արմֆելդն ասում է, թե մեր բանակը  
կտրված է, իսկ Պառլուշին ասում է թե մենք Փրանսական  
բանակը դրել ենք երկու կրակի արանքում։ Միշոն ասում է,  
թե Դրիսսայի ճամբարի անպետք լինելը կայանում է նրանում,  
որ գետը ետեն է, իսկ Պֆուլն ասում է, թե դրա մեջ է նրա ուժը։  
Տոլն առաջարկում է մի ծրագիր, Արմֆելդն առաջարկում է  
մի ուրիշը բոլորն էլ լավ են, բոլորն էլ վատ, և ամեն առա-  
ջարկի շահավետությունն ակներև կդառնա միայն այն վայր-  
կանին, երբ դեպքը տեղի կունենա։ Եվ ինչո՞ւ են բոլորը  
ասում սազմական հանճար է այն մար-  
դը, որ կարողանում է ժամանակին հրամայել պաքսիմատ  
բերել, և որան՝ գնալ դեպի աշ, նրան՝ դեպի ձախ։ Միայն նրա  
համար, որ զինվորական մարդիկ օժտված են փայլով ու իշ-  
խանությամբ, և բազմաթիվ սրիկաներ շողոքորթում են իշ-  
խանությանը, վերագրելով նրան՝ հանճարին խորթ հատկու-  
թյուններ։ Ընդհակառակը լավագույն գեներալները, որ ես տե-  
սել եմ, — Հիմար կամ ցրված մարդիկ են։ Լավագույնը՝ Բագ-  
րատիոնն է, ինքը նապունն է ընդունել այդ։ Իսկ ինքը  
Բոնապարտե՛ն։ Ես հիշում եմ նրա ինքնադու՛ ու սահմանա-  
փակ դեմքը Առաստերլիցի դաշտում։ Ոչ միայն հանճար ու որևէ  
առանձին հատկություններ չեն հարկավոր լավ զորավարին,  
այլ, ընդհակառակը, նրա մեջ պետք է բացակային մարդկային

ամենաբարձր, ամենալավագույն հատկությունները — սեր, պոկզիա, քնքշություն, փիլիսոփայական որոնող միտք: Նա պետք է սահմանափակ լինի, հստատ համսպված այն բանում, թե այն, ինչ ինքն անում է, շատ կարևոր է (այլապես նա համբերություն չի ունենա), և այդ դեպքում միայն նա քաջ զորավար կլինի: Աստված ազատի, եթե նա որպես մարդ, սիրի որևէ մեկին, խղճա, մտածի ի՞նչն է արդար և ինչը ոչ: Հասկանալի է, որ դեռ հնուց նրանց համար կեղծել, հարմարեցրել են հանճարների թերիա, որովհետև նրանք — իշխանություն են: Ռազմական գործի հաջորդությունը կախված է ոչ թե նրանցից, այլ այն մարդուց, որը, շարժերում կգույն՝ սկսած ենք կամ կրացականչի «ուռա»: Եվ միայն այդ շարժերում կարելի է ծառայել այն վստահությամբ, թե զու օգտակար ես»:

Այսպես էր մտածում իշխան Անդրեյը, խոսակցությաւնները լսելով, և նա սթափվեց այն ժամանակ, երբ Պառկուշին կանչեց նրան, և բոլորն արդեն ցրվում էին:

Հետեւալ օրը զորատեսի ժամանակ թագավորը հարցրեց իշխան Անդրեյին, թե ո՞քան է ցանկանում ծառայել, և իշխան Անդրեյը ընդմիշտ կորցրեց իրեն պալատական աշխարհի համար, շնորհելով մնալ թագալորի մոտ, այլ թուշտովություն խնդրեց ծառայել բանակում:

## XII

Թուստովը պատերազմն ակնվելուց առաջ ծնողներից մի նամակ ստացավ, որի մեջ նրանք կարճ հայտնելով նատաշայի հիվանդությունը և այն, որ նա կապերը խզել է իշխան Անդրեյի հետ (այդ կապը խզելը նրան բացատրում էին նատաշայի մերժումով), նորից խնդրում էին նրան պաշտոնը թողնել և վերադառնալ տուն: Նիկոլայն, այս նամակին ստանալով, փորձ անգամ շարավ արձակուրդ խնդրելու կամ պաշտոնը թողնելու, այլ գործ ծնողներին, թե շատ ցավում է նատաշայի հիվանդության և նրա՝ փետացուի հետ կապիրը խզելու մասին և նա կանի ամեն հնարավորը, որպեսզի կատարի նրանց ցանկությունը: Սոնյաչին գրեց առանձին:

«Իմ սրտի պաշտելի բարեկամ, — գրում էր նա: — Բացի պատվից ոչ մի քան չէր կարող ինձ խանդարել պատվական վերա-

դառնակ: Բայց այժմ, պատերազմ սկսվելու նախօրեին, ես ինձ անպատիվ կհամարեի ոչ միայն իմ բոլոր քննկերների առաջ, այլև ինքս իմ առաջ, եթե իմ երջանկությունը գերադասեի դեպ հայրենիքն ունեցած պարտքից ու սիրուց: Բայց սա վերջին անշատություն է: Հավատացիք, որ պատերազմից հետո անմիշապես, եթե ողջ մեամ և քո կողմից գարցյալ սիրված, ես կը թողնեմ ամեն ինչ ու կթռչեմ քեզ մատ, որպեսզի քեզ արդեն բնադրված սեղմեմ իմ բոցապառ կրծքին»:

Խսկապես, պատերազմի սկսվելը միայն պահեց Ռոստովին և խանգարեց նրան վերադառնալ, — ինչպես նա խոստացել է, — և ամուսնանալ Սոնյայի հետ: Օտրագնոյի աշունը՝ իր որարդությամբ և ձմեռը՝ ծննդյան, զրօնների տոներով և Սոնյայի սիրով նրա առաջ բանում էր ապնէականական անդորր ուրախությունների և հանգստության հեռանկար, որոնք նա առաջ չեր ունեցել և որոնք այժմ կանչում էին նրան: «Էավ կին, երեխաններ, քերծեների մի լավ ոհմակ, ճարպիկ բարակների մի տասը-տասներկու զույգ, տնտեսություն, հարևաններ, բնարովի ծառայություն...», — մտածում էր նա: Բայց հիմա պատերազմ էր, և պետք էր մնալ գնդում: Եվ քանի որ զա պետք էր, առաջ Նիկոլայ նոստովը ըստ իր բնակչության գոհ էր և այն կյանքից, որ վարում էր գնդում, և կարողացել էր այդ կյանքը հաճելի-դարձնել:

Արձակուրդից վերադառնալով, բնկերների կողմից սիրով ընդունվելով, Նիկոլայն ուղարկվեց ձիեր զնելու և Մալորոստիայից բերեց հիանալի ձիեր, որոնք ուրախություն էին պատճառում իրեն և որոնց համար նա գովասանքի արժանացավ իշխանության կողմից: Իր բացակայությամբ նրան պահել էին ստամբուրի կոչում, և երբ գունդը համալրված դրվեց սազմական գրության մեջ, նա նորից ստացավ իր նախկին հեծվաշը:

Պատերազմն ակնվեց, գունդը շարժեցին դեպի Լեհաստան, տրվում էր կրկնակի ոռմիկ, եկան նոր սպաններ, նոր մարդիկ, ձիեր, և, զլիավորը, տարածվեց այն զրոված ուրախ տրամադրությունը որ ուղեկցում է պատերազմի սկզբնակորությանը. և Թուստովը, գիտակցելով իր նպաստավոր զիրքը գնդում, ամբողջովին անձնատուր եղավ բարականությունների և զինվորական ծառայության շահերի, թեև գիտեր, որ վաղ լին թողնելու է դրանք:

Զորքերը Վիլնոյից նահանջում էին պետական, քաղաքական և տակտիկական զանազան բարդ պատճառներով։ Նահանջի յուրաքանչյուր քայլին գլխավոր շտաբում ուղեկցում էր շահերի, և զրակացությունների և կրքերի մի բարդ խաղ։ Էսկ Պավլովրադյան գնդի Հուսարների համար այդ ամբողջ նահանջը, ամռան լալագույն պահին, բավականաշափ պարենամթերքով, ամենապարզ և ուրախ բանն էր։ Վճատել, անհանգստանալ ու բանսարկել կարող էին միայն գլխավոր կայանում, իսկ բանակի խորքում իրենք իրենց չէին էլ հարցում, թե ո՞ւր և ինչո՞ւ են գնում։ Եթե ափսոսում էին, որ նահանջում են, ապա միայն այն պատճառով, որ պետք էր հեռանալ ընտելացած բնակարանից, սիրունիկ պահնայից։ Եթե անգամ որևէ մեկի մտքով անցնում էր, թե գործերը վատ են, ապա, ինչպես և վայել է լավ զինվորականին, նա ում մտքով անցնում էր այդ, աշխատում էր ուրախ լինել և շմտածել գործերի ընդհանուր ընթացքի մասին, այլ մտածել իր անմիջական, ամենամոտիկ գործի մասին։ Սկզբում ուրախ-զրվարթ բանակած էին Վիլնոյի մոտ, ժանոթություններ սկսելով լիճ կալվածատերերի հետ և սպասելով ու գիտելով թագավորի և մյուս բարձրագույն հրամանատարների գորատեսերք։ Հետո հրաման եկավ նահանջել դեպի Սվենցիանի և ոչնչացնել այն պարենամթերքը, որ անկարելի էր առանել։ Սվենցիանին հուսարները հիշում էին միայն այն պատճառով, որ դա նարեցույցան լագեր էր, ինչպես ամբողջ բանակը կոչում էր իրենց ճամբարը Սվենցիանիի մոտ, և այն պատճառով, որ շատ գանգատներ կային զորքի գեմ այն բանի համար, որ նրանք օգավելով մթերք վերցնելու հրամանից, մթերքի հետ միասին լիճ պաներից վերցնում էին և ծիեր, և կառքեր, և գործեր։ Ռոստովը Սվենցիանին հիշում էր այն պատճառով, որ արդ պահնը մտնելու առաջին օրը նա փոխեց իր վերակային և շկարողացավ հեծվաշտի բոլոր հարբած մարդկանց հախիցը գալ, որոնք առանց իր գիտության տարել էին հինգ տակառ հին դարեցուր։ Սվենցիանից նահանջեցին շատ ուշ հեռու՝ մինչև Դրիսսա, և նորից Դրիսսայից էլ նահանջեցին, մոտենալով արդեն ոռուսական սահմաններին։

Հուլիսի 13-ին պավլովրադյանները առաջին անգամ լուրջ կովկանալիցին,

— 72 —

Հուլիսի 12-ին, գիշերը, կովկանալիցին, սոստիկ փոթորիկ եղավ՝ անձրևով ու կարկուտով։ 1812 թվի ամառն ընդհանուագես աշքի էր ընկնում իր փոթորիկներուվ։

Պավլովրադյան երկու հեծվաշտ բանակել էին անասունների ու ծիերի կողմից տրորված, հաճարի արդեն հասկավորվող դաշտի արտերի մեջ։ Անձրևը թափվում էր հեղեղի պես, և Ռոստովը իր հովանավորությունը վայելող ջահել սպա իլինի հետ նստել էր ձեռաց շինած հոլիկի տակ։ Նրանց գնդի սպան, որի երկար բեղերը շարունակվում էին այտերից, որ շտաբ էր գուացել և անձրևի բռնվել, մտավ Ռոստովի հոլիկը։

— Ես, կոմս, զալիս եմ շտաբից, ևս եք Ռասուկու քաջադրությունը։

Եվ սպան պատմեց Սալտանովյան ճակատամարտի մանրամասնությունները, որ լաել էր շտաբում։

Ռոստովը վիզը կուշ ածելով, ուր անձրևաջուր էր անցել, ծխամորճ էր ծխում և լսում անուշադիր, երբեմնակի նայելով ջահել սպա իլինին, որ կուշ էր եկել նրա մոտ։ 16 տարեկան այդ պատանի սպան, որ նորերս էր մտել գումդ, նիկոլայի համար այն էր այժմ, ինչ որ ինքը Դենիսովի համար յոթ տարի առաջ իլինն աշխատում էր ամեն բանում նմանվել Ռոստովին ու կնոջ պես սիրահարված էր Ռոստովի վրա։

Կրիստինի բեղերով սպան՝ Զորժինսկին, ճոռոմաբար պատմում էր, թե Սալտանովյան ամբարտակը եղել է ոռուսների Ֆերմուպիլը, թե ինչպես այդ ամբարտակի վրա գեներալ Ռասուսկին կատարել է մի քայլ, որ արժանի է կլասիկ դարերին։ Զորժինսկին պատմում էր, որ Ռասուսկին իր երկու որդուն սարսափելի կոակի տակ հանել է ամբարտակի վրա և նրանց հետ միասին հարձակման դիմել։ Ռոստովը լսում էր Զորժինսկիու սատությունը և ոչ միայն ոչեն չ'ը ուսում նրա սդեսուս։ Ոյունը հաստատելու համար, այլ ընդհակառակը, ուներ այնպիսի մի ըարդու արտահայտություն, կարծես ամաշում էր այդ պատմությունից, թե մտադիր չէր առարկել։ Ռոստովը Առաստերլիցի և 1807 թվի պատերազմից հետո սեփական փորձով գիտեր, որ պատերազմում պատահած դեպքերը պատմելիս, միշտ ստում են, ինչպես և ինքն էր ստել պատմելիս։ Երկրորդ, նա այնքան փորձառություն ուներ, որ գիտեր, թե ինչպես պատերազմում ամեն ինչ կատարվում է բոլորովին ոչ այնպես,

— 73 —

ինչպես մենք կարող ենք երևակայել ու պատմելու Այդ պատճառով էլ նրան դուր չեկավ Զդրժինսկու պատմածը, նրան դուր չէր գալիս և ինքը Զդրժինսկին, որն իր այտերից ետ տարածվող բեղերով, իր սովորությամբ, բավական ցած կուանում էր դեպի այն մարդու գեմքը, ում բան էր պատմում, ու նեղում նրան նեղիկ հոլիկում: Ռոստովն անխոս նայում էր նրան: «Նախ և առաջ հարձակման ենթարկված ամբարտակի վրա, երեկի, մի այնպիսի շփոթ նեղվածք է եղել, որ եթե Ռաևսկին որդիներին էլ դուրս է բերել, ապա դա ոչ ոքի վրա ազգել չէր կարող, բացի մի տասը մարդուց, որ եղել են հենց նրա մոտ, — մտածում էր Ռոստովը. — մնացածները չէին կարող տեսնել, թե ի՞նչպես և ո՞ւմ հետ գնաց Ռաևսկին ամբարտակով: Բայց նրանք էլ, ովքեր տեսել են այդ, չէին էլ կարող շատ ոգեսրվել, որովհետո ի՞նչ գործ ունեին նրանք Ռաևսկու ծնողական քննուց զգացմունքների հետ, երբ բանն այստեղ վերաբերում էր իրենց սեփական կաշվին: Հետո այն, թե կվերցնեն կամ չեն վերցնի Սալտանովյան ամբարտակը, դրանից չէր կախված հայրենիքի բախտը, ինչպես այդ նկարագրում են Ֆերմոպիլի մասին: Եվ, ուրեմն, ինչո՞ւ պետք է այդպիսի զոհ տալ, եվ հետո, ինչո՞ւ պետք է մարդ այստեղ՝ պատերազմում այդ գործին խառներ և իր զավակներին: Ես ոչ միայն եղարս՝ Պետյային չէի տանի, այլև անդամ իլի՞ին, այս ինձ օտար, բայց բարի տղային, կաշխատեի տեղավորել մի որևէ պաշտպանված տեղում», շարունակում էր մտածել Ռոստովը, ունկընդիւով Զդրժինսկուն: Բայց նա իր մտքերը շարտահայտեց. Նա դրա համար էլ արդեն փորձ ուներ: Նա զիտեր, որ այդ պատմությունը նպաստում է մեր զենքի հոշակին, ուստի և պետք է ցուց տալ, թե դրանում չի կասկածում: Նա այդպիս էլ արավ:

— Էլ դիմանալ չի լինի, — ասավ իլինը, նկատելով, որ Ռոստովին դուր չի գալիս Զդրժինսկու զրույցը: — Թրջվել են թե՝ գուլպաներս, թե՝ շապիկս, ու հիմա էլ ջուրը հոսում է տակս: Գնամ մի ապաստան որոնեմ: Կարծես անձրեց բարեկել է:

Իլինը դուրս եկավ, և Զդրժինսկին մեկնեց:

Հինգ րոպե անց իլինը, ցեխերը շրպացնելով, վազեց դեպի հոլիկը:

— Ուուա՛: Ռոստով, գնանք շուտ: Գտա՛: Հրես այստեղ երկու հարյուր քայլի վրա պանդոկ կա. մերոնք արդեն տեղավորվել են այնտեղ: Գոնք կշորանանք. Մարիա Հենրիխովնան էլ այնտեղ է:

Մարիա Հենրիխովնան գնդի բժշկի կինն էր, մի ջահել, սիրունիկ գերմանուհի, որի հետ բժիշկն ամուսնացել էր կեհաստանում: Բժիշկը կա՛մ այն պատճառով, որ միջոցներ չուներ, կա՛մ թե նրա համար, որ չեր ուզում ամուսնության առաջն օրերը բաժանվել իր ջահել կնողից, իր հետ ման էր ածում նրան, և բժշկի խանդությունը դարձել էր հուսարական պաների կատակների: սովորական առարկան:

Ռոստովը թիկնոցը ցցեց վրան, ձայն տվեց իրերով իր ետևից եկող կավրուշկային ու գնաց իլինի հետ, տեղ-տեղ ընկնելով ցեխի մեջ, տեղ-տեղ ուղղակի շրպացնելով հանդարաւող անձրեկի տակ, երեկոյի մթության մեջ, որ երբեմն խախտվում էր հեռավոր կայծակներով:

— Ռոստով, ո՞ւր ես:

— Այստեղ եմ: Ի՞նչ կայծակ էր, — խոսում էին նրանք:

### XIII

Պանդոկում, որի առաջ կահնդած էր բժշկի ծածկավոր սայլակը, հինգ սպա կար արդեն: Մարիա Հենրիխովնան, լեցուն, խարոյաշ գերմանուհին՝ կոֆտայով և գիշերվա շամշիկով, նրսուած էր առշնի անկյունում դրված լայն նստարանի վրա: Նրա ամուսինը՝ բժիշկը, քնած էր նրա ետեր: Ռոստովն ու իլինը, որոնց զիմավորեցին ուրախ բացական շություններով ու ծիծաղով, մտան անյաւիլ:

— Ի՞... աւս ինչ ուրախության մեջ ևս, — ծիծաղելով առավ Ռոստովը:

— Եսկ դուք ինչո՞ւ եք մնացել:

— Հիանալի՛ են, զուրը հոսում է վրաներից: Մեր հյուրեւսենյակը շթրջեք:

— Մարիա Հենրիխովնայի զգեստները չեղտառտեք, — ասին մի քանի ձայներ:

Ռոստովն ու իլինն շտապեցին գտնել մի անկյուն, ուր նրանք, Մարիա Հենրիխովնայի համեստությունը չվիրավո-

բելով, կարող էին իրենց թրջված զգեստները փունելով՝ նրանք ուղեցին անցնել միջնորմի ետևը՝ զգեստները փոխելու. բայց փոքրիկ խորդանոցում, ամբողջապես իրենցով լցրած, դատարկ արկղի վրա մի մոմ դրած, նստած էին երեք սպա, որ թուղթ էին խաղում, և ոչ մի կերպ շուկեցին զիջել իրենց տեղը։ Մարիա Հենրիխովնան իր շրջազգեստը զիջեց ժամանակավորապես, որ այն գործածեն վարագույրի փոխարձն, և այդ վարագույրի ետև Ռուսություն ու Իլինը, կապոցները բերած կավորւշայի օգնությամբ, հանեցին իրենց թաց զգեստները և հագան շորը։

Կոտրած վառարանում կրակ արին։ Գտան մի տախտակ, ամրացրին երկու թամբի վրա, ծածկեցին սթարով, գտան ինքնաեռ, մի ուղեպայուսակ և կես շիշ ոռմ, ու, Մարիա Հենրիխովնային խնդրելով տանտիկնություն անել, բոլորը խմբվեցին նրա շուրջը։ Ո՞րն իր մաքուր թաշկինակն էր առաջարկում նրան՝ գեղեցիկ մատները սրբելու, ո՞րը հունգարական բաճկոնն էր փոռում նրա ոտների տակ, որ խոնավ լինի, ո՞րը թիկնոցով ծածկում էր լուսամուտը, որ չփշ. ո՞րը ճանճեր էր քում նրա մարդու երեսից, որ շզարթնի։

— Թողեք դրան, — ասում էր Մարիա Հենրիխովնան, ամաշկու ու երջանիկ ժպտալով, — նա առանց այդ էլ լավ է քնում անքուն գիշերից հետո։

— Զի կարելի, Մարիա Հենրիխովնա, — պատասխանեց սպան, — պետք է բժշկին սպասարկել։ Ամեն ինչ կարող է պատահել, և նա կիզմա ինձ, երբ ոտս կամ ձեռս կտրելու կլինի։

Միայն երեք բաժակ կար. զուրն այնքան կեղտոտ էր, որ անկարելի էր որոշել, թե երբ է թեյը մուգ կամ բաց, և ինքնաեռում կար միայն վեց բաժակ զուր, բայց հենց այդ պատճառով էլ հաճելի էր հերթով ու արագությամբ բաժակ ստանալ Մարիա Հենրիխովնայի կարճելիկ, ոչ բոլորովին մաքուր եղունգներով փափլիկ ձեռիկներից։ Բոլոր սպաները, թվում էր, իսկապես սիրահարկել են այդ երեկո Մարիա Հենրիխովնայի վրա։ Անգամ այն սպաները, որ միջնորմի ետևը թուղթ էին խաղում, շուտով թողին իրենց խաղը և եկան ինքնաեռի մոտ, են Մարիկիլով Մարիա Հենրիխովնային սիրահատելու ընդհա-

նուր տրամադրությանը։ Մարիա Հենրիխովնան, ուստի ելով իրեն շրջապատված այդպիսի փայլուն ու քաղաքավարի երիտասարդությամբ, շողում էր երջանկությունից, որքան էլ նա աշխատում էր թաքցնել այդ և որքան էլ բացահայտորեն վախենում էր իր ետևը քնած մարդու քնի մեջ կատարած յուրաքանչյուր շարժումից։

Գդալ միայն մի հատ կար. ամենից շատը շաքարն էր, բայց խառնել չէին հասցնում, ուստի և որոշվեց հերթով խառնել յուրաքանչյուրի շաքարը։ Ռուսություն, իր բաժակն ստանալով և նրա մեջ ոռմ լցնելով, Մարիա Հենրիխովնային խընդրեց խառնել։

— Բայց ձեր բաժակի մեջ շաքար չկա, — ասավ Մարիա Հենրիխովնան, շարունակ ժպտալով, կարծես այն բոլորը, ինչ ասում էր ինքը, և այն ամենը ինչ ասում էին մյուսները, շատ ծիծաղաշարժ էր և ուներ մի այլ նշանակություն։

— Ինձ շաքար հարկավոր չէ, ուզում եմ միայն, որ դուք խառնեք ձեր ձեռքով։

Մարիա Հենրիխովնան համաձայնեց և սկսեց փնտրել գըշալը, որ մեկը վերցրել էր արդեն։

— Դուք մատով, Մարիա Հենրիխովնա, — ասավ Ռուսություն, ավելի հաճելի կլինի։

— Տաք է, — ասավ Մարիա Հենրիխովնան, բավականությունից կարմրելով։

Իլինը շրով լի դույլը վերցնելով և, այնտեղ ոռմ կաթեցնելով, մոտեցավ Մարիա Հենրիխովնային, խնդրելով մատով խառնել։

— Ես իմ բաժակն է, — ասավ նա։ — Միայն ձեր մատը ըլլեք մեջը՝ բոլորը կ'ումնեմ։

Երբ ամբողջ ինքնաեռը խմեցին, Ռուսությունը խաղաթղթերը վերցրեց և առաջարկեց Մարիա Հենրիխովնայի հետ թագավակոր խաղալ։ Վիճակ զցեցին, թե ո՞վ կլինի Մարիա Հենրիխովնայի խաղընկերը։ Խաղի կարզը, ըստ Ռուսությունի առաջարկի, այն էր, որպեսզի նա, ով թագավոր լինի, իրավունք ունենա Մարիա Հենրիխովնայի ձեռը համբուրել, իսկ նա, ով կմնա սրիկա, գնա ինքնաեռը նորից զնելու բժշկի համար, երբ նա զարթնի։

— Է՞, իսկ եթե Մարիա Հենրիխովնա՞ն լինի թագավոր, — հարցրեց իլինը։

— Նա առանց այդ էլ թագուհի է: Եկ նրա հրամանները օրենք են:

Խաղը հենց նոր էր սկսվել, երբ հանկարծ Մարիա Հենրիկովնայի հետ բարձրացավ բժշկի խճճված մազերով գլուխը: Նա վաղուց արդեն քնած չէր և ականջ էր դնում, թե ի՞նչ է նոսպում և, ըստ երևութին, ուրախ, ժիծաղելի կամ զվարեալի ուժին չէր գտնում այն ամենի մեջ, ինչ ասվում էր ու արդում: Նրա դեմքը տխուր էր ու վհաս: Նա շբարեց սպաներին, ինքն իրեն քորեց և թույլտվություն խնդրեց դուրս գալ, որովհետեւ նրա ճանապարհը կտրել էին: Հենց որ նա դուրս եկավ, բույր սպաները բարձրածայն քրքջացին, իսկ Մարիա Հենրիխովնան կարմրեց արտասկելու շափ և այդպիս ավելի հմայիշ դարձավ բուլոր սպաների աշքում: Բակլից վերադառնալով՝ բժշկը կը նոցն (որ արդեն երջանկորեն էլ չէր ժամանակում և, մարդուն նաւելով, սպասում էր նրա դատաստանին) ասավ, թե անձրեց կտրել է, և թե պետք է զնալ սայլակում զիշերելու, եթե ոչ ամեն ինչ կկողոպտեին-կտանեին:

— Ես բաներիս կուղարկեմ նայելու... երկուսի՝ կուղարկեմ, — ասավ Ռոստովը: — Թողե՛ք, բժշկ:

— Ես ինքս պահակություն կանեմ, — ասավ Իլինը:

— Ոչ, պարոնայք, դուք ձեր քունն առել եք, իսկ ես երկու գիշեր է շեմ քնել, — ասավ բժշկը և մոայլ նստեց կողդին, սպասելով խաղի վերջանալուն:

Նայելով իր կնոջը խեթող բժշկի մոայլ բնմքին, սպաների վրա էլ աւելի ուրախություն եկավ, և շատերը շկարողացան իրենց ծիծայր զսպել, որի համար շտափ աշխատում էին մի պատշաճ առիթ որոնել: Երբ բժշկը գնաց, կնոջը հետը տանելով, և նրա հետ միասին տեղավորվեց իր սայլակում, սպաները պառկեցին պանդոկում, թաց շինելներով ծածկվելով: Բայց երկար շքնեցին, մերթ զրուցելով, հիշում էին բժշկի երկուուն ու կնոջ ուրախությունը, մերթ դուրս վազելով, գափս պատմում էին թե ի՞նչ է կատարվում ծածկափառ սայլակում: Ռոստովը մի քանի անգամ, գլխից հետ ծածկվելով, ուզեց քնել, բայց նորից ինչ-որ մեկի դիակողաթյունը գրավում էր նրա ուշադրությունը, նորից զրուց էր սկսված, և նորից նշում էր մանկական անառիթ, ուրախ բըրք ջը:

Ժամը 3-ի մոտ գեռ ոչ շեր քնել, երբ վերական հրաման բերեց՝ շարժվել դնալի Օստրովնա ավանը:

Նորից նույն խոսոցով ու ծիծաղով սովաներն սկսեցին հապճեպ հավաքվել: Նորից ինքնանոք դրին կեղտուա ըրով: Բայց Ռոստովը, թեցի շապասելով, գնաց դեպի հեծվաշտը: Լուսանում էր արգեն: անձրես դադարել էր: Ամպերը ցրվում էին: Խոնավ էր և ցաւրտ, դա զգավի էր մանավանդ չըրացած հագուստու: Պանդրկից դուրս գալով Ռոստովն ու Իլինը միասին լուսաբացի աղջամուղի մեջ նայեցին բժշկի սալլակի մեջ, որի ծածկի կաշին վազլում էր անձրես, և որի վարագույրի տակից ցցվել էին բժշկի ոտները և որի մեջունը, բարձի վրա, երեւմ էր բժշկի կնոջ շամշկը, ու լավում էր քնածի շնչառություն:

— Խոկապես բժշկի կինը շատ լավն է, — ասավ Ռոստովը Իլինին, որ դուրս էր գալիս նրա հետ:

— Հիմանափի՛ կին է, — տասնվեց տարեկանի լրջությամբ ուստասիսնեց Իլինը:

Կևս ժամ հետո կաղմ ու ուստասս հեծվաշտը կանգնած էր ճանապարհին: Լսվեց հրամանը, «Հիծի՛ր»: Ցինվորները խաչակնքեցին երեսները և սկսեցին հեծնել ձիերին: Ռոստովը, առաջ պնակով, հրսման տվեց: «Ճա՛րշ» և, շրու-շրու ձգված հուսարները, ձիերի սմբակները թաց գետնին շրպացնելու, Ըրերի շրիկոցի և հանդարտ խոսոցի ձայն հանելով, շարժվեցին մեծ, երկու կողմը կեշներ տնկած ճանապարհով, առաջ ու դնացած հետեւակի և մարտկոցի ետևից:

Շատ առավագան կարդուրություն ամպերը, կարմրելով արևելքում, արագորեն աշարշում էին քամուց: Հեռազհեան ավելի լուսանում էր: Պարզ երեւում էր այն ըւսպուր խոտը, որ լինում է միշտ զյուղական ճանապարհներին: Նա գեռ Բաց էր երեկովա անձրես, կեշների կախ ընկած, նույնիսկ թաց ճղները, օրորվում էին քամուց և իրենցից շեղակի գցում պայծառ կաթիլներ: Հետզհետեւ ավելի ու ավելի պարզ նշմարվում էին գինվորների դեմքերը, Ռոստովը գնում էր իրենից ետ շմնացող լիինի հետ, ճանապարհի մի կողմով, երկար կեցների միջով:

Ոռոստով՝ արշավանքում ազատություն էր թույլ տալիս իրեն՝ հեծնելով ոչ թե բանակային ձի, այլ կազակացին ձի. որպես ձի ճաշաշող ու սիրող նա վերջերս ձեռք էր բերել Դոնի մի ճարպիկ, խոշոր և լավ ձի, որի վրա գեռ ոչ ոք նրանից առաջ չէր անցել: Այդ ձիով տեղ գնալը Ռոստովի համար հաճույք էր: Նա մտածում էր ձիու մասին, առավոտի մասին, բժշկի կնոջ մասին և ոչ մի անգամ շմտածեց առաջիկա վտանգի մասին:

Սուաջ Ռոստովը կովի գնալիս վախենում էր. այժմ սարսափի ամենաշնչին զգացում իսկ շուներ: Զէր վախենում ոչ թե այն պատճառով, որ ընտելացել էր կրակին (վտանգին ընտելանալ չի կարելի), այլ այն պատճառով, որ նա սովորել էր իր սիրտը ղեկավարել վտանգից առաջ: Նա սովորել էր, կովի գնալիս, մտածել ամեն բանի մասին, բացառությամբ այն բանի, որ, թվում էր, ավելի հետաքրքրական պիտի լիներ բոլոր մյուսներից՝ առաջիկա վտանգի մասին: Որքան էլ նա աշխատում էր, որքան էլ իրեն հանդիմանում էր վախկոտության համար, ծառայության առաջին շրջանում նա չկարողացավ հասնել այդ բանին, բայց տարչների բնթացքում այդ այժմ կատարվել էր ինքն իրեն: Նա այժմ ձին քշում էր իլինի հետ կողք-կողքի, կեշների միջով, եղբեմնակի ճղներից տերեներ պոկելով, որոնք ձեռն էին ընկնում, երբեմն ոտք դիպցնում էր ձիու աճուկին, երբեմն, առանց շուր գալու, կիսով շափ ծխած ծխամորճը տալիս էր ետեկից եկող հուսարին, մի այնպիսի հանգիստ ու անհոգ տեսքով, որ կարծես զբոսնելու էր գնում: Նա խղճահարությամբ էր նայում իլինի հուզված գեմքին, որ խոսում էր շատ և անհանգիստ. Նա փորձով գիտեր սարսափի ու մահվան սպասումի այն տանջալից վիճակը, որի մեջ գտնվում էր կոռնետը, և գիտեր, որ ժամանակից բացի, ովնալ չի կարող օգնել նրան:

Հենց որ արել ամպի տակից երեաց երկնքի մաքուր շերտի վրա, քամին դադարեց, կարծես չէր համարձակվում փշացնել փոթորկից հետո բացվող ամառային այդ սքանչելի առավոտը. անձրեաջուրը դեռ կաթում էր ծառերից, բայց արդեն ուղիղ ցած՝ և ամեն ինչ լուց: Արեւ բոլորովին դուրս եկավ, երեաց հորիզոնում և շքացավ մի նեղ ու երկարուկ ամպի տակ, որ կանգնած էր նրա վերեւ: Մի քանի րոպե հետո արեւ էլ աւելի պայծառ երեաց ամպի վերին ծայրին, պատռելով նրա

ծայրերը: Ամսն ինչ լուսավորվեց ու շողշողաց: Եվ այդ լույսի հետ միասին, կարծես նրան պատասխանելով, առջևում լըսվեցին հրանոթի ձայներ:

Ռոստովը զեռ չէր կարողացել մտածել և որոշել, թե որքան հեռու են այդ կրակոցները, երբ Վիտեբսկից սրարշավ եկավ կոմս Օստերման-Տոլյատոյի աղյուտանտը՝ ճանապարհով վարդով գնալու հրաման բերելով:

Հեծվաշտն անցավ հետևակի և մարտկոցի առաջը (որոնք նույնպես շտապում էին արագ գնալ), իջավ սարի տակ և շնուցնելով մի ինչ-որ դատարկ, անմարդաբնակ գյուղ, նորից բարձրացավ սարը: Զիերը քրտնակոխ եղան, մարդիկ կասկարմիր կտրեցին:

— Կանգնի՞ր, հավասարվիր, — առջևից լսվեց դիվիզիայի պետի հրամանը: — Զախ ուսն առաջ: Քայլով մա՞րշ, — հըրաման տվին առջեւում:

Եվ հուսարները զորքերի գծով անցան դիրքերի ձախ թերու կանգնեցին մեր ուլանների ետև, որ գտնվում էին առաջին գծում: Ազ կողմը կանգնած էր մեր հետևակը՝ խիտ զորասյունով. դրանք օժանդակ ուժեր էին. հետևակից վեր, սարի վրա մաքուր ու շինչ օդում, առավոտյան շեղակի ու վառ լուսավորության մեջ, ուղիղ հորիզոնի վրա երևում էին մեր թնդանոթները: Առջևում, ձորի այն կողմը, երեսում էին թշնամու զորասյուններն ու թնդանոթները: Զորից լսվում էր մեր զորաշղթայի ձայնը, որ արդեն կովի էր բոնվել և ուրախ կրակում էր թշնամու ղեմ:

Ինչպես ամենաառւրախ երաժշտության հնչյուններից՝ Ռոստովի սիրտն ուրախացավ այդ ձայներից, որ վաղուց չէր լըսել: Տրապ-տա-տա-տապ, — մերթ հանկարծ, մերթ արագ, մեկը մյուսի ետեկից խիում էին մի քանի կրակոցներ: Նորից ամեն ինչ լուսում էր, և նորից կարծես ճայլթում էին պլոթաները:

Հուսարները մի ժամի շափ մնացին միենույն տեղում: Սկսվեց և թնդանոթածությունը: Կոմս Օստերմանը իր շքախմբով անցավ հեծավաշտի ետեկից, ձին կանգնեցնելով խոսեց գնդի հրամանատարի հետ և գնաց զեպի սարի վրա դտնվող թնդանոթները:

Օստերմանի գնալուց անմիջապես հետո ուլաններին հրաման տրվեց. «Զորասյուն կազմել, պատրաստվել հարձակ-

մա՛նս: Հետեակր նրանց առջևում դասակները երկու մասի բաժանեց՝ հեծելազորին ճանապարհ տալու համար: Ուշանները շարժվեցին, նիզակների ֆլյուգերները օրորելով, և վարդով դնացին սարի ստորոտը՝ ֆրանսական հեծելազորի ղեմ, որ երեացել էր սարի տակ, ձախ կողմում:

Հենց որ ուշաններն իջան սարի ստորոտը, հուսարներին հրամայվեց սարը բարձրանալ՝ հրետանին պաշտպանելու: Այն ժամանակ, երբ հուսարները բռնում էին ուշանների տեղը, շղթայից սուլցով ու տժոցով գնդակներ եկան, որ ընկան հեռու, առանց մարդու դիպչելու:

Վաղուց լաված այդ ձայնն էլ ավելի ուրախ ու զրգուի ներգործություն ունեցավ Ռոստովի վրա, քան հրաձության առաջին ձայնները: Նա, ձգված նայում էր սարի վրայից երեսող կովի դաշտը, ու ամբողջ սրտով մասնակցում էր ուշանների շարժումներին: Ուշանները մոտիկից հարձակվեցին ֆրանսական դրագունների վրա, ինչ-որ խառնվեց այնտեղ ծխի մէջ, և հինգ րոպէ հետո ուշանները ետ վազեցին, ոչ թե այն տեղը, ուր կանգնել էին, այլ ավելի դեպի ձախ: Շիկակարմիր ձիեր նստած նարնջազգեստ ուշանների արանքում և նրանց ետև մէծ խմբով երեսում էին ֆրանսական կապտազգեստ դրագունները մոխրագույն ձիերի վրա:

## ХV

Ռոստովը որսորդական իր սուր աշքերով առաջններից մեկն էր, որ տեսավ միր ուշաններին հետապնդող ֆրանսական այդ կապույտ դրագուններին: Հետզհետե ավելի ու ավելի մոտենում էին ուշանները քայլայված խմբերով և ֆրանսական դրագունները, որ հետեւում էին նրանց: Արդեն կարելի էր տեսնել, թե ինչպես այդ սարի տակ փոքր երևացող մարդիկ բախւում էին, քշում միմյանց ու թափահարում ձեռները կամ թրերը:

Ռոստովը, ինչպես մի որսահալածանքի, նայում էր այն, քանին, ինչ կատարվում էր իր առաջ: Նա հոտառությամբ գդում էր, որ եթե այժմ հուսարներով հարվածի ֆրանսական դրագուններին, նրանք շեն դիմանա: Բայց եթե հարվածելու էր, պետք է հարվածեր այժմ, հենց այդ բոլորին, այլապիս ուշ

կլիներ: Նա շուրջ ո հայեց: Ռոտմիստրը, նրա կողքին կանգնած, ճիշտ նույնպես աշք չէր հեռացնում ցածը գտնվող հեծելազորից:

— Անդրեյ Սևաստյանիչ, — ասավ Ռոստովը, — մենք նրանց կշարդենք...

— Իիզավար բան կլիներ, — ասավ Ռոտմիստրը, — և իսկապես...

Ռոստովը, նրա խոսքի շարունակությունը չլսած, ձին շարժեց, վագեց էսկադրոնի առաջ, և գեռ չէր կարողացել շարժվելու հրաման տալ, երբ ամբողջ էսկադրոնը, զգալով նույնը, ինչ նա էր գգում, շարժվեց նրա ետևից: Ռոստովն ինքն էլ շիմացավ, թե ի՞նչպես է ինչո՞ւ համար արավ այդ: Այդ բոլորը նա արավ, ինչպես անում էր որսի ժամանակ, շմտածելով, չկուտատելով: Նա տեսավ, որ դրագունները մոտ են, որ արշավում են, ցրված են. նա գիտեր, որ նրանք շեն դիմանա: Նա գիտեր, որ կար միայն մի վայրկյան, որն էլ չէր դառնալու, եթե բաց թողներ այն: Գնդակներն այնպես գրգոր կերպով էին վժժում ու սուլցում նրա շուրջը, ձին այնպես տաքացած առաջ էր ցնականում, որ նա էլ չկարողացավ իրեն պահել: Նա ձին շարժեց, հրաման տվեց և նույն վայրկյանին, ետևից լսելով իր՝ շարքերը քանդած հեծվաշտի տրոփյունը, սկսեց վարդով իշնել սարի ստորոտը, գեպի գրագունները: Հազիվ նրանք հասել էին սարի ստորոտը, երբ նրանց երկատրոփի քելքն ակամու փոխվեց քառատրոփի, որ հետզհետե ավելի ու ավելի արագ էր գառնում այնքան, որքան նրանք ավելի էին մոտենում իրենց ուշաններին և նրանց հետևից արշավող ֆրանսական դրագուններին: Դրագունները մոտ էին: Առաջինները, հուսարներին տեսնելով, ուշացին ձիերի զլույշները ևս գտրձնել, ետեւ զինները՝ կանգ առնել: Այն զզացումով՝ որով նա սլանում էր էայլի առաջը կտրելու, ամբողջ թափով թողեց ձիու գլուխը, զնաց ֆրանսական դրագունների քայլայված շարքերի ճանապարհը կտրելու: Մի ուշան կանգ առավ, մի հետեակ ընկալ գիտին, որ իրեն շարորեն, մի ծի առանց հեծվորի խառնվեց հուսարներին: Ֆրանսական գրեթե բոլոր դրագունները ձիերը քշում էին ետ: Ռոստովն ընտրեց դրանցից մոխրագույն ձի նստած մեկին ու ընկալ ետևից: Ճանապարհին նա դէմ ընկավ մի թվի. խելացի ձին ճեղքեց անցավ թուփը և Նիկոլայը, թամրի

վրա հազիվ իրեն պահելով, տեսավ, որ մի երկու ակնթարթից հետո կհասնի այն թշնամուն, որին նշանակեաւ էր ընտրել: Այդ ֆրանսացին, որ ինչպես մունդիրից երևում էր, սպա էր, կուացած սլանում էր իր մոխրագույն ձին նստած, թրով նրան քըշելով: Մի ակնթարթ անց Ռոստովի ձին կրծքով գիպավ սպայի ձիու հետույքին, քիչ մնաց այդ ձիուն տապալեր գետին, և նույն ակնթարթին Խոստովը, ինքն էլ շիմանալով ինչու, թուրք բարձրացրեց ու խփեց ֆրանսացուն:

Եկ նույն այդ ակնթարթին, երբ նա այդ արավ, Ռոստովի ամբողջ աշխույժը շքացավ հանկարծ: Սպան ընկալ ոչ այնքան թրի զարկից, որը թեթևակի կտրեց միայն նրա թեր արմունկից վեր, որքան ձիու ուժգին հրումից ու վախից: Ռոստովը, ձին պահելով, աշքերով որոնեց իր թշնամուն, որ տեսնի թե ո՞ւմ է հաղթել: Ֆրանսացի դրագուն սպան մի ոտով թռչում էր գետնին, իսկ մլուս ոտք մնացել էր ասպանդակում: Նա, վախեցած կոցելով, կարծես ամեն վայրկյան նոր հարվածի սպասելով, դեմքը կուշ ածած, սարսափի արտահայտությամբ ներքից նայում էր վեր՝ Ռոստովին: Նրա դեմքը, գունատ ու ցեխոտված, խարտյաշ, զահել, ծնոտի փոսիկով և լոյժառ, երկնագույն աշքերով դեմքը, բնավ պատերազմի դաշտի համար չէր, թշնամու դեմք չէր, այլ ամենապարզ, սենյակի դեմք էր: Նախքան Ռոստովը կվճռեր, թե ի՞նչ է անհելու նրան, սպան ճշաց. «յե ու րենդս!»<sup>1</sup>: Նա, շտապելով ուզում էր և չէր կարողանում ոտն ազատել ասպանդակից, և երկյուղած երկնագույն աշքերը չհեռացնելով, նայում էր Ռոստովին: Վազեվակ մոտեցած հուսարները ազատեցին նրա ոտք և նստեցրին թամբի վրա: Հուսարներն ամեն կողմ բռնվել էին դրագունների հետ. մեկը վիրավորված էր, բայց երեսն արյան մեջ կորած, իր ձին չէր տալիս, մյուսը, հուսարին գրկած, նստել էր նրա ձիու դավակին. Երրորդը, հուսարի օգնությամբ, բարձրանում էր նրա ձիու վրա: Առջևից, կրակելով, փախչում էր ֆրանսական հետեւակը: Հուսարները հապճեպ ետ դարձան իրենց գնրիներով: Ռոստովը ետ էր դառնում մյուսների հետ, մի ինչ-որ տհաճ զգացումով, որ ճնշում էր նրա սիրտը: Մի ինչ-որ անորոշ խճճված բան, որ նա իրեն բացատրել չէր կարողանում,

պարզվեց նրան այդ սպայի գերումով և առն Հարիածով, որ ինքը հասցըց նրան:

Կոմս Օստերման-Տոլստոյը հանդիպեց վերադարձող հուսալներին, կանչեց Ռոստովին, շնորհակալություն հայտնեց նրան և սպավ, որ ինքը նրա քաջության մասին հայտնելու է թագավորին և Գեորգիի խաչ է խնդրելու նրա համար: Երբ Ռոստովին կանչեցին կոմս Օստերմանի մոտ, նա հիշելով, որ իր հարձակումն սկսել էր առանց հրամանի, իիվին համոզված էր, թե պետն իրեն պահանջում է նրա համար, որ պատժի նրան իր ինքնագլուխ քայլի համար: Այդ պատճառով Օստերմանի գովասանքը և շքանշանի խոստումը պետք է որ էլ ավելի ուրախութեն շշմեցնեին Ռոստովին: բայց էլի նույն անհաճո, անորոշ զգացումը բարոյապես նողկանք էր պատճառում նրան և Յոյ, ի՞նչն է արդյոք ինձ տանջում, — հարցրեց նա ինքն իրեն, գեներալի մոտից մեկնելով: — Իի՞նը: Ոչ, նա ողջ է: Խայտառակցել եմ որևէ բանով: Ոչ, էլի այն չէ»: Նրան ինչ-որ ուրիշ մի բան էր տանջում, որպես զղում: «Յոյ, այո, ֆրանսացի այդ սպան, ծնոտի վրա փոսիկ ունեցող սպան: Հիշում եմ՝ ինչպես ծես կանգ առավ, երբ բարձրացրի այն»:

Ռոստովը տեսավ տարվող գերիներին և ձին քշեց նրանց ետևից, որ նայի ծնոտի վրա փոսիկ ունեցող իր ֆրանսացուն: Նա տարօրինակ մունդիրով նստել էր բուծարանային հուսարական ձի և անհանգիստ նայում էր իր շուրջը: Նրա թեմի վերքը գրեթե վերք չէր: Նա կեղծ ժապաշ Ռոստովին է ծեռը թափառեց, իրեն ողջուն: Ռոստովն էլի առաջվա պես անհարմար էր զգում իրեն և ամաշում էր ինչ-որ բանից:

Ամբողջ այդ օրը և հետևյալ օրը Ռոստովի բարեկամներն ու ընկերները նկատում էին, որ նա ոչ տիսուր է, ոչ բարկացած, բայց լուռ է, մտախոհ ու կենտրոնացած: Նա խմում էր դիկամությամբ, աշխատում է մենակ լինել և ինչ-որ բանի մասին մտածում էր շարունակ:

Ռոստովը շարունակ մտածում էր իր այդ փայլուն սխրագործության մասին: Որ, ի զարմանս նրա, Գեորգիի խաչ տվեց նրան և անգամ քաշի համբավ ստեղծեց իր համար, ու ինչ-որ մի բան ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ: «Ուրեմն նրանք էլ ավելի են վախենում մերոնցից, — մտածում էր նա: — Ուրեմն միայն հենց այս է այն բոլորը, ինչ կոչվում է հերո-

<sup>1</sup> Անձնատուր եմ լինում:

ռություն։ Եվ մի՞ թե ես այդ արի հայրենիքի համար։ Եվ նա չ'նչ մեղք ունի իր ծնոտի փոսիկով ու երկնագույն աշքեցով։ Բայց ի՞նչպես վախեցավ նա։ Կարծեց, թե իրեն սպանելու եմ։ Իսկ ինչո՞ւ համար պետք է սպանեմ նրան։ Եվ ձեռո դողաց։ Իսկ ինձ Գեորգիի խաչ են տվել։ Ոչինչ ոչինչ չեմ հասկանում։

Բայց մինչ Նիկոլայն ինքն իր մեջ վերամշակում էր այս հարցերը և այնուամենայնիվ չկարողացավ պարզ հաշիվ տալ իրեն, թե ի՞նչն էր, որ այնպես շփոթեց իրեն, ծառայության բախտի անիվը, ինչպես այդ հաճախ է լինում, դարձավ հօգուտ նրա։ Օստրովնայի կովկից հետո նրան առաջ քաշեցին, տվին հուսարների մի գումարտակ և, երբ քաջ սպա օգտագործելու կարիք էր լինում, նրան էին հանձնարարություններ տալիս։

## XVI

Նատաշայի հիվանդության լուրն ստանալով, կոմսուհին, գեռ ոչ բոլորպին առողջ և թույլ, Պետյայի հետ ու ամբողջ տնով եկավ Մոսկվա, և Ծոստովների ամբողջ ընտանիքը Մարիա Դմիտրիենայի տնից փոխադրվեց իր տունը և միանգամայն հաստատվեց Մոսկվայում։

Նատաշայի հիվանդությունն այնքան լուրջ էր, որ նրա և նրա հարազատների բախտից, այն միտքը, թե ինչն էր հիվանդության պատճառը, Նատաշայի արարքը և փեսացովի հետ կապ խցելը — անցան երկրորդական հարցերի շարքը։ Նա այնքան հիշանդ էր, որ չէր կարելի մտածել, թե որքան է նա մեղավոր ամբողջ կատարածի մեջ, այն ժամանակ, երբ նա չէր ստում, չէր քնում, նկատելի նիհարել էր, հազում էր և ինչպես բժիշկներն էին զգալ տալիս, զտանդի մեջ էր։ Պետք էր մտածել միայն նրան օգնելու մասին։ Բժիշկները զալիս էին Նատաշայի մոտ թե առանձին, թե կոնսիլիումներով, խոսում էին շատ ֆրանսերեն ու գերմաներեն, և լատիներեն, դատապարտում էին մեկը մյուսին, նշանակում էին ամենատարբեր գեղեցւ՝ իրենց ծանոթ բոլոր հիվանդությունների գեմ։ Բայց նրանցից և ոչ մեկի գլխում չէր ծագում այն պար, միտքը, թե իրենց չի կարող հայտնի լինել այն հիվանդությունը, որով տասապում էր Նատաշան, ինչպես չի կարող հայտնի լինել ոչ մի

հիվանդություն, որով բոնված լինի կենդանի մարդը, որովհետեւ լուրաքանչյուր կենդանի մարդն ունի իր առանձնահատկությունները և միշտ ունի առանձին և իր, նոր, բարդ, բժշկականության անհայտ հիվանդությունը, — ոչ թե թոքերի, լարդի, մաշկի, սրտի, ներկերի և այլնի հիվանդություն, որ գրի են առնված բժշկականության մեջ, այլ մի հիվանդություն, որն առաջանում է այդ օրգանների տառապումների անթիվ-անհամար զուգորդումներից մեկն ու մեկի հատեանքով։ Այս պարզ միտքը չէր կարող ծագել բժիշկների գլխում (այնպես ինչպես կախարդի մոգով չի կարող անցնել այն, թե ինքը չի կարող կախարդել) այն պատճառով, որ նրանց կյանքի գործն այն էր, որ բժիշկն այն պատճառով, որ նրանք դրա համար փող էին ստանում, և այն պատճառով, որ այդ գործի վրա նրանք վատնել էին իրենց կյանքի լավագույն տարիները։ Բայց գրւխավոր՝ այդ միտքը չէր կարող ծագել բժիշկների գլխում այն պատճառով, որ նրանք տեսնում էին, թե իրենք անշուշտ օգտակար են, և, իրոք, օգտակար էին Ռուսովների բոլոր անեցիների համար։ Նրանք օգտակար էին ոչ թե այն պատճառով, որ հիվանդին ստիպում էին կուլ տալ մեծ մասամբ վնասակար նյութերը (այդ վնասը քիչ էր զգալի, որովհետեւ վնասակար նյութերը տրվում էին սակավ քանակով), բայց նրանք օգտակար, անհրաժեշտ, անխուսափելի էին (պատճառը — ինչու միշտ կան ու կլինեն իեղծ բուժողներ, կախարդներ, հոմեոպատներ, այլաբուժներ) այն պատճառով, որ բավարարում էին հիվանդի և հիվանդին սիրող մարդկանց բարոյական կարիքը։ Նրանք բավարարում էին թեթևացման հուսո մարդկային ուշ մշտու, ենական կարիքը, կարեկցության ու զործունեության կարիքը, որ մարդ զգում է տանջանքի ժամանակի Նըրանք բավարարում էին այն մշտնշնչնական, մարդկային մանկան մեջ ամենանախնական ձևով նկատելի կարիքը՝ շփել այն աեղը, որ ցավել, ջարդվել է։ Երեխան կընկնի, կշարդվի և անմիջապես էլ կվազի մոր, դայակի գիրկը, որպեսզի համբորին ու շիկեն ցաված տեղը, և նա թեթևություն է զգում, երբ ցաված տեղը շփում են կամ համբուրում։ Երեխան չի հավատում, որ իրենից ալելի ուժեղնարն ու իմաստունները միջոց չունենան իր ցավին օգնելու ել թեթևացման հույսն ու կորեկցանքի արտահայտությունը՝ ուշ, միջոցին, երբ մայրը շփում

է նրա ուռած տեղը, միսիթարում են նրան: Բժիշկները նատաշայի համար օգտակար էին նրանով, որ նրանք համբուրում ու շփում էին բոբոն, հավատացնելով, որ հիմա կանցնի, եթե կառապանը գնա Արբատի դեղատունը և վերցնի մի ոռւբի յոթանասուն կոպեկի փոշիներ ու դեղահատեր սիրունիկ տուփի մեջ, և եթե այդ փոշիները յուրաքանչյուր երկու ժամը մեկ, ոչ մի դեպքում ոչ ալիք և ոչ պակաս, հիվանդն ընդունի եփած զրի մեջ:

Ի՞նչ պիտի՝ անեին Սոնյան, կոմսն ու կոմսուհին, որքան էլ նրան նայեին, ոչինչ չձեռնարկելով, եթե լինեին նշանակված ժամերին ընդունվող այդ դեղահատերը, տաք խմելիքը, հավի կոտակետը և բժիշկների հրահանգած ապրելակերպի բոլոր մանրամասնությունները, որ կազմում էին շրջապատղողների զբաղումն ու միսիթարանքը:

Ինչպես պիտի տաներ կոմսը սիրած աղջկա հիվանդությունը, եթե որ շիմանար, թե նատաշայի հիվանդությունն իրեն նստել է հազարներ, և թե նա շի խնայի ևս նոր հազարներ, որ օգնի աղջկան. եթե նա շիմանար, որ, եթե աղջիկը լավանա, նա շի խնայի ևս նոր հազարներ և կտանի նրան արտասահման ու այնտեղ կոնսիլիումներ հրավիրի. եթե նա հնարավորություն շռնենար մանրամասն պատմելու, թե ինչպես Մետիվին ու Ֆելիքրը շհասկացան, իսկ Ֆրիզը հասկացավ, և Մուգրովն էլ ավելի լավ որոշեց հիվանդությունը: Ի՞նչ պիտի աներ կոմսուհին, եթե նա շկարողանար երբեմն կովել հիվանդ նատաշայի հետ, որ նա լիովին շի հետեւմ բժշկի հրահանգներին:

— Այդպես երբեք շես ասողանա, — ասում էր նա, զայռույթի մեջ իր վիշտը մոռանալով, — և թե բժշկին շնոր և ժամանակին դեղ լընդունես: Զէ որ դրա հետ կատակ անել շի կարելի, երբ կարող ես պնւմոնիա ստանալ, — ասում էր կոմսուհին, և այդ իրեն անհասկանալի մի հատիկ բառն արտապահելու մեջ նա մեծ միսիթարություն էր գտնում:

Ի՞նչ պիտի աներ Սոնյան, եթե շունենար այն ուրախ գիտակցությունը, թե առաջին օրերը, երեք գիշեր ինքը չէր հանվել, որպեսզի պատրաստ լինի ճշտությամբ կատարելու բժշկի բոլոր հրահանգները, և այժմ նա գիշերները շի քնում

նրա համար, որպեսզի նշանակված ժամին սակավ վնասակար դեղահատեր տա հիվանդին ոսկեզօծ տուփից: Անգամ ինքը նատաշան, որ թեև ասում էր, թե ոչ մի դեղ չի բուժի իրեն և թե այդ ամենը հիմարություն է, նա էլ ուրախ էր, տեսնելով, որ իր համար այնքան շատ զոհաբերություններ են անում, որ ինքը որոշ ժամերին պետք է դեղ ընդունի: Նրան անգամ ուրախացնում էր այն, որ ինքը, բժշկի հրահանգաձը կատարելն արհամարհելով, կարող էր ցույց տալ, թե ինքը բժշկության շի հավատում և իր կյանքի համար չի ափսոսում:

Բժիշկն ամեն օր դալիս էր, զարկերակը շոշափում, լեզուն նայում և, նրա տանջալից սպանված դեմքին ուշադրություն շդարձնելով, կատակում էր նրա հետ: Բայց դրա փոխարեն, երբ նա դուրս էր գալիս մյուս սենյակը, կոմսուհին շտապ դուրս էր գալիս նրա ետեկց, և բժշկը, լուրջ դեմք ընդունելով ու գլուխը մտախոն շարժելով, ասում էր, որ թեև զտանգ կա, բայց հույս ունի վերջին դեղի ներգործության վրա և պետք է սպասել ու տեսնել, որ հիվանդությունն ավելի բարոյական է, բայց...

Կոմսուհին, աշխատելով այդ բայլը թաքցնել իրենից ու բժշկից, նրա ձեռը մի ոսկի էր զնում և ամեն անգամ հանգիստ սրտով վերադառնում հիվանդի մոտ:

Նատաշայի հիվանդության նշաններն այն էին, որ նա բիչ էր ուտում, բիչ էր քնում, հազում էր և երբեք չէր աշխուժանում: Բժիշկներն ասում էին, թե հիվանդին շի կարելի թողնել առանց բժշկակ ն օգնության, և այդ պատճառով նրան պահում էին քաղաքի հեղձուցիչ օգում: Եվ 1812 թվի ամռանը Ռուսուպները գյուղ շմեկնեցին:

Զնայած կուլ տփած դեղահատերի, կաթիլների ու փոշիների (որոնց տուփերից ու սրվակներից տաճամե Schoss, որ սիրահար էր այդպիսի բաների, հավաքել էր մի մեծ կութեկցիա) մեծ քանակությանը, շնայած սովորական գյուղական կյանքի բացակայության, երթասարդությունն իրենն արավ. Նատաշայի վիշտն սկսեց ծածկվել ապրած կյանքի տպավորություններթ շերտով, դադարեց այնպես տանջալից կերպով ճնշել նրա սիրտը, սկսեց զառնալ անցյալ, և նատաշան սկսեց ֆիզիկապետ կաղղութել:

Նատաշան ավելի հանգիստ էր, բայց ոչ ավելի ուրախ: Նա ոչ միայն խուսափում էր ուրախության արտաքին բոլոր պայմաններից՝ պարահանդեսներից, զբոսանքներից, համերգներից, թատրոններից, այլ նա ոչ մի անգամ չէր ծիծաղում այնպես, որ ծիծաղի միջից նրա արցունքները լուսվեն: Նա չէր կարողանում երգել, Հենց որ սկսում էր ծիծաղել կամ փորձում էր մենակ ինքն իրեն երգել, արցունքները խեղզում էին նրան, զգում մի և անդառնալի, անարատ ժամանակի հիշողության արցունքները, արցունքները զայրույթի, որ այդպես, իգուր տեղը նա խորտակեց իր շահել կյանքը, որ կարող էր այնքան՝ երջանիկ լինել: Միծաղն ու երգը մանավանդ սրբապեղծություն էին թվում նրան իր վշտի նկատմամբ: Կոկետության մասին նա չէր էլ մտածում, անգամ առիթ չէր լինում, որ ինքն իրեն զսպի: Նա ասում և զգում էր, որ այդ ժամանակ բոլոր տղամարդիկ նրա համար բոլորովին նույնն էին, ինչ որ ծաղրածու նաստասիա հվանովնան: Ներքին սպահակը խստորեն արգելում էր նրան ամեն մի ուրախություն: Ասենք նրա մեջ շկար էլ աղջկական, անհոգ, հույսերով լի կյանքի բոլոր նախկին շահագրգությունները: Հաճախ և ամենից ցավադինորեն նա հիշում էր աշնան ամիսները, որսորդությունը, քեռուն և ձընդդրան տառները, որ անցել էին Nicolas-ի հետ՝ Օտրադնոյում: Ի՞նչ կուր նա, եթե այդ ժամանակվա գեթ մի օրը վերադառնար: Բայց դա ընդմիշտ վերջացած բան էր արդեն: Նախագացումը նրան շէր խարում այն ժամանակ, թե ազատության և ուրախության օրերն այլևս երթիք շեն վերադառնա: Բայց ապրել պետք էր:

Նրա համար հաճելի էր մտածել, որ ավելի լավը չէ, ինչպես առաջ կարծում էր, այլ ավելի վատ, շատ ավելի վատն է բոլորից, բոլորից, ովքեր ասկրում են աշխարհում: Բայց դաքի՞ն էր: Նա այդ գիտեր և հարցնում էր իրեն, «իսկ այնուհետեւ: Այնուհետեւ էլ ոչինչ շկար: Ոչ մի ուրախություն շկար էլանքում, իսկ կյանքը անցնում էր: Նատաշան, ըստ երևույթին, աշխատում էր միայն ոչ որի համար թեռ պինել և ոչ որի շխանգարել, բայց ինքն իր համար ոչինչ չէր ուզում, նրան ոչինչ պետք չէր: Նա հեռանում, առանձնանում էր բոլոր

տնեցիներից, և միայն Պետյա ելլեր հետ էր իրեն թեթև զգում: Նա սիրում էր նրա հետ մնալ ավելի երկար, քան մյուսների հետ, և երբեմն, երբ նրա հետ մեն-մենակ էր լինում, ծիծաղում էր նա գրեթե որևէ տեղ չէր գնում տնից և իրենց մոտ եկողներից նրան ուրախություն էր պատճառում միայն մի մարդ՝ Պիեռը: Չէր կարելի վարվել ավելի քնքուշ, ավելի զգույշ և գրա հետ միասին ավելի լուրջ, քան վարվում էր նրա հետ կոմս Բեզովիսովը: Նատաշան անգիտակցաբար զգում էր վարվեցողության այդ քնքությունը և այդ պատճառով մեծ բավականություն էր զգում նրա բնկերությունից: Բայց նատաշան անգամ շնորհակալ չէր նրանից՝ նրա քնքանքի համար: Պիեռի կողմից արված ոչ մի լավ բան նատաշային չի թվում ճիգով արված: Պիեռն այնքան բնական էր թվում բարի մինել բոլորի հետ, որ նա իր բարությամբ կարծես ոչ որի չի պարտավորեցնում: Երբեմն նատաշան նկատում էր Պիեռի շփոթությունն ու անհամարձակությանն իր ներկայությամբ, առանձնապես երբ Պիեռը ցանկանում էր որևէ հաճելի բան անել իր համար, կամ երբ նա վախենում էր, որ զրույցի մեջ որևէ բան նատաշային ծանր հիշողությունների առիթ շտա: Նատաշան նկատում էր այդ և զա վերագրում էր նրա բնդկանուր բարությանն ու ամաշկոտությանը, որը նատաշայի հասկացությամբ, նույնպես, ինչպես իր հետ, պետք է լիներ և բոլորի հետ: Այն անակնկալ խոսքերից հետո, թե եթե ինքը ազատ լիներ, նա ծնկաշոք կինդրեր նրա ձեռն ու սերը, խոսքեր, որ ասկեցին նատաշայի համար շատ հուզված ըրպեին, Պիեռը երբեք ոչինչ չէր խոսում նատաշայի հանգեպ ունեցած իր զգացումների մասին: և նատաշայի համար պարզ եղավ, որ այն խոսքերը, որ այն ժամանակ այնպես միմիթարեցին իրեն, ասկեցին, ինչպես ասվում են ամեն տեսակի անմիտ խոսքեր՝ լացող երիխային միխիթարելու համար: Ոչ այն պատճառով, որ Պիեռն ամուսնացած մարդ էր, այլ այն պատճառով, որ նատաշան մեծապես զգում էր իր և նրա միջև եղած այն բարյական պատճեցի ուժը, — որի բացակայությունը նա զգում էր Կուրագինի նկատմամբ, — երբեք նրա մտքով չէր անցնում, թե իր՝ Պիեռի հետ ունեցած այդ հարաբերությունից կարող է ոչ միայն սեր առաջանալ ի՞ր կամ ավելի և քիչ նրա՝ կողմից, այլ անդամ այն քնքուշ, տամարգու և կնոջ միջն՝ բանա-

տեղծական համարվող բարեկամությունը, որի մի քանի օրինակը ծանոթ էին իրեն:

Պետրոսի պասի վերջում Ազգաֆենա հվանովնա Բելովան,  
Ռոստովների Օտրագնոյի հարևանութին, ուխտ եկալ Մոսկ-  
վայի սրբերին։ Նա Նատաշային առաջարկեց ծոմ պահել, և  
Նատաշան ուրախությամբ կառչեց այդ մտքին։ Զնայած բը-  
ժիշկների արգելքին՝ առավոտները վաղ դուրս շգալ տնից,  
Նատաշան պնդեց, թե որպեսզի ծոմ պահի և պահի ոչ այնպես,  
ինչպես սովորաբար պահում են Խոստովների տանը, այսինքն  
տանը լսել երեք ժամասացություն, այլ որպեսզի ծոմ պահի  
այնպես, ինչպես պահում էր Ազգաֆենա հվանովնան, այսին-  
քըն ամբողջ շաբաթը, բաց չթողնելով ոչ երեկոյան, ոչ ճաշի  
կամ առավոտյան ժամերգությունները։

Կոմմունուն դուր եկավ Նատաշայի այդ զերմեռանդությունը. նա իր սրտի խորքում, բժշկական անհաջող բուժումից հետո հույս ուներ, թե աղոթքը գեղերից ավելի կօգնի նրան, և թեև նրկյուղով ու բժշկից թաքցնելով, նա համաձայնություն տվեց Նատաշայի ցանկությանը և նրան հանձնեց Բելովային: Ագրաֆենա Իվանովնան գիշերվա ժամը երեքին գալիս էր Նատաշային զարթնեցնելու և մեծ մասամբ նրան գտնում էր արդեն արթուն: Նատաշան վախենում էր քնով անցնել և առավոտյան ժամերգությունից ուշանալ: Հապճեալ լվացվելով և հեզարար հագնելով իր ամենավատ զգեստն ու հին մանտիլը, վաղորդյան թարմությունից դողալով, Նատաշան դուրս էր գալիս ամայի փողոցները, որ լուսավորված էին լինում այգաւուսով: Ագրաֆենա Իվանովնայի խորհրդով Նատաշան ապաշխարում էր ոչ թե իրենց ծխի եկեղեցում, այլ մի եկեղեցում, որի քահանան, բարեպաշտ Բելովայի ասելով, շատ խստաբարո և առաքինի կյանք էր վարում: Եկեղեցում միշտ քիչ ժողովուրդ էր լինում, Նատաշան Բելովայի հետ կանգնում էր սովորական տեղը՝ աստվածամոր պատկերի առաջ, որ ամրացված էր ծախ դասի ետևը, և Նատաշային համակում էր իր համար նոր հնագանդության մի զգացում հանդեալ վեհագույնի և անհասանելիի, երբ նա առավոտյան այդ անսովոր ժամին, նայելով աստվածամոր սև դեմքին, որ լուսավորված էր իր առջեր վառվող մոմերով ու լուսամուտից ընկնող վաղորդյան լույսով, լուսում էր ժամերգության ծայները, աշխա-

տելով հետեւ նրանց ու հասկանալ, երբ նա հասկանում էր այդ ձայները, նրա անձնական զգացումը իր բոլոր երանգներով միախառնվում էր նրա աղոթքին. երբ նա չէր հասկանում, նրա համար ավելի հաճելի էր լինում մտածել, որ ամեն ինչ իմանալու ցանկությունը գոռողություն է, որ ամեն ինչ հասկանալ չլի կարելի, որ պետք է միայն հավատալ և նվիրվել աշտծուն, որը այդ բոպեներին — նա զգում էր — կառավարում է իր հոգին: Նա խաշակնքում էր երեսը, խոնարհումներ անում, և երբ չէր հասկանում, ապա, սարսափելով իր զարբելիությունից խնդրում էր աստծուն՝ ներել իրեն ամենի, ամենի համար և ողորմալ: Այն աղոթքները, որոնց նա անձնատուր էր լինում ամենից շատ, զգումի աղոթքներ էին: Տուն վերադառնալով առավոտյան վաղ ժամին, երբ հանդիպում էին միայն աշխատանքի գնացող քարտաշները, փողոցներն ավլող դռնապանները, և երբ տներում բոլորը դեռ քնած էին, նատաշաշան ապրում էր իրեն համար մի նոր զգացում, որ նրան ասում էր, թե հնարավոր է ուղղվել արատներից և հնարավոր է նոր պոյժառ կյանք ու երջանկություն:

Ամբողջ շարաթվա ընթացքում, երբ նա վարում էր այդ կյանքը, այդ զգացումն աճում էր օրեցօր: Եվ ճաշակվելու կամ աստծուն հաղորդակից լինելու երջանկությունը, ինչպես ուրախությամբ խաղալով այդ բառերի հետ ասում էր Ազրաֆենա Իլանովինան<sup>1</sup>, նրան ներկայացնում էր այնքան մեծ, որ նատաշաւին թվում էր, թե ինքը չի ապրի մինչև այդ երանելի հարությունը:

Բայց երշանիկ օրն եկավ, և երբ Նատաշան իրեն հիշելի  
այդ կիրակի օրը ճերմակ շղարշ զգեստով վերադարձավ Հա-  
զորությունից, նա առաջին անգամ շատ ամիսներ հետո իրեն  
դդաց Հանգիստ ու էլ չէր ձանձրանում իրեն սպասող կյանքից:

Այդ օրը եկած քժիշկը քննեց Նատաշային և պատվիրեց շարունակել ընդունել այն վերջին դեղափոշիները, որ ինքը գրել էր երկու շաբաթ առաջ:

— Անպայման շարունակել՝ առավոտյան և երեկոյան, —  
ասավ նա, ըստ երևույթին, ինքը բարեխաղճութիւն գո՞յ լինելով  
իր հաջողությունից; — Միայն, խնդրում եմ, ճշտապահորեն զ

<sup>1</sup> *Лопицкъ вѣнчалъ «приобщиться и сообщиться» римскому Лигу, прпнгдѣлъ и пакѣлѣдѣлъ £. ѿгъ римскими папами (Бѣшаровъ);*

— Հանգիստ եղեք, կոմսուհի, — ասալ բժիշկը կատակով, ձեռի փափկամով ճարպկորեն քոնելով ոսկին, — շուտով նորից կերպի ու կթուշուտաւ Վերջին գեղը նրա համար շատ և շատ օգտակար է: Նա շատ թարմացել է:

Կոմսուհին նայեց եղունգներին ու մի թեթև թքեց, ուրաք դեմքով վերադառնալով հյուրասրահ:

### XVIII

Հուլիսի սկզբին Մոսկվայում տարածվում էին հետաքետե ավելի ու ավելի առաջնապալի լուրեր պատերազմի ընթացքի մասին, խոսում էին, թե թագավորը կոչ է ուղղել ժողովրդին, և թե թագավորն ինքը բանակից եկել է Մոսկվա: Եվ որովհետև մինչև Հուլիսի 11-ը հրովարտակն ու կոչը չէին ստացվել, առա թե նրանց մասին և թե Ռուսաստանի զրության մասին շրջում էին շափաղանցված լուրեր: Ասում էին, թե թագավորը մեկնում է այն պատճառով, որ բանակը վտանգի մեջ է, որ Մոլինսկը հանձնված է, որ Նապոլեոնը մի միլիոն զորք ունի և որ միայն հրաշքը կարող է փրկել Ռուսաստանին:

Հուլիսի 11-ին հրովարտակն ստացվեց, բայց դեռ շտագագրէած. և Պիեռը, Ռուստովների մոտ լինելով, խոստացավ մյուս օրը, կիրակի, զալ ճաշի և բերել հրովարտակն ու կոչը, որ նա ձեռք կբերի կոմս Ռաստուկշինից:

Սյոյ կիրակի Ռուստովներն ըստ սովորության գնացին Ռազումովսկիների տնային եկեղեցին՝ պատարագի: Հուլիսյան 2-րդ օր էլու Արքեն ժամը 10-ին, երբ Ռուստովները եկեղեցու առջև գուլու կը գալիս կառեթից, ուաք օգում, ցրիչների կանչերի մեջ, քաղմության վառ ու պայծառ ամառային զգեստներում, բուլքարների ծառերի փոշու տերևների մեջ, երաժշտության հնչունների մեջ և պահանջակի սովորության գնացող գումարտակի սպիտակ պանտալոններում, սալահատակի դղբզոցի և տաք արևի պայծառ փայլի մեջ կար ամառային այն խոնջությունը, գոհությունն ու գժգոհությունը ներկայից, որ առանձնապես սուր գգացվում էր քաղաքում՝ պայծառ, տաք օրերին: Խազումովսկիների եկեղեցում հափաքված էր Մոսկվայի ամբողջ բարձր դասը, Ռուստովների բոլոր ծանոթները (այդ տարի, կարծիս ինչ-որ բանի սպասելով), շատ հարուստ:

ընտանիքներ, որ սովորաբար ցրվում էին գյուղերը, մնացել էին բաղաքում): Գնալով լիվրեյ հազած լակեցի ետեից (որ բազմության մեջ հանապարհ էր բաց անում), մոր կողքից, ծատաշան լսեց մի երիտասարդի ծայն, որ շափազանց բարձր շշունցով խոսում էր նրա մասին.

— Սա միստովան է, հենց այն...

— Ինչքան նիշարել է, բայց և այնպես լույն է:

Նա լսեց կամ նրան թվաց, թե հիշվեցին Կուրազինի և Բալկոնսկու անունները: Ասենք, նրան միշտ թվում էր այդ: Նատաշային միշտ թվում էր, թե բոլորը, իրեն նայելով, մտածում են միայն այն մասին, թե ինչ է պատահել նրան: Տանջվելով ու մարող սրտով, ինչպես միշտ բազմության մեջ, Նատաշան իր մանիշակագույն մետաքսե սկ ժանյակավոր զգեստով անցավ այնպես, ինչպես կարողանում են քայլել կանայք: այնքան ավելի հանգիստ ու վեհապանծ, որքան ավելի ցավ ու ամոթանք կար նրա օրտում: Նա գիտեր և չէր սիալվում, որ ինքը լավիկն է. բայց զա այժմ նրան չէր ուրախացնում, ինչպես առաջ: Ընդհակառակը, զա նրան ամեն բանից ավելի էր տանջում վերջերս, և մանավանդ այդ պայծառ, ամառային տաք օրը քաղաքում: «Էլի մի կիրակի, էլի մի շաբաթ, — ասում էր նա ինքն իրեն, հիշելով, թե ինչպես եղել է այստեղ անցյալ կիրակի: — և էլի նույն կյանքն առանց կյանքի, և էլի նույն պայմանները, որոնց մեջ ապրելն այնքան հեշտ էր առաջ: Լավն եմ, ջաճել, և գիտեմ, որ հիմա բարի եմ. առաջ ես վատ էի, իսկ հիմա բարի եմ, ես գիտեմ, — մտածում էր նա, — իսկ այնպես, հզուր, որնէ մեկի համար անօգուտ, անցնում են լաւակույն, լավագույն տարիններս»: Նա կանգնեց մոր կողքին և իրար աշքով արին նա ու մոտիկ կանգնած ծանոթները: Նատաշան ըստ սովորության նայեց կանանց տուալետը, գատաւայրտեց մոտիկ կանգնած կնոջ տեսւեն՝ և փոքրիկ տարածության մեջ ձեռքով երեսը խաչակինքելու անվայել ձեր, նորից սրտնեղած մտաժեց, թե իր մասին խոսում են, քանի որ ինքն էլ է խոսում, և հանկարծ, ժամերգության ձայնը լսելով, ստրսափեց իր զալքելիությունից, սարսափեց նրա համար, թե ինքը նորից կորցրել էր նախկին անարատությունը:

Բարեպաշտ, անմեղ ծերունին ժամ էր ասում այն հեզ հանդիսավորությամբ, որ այնպես վեցորեն ու հանգստացուցիչ կերպով է ազդում աղոթողների հոգու վրա: Արքայադուները ծածկվեցին, վարագույրը քաշվեց դանդաղորեն ու խորհրդավոր, կամացուկ մի ձայն ինչ-որ մի բան արտասանեց այնտեղուր, կամացուկ մի ձայն ինչ-որ մի բան արտասանեց այնտեղուր, կամացուկ մի ձայն ինչ-որ մի բան արտասանեց այնտեղուր:

«Սովորեցրու ինձ, թե ինչ անեմ ես, ինչպիսի՞ կյանք վարեմ, ինչպես ուղղվեմ ընդմիշտ, ընդմիշտ...», — մտածում էր նա:

Սարկավագը դուրս եկավ ամբիոն, մեծ մատը հեռու պահած, ուղղեց շուրջառի տակ մտած երկար մազերը և, խաչը կրծքին դնելով, սկսեց բարձր ու հանդիսավոր կարդալ աղոթքի խոսքերը.

— «Եվ ևս խաղաղությամբ զտեր աղաղեցուք»:

«Խաղաղությամբ, բոլորս միասին, առանց դասի խտրության, առանց թշնամության, այլ եղբայրական սիրով միացած — աղոթնք», մտածում էր Նատաշան:

— «Վասն ի վերուստ խաղաղություն և փրկություն անձանց մերոց»:

«Վասն խաղաղության հրեշտակաց և հոգոց ամենայն անմարմին զվարինոց, որ բնակյալ են ի բարձունս», աղոթում էր Նատաշան:

Երբ աղոթում էին զորքի համար, Նատաշան հիշեց եղբօրն ու Դինիսովին: Երբ աղոթում էին ծովով ու ցամաքով ճանապարհորդողների համար, նա հիշեց իշխան Անդրեյին և աղոթեց նրա համար, և աղոթեց այն բանի համար, որ աստված ների իրեն այն շարիքը, որ ինքը հասցրեց իշխան Անդրեյին: Երբ աղոթում էին մեզ սիրողների համար, Նատաշան աղոթեց իր տնեցիների՝ հոր, մոր, Սոնյայի համար, առաջին անգամ այժմ հասկանալով իր մեղավորությունը նրանց հանդեպ և զգալով դեպի նրանց ունեցած իր սիրո բովանդակ ուժը: Երբ աղոթում էին մեզ ատողների մասին, Նատաշան իր համար աղոթում էին մեզ ատողների մասին, Նատաշան իր համար թշնամիներ ու ատողներ հնարեց ա՛յն նպատակով, որ աղոթի նրանց համար: Նա թշնամիների շարքն էր դասում պարտաւերերին և բոլոր նրանց, ովքեր գործ ունեին իր հոր հետ, և

— 96 —

ամեն անգամ թշնամիների ու ատողների մասին մտածելիս, նա հիշում էր Անատոլիին, որ այնքան շարիք պատճառեց իրեն. և թեև նա ատող էր, Նատաշան ուրախությամբ աղոթեց նրա համար, որպես թշնամու համար: Միայն աղոթելիս էր նա իր մեջ ուժ զգում պայծառորեն ու հանգիստ հիշելու թե իշխան Անդրեյի, թե Անատոլի մասին, որպես մարդկանց, որոնց նկատմամբ նրա զգացումները չբանում էին աստծու հանդեպ ունեցած երկյուղի և ակնածության համեմատությամբ: Երբ աղոթում էին թագավորական գերդաստանի համար և սինողի համար, Նատաշան առանձին խոնարհումներով խաչակնքում էր երեսը, ասելով թե, եթե ինքը չի ըմբռնում, չի կարող կառկածել և այնուամենայնիվ սիրում է կառավարիչ սինողը և աղոթում է նրա համար:

Մաղթանքը վերջացնելով՝ սարկավագը խաչակնքեց ուրարի կուրծքը և արտասանեց.

— «Ձանձինս մեր և զկյանս մեր Քրիստոսի աստուծոն հանձն արասցուք»:

«Ձանձինս մեր աստծոն հանձնն արասցուք», կրկնեց իր հոգում Նատաշան: «Աստված իմ, հանձնվում եմ քո կամքին», — մտածում էր նա: «Ուշնչ շեմ ուզում, շեմ ցանկանում, սովորեցրու ի՞նչ անեմ, ինչպես գործադրեմ կամքս: Ա՛ռ ինձ, ա՛ռ ինձ», — խանդաղատագին անհամբերությամբ ասում էր Նատաշան իր հոգում, առանց երեսը խաչակնքելու, իր բարակ թեւրը բաց թողած և, կարծես սպասելով, թե ա՞չ մի անտեսանելի ուժ կվերցնի կտանի իրեն և կազմախ իր ափսոսանքներից, ցանկություններից, հանդիմանություններից, հույսերից ու արատներից:

Կոմսուհին ժամերգության ժամանակ մի բանի անգամ ետնայից իր աղջկա խանդաղատած, փայլուն աշքերով զեմքին և աղոթեց աստծուն, որ նա օգնի իր Նատաշային:

Անսպասելի, և կարգից գուրս ժամերգության կիսին, որ Նատաշան լավ գիտեր, սարկավագը գուրս բերեց մի փոքրիկ աթոռ, հենց այն աթոռակը, որի վրա ծնկաշոք աղոթքներ էին կարդացվում երրորդության օրը՝ Հոգեգալստին, և դրեց այն Արաքայազուան առաջ: Քահանան դուրս եկավ իր մանիշակագույն թագշալակը փեղույրով, մազերն ուղղեց և զժվարությամբ ծունկի եկավ: Բոլորն արին նույնը և տարակուսած նայեցին:

— 97 —

իրար: Դա մի աղոթք էր, որ հենց նոր ստացվել էր սինոդից, աղոթք՝ Ռուսաստանը թշնամու Հարձակումից փրկելու մասին:

«Տեր աստված զորությանց, աստված փրկության մերո», ոկտեմբեր քահանան այն պարզ, ոչ ճոռոմ ու հեզ ձայնով, որով կարդում են միայն սլավոն հոգևորականները, և որն այնպիս անցնցի իսրեն տպավորվում է ոռուի հոգու մեջ:

«Տեր աստված զորությանց, աստված փրկության մերու Հայաց արդ բազում ողորմությամբ և գթությամբ քով ի ժողովուրդ քո հեզ և մարտիրոսությամբ քով լուր և խնայե և ողորմյա մեզ: Ահա թշնամի, որ խոռվի զերկիր քո և կամի ածել ավեր ի վերա ամենայն տիեզերաց, հարուցյալ է ի վերա մեր. ահավասիկ արք անօրենք ժողովյալ են, զի կործանեսցեն զժառանքություն քո, ավերեսցեն զպատվականն քո զերուսաղեմ, զսիրեցյալն քո Ռուսիա, պղծեսցեն զտաճարս քո, խորտակեսցեն զսեղանս և անարդեսցեն զսրբությունս մեր: Մինչև ե՞րբ մեղավորք, տե՛ր, մինչև երբ մեղավորք պարծեսցեն: Մինչև ե՞րբ հանդուրժեսցեն իշխանության անօրինաց:

Տե՛ր աստված մեր: Լուր աղաշանաց մերոց, որ կարդամք առ քեզ: Ամրացո՛ զորությամբ քով զամենաբարեպաշտ, ինքնակալ մեծ թագավորն մեր և զիայրն Ալեքսանդր Պավլովիշ. Հիշյա զարդարություն նորա և զհեզություն, տուր նմա ըստ բարության նորա, և պահպանյա նովավ զմեզ, զսիրեցյալն քո զիսրայել: Օրհնյա զամենայն խորհուրդս նորա, զամենայն զործս ձեռաց նորա. Հաստատյա ամենազոր աջով քով զթագավորություն նորա. և շնորհյա նմա զհաղթություն ի վերա թշնամյաց, որպես Սովսեսի ի վերա Ամաղեկա, Գեղեռնի ի վերա Մադիամու և Դավթի՝ ի վերա Գողիաթու: Պահպանյա զպորս նորա, Հաստատյա աղեղն պղնձի զբազուկս հանուն քո Հարուցելոց և գոտեանդյա զնոսա զորությամբ ի մարտ պատերազմի: Ե՞ս զգեն և զասպար քո և արի օգնել մեզ. ամաշեսցեն և համոթ լիցին, ույք խորհեին մեզ շար. եղիցին նոքա առաջին հավատարիմ զորաց քոց որպես փոշի առաջին հողմս և հրեշտակ քո հալածեսցեն և նեղեսցեն զնոսա. Հասցե ի վերա նացա որոգայթ, զոր ոչ գիտացին և որս, զոր թաքուցին, առցե զոտս նոցա. և անկցին առաջի ոտից ծառայեց քոց և եղիցին կոխան զորաց մերոց, տե՛ր: Ոչ պահասեսցե առ քեզ փրկություն ի

մեծամեծս և ի փոքրունս, զի դու ես աստված և ոչ կարե մարդկալ հակառակ քո:

Աստված հարցն մերոց, հիշյա զառատ ողորմություն քո և զշնորհս, զի ի հավիտենից են. մի՛ մերժիր զմեզ երեսաց քոց և մի՛ արհամարհիր զմեզ վասն անարժանության մերո, այլ ըստ մեծի ողորմության քում և ըստ բազում գթության քում քավյա զանօրինությունս և զմեզս մեր: Սիրտ սսւրք հաստատյա ի մեզ, տե՛ր, և հոգի ուղղի նորոգյա ի փորի մերում. զորացո՛ զամենեսյան զմեզ հավատովի քեզ, հաստատյա հուսով, հիմնեցո սիրով ճշմարտիվ առ միմյանս, զինավորյա միաբանությամբ ի պաշտպանություն հաղթության գործա ճշմարտի, զոր ետուր մեզ և հարցն մերոց. մի՛ ամբարձի գաւազան մեղավորաց ի վիճակս արդարոց:

Տեր աստված մեր, ի քեզ հավատամք և ի քեզ հուսամք. մի՛ մերժիր զմեզ ողորմությունս քումն և զնշան քո ուղղյա ի բարություն. զի տեսցեն, որ ատեն զմեզ և զուղղափառ հավատս մեր, և համոթ լիցին և անկցին, և տեսցե ամենայն երկիր, զի տեր անուն քո և մենք ժողովուրդ քո եմք: Արդ, ցուց մեզ, տե՛ր, զողորմությունս քո և զփրկությունս քո տուր մեզ. ուրախ արա զսիրտս ծառայից քոց ողորմությամբ քով. մատնյա ի պարտություն զթշնամիս մեր և խորտակյա զնոսա վաղվաղակի ընդ ոտյուք հավատարիմ ծառայից քոց: Զի դու ես, տե՛ր, ապավեն, օգնական և հաղթություն հուսացելույս ի քեզ, և քեզ փառս վերառաքեմք հոր և որդո և հոգույն սրբու այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամենս:

Հոգեկան այն անկեղծ, զգայուն վիճակում, որի մեջ գըտնիցում էր նատաշան, այդ աղոթքը մեծապես աղդեց նրա վրա: Նա լուսում էր յուրաքանչյուր խոռքն այն մասին, որ Սովսեսը հաղթել էր Ամաղեկին, Գեղեռնը՝ Մադիամին և Դավթիթ՝ Դողիաթին, և երուսաղեմի ավերման մասին, և աղերում էր աստծուն այն քնքությամբ ու խանդաղատանքով, որոնցով համակած էր նրա սիրտը. բայց լավ չէր հասկանում, թե ի՞նչ էր խնդրում աստծուց այդ աղոթքով: Նա ամբողջ հոգով մասնակցում էր այն աղերսին, որն ուղղված էր արդարության ոգուն, որով խնդրում էին հավատով, հուսով ամրապնդել միտքը և ոգեշնչել այն սիրով: Բայց նա չէր կարող աղոթքել իր թշնամիներին ոտնակոխ անելու մասին, երբ նա մի քանի բողե

դրանից առաջ ցանկանում էր, որ դրանց թիվը շատ լինի, որպեսզի աղոթի նրանց համար: Բայց նա էլ չէր կարող շհավատալ ծնրադիր աղոթքի ճշմարտությանը: Նա իր հոգու խորքում ակնածագին ու երկյուղած սարսափի էր զգում այն պատրժի հանդեպ, որ առաքված էր մարդկանց իրենց մեղքերի և մանավանդ իր՝ Նատաշայի մեղքերի համար, և նա ինդրում էր աստծուն, որ նա ների նրանց բոլորին և իրեն՝ Նատաշային և նրանց բոլորին ու իրեն Նատաշային հանդիսում ու երջանկություն տա կյանքում: Եվ նրան թվում էր, թե աստված լսում էր իր աղոթքը:

## XIX

Այն օրից, երբ Պիեռը Խոստովների տնից մեկնելով և նատաշայի շնորհակալ նայվածքը հիշելով նայեց երկնքում երեացող գիսավորին և զգաց, որ իր համար բացվել է ինչ-որ մի նոր բան, — նրան մշտնչենապես տանջող՝ երկրալին բովանդակ կյանքի ունայնության և անմտության հարցն այլևս դադարեց ծագել նրա առաջ: Այդ սարսափելի հարցը՝ ինչո՞ւ, ինչի՞ համար, — որը մինչ այդ ծագում էր նրա առաջ նրա ամեն մի զբաղմունքի միջոցին, այժմ փոխարինվեց ոչ թե մի այլ հարցով կամ նախկին հարցի պատասխանով, այլ Նատաշային երեակայելով: Արդյո՞ք նա լսել էր, թե՝ ինքն էր շնչին խոսակցություն ունեցել, արդյո՞ք նա կարդացել էր, թե՝ իմացել մարդկային ստորոտիթյան և անմտության մասին, բայց նա առաջվա պես չէր սարսափում, հարց չէր տալիս իրեն, թէ ինչու են մարդիկ շարշարվում, երբ ամեն ինչ կարճատեն է և անհայտ, և երան հիշում էր այն դրությամբ, ինչպես տեսել էր վերջին անգամ, և Պիեռի բոլոր կասկածները չքանում էին ոչ այն պատճառով, որ Նատաշան պատասխան էր տալիս այն հարցերին, որոնք ծագում էին Պիեռի առաջ, այլ այն պատճառով, որ Նատաշայի մասին հղած ամեն մի պատկերացում նրան վայրկենապես տեղափոխում էր հոգու գործունեության մի այլ, պայծառ աշխարհ, ուր չէր կարող լինել արդար կամ մեղավոր, գեղեցկության ու սիրո աշխարհը, որի համար արժեր ապրել: Կենսական որպիսի գարշելիություն էլ որ ներկայանում էր նրան, նա ասում էր իրեն.

— 100 —

«Է՛ս, թեկուզ և Ն. N.-ը կողոպտել է պետությանը և թագավորին, իսկ պետությունը և թագավորը նրան սատիվ ու հարգանք են տալիս. իսկ նատաշան իրեկ ժպտաց ինձ և խնդրեց իր մոտ գնալ, և ես սիրում եմ նրան, և երբեք ոչ ոք չի իմանա այդ»: Եվ Պիեռի հոգում անդորր ու պայծառություն էր տիրում:

Պիեռն առաջվա պես լինում էր հասարակության մեջ, առաջվա պես շատ խմում էր և նույն պարապ ու գրված կյանքն էր վարում, որովհետեւ բացի այն ժամերից, որ նա անց էր կացնում Խոստովների մոտ, պետք էր անց կացնել և մնացած ժամանակը. և այն սովորություններն ու ծանոթությունները, որ նա ձեռք էր բերել Սոսկվայում, անհաղթա՞րելիութեն ձգում էին նրան գեպի այն կյանքը, որը հափշտակել էր նրան: Բայց վերջին ժամանակները, երբ պատերազմի դաշտից հետզհետեւ ավելի ու ավելի հուզումնալից լուրեր էին ստացվում և երբ Նատաշայի առողջությունն սկսեց լավանալ և Նատաշան այլևս նրա մեջ հոգատար կարեկցության նախկին զգացումը չէր առաջացնում, Պիեռին սկսեց իր համար անհասելիանալի հետզհետեւ ավելի ու ավելի անհանգստություն տիրել: Նա զգում էր, որ այն դրությունը, որի մեջ ինքը գտնվում էր, չէր կարող երկար շարունակվել, որ ինչ-որ աղետ է սպասվում, որը պետք է փոխի նրա ողջ կյանքը, և անհամբերությամբ ամեն բանի մեջ այդ մոտալուս աղետի նշաններն էր որոնում: Մասն եղբայրներից մեկը Պիեռի համար հայտաբերել էր հետեյալ, Նապուենին վերաբերող մարգարեռությունը՝ մակաբերված Հովհաննու Հայտնությունից:

Հայտնության տասներեքերորդ գլխում, տասնութերորդ տան մեջ ասված է. «Աստ է իմաստություն. որ ունի միտս՝ համարեցի զթիվ գաղանին, թիվ եղալան մարդո, և թիվ անվան նորա է վեց հարյուր վաթսուն և վեց»:

Նույն վկի հինգերորդ տան մեջ. «Եվ տվավ նմա բերան խոսել գմեծամեծս և զհայհոյություն. և տվավ նմա իշխանություն զամիսս քառասուն և երկու»:

Ֆրանսական տառերը, հրեական թվագրության նման, որի համաձայն առաջին տասը տառերով նշվում են միավորները, իսկ մնացածներով տասնավորները, ունեն հետեյալ նշանակությունը.

a b c d e f g h i k l m n o p q r s t u v w x y z  
1 2 3 4 5 6 7 8 9 10 20 30 40 50 60 70 80 90 100 110 120 130 140 150 160

Այդ այբուբենի համաձայն՝ թվանշաններով գրելով Լ'Էմ-  
պերեց Napoléon<sup>1</sup> բառերը, դուրս է գալիս, որ այդ թվերի  
գումարը հավասար է 666-ի և որ ուստի նապոլեոնն այն գա-  
զանն է, որի մասին գուշակված է Հայտնության մեջ: Բացի  
դրանից, նույն այդ այբուբենի համաձայն գրելով զարգա-  
ցած են այսինքն մի սահման, որ դրված էր գազանին՝  
խոսել զմեծամեծու և զհայհոյությունս, զարգած են ներկա-  
յացնող այդ թվերի գումարը դարձյալ հավասար է 666-ի, որից  
հետեւում է, որ նապոլեոնի իշխանության վերջը հասել է 1812  
թվին, երբ լրացել է Փրանսական կայսեր 42 տարին: Այդ գու-  
շակությունը շատ զարմացրեց Պիեռին, և նա հաճախ հարց էր  
տալիս իրեն այն մասին, թե իսկապես ի՞նչն է վերջ դնելու  
գազանի, այսինքն նապոլեոնի իշխանությանը, և բառերը  
նույն թվերով ու հաշվարկումներով գրելու հիման վրա աշ-  
խատում էր իրեն զբաղեցնող հարցին պատասխան գտնելու:  
Ի պատասխան այդ հարցի Պիեռը գրեց հետեւյալը. L'Empe-  
reure Alexandre? La nation russe?<sup>2</sup>: Թվերի գումարն ստաց-  
վում էր 666-ից ավելի կամ պակաս: Մի անգամ, այդ հաշվար-  
կումներով զբաղվելիս՝ նա գրեց իր անունը — Comte Pierre  
Besouhoff. Թվերի գումարը դուրս չեկավ: Նա ուղղագրությու-  
նը փոխեց և Տ-ի փոխարեն շ գրեց, հետո «Ճ» ավելացրեց,  
հետո «Ը» արձյալ ցանկալի արդյունք չստաց-  
վեց: Այն ժամանակ նրա գլխում ծագեց այն միտքը, որ եթե  
տվյալ հարցի պատասխանը թաքնված էր իր անվան մեջ,  
ապա պատասխանի մեջ անպայման պետք է հիշվեր նրա ազ-  
գությունը: Նա գրեց լե բայլուք Բեսուհօֆ<sup>3</sup>, և թվերը հաշվելուց  
հետո ստացավ 671: Միայն 5-ն էր ավելորդ. 5-ը «Յ»-է նշանա-  
կում, հենց այն «Յ»-ն, որը լ'Էմպերեց բարից առաջ գրված  
article-ից դուրս էր գցված: Ճիշտ նույն ձևով, թեև սիսակ կեր-  
պով, «Յ»-ն դուրս գցելով, Պիեռն ստացավ պահանջվող պա-  
տասխանը՝ լ'բայլուք Բեսուհօֆ, որ հավասար էր 666-ի: Այդ

գլուտը նրան հուզեց։ Բե ինչպես, ինչ կապերով էր նրա անունը կապված այն մեծ դեպքի հետ, որը գուշակված էր Հայոցնության մեջ, նա շգիտեր։ Բայց Պիեռը ոչ մի բոպե չէր կամկածում, որ այդպիսի կապ կար։ Նրա սերը դեպի Ռուսության, Նեոր, Նապոլեոնի արշավանքը, գիսավորը, 666-ը, լ'Empereur Napoléon-ը և լ'russe Besouhof-ը, — այդ բոլորը միասին պետք է հասունանար, պայմեր և նրան գուրս քերեր մուկովյան սովորությունների այն կախարդական չնշին աշխարհից, ուր նա իրեն գերպած էր զգում, և նրան առաջնորդեր դեպի մեծ՝ ըաշագործություն ու մեծ երշանկություն։

Այս էկրակի նախօրերին, երբ աղոթք էին ասում, Պիեռն Ռոստովներին խոստացել էր բներել նրանց համար կոմս Ռաստոպչնից, — որի հետ նա լավ ծանոթ էր, — և այն կոչը, որն ուղղված էր Ռուսաստանին, և վերջին լուրերը բանակից։ Առաջոտյան, երբ Պիեռը ճանապարհին կանգ առնելով, կոմս Ռաստոպչնին այցելության գնաց, նա այնտեղ գտավ բանակից հենց նոր եկած սուրհանդակին։ Սուրհանդակը Պիեռին ծանոթ՝ Մոսկվայի պարահանդեսային պարողներից մեկն էր։

— ի սեր աստծո, չե՞ք կարող արդյոք իմ բեռը թեթևացնել, — ասավ սուրհանդակը. — իմ պայուսակը լի է՝ ծնողներին ուղղված նամակներով:

Այդ նամակների մեջ էր նիկոլայ Ռոստովի նամակը՝ ուղղված իր հորը։ Պիեռը վերցրեց այդ նամակը։ Բացի դրանից, կոմս Ռաստոպչինը Պիեռին տվեց թագավորի կոչը՝ ուղղված Մոսկվային, մի կոչ, որը հենց նոր էր տպվել, այնուևետև բանակին վերաբերող վերջին հրամանները և իր վերջին աֆիշը։ Աշխատ անցկացնելով բանակին վերաբերող հրամանները, Պիեռը նրանցից մեկի մեջ, վիրավորների, սպանվածների ու պարզեվատրվածների վերաբերյալ լուրերում գտավ Նիկոլայ Ռոստովի անունը, որը Օստրովնայի կոփներում իր ցույց տված քաջության համար պարզեցարկվել էր 4-րդ աստիճանի Գեորգիի շրանշանով։ Նույն հրամանից Պիեռն իմացավ իշխան Անդրեյ Բակոնսկու՝ նգերյան գնդի հրամանատար նշանակվելու մասին։ Թեև նա չէր էլ ցանկանում Ռոստովներին հիշեցնել Բալկոնսկու մասին, բայց չկարողացավ զսպել՝ որդու պարզեա-

1 Նայովեսն Կայսր.

## 2 Քառասուներկու:

<sup>3</sup> Ալեքսանդր կայսրը. ուստի ժողովով կրզի:

4 Թաւա թեզուվասովը

տրման լուրով ծնողներին ուրախացնելու իր ցանկությունը և, իր մոտ թողնելով կոչք, աֆիշը և մյուս հրամանները, — այդ բոլորը ճամանակ անձամբ տանելու նպատակով, — տրպագրված հրամանը և մի նամակ ուղարկեց Ռոստովներին:

Կոմս Ռաստոպչինի հետ ունեցած խոսակցությունը, այդ խոսակցության մտահոգ ու փություն տոնը, սուրհանդակի հետ ունեցած հանդիպումը, երբ նա պատմեց այն մասին, որ բանակում գործերը վատ են գնում, Մոսկվայում հայտնաբերված լրտեսների վերաբերյալ լուրերը, ինչպես նաև Մոսկվայում շրջող այն գրությունը, որտեղ ասված է, թե Նապոլեոնը մինչև աշուն խոստանում է լինել ոռուսական երկու մայրաքաղաքներում էլ, և այն խոսակցությունը, թե թագավորը վաղն սպասվում է, — այդ բոլորը նոր թափով Պիեռի մեջ հուզմունքի ու սպասումի այն զգացմունքն էր առաջացնում, որը նրանից շեր հեռանում գիսաստղի երեալու օրից և մանավանդ պատերազմն սկսելու ժամանակից:

Պիեռ վաղուց մտադիր էր զինվորական ծառայության մըտնել, և նա այդ մտադրությունը կիրագործեր, եթե նրան շխանգարեր, նախ, իր պատկանելիությունը մասոնական ընկերությանը, որի հետ նա երդումով էր կապված և որը մշտնշենական խաղաղություն ու պատերազմի ոչնչացում էր քարոզում, և երկրորդ այն, որ նա, նայելով բազմաթիվ մոսկվացիներին, որոնք մունդիր էին հագել և հայրենասիրություն էին քարոզում, ամաչում էր այդպիսի քայլ անել: Իսկ այն գլխավոր պատճառը, որը խանգարում էր նրան իրագործել իր՝ զինվորական ծառայության մտնելու մտադրությունը, այն անորոշ պատկերացումները, թե ինքը լ'րսո Բեսուհօֆ է, որը 666 գաղանալին թվի նշանակություն ունի, թե իր մասնակցությունը զմեծամեծս և զհայշոյություն խոսող գաղանի իշխանությանը վերջ դնելու մեծ գործին նախահավիտենապես որոշված է, և որ ուստի նա ոչինչ շպետք է ձեռնարկի և սպասի այն բանին, ինչ կատարվելու է:

## XX

Ռոստովների տանը, ինչպես և միշտ կիրակի օրերը, ճաշում էր նրանց մոտ ծանոթներից մեկնումներ:

— 104 —

Պիեռը շուտ եկավ, որպեսզի նրանք մենակ լինեն:

Պիեռն այս տարի այնպես էր զիրացել, որ նա հրեշ կերևար, և թե լիներ այնպես բարձրահասակ, անդամներով խոշոր և լիներ այնպես ուժեղ, որ ինչպես երեսում էր, հեշտությամբ էր կրում իր գիրությունը:

Նա փնչացնելով և ինքն իրեն ինչ-որ քրթմնջալով, սանդուղքը բարձրացավ, Կառապանն այլևս չհարցրեց նրան սպասել արդյոք: Նա զիտեր, որ երբ կոմսը Ռոստովների մոտ է, ապա մնալու է մինչև 12-ը: Ռոստովների լակեյներն ուրախուրախ նետվեցին նրա թիկնոցը վերցնելու և նրա ձեռնափայտն ու գլխարկն ընդունելու: Պիեռը, ակումբային սովորությամբ, թե ձեռնափայտը, թե գլխարկը թողնում էր նախասենյակում:

Առաջին մարդը, որին նա տեսավ Ռոստովների տանը, Նատաշան էր: Դեռ տեսնելուց առաջ, նա, թիկնոցը նախասենյակում հանելիս, լսեց նրա ձայնը: Նա սոլֆեջի էր երգում դահլիճում: Պիեռը զիտեր, որ նա հիվանդության ժամանակից սկսած չէր երգում, այդ պատճառով իսկ նատաշայի ձայնը դարձացրեց և ուրախացրեց Պիեռին: Նա գուրը բացեց կամացուկ և տեսավ նատաշային՝ իր մանշակագույն զգեստով (որով նա ներկա էր պատարագին). Նա անցուղարձ էր անում սենյակում և երգում: Նատաշան թիկունքով զալիս էր դեպի նա, երբ Պիեռը գուրը բացեց: բայց երբ նա միանդամից ետքարձավ և տեսավ Պիեռի լեցուն զարմացած դեմքը, նա կորմըրեց ու արագորեն մտեցավ Պիեռին:

— Ես ուզում եմ մի փորձ անել նորից երգելու, — ասավ նա: — Այնուամենայնիվ մի գրազմունք է, — ավելացրեց նա, կարծես ներողություն խնդրելով:

— Եվ հիանալի:

— Որքան ուրախ եմ, որ գուրք եկաք: Ես այսօր այնքան երջանիկ եմ, — ասավ նա այն նախկին աշխույժով, որ Պիեռը վաղուց չէր տեսել նրանում: — Զիտեր, Nicolas-ը Գեորգիի խաչ է տացել: Ես այնպես հպարտ եմ նրա համար:

— Ինչպես չէ, ես հրամանն ուղարկեցի: — Է ես ձեզ շեմ ուզում խանգարել, — ավելացրեց Պիեռը և ուզեց անցնել հյուրասրահ:

Նատաշան կանգնեցրեց նրան:

— 105 —

— Կոմս, այս վա՞տ է, որ ես երգում եմ, — ասավ նա, կարծելով, բայց, աշքերն առանց խոնարհելու, հարցական Պիեռին նայելով:

— Ոչ... ինչո՞ւ: Ընդհակառակը ... Բայց ինչո՞ւ եք ինձ հարցում:

— Ինքս էլ շգիտեմ, — արագ պատասխանեց Նատաշան, — բայց ես ոչինչ չէի ցանկանա անել, որ ձեզ դուր չէր զա: Ես ձեզ ամեն բանում հավատում եմ: Դիտեք, որքան դուք կարևոր եք ինձ համար, որքան շատ բան եք արել ինձ համար... — Նատաշան խոսում էր արագ ու չնկատեց, թե ինչպես Պիեռը կարմրեց այդ խոսքերից: — Ես նույն այդ հրամանագրում տեսա, որ նա, Բալկոնսկին (նա այս խոսքն ասավ արագ շշունչով), նա Ռուսաստանումն է և նորից ծառայում է: Ի՞նչ եք կարծում, — ասավ նա արագ-արագ, ըստ երեւոյթին շտապելով խոսել, որովհետև վախենում էր ուժերը դավաճանեն իրեն, — նա երբեմց կների<sup>1</sup> ինձ: Զար զգացումներ չի<sup>2</sup> տածի իմ հաւաքեպի: Ի՞նչ եք կարծում:

— Ես կարծում եմ ... — ասավ Պիեռը: — Նա ներելու ոչինչ շունի... Եթե ես նրա տեղը լինեի...

Հիշողությունների կապով Պիեռը մի ակնթարթում երևակայությամբ տարկեց դեպի այն ժամանակը, երբ նա, Նատաշային մխիթարելով, նրան ասավ, թե եթե նա ինքը վիճեր, այլ լիներ աշխարհի լավագույն մարդը և ազատ, ապա ծնկաշոք նրա ձեռք կիսնդրեր. և Պիեռին համակեցին խղճահարության, քնքանաքի, սիրո նույն զգացումները, և նույն խոսքերն էին նրա շուրջերին: Բայց Նատաշան ժամանակ շտվեց, որ նա այդ խոսքերն ասի:

— Այո, դուք — դուք, — ասավ նա, իանդալառությամբ արտասանելով այդ դուք բառը, — ո՛ւրիշ եք: Զեզնից ավելի բարի, ավելի մեծանողի, ավելի լավ մարդ ես չեմ ճանաշում, և չի կարող լինել: Եթե դուք չինեիք այն ժամանակ, և այժմ էլ, ես շգիտեմ, ինչ կլինեի ես, որովհետև...

Արցունքները հանկարծ թափկեցին նրա աշքերից. նա շուռ եկավ, նոտաները մոտեցրեց աշքերին, սկսեց երգել և նորից սկսեց գնալ-գալ դահլիճում:

Այդ ժամանակ հյուրասրահից դուրս վաղեց Պետյան:

Պետյան այժմ մի սիրուն, կարմրագեմ տասնհինգ տալեկան տղա էր՝ հաստ, կարմիր շուրթերով, նատաշայի նման, նա պատրաստվում էր համալսարան մտնելու, բայց վերջերս, իր ընկեր Օբոլենսկու հետ միասին ծածուկ որոշել էին, որ հուսար դառնան:

Պետյան թուազ եկավ իր անվանակցի մոտ, որ խոսի այդ բանի մասին:

Նա Պիեռից խնդրեց իմանալ, թե իրեն հուսար կընդունեն արդյոք:

Պիեռը քայլում էր հյուրասրահում, վսելով Պետյային:

Պետյան թափ տվեց նրա թեր, որ նա ուշադրություն դարձնի իր վրա:

— Հը, իմ բանն ի՞նչպես կլինի, Պյոտր Կիրիլիչ, ի սե՞ր աստծու իմ միակ հույսը դուք եք, — ասում էր Պետյան:

— Ախ, քո գործը: Այսինքն հուսար՝ ես ուզում դառնալ: Կասեմ, կասեմ: Հիմա ամեն բան կասեմ:

— Հը, տու Շեր<sup>1</sup>, ինչպես եղավ, հրովարտակը ձեռք բերիք, — Հարցրեց ծեր կոմսը: — Իսկ կոմսուհիս եղել է Ռազումովսկիների մոտ՝ պատարագին, նոր աղոթք է լսել: Եատ լավն է, ասում է:

— Գտա, — պատասխանեց Պիեռը: — Թագավորը վաղը գալու է... Ազնվականության արտակարգ ժողով է և, ասում են, հազարից տասին հավաքելու են: Այս, շնորհավորում եմ ձեզ:

— Այո, այո, փառք աստծու: Է, իսկ բանակից ի՞նչ կա:

— Մերոնք նորից նահանջել են: Արդեն Սմոլենսկի մոտ են, ասում են, — պատասխանեց Պիեռը:

— Աստված իմ, աստված իմ, — ասավ կոմսը: — Իսկ ո՞ւր է հրովարտակը:

— Կոշի<sup>2</sup>: Ախ, այո՝

Պիեռն սկսեց գրպաններում թղթեր որոնել և շգտավ: Շարունակելով գրպանները բրդել. նա համբուրեց ներս մտնող կոմսուհու ձեռք և անհանդիստ հետ էր նայում, ըստ երկույթին պատսելով նատաշային, որ այլևս չէր երգում, բայց և հյուրասրահ չէր գալիս:

— Ma parole, je ne sais plus où je l'ai fourré<sup>1</sup>, — ասավ նա՞յ  
— է, միշտ կորցնում է ամեն ինչ, — ասավ կոմսուհին:

Նատաշան ներս մոտավ մեղմացած, զուզված դեմքով և նստեց, անխոս նայելով Պիեռին։ Հենց որ նա սենյակ մտավ, Պիեռի դեմքը, որ մինչ այդ մոայլ էր, փայլեց, և նա, շարունակելով թղթեր որոնել, մի քանի անգամ ուշադիր նայեց նը-րան։

— Աստված վկա, ես կերթամ, ես մոռացել-թողել եմ տանը։ Անպայման...

— է, ճաշին կուշանք:

— Այս, կառապանն էլ մեկնել է:

Բայց Սոնյան, որ գնացել էր նախասենյակ թղթերը որոնելու, գտավ զրանք Պիեռի գլխարկի մեջ, ուր նա այդ թղթերը խնամքով դրել էր աստաղի տակը: Պիեռն ուզեց կարդալ:

— Ու, ճաշից հետո, — ասավ ծեր կոմսը, Հավանաբար,  
այդ ընթերցման մեջ մեծ բավականություն նախատեսելովէ

Ճիշտ միջոցին, երբ շամպայն խմեցին նոր Գերոգիի ասպետի կենացը, Եինչինը պատմեց քաղաքի նորությունները. վրացի պառավ իշխանուհու Հիվանդության մասին, այն մասին, որ Մետիլիեն չբացել է Սոսկվայից, և այն մասին, որ Ռաստոպչինի մոտ են բերել մի ինչ-որ գերմանացու և նրան հայտարարել, թե դա շամպինիոն է (այդպես է պատմել ինքը կոմս Ռաստոպչինը), և ինչպես կոմս Ռաստոպչինը կարգադրել էր ազատ արձակել շամպինիոնին, ասելով ժողովրդին, թե դա շամպինիոն չէ, ալ պարզապես ծեր գերմանացի է:

— Բոնոտում են, բռնոտում, — ասավ կոմսը: — Ես կոմսուհուն էլ հենց այդ եմ ասում, որ ֆրանսիրեն քիչ խոսի: Հիմա ժամանակը չէ:

— Կսե՞լ եք, — ասավ Շինշինը: — Իշխան Գոլիցինը սուս ուսուցիչ է վարձել՝ սուսերեն սովորելու, — il commence à devenir dangereux de parler français dans les rues<sup>2</sup>.

— Հը, ո՞նց է, կոմս Պյոտր Կիրիլիչ, աշխարհազոր որ համարեն, դուք էլ պետք է ձի նստեք, — ասավ ծեր կոմսը, դիմելով Պիեռին:

Պիեռը լուր էր և մտախոհ ճաշի ամբողջ ընթացքում։ Նա, կարծես թե չհասկան սլով, նայեց կոմսին այդ դիմումն անեւիս։

— Այո, այո, պատերազմ, — ասավ նա: — Ո՞չ: Ես ինչ ուազմիկ եմ: Ասենք, ամեն ինչ այնպես տարօրինակ է, այնպես ատարօրինակ: Ես ինքս էլ չեմ հասկանում: Չգիտեմ, ես այնքան հեռու եմ ուազմական ճաշակներից, ու այժմյան ժամանակներում ոչ ոք պատասխանատու չի կարող լինել իր համար:

Ճաշից հետո կոմսը հանգիստ նստեց բազկաթռոռում և լուրջ դեմքով խնդրեց Սոնյային, որ վարպետորեն ընթերցելու համար ուներ, կարգալ.

«Մեր նախաթոռ մայրաքաղաք Եսոկվային.

Թշնամին մեծամեծ ուժերով մտել է Ռուսաստանի սահմանները: Նա գալիս է ավերելու մեր սիրելի Հայրենիքը», չանասիրությամբ կարդում էր Սոնյան իր բարակ ձայնով: Կոմսն աշբեր փակած, լսում էր, որոշ տեղերում սաստիկ հոգցներ արձակելու:

Նատաշան նստել էր ծպված ու փորձող հայացքով նայում  
էր մերթ հորբ, մերթ դիեռին:

Պիեռն զգում էր նրա հայացքն իր վրա և աշխատում էր առ շնայիր: Կոմսուհին բացասաբար ու բարկացած զլուխը թափահարում էր Հրովարտակի յուրաքանչյուր հանդիսավոր արտահայտության դեմ: Նա այդ բոլոր խօսքերի մեջ աւենում էր միայն այն, որ որդուն սպառնացող վաւնագները դեռ շուած էին դադարելու: Ծինշինը, բերանը հեղնական ժպիտով ծռած, սատ երեսութին, սպատրաստվում էր հեղնելու այն, ինչ առաջին ընթին հեղնելի կլիներ. Սոյնայի ընթերցումը, այն, ինչ կասեր ումսը, անգամ կոչը, եթե ամենի լավ առիթ չներկայանառ:

Կարգակով Թուսաստանին սպառնացող վտանգների մասին,  
ոյն հույսերի մասին, որ թագավորը դում էր Սոսկվիցի վրա,  
մանավանդ նշանավոր ազնվականության վրա, Սոնիան դո-  
ւացող ձայնով, որ առաջանում էր առավելաւեւ այնուշադրու-  
թյունից, որով լսում էին իրեն, կարդաց վերջին խոռոքը ըր.  
Մենք չենք հապաղի ինքներս լինեւ մեր սույն մայրաքաշարի  
մեր պետության մյուս փայտը ու ժողովրդի մէջ՝ իւրի անհ-

<sup>1</sup> Աստված վկա, չպիտեմ որտեղ եմ որել:

<sup>2</sup> Φηλοφύλικοι και φρανσερβοί συμπλέγονται στην περιοχή της Βαλτικής.

ցելու համար և զեկավարելու համար մեր ողջ աշխարհապորը՝ թե այժմ թշնամու առաջն առնող, և թե այն, որ այժմ հավաքում-կաղմակերպում են, թշնամուն ջարդելու այն բոլոր տեղերում, ուր նա կերևա: Եվ թող այն կործանումը, որ նա պատրաստում է մեղ համար՝ իր գլխին գա, և թող ստրկաւթյունից ազատագրված ելուպան փառաբանի Ռուսաստանի անունը»:

— Ուրեմն այդպէ՛ս, — բացականշեց կոմսը, թաց աշքերը բանալով, և, մի քանի անգամ ինքն իրեն ընդհատելով ֆսուցով, կարծես քին թունդ քացախի աղի սրվակ էին մոտեցրել, նա ասավ, — Միայն ասա՛, թագավոր, մենք ամեն ինչ կը գոհենք, մենք ոչի՞նչ չենք խնայի:

Շինշինը դեռ չէր կարողացել ասել իր նախապատրաստած սրախառությունը կոմսի հայշնասիրության առթիվ, երբ նատաշան վեր թռավ իր տեղից և վազեց հոր մոտ:

— Ինչ հիանալի է այս հայրիկը, — ասավ նա, հորը համբուրելով, ու կրկին նայեց Պիեռին այն անդիտակից կոկետությամբ, որ վերազարթնել էր նրա մեջ նրա աշխուժացման հետ միասին:

— Այ քեզ հայրենասիրուհի, — ասավ Շինշինը:

— Բոլորովին ոչ թե հայրենասիրուհի, այլ պարզապես... — Նեղացած պատասխանեց նատաշան: — Զեղ համար ամեն ինչ ծիծաղելի է, բայց սա կատակ չի:

Ինչ կատակ, — կրկնեց կոմսը: — Բավական է նա մի խոսք ասի, մենք բոլորս կերթանք... Մենք ինչ-որ գերմանացիներ չենք...

— Բայց դուք նկատեցիք, — ասավ Պիեռը, — որ ասված է, սխարհրդակցության համար:

— Է՛ս, ինչի համար ուզում է լինի...

Այդ ժամանակ Պետյան, որի վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, մոտեցավ հորը և, ամբողջապես կարմրած, կոտըրվող, մերթ կոպիտ, մերթ բարակ ձայնով ասավ.

— Է՛ս, հիմա, հայրիկ, ես կտրականապես կասեմ — մայրիկ, դու էլ, ինչպես կուզեք, — ես կտրականապես կասեմ, որ դուք ինձ կթողնեք զինվորական ծառայության գնալու, որովհետեւ ես չեմ կարող... ահա բոլորը...

Կոմսուհին սարսափած աշքերը բարձրացրեց դեպի երկինք, ձեռները շփեց և բարկացած դարձավ ամուսնուն.

— Ահա՛ և ասիր, — ասավ նա:

Բայց կոմսը նույն րոպեին սթափվեց հուզումից:

— Դե, դե, — ասավ նա: — Ռազմիկիս նայեցեք: Հիմարություններդ թող, պետք է ուսում առնես:

— Սա հիմարություն չի, հայրիկ: Ֆեղյա Օբոլենսկին ինձնից փոքր է և նույնպես գնում է, իսկ գլխավորը, միւնույն է, ես հիմա ոչ մի բան չեմ կարողանում սովորել, երբ... — Պետյան կանգ առավ, կարմրեց քրտնելու շափ և ասավ, — երբ հայրենիքը վտանգի մեջ է:

— Հերիք է, հերիք է, հիմարություններ են:

— Չէ որ դուք ասիք, թե ամեն ինչ կղունենք:

— Պետյա՛: Ես քեզ ասում եմ՝ լոիր, — բոռաց կոմսը, նայելով կնոջը, որը գունատված, կանգ առած աշքերով նայում էր փոքրիկ որդուն:

— Իսկ ես ծեզ ասում եմ: Ա՛յ, Պյոտր Կիրիլովիչն էլ կասի...

— Ես քեզ ասում եմ՝ հիմարություն է. դեռ բերանից կաթի հոտ է գալիս, զինվորական ծառայության է ուզում մտնել: Դե, դե, քեզ ասում եմ, — և կոմսը թղթերն իր հետ առնելով, հավանորեն, որպեսզի մի անգամ ևս կարդա իր առանձնասենյակում հանգստից առաջ, գնաց սենյակից:

— Պյոտր Կիրիլովիչ, է՛ճ, գնանք ծխենք:

Պիեռը շփոթության ու անվճռականության մեջ էր: Նատաշայի անսովոր փայլուն ու կենդանացած աշքերը, որ անդադար, ավելի քան սիրալիք դառնում էին իրեն, նրան հասցրել էին այդ դրության:

— Ոչ, ես, թվում է, պիտի գնամ տուն...

— Ինչպես թե տուն, դուք ուզում էիք երեկոն մեզ մոտ... Առանց այն էլ շատ քիչ եք լինում: Իսկ իմ այս... — ասավ կոմսը բարեհաճությամբ, նատաշային ցույց տալով, — միայն ձեր ներկայությամբ է ուրախ լինում...

— Բայց ես մոռացել եմ... Անպատճառ պետք է գնամ տուն... Գործեր կան... — հապճեպ ասավ Պիեռը:

— Դե, ուրեմն ցտեսություն, — ասավ կոմսը, սենյակից բոլորովին դուրս գալով:

— Ինչո՞ւ եք մեկնում: Ինչո՞ւ եք հուզված: Ինչո՞ւ... — հարցնում էր Պիեռից նատաշան, գոգոիչ կերպով նայելով նրա աշքերին:

«Նրա համար, որ քեզ սիրում եմ», ուզում էր ասել Պիեռը, բայց շասավ, արտասկելու շափ կարմրեց և աշքերը խոնարհեց։ — Նրա համար, որ ավելի լավ է ուշ-ուշ լինեմ ձեզ մոտ... Նրա համար... ոչ, պարզապես գործեր ունեմ...»

— Ինչո՞ւ համար: Ոչ, ասացեք, — կտրուկ սկսեց Նատաշան և հանկարծ լոեց։

Նրանք երկուսն էլ վախեցած ու շփոթված նայեցին իրար Պիեռը փորձեց ժպտալ, բայց շկարողացավ. նրա ժպիտը տանշանք արտահայտեց, և նա անխոս համբուրեց Նատաշայի ձեռք և դուրս գնաց։

Պիեռն ինքն իր մեջ որոշեց. Ալինել այլևս Ռոստովների տանը։

## XXI

Պետյան կտրուկ մերժում ստանալուց հետո գնաց իր սենյակը և այնտեղ, բոլորից ծածուկ, լաց եղավ դառնապես: Բուրը ցույց տվին, թե ոչինչ չեն նկատել, երբ նա թեյի եկալ լուս ու մուալլ, արտասկած աշքերով։

Մյուս օրը թագավորը եկավ։ Ռոստովների տան սպասավոր ճորտերից մի քանիսը թույլտվություն խնդրեցին՝ գնալ թագավորին տեսնելու: Այդ առավոտ Պետյան երկար հագնվում էր, սանրվում և օձիքը սարքում էր այնպես, ինչպես լինում է մեծերին: Նա դեմքը խոժոռում էր հայելու առաջ, շարժումներ էր անում, ուսերը սեղմում էր և, վերջապես, առանց մեկին մի րան ասելու, զիխարկը դրեց ու դուրս եկավ տան ետևի մուտքից, աշխատելով չնկատվել։ Պետյան որոշել էր գնալ ուղիղ այն տեղը, ուր թագավորն էր, և որևէ կամերհերի (Պետյային թվում էր, թե թագավորին միշտ շրջապատում են կամերհերները) բացատրել պարզապես, թե ինքը, կոմս Ռոստովը, չնայած իր ջահելության, ցանկանում է ծառայել հայրենիքին, թե ջահելությունը չի կարող արգելք լինել անձնվիրության համար, և թե նա պատրաստ է... Պետյան գնալիս շատ լավ խոսքեր էր պատրաստել, որ ասելու էր կամերհերին։

Պետյան՝ թագավորին ներկայանալու իր հաջողության վրա հույս ուներ հենց այն պատճառով, որ ինքը երեխա էր (Պետյան նույնիսկ կարծում էր, թե ինչպես բոլորը կզարմանան

իր ջահելության վրա). իսկ դրա հետ միաժամանակ իր օձիքների, իր մազերի սանրվածքի ձևերով և իր լուրջ, դանդաղ քայլվածքով ուզում էր իրեն ներկայացնել հասակավոր մարդու Բայց որքան առաջ էր գնում նա, որքան գրավվում էր Կրեմլի մոտ ավելի ու ավելի հավաքվող ժողովրդով, այնքան ավելի մոռանում էր իր՝ հասակավորներին հատուկ, լուրջ ու դանդաղ քայլվածքը: Կրեմլին մոտենալով՝ նա արդեն հոգում էր այն մասին, որ իրեն չ'ընեն, և վճռապես, սպառնալից տեսքով արմունկները ցցեց կողերին: Բայց Տրոյցիցի մուտքի մեջ, չնայած նրա վճռականության, մարդիկ, որոնք հավանաբար շփտեին, թե նա ինչ հայրենասիրական նպատակով է գնում դեպի Կրեմլ, այնպես սեղմեցին նրան պատին, որ նա ստիպված էր հնապանդվել և կանգ առնել, քանի դեռ մուտքի կամարի տակ աղմկելով անցնում էին կառքերը: Պետյայի մոտ կանգնած էր մի կին լակեյի հետ, երկու վաճառական և ծառայությունը թողած մի զինվոր: Ռուշ ժամանակ դարբասի մոտ մնալով՝ Պետյան շապասելով, որ բոլոր կառքերն անցնեն, ուզեց մյուսներից առաջ շարժվել և սկսեց արմունկներով վրճռականացնես աշխատել. բայց իր զիմաց կանգնած կինը, որի գեմ նաև առաջինն ուղղեց իր արմունկները, բարկացած բոռաց Պետյայի վրա:

— Ի՞նչ ես բոթում, պարունորդի: Տեսնում ես՝ բոլորը կանգնած են: Էլ ի՞նչ ես խցկվում:

— Այդպես Հո բոլորը կիցկվեն, — ասավ լակեյը և, նույնպես սկսելով արմունկներով աշխատել, Պետյային կոփեց մուտքի մի գարշաճոտ անկյուն:

Պետյան ձեռներով սրբեց երեսը պատաժ քրտինքը և ուղղեց քրտինքից թրջված օձիքները, որ այնպես լավ, մեծերին նման, սարքել էր տանը:

Պետյան զգում էր, որ ինքը անտպավորիչ տեսք ունի, և վախենում էր, որ եթե այդպես ներկայանա կամերհերներին, ապա նրան թույլ չեն տա թագավորին մոտենալու: Բայց իրեն կարգի բերելու և մի ուրիշ տեղ անցնելու հնարավորություն չկար նեղվածքի պատճառով: Եկած գեներալներից մեկը Ռոստովիների ծանոթն էր: Պետյան ուզում էր զիմել նրա օգնությանը, բայց գտավ, որ դա տղամարդու վայել բան չի: Երբ բոլոր կառքերն անցան, բազմությունը հորդեց և Պետյային

էլ իր հետ տարավ հրապարակ, որն ամբողջովին բռնված էր ժողովրդով: Ոչ միայն հրապարակում, այլև տանիքների վրա, ամեն կողմ ժողովուրդ կար: Հենց որ Պետյան դուրս եկավ հրապարակ, նա պարզորեն լսեց ամբողջ կրեմլը լցնող գանգակների ղողանջը և ժողովրդի ուրախ խոսոցը:

Մի ժամանակ հրապարակում ազատ ընդարձակ տեղ կար, բայց հանկարծ բոլոր գլուխները բացվեցին, բոլորը դարձյալ առաջ նետվեցին: Պետյային այնպես սեղմեցին, որ նա էլ չէր կարողանում շնչել, ու ամեն կողմ գոչում էին. «ուռա՞», «ուռա՞». ուռա՞»: Պետյան կանգնեց ոտի ծայրերի վրա, հրեց հրճեց մարդկանց, բայց ոչինչ չկարողացավ տեսնել, բացի իրեն շուրջը խոնվող ժողովրդից:

Բոլորի ղեմքին կար խանդաղատանքի ու բերկրանքի մի ընդհանուր արտահայտություն: Մի վաճառականի էին, որ կանգնած էր Պետյայի կողքին, հեկեկում էր և արցունքները թափում էին նրա աշքերից:

— Մեր հայր հրեշտակ, — ասում էր նա, մատներով արցունքները սրբելով:

— Ուռա՞ — բացականշում էին ամեն կողմից:

Մի րոպե բազմությունը մնաց միենույն տեղը կանգնած, բայց հետո նորից նետվեց առաջ:

Պետյան, ինքն իրեն մոռացած, ատամները իրար սեղմած և աշերը զազանաբար շոած, նետվեց առաջ, աշխատելով արմունկներով ու բացականշելով՝ «ուռա՞», կարծես այդ րոպեին պատրաստ էր սպանել թե՛ իրեն, թե՛ բոլորին. բայց նրա երկու կողմից խցկում էին առաջ ճիշտ նույնպիսի զազանային ղեմքեր, նույնպիսի «ուռա՞» բացականշություններով:

«Ահա ի՞նչ բան է թագավորը, — մտածում էր Պետյան: — Ոչ, ես ինքս չեմ կարող նրան խնդիր ներկայացնել, այդ շափականց համարձակ կլիներ»: — Զնայած այն բանին, որ նա շարունակ նույն հանդինությամբ առաջ էր գնում, և առջեր գտնվողների թիկունքի վրայից նրա աշքովն ընկավ մի դատարկ տարածություն՝ կարմիր մահուրով ժածկված ճանապարհով, բայց այդ ժամանակ բազմությունը օրորվեց, իս ընկավ (ոստիկաններն առջեցից ետ մդեցին երթին շափազանց մոտեցածներին, թագավորը պալատից գնում էր Ռւսակենսկի (Վերափոխման) տաճարը) և Պետյան անսպասելի մի այնպիսի հարված

ստացավ իր կողերին և այնպես սեղմվեց, որ նրա աշքերը հանկարծ մթագնեցին, և նա գիտակցությունը կորցրեց: Եթե ուշքի եկավ, մի ինչ-որ հոգեռորական, գլխի ետևը ձերմակ մազերի մի փունչ, մաշված կապույտ փարազան հագին, հավանորեն, սարկավագ, մի ձեռով բռնել էր Պետյայի թեատրակից, մյուսով պաշտպանվում էր ճնշող, հույս տվող բազմությունից:

— Պարոնորդուն սեղմել, ջարդել եք, — ասում էր սարկավագը: — Սա ի՞նչ բան է... այսպիս կսեղմե՞ն:

Թագավորն անցավ Վերափոխման տաճարը: Բազմությունը նորից իր տեղը բռնեց, և սարկավագը գունատված ու հազիվ շնչող Պետյային դուրս բերեց դեպի Ցար-թնդանութը: Մի բանի մարդ խցացին Պետյային, և հանկարծ ամբողջ բազմությունը դարձավ դեպի նա, և նրա շուրջն արգեն տեղի ունեցավ խոնում: Նրանք, ովքեր մոտ էին կանգնած, ծառայություն էին մատուցում նրան. սյուրթուկի կոճակներն արձակեցին, նստեցրին թնդանութի բարձրության վրա և հանդիմանում էին նրանց, ովքեր սեղմել էին Պետյային:

— Էսպես սեղմելով մարդ կարելի է սպանել: Սա ի՞նչ բան է: Հոգի եք կործանում: Տես, խեղճը քաթանի պես սպիտակել է, — ասում էին տարբեր ձայներ:

Պետյան շուտով սթափվեց, երեսը նորից գույն եկավ, ցախն անցավ, և այդ ժամանակավոր անախորժության շնորհիվ նա տեղ ստացավ թնդանութի վրա, որտեղից հույս ուներ տեսնելու վերադարձող թագավորին, որը պետք է որ ետ գար, Պետյան հիմա այլևս չէր մտածում խնդիրը տալու մասին: Հենց միայն տեսնե՞ր նրան, գրանով էլ իրեն երշանիկ կհամարեր:

Այն ժամանակ, երբ Վերափոխման տաճարում ժամերգություն էր տեղի ունենում, — միացյալ մաղթանք թագավորի դալու առթիվ և գոհաբանական մաղթանք թուրքերի հետ հաշտություն կնքելու համար, — բազմությունը ցրվեց. երելացին առևտրականներ, որ բարձրածայն առաջարկում էին իրենց ապրանքը — կվաս, անուշահաց, մեղրահաց, որ Պետյան սիրում էր առանձնապես, և լալեցին սովորական խոսակցություններ: Մի վաճառականուհի ցույց էր տալիս իր պատուս ժալը և ասում, թե որքան թանկ է գլված. մի ուրիշ կին ասում էր, թե մետաքսի բոլոր կտորները հիմա թանկացել են: Պե-

Թյային փրկող սարկավագը խոսում էր մի շինովնիկի հետ այն մասին, թե ովքեր են հիմա սրբազնի հետ մասնակցում ժամերգությանը։ Սարկավագը մի քանի անգամ կրկնեց միացյալ բառը, որ Պետյան չէր հասկանում։ Երկու զահել քաղենի կատակում էին սպասավոր աղջիկների հետ, որ կաղին էին ուտում։ Այս բոլոր խոսացությունները, մանավանդ կատախները աղջիկների հետ, որ Պետյայի համար՝ նրա հասակում առանձին գրավություն ունեին, բոլոր այդ խոսացությունները նրան չէին գքաղեցնում։ Նա նստել էր իր բարձրության՝ ինդանութիւն վրա, հոգվում էր դարձյալ թագավորին տեսնելու մտքից և դեպի նա ունեցած իր սիրուց։ Ցավի ու սարսափի զգացումների (երբ իրեն սեղմում էին) գուգադիպումը խանդակառության զգացման հետ էլ ավելի ուժեղացնում էին այդ բոպեի կարեռության գիտակցությունը նրա մեջ։

Հանկարծ զետափի կողմից լսվեցին թնդանոթի ձայներ (այդ արձակում էին թուրքերի հետ կնքած հաշտությունը նշանավորելու) և բազմությունը գլխավտույտ նետվեց գեպի գետափը՝ տեսնելու, թե ինչպես են կրակում։ Պետյան նույնափես ուզում էր վազել այն կողմը, բայց նրան իր հոգվածությունը տակ առած սարկավագը չի թողեց։ Թնդանոթածությունը գետ շարունակվում էր, երբ Վերափոխման տաճարից դուրս վագեցին սպաներ, գէնէրալներ, կամերէներներ, հւառ արդին ոչ այնպես հապանեալ գուրս եկան ուրիշներն էլ, նորից մարդիկ վերցրին գլխարկները, և նրանք, ովքեր վազել էին թնդանոթներին նայելու, վազեվագ ետ եկան։ Վերջապես տաճարի դուրս գուրս եկան դարձյալ շորս տղամարդ՝ մունղիբներով ու ժապավեններով։ «Ուոա՛, ուոա՛» — նորից բացականչեց բազմությունը։

— Ո՞րն է, ո՞րը, — արտասվագին ձայնով հարցնում էր Պետյան շրջապատողներին, բայց ոչ ոք չէր պատասխանում նրան։ Բոլորը շափազանց տարված էին, և Պետյան ընտրեց այդ շորսից մեկին, որին իր արցունքների պատճառով, որ ուրախությունից լցորել էին աշքերը, չէր կարողանում պարզ տեսնել, բայց որի վրա և կետրոնացրեց իր ամբողջ խանդակառությունը, թեև դա թագավորը չէր, ու մոլեգին ձայնով ուուա՛ բոռաց և որոշեց, որ վաղն ևեթ, ինչ գնով էլ լինի, ինքը զինվորական է դառնալու։

Թագմությունը վազեց թագավորի ետևից, ուղեկցեց նրան մինչև պալատը և սկսեց ցրվել։ Ուշ էր արդեն, և Պետյան ովնու չէր կերել, ու քրտինքը թափվում էր նրանից կարկուտի պես։ Բայց նա տուն չէր գնում և պակասած, բայց տակավին մեծ, բազմության հետ մնաց պալատի առաջ, թագավորի ճաշի ժամանակ, պալատի լուսամուտից նայելով, սպասելով գարցյալ ինչ-որ բանի ու նախանձելով հավասարապես թե՛ բարձրաստիճան մարդկանց, որ կառքերով մոտենում էին պալատի դռան՝ թագավորի ճաշին մասնակցելու, թե՛ պալատական-լակեյներին՝ որ սպասարկում էին սեղանները և մեկ-մեկ երկում էին լուսամուտներում։

Ճաշի ճամանակ վալումը, լուսամուտից դուրս նայելով, ասավ թագավորին։

— Ժողովուրդը գեռ էլի հույս ունի տեսնել ձերդ մեծությանը։

Ճաշն արդեն վերջացավ, թագավորը վեր կացավ, բիսկվիտի մնացուրդն ուտելով, ու գուրս եկավ պատշգամբ։ Ժողովուրդը, Պետյան էլ նրա մէջտեղը, նետվեց գեպի պատշգամբը։

— Մեր բարի՛ հրեշտակ։ Մեր հա՛յր, Ուոա՛։

— Հա՛յր... — բացականչում էին ժողովուրդն ու Պետյան։ Նորից կանայք ու մի քանի թույլ տղամարդիկ, դրանց թվում և Պետյան, լաց եղան երշանկությունից։

Բիսկվիտի մի բավկան մեծ կտոր, որ թագավորը բնել էր ձեռին, կոտրվելով ընկալ պատշգամբի ճաղին, այնտեղից էլ գետին։ Բոլորից ավելի մոտ կանգնած հաստ բաճկոն հագած մի կառապան նետվեց գեպի բիսկվիտի այդ կտորը ու խլեց այն։ Բազմությունից մի քանի հոգի նետվեցին դեսի կառապանը։ Այդ նկատելով, թագավորը հրամայեց տուկ իրեն բիսկվիտով լի ափսեն և սկսեց բիսկվիտներ նետել պատշգամբից։ Պետյայի աշքերը լցվեցին արյունով, ոտի տակ ընկնելու վտանգն ավելի գրուեց նրան, ու նա նետվեց բիսկվիտների կողմը։ Նա զիտեր ինչո՞ւ, բայց պետք էր մի բիսկվիտ վերցնել թագավորի ձեռից և զաքետք էր զիջել։ Պետյան նետվեց առաջ և գետին տապալեց մի պառափի, որ բանում էր բիսկվիտը։ Բայց պառափն իրեն հաղթված չէր համարում, թեև պառկած էր գետնին (պառափը ձեռը դրել էր բիսկվիտի վրա, բայց բանել չէր կարողանում)։ Պետյան ծնկով ետ մղեց նրա ձեռը,

վերցրեց բիսկվիտը և, կարծես վախենալով որ կուշանա, նորից «ուուա» բացականչեց, բայց արդեն խռպոտած ձայնով:

Թագավորը զնաց, և դրանից հետո ժողովրդի մեծ մասն ս'սեց ցրվել:

— Այս ես ասում էի, որ դեռ պետք է ապասել, — էպահա էլ եղավ, — զանազան կողմերից ուրախ-ուրախ խռում էին ժողովրդի մեջ:

Որքան էլ երջանիկ լիներ Պետական, նա այնուամենայնիվ տիրությամբ էր գնում տուն, մտածելով, որ այդ օրվա ամբողջ հաճույքը վերջացավ: Կրեմլից Պետական շգնաց տուն, այլ իր ընկերոջ Օրոլինսկու մոտ, որը տասնհինգ տարեկան էր և որը նույնական մտնում էր գունդ: Տուն վերադառնալով՝ նա կորուկ և հաստատորեն հայտարարեց, թե եթե իրեն չթողնեն, փնքը կփախչի: Եվ մյուս օրը, թեև ոչ բոլորովին անձնատուր եղած, բայց կոմս Իլյա Անդրեյիշը գնաց իմանալու, թե ինչպես անդավորի Պետյային մի որեւէ ավելի ապահով տեղու:

## XXII

Երրորդ օրը, 15-ի առաջորդան, Սլուսդի պալատի մոտ կանգնած էին անթիվ-անհամար կառքեր:

Դահիճները լեցուն էին մարդկանցով: Առաջինում ազնվականներն էին՝ յունգիրներ հագած, երկրորդում — վաճառականները՝ մեղալներով, մարտաքներավ ու կապույտ կաֆտաններով: Ազնվականների ժագովարանի գահնինում մասնց ու շարժում էր: Մի մեծ սեղանի մոտ, թագավորի պատկերի ներքո, բարձր թիկնաթուների վրա նստած էին կարևորագույն ազնվատում իշխանները, իսկ ազնվականների մեծամասնությունը անցնում-դառնում էր դահիճնում:

Բոլոր ազնվականները, նրանք, որոնց Պիեռը տեսնում էր ամեն օր մերթ ակումբում, մերթ իրենց տներում, — բոլորը մունդիր էին հագել՝ ո՛րը նեղաներինայի ժամանակի, ո՛րը Պավելի, ո՛րը նոր ալեքսանդրյան, ո՛րը ընդհանուր ազնվական մունդիր: և մռնդիրների այդ ընդհանուր ընույթը ինչ-ոք տարօրին ու ֆանտասիկ: Կերպարանը էր տալիս այդ ծեր զահել, ամենաբազմապիսի ու ծանոթ դեմքերին: Մանավանդ դարմանալի էին ծերունիները՝ աշքերից թույլ, անատամ,

ճաղատ, դեղին ճարպով կալնված կամ կնճուտ դեմքեցով, նիշար ծերունիները: Նրանք մեծ մասամբ նստած էին ու լուս էին, և եթե շրջում էին ու խոսում, ապա հենցվում էին մի որեւէ ավելի շահելի: Նույնպես, ինչպես և այն բազմության դեմքերին, որ Պետյան տեսավ հրապարակում, բոլոր դեմքերի վրա շարմանարին հակադրության գիծն էր. ինչ-որ հանդիսավոր ու սովորական մի բանի ընդհանուր սպասումը, երեկովա բուտոնի խաղը, խոհարար Պետրուցիան, Զինայիդա Դմիտրենայի առողջությունը և այլն:

Պիեռը, վաղ առավոտից արդեն, մի անհարմար, իր մարմինը սեղմող, ազնվականի մունդիր հագած, դահլիճներում էր նա հուզմունքի մեջ էր. այդ արտակարգ ժողովը, որին մասնակցում էր ոչ միայն ազնվականությունը, այլև վաճառականությունը — դասերի, ետաւ գեներալ-ի այդ ժողովը նրա մեջ հարուցեց մի շարք վաղուց թողնված, բայց իր հոգում խորապես զրոշմված մտքեր Contrat social<sup>2</sup>-ի և ֆրանսական ունիությայի մասին: Կոչի մեջ իր կողմից նկատված այն խոսքերը, թե թագավորը մայրաքաղաքում մնալու է իր ժողովունի հետ խորհրդակցելու համար, հաստատում էին նրա այդ կարծիքը: Եվ նա, կարծելով, թե այդ իմաստով ինչ-որ կարևոր բան է լինելու, այն, ինչ ինքն սպասում էր վաղուց, անցնում էր, հետևում, ականջ դնեամ խոսակցություններին, բայց ոչ մի տեղ չէր գտնում արտահայտությունն այն մտքերի, որոնք զբաղեցնում էին իրեն:

Կարդացվեց թագավորի հրովարտակը, որ խանդավառություն առաջացրեց, և ապա բոլորը զրուցելով, ցրվեցին այս ու այն կողմ: Սովորական շահագրգություններից հետո Պիեռը խոսակցություն լսեց և այն մասին, թե ո՛ւր պիտի կանգնեն պարագլուխները թագավորի ներս մտնելու պահին, ե՛րբ պարահանդես տալ թագավորին, բաժանվել ըստ գավառների, թե ամբողջ նահանգով... և այլն. բայց որքան հարցը պատերազմին էր վերաբերում և այն բանին, ինչի համար հավաքվել էր ազնվականությունը, խոսակցությունները անվճուական էին և անորոշ: Բոլորն ավելի ցանկանում էին լսել, բան խոսել:

<sup>1</sup> Հանրաժողով:

<sup>2</sup> «Հասարակական դաշինք», հեղ. Ռուսոսի:

Միջին տարիքի, առնական, գեղեցիկ, պաշտոնաթող ծովային մունդիրով մի տղամարդ խոսում էր դահլիճներից մեկում և նրա շուրջը մարդիկ էին հավաքվել: Պիեռը մոտեցավ խոսողի շուրջը կազմված խմբին և սկսեց ականջ դնել: Կոմս Իլյա Անդրեյիչը, որ եկատերինյան զորավարի իր կաֆտանով հաճելի ժամանակին գնում-գալիս էր բազմության միջով, բոլորի հետ ծանոթ, մոտեցավ նույնպես այս խմբին և սկսեց ականջ դնել, գլխով հավանություն տալով, իբրև խոսողի հետ համաձայն լինելու նշան: Պաշտոնաթող ծովայինը խոսում էր շատ համարձակ. այդ երեսում էր նրան լողոների արտահայտությունից և այն բանից, որ Պիեռին հայտնի որպես ամենախոնարհ ու խաղաղ մարդիկ շնականալով հեռանում էին կամ հականառում: Պիեռը հրելով մարդկանց մտավ խմբի մեջ, ականջ դրեց ու համոզվեց, որ խոսողն իրոք լիբերալ էր, բայց բոլորովին այլ իմաստով, քան ինքն էր կարծում: Սովայինը խոսում էր այն առանձին հնչեղ, աղնվականի երգեցիկ բարիտոնով, դուրեկան կերպով ռ-ն աղավաղելով և բաղաձայները կրճատելով այն ձայնով, որով կանչում են. «Վեաէք, ծրիսամո՛րձը» և այլն: Նա խոսում էր շվայտության և իշխանության շհշտը ձայնի մեջ:

— Ի՞նչ անենք, որ սալինցիները աշխարհազոր են առաջարկել թագավորին: Մի՞թե սալինցիները օրենք են մեզ համար: Եթե Սոսկվայի նահանգի ազնվականությունը հարկավոր համարի՝ նա իր նվիրվածությունը թագավոր կայսեր ցուց կտա ուրիշ միջոցներով: Մի՞թե մենք մոռացել ենք յոթը թվի աշխարհազորը: Շահեցին, միայն քելեխակերներն ու գող կողպտիչները...

Կոմս Իլյա Անդրեյիչը, քաղցր ժպտալով, գլխով հավանություն տվեց:

— Եվ ինչ, մի՞թե մեր աշխարհազորականները օգտակար էին պետության համար, բնա՛վ: Միայն ավերեցին մեր տնտեսությունները: Ավելի լավ է գեռ զորաժողովը... այլակես ոչ զինվոր կվերադառնա ձեզ մոտ, ոչ զյուղացի. այլ միայն անբարոյություն: Ազնվականներն իրենց կյանքը շեն խնայում, մենք բոլորս գլխովին կերթանք, կվերցնենք նաև նորակոշկներ, և բավական է մեզ բոլորին մի կոշտ անի թագավորը, մենք

բոլորս կմենանք նրա համար, — ավելացրեց հոեաորը, ոգեվորվելով:

Իլյա Անդրեյիչը թուքը կուլ տվեց բավականությունից ու հրեց Պիեռին, բայց Պիեռն ուզում էր նույնպես խոսել: Նա առաջ գնաց, իրեն ոգեսրված զգալով, ինքն էլ գեռ շիմանալով ի'նչով, ինքն էլ գեռ շիմանալով, թե էլ ի'նչ է ասելու: Նա նոր միարն բերանը բացել էր, որ խոսի, երբ մի սենատոր (բոլորուին անատամ, խելացի ու բարկացած զեմքով), որ կանգնած էր հոեատորին մոտիկ, ընդհատեց Պիեռին: Վիճաբանությունները վարելու և հարցեր տալու նկատելի սովորությամբ, նա խոսեց կամացով բայց լսելի ձայնով:

— Ես կարծում եմ ողորմած տեր, — անատամ բերանը շպացնելով, ասավ սենատորը, — որ մենք կանչված ենք այստեղ ոչ թե նրա համար, որպեսզի քննենք, թե պետության համար ներկա բոպեին ի'նչն է ավելի հարմար — զորաժողովը թե աշխարհազորը: Մենք կանչված ենք նրա համար, որ պատասխանենք այն կոչին, որին արժանացրել է մեզ թագավոր կայսրը: Խսկ դատել այն մասին, թե ի'նչն է ավելի հարմար — զորաժողովը թե աշխարհազորը, մենք թողնենք բարձրագույն իշխանությանը դատելու...

Պիեռը հանկարծ ելք գտավ իր ոգեսրության համար: Նա կատաղեց սենատորի զիմ, որ ազնվականության առաջիկա զբաղումների մեջ հշտություն ու նեղմտություն էր մըտցընում:

Պիեռն առաջ եկավ ու կանգնեցրեց նրան: Ինքն էլ շգիտեր, թե ինչ պիտի խոսի, բայց սկսեց աշխատորեն, երբեմն պոռթկալով ֆունսերեն բառեր և ոռւսերեն արտահայտվելով զրբի լեզվով:

— Ներեցեք ինձ, ձերդ գերազանցություն, — սկսեց նա (Պիեռը լավ ծանոթ էր այդ սենատորի հետ, բայց այստեղ անհրաժեշտ էր համարում զիմել նրան պաշտոնապես), — ես թեև համաձայն շեմ պարոնի հետ... (Պիեռը կանգ առավ: Նա ուզում էր ասել. mon très honorable préopinant<sup>1</sup> այս պարոնի հետ... que je n'ai pas l'honneur de connaître<sup>2</sup>, բայց

<sup>1</sup> Իմ խիստ մեծարգո ընդդիմախոսը,

<sup>2</sup> Որի հետ ծանոթ լինելու պատճեր շահնեմ:

ես կարծում եմ, որ ազնվականության դասը, բացի իր համակրությունն ու հիացումն արտահայտելուց, կոչված է նաև նրա համար, որ քննի նաև այն միջոցները, որոնցով մենք կարող ենք օգնել հայրենիքին։ Ես կարծում եմ, — ասում էր նա, ոգևորվելով, — որ թագավորն ինքը դժգոհ կլիներ, և թե հանձին մեզ տեսներ միայն տերեր գյուղացիների, որոնց մենք սրալիս ենք նրան և բըր... chair à canon<sup>1</sup>, որպիսին մենք դարձնում ենք մեզ, բայց մեզնից շտանար մի խո.. խո.. լորհուրդ։

Շատերը ետ քաշվեցին խմբից, նկատելով սենատորի արհամարհական ժայռը և այն, որ Պիեռը շատ աղատ էր խոսում. միայն հյա Անդրեյիշն էր գոհ Պիեռի ճառից, ինչպես նա գոհ էր ծովայինի ճառից, սենատորի ճառից և, առհասարակ, միշտ վերջին լսած ճառից։

— Ես կարծում եմ, որ նախքան այս հարցերը քննելը, — շարունակեց Պիեռը, — մենք պետք է հարցնենք թագավորին, խոնարհաբար խնդրենք նորին մեծության տեղեկացնել մեզ, թե որքան զորք ունենք, ինչ գրության մեջ են գտնվում մեր զորքերն ու բանակը, և այն ժամանակ...

Բայց Պիեռը չկարողացավ վերջացնել իր խոսքը, երբ հանկարծ երեք կողմից հարձակվեցին նրա վրա։ Բոլորից ուժեղ հարձակում գործեց նրա վրա իր հին ծանոթ, դեպի ինքը միշտ լավ շրամադրված բռուտոնի խաղամոլ Ստեպան Ստեպանովիշ Ապրակսինը։ Ստեպան Ստեպանովիշը մունդիր էր հագել, և մունդիրից արդյո՞ք, թե ուրիշ պատճառներով, Պիեռն իր առաջ տեսավ բոլորովին այլ մարդ։ Ստեպան Ստեպանովիշը, հանկարծ արտահայտված ծերունական շարությունը դեմքին, բռուց Պիեռի վրա։

— Առաջինը, ասեմ ձեզ, մենք իրավունք չունենք այդ մասին թագավորին հարցնելու, իսկ երկրորդ, եթե ոռու ազնվականությունն այդպիսի իրավունք ունենար, ապա թագավորը չի կարող մեզ պատասխանել։ Զորքերը շարժվում են թշնամու շարժումների համեմատ, — զորքերը պակասում են և ավելանում...

Միջին հասակի, քառասում տարեկան մի մարդ, որին Պիեռը առաջները տեսել էր գնչուների մոտ և ճանաշում էր որպես վատահամբավ խաղամոլ, և որ նույնակա փոխվել էր իր մունդիրի մեջ, մտտեցավ Պիեռին և ընդհատեց Ապրակսինին։

— Հիմա դատողություններ տալու ժամանակը չէ, — ասում էր այդ ազնվականը, — այլ պետք է գործել պատերազմը Ծուսաստանի հողի վրա է։ Մեր թշնամին գալիս է, որ Ծուսաստանը կործանի, որ անարգի մեր հայրերի գերեզմանները, որ տանի մեր կանանց, երեխաններին։ — Ազնվականը ձեռը խփեց իր կրծքին։ — Մենք բոլորս ոտքի կեննենք, մենք բոլորս կերթանք, բոլորս մեր հայր-թագավորի համար, — բացականչեց նա, արյունով լցված աշբերը ոլորելով։ Բազմության միջից լսվեցին հավանություն տվող մի քանի ճայներ։ — Մենք ոռւներս մեր արյունը շենք խնայի մեր հավատի, գահի և հայրենիքի համար։ Իսկ զառանցանքները պետք է թազնենք, եթե մենք հայրենիքի զավակներ ենք։ Մենք Եվրոպային ցույց կտանք, թե ինչպես է Ծուսաստանը ոտքի ելնում Ծուսաստանի համար, — բռուց ազնվականը։

Պիեռն ուզեց առարկել, բայց չկարողացավ անգամ մի խոսք ասել։ Նա զգում էր, որ իր խոսքը, անկախ այն բանից, թե ինչ միտք է պարունակում, ավելի քիչ լսելի եղավ, բան աշխույժի եկած ազնվականի խոսքը։

Իսա Անդրեյիշը հավանություն էր տալիս խմբի ետև կանգնած. ոմանք արագորեն իրենց թիկունքը զարձնում էին դեպի ճառախոսը՝ նրա խոսքի վերջում, և ասում էին.

— Այ թե ի՞նչ... ահա թե ի՞նչ...

Պիեռն ուզում էր ասել, թե ինքը չի հրաժարվում զոհաբերել ոչ փողը, ոչ գյուղացիներ, ոչ ինքն իրեն, բայց պետք է իմանալ գործերի գրությունը, որ օգնեն, բայց նա չկարողացավ խոսել։ Շատ ձայներ ճշում էին ու խոսում միասին, այնպես որ Իսա Անդրեյիշը շնորհ հասցնում բոլորին գլխով անել և խումբն ավելանում էր, բաժան-բաժան լինում, նորից հավաքվում ու, աղմլալի խոսակցությամբ շարժվեց դեպի մեծ դաշինը, մեծ սեղանի մոտ։ Պիեռին ոչ միայն շհաջողվեց խոսել, այլև նրան կոպարեն ընդհատում էին, ետ մղում, երեսները շրջում նրանից, իբրև մի ընդհանուր թշնամուց։ Այդ նրանից չէր առաջանում, որ դժգոհ էին նրա ճառի իմաստից, —

նրա ճառը մոռացան էլ նրան հետեղ բազմաթիվ ճառերից հետո, — բայց բազմությանը ոգևորելու համար պետք էր ունենալ թե՛ սիրո շոշափելի առարկա և թե՛ ատելության շոշափելի առարկա: Պիեռը դարձավ այս վերջինը: Շատ հոետորներ խոսեցին աշխույժ առած ազնվականից հետո, և բոլորը խոսեցին նույն տոնով: Շատերը խոսեցին սքանչելի ու ինքնօրինակ:

«Ռուսկի Վեստնիկի» հրատարակիչ Գլինկան, որին ճանաշեցին («գրող, գրող», — լսից բազմության մեջ), ասավ թե դժոխքը պետք է ետ մղել դժոխքով, թե նա տեսել է մի երեխա, որ ժամում էր կայծակի փայլիք և ամպի որոտի ժամանակ, բայց թե մենք այդ երեխան լինենք:

— Այո, այո, ամպի որոտի ժամանակ, — հավանություն տալով կրկնեցին վերջին շարքերում:

Բազմությունը մոտեցավ մեծ սեղանին, որի մոտ նստած էին մունդիրներով, ժապավեններով, սպիտակաճեր, ճաղատ յոթանասուն տարեկան ազնվատոհմ ծերունիները, որոնց գրեթե բոլորին Պիեռը տեսել էր թե տներում իրենց ծաղրածուների հետ կամ թե ակումբներում՝ բոստոնի շուրջը: Բազմությունը մոտեցավ սեղանին, շարունակելով աղմկել: Մեկը մյուսի ետեկից և երբեմն երկուսը միասին, ետեկի բազմության կողմից աթոռների բարձր թիկնակին սեղմված, խոսում էին հոետորները: Ետեւում կանգնածները նկատում էին, թե ինչ միտք շավարտեց խոսող հոետորը, և աշխատում էին լրացնել այդ բացը: Մյուսները այդ բուն տրամադրությունների և նեղվածքի մեջ որոնում էին կատարում իրենց ուղեղում, թե չի գտնվի արդյոք մի միտք, ու շտապում էին արտահայտել այն: Պիեռին ծանոթ ազնվատոհմ ծերունիները նստել ու նայում էին մերթ սրան, մերթ մյուսին, և նրանց արտահայտությունը մեծ մասամբ այն էր ասում, թե իրենց համար խիստ շոգ է: Պիեռը, սակայն, իրեն հուզված էր զգում, և այն ընդհանուր՝ բոլորը մեզ համար ովնչ ցույց տալու ցանկության զգացումը, որ արտահայտվում էր մեծ մասամբ հնչունների և դեմքերի արտահայտության մեջ, քան ճառերի իմաստի, հաղորդվեց և նրան: Նա շիրածարվեց իր մտքերից, բայց իրեն մեղավոր էր զգում ինչ-որ բանում և ցանկանում էր արդարանալ:

— Ես ասացի միայն, թե մեզ համար զոհաբերությունն անել ավելի հարմար կլիներ, եթե իմանայինք ի՞նչ կարիք կա, — ասում էր Պիեռը, աշխատելով բոլորից բարձր խոսել:

Միայն մոտիկ գտնլող ծերունին նայեց նրան, բայց իսկույն էլ նրա ուշադրությունը գրավեց այն ճիշը, որ ծայր առավ սեղանի մյուս կողմը:

— Այո, Մոսկվան կտրվի թշնամուն: Նա կբավի մեր մեղքը, — ճշում էր մեկը:

— Նա մարդկության թշնամի՝ է, — գոշում էր մի ուրիշը: — Թույլ տվեք խոսեմ... Պարոնայք, գուք սեղմում եք ինձ...

### XXIII

Այդ ժամանակ արագ քայլերով, ճանապարհ տալու համար ետ գնացած ազնվականների բազմության միջով, գեներալի մունդիրով, ուսուլը գցած ժապավենով ներս մտավ դուրս ցցված ծնոտով ու արագաշարժ աշքերով կոմս Ռաստոպչինը:

— Թագավոր կայսրը հիմա կգա, — ասավ Ռաստոպչինը, — ես այս բոպեին այնտեղից եմ գալիս: Ես կարծում եմ, որ այն դրությունը, որի մեջ գտնվում ենք, թույլ չի տակիս երկար ու բարակ դատել: Թագավորը շնորհ է արել հավաքել մեզ և վաճառականներին, — ասավ կոմս Ռաստոպչինը: — Այնտեղից հոսեն միլիոններ (նա ցույց տվեց վաճառականների գահ-ը ճը), իսկ մեր գործը սիմոֆ լինի աշխարհագոր տալ և չխնայել մեզ... Սա նվազագույնն է, որ մենք կարող ենք անել:

Խորհրդակցություններ սկսվեցին միայն սեղանի շուրջը հաստած ազնվատոհմ ծերունիների միջև: Ամբողջ խորհրդակցությունն անցավ ավելի քան խաղաղ: Այն մինչև իսկ տիսուր էր թվում, երբ նախկին ամբողջ աղմուկից հետո մեկ-մեկ լսվեցին ծերունիների ձայները, որ ասում էին — մեկը՝ «Համաձայն եմ», մյուսը բազմազանության համար. «Ես էլ նույն կարծիքի եմ», և այլն:

Քարտուղարին կարգադրվեց գրել Մոսկվայի ազնվականության որոշումը, թե մոսկվացիները, սմոլենցիների նման, նվիրում են 10 մարդ հազարից և լրիվ զգեստավորում: Նիստին մասնակցողները վեր կացան, կարծես թե թեթևացած, գոռաց-

թին ախոռները և անցան դահլիճով՝ ծալելուց հոգնած իրենց ոտները բաց անելու, որնէ մեկի թեր մտած ու խոսելով:

«Թագավորը՝, թագավորը», հանկարծ տարածվեց դահլիճում, և ամբողջ բազմությունը նետվեց դեպի մուտքը:

Ազնվականների պատերի միջով բացված լայն միջանցքով, թագավորը դահլիճ անցավ: Բոլոր դեմքերն արտահայտում էին հարգալիր ու երկյուղած հետաքրքրություն: Պիեռը բաւական հեռու էր կանգնած և շկարողացավ լավ լսել թագավորի ճառը: Նա հասկացավ միայն, թե թագավորը խոսում է այն վտանգի մասին, որի մեջ գտնվում էր պետությունը, և այն հույսերի մասին, որ նա դնում էր Մոսկվայի ազնվականության վրա: Թագավորին պատասխանեց մի ուրիշ ձայն, հաղորդելով ազնվականության հենց նոր կայացրած որոշումը:

— Պարոնայք, — ասավ թագավորի դողացող ձայնը:

Բազմությունը շրջունով շարժվեց ու նորից լոեց, և Պիեռը պարզ լսեց թագավորի այնքան դուրեկան-մարդկային ու զգացված ձայնը, որ ասում էր.

— Ես երբեք չեմ կասկածել ուսւ ազնվականության շանափրությանը: Բայց այսօր կատարված գերազանցեց իմ սպասելիքները: Ծնորժակալություն ձեզանից հայրենիքի անունից: Պարոնայք, աշխատեք գործել, — ժամանակն ամեն բան թանկ է...

Թագավորը լոեց, բազմությունն սկսեց խմբվել նրա շուրջը և ամեն կողմից լսվում էին խանդավառ բացականշություններ:

— Այո, ամեն բանից ավելի թանկ է... Թագավորի խոսքը, — հեկելալով ասավ ետքից Իլյա Անդրեյիչ ձայնը, որ ոչինչ չէր լսել, բայց ամեն ինչ հասկացել էր յուրովի:

Ազնվականության դահլիճից թագավորն անցավ վաճառականության դահլիճը: Նա այնտեղ մնաց մոտ 10 րոպե: Պիեռն ուրիշների թվում տեսավ թագավորին, որը վաճառականության դահլիճից դուրս էր գալիս խանդավառքի արցունքն աշխարհին: Ինչպես հետո իմացան, թագավորն հենց որ ճառն սկսում է վաճառականների առաջ, արցունքները ցայտում են նրա աշխարհից և նա այն վերջացնում է դողացող ձայնով: Նրա Պիեռը տեսավ թագավորին, նա դուրս էր գալիս երկու վաճառականի ուղեկցությամբ: Մեկը ծանոթ էր Պիեռին, դա գեր կապալառուն էր, մյուսը բաղաքաղլովիր, նիհար նեղա-

մորուք դեղին դեմքով: Նրանք երկուսն էլ լաց էին լինում: Նիհարի աշքում արցունքներ կային, բայց գեր կապալառուն լալիս էր երեխային նման, և շարունակ կրկնում:

— Մեր կյանքն էլ, կայքն էլ վերցրո՞ւ, ձերդ մեծություն:

Պիեռն այդ րոպեին այլևս ոչինչ չէր զգում բացի այն, որ ցանկանում էր ցուց տալ, թե ամեն ինչ ոչինչ է իր համար և թե նա պատրաստ է ամեն բան զոհաբերել: Սահմանադրական ուղղություն ունեցող իր ճառը նրան ներկայանում էր որպես հանդիմանություն, և նա առիթ էր փնտրում հարթելու այն: Իմանալով, որ կոմս Մամոնովը գունդ է նվիրում, նեղությունը հենց նույն տեղը հայտարարեց կոմս Ռաստոպչինին, թե ինքը տալիս է 1000 մարդ և նրանց պահելու ծախսը:

Ծերունի Ռոստովը առանց արցունքի շկարողացավ կնոջը պատմել այն, ինչ տեսել էր, և հենց այդտեղ համաձայնեց Պետյայի խնդիրքին և ինքը գնաց նրան գրել տալու:

Մյուս օրը թագավորը մեկնեց: Հավաքված բոլոր ազնվականները մունդիրները հանեցին, նորից տեղավորվեցին տներում ու ակումբներում, և տնքալով ու հառաջելով հրամաններ տվին կառավարիչներին աշխարհազորի մասին, և զարմանում էին այն բանի վրա, թե իրենք ինչ արին:

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

### I

Նապոլեոնն Ռուսաստանի դեմ պատերազմ սկսեց այն պատճառով, որ չէր կարող Դրեզդեն շգալ, չէր կարող Հռանալ մեծարանքներից, չէր կարող լեհական մունիքիր շագանել, չնայած թարկվել Հունիսյան առավոտի խրախուսիչ տպավորությանը, չէր կարող զսպել իր զայրույթի բռնկումները Կուրակինի և ապա Բալաշչի ներկայությամբ։

Ալեքսանդրը հրաժարվեց ամեն տեսակ բանակցություններից այն պատճառով, որ ինքն անհատապես վիրավորված էր զգում իրեն։ Բարկլայ-դե-Տոլլին աշխատում էր լավագույն կերպով վարել բանակը նրա համար, որպեսզի կատարի իր պարտքը և արժանի լինի մեծ զորավարի փառքի։ Խոստովը գրոհեց ֆրանսացիների վրա այն պատճառով, որ նա չէր կարող զսպել հարթ դաշտերով սլանալու իր ցանկությունը։ Եվ ճիշտ այդպես, իրենց անհատական հատկությունների, իրենց սովորությունների, պայմանների ու նպատակների համեմատ էլ գործում էին այն բոլոր մնացած անհաշիվ անձինք, որոնք մասնակցում էին այդ պատերազմին։ Նրանք երկնչում էին, սնափառություն էին անում, ուրախանում էին, վրդովվում էին, դատում ու տրամարանում էին, ենթադրելով, որ իրենք գիտեն այն, ինչ անում են, և որ անում են իրենց համար, մինչդեռ նրանք բոլորը պատմության ակամա գործիքներ էին և կատարում էին իրենց համար անհայտ, բայց մեզ համար պարզ ու հասկանալի մի գործ։ Այդ էր բոլոր պրակտիկ գոր-

ծիչների անփոփոխ ճակատագիրը, և նրանք այնքան ավելի են կաշկանդված լինում, որքան ավելի բարձր են կանգնած մարդկային հինգրիախայում։

Այժմ 1812 թվականի գործիչները վաղուց արեն հեռացել են ասպարեզից, նրանց անհատական շահերն անհետ չքացել են, և միայն այն ժամանակվա պատմական արդյունքներն են մեր առջև։

Իրենց անձնական նպատակներին հասնել ձգտող այդ բոլոր մարդկանց՝ նախախնամությունն ստիպում էր նպաստել մի հսկայական արդյունքի իրավործմանը, մի արդյունք, որից ոչ մի մարդ (ոչ Նապոլեոնը, ոչ Ալեքսանդրը, և ոչ էլ առավել ևս պատերազմին մասնակցածներից որևէ մեկը) որևէ ակնկալություն չուներ։

Այժմ մեզ համար պարզ է, թե 1812 թվականին ինչն էր ֆրանսական բանակի կործանման պատճառը։ Ոչ ոք չի վիճի, որ Նապոլեոնի զորքերի կործանման պատճառը մի կողմից այն էր, որ նրանք առանց ձմեռային արշավանքի պատրաստությունը տեսնելու ուշ պահին մուտք գործեցին Ռուսաստանի խորքը, իսկ մյուս կողմից՝ այն բնույթը, որ ստացավ պատերազմը ուսւական քաղաքներն այրելու և ուսւ ժողովրդի մեջ դեպի թշնամին ատելություն առաջանալու պատճառվ։ Բայց այն ժամանակ ոչ միայն ոչ ոք չէր նախատեսում այն (ինչ որ այժմ ակներև է թվում), որ միայն այդ ճանապարհով կարող էր ոչնչանալ 800-հազարանց, աշխարհի լավագույն բանակը, որն ամենալավ զորավարի առաջնորդությամբ կովի էր բռնըվել կրկնակի թույլ ու անփորձ ու նույնպիսի անփորձ զորավարներ ունեցող ոսւսական բանակի հետ։ Ոչ միայն ոչ չէր նախատեսում այդ, այլև ոսւսների բոլոր ջաները միշտ էլ ուղղված էին այն կողմ, որ խանդարեն հենց այն բանին, որն և միայն կարող էր փրկել Ռուսաստանը, իսկ ֆրանսացիների բոլոր ջաները, չնայած նրանց փորձառությանը և Նապոլեոնի այսպես կոչված ուղղմական հանճարին, ուղղված էին այն կողմ, որ մինչև ամառվա վերջը ձգվեն, իրենց բանակի ծայրը հասցնեն Մոսկվա, այսինքն՝ անեն հենց այն, ինչ պետք է կործաներ նրանց։

1812 թվականի վերաբերյալ իրենց պատմական երկերում ֆրանսական հեղինակները շատ են սիրում խոսել այն մասին,

թե ինչպես նապուենն զգացել է իր զորագիծը երկարաձգելու վտանգավորությունը, թե ինչպես նա ճակատամարտ է որուել, թե ինչպես նրա մարշալները խորհուրդ են տվել նրան կանգ առնել Սմոլենսկում, և այլ նման փաստարկումնե՛ր, որոնցով ուղում են ապացուցել, որ իբր թե այն ժամանակ արդեն ֆրանսական բանակի առաջնորդները հասկացել էին իրենց ձեւնարկած արշավանքի վտանգավորությունը: Իսկ ուստի հեղինակներն ավելի ևս շատ սիրում են խոսել այն մասին, որ հենց սպատերագմբ սկզբից սկյութական պատերազմը վարելու ժրագիր է եղել, այն է՝ ծրագրված է եղել նապոլեոնին գրագել գեպի Ռուսաստանի խորքը, և այդ ծրագիրը ուժանք վերագրում են Պֆուլին, ոմանք ինչ-որ ֆրանսացու, ոմանք՝ Տոլին, ոմանք՝ իրեն, Ալեքսանդր կայսեր և Հիշատակում են ինչ-որ զրույթուններ, ծախագծեր ու նամակներ, որոնց մեջ իրոք ակնարկներ կան այդ գործելակերպի մասին: Բայց կատարվածը նախատեսելու վերաբերյալ այդ բոլոր ակնարկները, թե ֆրանսացիների և թե ոուսների կողմէց այժմ բերվում են միայն այն պատճառով, որ դեպքն արդարացրեց այդ ակնարկները: Եթե դեպքը չկատարվեր, ապա այդ տեսարկները կմոռացվեին ճիշտ այնպես, ինչպես այժմ մոռացված են հաշտարավորությունները հակառակ ակնարկներ ու ենթադրություններ, որ այն ժամանակ տարածված էին, բայց որոնք շարդարացան, ուստի և մոռացվեցին: Ցուրաքանչյուր կատարվող դեպքի վախճանի մասին միշտ էլ այնքան շատ ենթադրություններ են ինում, որ ինչով էլ որ վերջանա դեպքը, միշտ էլ կգտնվեն մարդկի, որոնք կասեն. «Ես զե՞ս այն ժամանակ ասի, որ այդ այդպիս կլինի», բոլորովին մուսանալով, որ անթիվ ու անհամար ենթադրությունների թվում եղել են և միանգամայն հակառակ ենթադրություններ:

Այն, որ Նապուենք դժուակցել է գորագիծը երկարաձգելու վտանգավորությունը և այն, որ ոուսները նպատակ են ունեցել թշնամուն գրավել դեպի երկրի խորքը — այնպիսի ենթագրություններ են, որոնք անկասկած պատկանում են Հիշյալ կարգի ենթադրությունների թվին, և պատմագիրները միայն բոնագրոսիկ կերպով կարող են նապուենին այդպիսի նկատումներ վերագրել, իսկ ուստի զորագետներին՝ այդպիսի ժրագրեր: Բոլոր փաստերն էլ միանգամայն հակառակ են այդ-

ենթադրություններին: Պատերազմի ամբողջ ընթացքում ուսւները ոչ միայն ցանկություն չեն ունեցել ֆրանսացիներին գրավել, քաշել գեպի Ռուսաստանի խորքը, այլ, ընգհակառակը, ամեն ինչ արվում էր նրա համար, որ թշնամուն կանգնեցնեն հենց այն ժամանակ, երբ նա դեռ նոր էր Ռուսաստան մտել: Եվ ոչ միայն նապուենը չէր վախենում իր զորագիծը երկարացնելուց, այլև միշտ ուրախանում էր, երբ մի քայլ առաջ էր գնում, ուրախանում էր այնպես, ինչպես հաղթանակ տարած մարդը և խիստ ծովորեն, ոչ այնպես, ինչպես իր նախորդ արշավանքների ժամանակ, ճակատամարտ էր որոնում:

Պատերազմի հենց սկզբից մեր զորաբանակները կտրված էին միմյանցից և այն միակ նպատակը, որին մենք ձգտել ենք, եղել է այն, որ միացնենք դրանց. մինչդեռ նահանջելու ու թշնամուն երկրի խորքը քաշելու համար մեր զորաբանակները միացնելուց ոչ մի շահ չէր լինի: Կայսրը գտնվում էր բանակում՝ նրան ոգևորելու և ոուսական հողի ամեն մի թիզը պաշտպանելու համար, և ոչ թե նահանջելու համար: Պֆուլի ծրագրով կազմակերպվում է Դրիսսայի հսկայական ճամբարը և այնուհետև նահանջելու ոչ մի մտադրություն չի լինում: Թագավորը նախատինք է տալիս գլխավոր հրամանատարներին նահանջի յուրաքանչյուր քայլի համար: Կայսրը չէր կարողանում հաշտվել ոչ միայն Մոսկվան կրակի ճարակ դարձնելու մտքի հետ, այլ այն բանի հետ, որ թշնամին կարող էր Սմոլենսկ հասնել, և երբ բանակները միանում են, ապա թագավորը վրդովվում է նրա համար, որ Մոսլենսկը գրավված է և հրկիվված, և որ նրա պատերի տակ գլխավոր ճակատամարտ չեն տվել:

Այսպես է մտածում թագավորը, իսկ ուստի զորապետները և բոլոր ուստի մարդիկ ավելի ևս վրդովվում են այն մտքից, որ մերոնք նահանջում են դեպի երկրի խորքը:

Նապուենն իր զորքը մասերի բաժանելով, շարժվում է գեպի երկրի խորքը և ճակատամարտի բռնվելու մի քանի առիթ է բաց թողնում: Օգոստոսին նա Մոսլենսկումն է և մտածում է միայն այն մասին, թե ինչպես առաջ շարժվի, թեև, ինչպես մենք այժմ տեսնում ենք, այդ առաջիսաղացումը նրա համար պարզապիս կործանարար է:

Փաստերն ակնհայտ կերպով ցուցի ևն տալիս, որ ոչ նապունն էր նախատեսում Մոսկվայի վրա արշավելու վտանգավորությունը, ոչ էլ Ալեքսանդրն ու ուստ զորապետներն էին մտածում Նապոլեոնին երկրի ներսը քաշիու մասին, այլ մտածում էին դրա հակառակը: Այն, որ Նապոլեոնը հասավ մինչ' երկրի խորքը, այդ տեղի ունեցավ ոչ թե որեւէ մեկի ծրագրով (ոչ ոք չէր էլ հավատում դրա հնարավորությանը), այլ կատարեց պատերազմին մասնակցած մարդկանց ինտ-րիգների, նպատակների ու ցանկությունների բարդագույն խաղի հետևանքով, մարդիկ, որոնք չէին նախատեսում այն, ինչ պիտի լինի, և այն, ինչ Խուսաստանի միակ փրկությունն էր: Ամեն ինչ կատարվում է հանկարծակի, պատերազմի ըսկրգում բանակները բաժան-բաժան են: Մենք աշխատում ենք նրանց միացնել մի պարզորդ նպատակով — ճակատամարտ տալ և կանգնեցնել թշնամու առաջխաղացումը, բայց ձգուելով միացնել բանակները և խուսափելով կովի բրո-նըկել հզորագույն թշնամու հետ և ակամա նահանջելով սուր անկյունով, մենք ֆրանսացիներին հասցրինք Սմոլենսկ: Բայց քիչ է ասել, թե մենք նահանջում ենք սուր անկյունով այն պատճառով, որ ֆրանսացիներն առաջ են շարժվում երկու բանակների արանքով, — այդ անկյունն ավելի ևս սուր է դառ-նում և մենք շարունակում ենք նահանջել այն պատճառով, որ Բարկլայ-դե-Տոլին, այդ ոչ ժողովրդական գերմանացին, ատե-լի է Բագրատիոնին (որը պետք է անցներ նրա հրամանատարության ներքո), և Բագրատիոնը, լինելով 2-րդ բանակի հրամա-նատար, աշխատում է որքան կարելի է ուշ միանալ Բարկլա-լին, որպեսզի շանցնի նրա հրամանատարության տակ: Բա-գրատիոնը երկար ժամանակ չի միանում (թեև այդ է բոլոր իշխանավոր մարդկանց գլխավոր նպատակը) այն պատճառով, որ նրան թվում է, թե իր այդ գործողությամբ նա վտանգի մեջ է դնում իր բանակը և թե իրեն համար ամենից ավելի ձեռ-նատու է նահանջել ավելի ծախ և ավելի հարավ, անհանգստաց-նելով թշնամուն թեից ու թիկունքից և լրացնելով իր բա-նակի կազմը Ուկրաինայում: Մինչդեռ թվում է, որ նա այդ հնա-րել է հենց այն պատճառով, որ չի ցանկանում ենթարկվել ատելի և իրենից աստիճանով կրտսեր դերմանացի Բարկլային:

Կայսրը զտնվում է բանակում, որպեսզի ոգևորի նրան, իսկ այն, որ նա ներկա է և չգիտի, թե ինչ որոշում ընդունի, և դրա հետ միասին այն բազմաթիվ ծրագրներն ու խորհրդականնե-րը, որոնք շրջապատում էին կայսեր — պայմաններ էին, որոնք մեռցնում էին 1-ին բանակի գործողությունների ուժն ու եռանդը, և բանակը նահանջում է:

Մտադրություն կար Դրիսսայի ճամբարում կանգ առնել: Բայց Պառլուշին, որը ձգտում էր գլխավոր հրամանատար դառնալ, անսպասելի կերպով իր եռանդով ազդում է Ալեք-սանդրի վրա, և Պփուլի ամբողջ ծրագիրը մի կողմ է դրվում, և ամբողջ զրծք հանձնվում է Բարկլային: Բայց որովհետև Բարկ-լայը վստահություն չի ներշնչում, ուստի և նրա իշխանու-թյունը սահմանափակում են: Բանակները բաժան-բաժան են եղած, չկա միասնական հրամանատարություն, Բարկլայը ժողովրդականություն չի վայելում: Բայց այդ խառնաշփոթ դրությունը, ուժերի ցրվածությունը և գերմանացի գլխավոր հրամանատարի ոչ ժողովրդականությունը մի կողմից առաջ են բերում անվճռականության ու ճակատամարտից խուսափե-լու տրամադրություն (ճակատամարտից խուսափելու անկա-րելի կիխներ, եթե զորաբանակները միասին լինեն և եթե հրամանատար չլինեն Բարկլայը), մյուս կողմից ավելի և ավելի մեծ վրդովմունք գերմանացիների գեմ և հայրենասի-րական ոգու ավելի բուռն արտահայտություն:

Վերջապես թագավորը մեկնում է բանակից, և նրա մեկ-ներու միակ ու հարմարագույն պատրիարք է գարձվում այն միտքը, թե անհրաժեշտ է, որ թագավորը մայրաքաղաքներում ոգևորի ժողովրդին և ժողովրդական պատերազմ առաջցնի: Թագավորի այս ուղևորումը Մոսկվա նմանապես եռապատկում է ուսւ զորքի ուժը:

Թագավորը բանակից մեկնում է նրա համար, որ իր ներկա-յությամբ շխախտի գլխավոր հրամանատարի իշխանության միասնականությունը, հույս ունենալով, որ ավելի կտրուկ միջոցներ ձեռք կառնվեն: Բայց զորքերի հրամանատարական կաղմի դրությունն ավելի ևս խճճվում է ու թուլանում: Բենիգ-սենը, մեծ իշխանը և մի խումբ գեներալ-ազդուտաններ մնում են բանակում այն նպատակով, որ հետեւն գլխավոր հրամանատարի զործողություններին և հրահրեն նրա եռանդը,

և Բարկլայը, ավելի ևս կաշկանդիքած զգալով իրեն թագավորի այդ բոլոր աշխերի հսկողությունից, ավելի ևս գգուց է դաս-նում՝ վճռական գործողությունների դիմելու համար և ճակա-տամարտից խույս տալիս:

Բարկլայը զգուշության կողմնակից է: Թագաժառանգը գա-վաճանության ակնարկներ է անում և պահանջում գլխավոր ճակատամարտ: Լյուբոմիջը սկին, Բրոնիցին, Վլոցին, և նր-մաններն այնպես են ուշցում այդ ամբողջ ազմուելը, որ Բարկ-լայը, թագավորին գրություններ տանելու պատրվակով էին գեներալ-ազյուտանաներին Պետքբուրգ է ուղարկում և քա-ցահայտ պայքար է սկսում Բենիկաններ և մեծ իշխանի վեմ:

Վերջապես Սմոլենսկում, որքան էլ որ այդ թագատիոնը չէր ցանկանում, բանակները միանում են:

Թագրատիոնը կառեթավ մասենում է այն տանը, որն զբա-ղեցնում էր Բարկլայը: Բարկլայը գցում է շարֆը, գուրս է գալիս իրենից աստիճանով բարձր թագրատիոնի առաջ և գե-կույց է տալիս նրան: Չնայած իր աստիճանի ավագությանը, թագրատիոնը մնամուգությամբ ենթարկվում է Բարկլայը: բայց, ենթարկվելով, նա ավելի քիչ է համաձայնում նրան: Թագավորի հրամանով՝ թագուատիոնը զեկույց է ներկայացնում նրան: Նա Արակեակն գրում է, «Թող իմ թագավորի կամքը լինի, բայց ես ոչ մի կերպ մինխաւրի (Բարկլայի) հետ չեմ կա-րող... ի սեր աստծո, ուղարկեցեք ինձ որևէ տեղ թեկուզ գեն-դի հրամանատարի պաշտոնով, բայց այստեղ մնակ չեմ կարող. ամբողջ գլխավոր կայանը լի է գերմանացիներով, այնպես որ ուսւ մարդու համար այստեղ ապրելն անհնարին է, և դրանից ոչ մի օգուտ չի լինի: Ես կարծում էի, որ ճշմարտությամբ ծառայում եմ թագավորին ու հայրենիքիս, բայց իրավես դուրս է գալիս, որ ես Բարկլային եմ ծառայում: Խոստովանում եմ, որ չեմ ցանկանում»: Բրոնիցիների, Վինցենգերութեների և նմանների խումբն ավելի է թունավորում գլխավոր հրամա-նատարների հարաբերությունները և միասնականությունն ավելի է տուժում: Պատրաստվում են հարձակում գործել ֆր-րանսացիների վրա Սմոլենսկի առաջ: Դեներալ են ուզարկում գիրքերը գիտելու համար: Այդ գեներալը ատելով Բարկլային, գնում է իր բարեկամի մոտ, որը կորպուսի հրամանատար էր, և ամբողջ օքը նրա մոտ անցկացնելուց հետո վերադառնում է

Բարկլայի մոտ և սկսում է ըստ ամենայնի քննադատել այն մարտադաշտը, որը ինքը չի տեսել:

Մինչ վեճներ և ինտրիգներ են տեղի ունենում ապագա մար-տագաշտի մասին, մինչ մերոնք որոնում են ֆրանսացիներին, չգտնելով նրանց, ֆրանսացիները դեմ են առնում նեկերով-սկու դիվիզիային և մոտենում են հենց Սմոլենսկի պատերին:

Պետք է անսպասելի ճակատամարտ ընդունել Սմոլենսկում՝ հաղորդակցության ճանապարհները փրկելու հա-մար: Ճակատամարտը տեղի է ունենում: Հազարավոր մարդիկ են սպանվում երկու կողմից:

Մերոնք Սմոլենսկը թողնում են՝ թագավորի և ամբողջ ժողովրդի կամքին հակառակ: Բայց Սմոլենսկն այրում են իրենք բնակիչները, որոնց խաբել էր նահանգապետը. և քայրայլած ու տնավեր բնակիչները, օրինակ ցույց տալով մյուս սուսնե-րին, գնում են Սոսկվա, մտածելով միայն իրենց կորուստ-ների մասին և ատելություն հրահրելով գետի թշնամին: Նա-պուենն առաջ է գնում, մենք նահանջում ենք, և տեղի է ունե-նում հենց այն, ինչ պետք է հաղթեր նապուենին:

## II

Որդու մեկնելու հետեւյալ օրը իշխան նիկոլայ Անդրեյիշն իր մոտ կանչեց իշխանադուստր Մարիային:

— Հը, գո՞հ ես հիմա, — ասավ նա դստեր, — կովեցրիր որդուս հետ: Գո՞հ ես: Քեզ էլ հենց այդ էր հարկավոր: Գո՞հ ես... Այդ ինձ ցավ է պատճառում, ցավ: Ես ծեր եմ և թույլ, և դու այդ էիր ուզում: Դե, ուրախացիր, ուրախացիր...

Եվ դրանից հետո իշխանադուստր Մարիան մի ամբողջ շա-բաթ հորը շտեսավ: Ենք իշխանը հիվանդ էր և իր առանձնա-սենյակից գործ չէր գտիլիս:

Ի զարմանս իր՝ իշխանադուստր Մարիան նկատեց, որ ծեր իշխանն այդ ժամանակամիջոցում իր մոտ չէր թողնում և ուղարկենին: Սենակ Տիխոնն էր խնամում նրան:

Մի շաբաթից հետո իշխանը գործ եկավ և սկսեց նորից նախկին կյանքը, առանձին եռանդով զբաղվելով կառուցում-ներով ու պարտեզներով, դադարեցնելով բոլոր իր նախկին հարաբերությունները ուղարկենի հետ: Նրա տեսքը

սառը տոնը իշխանադուստր Մարիայի նկատմամբ, կարծես ասում էին վերջինիս. «Այ տեսնում ես, դու բաներ հնարեցիր իմ վրա, սուս բաներ ասիր իշխան Անդրեյին իմ՝ դեպի արդ ֆրանսուհին ունեցած հարաբերության մասին և ինձ կովեցրիր նրա հետ, բայց տեսնում ես՝ ինձ պետք չեք ո՛չ դու, ո՛չ ֆը-րանսուհին»:

Օրվա կեսը իշխանադուստր Մարիան անց էր կացնում Նիկոլուշկայի մոտ, հետևելով նրա դասերին, և ինքը տալիս էր նրան սուսաց լեզվի ու երաժշտության դասեր և զրուցում էր Դեսալի հետ. օրվա մյուս մասը նա անց էր կացնում գրքերի, պառակ դայակի և աստծու մարդկանց հետ, որոնք երբեմն տան ետին մուտքից գալիս էին նրա մոտ:

Պատերազմի մասին իշխանադուստր Մարիան մտածում էր այնպես, ինչպես կանայք են մտածում պատերազմի մասին: Նա վախենում էր եղբոր համար, որ այստեղ էր, սարսափում էր, չհասկանալով այն, մարդկային դաժանությունից, որն ստիպում էր նրանց սպանել միմյանց. չէր հասկանում այս պատերազմի նշանակությունը, որ նրան թվում էր նույնպիսի մի պատերազմ, ինչպես և բոլոր նախորդ պատերազմները ։ Նա չէր հասկանում այս պատերազմի նշանակությունը, չնայած այն բանին, որ Դեսալը, իր մշտական զրուցակիցը, բուռն կերպով հետաքրքրվելով պատերազմի ընթացքով, աշխատում էր իր խոհերն ու մտքերը բացատրել նրան, և չնայած այն բանին, որ նրա մոտ եկող աստծու մարդկի բոլորը յուրատեսակ սարսափով էին խոսում ժողովրդական լուրերի մասին՝ ների արշավանքի առթիվ, և չնայած այն բանին, որ Ժյուլին, այժմ իշխանուհի Դրուբեցկայա, որ նորից նամակագրություն էր սկսել նրա հետ, Մոսկվայից նրան գրում էր հայրենասիրական նամակներ:

«Ես ձեզ գրում եմ ուսերեն, իմ բարի բարեկամ, — գրում էր Ժյուլին, — որովհետև ատելություն ունեմ դեպի բոլոր ֆրանսացիները, հավասարապես և դեպի նրանց լեզուն, որը ես շեմ կարող լսել, խոսել... Մենք Մոսկվայում բոլորս խանդակառ հիացում ունենք դեպի մեր պաշտելի կայսրը:»

Խեղճ ամուսինս շարշարվելով ու քաղցած օրերն անց է կացնում ջնուղների պանդոկներում. բայց իմ ունիցած նորություններն ալիև են ոգևորում ինձ:

Դուք, երկի, լսել եք Ռանսկու հերոսական քաջագործության մասին, որ երկու որդիներին դրկելով ասել է. «Կմեռնենք սրանց հետ, բայց անդրդպելի կմնանք»: Եվ իրոք, թեև թշնամին երկու անգամ ուժեղ էր մեղնից, բայց մենք անդրդպելի մնացինք: Մենք ժամանակն անցնում ենք, ինչպես կարողանում ենք. բայց պատերազմում պետք է լինի պատերազմավարի: Իշխանադուստր Ալինան և Sophie-ն ամբողջ օրերով նստում են հետո, և մենք, կենդանի մարդկանց դժբախտ այրիներս, ծվատ բանալով՝ սքանչելի զրուցներ ենք անում. միայն դուք եք պակասում, բարեկամս...» և այլն:

Իշխանադուստր Մարիան այս պատերազմի նշանակությունը չէր հասկանում առավելապես այն պատճառով, որ ծեր իշխանը երբեք չէր խոսում նրա մասին, չէր ընդունում այն և ճաշի միջոցին ծիծաղում էր Դեսալի վրա, որ խոսում էր այդ պատերազմի մասին: Իշխանի ատոն այնքան հանգիստ ու վըստաց էր, որ իշխանադուստր Մարիան, առանց կշռադատելու, հավատում էր նրան:

Ամբողջ հուլիս ամիսը ծեր իշխանը շափականց գործունակ էր և անզամ աշխատացած: Նա ևս մի նոր այդի տնկեց և մի նոր շենք շնորհ ծառաների համար: Միակ բանը, որ անհանգստացնում էր իշխանադուստր Մարիային, այն էր, որ ծեր իշխանը քիչ էր քնում, խախտելով առանձնասենյակում քնելու իր սովորությունը, նա ամեն օր փոխում էր քնելու տեղը: Մերթ պատվիրում էր պատերազմական իր մահճակալը գնել ճեմարահում (գալերեա). մերթ էլ մնում էր հյուրասրահի բազմոցի վրա կամ վղատերյան բազկաթուում ու ննջում, առանց հանգելու, և այդ ժամանակ ոչ թե ուղարկենք, այլ փոքրիկ Պետրուշան էր կարդում նրա համար. մերթ նա գիշերում էր սեղանատանը:

Օգոստոսի մեկին իշխան Անդրեյից ստացվելց Երկրորդ նամակը: Առաջին նամակում, որ ստացվել էր նրա մեկնելուց անմիջապես հետո, իշխան Անդրեյը խոնարհաբար ներողություն էր խնդրում Հորից նրա համար, որ թույլ էր տվել նրան ասելու, և խնդրում էր նրան առաջլա պես ողորմած լինել դեպի ինքը: Ծեր իշխանն այդ նամակին պատասխանեց սիրալիր նամակով ու այդ նամակից հետո ֆրանսուհուն հեռացրեց իրենից: Իշխան Անդրեյի երկրորդ նամակը, որ գրել էր նա վիտերսկի

մոտից, նրանից հետո, երբ ֆրանսացիները գրավել էին այդ քաղաքը, բովանդակում էր ամբողջ կովի կարճ նկարագրություն՝ իր պլանով, որը գծված էր նամակում, և խորհրդածություններ կովի հետագա լնթացքի մասին։ Այդ նամակում իշխան Անդրեյը նկարագրում էր, թե որքան անհարմարություններ ունի հոր դրությունը պատերազմի դաշտին մոտ գտնվելու, զորքերի հենց շարժման գծի վրա լին՝ լու պատճառվ, ու խորհուրդ է տալիս նրան մեկնել Մոսկվա։

Այդ օրը ճաշին, Դեսալի խոսքերի առթիվ, որն ասում էր, թե, ինչպես երկում է, ֆրանսացիներն արդան մտել են վիտերսկ, ծեր իշխանը հիշեց իշխան Անդրեյի նամակը։

— Իշխան Անդրեյից նոր եմ ստացել, — ասավ նա իշխանագուստը Մարիային, — չես կարդացե՞լ։

— Ոչ, ոոո քեզ! — երկուղած պատասխանեց իշխանագուստը։

Նա չէր կարող կարդալ այն նամակը, որի ստացման մասին չէր էլ լսել։

— Նա գրում է այս պատերազմի մասին, — ասավ իշխանն այն, իր համար սովորական դարձած, արհամարհական ժպիտով, որով խոսում էր միշտ ներկա պատերազմի մասին։

— Պետք է որ շատ հետաքրքրական լինի, — ասավ Դեսալ, — իշխանն ի վիճակի է իմանալու…

— Ա՛խ, շատ հետաքրքրական է, — ասավ ու-լլե Բուրիինը։

— Գնացեք բերեք, — դիմեց ծեր իշխանը ու-լլե Բուրիին, — դիտեք, փոքրիկ սեղանի վրա է, պրես-պապիկի տակ։

Ու-լլե Բուրիինը ուրախ վեր թուավ։

— Ախ, չէ, — գեմքը խռժողելով բոռաց նա: — Դո՛ւ գընա, Միխայիլ իվանիչ։

Միխայիլ իվանիչը վեր կացավ ու գնաց իշխանի առանձնասենյակը։ Բայց հենց նա դուրս գնաց, ծեր իշխանը, անհանգիստ շուրջը նայեց, անձեռոցիկը նետեց ու ինքը գնաց։

— Ոչինչ չեն կարողանում, ամեն ինչ կիսառնեն։

Մինչ նա գնում էր, իշխանադուստը Մարիան, Դեսալը, ու-լլե Բուրիինը և անգամ նիկոլուշկան անխոս իրար էին նայում։ Եսր իշխանը վերադարձավ հապճեպ քայլերով, Միխայիլ

իվանիչի ուղեկցությամբ, նամակն ու պլանը ձեռին, որոնք նա ոչի շտալով կարդալու հաջի ժամանակ, դրեց իր կողքին։

Անցնելով հյուրասրահ, նա նամակը հանձնեց իշխանագուստը Մարիային և, նոր շենքի պլանը փռելով իր առջև, որին հառնեց աշքերը, պատփիրեց նրան բարձր կարգաւ։ Նամակը կարդալով, իշխանագուստը Մարիան հարցականորեն նայեց հորը։ Իշխանը նայում էր նախագծին, ըստ երեսութիւն, իր մտքերի մեջ խորասուզված։

— Դուք այս մասին ի՞նչ եք կարծում, իշխան, — թույլ տվեց իրեն հարցում անել Դեսալը։

— Ե՞ս, ե՞ս... — կարծես տհաճությամբ արթնանալով՝ ասավ իշխանը, աշքերը շհեռացնելով շենքի նախագծից։

— Շատ հավանական է, որ պատերազմի դաշտը այդքան մոտենա մեզ...։

— Հա՞ հա՞ հա՞՝ Պատերազմի դաշտը, — ասավ՝ իշխանը — Ես ասել եմ և ասում եմ, որ պատերազմի դաշտը Խհաստանն է, և թշնամին Նեմանից գերս չի կարող անցնել։

Դեսալը գարմացած նայեց իշխանին, որ Նեմանի մասին էր խոսում, երբ թշնամին Դնեպրի մոտ էր արդեն. բայց իշխանագուստը Մարիան, մոռանալով Նեմանի աշխարհապական սիրքը, կարծում էր, թե այն, ինչ ասում էր հայրը, ճիշտ է։

— Զնհալի ժամանակ կիսեղդվին կեհաստանի ճահիճներում։ Նրանք միայն կարող են շտեսնել, — ասավ իշխանը, ըստ երեվույթին, մտածելով 1807 թվի արշավանքի մասին, որը նըրան թվում էր, տեղի է ունեցել ոչ այնքան հեռու օրերում։ Թենիգսենը պետք է առաջ մտներ Պրուսիա, զործն ուրիշ ընթացք կստանար...։

— Բայց, իշխան, — վեհերոտ ասավ Դեսալը, — նամակում խոսվում է Վիտերսկի մասին...։

— Ա, նամակո՞ւմ։ Այո... — զգո՞հությամբ խոսեց իշխանը։ — Այո, այո... — նրա դեմքը հանկարծ մոայլ արտահայտություն ստացավ։ Նա լոեց։ — Այո, նա գրում է, որ Փրանսացիները շարդված են, այդ ո՞ր գետի մոտ։

Դեսալն աշքերը խոնարհեց։

— Իշխանն այդ մասին ոչինչ չի գրում, — կամաց ասավ նա։

— Մի՞թե չի գրում։ Դե, ես ինքս հո չեմ Ցնարել։

— 139 —

Բոլորը երկար լուսմ էին:

— Այո, այո... Դե, Միխայիլ Իվանիչ, — հանկարծ ասավ նա, գլուխը բարձրացնելով և շենքի նախագիծը ցույց տալով, ասա, ինչպես պիտի դու այդ փոխես...

Միխայիլ Իվանիչը մոտեցավ նախագիծին, և իշխանը, խոսելով նրա հետ նոր շենքի նախագիծի մասին, բարկացած նայելով իշխանադուստր Մարիային ու Դեսալին, գնաց իր հարկարաժինը:

Իշխանադուստր Մարիան տեսավ Դեսալի շփոթված ու զարմացած հայացքը, որ հառել էր հոր վրա, նկատեց նրա լուսթյունը և ապշեց, տեսնելով, որ հայրը որոու նամակը մոռացել է Հյուրասրահի սեղանի վրա, բայց նա վախենում էր ոչ միայն խոսել ու հարցուիրձել Դեսալին նրա շփոթության ու լուսթյան պատճառի մասին, այլև վախենում էր մտածել այդ մասին:

Երեկոյան Միխայիլ Իվանիչը, որին ուղարկել էր իշխանը, եկավ իշխանադուստր Մարիայի մոտ՝ իշխան Անդրեյի նամակը տանելու, որը մոռացել էր Հյուրասրահում: Իշխանադուստր Մարիան նամակը տվեց: Թեև այդ նրան տհաճ էր, նա թույլ տվեց իրեն հարցնել Միխայիլ Իվանիչից, թե ի՞նչ է անում հայրը:

— Շարունակ մտահոգված են, — հարգալիր հեգնական Ժրուտով (որը ստիպեց իշխանադուստր Մարիային գունատվել) ասավ Միխայիլ Իվանիչը: — Շատ են անհանգստանում նոր շենքի համար: Մի քիչ կարդացին, իսկ հիմա, — ձայնը ցածրացնելով ասավ Միխայիլ Իվանիչը, — բյուրոյի մոտ, երկի, կտակով են զբաղված: (Վերջերս իշխանի սիրած զբաղումներից մեկն էր — զբաղվել այն թղթերով, որոնք պիտի մընային իր մահից հետո և որոնք նա կտակ էր անվանում):

— Իսկ Ալպատիչին ուղարկո՞ւմ են Սմոլենսկ, — հարցրեց իշխանադուստր:

— Ինչպես չէ, նա վաղուց արդեն սպասում է:

### III

Երբ Միխայիլ Իվանիչը նամակը ձեռին վերադարձավ առանձնասենյակը, իշխանն ակնոցը դրած, լուսամիոփը աշ:

քերին մոտ ու մոմերի լույսով, նստած էր բաց բյուրոյի առաջ, թղթերն իրենից հեռու պահած ձեռին, և փոքր ինչ հանդիսավոր գիրքով կարգում էր իր թղթերը (ումարկաները, ինչպես ինքն էր ասում), որոնք իր մահից հետո պետք է տրվեին թագավորին:

Երբ Միխայիլ Իվանիչը ներս մտավ՝ իշխանի աշերում արցունքներ կային, դրանք այն ժամանակվա հիշողությունների արցունքներն էին, երբ գրել էր այն, ինչ կարդում էր հիմա: Նա նամակն առավ Միխայիլ Իվանիչի ձեռից, զրեց գրաւնը, թղթերը տեղավորեց և կանչեց վաղուց արդեն սպասող Ալպատիչին:

Թղթի թերթիկի վրա նա գրել էր այն, ինչ իրեն հարկավոր էր բերել տալ Սմոլենսկից, և նա սենյակում, դռան մոտ սպասող Ալպատիչի կողքով անցուղարձ անելով, սկսեց հրամաններ տալ:

— Առաջինը — փոստի թուղթ, լսո՞ւմ ես, քսան տասնյակ, ա'յ սրա նման. ոսկեներից... ահա օրինակը. անպատճառ սրա նման լինի. լաք, զմուռու — Միխայիլ Իվանիչի գրածի համեմատ:

Նա անցավ սենյակով և նայեց հուշատեսրը:

— Հետո նահանգապետին անձամբ նամակ տալ գրանցումների մասին:

Հետո հարկավոր էին սողնակներ նոր կառուցող տան դրանեակների համար, անպայման այնպիսի ձեփի, որ հնարել էր ինքը իշխանը: Ապա հարկավոր էր պատվիրել մի փոքրիկ արկդ՝ կտակով պահելու համար:

Ալպատիչին հրամաններ տալը տեսեց երկու ժամից ավելի: Իշխանը դեռ բաց չը թողնում նրան: Նա նստեց, մտասուզվեց և, աշերու փակելով, ննչեց: Ալպատիչը շարժվեց:

— Դե, գնա, գնա. Եթե մի բան հարկավոր լինի, կուզարեկիմ:

Ալպատիչը դուրս եկավ: Իշխանը նորից մոտեցավ բյուրոյին, նայեց ներսը, ձեռով շոշափեց իր թղթերը, կրկին փակեց և նստեց սեղանի մոտ՝ նահանգապետին նամակ գրելու:

Ուշ էր արգեն, երբ նա վեր կացավ, նամակը կնքելով: Նա ուղարկում էր քնել, բայց գիտեր, որ քոնը չի տանի և որ ամենավայր մտքերը նրա ուղեղը պաշարում են անկողնում: Նա ձայն

տվլց Տիխոնին, անցավ սենյակները, որ ասի, թե որտեղ ա՞շ-կողին պատրաստեն այս գիշերվա համար: Նա քայլում էր, յուրաքանչյուր անկյուն շափելով:

Ամեն տեղ նրան վատ էր թվում, բայց ամենից վատթարը իր առանձնասենյալի բազմոցն էր: Այդ բազմոցը սարսափեց-նում էր նրան, հավանորեն, այն ծանր մտքերի պատճառով, որ որոճացել էր նա այդտեղ պառկած: Ոչ մի տեղ լավ չէր, բայց այնուամենայնիվ ամենից լավը բազմոցարանի ան-կյունն էր՝ դաշնամուրի ետև, նա այդտեղ երթեք չէր քնել:

Տիխոնը սպասավորի հետ անկողինը բերեց և սկսեց պատ-րաստել:

— Այդպես չէ', այդպես չէ', — բոռաց իշխանը և մի բա-ռորդի շափ ետ քաշեց անկյունից և ապա նորից մոտեցրեց:

«Ե, վերջապես, ամեն ինչ շակեցի, հիմա հան-գըստանամ», մտածեց իշխանը և թույլ տվեց, որ Տիխոնը հանի իր հագուստը:

Սրտնեղած ղեմքը կնճուելով այն ճիգերից, որ պետք էր գործ զնել կաֆտանն ու վարտիքը հանելու համար, իշխանը հանվեց, ծանրությամբ նստեց մահճակալի վրա և կարծես մտածմունքի մեջ ընկավ, արհամարհանքով նայելով իր դիղին շորացած ոտներին: Նա մտածմունքի մեջ չէր, այլ դանդաղում էր առաջիկա աշխատանքը կատարելու, որ ոտները ծանրու-թյամբ պիտի վերցներ և շրջվեր մահճակալի վրա: «Ե՛ս, ի՞նչ ծանը է, դժվար: Օ՛հ, գոնի շուտ վերջանային այս շարշարանք-ները, և դավի կազատեիք ինձ», մտածում էր նա: Նա, շուրթերը սեղմելով, քսանհազարերորդ անգամն արավ այդ ճիգը և պառ-կեց: Բայց նա հազիվ պառկել էր, երբ հանկարծ նրա անկազինը համաշափորեն շարժվեց նրա տակ՝ ետ ու առաջ, կարծես ծանրորեն շնչելով ու հրվելով: Այդ նրան պատահում էր գրեթե ամեն գիշեր: Նա բացեց հազիվ փակվող աշքերը:

— Հանգիստ չկա, անիծվածներ, — զայրացած քրթմքն-չաց նա ում-որ վրա: — Այո, այո, էլի ինչ-որ կարևոր մի բան կար, շատ կարևոր մի բան, որ թողի անկողնում հիշելոււ Սող-նակները: Ոչ, դրանց մասին ասի: Ոչ, ինչ-որ մի բան, ինչ-որ մի բան եղավ հյուրասրահում: Իշխանադրուատը Մարիան ինչ-որ բան ստեց: Դեսալը — այդ հիմարը — ինչ-որ բան ասավ: Գրպանում է ինչ-որ — չեմ հիշում:

— Տիշկա, ճաշին ինչի մասին էինք խոսում:

— Իշխան Միխայիլի...

— Լոի՛ր, լոիր: — Իշխանը ձեռը խփեց սեղանին: — Այո, գիտեմ, իշխան Անդրեյի նամակը: Իշխանադրուատը Մարիան կարդաց: Դեսալն ինչ-որ բան ասավ Վիտեբսկի մասին: Հիմա կկարդամ:

Նա Հրամայեց նամակը հանել գրանից և լիմոնադը ու մեղրամոմը վրան դրած սեղանը մոտեցնել մահճակալին և ինքը ակնոցը գնելով, սկսեց կարդալ: Այդտեղ միայն գիշերվա-յության մեջ, կանաչ լուսամփոփի տակից ընկնող թույլ լուսով, նա, նամակը կարդալով, առաջին անգամ մի ակըն-թարթում հասկացավ նրա նշանակությունը:

— Ֆրանսացիները Վիտեբսկ են, չորս անցումից հետո նրանք կարող են Սմոլենսկի մոռ լինել և գուցե, արդեն այն-տեղ են: Տիշկա', — Տիխոնը վեր թռավ: — Ոչ, հարկավոր չի, հարկավոր չի, — բոռաց նա:

Նա նամակը թաքցրեց մոմակալի տակ ու աշքերը փակեց: Եվ նրա առաջ պատկերացավ Դանուբը, պայծառ կեսօր, եղեղ-նուտ, ոռւսական ճամբարը, և նա, նա — ջահել զեներալ, դեմքին և ոչ մի կնճիս, առույզ, ուրախ ու կարմրադեմ մտնում է Պո-տյումիկինի նկարազարդ վրանը, և դեպի սիրեցյալն ունեցած նախանձի այրող զգացմունքը նույնքան ուժեղ, որքան և այս ժամանակ, հուզում է նրան: Եվ նա հիշում է այն բոլոր խոս-քերը, որ ասվեցին այն ժամանակ, Պոտյումիկինի հետ ունեցած առաջին հանդիպումին: Եվ նրան ներկայանում է լեցուն, գեղ-նությունը գեր դեմքի վրա, ոչ բարձր հաստ մի կին — մայր կայսրուհին, նրա ժապիտները, խոսքերը, երբ նա առաջին ան-գամ, փալարշելով, ընդունեց իրեն, և հիշում է նրա այդ դեմ-քը դիակառքի վրա և այն ընդհարումը ջուրովի հետ, երբ տեղի ունեցավ այն ժամանակ նրա դագաղի մոտ՝ թագուհու ձեռքին մոտենալու իրավունքի համար:

«Ախ, մարդ շուտ, շուտ վերադառնա դեպի այն ժամանակը, և որպեսզի այժմյանը՝ բոլորը որքան կարելի է շուտ, շուտ վեր-ջանա: որպեսզի նրանք ինձ հանդիսաւ թողնենք:

Լիսիե Գորին, իշխան Նիկոլայ Անդրեյիչ Բալկոնսկու կալվածը, գտնվում էր Սմոլենսկից 60 վերստ հեռու, նրա ետևը, և երեք վերստ հեռու Մոսկվայի ճանապարհից:

Նույն այն երեկո, երբ իշխանը կարգադրություններ էր անում Ալպատիշին, Դեսալը իշխանադուստր Մարիամից տեսակցություն խնդրելով, նրան Հայանեց, թե որովհետև իշխանը այնքան էլ առողջ չի և ոչ մի միջոց չի ձեռք առնում իր ապահովության համար, իսկ իշխան Անդրեյի նամակից երեսում է, որ Լիսիե Գորիում մնալը այնքան էլ ապահով չէ, ուստի նա խոնարհաբար խորհուրդ է տալիս իշխանադստեր, որ նա ինքը Ալպատիշի հետ նամակ ուղարկի Սմոլենսկ, նահանգապետին խնդրելով տեղեկացնել, թե ինչ դրության մեջ են գործերը և ինչ շափով վտանգ է սպառնում Լիսիե Գորիին: Դեսալը իշխանադուստր Մարիամի Համար նամակ գրեց նահանգապետին, որն ստորագրեց իշխանագուստորը, և այդ նամակը տվին Ալպատիշին, կարգադրելով Հանձնել այն նահանգապետին և, վտանգի դեպքում, վերադառնալ որքան կարելի է շուտ:

Բոլոր կարգադրություններն առնելով, Ալպատիշը տնեցիների ուղեկցությամբ, սպիտակ փետրե գլխարկ (իշխանի նվերը) դրած, ձեռնաշայտը ձեռին, հենց այնպես, ինչպես իշխանը, գուրս եկալ կաշվե ծածկույթով սայլակը նստելու, որ լծված էր երեք կուշտ աշխատ ձերբով:

Սայլակի զանգակը կապված էր և բոժոժների մեջ թուղթ էր դրված: Իշխանը ոչ ոքի թույլ չէր տալիս Լիսիե Գորիում զանգակով ու բոժոժներով կառք բշել: Բայց Ալպատիշը սիրում էր զանգակներ ու բոժոժներ հեռու ճանապարհ գնալիս: Ալպատիշի պալատականները — զեմսկին, գրասենյակի վարիը, խոհարարուհին — սեը, սպիտակը, երկու պառակ, կազակ-տղան, կառապանները և ուրիշ սպասավորներ ճանապարհ էին դնում նրան:

Աղջիկը նրա թիկունքի ետևն ու տակը դրեց շթե և փետրե փափուկ բարձեր: Պառակ բենին թաքում մի կապոց դրեց կառքի մեջ: Կառապաններից մեկը նստեցրեց նրան թից բոնածե-

— է, կանայք, կանայք, — հետով արագախոսությամբ ասավ Ալպատիշը ճիշտ այնպես, ինչպէս իշխանն էր խոսում, և կառք նստեց:

Աշխատանքների մասին վերջին կարգադրություններն անելով զեմսկուն և այդ բանում արդեն իշխանին շընդօրինակելով, Ալպատիշը գլխարկը վերցրեց ճաղատ գլխից և երեք անգամ խաչակնքեց երեսը:

— Եթե մի բան լինի... գուք վերադրձեք, Ցակով Ալպատիշը ի սեր Քրիստոսի, Խղճա մեզ, — բարձրածայն ասավ կինը, ակնարկելով պատերազմի և թշնամու մասին եղած լուրերը:

— Կանայք, կանայք, հավաքվել են, — ասավ Ալպատիշն ինքն իրեն և մեկնեց, նայելով շուրջը, դաշտերին, ուր տեղ-տեղ դեղնած հաճար էր, տեղ-տեղ խիտ, տակավին կանաչ վարսակ, տեղ-տեղ էլ նոր սկսել էին կրկնավար անել:

Ալպատիշը զնում էր, հրձվելով այս տարվա գարնանացանի հազվագեց բերքի վրա, նայելով հաճարի շերտ-շերտ դաշտերին, ուր տեղ-տեղ սկսել էին հնձել և խորհրդածում էր ցանքսի ու բերքահավաքի մասին և այն մասին, թե չի մոռացված արդյոք իշխանի որեւէ հրամանը:

Ճանապարհին ձիերին երկու անգամ կեր տալով, օգոստոսի 4-ի երեկոյան դեմ Ալպատիշը հասավ քաղաք:

Ճանապարհին Ալպատիշը հանդիպեց գորքերի ու մթերակիր գումարկի և առաջ անցավ: Սմոլենսկին մոտենալիս, նա լսեց հեռավոր կրակոցներ, բայց այդ ձայները նրան զգարմացրին: Նրան ամենից ավելի սաստիկ զարմացրեց այն, որ Սմոլենսկին մոտենալիս տեսավ վարսակի մի սքանչելի դաշտ, որ ինչ-որ զինվորներ հնձում էին, հավանորեն, կերի համար, և որտեղ էլ բանակել էին. այս հանգամանքը զարմացրեց Ալպատիշին, բայց նա շուտով մոռացավ այդ, իր գործի մասին մտածելով:

Ալպատիշի կյանքի բոլոր շահագրգոռությունները արգեն երեսուն տարուց ավելի սահմանափակված էին միայն իշխանի կամքով, և նա երեք դուրս չէր գալիս այդ շրջանակից: Այն բոլորը, ինչ չէր վերաբերվում իշխանի հրամանները կատարելուն, ոչ միայն չէր հետաքրքրում նրան, այլև գոյություն շուներ Ալպատիշի համար:

Ալպատիչը օղոսոսոսի 4-ի երեկոյան Սմոլենսկ գալով, կանգ առաջ Դնեպրի այս կողմբ գտնվող Գաշեն ա վարձանի մի իշխանում, իշխանատեր Ֆերապոնտովի իշխանում, ուր երեսուն տարի արդեն սովորություն ուներ իշխանել: Ֆերապոնտովը սրանից երեսուն տարի առաջ, Ալպատիչի շնորհիվ, իշխանից մի անտառ գնելով, սկսեց առևտուր անել, և հիմա նահանգում ուներ տուն, իշխան, ալյուրի խանութ: Ֆերապոնտովը գեր, թուխ, կարմրած քառասոն տարեկան գյուղացի էր, հաստ շրթունքներով, հաստ ուռած քթով, սև, վրա տված հոնքերի վերեր նույնպիսի ծծուկներով, ու հաստ փորով:

Ֆերապոնտովը, ժիշտով ու շթի շապիկով, կանգնած էր փողոցին նայող իր խանութում: Ալպատիչին տեսնելով՝ մոտեցավ նրան:

— Բարի գալուստ, Ցակով Ալպատիչ: Ժողովուրդը քաղաքից գնում է, իսկ դու քաղաք ես գալիս, — ասավ նա:

— Ինչո՞ւ են գնում քաղաքից, — ասավ Ալպատիչը:

— Ես էլ եմ ասում՝ հիմար ժողովուրդ է: Բոլորը վախենում են ֆրանցուրից:

— Կանանց ասեկոսեներ են, կանանց ասեկոսեներ, — ասավ Ալպատիչը:

— Ես էլ եմ այդպես կարծում, Ցակով Ալպատիչ: Ես ասում եմ՝ հրաման կա, որ նրան շթողնեն, նշանակում է ճիշտ է: Գյուղացիներն էլ սայլին երեք ոռւբլի են ուզում — երեսներին մեռն չկա:

Ցակով Ալպատիչն անուշադիր էր լսում: Նա իր համար թեյ, ծիերին կեր պահանջեց ու, թեյելով, պակեց քնելու:

Ամբողջ գիշեր իշխանի մոտով զորք էր անցնում փողոցով: Հետեւյալ օրը Ալպատիչը կամող հագավ, որ հագնում էր միայն քաղաքում, և գնաց իր գործերին: Արևոտ առավու էր, և ժամը ութից արդեն շոգ էր: Թանկագին օր հունձ հավաքելու համար, ինչպես մտածում էր Ալպատիչը: Քաղաքից դուրս վաղ առավոտից լսվում էին կրակոցներ:

Ժամը ութից հրացանի կրակոցներին միացավ թնդանոթաձգությունը: Փողոցներում շատ ժողովուրդ կար, որ շտապում էր ուր ուր, շատ զինվորներ, բայց ինչպես միշտ՝ կառքերն աշխատում էին, վաճառականները կանգնած էին իրենց խանութների առաջ, և եկեղեցիներում ժամերգություն էր կատարվում:

Ալպատիչը գնաց խանութները, պաշտոնատները, փոստը և նահանգապետի մոտ: Պաշտոնատներում, խանութներում, փոստում բոլորը խոսում էին զորքի մասին, թշնամու մասին, որ արդեն հարձակվել է քաղաքի վրա: Բոլորը հարցնում էին միմյանց, թե ինչ անեն, և բոլորն աշխատում էին հանգստացնել իրար:

Նահանգապետի տան առաջ Ալպատիչը տեսավ ժողովրդի մեծ բազմություն, կազակներ և ճանապարհորդական կառք, որը պատկանում էր նահանգապետին: Սանդուղքների գլխին Յակով Ալպատիչը հանդիպեց երկու ազնվականի, որոնցից մեկին նա ճանաշում էր: Նրա ծանոթ ազնվականը, որը նախկին շրջանային ոստիկանապետ էր, ասում էր տաքացած:

— Սա չէ որ հանաք բան չի, — ասում էր նա: — Լավ է՝ ո՛վ մենակ է: Ինքն է ու իր գլուխը, բայց տասներեք հոգուց բաղկացած ընտանիքը, և ամբողջ գույքը... Բանը հասցրին այստեղ, որ բոլորս կորչելու ենք. սա էլ ի՞նչ իշխանություն է, սրանից հետո... Է՛, այդ պավականերին մեկ-մեկ կկախեի...  
— Դե լավ, հերիք է, — ասում էր մյուսը:

— Ինձ ի՞նչ, թող լսի: Ինչ է, մենք ջներ շենք, — ասավ նախկին ոստիկանապետը և, շուրջը նայելով, տեսավ Ալպատիչին: — Ա՛, Ցակով Ալպատիչ, ի՞նչ կա, դու ինչո՞ւ ես եկել:

— Որին պայծառափայլության հրամանով եկել եմ պարոն նահանգապետի մոտ, — պատասխանեց Ալպատիչը, հըպարտությամբ գլուխը բարձրացնելով և ձեռը թևատակին զնելով, որ նա անում էր միշտ, իշխանի անունը տալիս: Հրամայել հաճեցին՝ տեղեկանալ գործերի դրության մասին, — ասավ նա:

— Դե արի ու իմացի, — բոռաց կալվածաւերը, — բանը հասցրին այստեղ, որ ոչ սայլ կա, ոչ էլ ուրիշ բան... Հրե՛, լսո՞ւմ ես, — ասավ նա, ցույց տալով այն կողմը, որտեղից հրաձգություն էր լսվում:

— Այստեղ հասցրին, որ բոլորը կործանվեն... ավագակներ, — ասավ նա և մուտքի դռնից իշավ ցած:

Ալպատիչը գլուխը օրորեց ու բարձրացավ սանդուղքով: Հնդունարանում կային վաճառականներ, կանայք, աստիճանավորներ, որոնք անխօս նայում էին միմյանց: Առանձնասենյակի դուրս բացվեց: Բոլորը ոտի կանգնեցին ու առաջ շարժվեցին է

Դոներից դուրս եկավ մի աստիճանավոր, ինչոր բան խոսեց վաճառականի հետ, կանչեց իր ետեր խաշը վղին մի հասու ասութիւնանափորի և նորից թաքնվեց գրան հետ, ըստ երևութիւն, լուսափելով իրեն ուղղած բոլոր հայացքներից ու հարցումներից: Ալպատիչն առաջ գնաց և աստիճանավորի հետեւալ դուրս գալու միջոցին, ձեռքը կոճկած սյուրթուկի ետև գնելով, դարձավ աստիճանավորին, տալով նրան երկու նամակ:

— Պարոն բարոն Աշխն գիներալ-անշեֆ իշխան Բալկոն-սկուց, — ասավ նա այնպէս հանդիսավոր ու նշանակալից, որ աստիճանավորը դարձավ նրան և նամակները վերցրեց:

Մի քանի րոպեից հետո նահանգապետն ընդունեց Ալպատիչն և հապճեպ ասավ նրան.

— Հայտնիր իշխանին և իշխանադստեր, որ ինձ ոչինչ հայտնի չէր. ես վարչել եմ բայ բարձրագույն հրամանների — ահավասիկ... — նա գրություն տվեց Ալպատիչին: — Բայց որովհետև իշխանն անառողջ է, իմ խորհուրդն է նրան՝ մեկնել Մոսկվա: Ես ինքս հիմա մեկնում եմ: Հայտնիր...

Բայց նահանգապետը շվերզացրեց. դոնից ներս վագեց մի փոշոտված ու քրտնած սպա և սկսեց ինչոր բան ասել ֆրանսերեն: Նահանգապետի գեմքին սարսափ պատկերացավ:

— Գիա, — ասավ նա, Ալպատիչին գլխով անելով, և բակրսեց ինչոր բան հարցնել սպային:

Ագահ, վախեցած, անօգնական հայացքները դարձան գեպի Ալպատիչը, երբ նա դուրս եկավ նահանգապետի առանձնաւունյակից: Այժմ ակամա ականջ զնելով մոտիկ և հետդիմու ուժեղացող կրակոցներին, Ալպատիչն շտապեց իշխանը: Դրությունը, որ նահանգապետը տվեց Ալպատիչին, հետեւալն էր.

«Վստահեցնում եմ ձեզ, որ Սմոլենսկ քաղաքին տակալին ամենափոքր վտանգ իսկ չի սպառնում և, հավանական է՝ լի, որ սպառնա: Ես մի, Բագրատիոնը մյուս կողմից գնում ենք Սմոլենսկի առաջ միանալու, որ տեղի կունենա ամսիս 22-ին, և երկու բանակը միացյալ ուժերով կսկսեն պաշտպանել ձեզ վստահած նահանգի իրենց հայրենակիցներին, մինչև որ նըրանց ջանքերով նրանցից հետացվեն հայրենիքի թշնամիները, կամ մինչև որ նրանց խիզախ շարքերից զո՞ր կինա վերջին զինվորը: Սրանից տեսնում եք, որ դուք կատարյալ իրավունք ունեք հանգստացնել Սմոլենսկի բնակիչներին, որովհետև ով

պաշտպանվում է երկու ալդախսի քաջարի գորաբանակներով, նա կարող է վստահ լինել նրանց հաղթությանը»: (Բարկլայ-դե-Տոլլիի հրամանը Սմոլենսկի քաղաքացիական նահանգապետ բարոն Աշխն, 1812 թվին):

Ժողովուրդն անհանգիստ անցնում դառնում էր փողոցներով:

Անընդհատ գլխե-գլուխ տնային ամանեղինով, աթոռներով, պահարաններով բարձած սայլերը դուրս էին գալիս տների դարբասներից և գնում փողոցներով: Ֆերապոնտովի հարեան տան առաջ սայլեր էին կանգնած և, կանայք, հրաժեշտ տալով, վայում էին ու անիծում: Բակապահ շունը, հաշելով, դես ու դեն էր ընկնում լծված ձիերի առաջ:

Ալպատիչն ավելի հապճեպ քայլելով, բան նա ման էր գալիս սովորաբար, մտավ իշխանի բակը և արագ գնաց սարայը դեպ իր ձիերն ու սայլակը: Կառապանը քնած էր, նա զարթեցրեց նրան, կարգադրեց լծել և ինքը գնաց մտավ նախասենյակը: Տանտիրոց սենյակից լսվում էր երեխայի լաց, կանացի սրտապատառ հեկեկանք և Ֆերապոնտովի զարցածած, խոպոտ ձիլը: Խոհարարուհին, վախեցած հավի պես, դողում էր նախասենյակում, հենց որ Ալպատիչը ներս մտավ:

— Համարյա թե սպանեց, տիրուհուս սպանեց... էնպե՛ս խփեց, էնպե՛ս քաշ տվեց...

— Ինչո՞ւ համար, — հարցրեց Ալպատիչը:

— Քաղաքից գնալ էր ուղում: Կին էր էլի: Ասում է՝ տար ինձ, մի կործանի ինձ փոքր երեխաններիս հետ. Ժողովուրդն, ասում է, ամբողջ գնաց. մենք, ասում է, ի՞նչ պիտի անենք Սկսեց էնպիս խփել: Էնպե՛ս խփեց, էնպե՛ս քաշ տվեց:

Ալպատիչը կարծես գլխով հավանություն տվեց այդ խոսքերին և, ավելին իմանալ շցանկանալով, մոտեցավ տանտիրոց սենյակի դիմացի սենյակին, ուր թողել էր իր գնած իրերը:

— Զարագործ, մարդասպա՛ն, — ճշաց այդ ժամանակ նիշար, երեխան գրկին գունատ կինը և գլխաշորը գլխից ընկած, դռնից դուրս պրծնելով, սանդուղքներով վագեց գեպի բակը:

Ֆերապոնտովը դուրս եկավ նրա ետևից և, Ալպատիչին տեսնելով, ուղղեց ժիլետը, մագերը, հորանչեց և սենյակ մըտավ Ալպատիչի ետևից:

— Զինի՛ ուղում ես արդեն գնալ, — հարցրեց նա:

Գպատասկանելով տանտիրոց հարցին. և նրան շնայելով,  
Ալպատիչն, իր գնած իրերը զոկքելով, հարցեց, թե ի՞նչ  
պիտի տա իջևանեցու համար:

— Կհաշվենք: Հը, նահանգապետի մո՞տ էիր, — հարց-  
րեց Ֆերապոնառվու: — Ինչ որոշում եղավ:

Ալպատիչը պատասխանեց, թե նահանգապետը բացադա-  
կապես ոչինչ շասավ իրեն:

— Մինք մեր միջոցներով մի՛ թե կարող ենք գնալ, — ասավ  
Ֆերապոնառվու: — Մինչև Դորոգորում սայլին յոթ ոռութիւն  
ուզում: Ես էլ ասում եմ, որ երեսնեղին մեռոն չկա՝, — ասավ  
նա, — Սելիվանովը, նա, հինգշարթի օրը օգոստից, ալյուրը ծա-  
խեց զորքին՝ պարկը ինն ոռութով: Հը, թել չե՞ք խմելու, —  
ավելացրեց նա:

Մինչ ձիերը լծում էին, Ալպատիչը Ֆերապոնառվու  
հետ թեյ խմեց, և խոսեցին հացի գնի մասին, բերքի մասին, և  
բերքահավաքի համար բարենպաստ եղանակի մասին:

— Բայց զադարեց, — ասավ Ֆերապոնառվու, երեք բաժակ  
խմելով ու վեր կենալով, — մերոնք, երեխ, հաղթեցին: Ասկած  
է, շեն թողնի: Ուրեմն ուժեղ են... իսկ քիչ առաջ, ասում  
էին, թե Մատվեյ Իվանիչ Պլատովը նրանց քշել է Մարինա  
գետը և մի օրվա մեջ տասնութ հազար է, ինչ է, խեղդել է:

Ալպատիչը հավաքեց իր գնած իրերը, տվեց ներս մտնող  
կառապանին և հաշիվները վերջացրեց իշեանի տիրոց հետ:  
Պարբասից լսվեց դուրս եկող անիվնեղի, ձիու սմբակների և բո-  
ժոժների ձայնը: Կեսօրն անցել էր արդեն, փողոցի կեսն ըստ-  
վերի մեջ էր, մյուս կեսը պայծառորեն լուսավորված էր արևով: Ալպատիչը  
նայեց լուսամուտից ու գնաց դեպի դուռը: Հան-  
կարծ լսվեց մի հեռավոր շառաչուն ու հարլածի ձայն, որից  
հետո լսվեց թնդանոթաձգության թրար խառնված բոմբյունը,  
որից ապակիներն սկսեցին դողալ:

Ալպատիչը դուրս եկավ փողոց՝ երկու մարդ վա-  
ղեցին դեպի կամուրջը: Զանագան կողմերից լսվում էին շա-  
շուններ, ոռումբերի հարվածներ: և նոնակների պայթյուն, որ  
ընկնում էին քաղաքի մեջ: Բայց այդ ձայները գրթիւն անլսելի  
էին և բնակչության ուղագրությունը չէին գրավում՝ համեմա-  
տած թնդանոթաձգության ձայների հետ, որ լսվում էին քա-  
ղաքի այն կրպմից: Դա ոմբակոծություն էր, որ ժամը հինգին

մոտ սկսվել էր նապոլեոնի կարգադրությամբ. քաղաքն որմ-  
բակոծվում էր 130 թնդանոթից: Ժողովուրդն առաջին պահ  
հասկացավ այդ ոմբակոծության նշանակությունը:

Ընկնող նոնակների ու ոռումբերի ձայներն սկզբում միայն  
հնտաքրքրություն հարուցեցին: Ֆերապոնտովի կինը, որ  
մինչ այդ չէր դադարում սարայում նվալուց, լոեց և երեխան  
գրին դուրս եկավ դեպի դարրասը, անխոս ժողովրդին նայե-  
լով ու ձայներին ականչ դնելով:

Դարբաս դուրս եկան խոհարարութին ու խանութպանը:  
Բոլորն ուրախ հետաքրքրությամբ աշխատում էին տեսնել  
իրենց զլիավերեկից անցնող ոռումբերը: Անկյունի ետքից դուրս  
Նկան մի քանի մարդ, աշխուժորեն խոսակցելով:

— Եյ ուժ էր, հա՛, — ասում էր մեկը, — տանիքն էլ,  
առաստաղն էլ ջարդեց, տաշեղ շինեց:

— Խոզի պես հողը քանդեց, — ասավ մյուսը: — Ել  
կարգին բան էր, հա, սիրո տվեց, — ծիծաղելով ասավ նա: —  
Լավ էր ետ թուր, թե չէ քեզ էլ հետը տանելու էր:

Ժողովուրդը դիմեց այդ մարդկանց: Նրանք կանգ առան ու  
պատմեցին, թե ինչպես իրենց մոտ ոռումբերը ընկել էին մի  
տան վրա: Մինչ այդ ուրիշ ոռումբեր, մերթ սրբնթաց, մոայլ  
շաշունով հրետագներ, մերթ հաճելի շվշվոցով նոնակներ  
անգադար թոշում էին ժողովրդի գլխի վրայով, բայց ոչ մի  
ոռումբ մոտիկ չէր ընկնում. Բոլորն էլ անցնում էին հեռու  
Ալպատիչը նստեց ծածկույթով սայլակը: Իշեանի տերը կամ գ-  
նել էր գարբասի մոտ:

— Ել շես տեսե՞ւ, — բոռաց նա խոհարարութու վրա, որ  
թերերը քշտած, կարմիր շրջազգեսը հագին, մերկ արմունկնե-  
րը օրորեկով մոտեցավ անկյունին՝ լսելու թե ի՞նչ է պատմում:

— Եյ քեզ հրա՛շք, — ասավ խոհարարութին, բայց տիրոջ  
ձայնը լսելով, վերադարձավ, ձիգ տալով վեր քշտած շրջա-  
զգեստը:

Նորից, բայց այս անգամ շատ մոտիկ, սուլեց ինչ-որ մի  
բան, ինչպես վերեկից ներքեւ թոշող մի թոշուն, կրակ փայլա-  
տակեց փողոցի մեջտեղը, կրակեց ինչ-որ և փողոցը ծածկեց  
ծխով:

— Զարագո՛րծ, այդ ի՞նչ ես անում դու, — ճշաց իշեանի  
տերը, գեպի աղախինը վագելով:

Այդ նույն վայրկյանին զանազան կողմերից կանանց աղիուղորմ ճիշեր լսվեցին, մի երեխա վախեցած լաց եղալ, և ժողովուրդը գունատ դեմքերով անխոս հավաքվեց խոհարարուհու շուրջը: Այդ բազմության միջից բոլորից ավելի բարձրածայն հեծեծում ու անիծում էր խոհարարուհին:

— Օյ-օյ-օ՝, ձեզ մատաղ: Օգնեցե՞ք, մի թողնեք մեռնեմ, ձեզ մատաղ...

Հինգ րոպի հետո էլ ոչ շմանաց փողոցում: Խոհարարուհուն, որի ազդրը շարդել էր նոնակի կտորը, տարան խոհանոց: Ալպատիշը, նրա կառապանը, Ֆերապոնտովի կինը երեխաներով, դռնապանը նկուղում նստած՝ ականջ էին դնում: Թրնդանոթների բոմբյունը, ոռումքերի շառայունը և խոհարարուհու աղողորմ հեծեծանքը, որ գրեթե խլացնում էր բոլոր ձայները, մի վայրկյան իսկ չին դադարում: Տանտիրուհին մերթ օրորում ու հորդորում էր երեխային, մերթ խղճակի շշունչով հարցնում ամեն մի նկուղ մտնողի, թե ո՞ւր է մարդը, որ մնացել էր փողոցում: Նկուղը մտնող խանութպանն ասավ, թե նրա մարդը ժողովրդի հետ գնաց տաճար, որտեղից դուրս էին բերում Մոլինսկի հրաշագործ սրբապատկերը:

Մթնշաղին թնդանոթածությունն ակսեց լոել: Ալպատիշը դուրս եկավ նկուղից և կանգնեց դռան մեջ: Նախկին պարզ երկոյան երկինքն ամբողջ սրողված էր ծխով: Եվ այդ ծխի միջից տարօրինակ լույս էր տալիս լուսնի նոր, բարձր կանգնած մանգաղը: Նախկին՝ թնդանոթների ահաջոր բոմբյունի լոելուց հետո, բաղարի վրա կարծես անզորը էր իշկ, որ ընդհատվում էր միայն ամբողջ բաղարում ասես տարածված քայլերի, հեծեծանքների, հեռավոր ճիշերի շրջունով ու հրդեհների ճարճատյունով: Խոհարարուհու տնքոցներն այժմ լոել էին: Երկու կողմից բարձրանում ու տարածվում էին հրդեհների ծխի սև բուլաները: Փողոցում ոչ թե շարքերով, այլ ինչպես մրցյուններ ավերած բնից, տարբեր մուռնիրներով ու տարբեր ուղղությամբ անցնում, վազում էին զինվորները: Դրանցից մի քանիսը Ալպատիշի աշերի առաջ վազեցին մտան Ֆերապոնտովի բակը: Ալպատիշը դուրս եկավ գնաց դեպի դարբասի դուռը: Ինչ-որ մի գունդ, խոնվելով ու շտապելով, ամբողջ փողոցը բռնած, ետ էր զնում:

— Քաղաքը հանձնում են, գնացե՛ք, հեռացե՛ք, — ասալ նրան Ալպատիշը կերպարանքը նկատող մի սպա և հենց այդտեղ բոռալով դիմեց զինվորներին: — Ես ձեզ բակերը վազել ցուց կտամ:

Ալպատիշը խրճիթ վերադառնալով և, կառապանին ձայն տալով, պատվիրեց նրան սայլակը քշել, դուրս գալ: Ալպատիշի ու կառապանի հտեւից դուրս եկան և Ֆերապոնտովի տնեցիները: Տեսնելով հրդեհների ծուխը և անգամ կրակները, որ երեսում էին այժմ սկսող մթնաշաղի մեջ, կանայք, որ մինչ այդ լոել էին, հանկարծ, հրդեհները տեսնելով, բարձրածայն ողբ սկսեցին: Կարծես նրանց արձագանք տալով, նույնպիսի լաց ու շիվան լսվեց փողոցի մյուս ծայրերից: Ալպատիշը կառապանի հետ դողացող ձեռներով ծածկի տակ կարգի էր բերում խճճված երասանակներն ու ձիերի լծափոկերը:

Երբ Ալպատիշը դարբասից դուրս եկավ՝ նա տեսավ, թե ինչպես Ֆերապոնտովի բացված խանութում մի տասը զինվոր բարձր խոսելով իրենց պարկերն ու պայուսակները լցնում էին ալյուրով ու արևածաղկի սերմով: Նույն միջոցին, փողոցից խանութ վերադառնալով, ներս մտավ Ֆերապոնտովը: Զինվորներին տեսնելով՝ նա ուզեց գոռալ ինչ-որ, բայց հանկարծ կանգ առավ և, մազերը բռնած, քրքչաց հեկեկուն քրքիչով:

— Տարեք, բոլո՞րը տարեք, տղերք: Թող սատանաներին շման: — Ճշաց նա, ինքն էլ պարկերը վերցնելով ու փողոցը գցելով:

Մի քանի զինվոր վախեցած, դուրս վազեցին, մի քանիսը շարունակեցին պարկերը լցնել: Ալպատիշին տեսնելով՝ Ֆերապոնտովը դարձավ նրան:

— Վերջացա՞վ Ռուսաստանը, — գոռաց նա: — Ալպատիշ՝ վերջացա՞վ: Ինքս կվառեմ: Վերջացավ... — Ֆերապոնտովը վազեց բակը:

Փողոցով, ամբողջը բռնած, զինվորներ էին գնում անընդհատ, այնպես որ Ալպատիշը շկարողացավ գնալ և պետք է սպասեր: Ֆերապոնտովի կինը երեխաներով նույնպիս սայլակ էր նստել, ու սպասում էր, որ հնարավոր լինի անցնել գնալ:

Արդեն բոլորովին գիշեր էր: Երկնքում աստղեր կային և, երբեմն ծխով ծածկվելով, լուսավորում էր շահել լուսիերը:

Դեպի Դնեպրն իջնող ճամփին Ալպատիչի և Ֆերապոնտովի կող այլակները, որ դանդաղ շարժվում էին զինվորների և մյուս կառքերի շարքնում, պետք էր կանգ առնել: Փողոցների խաչաձևան տեղից (ուր կանգ էին առել սայլակները) ոչ այնքան հեռու, մի նրբափողոցում տուն ու խանութներ էին զառվում: Հրդեհն արդեն վերջանալու վրա էր: Բոցը մերթ մարում ու շքանում էր սևաթույր ծխի մեջ, մերթ բռնկվում պայծառուն, տարօրինակորեն որոշակի լուսավորելով խաչփողանում կանգնած-խմբված մարդկանց զեմքերը: Հրդեհի առաջ երեսում էին մարդկային սև կերպարանքներ և կրակի անլոելի ճարճատյունի միջից լսվում էին խոսոց ու կանչեր: Ալպատիչը, տեսնելով որ իր սայլակը շուտ չեն թողնելու անցնի, իջավ նստած տեղից, գնաց նրբափողոցը՝ հրդեհը տեսնելու: Զինվորներն անընդհատ ետ ու առաջ էին անում հրդեհի մոտով, և Ալպատիչը տեսավ, թե ինչպես երկու զինվոր և նրանց հետ մի ինչ-որ՝ ֆրիզե շինելով մարդ հրդեհից քաշելով փողոցի մյուս կողմի հարևան բակն էին տանում այրվող մի զերան. մյուսները խոտ էին տանում գրկած:

Ալպատիչը մոտեցավ մարդկանց մի մեծ բազմության, որ կանգնած էին բոցավովող ամբարի առաջ: Պատերն ամբողջ բռնկված էին կրակով, ետքի պատն ընկել էր, նրբատաշ տախտակայա տանիքն ընկել էր, գերանները բռնկված վառվում էին: Բազմությունը ըստ երեւութին սպասում էր այդ բոպեին, երբ տանիքը կփլի: Դրան էր սպասում և Ալպատիչը:

— Ալպատի՛շ — հանկարծ ծերունուն կանչեց մեկի ծանոթ շայնը:

— Տեր իմ, ձերդ պայծառափայլություն, — պատասխանեց Ալպատիչը, վայրկենապես ճանաշելով երիտասարդի շինանի ձայնը:

Իշխան Անդրեյը՝ թիկնոցի մեջ՝ մի սև ձի նստած կանգնել էր բազմության ետևն ու նայում էր Ալպատիշին:

— Դու ի՞նչպես է որ այստեղ ես, — հարցրեց նա:

— Զերդ... ձերդ պայծառափայլություն, — խոսեց Ալպատիչը և հեկեկաց: — Զերդ... ձերդ... միթե կորա՞նք: Հայր...

— Ինչո՞ւ ես այստեղ, — կրկնեց իշխան Անդրեյը:

Այդ բոպեին կրակի բոցը բռնկվեց և Ալպատիչը նրա լույսով տեսավ իր ջահել պարոնի գունատ ու տանզված զեմքը:

Ալպատիչը պատմեց, թե ինչպես էին իրեն ուղարկել և ինչպիսի ոժվարությամբ կարողացավ դուրս գալ:

— Ե՞նչ կասեթ, ձերդ պայծառափայլություն, կօրած ենք, — նորից հարցրեց նա:

Իշխան Անդրեյը, նրան չպատասխանելով, ծոցատեսքը հանեց և, ծունկի բարձրացնելով, սկսեց տեսրից պոկած թլութի վրա մատիտով գրել: Նա գրում էր քրոջը:

Ամոլինակը հանձնում էն, — գրում էր նա: — Կիսին Գաբրի թշնամին կգրավի մի շաբաթ հետո: Մեկնեցեթ իսկույն Մասկովա: Երբ դուրս գաք, անմիջապես պատասխանիր ինձք հասուկ սուրհանդակ ուղարկելով՝ Ուսպյած»:

Գրելով և թուղթն Ալպատիշին հանձնելով՝ նա բանավոր էլ հայանեց նրան, թե ինչպես կարգավորել իշխանի, իշխանադստեր և որդու ու նրա ուսուցչի մեկնումը և ինչպես ու որտեղ պատասխան բերել իրեն անմիջապես: Նա գեռ չէր ավարտել իր հրամանները, երբ շտաբի ձեռավոր պետը, շքախմբի ուղեկցությամբ, ձին քշեց եկավ նրա մոտ:

— Դուք գնդապե՞տ եք, — գոռաց շտաբի պետը, գերմանական շեշտով, իշխան Անդրեյին ծանոթ ձայնով: — Ձեր ներկայությամբ տներ են վասում, և դուք կանգնե՞լ եք: Սա ինչ է նշանակում: Դուք պատասխան կտաք, — գոռաց ենքը, որ առաջին բանակի հետեւակ զորքի ձախ թեկի շտաբի պետի օգնական էր, — մի պաշտոն որ ըստ ամենայնի և հաճելի էր, և աշքի ընկնող, ինչպես ասում էր թերզը:

Իշխան Անդրեյը նայեց նրան և, չպատասխանելով, շարունակեց դիմել Ալպատիշին:

— Ուրեմն ասա, որ մինչև ամսիս տասը պատասխան եմ սպասում, իսկ եթե տասին լուր չատանամ, թե բոլորը մեկնել են, ես ինքոս ստիպված պիտի լինեմ ամեն ինչ թողնելու գնալ կիսին Գորի:

— Ես, իշխան, միայն նրա համար եմ ասում, — ասավ թերզը, իշխան Անդրեյին ճանաշելով, — որ ես պարտավոր եմ կատարել հրամանները, որովհետեւ միշտ ճշտությամբ կատարում եմ... Դուք ինձ, խնդրում եմ, ներեք, — ինչ-որ բանի համար արդարանում էր թերզը:

Ինչ-որ մի բան ճոնշաց կրակի մեջ: Կրակը հանգավ մի ակնթարթ: ծխի սև քուլանները բարձրացան տանիքի տակից:

Էլի ինչ-որ մի բան սարսափելի ճռնշաց կրակի մեջ, ու ինչ-որ ահագին մի բան փուլ եկավ:

— Ուստո, — ամբարի փլվող առաստաղին արձագանք տալով՝ ոռնաց բազմությունը: Ամբարից այրվող հացահատիկ-ներից բլիթի հոտ փշեց: Բոցը բռնկեց և լուսավորեց հրդեհի շուրջը կանգնած մարդկանց աշխուժորեն-ուրախ ու տանջված դեմքերը:

Ֆրիգե շինելով մարդը, ձեռք վեր բարձրացնելով բոռաց. — է, էլ պրծավ, տղե՛րք...

— Դա տերն ինքն է, — ասացին մի քանի ձայներ:

— Ուրեմն այդպես, — ասավ իշխան Անդրեյը, դիմելով Ալպատիշին, — Հայտնիք բռնորդ, ինչ քեզ ասի, — և ոչ մի բառով շպատասխանելով Բերգին, որը լուր կանգնել էր իր մոտ, ձին շարժեց ու գնաց նրափողոցը:

## V

Զորքերը շարունակում էին նահանջել Սմոլենսկից: Թշնամին գնում էր նրանց ետեից: Օգոստոսի 10-ին այն գունդը, որի հրամանատարն էր իշխան Անդրեյ Բալկոնակին, անցնում էր մեծ ճանապարհով և այն զարտուղու կողքով, որը տանում էր Լիսիե Գորի: Երեք շաբաթից ավելի շոգ ու երաշտ էր: Ամեն օր երկնօտիվ դանդուր ամպեր էին անցնում, երրեմն արեն սրողելով, բայց երեկոյան դեմ երկինքը մաքրվում էր նորից և արեց մտնում էր շագանակագույն-կարմիր մշուշի մեջ: Միայն առատ ցույք գիշերը թարմացնում էր հողը: Զհնձած հասկերը այրվում էին և թափվում ցած: Ճահճները շորացել էին: Տափարը բառաշում էր քաղցից, կեր շգտնելով արեից խանձրաված դաշտերում: Միայն գիշերները և անտառներում, քանի դեռ ցողը մնում էր, զով էր լինում: Բայց ճանապարհին, մեծ ճանապարհին, որով գնում էր զորքը, անգամ գիշերն էլ, անգամ անտառներում էլ այդ զովը շկար: Ցողն աննկատելի էր ճանապարհի ավաղափոշում, որ ավելի քան քառորդ արշին շերտ ուներ: Հենց որ լուսանում էր՝ շարժումն սկսվում էր: Գումակը, հրետանին անձայն գնում էին մինչև անվակունդը, իսկ հետեակը մինչև կոճերը փափուկ, հեղծուցիչ, գիշերվա ընթացքում շառած, տաք փոշում էր այդ նախկին աշխարհի նկատմամբ միայն շինել անարդար և կատարել իր պարտականությունը:

Հունցվում էր ոտներով ու անիվներով, մյուս մասը բարձրանում էր և ամպի նման կանգնում զորքի զլաւլերե, մտնելով այդ հանապարհով շարժվող մարդկանց ու կենդանիների աշքերը, ականջները, քթածակերը ու մազերի մեջ և, գլխավորը, թռքերը: Որքան ավելի վեր էր բարձրանում արեւ, նույնքան վեր էր բարձրանում և փոշու ամպը, և այդ բարակ, տաք փոշու միջով հասարակ աշխով կարելի էր նայել ամպերով շծածկված արեին: Արեւ նման էր մեծ կարմիր գնդի: Քամի չկար, և մարդիկ շնչահեղ էին լինում այդ անշարժ մթնոլորտում: Մարդիկ գնում էին քիթներն ու բերանները թաշկինակով կապած: Գյուղ հասնելով, բոլորը նետվում էին ջողորները: Կըռվում էին զրի համար և խմում, անգամ ցեխախառն:

Իշխան Անդրեյին, իբրև գնդի հրամանատարի, զբաղեցնում էին թե գնդի կազմությունը, թե նրա մարդկանց բարեկեցությունը, և թե հրամաններ ստանալու ու տալու անհրաժեշտությունը: Սմոլենսկի հրդեհը և այդ քաղաքը թողնելը մի էպոսա էր իշխան Անդրեյի համար: Թշնամու դեմ ունեցած կատաղության նոր զգացումը ստիպում էր նրան մոռանալ իր վիշտը: Նա ամբողջապես նվիրված էր գնդի գործերին, նա հոգատար էր գեպի մարդիկ ու սպանները և սիրալիր էր նրանց հետ: Գնդում նրան անվանում էին մեր իշխանը, հպարտանում էին նրանով և սիրում էին նրան: Բայց նա բարի ու հեզ էր միայն իր գնդի մարդկանց հետ, Տիմոխինի հետ և այլն. բոլորովին նոր մարդկանց հետ և օտար շրջանում, այն մարդկանց հետ, որոնք չեին կարող իմանալ ու հասկանալ իր անցյալը. բայց հենց որ նա հանդիպում էր իր նախկիններից, շտաբականներից որևէ մեկին, նա նորից անմիջապես փշաքաղվում էր, դառնում էր շար, հեգնոտ ու արհամարհոտ: Այն բռնորդ, ինչ հիշողությունը կապում էր անցյալի հետ, վանում էր նրան, և նա աշխատում էր այդ նախկին աշխարհի նկատմամբ միայն շինել անարդար և կատարել իր պարտականությունը:

Ճիշտ է, ամեն ինչ մութ, մուալլ լույսով էր պատկերանում իշխան Անդրեյին, մանավանդ նրանից հետո, երբ Սմոլենսկը թողին (որը նրա ըմբռնումով կարելի էր և պետք էր պաշտպանել) օգոստոսի 6-ին, և նրանից հետո, երբ հիվանդ հայրը պետք է փախչեր Մոսկվա և թողներ կողոպտելու իր այնքան սիրած, իր կառուցած ու իր կողմից բնակեցված կիսիկ Գորին.:

բայց, չնայած դրան, գնդի շնորհիվ, իշխան Անդրեյը կարողանում էր մտածել ուրիշ, ընդհանուր խնդիրներից բոլորովին անկախ առարկայի — գնդի մասին։ Օգոստոսի 10-ին զորացունը, որի մեջ էր նրա գունդը, հավասարվեց կիսիք Գորիին։ Իշխան Անդրեյը երկու օր առաջ լուր էր առել, որ հայրը, որդին և քոյրը մեկնել են Սոսկվա։ Թեև իշխան Անդրեյը ոչինչ էլ չուներ անելու կիսիք Գորիում, նա վիշտը փորփրելու իրեն հատուկ ցանկությամբ, որոշեց, թե պետք է մտնի կիսիք Գորի։

Նա հրամայեց ձին թամբել և գնաց հայրական գյուղը, ուր ծնվել էր և անցրել իր մանկությունը։ Լճակի կողքով անցնելիս, այն լճակի, ուր միշտ տասնյակ կանայք, զրուցելով, թակիշներով ծեծում ու լվանում էին իրենց սպիտակեղենը, իշխան Անդրեյը նկատեց, որ լճակի ափին մարդ չկար, և պոկված լաստը, մինչև կեսը ջրով լցված, կողքանց լողում էր լճակի մեջտեղով։ Իշխան Անդրեյը մոտեցավ պահակատանը։ Մուտքի քարեն բարեասի մոտ ոչ ոք չկար, և դուռը բաց էր։ Պարտեզի ուղիներն արդեն կանաչակալել էին, և հորթերն ու ծիերը ման էին գալիս անգիտական պարկում։ Իշխան Անդրեյը մոտեցավ ջերմոցին։ ապակիները ջարդված էին, և թաղարների մեջ եղած ծառերի մի մասը տապալված էին, մի մասը չորացած։ Նա ձայն տվեց Տարասին, այգեպանին։ Ոչ ոք չպատասխանեց։ Անցնելով ջերմոցի ետքը՝ ցուցարաժինը, նա տեսավ, որ նրբատաշ, սղոցանախշ ցանկապատն ամբողջ ջարդված է և մրգերը-սալորները ճղների հետ պոկլած։ Մի ծեր զյուղացի (իշխան Անդրեյը մանկությունից տեսել էր նրան դարբասի մոտ) նստել, տրիխ էր գործում կանաչ նստարանի վրա։

Նա խուլ էր և իշխան Անդրեյի մոտենալը չսեց։ Նա նստել էր այն նստարանին, ուր սիրում էր նատել ծեր իշխանը, և նրա կողքին՝ մաքնոլիքայի կոտրած ու լրտացած ճղների վրա փաված էին գալար կեղևներ։

Իշխան Անդրեյը մոտեցավ տանը։ Հին պարտեզում մի քանի լորի էին կտրել, մի խայտախար ձի քուռակի հետ ման էր գալիս հենց տան առաջ, վարդենիների արանքում։ Տան դրաների ու լուսամուտների տախտակե փեղկերը մինչված էին։ Ներքեամ մի լուսամուտ բաց էր։ Տան սպասավորի տղան, իշխան Անդրեյին տեսնելով, վագեց մտավ տռւն։ Ալպատիշն, ընտանիքն ուղարկելով, մենակ էր մնացել կիսիք Գորիում։

— 158 —

Նա տանը նստած Վարք Սրբոց էր կարդում։ Իշխան Անդրեյի գալն իմանալով, նա ակնոցը քթին, կոճկվելով դուրս եկավ տնից, արագ մոտեցավ իշխանին։ և, ոչ մի խոսք չտանելով, լաց եղավ, իշխան Անդրեյի ծունկը համբուրելով։

Հետո նա շուր եկավ իր թուլության վրա սրտնեղած և սկսեց զեկուցել գործերի դրության մասին։ Բոլոր արժեքավոր ու թանկագին իրերը տարված էր Բոգուշարովու։ Հացահատիկը, մինչև 100 շետքերտ, նույնպես դուրս էր տարված։ Խոտն ու դաշնանցանը, այս տարվա անսովոր, ինչպես Ալպատիշն էր ասում, բերքը կանաչ-կանաչ վերցրել-հնձել են զորքերը։ Գյուղացիները քայրայված են. ոմանք նույնպես Բոգուշարովու են գնացել, մնացել է փոքր մասը։

Իշխան Անդրեյը մինչև վերջը լսելով, հարցրեց.

— Ե՞րբ մեկնեցին հայրս ու քույրս, — նկատի ունենալով այն, թե երբ մեկնեցին Մոսկվա։

Ալպատիշը, կարծելով թե հաբցնում են Բոգուշարովու մեկնելու մասին, պատասխանեց, թե մեկնել են յոթին, և նորից խոսեց տնտեսության գործերից, կարգագրություններ խընդ-րելով։

— Կհրամայե՞ք արդյոք ստացականով վարսակ տալ զորքին։ Դեռ 600 չետվերտ մնացել է, — հարցրեց Ալպատիշը։

«Ի՞նչ պատասխանէմ սրան», մտածում էր իշխան Անդրեյը, նայելով ծերունու արեկի տակ փայլող ճաղատ գլխին և նրա դեմքի արտահայտության մեջ կարդալով գիտակցությունն այն բանի, որ ինքն էլ հասկանում է այդ հարցումների անժամանակ լինելը, բայց հարցնում է միայն այնպես, որպեսզի ամոքի և իր վիշտը։

— Այս, տուր, — ասավ նա։

— Եթե հաճել եք պարտեզի անկարգությունը նկատել, — ասավ Ալպատիշը, — անհնար է որա առաջ առնել։ Երեք գունդ եկավ ու գիշերեց, մանավանդ դրազունները։ Ես հրամանատարի աստիճանն ու կոշումը գրել եմ՝ խնդիրը տալու համար։

— Է, դու ի՞նչ պիտի անես։ Մնալո՞ւ ես, եթե թշնամին գրավի, — հարցրեց իշխան Անդրեյը։

Ալպատիշը երեսը դարձրեց գեպի իշխան Անդրեյը։ Նայեց նրան։ Եվ հանկարծ, հտնդիսավոր շարժումով, ծեռը վեր բարձրացրեց։

— 159 —

— Նա' է իմ հովանավորը, և թող նրա' կամքը լինի, —  
ասավ նա:

Գյուղացիների և տնային սպասավորների բազմությունը  
գլխաբաց գալիս էր մարդագետնով, մոտենալով իշխան Անդ-  
րեյին:

— Դե՛մ, մնաս բարով, — ասավ իշխան Անդրեյը, կունա-  
լով գեպի Ալպատիչը: — Ինքո մեկնիր, տա՛ր ինչ կարող ես, և  
ժողովրդին կարգադրիր քաշվեն Ծյաղանի նահանգը կամ Մոսկ-  
վայի մոտ շրջանը:

Ալպատիչը գրկեց նրա ոտը և հեկեկաց: Իշխան Անդրեյն  
զգուշությամբ ետ տարավ նրան և, ձին շարժելով, քշեց ծա-  
ռուղովն ի վայր:

Յուցաբաժնում էլի նույն անտարբերությամբ, ինչպես  
ճանճը սիրելի մեռելի դեմքին, նստած էր ծերունին և թխկաց-  
նում էր տրեխի կաղապարին, և երկու աղջկկ՝ փեշները լիրը  
սալոր, որ քաղել էին նրանք ջերմոցի ծառերից, վազում էին  
այնտեղից և հանկարծ հանդիպեցին իշխան Անդրեյին: Զահել  
պարունին տեսնելով, մեծ աղջկը, վախի արտահայտությունը  
դեմքին, բռնեց փոքրիկ ընկերուհու ձեռը և նրա հետ միասին  
թաքնվեցին կեչու ետեղ, չկարողանալով հավաքել թափված,  
ցրված խակ սալորները:

Իշխան Անդրեյը երկյուղով-արագ երեսը շրջեց նրանցից,  
վախինալով նկատել տալ, որ ինքը նրանց տեսավէ: Նա խղճաց  
այդ սիրունիկ վախեցած աղջկան: Նա վախենում էր նայել  
նրան, բայց դրա հետ միաժամանակ անդիմադրելիորեն ցան-  
կանում էր այդ: Նրան համակեց մի նոր, ուրախ ու հանգստաց-  
նող զգացում, երբ նա, այդ աղջկիներին նայելով, հասկացավ,  
որ գոյություն ունեն ուրիշ, իր համար բոլորովին օտար և  
նույնքան էլ օրինական մարդկային շահեր, ինչպես և նրանք,  
որոնք զբաղեցնում էին իրեն: Այդ աղջկիներն, ըստ երևույթին,  
սաստիկ ցանկանում էին մի բան — տանել և մինչեւ վերջին  
պտուղն ուտել այդ խակ սալորները, ու շրոնվել, և իշխան  
Անդրեյը նրանց հետ միասին հաջողություն էր ցանկանում  
նրանց ձեռնարկած գործին: Նա վարողացավ իրեն պահել,  
որպեսզի մի անգամ ևս չնայի նրանց: Կարծելով բոլորովին  
ապահով են արգեն, նրանք գուրս թռան դարանից և, բարակ  
ձայնով ինչ-որ ծվծվալով, փեղները բռնած, ուրախ ու արագ,

— 160 —

իրենց արևառ ու բորիկ ոտիկներով վազեցին մարգագետնի  
կանաչների միջով:

Իշխան Անդրեյը թարմացավ մի փոքր, դուրս գալով մեծ  
ճանապարհի փոշու շրջանից, որով շարժվում էին զորքերը:  
Բայց կիսիկ Գորիից ոչ այնքան հեռու, նա նորից մտավ մեծ  
ճանապարհը և հասավ իր գնդին՝ դադարքի պահին, որ արել  
էին նրանք ոչ այնքան մեծ մի լճակի ամբարտակի մոտ: Ցե-  
րեկվա ժամը երկուսն էր: Արկը, կարմրած մի գունդ փոշու  
մեջ, անտանելի այրում ու վառում էր սև սյուրթուկի վրայից:  
Նույն փոշին անշարժ կանգնած էր հանգստացող ու մոմաց  
բարձրացրած զորքի զլյավերերը: Քամի չկար: Ամբարտակով  
անցնելիս իշխան Անդրեյը զգաց տիղմի հոտ և զրի զովություն:  
Նա ցանկություն ունեցավ զուրը մտնել, որքան էլ կեղտոտ  
լիներ այն: Նա նայեց լճակին, որից լավում էին կանչեր ու բըր-  
քիչներ: Փոքր, պղտոր լիճն, ըստ երևույթին, բարձրացել  
էր երկու քառորդի շափ ու ամբարտակը հեղեղել այն պատճա-  
ռով, որ լիքն էր մարդկային, զինվորների մերկ, շարժվող  
սպիտակ մարմիններով և աղյուսի պես կարմիր ձեռներով,  
դեմքերով ու վկերով: Բոլոր այդ մերկ՝ սպիտակ մարդկային  
միսը բրբջավ ու ճիշերով շարժվում էր այդ կեղտոտ լճակում,  
ինչպես ցնցուղի մեջ լիքը լցրած ծածան ձկները: Ուրախու-  
թյուն էր արտահայտում մարդկանց այդ թպրտոցը, և դրանից  
էլ նա տիսուր էր առանձնապես: Յ-րդ վաշտի մի շահել, խար-  
տյաշ զինվոր, որին իշխան Անդրեյը ճանաշում էր, երեսը խա-  
շակնելով, ետ-ետ էր գնում, որպեսզի լավ թափով վազի և  
ընկնի ցուրը մյուսը՝ սև, միշտ մազոտ ենթասպան, մինչեւ  
գոտկատեւք զրի մեջ, երշանկորեն մկանուտ իրանը ցնցելով,  
փնչացնում էր ուրախ, մինչեւ դաստոկը սև ձեռներով զլիխն  
զուր ածելով: Լսվում էր, թե ինչպես են զուրը շրպացնում  
միմյանց վրա, ծոյւմ, աղմկում:

Ափերին, ամբարտակի վրա, լճակում — ամենուրեք ըս-  
պիտակ, առողջ մկանուտ միս էր: Կարմրաքիթ սպա Տիմոխինը  
ամբարտակի վրա սրբիչով շփում էր իրեն. նա, իշխանին  
տեսնելով, ամաշեց, սակայն հսմարձակություն ունեցավ զի-  
մել նրան:

— Եատ լավ է, ձերդ պայծառափայլություն, եթե դուք  
հաճերիք. — ասավ նա:

— 161 —

— Կեղտում է, — ասավ իշխան Անդրեյը դեմքը կնճռելով։  
— Մենք իսկույն տեղ կրացնենք ձեզ համար։ — Եվ Տիմո-  
թիսը, դեռ չագնված, վազեց տեղ անելու։  
— Իշխանն ուզում է։

— Ա՞րը։ Մեր իշխանը, — խոսեցին ձայները, և բոլորը  
շտապեցին շփոթլած, այնպես որ իշխան Անդրեյին հա-  
զիվ հաջողվեց հանգստացնել նրանց։ Նա մտածեց ավելի  
լավ կիրակ վրան չուր ածի սարայում։

«Միս, մարմին, շար աւ սառու»<sup>1</sup>, — մտածում էր նա, նայելով  
իր մերկ մարմնին, ու ցնցվում էր ոչ այնքան ցրտից, որքան  
իրեն էլ անհասկանալի զզվանքից ու սարսափից, որ զգում  
էր ի տես այդ ահագին թվով մարմինների, որ լողում էին կեղ-  
տու լճակում։

Շտապոսի 7-ին իշխան Բագրատիոնը Սմոլենսկի ճանա-  
պարհի վրա գտնվող Միխայլովկայի իր կայանում գրում էր  
հետևյալը։

«Աղորմած տեր, կոմս Ալեքսեյ Անդրեևիչ։

(Նա դրում էր Արակեցին, բայց պիտեր, որ իր նա-  
մակը կարգալու է և թագավորը, ուստի և, որքան նա ընդունակ  
էր դրան, կշռադատում էր իր յուրաքանչյուր բառը)։

Ես կարծում եմ, որ մինհստրն արդեն գեկուցել է Սմո-  
լենսկը թշնամուն հանձնելու մասին։ Յավակի է, տիսուր, և ամ-  
բողջ բանակը կատաղած է, որ ամենակարևոր վայրն իգաւր  
թողինք։ Ես, իմ կողմից, անձամբ խնդրեցի ամենաթափանձա-  
գին կերպով, վերջապես, և գրեցի։ բայց ոչ մի բան նրան շնա-  
մողեց։ Երգիտում եմ պատվովս, որ նապալեռնը մի այնպեսի  
ծուլակ է ընկել, ինչպես երթեք, և նա կարող էր կորցնել իր  
բանակի կեսը, բայց Սմոլենսկը շառնել։ Մեր զորքերն այնպես  
էին կովում և այնպես էն կովում, ինչպես երթեք։ Ես 15 հաղա-  
րով՝ 35 ժամից ավելի պահեցի նրանց ու խփում էի նրանց։  
Բայց նա շուգեց մնալ անգամ 14 ժամ։ Սա ամոթ է, և բժժ մեզ  
բանակի անվան վթա, իսկ նա, իմ կարծիքով, այլևս շպիտի  
ապրի աշխարհում։ Եթե նա տեղեկացնում է, թե կորուստ

մեծ է, — ճիշտ չէ։ գուցե մոտ 4 հազար, ոչ ավելի, բայց այդ  
էլ չկա։ թեկուցե տասը, ի՞նչ արած, պատերազմ է։ Բայց  
դրա փոխարեն թշնամին կորցրեց անթիվ-անհամար մարդ։

Ի՞նչ կիներ, եթե մնայինք մի երկու օր ևս Մայրահեղ  
դեպքում՝ նրանք իրենք պիտի գնային, բաշվեին, որովհետեւ  
զուր շունեին մարդկանց ու ձիերի համար։ Նա ինձ խոսք տր-  
վեց, որ չի նաշանջի, բայց հանկարծ ուզարկեց դիսպոզիցիան,  
թե ինքը գլուխը հեռանում է։ Այս ձևով կովել չի կարելի և մենք  
կարող ենք թշնամուն շուտով բերել Մոսկվա։

Լուրեր են պտտում, թե դուք մտածում եք հաշտության  
մասին։ Աստված հեռու ու պահի հաշտությունից։ Այս բոլոր  
զիհաբերություններից հետո և այնպիսի իւելացնոր նահանջ-  
ներից հետո — հատուկի գույքի մուսաստանը ձեր  
գեմ կհանեք, և մեզանից ամեն մեկը ամոթ կհամարի մունդիք  
կրելը։ Եթե այդպես է արդեն — պետք է կովել, քանի հաւ-  
սաստանը կարող է և քանի գեռ մարդկի ոտի վրա են։

Պետք է հրամանատարել մենակ, այլ ոչ թե երկուսով։  
Զեր մինհստրը, գուցե, լավ է մինհստրության գծով, բայց  
որպես գեներալ ոչ թե վատ է, այլ անպետք։ և մեր ամբողջ  
հայրենիքի բախտը հանձնել են նրան... Ես, ճիշտն ասած,  
խենթանում եմ զայրությունը։ Ներեցեք, որ հանդուզն եմ զը-  
րում։ Երեսում է, որ թագավորին չի սիրում և մեր բոլորի կոր-  
ծանումը ցանկանում է նա՝, ով խորհուրդ է տալիս հաշտու-  
թյուն կնքել և բանակի հրամանատարությունը տալ այդ  
մինհստրին։ Այսպես ուրեմն, ես ձեզ գրում եմ ճշմարտությունն։  
աշխարհս զոր պատրաստեցեք։ Որովհետև մինհստրը ամենա-  
վարպետ ձևով իր ետևից մայրաքաղաք է բերում Հյուրին։  
Ամբողջ բանակի մեջ մեծագույն կասկածն է հարուցում պարոն  
Փլիգել աղյուսանտ Վոլցոգենը։ Նա, ասում են, ավելի նապո-  
լեոնին է, քան մերը, և ամեն բան նա է խորհուրդ տալիս  
մինհստրին։ Ես ոչ միայն քաղաքավարի եմ նրա հանդեպ,  
այլ հնագանդում, ենթարկում եմ, ինչպես կապրալ,  
թե տարիքով եմ նրանից։ Դա ցավակի է։ բայց, սիրելով իմ  
բարերարին ու թագավորին, հնագանդում եմ։ Միայն ցա-  
վում եմ թագավորի համար, որ փառապանծ բանակը վատա-  
հում է այդպիսիներին։ Երևակայեցեք, որ մեր նահանջով մենք  
կորցրինք՝ հոգնածությունից ու հիվանդանոցներում 15 հա-

<sup>1</sup> Թեղանքթի միւս

գարից ավելի մարդ, իսկ եթե հարձակվեինք, այդ չէր լինի: Ասացեք, ի սեր աստծո, թե ի՞նչ կասի մեր Ծուսաստանը, մեր մայրը, որ այսպես սարսափում ենք, և ինչո՞ւ այդպիսի բարի ու ջանասեր հայրենիքը հանձնում ենք սրիկաներին և լուրաքանչյուր հպատակի սիրուր ատելություն ու ամոթանք լցնում: Ինչի՞ց ենք վախենում և ումի՞ց: Ես մեղավոր չեմ, որ մինհստրը անվճռական է, վախկոտ, անմիտ, դանդաղկոտ և ամեն տեսակ վատ հատկությունների տեր: Ամբողջ բանակն ուղղակի լաց է լինում և անիծում, նրա մահն է ցանկանում:

## VI

Անթիվ-անհամար ստորաբաժանումների թվում, ստորաբանումներ, որ կարելի է անել կյանքի երեսությունների մեջ, կարելի է այնպիսի ստորաբաժանումներ անել, երբ մի դեպքում բովանդակությունն է գերազուրում, մի այլ գեպքում՝ ձեզ: Սրբիսինների շարքը (հակառակ գյուղական, գեմակի նահանգական, անգամ Մոսկովյան կյանքի) կարելի է դասել Պետերուրդի կյանքը՝ մանավանդ սալոնայինը: Այդ կյանքն անփոփոխ է: 1805 թվից սկսած մենք հաշտվել ու կովել ենք նապուտնի հետ, մենք սահմանադրություններ ենք կազմել և ջնջել, իսկ Աննա Պավլովնայի սալոնը և Ելենի սալոնը մնացել էին ճիշտ նույնը, ինչպես կային մեկը Շտարի, մյուսը 5 տարի սրբանից առաջ: Ճիշտ նույնպես էլ Աննա Պավլովնայի մոտ աւարակուաննքով էին խոսում Բոնապարտի հաջողությունների մասին և ինչպես նրա հաջողությունների, նույնպես և եզրուպական թագավորների կողմից նրան երես տալու մեջ տեսնում էին մի շարամիտ զավագրություն, որի նպատակն էր անախորդություն և անհանգստություն պատճառել պալատական այս այն խմբակին, որի նիրկայացուցչուհին էր Աննա Պավլովնան: Ճիշտ նույնպես էլ Էլենի մոտ, որին ինքը նույնայն, են արժանացնում էր իր այցելության ու նրան համարում շատ խելոք կին, ճիշտ նույնպես, ինչպես 1808 թ., այնպես էլ 1<sup>9</sup>12 թվին հիացումով էին խոսում մեծ ազգի և մեծ մարդու մասին և ափսոսանքով էին վերաբերվում Ֆրանսիայի հետ

Հարաբերությունները խզելուն, մի խզում, որը, էլենի սալունում հավաքով մարդկանց կարծիքով, պետք է վերջանար հաշտությամբ:

Վերջերս, թագավորի բանակից գալուց հետո, այդ ներհակ խմբակ սալոններում որոշ հուզում տեղի ունեցավ և որոշ ցույցեր կատարվեցին միմյանց դեմ, բայց խմբակների ուղղությունը մնաց նույնը: Աննա Պավլովնայի խմբակն ընդունվում էին ֆրանսացիններից միայն քարացած լեգիտիմիստները, և այն հայրենասիրական միտքն էր արտահայտվում, թե չպետք է գնալ ֆրանսական թատրոն, և թե նրա գերասանական խմբի ծախսը նույնքան է, որքան մի ամբողջ կորպուսի ծախսը: Ռազմական դեպքերին հետևում էին ագահությամբ և տարածում էին մեր բանակի համար ամենաշահավետ լուրերը: Էլենի, Ռումյանցեի, ֆրանսասիրական խմբակում հերքվում էին պատերազմի և թշնամու դաժանության մասին եղած լուրերը, և քննվում էին Նապոլեոնի՝ հաշտվելու բոլոր փորձերը: Այդ խմբակում հանդիմանում էին այն մարդկանց, ովքե՛ք խորհուրդ էին տալիս շափազանց հապճեակ կարգադրություններ անել այն մասին, որպեսզի պատրաստություն տեսնեն Կազան տեղափոխելու պալատականներին և կանանց այն կրթարանները, որոնք գտնվում էին մայր-կայսրուհու հովանավորության ներքո: Առհասարակ պատերազմի ամբողջ գործը էլենի սալոնում ներկայանում էր որպես դատարկ ցույցեր, որոնք շատ շուտով պետք է վերջանային հաշտությամբ, և տիրում էր ալժմ Պետերբուրգում գտնվող ու էլենի մոտ տան: և մարդ համարվող (ամեն մի խելոք մարդ պետք է լինի նրա մոտ) Բիլիբինի այն կարծիքը, թե ոչ թե վառողը, այլ այդ վառողը հնարողներն են վճռում գործը: Այդ խմբում հեգնորեն և շատ խելացի, թեեն շատ զգույշ, ծաղրում էին Մոսկվայի խանգավառությունը, որի լուրը թագավորի հետ միասին հասակ Պետերբուրգ:

Աննա Պավլովնայի խմբակում, ընդհակառակը, սրանշանում էին այդ խանգավառություններից և նրանց մասին խոսում էին այնպես, ինչպես Պլուտարքոսն է խոսում հների մասին: Իշխան Վասիլիին, որ էլի նույն կարենը պաշտոններն ուներ, հանդիսանում էր միացման օղակ այդ երկու խմբակների

Աննա Պավլովնան տիրությամբ ժպտաց և նկատեց, թե կուտուզովը, անախորժություններից քացի, ոչինչ չի արել թագավորին:

— Ես ասի և ասի ազնվականների ժողովարանում, — ընթացատեց իշխան Վասիլին, — բայց ինձ լսեցին: Ես ասի, որ նրան, աշխարհապորի պետ ընտրելը թագավորին դուք չեղաքա: Նրանք ինձ լսեցին:

— Միշտ հակառակելու ինչոր մի մոլություն կա, — շաբունակեց նա: — Եվ ո՞ւմ հանդեպ: Այդ բոլորը նրանից է, որ աւզում ենք կապկել մոսկովյան հիմար իսանդավառությունները, — ասավ իշխան Վասիլին, մի վայրկյան շփոթվելով և մոռանալով թե էլենի մոտ պետք է մի քիչ ծիծաղեր մոսկովյան խանդավառությունների վրա, իսկ Աննա Պավլովնայի մոտ հանար նրանցով: Բայց նա անմիջապես ուղղվեց: — Է, մի՞թե վայել է արդյոք կոմս Կուտազովին, Ռուսաստանի ամենածերգությանը, բազմել պալատում, եւ il en restera, pour sa

թելու<sup>1</sup>, միթե կարելի՝ է գլխավոր հրամանատար նշանակել մի մարդու, որ չի կարողանում ծի նստել, որ քնում է խորհրդակցության միջոցին, որ ամենավատ հակումների տեր և Լավ Հանձնարարեց իրեն Բուխարեստում։ Էլ չեմ խոսում նրա։ որպես գեներալի հատկությունների մասին, և միթե կարելի՝ է այդպիսի բոպեի նշանակել մի զառամ ու կույր մարդու, պարզապես կույր։ Լավ կլինի կույր գեներալը։ Նա ոչինչ չի տեսնում։ Ալքակապուկ խաղալու համար է... պարզապես ոչինչ չի տեսնում։

Ոչ ո՞չ շառարկեց դրանք

Հուլիսի 24-ին այդ միանգամայն իրավացի էր Բայց հուլիսի 29-ին Կուտուզովին իշխանական կոչում շնորհվեց: Իշխանական կոչումը կարող էր նշանակել և այն, որ նրանից ուղղում են ազգատվել, ուստի և իշխան Վասիլիի կարծիքը շարունակում էր մնալ ճշմարիտ, թեև նա չէր շտապում իր այդ կարծիքը հայտնել այժմ: Բայց օգոստոսի 8-ին հավաքվեցին Կոմիտեի անդամներ գեներալ Ֆելիքս Ալեքսեևի վեհական կողմէութեան մասին առաջարկութեան համար: Կոմիտեն ուղարկեց առաջարկութեան մասին առաջարկութեան համար: Կոմիտեն ուղարկեց առաջարկութեան մասին առաջարկութեան համար: Կոմիտեն ուղարկեց առաջարկութեան մասին առաջարկութեան համար:

Օգոստոսի 9-ին իշխան Վասիլին՝ Աննա Պավլովնայի մոտ նորից հանդիպեց 1' homme de beaucoup de mérite-ին<sup>2</sup> L'homme de beaucoup de mérite-ն սիրահետում էր Աննա Պավլովնային՝ ցանկանալով նշանակվել օրիորդաց կրթա-րանի հոգաբարձու։ Իշխան Վասիլին սենյակ մտավ երջանիկ հաղթողի տեսքով, մի մարդու, որ հասել էր իր նպատակին։

**3** Իր լավ բարեկամունքուն:

<sup>2</sup> Եր գոտեմ դիվանագիտական սալոնը,  
<sup>3</sup> Թրուխ միանցամայի արժանամբ մառ

<sup>1</sup> Եզ դրանից նա ոչ մի օգուտ չունիր

<sup>2</sup> Միանդամայն արժանավոր մայդե

— Eh bien, vous savez la grande nouvelle. Le prince Goutouzoff est maréchal<sup>1</sup>, მილიონადაშემთხვეულნერე ქარგავაძე ხნის ხა აქანების ხრგანჩე ხმ, აქანების ილაში, — ასიამ ხე ჩეხუან ქასილჩი; — Enfin voilà un homme!<sup>2</sup> — ასაჭ ნა, ნგანაკალები ის წესთ ნაქელიდ ჯილდურაშიამ ქონლილნერჩი:

L'homme de beaucoup de mérite-ը, չնայած պաշտոნ սაհանაլու իր ցանկության, չկարողացավ իրեն զսպել, որպես դի ჩეխան ქասիլիին չհիշեցնի իր նախկին կարծիքը: (Դա անբաղաքավարություն էր՝ թե հանդեպ ჩეխան ქասիլիի, այն էլ Աննա Պավլովնայի հյուրասրահում, թե հանդեպ Աննա Պավլովնայի, որ նույնպես ուրախությամբ ընդունեց այդ լուրը. բայց նա չկարողացավ իրեն զսպել):

— Mais on dit qu'il est aveugle, mon prince?<sup>3</sup> — ასაჭ ნა, ჩეխան ქասիլիին հիշեցնելով իր խոսքերը:

— Allez donc, il y voit assez<sup>4</sup>, — ასაჭ ჩეխան ქասիլի, իր թավ, արագախոս ձայնով ու թեթև հազարով, այն ձայնով ու հազով, որով նա լուծում էր բոլոր դժվարությունները,

— Allez, il y voit assez, — կրկնեց նա: — Եվ ինչո՞ւ եմ ես ուրախ, — շարունակեց նա, — նրա համար, որ թագավորը տվել է նրան լիակատար իշխանություն բոլոր բանակների և ամբողջ ხրկամասի վրա. մի իշխանություն, որ երբեք չի ունեցել և ոչ մի գլխավոր հրամանատար: Դա մի այլ ինքնակալ է, — եղրափակեց նա հաղթական ժպիտով:

— Աստված տա, աստված տա, — ასაჭ Աննա Պավլովնան:

L'homme de beaucoup de mérite-ը, որ նորելուկ էր պալատական հասարակության մեջ, կամենալով շողոքորթել Աննա Պավլովնային, նրա նախկին կարծիքն այդ դատողությունից զատելով, ասավ.

— Ասում են, որ թագավորն այդ իշխանությունն ակամա է պիել Կուտուզովին: On dit qu'il rougit comme une demoiselle.

<sup>1</sup> Է աճա, զիտե՞ք մեծագույն նորությունը: Կուտուզովը՝ մարշալ է:

<sup>2</sup> Վերջապես աճա մի ժարդ:

<sup>3</sup> Բայց չէ՞ որ, ասում են, նա կույր է, իշխան:

<sup>4</sup> Գնացեք, նա ռավականաշափ տեսնում է:

le à laquelle on lirait Joconde, en lui disant: «le souverain et la patrie vous decernent cet honneur»<sup>1</sup>.

— Peut-être que le coeur n'était pas de la partie<sup>2</sup> — ასაჭ Աննա Պավլովնան:

— Օ, ոչ, ոչ, — տաքացած միջամտեց իշխան ქասիլին: Այժմ արդեն նա չէր կարող Կուտուզովին զիշել ոչ ոքի: Իշխան ქասիլիի կարծիքով ոչ միայն Կուտուզովն ինքն էր լավ, այլ և բոլոր պաշտում են նրան: — Ոչ, այդ չի կարող պատահել, որովհետեւ թագավորն առաջ այնպես կարողանում էր զնահատել նրան, — ասավ նա:

— Տա աստված միայն, որ իշխան Կուտուզովը, — ასაჭ Աննա Պավլովնան, — իր ձեռքն առներ իրական իշխանությունը և ոչ ոքի թույլ շտար արգելքներ հարուցանել իր ճանապարհին — des bâtons dans les roues.

Իշխան ქասիլին իսկույն համկացավ, թե ո՞վ էր այդ ոչ ոքը: Նա շշունչով ասավ.

— Ես հաստատ գիտեմ, որ Կուտուզովն անխախտ պայման է դրել, որ գահաժառանգը բանակում լինի: Vous savez ce qu'il a dit à l'Empereur?<sup>3</sup>

Եվ իշխան ქասիլին կրկնեց այն խոսքերը, որ իբր թե Կուտուզովին ասել է թագավորին. «Ես չեմ կարող նրան պատժել, եթե վատ բան անի, և պարզեւատրել, եթե լավ բան անի»:

— Օ՛, դա շատ խելացի մարդ է, իշխան Կուտուզովը, je le connais de longue date<sup>4</sup>:

— Ասում են անգամ, — ასაჭ 1'homme de beaucoup de mérite-ը, որը տակավին պալատական տակտ շուներ, — թե գերազայժառը անխախտ պայման է դրել, որ թագավորն ինքը բանակ շպնա:

<sup>1</sup> Ասում են նա շառագունե: Է, ինչպես մի օրիորդ, որի համար Զինգենդա կարդային, և ասեին «թագավորն ու հայրենիքը ձեզ պարզեւատրում են այս պարզութե»:

<sup>2</sup> Գուցե, միտքն այստեղ անմասն է:

<sup>3</sup> Գիտե՞ք, նա ինչ է ասել կայսեր:

<sup>4</sup> Իս նրան զաղուց եմ ճանաշում:

<sup>5</sup> Միանգամայն արժանաւոր մարդը:

Հենց որ նա ասավ այդ, մի անկթարթում իշխան Վասիլին ու Աննա Պավլովնան երեսները շրջեցին նրանից ու տիրությամբ, հոգոց հանելով նրա միամտության վրա. նայեցին միմյանց:

## VII

Այն ժամանակ, երբ այս տեղի էր ունենում Պետերբուրգում, ֆրանսացիներն արդեն անցել էին Սմոլենսկը և հետրդեմե ավելի ու ավելի մոտենում էին Մոսկվային: Նապոլեոնի պատմագիր Թիեռը նույնպես, ինչպես և Նապոլեոնի մյուս պատմագիրները, աշխատելով արդարացնել իր հերոսին, ասում է, թե Նապոլեոնին Մոսկվա տարան հակառակ իր կամքի Թիեռն իրավացի է, ինչպես իրավացի են և այն բոլոր պատմագիրները, որոնք պատմական դեպքերի բացատրությունը փըստում են մի մարդու կամքի մեջ. նա նույնքան իրավացի է, ինչպես և ուս պատմագիրները, որ պնդում են, թե Նապոլեոնին դեպի Մոսկվա բերեց ուս զորավարների հարամտությունը: Այստեղ ետաղարձության օրենքից բացի, որ ամրող անցածը պատկերացնում է որպես նախապատրաստություն կատարված փաստի համար, կա նաև փոխադարձություն, որ խճնում է ամբողջ գործը: Լավ խաղացողը, երբ շախմատում տարվում է, անկեղծ հավատացած է, թե իր տարվելն առաջապ իր սիսալից, և նա այդ սիսալը փնտրում է իր խաղի կղըում, բայց մոռանում է, որ իր յուրաքանչյուր բայլի մեջ, ամրող խաղի ընթացքում կային նույնական սիսալներ. որ իր և ոչ մի քայլը կատարյալ չէր: Սիսալը, որի վրա նա ուշադրություն է դարձնում, նկատում է միայն այն պատճառը, որ հակառակորդը օգտվեց դրանից: Որքա՞ն ապա ամենի բարդ է սրանից պատերազմի խաղը, որ տեղի է ունենում ժամանակի հայտնի պայմաններում, ուր մենակ կամքը չի դեկավարում անկյանք մեքենաներին, այլ ուր ամեն ինչ բխում է տարբեր կամայականությունների անհամար ընդհարումներից:

Սմոլենսկից հետո Նապոլեոնը ճակատամարտ էր ուզում տալ Վյազմայի մոտ, Դորոդոբութից այն կողմը, ապա Յարև-Զայմիշչեի մոտ. բայց պարզվեց, որ, հանգամանքների անհամար ընդհարումների զորությամբ, մինչև Բորովինո, 112 վերստ Մոսկվայից հեռու, ուստի ըստ Հին կարող ճակատա-

մարտն ընդունել: Նապոլեոնը կարգադրեց Վյազմայից սողիդ գեպի Մոսկվա շարժվելու:

Moscou, la capitale asiatique de ce grand empire, la ville sacrée des peuples d'Alexandre, Moscou avec ses innombrables églises en forme de pagodes chinoises!<sup>1</sup>. — Այդ Moscou-ն հանգիստ չէր տալիս Նապոլեոնի երեակայությանը: Վյազմայից մինչև Յարև-Զայմիշչե Նապոլեոնը զնաց՝ իր պոշտ կորած շորորուն ձին հեծած, գվարդիայի, պահակախմբի, մանկավիկների և աղյուտանտների ուղեկցությամբ: Շտաբի պետ Բերտիկն ետ մնաց նրա համար, որպեսզի հարցաքննի հնձյալների կողմից գերի վերցված ուսւ գերուն: Նա սրարշավ, թարգման Lelorme d'Ideville-ի ուղեկցությամբ հասավ Նապոլեոնին և ուրախ դեմքով կանգնեցրեց ձին:

— Eh bien? — ասավ Նապոլեոնը:

— Un cosaque de Platow<sup>2</sup> ասում է, թե Պլատովի կորպուսը միանում է մեծ քանակի հետ, թե Կուտուզովը նշանակված է գլխավոր հրամանատար: Très intelligent et bavard!<sup>3</sup>:

Նապոլեոնը ժպտաց, հրամայեց այդ կազակին ծի տալ և բերել իր մոտ: Նա ցանկանում էր ինքը խոսել նրա հետ: Մի քանի աղյուտանտներ սլացան, և մի ժամկեց հետո Գենիսովի ճորտը, որ նա զիշել էր Ռուսովին, կավուշկան՝ սպասյակի բաճկոնով, ֆրանսական հեծելակային թամբի վրա, իր խաբերայական ու հարբած ուրախ դեմքով, եկավ-մոտեցավ Նապոլեոնին հրամայեց նրան ձին քշել իր կողքին և սկսեց հարցուփորձել:

— Դուք կազա՞կ եք:

— Կազակ եմ, ձերդ ազնվություն:

«Le cosaque ignorant la compagnie dans laquelle il se trouvait, car la simplicité de Napoléon n'avait rien qui put révéler à une imagination orientale la présence d'un souverain, s'entretint avec la plus extrême familiarité

<sup>1</sup> Մոսկվան, այդ մեծ կայսրության ասիսկան մայրաքաղաքը, Ալեքսանդրի ժողովրդական սրբազն քաղաքն է, Մոսկվան՝ իր անհամար եկեղեցիներով, որոնք ձևով նման են շինական պատղայի (մէջյանի):

<sup>2</sup> Հը: — Պլատովի կազակն

<sup>3</sup> Ծառ ուշիմն է և շատախոս:

des affaires de la guerre actuelle<sup>1</sup>», аսում է Թիեռը, պատմելով  
այս էպիզոդը: Իսկապես, կավրուշկան, որ մի օր առաջ հարթել  
էր և պարոնին թողել առանց ճաշի, նախօրեին ծեծվեց և  
ուղարկվեց գյուղ՝ հավեր բերելու. այնտեղ նա տարվեց հինա-  
հարությամբ և գերվեց ֆրանսացիների կողմից: կավրուշկան  
այն բիրտ, կոպիտ, լկտի, ամեն բան արած սպասավորներից  
մեկն էր, որոնք իրենց պարտքն են համարում ամեն ինչ անել  
ստորությամբ ու խորամանկությամբ, որոնք պատրաստ են  
ամեն ծառայություն անել իրենց տիրոջ համար և ողոնք խո-  
րամանկորեն գուշակում են տիրոջ վատ մտքերը, մանավանդ  
սնափառությունն ու կծիկությունը:

Հնկնելով նապոլեոնի շրջանը, որի անձնավորությունը նա  
շատ լավ և հեշտությամբ ճանաչեց, կավրուշկան բնավ չը-  
փոթվեց և աշխատեց միայն ամբողջ սրտով ժառայել նոր տե-  
րերին:

Նա շատ լավ գիտեր, որ դա ինքը նապոլեոնն է, և նապո-  
լեոնի ներկայությունը չէր կարող նրան ավելի շփոթել, քան  
Ռուսովի կամ Հարվածի ճիպուները ձեռին բռնած վերակայի  
ներկայությունը, որովհետև նա ոչինչ շուներ, որից նրան զըր-  
կել կարողանար ո՞չ վերական, ոչ նապոլեոնը:

Նա գուրս տվեց, ինչ խոսվում էր սպասյակների շրջա-  
նում: Դրանից շատ բան ճիշտ էր: Բայց երբ նապոլեոնը հարց-  
րեց նրան, թե հապա ոռուսները ինչ են մտածում — կհաղթե՞ն  
նրանք Բոնապարտին թե ու, կավրուշկան աշքերը կկոցեց ու  
մտասուզվեց:

Նա այստեղ նկատեց նուրբ խորամանկություն, ինչպես  
միշտ ամեն բանում խորամանկություն են տեսնում կավրուշ-  
կայի նման մարդիկ, հոնքերը կիտեց ու լոեց:

— Այսինքն. եթե կոիվ լինի, — ասավ նա մտախոհ, — ու  
շուտ լինի, որուր կհաղթեք: Էդ հաստատ էդպիս կլինի: է, իսկ  
եթե մի երեք օր անցնի, դրանից հետո, էն ժամանակ ուրեմն  
էդ կոիվը կ'երկարի:

<sup>1</sup> «Կազակը, շիմանալով ինչ հասարակության մեջ է գտնվում, որովհետեւ  
նապոլեոնի պարզության մեջ վար մի այնպիսի բան, որ արեւելան երկա-  
կայության համար պարզել կարողանար թագավորի ներկայությունը — խո-  
սում էր ներկա պատերազմի հանգամանքների մասին ծայլ աստիճան համար-  
ձակ ու մտերմական եղանակով»:

Այս բանը նապոլեոնին թարգմանեցին այսպիս: «Si la  
bataille est donnée avant trois jours, les français la gag-  
neraient, mais que si elle serait donnée plus tard, Dieu sait  
ce qui en arriverait»<sup>1</sup>, ժպտալով հայտնեց Lelorme d'Ide-  
ville. Նապոլեոնը շժպտաց, թեև նա բայց երկութին, ամե-  
նառական տրամադրության մեջ էր, ու հրամայեց այդ խոսքերը  
կրկնել:

կավրուշկան նկատեց այդ և, որպեսզի նրան ուրախացնի,  
ասավ, ձեւալով, թե զգիտի նրա ով լինելը:

— Գիտեմ, դուք Բոնապարտ ունեք, նա բոլորին հաղթել է  
աշխարհում, իսկ մենք ուրիշ բան է... — ասավ նա, ինքն էլ  
շիմանալով ինչպես և ինչո՞ւ համար, վերջում նրա խոսքերի  
մեջ գլուխ բարձրացրեց պարձենկոտ հայրենասիրությունը:

Թարգմանն այն խոսքերն առանց վերջավորության հայտ-  
նեց նապոլեոնին, և Բոնապարտը ժպտաց. «Le jeune cosaque  
fit sourire son puissant interlocuteur»<sup>2</sup>, — ասում է Թիեռը:  
Զին մի քանի քայլ լուս քշելով, նապոլեոնը դիմեց Բերտիկեին  
և ասավ, որ նա ուզում է փորձել, թե ինչ ազդեցությունն կանի  
Դոնի այս զավակի վրա այն տեղեկությունը, թե այն մարդը,  
որի հետ խոսում էր Դոնի այս զավակը, ինքը կայսրն է, նույն  
այն կայսրը, որ եգիպտական բուրգերի վրա գրել է իր անմահ հաղթական անունը:

Եվ այդ բանը հայտնվեց:

կավրուշկան (հասկանալով, որ այդ արվում է իրեն շր-  
փոթելու համար, և որ նապոլեոնը կարծում է, թե նա կվախ-  
նա), որպեսզի դուր գա նոր տերերին, իսկույն ևեթ ձեւալով  
զարմացած, շշմած, աշքերը շոեց և այնպիսի գեմք ընդունեց,  
որ ընդունում էր սովորաբար, երբ իրեն ծեծելու էին տանում.  
«A peine l'interprète de Napoléon, — ասում է Թիեռը, —  
avait-il parlé, que le cosaque, saisi d'une sorte d'ébahissement  
ne proféra plus une parole et marcha les yeux constamment attachés sur ce conquérant, dont le nom avait  
pénétré jusqu'à lui, à travers les steppes de l'Orient.

<sup>1</sup> Եթե ճակատամարտը տեղի ունենա երեք օր առաջ, ֆրանսացիները  
կշահեն այն, իսկ եթե ավելի ուշ, աստված գիտի, թե դրանից ինչ կստաց-  
գի:

<sup>2</sup> Նրիտասարդ կազակն ստիպեց իր հզոր խոսակցին ժպտալ:

Toute sa loquacité s'était subitement arrêtée, pour faire place à un sentiment d'admiration naïve et silencieuse. Napoléon, après l'avoir récompensé, lui fit donner la liberté, comme à un oiseau qu'on rend aux champs qui l'ont vut naître<sup>1</sup>.

Նապոլեոնը ձին քշեց-գնաց առաջ, երազելով այն Մօսկու-ի մասին, որ այնպէս զբաղեցնում էր նրա երեկայությունը, իսկ ա լ'օiseau քո'ոն հանդիպում էր առաջապատճերը, առաջուց հայրելով այն բոլորը, ինչ չեր եղել, և ինչ որ պատմելու էր յուրաքինների մոտ: Իսկ այն, ինչ իրոք պատմել էր իրեն, նա չեր ուզում պատմել հենց այն պատճառով, որ զա թվում էր նրան պատմելու անարժան: Նա գնաց կազակների մոտ, հարցուվարձեց, թե որտեղ է Պլատովի ըոկատում գտնվող գունդը և երեկոյան դնմ արդեն գտավ իր տիբուջը՝ Նիկոլայ Ռոստովին, որ կանգ էր առել Յունկովում և հենց նոր ծի էր նստել, որ իիհի հետ գործանք կատարի շրջակա գյուղերում: Նա կավուշկային մի ուրիշ ծի սկզբ և նրան տարալ հետը:

## VIII

Իշխանագուստը Մարիան Մոսկվայում չեր և ոչ էլ վտանգից դուրս, ինչպէս կարծում էր իշխան Անդրեյը:

Ալպատիչի Սմոլենսկից վերադառնալուց հետո ծեր իշխանը կարծես հանկարծ սթափվեց բնից: Նա հրամայեց աշխարհաբոր հավաքել գուոցերից, զինել նրանց և գլխավոր հրամանատարին գրեց մի համակ, որի մեջ հայտնում էր նրան իր մտագրությունը, թե մնալու է կիսի Գորիում մինչև վերջը և պաշտպանվելու է, թողնելով նրան միջոցներ ձեռք առնել կամ շատել կիսի Գորիի պաշտամության համար, որ զերի

<sup>1</sup> Հենո որ նապոլեոնի թարգմանն այս բանն ասավ կազակին, նա յի տեսակ քարացավ, ոչ մի խոսք չարտասանեց և շարունակեց գնալ ծիռվ, աւելուր լինացնելով աշխարհակալից, որի անունը հասել էր երան արեկելիք տափաստանների միջով: Նրա զրոցամիրությունը հանկարծ կրուզ և տեղի տվեց մի միամիտ ու անխոս հրացումի: Նապոլեոնը պարզեարելով նրան, ազտառթյուն տվեց նրան, ինչպէս մի թոշունի, որին վերադառնում են իր հայրենի դաշտերը, որոնք տեսել են նրա ծնունդը:

<sup>2</sup> Նրա ծնունդը տեսակ հայրենի դաշտերին վերադառձած թուում:

կառնվի կամ կսպանվի ոուսական հնագույն գեներալներից մեկը, ու տնեցիներին հայտարարեց, թե ինքը մնալու է կիսին Գորիում:

Բայց, ինքը կիսին Գորիում մնալով, իշխանը կարգադրություններ արավ իշխանագուստերն ու Դեսալին, փոքրիկ իշխանի հետ ուղարկել Բոգուշարովո, իսկ այնաւելից Մոսկվա: Իշխանագուստը Մարիան, վախեցած հոր տենդագին, անքուն գործունեությունից, որ փոխարինել էր նրա նախկին քնիեածության վիճակին, չկարողացավ նրան մենակ թողնելու որոշում ընդունել և կյանքում առաջին անգամ թույլ տվեց իրեն չնազանդել հորը: Նա հրաժարվեց մեկնել, և նրա գլխին թափվեց իշխանի գայրույշի սարսափելի փոթորիկը: Նա գտտերը հիշեցրեց բոլորը, ինչ բանում անարդար էր եղել նրա հանդիպ: Աշխատելով մեղադրել դստեր, նա նրան ասավ, թե նա՝ գուստը տանջել է իրեն, կովեցրել է որդու հետ, զազրելի կասկածներ է ունեցել իր գեմ, թե նա իր կյանքի նպատակն է դարձրել թունավորել հոր կյանքը, ու գուրս արավ դստերն իր առանձնասենյակից, ասելով թե, եթե նա չի մեկնի, իր համար միենալուն է: Նա ասավ դստեր, թե նրա գոյությունը ճանաշել չի ուզում, բայց առաջուց նախազգուշացնում է նրան, որ նա շամարձակվի իր աշքին երեալ: Այն, որ հայրը, հակառակ իշխանագուստը Մարիայի երկրուղներին, շրամայեց զոռով տանել իրեն, այլ հրամայեց միայն աշքին շերեալ, ուրախացրեց իշխանագուստը Մարիային: Նա գիտեր, որ զա պացցուցում է այն, որ հայրը իր հոգու գաղտնարանում ուրախ է, որ նա՝ դուստը մնում է տանը և չի մեկնում:

Նիկոլուշկայի մեկնելու հետեւյալ օրը ծեր իշխանը առավուտյան հագավ իր գեներալական բոլոր զգեստները և պատրաստից գնալ գլխավոր հրամանատարի մոտ: Կառքն արգեհ կանգնած սպասում էր: Իշխանագուստը Մարիան տեսավ, թե ինչպէս նա, մունդիր հագած ու բոլոր շքանշանները կրծքին, դուրս եկավ տնից ու գնաց պարտեզ՝ դիտելու զինված գյուղացիներին ու սպասավորներին: Իշխանագուստը Մարիան նստել էր լուսամուռի մոտ ու ականջ էր դնում հոր ձայնին, որ գալիս էր պարտեզից: Հանկարծ ծառուղուց դուրս վագեցին մի քանի մարդիկ՝ վախեցած դիմքերով:

Իշխանագուստը Մարիան դուրս վազեց, գնաց սանդուղք-ների գլուխը, ծաղկանոցի ճանապարհը և ժառուղին։ Դեպի նա շարժվում-գալիս էր աշխարհազորականների և սպասավորների մի մեծ բազմություն, և այդ բազմության մեջ մի քանի մարդ՝ թևատակերից բռնած քաշելով բերում էին մունդիրով ու շը-քանչաններով մի փոքրիկ ծերունու։ Իշխանագուստը Մարիան մոտ վազեց նրան, և փոքրիկ բոլորակներով ընկնող լույսի խաղի մեջ, լորիների ծառուղու ստվերի միջով, չկարողացավ հաշիվ տալ իրեն, թե ի՞նչ փոփոխություն է կատարվել հոր դեմքին։ Միակ բանը, որ նա տեսալ, այն էր, որ հոր դեմքին նախկին խիստ ու վճռական արտահայտությունը տեղի է տը-վել վեհերոտ ու հնագանդ արտահայտության։ Աղջկանը տես-նելով՝ նա շարժեց անզոր շուրթերը և խոխոացրեց։ Անկարելի էր հասկանալ, թե նա ի՞նչ է ուզում։ Իշխանին բարձրացրին ձևուների վրա, տարան իր առանձնասենյալը ու պառկեցրին այն բազմոցի լուս, որից այնպես նա վախենում էր վերջերս։

Բերված բժիշկը նույն գիշերն արյուն առավ և հայտարա-բեց, թե իշխանն աշ կողմից կաթված է ստացել։

Լիսիկ Գորիում մնալը հետզհետե դառնում էր ավելի վտան-գավոր, և կաթվածի մյուս օրը իշխանին տարան թոգուշարովու-թժիշկը մեկնեց նրա հետ միասին։

Երբ նրանք եկան բոգուշարովով, Դեսալը փոքրիկ իշխանի հետ արդեն մեկնել էր Մոսկվա։

Միշտ նույն դրության մեջ, ոչ ավելի լավ, ոչ ավելի վատ, կաթվածահար ծեր իշխանը երեք շաբաթ պառկեց թոգուշա-րովոյում՝ նոր, իշխան Անդրեյի կառուցած տանը։ Տեր իշխանն ուշակորույս վիճակի մեջ էր. նա պառկած էր ինչպես այլան-դակված դիակ։ Նա անդադար քրթմնջում էր ինչ-որ, հոնքերն ու շրթունքները ցնցելով, և անկարելի էր իմանալ, թե նա հաս-կանում է կամ ոչ այն, ինչ շրջապատում է իրեն։ Հաստատա-պես կարելի էր իմանալ մի բան. — ա'յն, որ նա տանջվում էր և կարիք էր զգում էլի մի բան արտահայտվելու։ Բայց թե ի՞նչ էր դա, ոչ ոք չէր կարողանում հասկանալ. զա արդյո՞ք հիվան-դի և կիսախենթի որևէ քմահաճույքն էր, վերաբերո՞ւմ էր դա արդյոք գործերի ընդհանուր ընթացքին, թե՝ վերաբերում էր ընտանեկան հանգամանքներին։

Բժիշկն ասում էր, թե նրա արտահայտած անհանգստու-թյունը ոչինչ չէր նշանակում. որ դա ուներ ֆիզիկական պատ-ճառներ. բայց իշխանագուստը Մարիան մտածում էր (և այն, որ իր ներկայությունը միշտ սասակացնում է հոր անհանգս-տությունը, հաստատում էր նրա ենթադրությունը), մտածում էր, թե հայրն ինչ-որ բան է ուզում ասել իրեն։

Տեր իշխանն, ըստ երևույթին, տանջվում էր թե՝ ֆիզիկա-պես, թե՝ բարոյապես։ Առողջացման հույս չկար։ Տանել նրան մի տեղ — չէր կարելի։ Եվ ի՞նչ կլիներ, եթե նա մեռներ ճա-նապարհին։ «Ավելի լավ չէր լինի արդյոք վերջ-վախճան լի-ներ բոլորովին», երբեմն մտածում էր իշխանագուստը Մա-րիան։ Նա գիշեր ու ցերեկ, գրեթե անքուն, հետևում էր նրան և, սարսափելի է ասել, նա հաճախ հետևում էր նրան ոչ թե թեթե-վացման նշաններ գտնելու հույսով, այլ հետևում էր հաճախ ցանկանալով գտնել մոտալուտ վախճանի նշանները։

Որքան էլ տարօրինակ էր իշխանագուստը համար՝ գիտակ-ցել իր մեջ այդ զգացումը, բայց դա կար նրա մեջ։ Եվ որն ավելի սարսափելի էր իշխանագուստը Մարիայի համար, դա այն էր, որ հոր հիվանդության օրից (անգամ թերևս և առաջ, այն ժամանակ գուցե, երբ նա, ինչ-որ բանի սպասելով, մնաց նրա մոտ) նրա մեջ զարթնեցին սրտումը նիրհած, մոռացված անձ-նական բոլոր ցանկություններն ու հույսերը։ Այն, ինչ տարի-ներով չէր անցնում նրա մտքով, — մտքեր՝ հոր վախից ազա-կյանք ունենալու մասին, անգամ մտքեր՝ սիրո և ընտանեկան երջանկության մասին, այժմ որպես սատանայի փորձություն, անդադար դառնում էին նրա երևակայության մեջ։ Որքան էլ նա այն վանում էր իրենից, այնուամենայնիվ անդադար նրա միտքը պաշարում էին հարցեր այն մասին, թե նա այժմ, դրանից հետո, ինչպես կդասավորի իր կյանքը։ Դրանիք սատա-նայի փորձություն էին, և իշխանագուստը Մարիան գիտեր այդ։ Նա գիտեր, որ միակ զենքը զբա դեմ աղոթքներն էին, և նա փորձում էր աղոթել։ Նա կանգնում էր աղոթքի, նայում էր սրբապատկերներին, արտասանում էր աղոթքի բառեր, բայց չէր կարողանում աղոթել։ Նա զգում էր, որ իրեն այժմ համակել է մի ուրիշ աշխարհ — կյանքի, աշխատանքի և ազատ գործու-նեության աշխարհ, որ միանգամայն հակադիր է այն բարոյա-կան աշխարհին, որի մեջ նա բանտարկված էր առաջ, և որի մեջ

Նրա լավագույն մխիթարանքն էր՝ աղոթքը։ Նա չէր կարութանում աղոթել և չէր կարողանում լալ, ու կյանքի հոգաբամակել էր նրան։

Բողուշարովոյում մնալը դառնում էր վտանգավոր։ Ամեն կողմից լսվում էր մոտեցող ֆրանսացիների մասին, և մի զյուղում, որը գտնվում էր Բողուշարովոյից 15 վերստ հեռու, կալէածատիրական մի դաստակերտ կողոպտվել էր ֆրանսացի ժարողյուների ձեռքով։

Բժիշկը պնդում էր, թե իշխանին պետք է տանել հեռու։ Ազնվականության պարագլուխը մի պաշտոնյա ուղարկեց իշխանադուստր Մարիայի մոտ, համոզելով մեկնել որքան կարելի է շուտ։ Չրջանի սոստիկանապետը, Բողուշարովո գալով, պնդեց նույնը, ասելով թե, ֆրանսացիները գտնվում են քառասուն վերստի վրա, թե գյուղերում շրջան են առնում ֆրանսական թուուցիները, և եթե իշխանադուստրը մինչև 15-ը շմեկնի հոր հետ, ապա նա ոչ մի բանի համար պատասխանատու չէ։

Իշխանադուստրը որոշեց 15-ին մեկնել, Պատրաստության հոգսերը, կարգադրությունները, որոնց համար բոլորը դիմում էին նրան, ամբողջ օրը զբաղեցրին նրան։ 14-ի լույս 15-ի գիշերը նա, սովորականի պես, առանց հանվելու, անցկացրեց սենյակում, որ կից էր այն սենյակին, ուր պառկած էր հայրը։ Մի քանի անգամ, զարթնելով, նա լսեց հոր տնքոցները, բըրթմընցունը, մահճակալի ճոճող և հորը այս կամ այն կողմի վրա շրջող Տիխոնի և բժշկի քայլերի ձայնը։ Մի քանի անգամ նա ականջ դրեց դռան մոտ, և նրան թվաց, թե հայրն այժմ քրթմընցում էր սովորականից բարձր ձայնով և շրջվում էր հաճախ։ Նա չէր կարողանում քննել ու մի քանի անգամ մոտեցավ դռանը, ականջ դնելով, ցանկանալով ներս մտնել, բայց չէր համարձակվում այդ անել։ Հայրը թեև չէր ասում, բայց իշխանադուստր Մարիան տեսնում էր, գիտեր, թե որքան հորը տհաճ էր երկյուղի ամեն մի արտահայտություն իր նկատմամբ։ Իշխանադուստրը նկատում էր, թե ինչպես հայրը դգոհությամբ երեսը շրջում էր իր հայացքից, որ երբեմն ակամա ու համառորեն հառած էր լինում նրա վրա։ Նա գիտեր, որ եթե ինքը գիշերը, անսովոր ժամանակ մտներ հոր սենյակը, դա կըդարգուեր նրան։

Բայց երբեք իշխանադուստրը համար այնպես ցակալի, այնքան սարսափելի չէր եղել նրան կորցնելու միտքը։ Կա հիշում էր հոր հետ անցրած իր ամբողջ կյանքը, և նրա յուրաքանչյուր խոսքի ու վարմունքի մեջ գտնում էր նրա սիրապատհայտությունը դեպ իրեն։ Այդ հիշողությունների արանքում երբեմն ակի նրա երևակայությունն էին խուժում սատանայի փորձությունները և մտածումներ, թե ի՞նչ է լինելու նրա մահից հետո և ինչպես կգասավորվի իր նոր, ազատ կյանքը։ Բայց նա այդ մտքերը զգվանքով վանում էր իրենից։ Առավոտյան դեմ հայրը հանդարտեց, և իշխանադուստրը բրնեց։

Նա զարթնեց ուշ։ Այն անկեղծությունը, որ լինում է արթնանալիս, պարզորեն ցույց տվեց այն, թե հոր հիվանդության մեջ ի՞նչն է ավելի զբաղեցնում իրեն։ Նա զարթնեց, ականջ դրեց, թե ինչ կա դռան ետեղը, և հոր անքոցները լսելով, հոգոց քաշելով ասավ իրեն, թե դարձյալ նույնն է։

— Բայց ի՞նչ պիտի լինի հապաւ։ Ես ի՞նչ էի ուզում որք ես նրա մահն եմ ցանկանում, — ճշաց նա, ինքն իրենից զըշելով։

Մուտքի առաջ կանգնած էին առանց ձիերի կառքեր, որոնց մեջ իրեր էին դարսում։

Տաք և գորշ առավոտ էր։ Իշխանադուստրը կանգ առավ մուտքի առաջ, շարունակ սարսափելով ինքն իր հոգեկան զարդելիության հանդեպ և աշխատելով իր մտքերը կարգի բերել նախքան հոր սենյակը կմտներ։

Բժիշկն իշավ ասուի հանններից և մոտեցավ նրան։

— Նա հիմա ավելի լավ է, — ասավ բժիշկը։ — Ես ձեզ որոնում էի։ Նրա ասածներից կարելի է մի որեէ բան հասկանաւ, գլուխն ավելի թարմ է։ Գնանք։ Նա ձեզ կանչում է…

Իշխանադուստր Մարիայի սիրտն այնպես սաստիկ խփեց այդ խոսքերից, որ նա գումատվելով հենվեց դռանը, որ շնչնի։ Տեսնել նրան, խոսել նրա հետ, ընկնել նրա հայացքի տակ այժմ, երբ իշխանադուստր Մարիայի սիրտն ամբողջ լիքն էր այդ սարսափելի, հանցավոր գայթակղություններով — տաճանելիորեն ուրախ ու սարսափելի էր։

— Գնանք, — ասավ բժիշկը :

Իշխանադուստր Մարիան մտավ հոր սենյակը և մոտեցավ նրա մահճակալին: Նա պառկած էր բարձր՝ մեջքի վրա, փոքրիկ, սկրոտ, մանիշակագույն հանգուցավոր երակներով ծածկ-էած ձեռները վերմակի վրա դրած. նրա ձախ աշքը սկսում նայում էր ուղիղ, ազը ծովել էր, հոնքերն ու շրթունքներն անշարժ էին: Նա ամբողջապես այնքա՞ն նիշար էր, փոքրիկ ու խղճալի: Նրա դեմքը կարծես շորացել ու հալվել էր, դիմագծերը մանրացել: Իշխանադուստրը մոտեցավ և համբուրեց նրա ձեռը: Հոր ձախ ձեռն այնպես սեղմեց նրա ձեռը, որից երևում էր, որ նա վաղուց էր սպասում աղջկան: Նա ցնցեց աղջկա ձեռը և նրա հոնքերն ու շրթունքները շարժվեցին բարկացած:

Իշխանադուստրը վախեցած նայեց նրան, աշխատելով գուշակել, թե հայրն ի՞նչ է ուզում իրենից, երբ նա, դիրքը փոխելով, առաջ եկավ այնպես, որ հոր ձախ աշքը տեսավ իրեն, հայրը հանգստացավ մի քանի վայրկյան, աշքը շնեպացնելով աղջկանից: Ապա նրա շուրթերն ու լեզուն շարժվեցին, հնչաւներ լսվեցին, և նա սկսեց խոսել, երկյուղով ու աղերսագին աղջկանը նայելով, ըստ երևույթին, վախենալով, թե նա չի հասկանա իրեն:

Իշխանադուստր Մարիան, ուշադրության ամբողջ ուժը լարած, նայում էր նրան: Այն կոմիկ ճիգը, որով հայրը պտտում էր լեզուն, սուիպում էր իշխանադուստր Մարիային՝ աշքերը խոնարհել և դժվարությամբ ճնշել կոկորդում բարձրացող հեկեկանքները: Նա ինչ-որ բան ասավ, բառերը մի քանի անգամ կրկնելով: Իշխանադուստր Մարիան շկարողացավ հասկանալ այդ խոսքերը, բայց նա աշխատում էր գուշակել այն, ինչ ասում էր հայրը, և հարցականորեն կրկնում էր նրա ասած խոսքերը:

— Հա-հա — ցա... ցա... — կրկնեց իշխանը մի քանի անգամ...

Ոչ մի կերպ չէր կարելի հասկանալ այդ խոսքերը: Բժիշկը կարծում էր, թե գուշակել է, և, իշխանի խոսքը կրկնելով, հարցուց, իշխանադուստրը վախենում է: Իշխանը գլուխը շարժեց բացասաբար և նորից կրկնեց նույնը...

— Սիրտս, սիրտս ցավում է, — գուշակեց և ասավ իշխանադուստրը:

Իշխանը մզզաց դրականորեն, բռնեց աղջկա ձեռը և սկսեց սեղմել այն իր կրծքի տարբեր մասերին, կարծես նրա համար իսկական մի տեղ փնտրելով:

— Ամբո՞ղջ մտածունքս... քո մասին... մտածում եմ... — ապա արտասանեց նա ավելի լավ ու հասկանալի, քան առաջ, այժմ, երբ հավատացած էր, որ իրեն հասկանում են:

Իշխանադուստր Մարիան գլուխը սեղմեց հոր ձեռին, աշխատելով թաքցնել իր հեկեկանքներն ու արցունքները:

Իշխանը ձեռքով շփում էր նրա մազերը:

— Ես ամբողջ գիշերը կանչում էի քեզ... — արտասանեց նա:

— Եթե ես իմանայի... — արցունքների միջից ասավ իշխանադուստրը: — Ես վախենում էի ներս մտնեմ:

Իշխանը սեղմեց նրա ձեռը:

— Դու չես քնե՞լ:

— Ոչ, չեմ քնել, — ասավ իշխանադուստր Մարիան, գլուխը բացասաբար շարժելով:

Ակամա ենթարկելով հորը, իշխանադուստրն այժմ, ինչպես հայրն էր խոսում, աշխատում էր խոսել ավելի նշաններով և կարծես նույնպես դժվարությամբ լեզուն պտտելով:

— Հոգյակս... կամ բարեկամս... — իշխանադուստր Մարիան շկարողացավ զոկել, հասկանալ. բայց հավանորեն, հոր նայվածքի համեմատ, ասավ քնքուշ, փաղաքշական մի խոսք, որ երեք շէր ասել: — Ինչո՞ւ չեկար:

«Իսկ ես սրա մահն էի ցանկանո՞ւմ», — մտածեց իշխանադուստրը:

Եեր իշխանը լոեց:

— Ծորհակալ եմ քեզանից... աղջկաս, սիրելի բարեկամըս... ամեն բանի, ամեն բանի համար... ներիր... շնորհակալ եմ... ներիր... շնորհակալ եմ... — եղ արցունքները հոսեցին նրա աշքերից: — Անդրյուշային կանչեցեք, — հանկարծ ասավ նա, և ինչ-որ մանկական-երկշուտ ու անվստահ մի բան արտահայտվեց նրա դեմքին այդ հարցումի միջոցին:

Նա կարծես ինքը գիտեր, որ իր պահանջը իմաստ շունիք գեթ այլպես թվաց իշխանադուստր Մարիային:

— Ես նրանից նամակ եմ ստացել, — պատասխանեց իշխանագուստը:

Հայրը զարմանքով ու երկյուղով նայեց դստեր:

— Իսկ որտե՞ղ է նա:

— Նա բանակում է, տոն թերե, Սմոլինսկում:

Եթե իշխանը երկար լուռ էր, աշքերը փակած, ապա դրականապես, կարծես ի պատասխան իր կառածների և ի հաստատություն այն բանի, թե այժմ նա ամեն ինչ հասկացավ ու հիշեց, դլուխը շարժեց ու աշքերը բացեց:

— Այո, — ասավ նա որոշակի ու հանդարտ: — Կորա՞վ Ռուսաստանը: Կործանեցի՞ն:

Եվ նա նորից հեկեկաց, ու արցունքները հոսեցին նրա աշքերից: Իշխանադուստը Մարիան չկարողացավ այլևս պահել իրեն և նույնապես լաց եղավ, հոր դեմքին նայելով:

Եթե իշխանը նորից աշքերը փակեց, նրա հեկեկանքները դադարեցին: Նա նշան արագ դեպի աշքերը, և Տիխոնը, նրան հասկանալով, սրբէց նրա արցունքները:

Ապա նա աշքերը բացեց ու ինչ-ոք նոր բան ասավ, որ երկար ոչ ոք չկարողացավ հասկանալ, և, վերջապես, հասկացավ ու հայտնեց միայն Տիխոնը: Իշխանադուստը Վարթան նրա խոսքերի իմաստը փնտրում էր այն տրամադրության մեջ, որով նա խոսում էր մի բռպի դրանից առաջ: Մերթ մտածում էր, թե հայրը խոսում է Ռուսաստանի մասին, մերթ իշխան Անդրեյի մասին, մերթ իր, մերթ թոռան, մերթ իր մահվան մասին: Եվ դրանից էլ չկարողացավ գուշակել նրա խոսքերը:

— Հագիր քո սպիտակ հագուստը, ես սիրում եմ այն, — ասավ նա:

Այս խոսքերը հասկանալով, իշխանադուստը Մարիան հեկեկաց ավելի բարձրածայն, և թժիշը նրա թեր մտնելով սենյակից դուրս բերեց նրան տերրասը, համոզելով հանգստանալ և զբաղվել մեկնելու պատրաստությամբ: Նրանից հետո, եթե իշխանադուստը Մարիան դուրս եկավ հոր սենյակից, իշխանը նորից խոսեց որդու մասին, պատերազմի մասին, թագավորի մասին, Հոնքերը ցնցեց բարկացած, սկսեց խոպոտ ձայնը բարձրացնել, և նա ստացավ երկրորդ ու վերջին հարվածը:

Իշխանադուստը կանգ առավ տերրասում: Օրը բացվել էր. տաք էր և շորք նա չեր կարողանում ուժինչ հասկեաբ, ոչ ոք:

Քանի մասին մտածել և ոչինչ զգալ, բացի դեպի հայրն ունեցած բուռն սերը, մի սեր, որը, նրան թվում էր, չէր ճանաչել մինչ այդ բոպեն: Նա վագեց պարտեզ և, հեկեկալով, իշխան Անդրեյի տնկած զահել լորիների ծառուղով վագեց դեպի լճակը:

— Ես... այո... ես... ես նրա մահն էի ցանկանում: Ա, ո, ես ցանկանում էի, որ ավելի շուտ վերջանա... ես ուզում էի հանգստանամ... Իսկ ի՞նչ պիտի անեմ հապա ես: Ինչի՞ն է պիտք հանգստությունը, երբ նա էլ չի լինի, — բրթմնջում կը բարձրածայն իշխանադուստը Մարիան, արագ բայլերով անցնելով պարտեզով և ծեռներով կուրծքը ճնշելով, որից զՊարար դուրս էին պոռթկում հեկեկանքները:

Անցնելով այգու շրջանաձև ծառուղին, որը կրկին բերեց նրան տան մոտ, նա տեսավ դեպի իրեն եկող մ-ի Բուլլիկենին (որ մնում էր Բոգուշարովոյում և այդտեղից չէր ուզում մեկնել) և մի անծանոթ տղամարդու: Դա գավառի պարագրություն էր, ինքը եկել էր իշխանադուստը մոտ նրա համար, որ ներկայացնի նրան շուտ մեկնելու ամբողջ անհրաժեշտությունը: Իշխանադուստը Մարիան լսում էր նրան ու չէր հասկանում: Նա այդ մարգան տարավ տուն, առաջարկեց նախաճաշել և նստեց նրա մոտ: Հետո, ներողություն խնդրելով, նա մոտեցավ ծեր իշխանի սենյակի դռանը: Բժիշկն այլայլված գեմքով դուրս եկավ նրա մոտ և ասավ, որ չի կարելի:

— Գնացեք, իշխանադուստը, գնացե՞ք, գնացե՞ք:

Իշխանադուստը նորից գնաց պարտեզ և բլուրի տակ լճակի ափին, մի տեղ, ուր ոչ ոք չէր կարող տեսնել իրեն, նստեց կանաչների վրա: Նա շիմացավ որքան երկար էր նըստել այդտեղ: Մեկ էլ ճանապարհով վազող կանացի բայլերն ստիպեցին նրան սթափվել: Նա վեր կացավ և տեսավ, որ Դունյաշան, նրա սպասուհին, հավանորեն, նրա ետկից գալով, հանգարծ կարծես իր օրիորդի տեսքից վախեցած, կանգ առավ:

— Համեցեք, իշխանադուստ... իշխանը... — ասավ Դունյաշան բեկված ձայնով:

— Խսկույն, գալիս եմ, գալիս եմ, — հապճեա ասավ իշխանադուստը, ժամանակ շտալով Դունյաշային ասել այն, ինչ պիտի ասեր և, ազիտանելով շտանել Դունյաշային, վագեց դեպի տուն:

— իշխանադուստր, աստծու կամքը կատարված է, դուք պետք է պատրաստ լինեք ամեն բանի, — ասավ պարագլուխը, դիմելով նրան մուտքի դռան մոտ:

— Թողեք ինձ. դա ճիշտ չի, — շարացած ճշաց իշխանադուստրը նրա վրա:

Բժիշկն ուզեց կանգնեցնել նրան: Նա հրեց թժշկին և վագեց զեպի դուռը: «Եվ ինչո՞ւ են այս մարդիկ վախեցած դեմքերով կանգնեցնում ինձ: Ինձ ոչ ոք հարկավոր չի: Եվ ի՞նչ են անում սրանք այստեղ»: Նա դուռը բաց արավ, և ցերեկվա պայծառ լույսը այդ առաջվա կիսախալվար սենյակում սարսափեցրեց նրան: Սենյակում կանայք էին և դայակը: Նրանք բոլորը են քաշվեցին մահճակալից, ճանապարհ տալով նրան: Հայրը դարձյալ պառկած էր մահճակալին. բայց նրա հանգիստ դեմքի խիստ տեսքը իշխանադուստր Մարիային կանգնեցրեց սենյակի շեմքին:

«Ոչ, նա չի մեռել, այդ չի կարող պատահել», ասավ իշխանադուստր Մարիան ինքն իրեն, մոտեցավ հորը և, հաղթահարելով իրեն համակած սարսափի, շուրթերը սեղմեց հոր այտին: Բայց նա իսկույն էլ ետ քաշվեց նրանից: Հոր նկատմամբ իր մեջ զգացած ամբողջ քնքանքի ուժը վայրկենապես չքացավ և տեղի տվեց սարսափի զգացումին հանդեպ այն բանի, ինչ տեսավ իր առաջ: Շնա այլևս չկա, չկա՞: Նա չկա, բայց հենց այստեղ, նույն տեղում, ուր նա էր, կա ինչ-որ օտար ու թշնամական մի բան, մի ինչ-որ ահարկու, սարսափելի ու վանող գաղտնիք»: Եվ, ձեռներով երեսը ծածկելով, իշխանադուստր Մարիան ընկավ իրեն բոնող թժշկի ձեռների վրա:

Տիխոնի և թժշկի ներկայությամբ կանայք լվացին այն, ինչ նա էր, գլուխը կապեցին թաշկինակով, որ բերանը բաց շմնա և մի ուրիշ թաշկինակով կապեցին իրարից հեռու մնացած ոտները: Ապա նրանք հագցրին մունդիրն իր շքանշաններով և սեղանի վրա դրին փոքրիկ շորացած մարմինը: Աստված գիւհ՝ ո՛վ և երբ հոգաց այդ մասին, բայց ամեն ինչ արվես ինքն իրեն: Գիշերվա դեմ դագաղի շուրջը վառվում էին մոմեր, դագաղի վրա փուլած էր երեսքաշ, հատակին ցանված էին գլուխ ծառի ճղներ, մեռած շորացած գլխի տակ դրված էր տպապիր աղոթք, իսկ անկյունում նստել էր դպիրը և Սաղմոս էր կարդում:

Ինչպես ձիերը խրտնում, խմբվում ու փնչացնում են մեռած ձիու մոտ, այդպես էլ հյուրասրահում դագաղի շուրջը խմբվել էին յուրային և օտար մարդիկ — պարագլուխը և տանուտերը և կանայք. ու բոլորն էլ կանգ առած աշբերով, վախեցած՝ խաշակնքում էին երեսները, գլուխ էին խոնարհում և համբուրում ծեր իշխանի սառն ու փայտացած ձեռք:

## IX

Բոգուշարովոն միշտ, մինչև իշխան Անդրեյի բնակություն հաստատելն այնտեղ, աշբից հեռու կալված էր, և Յոգուշարովոյի գյուղացիները բոլորովին տարբեր բնավորություն ունեին լիսոգորցիների հետ համեմատած: Նրանք սրանցից տարբերվում էին թե՛ բարբառով, թե՛ հագուստով, թե՛ բարբերով: Նրանք կոշվում էին տափաստանցիներ: Ծեր իշխանը գովում էր նրանց՝ աշխատանքի մեջ ունեցած դիմացկունության համար, երբ նրանք գալիս էին կիսին Գորի հնձին օգնելու կամ ավագանի տեղ ու առուներ փորելու, բայց չեր սիրում նրանց՝ իրենց վայրենության համար:

Իշխան Անդրեյի վերջին անգամ Բոգուշարովոյում լինելը և նրա նորամուծությունները — հիփանդանոցներ, դպրոցներ և հարկերի թեթևացում, — շմեղմեցին նրանց բարբերը, այլ, ընդհակառակը, նրանց մեջ ուժեղացրին բնավորության այն զծերը, որ ծեր իշխանն անվանում էր վայրենություն: Նրանց մեջ միշտ անորոշ զրուցներ էին շրջում. մերթ իրենց բոլորին կազակ դարձնելու մասին, մերթ մի նոր հավատի մասին, որ իրը թե ստիպելու էին իրենց ընդունել, մերթ թագավորի ինչ-որ թղթերի մասին, մերթ Պավել Պետրովիչին 1797 թվին երդում տալու մասին (որի առթիվ ասում էին, թե դեռ այն ժամանակ ազատություն էր դուրս եկել, բայց կալվածատերը խլել են). մերթ այն մասին, թե յոթը տարի հետո թագավորելու է Պյոտր Ֆեոդորովիչը, որի օրով ամեն ինչ ազատ է լինելու և այնպես պարզ, որ էլ ոչ մի վատ բան չի լինելու: Պատերազմի, Բոնապարտի և նրա արշավանքի մասին եղած լուրերը միացան նրանց համար նույնպիսի անորոշ պատկերացումների հետ, որ ունեին նրանք ներփական մասին, գուտ ազատության մասին:

Բողուշարովոյի շրջակայքում էին գտնվում բոլոր մեծ պյուղերը՝ արքունական և հարկատու կալվածային։ Այդ վայրում ապրող կալվածատերերը շատ քիչ էին. նույնպես շատ քիչ էին սպասավորները և գրագետները, և այդ վայրի գյուղացիության կյանքում ավելի նկատեի և ավելի ուժեղ էին, քան մյուսների մեջ, ոուս ժողովրդական կյանքի այն խորհրդավոր հոսանքները, որոնց պատճառներն ու նշանակությունը անբացարելի են ժամանակակիցների համար։ Այդպիսի երեսութենքից մեկը՝ 20 տարի առաջ այդ վայրի գյուղացիության մեջ երեան եկած զաղթի շարժումն էր. մարդիկ ուզում էին տեղափոխվել ինչ-որ տաք գետերի ափեր։ Հարյուրավոր զյուղացիներ, դրանց թվում և բոգուշարովցիները հանկարծ սկսեցին իրենց անասունները ծախծիսել և ընտանիքներով գնալ ինչ-որ տեղ, դեպի հարավ-արեւելք։ Ինչպես թոշուններն են թոշում ինչ-որ տեղ, ծովերից այն կողմը, այդպես էլ այդ մարդիկ՝ կանանց, երեխանների հետ միասին ձգում-գնում էին հարավարեւել, ուր իրենցից ոչ-որ չէր եղել։ Նրանք շարժվում էին քարավաններով, մեկ-մեկ սպատվում էին փրկանքով, ու փախչում, մեկնում և գնում այստեղ, դեպի տաք գետերը։ Շատերը պատժվեցին, աքսորվեցին Սիբիր, շատերը ցրտից ու սովոց մեռան ճանապարհին. շատերը վերադառն իրենք, և շարժում հանդարտեց ինքն իրեն այնպես, ինչպես և սկսվել էր այն առանց ակիներև պատճառի։ Բայց ստորջրյա հոսանքները չին դադարում հոսել այդ ժողովրդի մեջ և հավաքվում էին. Ի՞նչ ի՞նչ-որ նոր ուժի համար, որ պետք է երեան գար նույնպես օտարութի, անսպասելի և դրա հետ միասին պարզ, բնականորեն և ուժգին։ Այժմ, 1812 թվին, ժողովրդի հետ ապրող մարդու համար նկատելի էր, որ այդ ստորջրյա հոսանքներն ուժեղ աշխատանք էին կատարում և մոտ էին երեան գալուն։

Ալպատիշը ծեր իշխանի մահից որոշ ժամանակ առաջ Բոգուշարովի գալով, նկատեց, որ ժողովրդի մեջ հուզում է տեղի ունենում, և որ, հակառակ այն բանի, ինչ կատարվում էր կիսիք Գորիի շրջանում վաթսուն վերստ շառավիղով, ուր բոլոր գյուղացիները հեռանում էին (թողնելով ավերել իրենց գյուղերը) տափաստանային շրջանում, Բոգուշարովոյի շերտում գյուղացիները, ինչպես լսվում էր, հարաբերության մեջ էին ֆրանսացիների հետ, ստանում լին ինչ-որ թղթեր, որոնք

շրջում էին նրանց մեջ, ու նրանք այդպիսով մնում էին իրենց տեղերում։ Ալպատիշը գիտեր իրեն հավատարիմ ճորտերի միջոցով, որ վերջերս արքունական սայլակապրով տեղ զնացած գյուղացի Կարպը, որ մեծ ազդեցություն ուներ գյուղի հասարակության վրա, վերադարձավ և լուր բերեց, թե կազմակներն ավերում են բնակիչների լքած գյուղերը, և թե ֆրանսացիներն այդ գյուղերին ձեռք չեն տալիս։ Նա գիտեր, որ մի ուրիշ գյուղացի երեկ Վիսլուսիով գյուղից (ուր բանակել էին ֆրանսացիները) բերեց մինչև իսկ ֆրանսական գեներալից մի գրություն, որով բնակիչներին հայտարարվում էր, թե նրանց ոչ մի վնաս չի հասցվի և այն բոլորի համար, ինչ կվերցնեն նրանցից, կվճարեն, եթե նրանք մնան։ Դրան իբր ապացուց գյուղացին Վիսլուսիովից բերել էր հարյուր ոսւրիշ՝ թղթադրամներով (նա չեր իմացել, որ դրանք կեղծ են), որ նրան նախապես ավել էին խոտի համար։

Վերջապես, ամենակարենորը, Ալպատիշը իմացավ, որ հենց այն օրը, եթե ինքը տանուտերին հրամայեց սայլերը հավաքել իշխանադատեր իրերը Բոգուշարովոյից տանելու, առավոտյան գյուղում ժողով կար, ուր սրոշվել էր տեղահան վիճել և սպասել Այնինչ ժամանակը չէր սպասում։ Պարագլուխը իշխանի մահվան օրը, օգոստոսի 15-ին, պնդում էր իշխանադուստը Մարիայի մոտ, որ նա նույն այդ օրը մեկնի, որովհետև դրությունը վտանգավոր էր զառնում։ Նա ասում էր, թե 16-ից հետո ինքը պատասխանատու չի ոչ մի բանի համար։ Իսկ իշխանի մահվան օրը նա երեկոյան մեկնեց, բայց խոստացավ թաղման մյուս օրը գալ։ Բայց մյուս օրը նա չկարողացավ գալ, որովհետև իր իսկ ստացած տեղեկություններով, ֆրանսացիներն անսպասելի շարժվել էին, և նա միայն կարողացավ իր կալվածից դուրս տանել ընտանիքը և բոլոր արժեքավոր իրերը։

Երեսուն տարի Բոգուշարովոն կառավարում էր տանուտեր Դրոնը, որին մեծ իշխանը Դրոնուշիկա էր ասում։

Դրոնը մեկն էր այն ֆիզիկապես ու բարյապես ամեւր գյուղացիներից, որոնք, հենց որ իրենց տարիքն առնում են, մարտքավարվում, այդպես էլ, առանց փոխվելու, ապրում են 60-ից մինչև 70 տարի, առանց մի ճերմակ մազի կամ պակաս ատամի, 60 տարեկանում նույնքան առողջ և ուժեղ, ինչպես և 30 տարեկան հասակում։

Դրոնը՝ ղեպի տաք գետերը գաղթելուց (որին նա մասնակցել էր, ինչպես և ուրիշները) անմիջապես հետո նշանակվեց Բոգուշարովոյի տանուտեր և այդ օրվանից 23 տարի անբասիր մնաց այդ պաշտոնում: Գյուղացիները նրանից ավելի էին զախենում, քան իշխանից: Տերերը՝ թե ծեր իշխանը, թե զահելը, թե կառավարիչը հարգում էին նրան և հանաքով մինիսար ասում: Իր ծառայության ամբողջ ժամանակարնթացքում մի անգամ ոչ հարբել էր, ոչ հիվանդացել. երբեք՝ ո՛չ անքուն զիշերներից հետո, ոչ էլ որևէ աշխատանքից հետո, ամենանվազագույն հոգնությունը չէր արտահայտում և անգրագետ լինելով, երբեք չէր մոռանում ոչ փողի մի հաշիվ, ոչ էլ սայլերին բարձած իր ծախած ալյուրի փթերի հաշիվը, և ոչ էլ Բոգուշարովոյի դաշտերի յուրաքանչյուր ղեսյատինի ցորենի հնձած մի բարզը:

Ալպատիչը, գալով ավերված կիսիե Գորիից, այս Դրոնին ահա կանչեց իր մոտ իշխանի թաղման օրը և հրամայեց 12 ձի պատրաստել իշխանադատեր կառքերի համար և 18 սայլ՝ գումակի համար, որ պետք է վերցվեր Բոգուշարովոյից: Թեև գյուղացիները հողատուրք վճարող էին, այս հրամանի կատարումը, Ալպատիչի կարծիքով, չէր կարող դժվարության հանդիպել, որովհետև Բոգուշարովոյում կար 230 լժատուն և գյուղացիներն էլ ունեսոր էին: Բայց տանուտեր Դրոնը, հրամանը լսելով, աշքերը ցած խոնարհեց անխոս: Ալպատիչը տվեց այն գյուղացիների անունը, որոնց նա ճանաշում էր և որոնցից սայլեր վերցնել հրամայեց:

Դրոնը պատասխանեց, թե այդ գյուղացիների ձիերը աշխատանքի մեջ են: Ալպատիչը տվեց ուրիշների անունը: Դրանք էլ, Դրոնի ասելով, ձիեր չունեին. ոմանց ձիերը արբունական աշխատանքի էին, մյուսները՝ անզոր, ուրիշների ձիերը սատկել էին անկերությունից: Դրոնի կարծիքով ձիեր չէր կարելի հավաքել ոչ միայն սայլերի համար, այլև կառքերի:

Ալպատիչն ուշադիր նայեց Դրոնին և հոնքերը կիտեց: Ինչպես Դրոնն օրինակելի տանուտեր-գյուղացի էր, այնպես էլ Ալպատիչը կզուր չէր 20 տարի կառավարել իշխանի կալվածները և օրինակելի կառավարիչ էր: Նա վերին աստիճանի ընդունակ էր հոտառությամբ հասկանալ այն ժողովրդի կարիքն ու բնագդները, որի հետ նա գործ ուներ, ուստի և նա հիանալի

կառավարիչ էր: Դրոնին նայելով՝ նա իսկույն հասկացավ, որ Դրոնի պատասխանները Դրոնի մտքի արտահայտությունը չէին, այլ Բոգուշարովոյի հասարակության այն ընդհանուր տրամադրության արտահայտությունը, որով բոնված էր արգեն տանուտերը: Բայց դրա հետ միասին նա գիտեր, որ հարստացած և հասարակության կողմից ատելի Դրոնը պետք է տատանվեր երկու բանակի արանքում — տերերի և գյուղացիների: Այդ տատանումն Ալպատիչը նկատեց նրա հայացքում, ուստի և նա, հոնքերը կիտելով, մոտեցավ Դրոնին:

— Դրոնուշկա, լսի՛ր, — ասավ նա: — Դու ինձ դատարկ բաներ մի ասի: Նորին պայծառափայլություն իշխան Անդրեյ Նիկոլայիչն ինքն է ինձ հրամայել, որ ամբողջ ժողովուրդն ուղարկենք և թշնամու մոտ շմնանք, և թագավորական էլ հրաման կա այդ մասին: Խակ ով կմնա՝ նա թագավորի դավաճան կիխնի: Լսո՞ւմ ես:

— Լսում եմ, — պատասխանեց Դրոնը, առանց աշքերը բարձրացնելու:

Ալպատիչն այդ պատասխանով շբավարարվեց:

— Այ, Դրոն, վատ կլինի, — ասավ Ալպատիչը, գլուխն օրորելով:

— Իշխանությունը ձերն է, — ասավ Դրոնը տիրությամբ:

— Էյ, Դրոն, թո՛ղ, — կրկնեց Ալպատիչը, ձեռը թեստակից հանելով և հանդիսավոր շարժումով Դրոնի ոտի տակի հատակը ցույց տալով: — Ես ոչ միայն քո հոգու խորքը, այլ քո ոտի տակ երեք արշին խոր եմ տեսնում, — ասավ նա, հայացքը սևեռելով Դրոնի ոտի տակի հատակին:

Դրոնը շփոթվեց, արագ նայեց Ալպատիչին և նորից խռոնարհեց աշքերը:

— Դու հիմարությունը թող և ժողովրդին ասա, որ հավաքում գնան Մոսկվա, և վաղն առավոտյան սայլեր տան՝ իշխանադատեր բեռների տեղափոխության համար. ինքդ էլ ժողով մի գնա: Լսո՞ւմ ես:

Դրոնը հանկարծ ծունկի եկավ:

— Յակով Ալպատիչ, ազատի՛ր: Վերցրու բանալիներն ինձնից, ազատիր, ի սեր Քրիստոսի:

— Թո՛ղ, — ասավ Ալպատիչը խստությամբ: — Երեք արշին խորությամբ տեսնում եմ քո տակը, — կրկնեց նա, իմանա-

լով, որ մեղուներ պահելու նրա վարպետությունը, այն գիտությունը, թե երբ պետք է վարսակ ցանել, և ա'յն որ նա 20 տարի կարողացել էր գոհացնել ծեր իշխանին, վաղուց կախարդի հուշակ էին տվել նրան, և որ երեք արշին խորությամբ մարդու տակ տեսնելու ընդունակությունը վերագրվում է կախարդներին:

Դրոնը վեր կացավ և ուզեց ինչ-որ բան ասել, բայց Ալպատիչն ընդհատեց նրան.

— Դուք այդ ի՞նչ եք մտածել: Հը... ինչ եք մտածում գուք: Հը:

— Ես ի՞նչ անեմ ժողովրդի հետ, — ասավ Դրոնը: — Բոլորովին կատաղել է: Ես էլ նրանց ասում եմ...

— Ասո՞ւմ եմ, — ասավ Ալպատիչը: — Խմո՞ւմ են, — կարճ հարձրեց նա:

— Ամբողջովին իրենց կորցրել են, թակով Ալպատիչ, մի ուրիշ սակառ բերին:

— Ուրեմն դու լսիր: Ես ոստիկանապետի մոտ կերթամ, իսկ դու ժողովրդին հայտնիր, և որ այդ խմելը թողնեն, և սայլեր տան:

— Լսում եմ, — պատասխանեց Դրոնը:

Յակով Ալպատիչն ալևս շպնդեց: Նա երկար կառավարել էր ժողովրդին և զիտեր, որ մարդկանց ենթարկելու, հնազանդեցնելու գլխավոր միջոցն այն է, որ նրանց ցույց շտաս, թե կասկածում ես, որ նրանք կարող են չենթարկվել: Դրոնի բերնից պոկելով այդ խոնարհ «լսում եմ»-ը, թակով Ալպատիչը բավարարվեց դրանով, թեև նա ոչ միայն կասկածում, այլ գրեթե համոզված էր, որ այդ սացլերն առանց զինվորական ուժի չեն տալու:

Եվ իսկապես, երեկոյան դեմ սայլերը չհավաքվեցին: Գյուղում՝ զինետան մոտ նորից ժողով էր և այդ ժողավում որոշվեց ձիերը քշել անտառ և սայլերը շտալ: Իշխանապատերը ոչինչ շատեղով այդ մասին, Ալպատիչը հրամայեց կտօիք Գորիից եկած իր սեփական գույքը թողնել և այդ ձիերը պատրատել իշխանադատեր կառքի համար, իսկ ինքը ձի նստեց գնաց իշխանության մոտ:

## X

Հոր թաղումից հետո իշխանադուստր Մարիան փակէց իր սենյակում և ոչ սթի չեր ընդունում իր մոտ: Սպասուհի աղջկեց մոտեցավ դռանը՝ ասելու, թե Ալպատիչն եկել՝ մեկնելու մասին կարգադրություն է խնդրում: (Սյդ զեռ մինչև Ալպատիչի՝ Դրոնի հետ խոսելն էր): Իշխանադուստր Մարիան վեր կացավ բազմոցից, որի վրա պառկել էր և փակ դրանից ասավ, թե ինքը ոչ մի աեզ և երբեք չի գնալու և խնդրում է, որ իրեն հանգիստ թողնեն:

Այն սենյակի լուսամուտները, ուր պառկած էր իշխանադուստր Մարիան, նայում էին արևմուտք: Նա պառկած էր բազմոցի վրա՝ երեսը դեպի պատը և, մատներով տնտղելով կաշվե բարձի կոճակները տեսնում էր միայն այդ բարձը և նրա անորոշ մտքերը կենտրոնացած էին մի բանի վրա. Նա մտածում էր, որ մահացողը չի վերադառնում և հոգեկան այն զազրելիության մասին, որ մինչև այժմ չեր իմացել և որն արտահայտվեց հոր հիվանդության ժամանակի: Նա ցանկանում էր, բայց չեր համարձակվում ազոթել, չեր համարձակվում հոգեկան այդ վիճակում, որի մեջ նա գտնվում էր, դիմել աստծուն: Նա երկար պառկեց այդ դրության մեջ:

Արևն անցավ տաճ մյուս կողմը և երեկոյան շեղ ճառագյթներով բաց լուսամուտների միջով լուսավորեց սենյակները և մի մասն այն սեկե բարձի, որին նայում էր իշխանադուստր Մարիան: Նրա մտքերի ընթացքը հանկարծ կանգ առավակ: Նա անգիտակցաբար ելավ նստեց, մազերը հարդարեց, վեր կացավ ու մոտեցավ լուսամուտին, ակամա շնչելով պարզ, բայց քամոտ երեկոյի զովությունը:

«Այո, հիմա դու հարմարություն ունես երեկոյով հիանալա՛ւ: Նա այլևս չկա, և ոչ ոք քեզ չի խանգարումք, ասավ նա ինքն իրեն և, աթոռին ընկնելով, գլուխը դրեց լուսամուտի գոռք:

Մեկը մեղմ ու հանդարտ ձախով կանչեց նրան այգու կողմից և համբուրեց նրա զլուխը: Իշխանադուստրը նայեց: Դա ու ու Բուրփենն էր՝ սև հագուստով ու պլերեզով: Նա հանդարտ քայլերով մատեցավ իշխանադուստր Մարիացին, հոգոց քաշելով համբաւեց նրան և խսկույն էլ լաց եղավ: Իշխանադուստր Մարիան նայեց նրան: Ու հիշեց իր բոլոր նախկին ընդհարումները նրա հետ, իր խանդր նրա նկատմամբ, հիշեց և այն, ին

ինչպես նա վերջերս փոխվել էր գեղի ու-լլե Բուրիենը, շկալո-զայակ տեսնել նրան և, ուրեմն, որքան անարդար էին այն հանդիմանությունները, որ իշխանադուստր Մարիան իր սրբ-տում անում էր նրան: «Եյո, և մի՞թե ես, ես արդյոք, որ ցան-կանում էի նրա մահը, կարող եմ դատապարտել որևէ մեկին», մտածեց նա:

Իշխանադուստր Մարիային կենդանի պատկերացավ ու-լլե Բուրիենի վիճակը, որ վերջերս հեռու էր իր ընկերությունից, բայց դրա հետ միասին կախում ուներ իրենից և ապրում էր օտար տան մեջ: Եվ իշխանադուստրը խղճաց նրան: Նա հեզ-հարցական նայեց ֆրանսուհուն ու ձեռը մեկնեց նրան: Ա-լլե Բուրիենն անմիջապես լաց եղավ, սկսեց համբուրել իշխանա-դստեր ձեռը և խոսել նրա գլխին եկած դժբախտության մասին, իրեն մասնակից անելով այդ վշտին: Նա խոսեց այն մասին, թե միակ միխիթարանըն իր վշտի մեջ այն է, որ իշխանադուստրը թույլ ավեց իրեն վշտակից լինել նրան: Նա ասում էր, թե բոլոր նախին թյուրիմացությունները պետք է ոչնչանան մեծ վշտի հանգեց, որ նա իրեն մաքուր է զգում բոլորի առաջ, և որ նա այնտեղից տեսնում է իր սերն ու երախտագիտությունը: Իշխանադուստրը լսում էր նրան, նրա խոսքերը հասկանա-լով, բայց երբեմնակի նայում էր նրան և ականջ զնում նրա ձայնի հնչուններին:

— Զեր դրությունը կրկնակի սարսափելի է, սիրելի իշ-խանադուստր, — մի փոքր լոելով ասավ ու-լլե Բուրիենը: — Ես հասկանում եմ, որ դուք շեիք կարող ե շեք կարող մտածել ձեր մասին. բայց ես դեպի ձեզ ունեցած իմ սիրով պարտավոր եմ այդ անել... Ալզատիշը եկա՞վ ձեզ մոտ: Խոսե՞ց ձեզ հետ մեկնելու մասին, — հարցրեց նա:

Իշխանադուստր Մարիան շպատասխանեց: Նա չէր հասկա-նում, թե ո՞ւր և ո՞վ պետք է մեկնի: «Մի՞թե կարելի է հիմա որևէ բան ձեռնարկել, մտածել որևէ բանի մասին: Մի՞թե միւնույն շի»: Նա շպատասխանեց:

— Դուք գիտե՞ք արդյոք, շերե Մարիե, — ասավ ու-լլե Բուրիենը, — գիտեք արդյոք, որ մենք վտանգի մեջ ենք, որ մենք շրջապատված ենք ֆրանսացիներով. մեկնելը հիմա հունգարոր է: Եթե գնանք՝ մենք գրեթե հաստատապես գերի կը լնկնենք, և աստված գիտի...

Իշխանադուստր Մարիան նայում էր իր ընկերուհուն, լը-հասկանալով այն, ինչ ասում էր նա:

— Ախ, եթե մեկը հասկանա, թե ինչպես ինձ համար բոլորը, բոլորը մեկ է հիմա, — ասավ նա: — Պարզ է, ես ոչ մի կերպ չեմ ցանկանա գնալու հեռանալ նրանից... Ալպատիշն ինչ-որ բան ասավ ինձ մեկնելու մասին... Խոսեք նրա հետ. ես ոչինչ, ոչինչ չեմ կարող և չեմ ուզում...

Ես խոսել եմ նրա հետ: Նա հույս ունի, թե մենք կհաջո-ղենք վաղը մեկնել. բայց ես կարծում եմ, թե այժմ ավելի լավ է մնալ այստեղ, — ասավ ու-լլե Բուրիենը: — Որովհետեւ, ըն-դունեցեք, շերե Մարիե, ճանապարհին ընկնել հարբած զինվոր-ների կամ խոռվարար գյուղացիների ձեռը — սարսափելի կլիներ:

Ա-լլե Բուրիենը ուղիկիցուլից հանեց ֆրանսական գեներալ Ռամոյի հայտարարությունը (ոչ ոսւսական սովորական թղթի վրա) այն մասին, որ բնակիչները լթողնեն իրենց տները հե-ռանան, թե ֆրանսական իշխանությունները հարկավոր հո-վանավորությունը ցուց կտան նրանց, և տվեց իշխանադու-ստեր:

— Ես կարծում եմ ավելի լավ է դիմել այն գեներալին, — ասավ ու-լլե Բուրիենը, — և ես հավատացած եմ՝ ձեզ ցուց կտրվի հարկավոր հարգանքը:

Իշխանադուստր Մարիան կարդաց թուղթը, և շոր հեկե-կանքները ցնցեցին նրա գեմքը:

— Այդ ո՞ւմ միջոցով եք ստացել դուք, — ասավ նա:

— Հավանորեն, իմ անունից իմացել են, որ ես ֆրանսուհի եմ, — կարմրելով ասավ ու-լլե Բուրիենը:

Իշխանադուստր Մարիան թուղթը ձեռքին վեր կացավ լուսամուտի մոտից և գունատ դեմքով դուրս եկավ սենյակից ու գնաց իշխան Անդրեյի նախկին առանձնասենյակը:

Դունյաշա, կանչեցեք ինձ մոտ Ալպատիշին, Դրոնուշ-կային, որևէ մեկին, — ասավ իշխանադուստր Մարիան: — Եվ ասացեք Ամալյա Կարլովնային, որ նա շմտնի այս սենյակը, ինձ մոտ, — ավելացրեց նա, լսելով ու-լլե Բուրիենի ձայնը: — Շուտ պետք է մեկնել. մեկնել շուտով, — ասում էր իշխանա-դուստր Մարիան, սարսափելով այն մտքից, որ ինքը կարող է մնալ ֆրանսացիների իշխանության ներքո:

«Որ իշխան Անդրեյն իմանա, թե նա ֆրանսացիների իշխանության ծեռին է; Որ նա, իշխան Նիկոլայ Անդրեյի; Բալկոնսկու դուստրը պարոն գեներալ Ռամոյից խնդրի հովանավորություն ցուց տալ իրեն և ինքն օգտվի նրա բարերարությունից»: Այս միտքը սարսափեցնում էր նրան, ստիպում էր ցնցվել նրան, կարմրել և զգալ տակավին շապարծ կատաղության ու հպարտության բռնկումներ: Այն ամենը, ինչ որ կարծանր ու մահավանդ վիրավորական նրա դրության մեջ, կենդանի պատկերացավ նրան: «Նրանք, ֆրանսացիները, կգա՞ն, կրնակվեն այս տան մեջ, պարոն գեներալ Ռամոն կզրայի իշխան Անդրեյի առանձնասենյակը, զվարճության համար կրչողչեն և կարդան նրա նամակներն ու թղթերը: Անձ մի փոքրիկ սենյակ կտան ողորմածությունից դրդված զինվորները կավերեն հորս թարմ գերեզմանը, որպեսզի վերցնեն նրա խաչերն ու աստղերը, նրանք կպատմեն սուսների վրա տարած իրենց հաղթությունները, իրենց կեղծ կարելցանքը կհայտնեն իմ վշտի առթիվ...», մտածում էր իշխանադուստր Մարիան ոչ իր մտքերով, բայց իրեն պարտավորված զգալով իր համար մտածել իր հոր ու եղբոր մտքերով: Անձնապես նրա համար միւնույն էր, ո՛րտեղ էլ մնար և ի՞նչ էլ պատահեր իրեն, բայց նա դրա հետ միասին իրեն զգում էր հանգուցյալ հոր և իշխան Անդրեյի ներկայացուցիչը: Նա ակամա մտածում էր նրանց մտքերով և զգում էր նրանց զգացումներով: Ինչ էլ նրանք ասեին, ի՞նչ էլ նրանք անեին այժմ, այդ նույն անելու անքաշեշտություն էր զգում նա: Նա անցավ իշխան Անդրեյի առանձնասենյակը և, աշխատելով տոգորվել նրա մտքերով, կշռագատեց իր դրությունը:

Կյանքի պահանջները, որոնք նա հոր մահվամբ ոշնչացած էր համարում, հանկարծ մի նոր, տակավին անժամնոթ ուժով գլուխ բարձրացրին նրա առաջ և համակեցին նրան:

Հուզված, շառագունած, նա գնում-գալիս էր սենյակում, պահանջելով կանչելի իր մոտ մերթ Ալպատիշին, մերթ Միխայիլ Բենիշին, մերթ Տիխոնին, մերթ Դրոնին: Դունյաշան, դաշտի և բոլոր աղջկները ոշինչ չեն կարող ասել այն մասին,

Օրինակ Բուրբենք կընդունի նրան...

— 194 —

թե որքան իրավացի էր այն, որ հայտարարել էր ողությենը: Ալպատիշը տանը չէր. նա գնացել էր իշխանավորների մոտ: Կանչված Միխայիլ իշխանիշը, ճարտարապետը, քնատ աշերով ներկայանալով իշխանադուստր Մարիային, ոշինչ վարողացավ ասել նրան: Նա համաձայնության ճիշտ նույն ժպիտով, որով սովոր էր տասնհինգ տարի շարունակ, առանց իր կարծքը հայտնելու, պատասխանել ծեր իշխանի դիմումներին, պատասխանեց իշխանադուստր Մարիայի հարցերին, այնպես, որ ոշինչ որոշ չէր կարելի եղակացնել նրա պատասխաններից: Կանչված ծերունի սենեկապահ Տիխոնը, ընկած ու խեղճացած դեմքով, որն իր վրա կրում էր անբուժելի վշտի Պնիքը, իշխանադստեր բոլոր հարցերին պատասխանում էր ուսում եմ», և, նրան նայելով, հազիվ էր զսպում հեկեկանքները:

Վերջապես սենյակ մտավ տանուտեր Դրոնը և, խորը գլուխ տալով իշխանադստեր, կանգնեց դրանդի մոտ:

Իշխանադուստր Մարիան անցավ սենյակով ու կանգնեց նրա դիմուղեմ:

— Դրոնուշկա, — ասավ իշխանադուստր Մարիան, նրան համարելով իր անվիճելի բարեկամը, այն Դրոնուշկային, որ ամեն տարի Վյազմայի տոնավաճառը գնալիս ամեն անգամ նրա համար բերում և ժպիտով մատուցում էր յուրատեսակ շաբարահացեր: — Դրոնուշկա, այժմ, մեր դժբախտությունից հետո... — սկսեց նա և լոեց, ուժ շունենալով շարունակելու:

— Բոլորս մահկանացու ենք:

Նրանք լոեցին:

— Դրոնուշկա, Ալպատիշը գնացել է ինչոր տեղ, մեկը չկա, որին դիմեմ. ինձ ճիշտ են ասում արդյոք, որ ես մեկնել չեմ կարող:

— Ինչո՞ւ շգնաս որ, ձերդ պայժառափայլություն, գնալ կարելի է, — ասավ Դրոնը:

— Ինձ ասին վտանգավոր է թշնամու կողմից: Միքելիս, ես ոշինչ չեմ կարող, ոշինչ չեմ հասկանում, մոտս ոչ որ չկատ ես անպայման ուզում եմ մեկնել գիշերը կամ էգուց վաղ առավոտյան:

— 195 —

Դրոնը լուր էր: Նա հոնքերի տակից նաւից իշխանադուստր Մարիային:

— Զիեր չկան, — ասավ նա, — ևս Յակով Ալպատիշին էլ ասել եմ:

— Ինչո՞ւ չկա, — ասավ իշխանադուստր:

— Բոլորը աստծու պատուհասից, — ասավ Դրոնը: — Եղած ձիերի մի մասը զորքի համար հավաքեցին, մնացածը սատկել են. էս տարին էղպես է: Ո՛չ թե ձիերին կերակրել, վախենում են իրենք էլ սովից մեռնեն: Ու էղպես երեք օրով սոված են մը-նում: Ոչ մի բան չկա, քանդկել են:

Իշխանադուստրն ուշադիր լսում էր նրա ասածները:

— Գյուղացիները քայրայված են: Նրանք հաց շո՞ւնեն, — Հարցրեց նա:

— Սովամահ են լինում, — ասավ Դրոնը, — ուր մնաց սայ-լեր...

— Բայց ինչո՞ւ չէիր ասում, Դրոնուշկա: Մի՞թե օգնել չի կարելի: Ես ամեն բան կանեմ, ինչ կարող եմ...

Իշխանադուստր Մարիայի համար տարօրինակ էր մսածել, որ այժմ, այսպիսի բոպեի, երբ այնպիսի վշտով է լցված իր սիրու, կարող էին լինել հարուստ և աղքատ մարդիկ և որ հա-րուստները կարող էին զօգնել աղքատներին: Նա աղոտ կերպով գիտեր և լսել էր, որ լինում է տերունի հաց, և որ այդ հացը տալիս են գյուղացիներին: Նա զիտեր նույնպես, որ ոչ իր եղ-քայրը, ոչ հայրը չէին մերժի կարիքի մեջ եղած գյուղացինե-րին. նա միայն վախենում էր խոսքերի մեջ սխալվել որևէ ձեռվ՝ հացը գյուղացիներին բաժանելու նկատմամբ, որի հա-մար նա ուզում էր կարդարություն անել: Նա ուրախ էր, որ իրեն հոգսի առիթ ներկայացալ, մի հոգս, որի համար նա չէր ամաշի մոռանալ իր վիշտը: Նա սկսեց հարցուփորձել Դրոնին գյուղացիների կարիքի մանրամասնությունները և այն, թե տերունի ի՞նչ կա թողուշարովոյում:

— Չէ որ մենք՝ եղքայրս, տերունի հաց ունեք այստեղ, — Հարցրեց նա:

— Տերունի հացը ամբողջ մնում է, — ասավ Դրոնը հպար-տությամբ, — մեր իշխանը չի հրամայել ծախել:

— Տուր այդ գյուղացիներին, տուր բոլորը, ինչ հարկա-

վոր է նրանց. Ես եղբորս անունով թույլատրում եմ քեզ, — ասավ իշխանադուստր Մարիան:

Դրոնը ոչինչ չպատասխանեց և խորը հոգոց քաշեց:

— Դու բաժանիր այդ ցորենը նրանց, եթե դա բավական կլինի նրանց համար: Բոլորը բաժանիր: Ես հրամայում եմ քեզ եղբորս անունով, ու ասա նրանց. ինչ մերն է, այն էլ իրենցն է: Մենք ոչինչ չենք խնայի նրանց համար: Այդպես էլ ասա նրանց:

Դրոնը սեեռուն նայում էր իշխանադուստերն այն ժամանակ, երբ նա խոսում էր:

— Ազատիր ինձ պաշտոնից, տիրուհի, ի սեր աստծո. Հրա-մայիր բանալիներն ընդունեն, — ասավ նա: — Քսաներեք տա-րի ծառայել եմ, վատ բան չեմ տեսել. արծակիր, ի սեր աստծո:

Իշխանադուստրը չէր հասկանում, թե նա ինչ է ուզում իրե-նից և ինչո՞ւ է խնդրում արձակել իրեն: Նա Դրոնին պատաս-խանեց, թե երբեք չի կասկածել նրա հավատարմության վրա, և թե նա պատրաստ է ամեն ինչ անել նրա և գյուղացիների համար:

## XI

Դրանից մի ժամ հետո Դունյաշան եկավ իշխանադուստեր մոտ, լուր բերելով, թե Դրոնն եկել է, և բոլոր գյուղացիները, իշխանադուստեր հրամանով, հավաքվել են ամբարի մոտ, ցանկանալով խոսել նրա հետ:

— Բայց ես երբեք չեմ կանչել նրանց, — ասավ իշխանա-դուստր Մարիան, — ես կանչել էի միայն Դրոնուշկային, որ հացահատիկ բաժանի նրանց:

— Միայն ի սեր աստծո, իշխանադուստր տիրուհի, հրա-մայիցեր քշեն նրանց և մի գնաք նրանց մոտ: Բոլորը սուս-բան է, — ասում էր Դունյաշան, — Յակով Ալպատիշը կդա և կերթանք... իսկ դուք մի՛ գնաք...

— Ի՞նչն է սուս, — զարմացած Հարցրեց իշխանադուստր:

— Ես զիտեմ, միայն լսեցեք ինձ, ի սեր աստծո: Այ թե-կուզ դայակին հարցրեք: Ասում են համաձայն չենք գնալ ձեր հրամանով:

— Դու ինչոք այն չես ասում: Ես երբեք էլ չեմ հրամայել գնալ... — ասավ իշխանադուստր Մարիան: — Կանչիր Դրուուցկային:

Դրոնը եկավ և հաստատեց Դունյաշայի խոսքերը, գյուղացիներն եկել էին իշխանադուստր հրամանով:

— Բայց երբեք չեմ կանչել նրանց, — ասավ իշխանադուստր: — Դու, երեխ, այնպես չես հայտնել նրանց: Ես միայն ասի, որ գու հաց տաս նրանց:

Դրոնը, առանց պատասխանելու, հոգոց արձակեց:

— Եթե հրամայեք նրանք կերթան, — ասավ նա:

— Ոչ, ոչ, ես կերթամ նրանց մոտ, — ասավ իշխանադուստր:

Չնայած Դունյաշան ու դայակը համոզում էին չգնալ, իշխանադուստր Մարիան գուրս եկավ դուռը: Դրոնուշկան, Պունյաշան, դայակն ու Միխայիլ Իվանիչը գնացին նրա ետեկից:

Անրանք, երեխ, կարծում են, թե ես իրենց հաց առաջարկում եմ նրա համար, որ իրենք մնան իրենց տեղերում, և ինքս մեկնում եմ, թողնելով նրանց ֆրանսացիների քմահաճույքին, — մտածում էր իշխանադուստր Մարիան: — Ես նրանց պիտի ամսական խոստանամ մոսկվամերձ բնակարանում. ես հավատացած եմ, որ Առցեն ավելի կաներ իմ տեղը, մտածում էր նա, երեկոյան աղջամուղի մեջ բազմությանը մոտենալով, որ կանգնած էր արոտավայրում՝ ամրարի մոտ:

Բազմությունը, հավաքախոննվելով, շարժվեց և գլխարկները վերցրին հապճեա: Իշխանադուստր Մարիան, աշքերը խոնարհելով և ոտները փեշերի մեջ խառնելով, մոտեցավ նրանց: Որքան բազմազան ծեր ու ջահել աշքեր էին հառել նրան և որքան տարբեր գեմքեր կային, որ իշխանադուստր Մարիան շտեսավ ոչ մի զեմք և, բոլորի հետ հանկարծ խոսելու անհրաժեշտություն զգալով, շգիտեր իւնչ անի: Բայց նորից այն գիտակցությունը, թե ինքը — հոր և եղբոր ներկայացուցիչն է, ուժ տվեց նրան, և նա համարձակ սկսեց իր ճառը:

— Ես շատ ուրախ եմ, որ գուք եկաք, — սկսեց իշխանադուստր Մարիան, աշշերը լրարձրացնելով և զգալով, թե ինչպես արագ և ուժգին է բաբախում իր սիրտը: — Դրոնուշկան ինձ ասավ, որ պատերազմը քայլայել է ձեզ: Դա մեր ընդհանուր վիշտն է, և ես ոչինչ չեմ խնայի, որ օգնեմ ձեզ: Ես ինքս

գնում եմ, որովհետև այստեղ վտանգավոր է... և թշնամին մոտ է... որովհետև... Ես ձեզ տալիս եմ ամեն ինչ, բարեկամներս, և խնդրում եր ձեզ վերցնել ամեն ինչ, մեր ամբողջ հացը, որ գուք կարիք չունենաք: Իսկ եթե ձեզ ասել են, թե հացը ձեզ տալիս եմ այն պայմանով, որ գուք մնաք այստեղ, ապա դա ճիշտ չէ: Ես, ընդհակառակը, ձեզ խնդրում եմ՝ ձեր ամբողջ կայքով գնաք մեր Սոսկվայի մոտի կալվածը, և այնտեղ ես հանձն եմ առնում և խոստանում եմ ձեզ, որ գուք կարիքի մեջ չեք լինի: Ձեզ կտան ե' տուն, ե' հաց:

Իշխանադուստրը կանգ առավ: Բազմության մեջ լսվեցին միայն հոգոցներ:

— Ես այդ իմ կողմից չեմ անում, — շարունակեց իշխանադուստրը, — ես այդ անում եմ հանգույցալ հորս անունով, որը լավ տեր է եղել ձեզ համար, ես այդ անում եմ եղբորս և նրա որդու փոխարեն:

Նա նորից կանգ առավ: Ոչ ոք շանգարեց նրա լոռությունը:

— Մեր վիշտն ընդհանուր է, ամեն ինչ մենք կկիսենք: Բոլորը, ինչ իմն է, այն էլ ձերն է, — ասավ նա, նայելով իր առջեք կանգնած դեմքերին:

Բոլոր աշքերը նայում էին նրան միատեսակ արտահայտությամբ, որի նշանակությունը նա հասկանալ չէր կարողանում: Արդյոք դա հետաքրքրությո՞ւն էր, նվիրվածություն, երախտագիտությո՞ւն, թե երկուու ու անվտահություն, բայց բոլոր գեմքերի արտահայտությունը միատեսակ էր:

— Շատ գոհ ենք ձեր ողորմածությունից, միայն թե տիրունի հացը վերցնելու կարիք չկա, — ասավ մի ձայն ետեկից:

— Բայց ինչո՞ւ, — ասավ իշխանադուստրը:

Ոչ ոք շպատասխանեց, և իշխանադուստր Մարիան, նայել վրազմության, նկատեց, որ այժմ բոլոր աշքերը, որոնց համապատասխան էր իր հայացքը, իսկույն խոնարհում էին:

— Բայց ինչո՞ւ չեն ուզում որ, — նորից հարցրեց նա:

Ոչ ոք շպատասխանեց:

Իշխանադուստր Մարիան ծանր զգաց իրեն այդ լոռությունից. նա աշխատում էր որսալ որեւէ մեկի հայացքը:

— Դուք ինչո՞ւ չեք խոսում, — դիմեց իշխանադուստրը մի զառամ ծերունու, որ ձեռնափայտին հենած կանգնած էր իր առաջ: — Աստ, եթե կարծում ես, թե էլի որմէ բան հար-

Իավոր է: Ես ամեն ինչ կանեմ, — ասավ նա, ծերունու հայացքը որսալով:

Բայց ծերունին կարծես բարկանալով դրանից, գլուխը ըռլորովին իշեցրեց և ասավ.

— Համաձայնելու ինչ կա, մեզ հաց հարկավոր չի:

— Ինչի՞ ենք ամեն ինչ թողնում որ: Համաձայն շենք: Համաձայն շենք... Մեր համաձայնությունը շենք տալիս: Մենք քեզ խղճում ենք, և համաձայն շենք... Ինքդ գնա, մենակ... — լսվեց բազմության միջից, ամեն կողմից:

Եվ նորից այդ բազմության դեմքերի վրա երևաց միևնույն արտահայտությունը, և այժմ դա արդեն հաստատապես հետաքրքրության ու երախտագիտության արտահայտություն չէր, այլ գազազած վճռականության արտահայտություն:

— Բայց դուք, շնասկացաք, երեխ, — տխուր ժպիտով ասավ իշխանադուստր Մարիան: — Ինչո՞ւ շեք ուզում գնալ: Ես խոստանում եմ տեղափորել ձեզ, կերակրել: Իսկ այստեղ թշնամիները կբայցայն ձեզ...

Բայց նրա ձայնը իշխացրին բազմության ձայները:

— Համաձայն շենք, թող քայքայեն: Թո հացը շենք վերցնում, համաձայն շենք:

Իշխանադուստր Մարիան աշխատում էր կրկին որևէ մեկի հայացքը որսալ բազմության մեջ, բայց ոչ մի հայացք հառած չէր իր վրա. բոլոր աշքերն, ըստ երեսութին, խոսսափում էին իրենից: Նա իրեն տարօրինակ և անհարմար զգաց:

— Տիսա՞ր, լավ իրատեց. Նրա ետևից գնա ճորտ զարձիր: Տուն-տեղ բանդի՝ ստրուկ մտիր: Ո՞նց չի: Ես, ասում է, հաց կտա՞մ, — ձայներ լսվեցին բազմության միջից:

Իշխանադուստր Մարիան, գլուխն իշեցնելով, դուրս եկավ շրջանից և գնաց տուն: Կրկնելով Դրոնին տված իր հրամանը այն մասին, որ վաղը ձիերը պատրաստինեն մեկնելու համար, նա գնաց իր սենյակը և մնաց իր մտքերի հետ մենակ:

## XII

Այդ գիշեր իշխանադուստր Մարիան երկար նստած էր իր սենյակի բաց լուսամուտի առաջ ու ականջ էր դնում գլուղից եկող գյուղացիների խոսակցության ձայներին, բայց նա չը

մտածում նրանց մասին: Նա զգում էր, թե որքան էլ մտածեր նրանց մասին, չէր կարող նրանց հասկանալ: Նա շարունակ մի բանի մասին էր մտածում — իր վշտի մասին, որ այժմ, ներկայի հոգսերի առաջացրած ընդմիջումից հետո, արդեն անցյալ էր դարձել նրա համար: Նա այժմ արդեն կարող էր հիշել, կարող էր լաց լինել և կարող էր աղոթել: Արեք մտնելու հետ քամին դադարել էր: Գիշերը հանդարս էր և գով: Ժամը 12-ին ձայներն սկսեցին լուել, աքլորը կանչեց. Լորիների ետևից դուրս եկավ լիալուսինը. բարձրացավ զով սպիտակ մշուշ-ցողը, և զյուղի ու տան վրա տիրեց անդորրը:

Մեկը մյուսի ետևից ներկայանում էին նրան մոտիկ անցյալի սպատկերները — հոր հիվանդությունը և նրա վերջին րոպեները: Եվ տրտում ուրախությամբ նա այժմ կանգ առավ այդ պատկերների վրա, սարսափով վանելով իրենից միայն մի վերջին պատկեր — հոր մահվան պատկերը, որը — նա զգում էր — ուժ չուներ նայելու անգամ երևակայության մեջ գիշերվա այս խաղաղ ու խորհրդավոր ժամին: Եվ այդ պատկերները նրան ներկայանում էին այնպիսի պայծառությամբ ու այնպիսի մանրամասներով, որ դրանք նրան թվում էին մերթ իրականություն, մերթ անցյալ, մերթ ապագա:

Մերթ նրան կենդանի պատկերում էր այն րոպեն, երբ հայրը կաթված ստացավ և նրան կսիթի Գորիի պսրեկից քաւ շտալով բերին թեատակերից բռնած, և նա բրթմնջում էր ին: Որ անգոր լեզվով, ցնցում էր ձերմակ հոնքերը և անհանգիստ ու երկշոտ նայում էր իրեն՝ իշխանադուստր:

«Նա այն ժամանակ էլ ինձ ուզում էր ասել այն, ինչ ասավ մենունելու օրը, — մտածում էր նա: — Նա միշտ մտածում էր այն, ինչ ասավ ինձ»: Եվ աշանա ամենայն մանրամասնությամբ հիշեց այն գիշերը կոսիթ. Գորիում, հոր կաթված ստանալու նախօրեին, երբ իշխանադուստր Մարիան, աղետը նախազգայով, հակառակ նրա կամքին, մնաց հոր մոտ: Նա շքնեց և գիշերը ոտի ծայրերի վրա իշավ ցած և մոտենալով ծաղկանոցի դռանը, ուր այդ գիշեր պառկել էր նրա հայրը, ականչ դրեց նրա ձայնին: Նա տանցված, հոգնած ձայնով խոսում էր Տիխոնի հետ: Նա ինչ-որ բան էր ասում Ղրիմի մասին, տաք գիշերների մասին, կայսրունու մասին: Նա, ըստ երեսութին, խոսակել էր ուզում: «Եվ ինչո՞ւ նա ինձ շկանչեց: Ինչո՞ւ նա թույլ ը-

տրվեց ինձ այնտեղ՝ Տիխոնի փոխարեն լինել իր մոտ, — մը -  
տածում էր այն ժամանակ և այժմ իշխանադրուստր Մարիան: —  
Նա այժմ այլևս ոչ ոքի առաջ չի արտահայտի այն բոլորն,  
ինչ ուներ իր սրտում: Այլևս երբեք նրա համար և ինձ համար  
չի վերադառնա այն բոպեն, երբ նա կասեր բոլորը, ինչ ցան-  
կանում էր ասել, իսկ ես, այլ ոչ թե Տիխոնը, կլսեի ու կհաս-  
կանայի նրան: Ինչո՞ւ ես այն ժամանակ սենյակ շմտա, — մը -  
տածում էր իշխանադրուստր: — Թերևս նա հենց այն ժամանակ  
ասեր այն, ինչ ասավ մահվան օրը: Նա այն ժամանակ էլ,  
Տիխոնի հետ խոսակցելիս, երկու անգամ հարցրեց իմ մասին: Նա  
ուզում էր ինձ տեսնել, իսկ ես կանգնել էի այդտեղ՝ դրան  
ետև Նա տիխությամբ, դժվարությամբ էր խոսում Տիխոնի  
հետ, որը նրան չէր հասկանում: Հիշում եմ, թե ինչպես նա  
խոսեց կիզայի մասին, որպես ողջ մարդու մասին, — նա  
մոռացել էր, որ նա մեռած է, — և Տիխոնը հիշեցրեց նրան, որ  
նա այլևս չկա, և նա բոռաց. «Հիմա՞ր»: Նա իրեն ծանր էր զգումն  
և դրան ետևից լսեցի, թե ինչպես նա տնքալով պառկեց մահ-  
ճակալին և բարձրածայն կանչեց. «Անտված իմ»: Ինչո՞ւ ներս  
շմտա այն ժամանակ: Ի՞նչ պիտի աներ ինձ: Ի՞նչ կկորցնեիք  
Եվ թերևս, նա հենց այն ժամանակ կմխիթարվեր, կասեր ինձ  
այն խոսքերը»: Եվ իշխանադրուստր Մարիան լսելի արտասա-  
նեց այն գգվալից բառը, որ հայրն ասել էր նրան մահվան օրը: «Հո-գյա-կը՝», կրկնեց իշխանադրուստր Մարիան այդ բառը և  
հեկեաց սիրտը թեթևացնող արցունքներով: Նա այժմ իր  
առջև տեսնում էր հոր դեմքը: Ոչ թե այն դեմքը, որ ճանաշում  
էր այն ժամանակից, երբ հիշում էր իրեն, և որը նա միշտ տես-  
նում էր հեռվից, այլ այն երկշոտ ու թույլ դեմքը, որը նա,  
կունալով դեպի հոր բերանը՝ նրա ասածը լսելու համար,  
մոտիկից առաջին անգամ դիտեց իր բոլոր կնճիռներով ու  
մանրամասներով:

«Հոգյակ», կրկնեց իշխանադրուստր:

«Ի՞նչ էր մտածում նա, երբ ասավ այդ բառը: Ի՞նչ է մտա-  
ծում նա այժմ», հանկարծ հարց տվեց նա, և դրան ի պատաս-  
խան իր առջև տեսավ հորը՝ դեմքի այն արտահայտությամբ,  
որ ուներ դագաղում՝ սպիտակ թաշկինակով կապած դեմքին: Եվ  
այն սարսափը, որ համակց նրան այն ժամանակ, երբ ինքը  
զուրթիրը հպից նրան ու համոզվեց, որ դա ոչ միայն նա էր»:

— 202 —

այլ ինչ-որ կորհրդավոր ու վանող մի բան, ահա այդ սարսափը  
համակեց նրան և այժմ: Նա ուզում էր մտածել ուրիշ բանի վր-  
րա, ուզում էր աղոթել և ոչինչ չկարողացավ անել: Նա խոշոր  
բաց աշերով նայում էր լուսնի լույսին ու ստվերներին, յու-  
րաքանչյուր վայրկյան սպասում էր տեսնել նրա մեռած գեմքը  
և զգում էր, որ տան գլխին և տան մեջ տիրող լուսնինը կաշ-  
կանգել է իրեն:

— Դունյաշա՝, — շշնչաց նա: — Դունյաշա՝, — ճշաց նա —  
վայրենի ծայնով և, լուսթյունից դուրս պրծնելով, վագեց  
դեպի աղչիկների սենյակը՝ դեպի իրեն վազող դայակին ու աղ-  
չիկներին ընդառաջ:

### XIII

Օգոստոսի 17-ին Ռոստովն ու Իլինը, գերությունից հենց  
նոր վերադարձած կավրուշկայի և բանքեր հուսարի ուղեկցու-  
թյամբ, իրենց Յանկովո կայանից, որ 15 վերստի վրա էր Բո-  
գուշարովոյից, ձիերով գնացին զրոսնելու — փորձելու իլինի  
նոր գնած ձին և իմանալու, թե խոտ չկա՝ արդյոք գյուղերում:

Բոգուշարովոն վերջին երեք օրը գտնվում էր երկու թշնա-  
մի բանակի արանքում, այնպես որ նույն հեշտությամբ այնսեղ  
կարող էր մտնել ոսւսական վերջապահը, ինչպես և ֆրանսա-  
կան առաջապահը. ուստի և Ռոստովը, որպես էսկադրոնի հո-  
գածու հրամանատար, ուզեց ֆրանսացիներից առաջ օգտագոր-  
ծել այն պարենամթերքը, որ մնացել էր Բոգուշարովոյում:

Ռոստովն ու Իլինն ամենառաջախ տրամադրության մեջ  
էին: Բոգուշարովոյի ճանապարհին, դեպի իշխանական կալ-  
վածի դաստակերար գնալիս, ուր նրանք հույս ունեին գտնել  
մեծ սպասակազմ և սիրունիկ աղչիկներ, նրանք մերթ հարց  
ու փորձ էին անում կավրուշկային՝ նապոլեոնի մասին ու  
ծիծաղում նրա պատմածների վրա, մերթ քշում էին մեկը  
մյուսի առաջը կտրելու, փորձելով իլինի ձին:

Ռոստովը ոչ գիտեր, ոչ էլ կարծում էր, թե այդ գյուղը,  
ուր ինքը մտել էր, կալվածն է այն իսկ Բալկոնակաւ, որն իր  
քրոջ փեսացուն էր:

Ռոստովն ու Իլինը վերջին անգամ ձիերի գլուխը բաց թո-  
ղին միմյանց առաջ կտրելու հենց Բոգուշարովոյի մոտ, և

— 203 —

Ռոստովը իլինի առաջը կտրելով, առաջինն ինքը մտավ Բոգուշարովով գյուղի փողոցը:

— Դու առաջ անցար, — ասավ կարմրած իլինը:

— Այո, միշտ առաջ, մարգագետնում էլ, այստեղ էլ, — պատասխանեց Ռոստովը, ձեռով շփելով իր փրփրակալած դռնեցուն:

— Իսկ ես իմ ֆրանսականով, ձերդ պայծառափայլություն, — խոսեց Լավրուշկան ետևից, ֆրանսական անվանելով իր լժկան յարուին, — ձեր առաջը կկտրեի, բայց չուզեցի խայտառակել:

Նրանք ձիերի բայլքով մոտեցան ամբարին, որի մոտ կանգնած էր գյուղացիների մի մեծ բազմություն:

Մի քանի գյուղացի գլխարկները վերցրին, մի քանիսը, առանց գլխարկ վերցնելու, նայեցին եկողներին: Երկու ծերերկարհասակ գյուղացի, կնճուապատ դեմքերով ու ցանցառ մորուքներով, դուրս եկան օղետնից և ժպտալով, օրորվելով ու ինչ-որ անկապ երգ երգելով, մոտեցան սպաներին:

— Կեցցե՞ք, — ծիծաղելով ասավ Ռոստովը: — Հը, խոտունե՞ք:

— Եվ ինչ էլ միատեսակ են... — ասավ իլինը:

— Ուրախ-ա-ա-... ի՞... իիի՞... — երգում էր գյուղացին երգանիկ ժպիտով:

Մի գյուղացի դուրս եկավ բազմության միջից և մոտեցավ Ռոստովին:

— Դուք որոնցի՞ց եք, — հարցրեց նա:

— Ֆրանսացիներ, — պատասխանեց իլինը ծիծաղելով: — Ահա և նապոլեոնն ինքը, — ասավ նա, Լավրուշկային ցույց տալով:

— Ուրիմն ոռւսնե՞ր եք, — նորից հարց տվեց գյուղացին:

— Իսկ դուք շա՞տ ուժեր ունեք էստեղ, — հարցրեց մի ուրիշ փոքրամարմին գյուղացի, նրանց մոտենալով:

— Շատ, շատ, — պատասխանեց Ռոստովը: — Բայց դուք ի՞նչու համար եք այստեղ հավաքվել, — ավելացրեց նա, — տո՞ն է, ի՞նչ է:

— Մերունիներն են հավաքվել, հասարակության գործով, — պատասխանեց գյուղացին, նրանից ետ քաշվելով:

Այդ ժամանակ կալվածատիրական տան ճանապարհին երեւացին երկու կին և սպիտակ շլապով մի մարդ, որ գալիս էին դեպի սպաները:

— Վարդագույն գգեստովն իմն է. էլ շնորհը, — ասավ իլինը, նկատելով վճռական քայլերով դեպի ինքը վազող Դունյաշային:

— Մերն է, — իլինին աշքով անելով՝ ասավ Լավրուշկան:

— Ի՞նչ ես ուզում, գեղեցկուհիս, — ասավ իլինը ժպտալով:

— Իշխանադուստրը հրամայեց հարցնել, թե ո՞ր գնդից եք դուք և ի՞նչպես է ձեր ազգանունը:

— Սա կոմս Ռոստովն է, էսկադրոնի հրամանատար, իսկ ես՝ ձեր խոնարհ ժառան:

— Սի... րա՞... խո... սի՞ր... — երգում էր հարբած գյուղացին, երջանիկ ժպտալով ու նայելով իլինին, որ խոսում էր աղջկա հետո: Դունյաշայից հետո Ռոստովին մոտեցավ Ալպատիշը, զեռ հեռվից գլխարկը վերցնելով:

— Համարձակվում եմ անհանգստացնել, ձերդ բարեծնություն, — ասավ նա հարգանքով, բայց հարաբերական արհամարհանքով դեպի այդ սպայի շահնելությունը և ձեռը թիվ տակ դրած: — Իմ տիրուհին, ամսիս 15-ին վախճանված գեներալ-անշեֆ իշխան Նիկոլայ Անդրեևիչ Բալկոնսկու աղջկը, այս մարդկանց տփիտության պատճառով գտնվելով դժվարության մեջ, — նա ցույց տվեց գյուղացիներին, — խնդրում է ձեզ շնորհ անել... Արդյոք լավ չէր լինի, — տխուր ժպիտով ասավ Ալպատիշը, — մի փոքր դենք գնանք, թե չէ այնքան էլ հարմար չի սրանց ներկայությամբ... — Ալպատիշը ցույց տվեց երկու գյուղացու, որ ետևից այնպես էին դառնում նրա շուրջը, ինչպես բուերը ձիու շուրջը:

— Ա՞... Ալպատիշ... Ա՞..., ջակով Ալպատիշ... Լավ է... ներիր, ի սեր Քրիստոսի: Լավ է, Հը՞... — ասում էին գյուղացիները, ուրախ-ուրախ ժպտալով նրան:

Ռոստովը նայեց հարբած գյուղացիներին և ժպտաց:

— Գուցե՞՝ այդ միսիթարում է ձերդ պայծառափայլությանը, — ասավ Զակով Ալպատիշը ծանրաբար տեսքով, թիվ տակ շդրած ձեռով ծերունիներին ցույց տալով:

— Ոչ, այստեղ միսիթարական քիչ բան կա, — ասավ Ռոստովը և ձին քշեց մի կողմ: — Բանն ինչո՞ւմն է, — հարցրեց նա:

— Համարձակվում եմ հայտնել ձերդ պայծառափայլությանը, որ այստեղի կոպիտ ժողովուրդը չի ուզում մեր տիրուհուն բաց թողնել իր կալվածից և սպառնում է ձիերն արձակել, այնպես որ առավոտից ամեն ինչ կապած-դարսած է, բայց նորին պայծառափայլությունը չի կարողանում մեկնել:

— Չի կարող պատահել, — բացականչեց Ռոստովը:

— Պատիվ ունեմ հայտնելու ձեզ գուտ ճշմարտությունը, — կրկնեց Ալպատիլը:

Ռոստովն իշավ ձիուց և, հանձնելով այն բանքերին, Ալպատիչի հետ գնաց դեպի տուն, հարցուփորձելով նրան գործի մանրամասնության մասին: Իսկապես, իշխանադատեր՝ երեկովա գյուղացիներին հաց առաջարկելը, նրա բացատրվելը Դրոնի ու գյուղական ժողովի հետ այնպես փշացրին գործը, որ Դրոնը վերջնականապես բանալիները հանձնեց, միացավ գյուղացիներին և չներկայացավ Ալպատիչի պահանջով, ու առավոտյան, երբ իշխանադուստրը հրամայեց լծել՝ մեկնելու համար, գյուղացիները մեծ խմբով գուրս եկան ամբարի մոտ և մարդ ուղարկեցին հայտնելու, թե նրանք իշխանադատերը չեն թողնի գյուղից գուրս գալու, թե հրաման կա, որ շտեղահանվեն, և նրանք կարձակեն նրա ձիերը: Ալպատիչը գուրս եկավ նրանց մոտ, խրատեց նրանց, բայց նրան պատասխանեցին (ամենից շատ խոսում էր Կարպը. Դրոնը շերեաց բազմության միջից), թե իշխանադուստրը չի կարող հանձնել նրանը առաջիկա պես կծառային նրան ու կհնազանդեն ամեն բանում:

Այն բոպեին, երբ Ռոստովն ու Ելինը սրարշավ անցան ճանապարհով, իշխանադուստր Մարիան, չնայած Ալպատիլը, դայակն ու աղջիկներն աշխատում էին ետ պահել նրան իր մտադրությունից, հրամայեց լծել և ուզում էր մեկնել. բայց, սրբնթաց անցնող հեծելակներին տեսնելով, նրանց ընդունեցին Փրանսացիների տեղ, կառապանները փախան այս ու այն կողմ, և տան սկսվեց կահանց լաց ու կոծ:

— Մեր հայր, մեր հարազատ: Աստված ուղարկեց քեզ, — ասին խանդաղատված ձախներն այն ժամանակ, երբ Ռոստովն անցնում էր միջանցքով:

Իշխանադուստր Մարիան, իրեն կորցրած ու անզոր, նբաւել էր զահին և այն ժամանակ, երբ Ռոստովին տարան նը-

րա մոտ: Նա չէր հասկանում ո՞վ էր դա, և ինչո՞ւ համար է եկել, և ի՞նչ է ինելու իր վիճակը: Տեսնելով նրա ոռւսական դեմքը և նրա ներս մտնելուց ու ասած առաջին խոսքերից ճանաշելով նրան իր շրջանի մարդ, իշխանադուստրը նայեց նրան իր խոր ճառագայթյող հայացքով և սկսեց խոսել հուզումից ընդհատվող ու գողացող ձայնով: Ռոստովն անմիջապես ինչ-որ ոռմանային մի բան տեսավ այդ հանդիպման մեջ: «Անպատճան, վշտահար աղջիկ, մենակ, թողնված կոպիտ, խոռվություն անող գյուղացիների քմահաճույքին: Եվ ինչ-որ մի տարօրինակ ճակատագիր ինձ մղեց այստեղ, — մտածում էր Ռոստովը, լսելով իշխանադատերը ու նայելով նրան: — Եվ ի՞նչ հեղություն, ինչ ազնվություն նրա դիմագծերում ու արտահայտության մեջ», մտածում էր Ռոստովը, լսելով նրա երկշու պատմությունը:

Երբ նա խոսեց այն մասին, թե այդ բոլորը պատահեց հոր թաղման հետեւյալ օրը, նրա ձայնը գողաց: Նա երեսը շրջեց և ապա, կարծես վախենալով, որ Ռոստովը կարող է իր խոսքերն ընդունել որպես նրա գութը շարժելու ցանկություն, հարցականորեն-վախեցած նայեց Ռոստովին: Ռոստովի աշքերում արտասուբ կար: Իշխանադուստր Մարիան նկատեց այդ և երախտապարտ նայեց Ռոստովին իր այն շղարձակ հայացքով, որն ստիպում էր մոռանալ նրա գեմքի տգեղությունը:

— Չեմ կարող արտահայտել, իշխանադուստր, թե որքան ես երջանիկ եմ, որ պատահաբար եկա այս կողմը և ի վիճակի կլինեմ ցույց տալ ձեզ իմ պատրաստակամությունը, — ասավ Ռոստովը վեր կենալով: — Հաճեցեք մեկնել, և պատասխանատու եմ ձեզ պատվովս, որ ոչ մի մարդ չի համարձակի անախորժություն պատճառել ձեզ, եթե միայն գուրք թուլլ տաք ինձ ուղեկցել ձեզ, — և հարգալիր գլուխ խոնարհելով, ինչպես խոնարհում են արքայական ծագում ունեցող կանանց, նա դիմեց դեպի դուռը:

Իր տոնի հարգալիրությամբ Ռոստովը կարծես ցուց էր տալիս, թե չնայած այն բանին, որ ինքը երջանկություն կհամարեր իր ծանոթությունը նրա հետ, բայց չուցեց օգտվել նրա դրախտության դեպից՝ նրա հետ մոտենալու համար:

Իշխանադուստր Մարիան հասկացավ և գնահատեց այդ տոնը:

— Ես շատ, շատ շնորհակալ եմ ձեզնից, — ասավ նրան իշխանադուստրը ֆրանսերեն, — բայց հույս ունեմ, որ այս բոլորը միայն թյուրիմացություն է, և որ ոչ մեղավոր չի այս բանում: — Իշխանադուստրը հանկարծ լաց եղավ: — Ներեցեք ինձ, — ասավ նա:

Ռոստովը, հոնքերը կիտելով, մի անգամ էլ խորը գլուխ տվեց ու դուրս եկավ սենյակից:

#### XIV

— Հը՛, ինչպե՞ս է, լա՞վն է: Չէ, ախաբերս, վարդագույնն իմն է, — սքանչելի է, անունն էլ Դուռյաշա է:

Բայց Ռոստովի դեմքին նայելով՝ իլինը լոեց: Նա տեսավ, որ իր հերոսն ու հրամանատարը գտնվում է բոլորովին այլ արամադրության մեջ:

Ռոստովը զայրացած նայեց իլինին և, նրան շպատախանելով, արագ քայլերով գնաց դեպի գյուղ:

— Ես նրանց ցույց կտամ, ցույց կտամ այդ ավազակներին, — ասում էր նա ինքն իրեն:

Ալպատիչը սահուն քայլերով, որպեսզի միայն շվազի, սնգսնգալով հազիկ հասավ Ռոստովին:

— Ի՞նչ որոշում հաճեցիք ընդունել, — ասավ Ալպատիչը նրան մոտենալով:

Հոստովը կանգ առավ և, բուռնցքները սեղմած, հանկարծ ահարկու տեսքով շարժվեց դեպի Ալպատիչը:

— Որոշո՞ւմ: Ի՞նչ որոշում: Քոփա՛կ, — բոռաց նրա վրա: — Դու ի՞նչ էր անում: Հը՛: Գյուղացիները խռովություն են անում, իսկ դու չես կարողանում նրանց հախիցը գալ: Դու ինքդ դաշաճան ես: Ես ճանաշում եմ ձեզ, բոլորիդ կաշին կրքերին... — Եվ, կարծես վախենալով իրուր տեղը վատնել իր բարկության պաշարը, նա թողեց Ալպատիչին և արագ քայլերով գնաց առաջ:

Ալպատիչը, ճնշելով վիրավորանքի զգացումը, սահուն քայլերով հասավ Ռոստովի ետեից և շարունակեց հայտնել նրան իր նկատառումները: Նա ասում էր, որ գյուղացիները համառում են, որ այժմ անխոհեմ բան կլիներ ընդդիմանալ

նրանց, զինվորական ուժ չունենալով, թե ավելի լավ չեր լինի արդյոք նախ մարդ ուղարկվեր զորախումբ կանչելու:

— Ես նրանց զորախումբ ցույց կտամ... Ես նրանց ընդդիմություն ցույց կտամ, — անիմաստ կերպով հարակցում էր Նիկոլայը, շնչարգել լինելով կենդանական անխոհեմ կտամ դությունից և այդ կատաղությունը թափելու պահանջից:

Զկուադատելով, թե ինչ պիտի անի, անգիտակցաբար, արագ, վճռական քայլերով նա մոտենում էր բազմության եվ որքան նա մոտենում էր բազմությանը, Ալպատիչն այնքան ավելի զգում էր, որ նրա անխոհեմ քայլը կարող է լավ հետեւանքներ ունենալ: Նույն զգում էին և գյուղացիները, նայելով նրա արագ ու հաստատուն քայլվածքին և վճռական խոժոռք գեմքին:

Նրանից հետո, երբ հուսարները գյուղ մտան և Ռոստովը գնաց իշխանադատեր մոտ, բազմության մեջ շփոթություն և երկպառակություն ընկավ: Մի քանի գյուղացի սկսեցին ասել, թե այդ եկողներն ոռւսներ են, և հանկարծ չնեղանան, որ օրիորդին բաց չեն թողնում: Դրոնը նույն կարծիքի էր. բայց հենց որ նա իր կարծիքը հայտնեց, Կարպն ու մյուս գյուղացիները հարձակվեցին նախկին տանուտերի վրա:

— Դու ծողովրդի արյունը ծծել ես այսքան տարի, — գոռում էր նրա վրա Կարպը, — քեզ համար միւնույն է: Դու գրպանդ կլցնես՝ կերթաս. քեզ ի՞նչ թե մեր տները կբանդվեն կամ չեն քանդվի:

— Ասած է, որ կարգ լինի. ոչ մեկը շգնա իր տնից. որ վասող դուրս շտանենք. Էս է բոլորը, — բոռում էր մի ուրիշը:

— Հերթը բու տղինն էր, իսկ դու, բու արցին խնայեցիր, — հանկարծ արագորեն խռոց մի փոքրիկ ծերունի, հարձակվելով Դրոնի վրա, — իսկ իմ Վանկային տանել տվիր: Է՛, մեռնելու ենք:

— Հենց ա՛յդ է, մեռնելու ենք:

— Ես հասարակությունից չեմ հրաժարվում, — ասավ Դրոնը:

— Զես հրաժարվում, փորդ հաստացրել ե՞ս...

Երկու երկար գյուղացի ասում էին իրենցը: Հենց որ Ռոստովը, իլինի, կավուշկայի և Ալպատիչը ուղեկցությամբ մոտե-

յակ բազմությանը, Կարպը, մատները գոտին խրած, թեթևակի ժպտալով, դուրս եկավ առաջ: Դրոնն, ընդհակառակը, անցակ վերշին շարքերը, և բազմությունն ավելի սերտ մոտեցավ իրար:

— Ե՛, ո՞վ է ձեր տանուտերն այստեղ, — կանչեց Ռոստովը արագ քայլերով բազմությանը մոտենալով:

— Տանուտե՞րը: Զեր ի՞նչին է պետք, — հարցրեց Կարպը: Բայց խոսքը շկարողացավ վերցացնել, երբ գլխարկը թւռավ, և ուժգին հարվածից գլուխը ծովեց մի կողմ:

— Գիտարկներդ վերցրեք, դավաճաններ, — բոռաց Ռոստովի լիարյուն ձայնը, — Ո՞ւր է տանուտերը, — կատաղի ձայնով բոռում էր նա:

— Տանուտերին, տանուտերին է կանչում... Դրոն Զախարիւ ձեզ է կանչում, — լսվեցին այս ու այն կողմ հապճեպ-հընազանդ ձայներ, և գլխարկներն սկսեցին վերցնել:

— Մենք խոռվություն շենք անում, մենք կարգ ենք պահում, — խոսեց Կարպը, և մի քանի ձայներ ետևից նույն վայրկյանին խոսեցին հանկարծ.

— Ինչպես ծերունիները որոշել են, դուք իշխանավորներդ շատ եք...

— Դեռ խոսո՞ւմ եք... Խոռվություն... Ավագակնե՞ր: Դաշվաճաննե՞ր, — անմտորին, ոչ իր ձայնով գոռաց Ռոստովը, Կարպի օձիքը բանելով: — Կապի՛ր սրան, կապի՛ր, — բոռաց նա, թեև նրան կապող չկար, բացի Լավրուշկայից ու Ալպատից:

Լավրուշկան, սակայն վազեց դեպի Կարպը և նրա ձեռները բռնեց ետևից:

— Կհրամայեք մերոնց կանչենք սարի տակից, — գոռաց նա:

Ալպատիշը դիմեց զյուղացիներին, երկուսին կանչեց անունները տալով, որ Կարպին կապուտեն: Գյուղացիները հնազանգորեն դուրս եկան բազմության միջից և սկսեցին գոտիներն արձակել:

— Տանուտերն ո՞ւր է, — գոռաց Ռոստովը: Դրոնը, խոռոոած ու գունատ գեմքով, դուրս եկավ բազմության միջից:

— Դո՞ւ ես տանուտերը: Կապուտել, Լավրուշկա, — բոռաց Ռոստովը, կարծես այդ հրամանն էլ չեր կարող արգելքի հանդիպել:

Եվ իսկապես, երկու գյուղացի էլ սկսեցին կապուտել Դրոնին, որը, կարծես նրանց օգնելու համար, գոտին արձակեց ու տվեց նրանց:

— Իսկ դուք բողորդ լսեցե՞ք ինձ: — Ռոստովը դիմեց գյուղացիներին: — Անմիջապես գնացեք ձեր տները, և ձեր ձայնն էլ լսեմ:

— Ինչ է որ, մենք ոչ մի վիրավորական բան չենք արել: Մենք միայն, այսինքն անխելքությունից: Միայն հիմար բան արինք... Ես ասում էի չեր որ անկարգ բան է, — լսվում էին իրար հանդիմանող ձայներ:

— Այ ես ձեզ ասում էի չեր, — ասավ Ալպատիշը, մտնելով իր իրավունքների մեջ: — Լավ չի, տղերք:

— Հիմարություն էր մեր կողմից, Ցակով Ալպատիշ, — պատասխանեցին մի քանի ձայներ, և բազմությունն անմիջապես սկսեց հեռանալ ու ցրվել գյուղում:

Կապված երկու գյուղացուն տարան աղայի տունը: Երկու հարբած գյուղացիները գնացին նրանց ետևից:

— Էխ, քեզ էլ կտեսնեմ, — ասում էր նրանցից մեկը, դիմելով Կարպին:

— Միթե կարելի՞ է աղաների հետ այդպես խոսել: Դու ի՞նչ էիր կարծում որ: Հիմար, — հաստատում էր մյուսը, — իսկապես, հիմար:

Երկու ժամ հետո սայլերը կագնած էին Բոգուշարովոյի տան բակում: Գյուղացիները եռանդով դուրս էին բերում և սալշելուն էին բառնում տիրունի իրերը, և Դրոնը, որ իշխանադսու երցանկությամբ ազատ էր արձակվել փակված տեղից, բակում կանգնած կարգադրություններ էր անում գյուղացիներին:

— Դու էղ էղպես վատ մի գնի, — ասում էր զյուղացիներից մեկը, կլոր, ժպտացող դեմքով մի բարձրահասակ մարդ, սպասուհու ձեռից արկղիկն առնելով: Չէ որ զա էլ փող արժին ի՞նչի ես էղպես շեմ սիրում: Պետք է ամեն բան կարգին, օրենքով լինի: Այ էղպես՝ ճիլոպի տակ դիր, խոտով էլ ծածկի, հիմի լավ է:

— Տես, ինչքան գիրք կա, գիրք, — ասավ մի ուրիշ գյուղացի, որ դուրս էր բերում իշխան Անդրեյի գրադարանի պահարանները: — Դու մի կպշի: Այ ծանր է հա, տղերք: Գրքերը ծանր բան են:

— Հա՞ գրե՛լ են. պարապ ման շեն եկել, — նշանակալից կերպով աշխով՝ անելով՝ ասավ բարձրահասակ կլորադեմ գյուղացին, ցույց տալով բառարանները, որ դրված էին բոլորից վերև:

Ռոստովը, չկամենալով իր ծանոթությունը փաթաթել իշխանադստեր վզին, շնչաց նրա մոտ, այլ մնաց գյուղում, սպասելով նրա մեկնումին: Սպասելով, որ իշխանադուստր Մարիայի կառքերը դուրս գան բակից, Ռոստովը հեծավ ձին և մինչև այն ճանապարհը, որ բռնել էին մեր զորքերը, Բոգուշարովոյից տասներկու վերստ դինը, ուղեկցեց նրան: Յանկում, իշխանում, հրաժեշտ տվեց նրան հարգալիր և առաջին անգամ թույլ տվեց իրեն համբուրել նրա ձեռը:

— Ինչպես շեք ամաշում, — կարմրելով պատասխանեց նա իշխանադուստր Մարիայի շնորհակալության արտահայտությանը՝ իրեն փրկելու համար (ինչպես անվանեց նա Ռոստովի վարդունքը), — յուրաքանչյուր զավառակապետ կաներ նույշներ, եթե մենք միայն ստիպված լինեինք կուվել գյուղացիների շեմ, մենք թշնամուն այսքան հնուու շէինք թողնի, — ասավ նա, ինչ-որ բանից ամաշելով, և աշխատելով խոսակցությունը վորխել: — Ես երջանիկ եմ միայն, որ առիթ ունեցա ձեզ ծանոթանալու: Գնաք բարով, իշխանադուստր, ցանկանում եմ ձեզ երջանկություն և միխթարություն, և ցանկանում եմ ձեզ հանդիպել ապելի երջանիկ պայմաններում: Եթե շեք ցանկանում ստիպել ինձ՝ կարմրել, խնդրում եմ, շնորհակալություն մի հայտներ:

Բայց իշխանադուստրն այնուհետև, եթե խոսքերով շնորհակալություն շէր հայտնում, հայտնում էր իր՝ երախտագիտությամբ ու քնքությամբ փայլող դեմքի արտահայտությամբ: Իշխանադուստրը շէր կարող հավատալ, թե շնորհակալության արժանի բան չկա: Ընդհակառակիր, նրա համար անկասկած էր, որ եթե Նա շինէր, առա ինքը հաստատակես զոհ կերթար կամ խոսվա-

րարների, կամ ֆրանսացիների ձեռով, որ նա՝ իրեն փրկելու համար, ինքը իրեն ենթարկել է ակներեւ ու սարսափելի վտանգների. և դարձյալ անկասկած էր այն, որ բարձր ու ազնիվ հոգու տեր մարդ էր, որ կարողացավ հասկանալ իր դրությունն ու վիշտը: Նրա բարի, ազնիվ աշքերն իրենց մեջ երևած արցունքներով, այն պահին, երբ իշխանադուստրը, ինքը լալով, խոսում էր նրա հետ իր կորուստի մասին, չին հեռանում նրա երևակայությունից:

Երբ իշխանադուստրը հրաժեշտ տվեց նրան ու մնաց մենակ, նա հանկարծ արցունք զգաց աշքերում, և այստեղ արդին առաջին անգամ նրան ներկայացավ մի տարօրինակ հարց, արդյոք սիրում է ինքը նրան:

Ճանապարհին՝ Մոսկվային մոտենալիս, շնայած այն բանին, որ իշխանադստեր վիճակն ուրախ չէր, Դունյաշան, որ նստած էր նրա կառեթում, մեկից ավելի անգամ նկատել էր, որ իշխանադուստրը, գլուխը կառեթի լուսամուտից հանելով, ուրախությամբ ու տիրությամբ ժապում էր ինչ-որ բանի:

«Ե, ի՞նչ կա որ, թեկուզ և սիրել եմ նրան», մտածում էր իշխանադուստր Մարիան:

Որքան էլ նա ամաշում էր խոստովանել իրեն, թե ինքն առաջինն է սիրել մի մարդու, որը թերևս, երբեք շիրի իրեն, նա մտովի մխիթարում էր իրեն, որ ոչ ոք երբեք այդ չի իմանա, և թե նա հանցավոր չի լինի, եթե մինչև կյանքի վերջը, այդ մասին ոչ ոքի շասելով, սիրի նրան, որին սիրել է առաջին և վերջին անգամ:

Երբեմն իշխանադուստրը հիշում էր նրա նայվածքները, նրա օգնությունը, նրա խոսքերը, և երջանկությունը նրա թվում էր ոչ անհնարին: Եվ այդ պահին ահա Դունյաշան նըրկատում էր, որ իշխանադուստրը, ժպտալով, նարում է կառեթի լուսամուտից:

«Ու պետք է հենց Բոգուշարովով գար, և այն էլ այդ բռակեին, — մտածում էր իշխանադուստր Մարիան: — Ու պետք է որ նրա քույրը մերժեր իշխան Անդրեյին»: Եվ այդ բռորի մեջ իշխանադուստր Մարիան տեսնում էր նախախնամության կամքը:

Այն ապագորությունը, որ թողել էր իշխանադուստր Մարիան Ռոստովի վրա, շատ հաճելի էր: Երբ Ռոստովը հիշում էր ներքան, ուրախություն էր գալիս վրան, և երբ ընկերները, իման-

լոյն թօգուշաբովոյում նրա հետ պատահած արկածի մասին, կատակում էին, թե, խոտի գնալով, ճանկել է Ռուսաստանի ամենահարուստ հարսնացուներից մեկին, Ռուսովը բարկանում էր: Նա բարկանում էր հենց այն պաճառով, որ իր համար դուրեկան, ահապին կարողության տեր, հեզ իշխանադուստր Մարիայի հետ ամուսնանալու միտքը մեկ անգամ չէր, որ հակառակ իր կամքի, ծագում էր նրա գլխում: Անձամբ իր համար նիկուալը չէր կարող իշխանադուստր Մարիայից ավելի լավ կին ցանկալ: Իր ամուսնությունը նրա հետ կերչանկացներ կոմսուհուն, նրա մորը, և կշտկեր հոր գործերը, և անգամ, — նիկուայն զգում էր այդ, — կերչանկացներ իշխանադուստր Մարիային:

Բայց Սոնյա՞ն: Նրան տրված խոսքը: Եվ դրանից էլ Ռուսովը բարկանում էր, երբ կատակում էին իշխանադուստր Բալկոնսկայայի մասին:

## XV

Բանակների հրամանատարությունն ընդունելով՝ Կուտուզովը հիշեց իշխան Անդրեյին և հրաման ուղարկեց նրան՝ գալ գլխավոր կայանը:

Իշխան Անդրեյը Յարեն-Զայմիշչի եկավ հենց այն օրը և հենց այն պահին օրվա, երբ Կուտուզովը կատարում էր առաջին զորատեսը: Իշխան Անդրեյը գյուղում իշխանեց քահանայի տանը, որի առաջ կանգնած էր գլխավոր հրամանատարի կառօքը, ու նստեց զարբասի մոտ եղած նստարանին, սպասելով գերապայծառին, ինչպես բոլորն անվանում էին այժմ Կուտուզովին: Գյուղից գուրս գաշտում լսվում էին մերթ գինվորական երաժշտախմբի հնչունները, մերթ անթիվ-անհամար ձայների աղաղակը, որ ուռուած էին կանշում գլխավոր հրամանատարին: Հենց այդտեղ դարբասի մոտ, իշխան Անդրեյից տասը բայլ հետու, օգտվելով իշխանի բացակայությունից ու սքանչելի եղանակից, կանգնել էին երկու սպասյակ — սուրհանդակն ու սպասավորապետը: Թիսաղեմ, երկար բեղերով ու այտամորուսներով հուսարական մի փոքրամարմին փոխ-գնդապետ մատեցավ դարբասին և, նայելով իշխան Անդրեյին, հարցրեց, թե այստեղ է արդյոք բնակելում գերապայծառը և արդյոք զուտ կդա:

Իշխան Անդրեյը պատասխանեց, թե ինքը գերապայծառի շտարից չէ և նույնպես եկվոր է: Հուսարական փոխ-գնդապետը դիմեց զուգված սպասյակին, և գլխավոր հրամանատարի սպասյակը պատասխանեց նրան այն առանձնահատուկ արհամարհանքով, որով գլխավոր հրամանատարների սպասյակները խոսում են սպաների հետ:

— Ի՞նչ: Գերապայծա՞որ: Երեխ, հիմա կդա: Դուք ի՞նչ էք ուզում:

Հուսար փոխ-գնդապետը ժպտաց բեղերի մեջ սպասյակի տոնի վրա, իշավ ձիուց, հանձնեց այն բանքերին և մոտեցավ Բալկոնսկուն, թեթևակի գլուխ տալով նրան: Բալկոնսկին մի կողմ քաշվեց նստարանի վրա: Հուսար փոխ-գնդապետը նստեց նրա կողքին:

— Նույնպես գլխավոր հրամանատարի՞ն եք սպասում, — խոսեց հուսար փոխ-գնդապետը: — Ասում են՝ բոլողին մատչելի է, փաղ'ք աստծու: Թե չէ եղ՝ շիկամոլնեղ՝ ի հետ գող'ծ ունենալը պատիժէ: Իզուղ՝ շեղ՝ եղ՝ մոլովը գեղ՝ մանացի գաղ'նալ ուզում: Հիմա, թեղ՝ ևս զ'ուսնեղ՝ զ կաղ'ողանան խոսելը թե չէ, սատանան գիտի, ինչեղ՝ էին անում: Շաղ'ունակ նահանջում էին, շաղ'ունակ նահանջում: Դուք աղ'շավանք կատարե՞լ եք, — հարցրեց նա:

Բավկականություն ունեցել եմ, — պատասխանեց իշխան Անդրեյը, — մասնակցել ոչ միայն նահանջին, այլև այդ նահանջի մեջ կորցնել ամենը, ինչ ունեի թանկագին, չխոսելով կալվածներիս և հայրենական տան մասին... Հորս, որ մեռավ վշտից: Ես սմոլենցի եմ:

— Ա՞... Դուք իշխան Բալկոնսկի՞ն եք: Շա: ուղ'ախ եմ ծանոթանալուս, փոխ-գնդապետ Դենիսով, ավելի հայտնի Վայսկա անունով, — ասավ Դենիսովը, սեղմելով իշխան Անդրեյի ձեռը և առանձին բարի ուշագրությամբ նայելով Բալկոնսկու ու գեմքին: — Այո, լսել եմ, — ասավ նա յավակցությամբ, մի փոքր լուելով, շարունակեց: — Ահա և սկյութթական պատեղ'ազմ: Այս բոլող՝ լավ է, բայց ոչ թե նղ'անց համազ', սղքեղ՝ իղ'ենց կողեղ՝ են դեմ տվել: Դուք իշխան Անդրեյը Բալկոնսկի՞ն եք: — Նա գլուխն օրորեց: — Շատ ուղ'ախ եմ, իշխան, շատ ուղ'ախ եմ ծանոթանալուս, — ավելացրեց նա կրկին տխուր ժպիտով, սեղմելով նրա ձեռը:

Իշխան Անդրեյը ճանաշում էր Դենիսովին՝ Նատալյայի պատմածից, որ նա իր առաջին փեսացուն է եղել: Այդ հիշողությունը, և քաղցր, և ցավագին հիշողությունը, փոխադրեց նրան այժմ դեպի այն հիշանդագին զգացումները, որոնց մասին նա լիբրչերս վաղուց արդեն չէր մտածել, բայց որոնք այնուամենայնիվ մնում էին նրա հոգում: Վերջերս այնքան ուրիշ և այնպիսի լուրջ տակություններ, ինչպես Սմոլենսկի հանձնումը, իր կիսին Գորի գնալը, հոր մահվան լուրը, — այնքան բաներ էր ապրել ու զգացել նա, որ այդ հիշողությունները վաղուց արդեն չէին այցելում նրան և, երբ այցելեցին, այլևս նախկին ուժգնությամբ շագեցին նրա վրա: Դենիսովի համար էլ հիշողությունների այն շարքը, որ հարուցեց Բալկոնսկու անունը, հեռավոր բանաստեղծական անցյալ էր, երբ նա, ընթրիքից և Նատաշայի երգից հետո, ինքն էլ շիմանալով ինչպես, առաջարկություն արավ տասնհինգ ևարեկան աղջկան: Նա ժպտաց այն ժամանակվա իր հիշողությունների և դեպ Նատաշան ունեցած իր սիրո վրա և անմիջապես անցավ այն բանին, ինչ բուռն կերպով և բացառապես զբաղեցնում էր նրան այժմ: Դա արշավանքի մի ծրագիր էր, որ մտածել, խորհել էր նա, ծառայելով նահանջի ժամանակ առաջապսակերում: Նա այդ ծրագիրը ներկայացրել էր Բարկլայ-Դե-Տոլլիին և այժմ մտադիր էր ներկայացնել Կուտուզովին: Մրագիրը հիմնվում էր այն բանի վրա, որ ֆրանսացիների ուզմական գիծը շափականց ձգված է և որ զրա փոխարեն կամ զրա հետ միասին, փոխանակ ճակատից սկսել գործողությունները և կտրել ֆրանսացիների ճանապարհը, պեսաք էր խանգարել նրանց հաղորդակցության կապը: Նա սկսեց իր ծրագիրը բացատրել իշխան Անդրեյին:

— Նրանք չեն կարող այդ ամբողջ գիծը պահել: Դա անհընարին բան է. ես պատասխանատու եմ. ես կճելքեմ այդ գիծը. տվեր ինձ 500 մարդ, ես կբայրայեմ նրանց, դա հաստատ բան է: Միակ սիստեմը պարտիզանականն է:

Դենիսովը վեր կացավ և, շարժումներ անելով, սկսեց իր ծրագիրը բացատրել Բալկոնսկուն: Նրա բացատրության կիսին բանակի կանչերը, ավելի անհեթեթ, ավելի ծավալուն և երաժշտության ու երգերի հետ խառը լսեցին զորատեսի վայրից: Գյուղում լսվեցին զոփուններ ու կանչեր:

— Ինքը գալիս է, — ձայն տվեց դարբասի մոտ կանգնած լազակը, — գալիս է:

Բալկոնսկին ու Դենիսովը մոտեցան դարբասի դռանը, ուր ցինվորների մի խումբ էր կանգնած (պատվո պահակ), և տեսան հողոցով առաջ եկող ոչ բարձրահասակ խայտախար ծիռուկ և ստած Կուտուզովին: Գեներալների ահազին շքախումբը գալիս էր նրա ետևից: Բարկլայն իր ծին քշում էր գրեթե նրա կողմին. սպաների բազմությունը վազում էր նրանց ետևից ու նրանց շուրջը և «ուռու» կանչում:

Նրա առջեկից վագեվազ բակը մտան ձիավոր աղյուտանտները: Կուտուզովը անհամբեր հրում, հորդորում էր իր ծանրության տակ շորովզող ծիռն, և անդադար գլխով անելով, ձեռք դնում էր կավալերգարդյան (կարմիր երիզով ու առանց պահպանակի) գլխարկին, որ զրել էր: Մոտենալով իրեն պատիվ տվող գրենադերների պատվո պահակին, որոնց մեծ մասը ձիավորներ էին, նա մի վայրկյան անխոս ուշադիր նրանց նայեց պետի համառ նայվածքով և դարձավ իր շուրջը կանգնած գեներալների ու սպաների բազմության նրա դեմքը հանկարծ նուրբ արտահայտություն ընդունեց. Նա ուսեր ցնցեց տարակուսանքի շարժումով:

— Եվ այսպիսի քաշերով շարունակ նահանջել ու նահանջել, — ասավ նա: — Է, ցտեսություն, գեներալ, — ավելացրեց նա և, իշխան Անդրեյի ու Դենիսովի կողքով, ծին քեց շեափ բակը:

— Ուռա՞ ուռա՞ ուռա՞ — բացականշեցին նրա ետևից Այն օրից, ինչ իշխան Անդրեյը նրան չէր տեսել, Կուտուզովն ավելի հաստացել էր, ուսեր և ճարպակալել: Բայց Անդրեյին ծանոթ սպիտակ աշքը և վերքն ու նրա դեմքի ու կերպարանքի հոգնածության արտաշայտությունը նույնն էին: Նա հագել էր մունդիրանման սյուրթուկ (մտրակը բարակ փոկով կախված էր ուսից) և զրել էր սպիտակ կավալերգարդյան զըլիարկ: Նա, ծանրորեն տափակած և օրորվելով, նստել էր իր աշխույժ ձին: Ֆու... ֆու... ֆու... — Փոխացրեց հազիվ լսելի, բակը մտնելով, նրա դեմքին կար հանգստի ուրախության արտահայտությունը մի մարդու, որ մտադիր է հանդստանալ ներկայացուցչությունից հետո: Նա ձախ ոտք հանեց ասպանդակից, փովելով ամբողջ մարմնով ու դեմքը կննուտե-

լով ճիղերից, դժվարությամբ տարավ այն թամրի վրայով, չնևկեց ծնկով, տնքաց և իշավ իրեն բռնող կազակների ու ազգուտանտների ձեռների վրա:

Նա իրեն հավաքեց, դիտեց կկոցող աշքերով և, նայելով իշխան Անդրեյին, ըստ երևոյթին, շճանաշեց նրան, իր սուզգող քայլվածքով գնաց դեպի տան աստիճանները: Իշխան Անդրեյի դեմքի տպավորությունը միայն մի քանի վայրկյան հետո (ինչպես այդ հաճախ է պատահում ծերունիներին) կապվեց նրա անձի մասին ունեցած հիշողության հետ:

— Ա՛, բարե՛, իշխան, բարե՛, սիրելիս. գնա՛նք, — հոգնածորեն ասավ նա ետ նայելով, և ծանրորեն բարձրացավ իր ծանրության տակ ճնշացող պատշգամբը:

Նա կոճակներն արծակեց ու նստեց պատշգամբում դրված նստարանին:

— Հը, հայրդ ի՛նչպես է:

— Երեկ տեղեկություն ստացա նրա մահվան մասին, — կարճ ասավ իշխան Անդրեյը:

Կուտուզովը վախեցած բաց աշքերով նայեց իշխան Անդրեյին, ապա գլխարկը վերցրեց ու երեսը խաչակնեց:

— Երկնային արքայություն նրան: Թող աւտու կամքը մինի մեզ բոլորիս վրա: — Նա ծանրորեն, ամբողջ կրծքով, հառաշեց ու լոցց: — Ես խորապես սիրում և հարգում էի նրան և ցավակլցում եմ քեզ ամբողջ հոգով:

Նա գրկեց իշխան Անդրեյին, սեղմեց իր պարարտ կրծքին և երկար շէր թողնում նրան: Երբ բաց թողեց, իշխան Անդրեյը տեսավ, որ Կուտուզովի ետ գնացած շուրջերը դողում էին և նրա աշքերում արցունքներ կային: Նա հառաշեց և երկու ձեռով բռնեց նստարանից, որ վեր կենա:

— Գնանք, գնանք ինձ մոտ, խոսենք, — ասավ նա:

Բայց այդ ժամանակ Դենիսովը, որ նույնպես քիչ էր երկրնշում իշխանավորներից, ինչպես և թշնամու առաջ, չնայած այն բանին, որ ադյուտանտները բարկացած շշունչով կանգնեցնում էին նրան, համարձակ խթանակներն աստիճանների վրա լրիկացնելով, մտավ պատշգամբ: Կուտուզովը ձեռները նստարանին հենած, դգո՞հ նայեց Դենիսովին: Դենիսովն, իր անունը տալով, հայտնից, թե հայրենիքի բարօրության համար մեծ կարևորություն ներկայացնող բան ունի հաղորդելու նո-

րին պայծառափայլության: Կուտուզովը հոգնած հայացքով սկսեց նայել Դենիսովին և սրտնեղած շարժումով ձեռները դրեց փորին ու կրկնեց. «Հայրենիքի բարօրության համար: Հը, ի՛նչ կա: Խոսիր»: Դենիսովը կարմրեց ալզկա պես (այնպես տարօրինակ էր շառագունած տեսնել այդ բեղավոր, տարիքոտ ու հարբած դեմքը), և համարձակորեն սկսեց բացատրել թշնամու գործող բանակի փիծը՝ Սմոլենսկի և Վյազմայի միջին կարելու իր ծրագիրը: Դենիսովն ապրել էր այդ կողմերում և լավ ծանոթ էր տեղին: Նրա ծրագիրը անկասկած լավ էր թվում, մանավանդ այն ամրակուռ համոզումով, որ կար նրա խոսքերի մեջ: Կուտուզովը նայում էր իր ոտներին և երեմն հայացքը գցում հարևան խրճիթի բակը, կարծես ինչ-որ անխորժ բան էր սպասում այնտեղից: Այդ խրճիթից, որին նայում էր նա, իսկապես, Դենիսովի գրուցյի ժամանակ, երեաց մի գեներալ՝ պորտֆելը թնի տակ:

— Հը՝, — Դենիսովի բացատրության կեսին խոսեց Կուտուզովը, — արդեն պատրա՞ստ է:

— Պատրաստ է, ձերդ պայծառափայլություն, — ասավ գեներալը:

Կուտուզովը գլուխն օրորեց, կարծես ասելիս լիներ. «մի մարդ այս բոլորն ինչպես հասցնի», և շարունակեց լսել Դենիսովին:

— Չուսաղ՝ սպայի ազնիվ խոսք եմ տալիս, — ասում էր Դենիսովը, — ող՝ ես կըկտո՞եմ նապուենի հաղող՝ դակը ություննեղը:

— Պիխ-համբարակ Կիրիլ Անդրեյիլ Դենիսովը ձեր ի՛նչն է, — ընդհատեց նրան Կուտուզովը:

— Հաղ՝ ազատ հող՝ եղբայդ՝ է, ձեղ՝ դ պայծառափայլություն:

— Օ՛, բարեկամներ էինք, — ասավ Կուտուզովն ուրախ: — Հավ, լավ, սիրելիս, մնա այստեղ՝ շտաբում, վաղը կխոսենք:

Դենիսովին գլխով անելով՝ նա շրջվեց և ձեռը մեկնեց գետի Կոնովնիցինի բերած թղթերը:

— Հաճելի շէր լինի արդյոք ձերդ պայծառափայլությանը սենյակ հրամմել, — դգո՞հ այնով ասավ հերթապահ գեներալը, — անհրաժեշտ է ծրագրերը քննել և մի քանի թուղթ ստորագրել:

Դոնից դուրս եկող աղյուտանտը հայտնեց, թե բնակարանում ամեն ինչ պատրաստ է: Բայց Կուտուզովն ըստ երևույթին, ուզում էր սենյակ մտնել արդեն ազատված: Նա դեմքը կնճռուեց...

— Ոչ, կարգադրիր: սիրելիս, մի փոքրիկ սեղան բերեն այստեղ. ես այստեղ կնայեմ, — ասավ նա: — Դու շգնաս, — ավելացրեց նա, դիմելով իշխան Անդրեյին:

Իշխան Անդրեյը մնաց պատշգամբում, լսելով Հերթապահ գեներալին:

Զեկուցման ժամանակ մուտքի դռան ետեց իշխան Անդրեյը լսեց կանացի շշունչ և կանացի մետաքս զգիստների շրջուն: Մի քանի անգամ այդ ուղղութիւնը նայելով՝ նա զըռան ետև նկատեց վարդագույն զգեստով, մանիշակագույն մետաքս զիխաշորով, լեցուն, կարմրագեմ ու սիրուն մի կին՝ սկսութեղո ձեռին. նա, ըստ երևույթին, սպասում էր զիխավոր հրամանատարի ներս մտնելուն: Կուտուզովի աղյուտանտը շշուկով բացատրեց իշխան Անդրեյին, թե դա տանտիրուհին է, իրիցինը, որ մտադիր է աղուհաց մատուցել նորին պարագայութիւնը: Նրա մարդը գերապայծառին դիմավորել էր խաչը ձեռին՝ եկեղեցում, իսկ կինը տանը... «Եատ լավիկն է», ավելացրեց աղյուտանտը ժապալով: Կուտուզովը ետ նայեց այդ խոսքերի վրա: Կուտուզովը հերթապահ գեներալի զեկուցումը (որի զիխավոր նյութը Ցարեն-Ձայմիշչենի մոտ եղած դիրքերի քննադատությունն էր) լսում էր այնպես, ինչպես լսեց Դենիսովին, այնպես, ինչպես լսում էր յոթ տարի առաջ Առևտերլիցի ուղղմական խորհուրդի վիճաբանությունները: Նա, ըստ երևույթին, լսում էր միայն այն պատճառով, որ ականջներ ուներ, որոնք, չնայած այն բանին, որ մեկի մեջ ծովային ճոպան կար, չին կարող լսել. բայց ակներկ էր, որ ոչ մի բան այն բռնորդից, ինչ կարող էր ասել հերթապահ գեներալը, չիր կարող ոչ միայն զարմացնել կամ հետաքրքրել նրան, այլ որ նա առաջուց գիտեր ամենը, ինչ ասելու էին իրեն, և այդ բոլորը լսում էր միայն նրա համար, որ պետք էր լսել, ինչպես պետք է լսել կատարվող մաղթանքը: Այն ամենը, ինչ ասում էր Դենիսովը, խելացի էր ու գործնական: Այն, ինչ ասում էր հերթապահ գեներալը, ավելի գործնական էր և ավելի խելացի, բայց ակներկ էր, որ կուտուզովն արհամարհում

էր թե՛ գիտությունը, թե՛ խելքը և գիտեր ուրիշ ինչոր մի բան, որ պետք է լուծեր հարցը, — մի ինչ-որ ուրիշ, խելքից ու գիտությունից անկախ մի բան: Խշխան Անդրեյն ուշադիր հետեւում էր զիխավոր հրամանատարի դեմքի արտահայտության, և միակ արտահայտությունը, որ նա կարող էր նկատել նրա դեմքին, որ ձանձրությի արտահայտությունն էր և մի հետաքրքրություն դեպ այն, թե ի՞նչ էր նշանակում կանացի շշունը դրան ետևում, նաև պատշաճավորություն պահպանելու ցանկություն: Պարզ էր, որ Կուտուզովն արհամարհում էր իւելքն ու գիտությունը և անգամ հայրենասիրական զգացմունքը, որ արտահայտեց Դենիսովը, բայց արհամարհում էր ոչ խելքով, ոչ զգացմունքով, ոչ գիտությամբ (որովհետև նա չէր աշխատում արտահայտել դրանք), այլ նա այդ բոլորը արհամարհում էր ինչ-որ ուրիշ մի բանով: Նա դրանք արհամարհում էր իր ծերությամբ, կյանքի իր փորձառությամբ: Միակ կարգադրությունը, որ իր կողմից արագ Կուտուզովն այդ զեկուցման առթիվ, վերաբերում էր ուսւուղիքի մարողյուրության: Հերթապահ գեներալը իր զեկուցման վերջում ստորագրելու համար գերապայծառին ներկայացրեց մի գրություն, որով, ըստ մի կալվածատիրոջ խնդրագրի, զորապետերից պահանջվում էր հնձած կանաչ վարսակի արժեքը:

Կուտուզովն, այդ գործը լսելով, շուրթերը շպացրեց ու գլուխն օրորեց:

— Վառարանը... կրակը զցիր: Եվ մի անգամ ընդմշշտ քեզ ասում եմ, սիրելիս, — ասավ նա, — այդ բոլոր գործերը կրակը նետիր: Թող ցորենը հնձեն, փայտը վասեն, բարի վայելում: Ես այդ ոչ հրամայում եմ, ոչ էլ թույլատրում, բայց տույգանք պահանջել էլ չեմ կարող: Առանց դրան չի լինի: Ծառ կտրելիս՝ տաշեղներ են թոշում: — Նա նորից նայեց թըղթին: — Օ՛, գերմանական ճշտապահություն, — ասավ նա, զբուխն օրորելով:

## XVI

— Է, այժմ վերջացավ, — ասավ Կուտուզովը, վերջին թուղթը առորագրելով և, ծանրորեն վեր կենալով ու ճերմակ, փափ-

լիկ վզի ծալքերն ուղղելով, զվարթացած դեմքով գնաց գեպի դուռը:

Իրիցկինը, արյունն երեսը տված, բռնեց ոկուտեղը, որը, չնայած այն բանին, որ այնքան երկար պատրաստվել էր, նա այնուամենայնիվ շարողացավ ժամանակին մատուցելու նա խորը գլուխ տալով՝ սկսուտեղը մոտեցրեց Կուտուզովին:

Կուտուզովի աշքերը կկոցվեցին. նա ժպտաց, ձեռով բռնեց իրիցկնոց կզակը և ասավ.

— Եվ ի՞նչ սիրունն ես: Ծնորհակալ եմ, աղավնյակս:

Նա շալվարի գրպանից մի քանի ոսկի հանեց և դրավ սկուտեղի վրա: «Հօ, ի՞նչպես ես ապրում», ասավ Կուտուզովը, գնալով գեպի իր համար պատրաստած սենյակը: Իրիցկինը, կարմիր դեմքի փոսիկներով ժպտալով, նրա ետեկից գնաց իր սենյակը: Աղյուտանտը դուրս եկավ պատշաճմբ՝ իշխան Անդրեյի մոտ և նրան կանչեց նախաճաշի. կես ժամ հետո իշխան Անդրեյին նորից կանչեցին Կուտուզովի մոտ: Կուտուզովը պառկել էր բազկաթոռին նույն՝ կոճակներն արձակած սյուրթուկով: Նա ձեռին բռնել էր ֆրանսերեն մի զիրք, որ իշխան Անդրեյի ներս մտնելուն պես, դանակը մեջը դնելով, ուռարեց: Այդ տաճամարդը Genlis-ի «Les chevaliers du Cygne»<sup>1</sup> երկն էր, ինչպես նկատեց իշխան Անդրեյը շապկից:

— Է, նստիր, նստիր այստեղ, խոսենք, — ասավ Կուտուզովը: — Տխուր է, շատ տխուր: Բայց իմացիր, բարեկամս, որ ես քեզ համար հայր եմ, ուրիշ հայր...

Իշխան Անդրեյը Կուտուզովին պատմեց այն բոլորը, ինչ լսել էր հոր մահվան մս սին, և այն մասին, թե ինչ էր տեսել ինքը կիսի Գորիկում, այնտեղից անցնելիս:

— Ո՞ւր... ո՞ւր հասցրին, — խոսեց հանկարծ Կուտուզովը հուզված ձախով, ըստ երեսութին, իշխան Անդրեյի պատմածից պարզ պատկերացնելով այդ դրությունը, որի մեջ գտնվում էր Ռուսաստանը:

— Ժամանակ տուր... ժամանակ տո՞ւր, — ավելացրեց նա դեմքի զայրագին արտահայտությամբ և, ըստ երեսութին, չշանկանալով շարունակել այդ իրեն հուզող գրուցը, ասավ. — Ես քեզ կանչել եմ, որ թողնեմ ինձ մոտ:

— Ծնորհակալ եմ ձերդ պայծառափայլությունից: — պատասխանեց իշխան Անդրեյը, — բայց ես վախենում եմ, որ այլևս պիտանի չլինեմ շտաբների համար, — ասավ նա ժպտով, որ Կուտուզովը նկատեց:

Կուտուզովը հարցականորեն նայեց նրան:

— Իսկ գլխավորը, — ավելացրեց իշխան Անդրեյը, — ես սովորել եմ իմ գնդին, սիրում եմ իմ գնդի սպաներին, և մարդիկ էլ կարծես, ինձ են սիրում: Ես շատ կափսոսայի գունդը թողնել: Եթե ես հրաժարվում եմ ձեզ մոտ լինելու պատվից, ապա հավատացեք...

Խելացի, բարի և դրա հետ միասին մի նուրբ հեգնական արտահայտություն լուսավորեց Կուտուզովի փափլիկ դեմքը: Նա ընդհատեց Բալկոնսկուն:

— Ցավում եմ, դու ինձ հարկավոր կլինեիր. բայց դու իրավացի ես, իրավացի ես: Մեզ այստեղ չէ, որ մարդիկ են պետք: Խորհրդատուններ միշտ շատ են լինում, իսկ մարդիկ չկան: Մեր գնդին այդպիսին չէին լինի, եթե բոլոր խորհրդատունները ծառայեին այստեղ, գնդերում, ինչպես դու: Ես քեզ Առաստերիցից եմ հիշում: Հիշում եմ, հիշում, դրոշակով եմ հիշում, — ասավ Կուտուզովը, և այդ հիշողությունից ուրախ կարմրությունը ծածկեց իշխան Անդրեյի դեմքը:

Կուտուզովը քաշեց նրա ձեռից, այտը դեմ արավ նրան, և իշխան Անդրեյը նորից ծերունու աշքերում արցունք տեսավ: Թեև իշխան Անդրեյը գիտեր, որ Կուտուզովը թույլ է արցունքի կողմից և որ նա հատկապես փաղաքում է իրեն և իր կորստին վշտակցություն հայտնելու ցանկության հետևանքով խղճում, բայց իշխան Անդրեյի համար և ուրախալի, և շոյիշ էր այդ հիշողությունը Առաստերիցից մասին:

— Գնա, աստված քեզ հետ: Ես գիտեմ, քո ճանապարհը, — դա պատվի ճանապարհն է: — Նա լոեց: — Ես քեզ խղճում էի Բուխարեստում. ես պետք է ուղարկեի: — Եվ խոսակցությունը փոխելով, Կուտուզովն սկսեց խոսել թուրքական պատերազմի և կնքված հաշտության մասին: — Այո, քիչ չհանդիմանեցին ինձ, — ասավ Կուտուզովը, — թե՛ պատերազմի համար, թե՛ հաշտության համար... իսկ բոլորը եղավ ժամանակին: Տօստ

<sup>1</sup> Մադամ զը-ժանլը: — «Կուրապի ասսետներ»:

vient à point à celui qui sait attendre<sup>1</sup>. Այնտեղ էլ խորհրդաւառները քիշ չեին, քան այստեղ... — շարունակեց նա, վերադառնալով խորհրդատուններին, որոնք, ըստ երկույթին, զբացեցնում էին նրան: — Ե՞ս, խորհրդատունները, խորհրդատունները, — ասավ նա, — եթե բոլորին լսեինք, մենք այստեղ՝ թուրքիայում ոչ հաշտություն կնքած կլինեինք, ոչ էլ պատերազմը կվերջացնեինք: Շատապելուց գործը միշտ էլ առաջ մի գնում: Եթե Կամենսկին շմեռներ, նա կկորչեր: Նա երեսուն հազարով գրոհում էր բերդը: Բերդ վերցնելը դժվար չէ, դժվարը պատերազմը շահելն է: Իսկ դրա համար հարկավոր չէ հարձակվել ու գրոհել, այլ հարկավոր է համբերություն և ժամանակ: Կամենսկին Ռուշովովի վրա զինվորներ ուղարկեց, իսկ ես միայն նրանց (համբերություն ու ժամանակ) ուղարկեցի և ավելի բերդեր վերցրի, քան Կամենսկին, և թուրքերին էլ ստիպեցի ձիու միս ուտել: — Նա գլուխն օրորեց: — Եվ ֆրանսացիներին նույնպես, հավատա խոսքիս, — ոգեսրվելով խոսեց Կուտուզովը, ձեռը կրծքին խփելով, — նույնպես կստիպեմ ձիու միս ուտել: — Եվ նրա աշքերը նորից լցվեցին արցունքով:

— Սակայն հարկ կլինի ճակատամարտը ընդունե՞լ, — ասավ իշխան Անդրեյը:

— Հարկ կլինի, եթե այդ բոլորը ցանկանան. ինչ արած... Բայց, հավատա, սիրելիս. ավելի ուժեղ ուազմիկներ չկան, քան այդ երկուսը՝ նամբերությունը և ժամանակը. դրանք կանեն ամեն ինչ, բայց խորհրդատունները ո՛entendent pas de cette oreille, voilà le mal<sup>2</sup>. Ոմանք ցանկանում են, մյուսները չեն ցանկանում: Ի՞նչ պետք է անել, — հարցրեց նա, ըստ երկույթին, պատասխանի սպասելով: — Այս, դու ի՞նչ ես հրամայում անել, — կրկնեց նա, և նրա աշքերը փայլատակեցին խորը խելացի արտահայտությամբ: — Ես քեզ կասեմ ի՞նչ պիտի անել, — ասավ նա իշխան Անդրեյին, որովհետեւ իշխան Անդրեյը այնուամենայնիվ շպատասխանեց: — Ես քեզ կասեմ՝ ի՞նչ անել, և ես ի՞նչ եմ անում: Dans le doute, mon cher, —

<sup>1</sup> Ամեն ինչ լինում է ժամանակին նրան համար, ո՛վ կարողանուա է սպասել:

<sup>2</sup> Այդ ականջով չեն լսում, — ալ, ինչումն է ցավը:

նա լրեց, — abstiens-toi<sup>1</sup>. — արտասանեց նա ընդմիջումներով: — Դե, գնաս բարով, բարեկամս. Հիշիր, որ ես ամբողջ հոգով քեզ հետ կրում եմ քո վիշտը և որ ես քեզ համար ո՛վ գերապայծառ եմ, ոչ իշխան և ոչ գլխավոր հրամանատար, այլ ես հայր եմ քեզ համար: Եթե մի քան հարկավոր լինի, դիմիր ուղիղ ինձ: Գնաս բարով, սիրելիս:

Կուտուզովը նորից գրկեց ու համբուրեց նրան: Իշխան Անդրեյը վեռ դուրս չեր եկել գոնից, երբ Կուտուզովը հանգըստացնող հոգոց քաշեց և նորից վերցրեց մադամ Ժանլիսի «Les chevaliers du Cygne» շվերջացրած վեպը:

Ինչպես և ինչցից եղավ այդ, իշխան Անդրեյը չէր կարող ոչ մի կերպ բացատրել, բայց Կուտուզովի հետ ունեցած այդ տեսակցությունից հետո նա իր գունդը վերադարձավ հանգըստացած գործերի ընդհանուր ընթացքի նկատմամբ և այն մարդու նկատմամբ, որին վստահված էր այդ գործը: Որքան նա շատ էր տեսնում ամեն տեսակ անձնականի բացակայությունն այդ ծերունու մեջ, որի մեջ մնացել էին կարծես կրքի սովորությներ և խելքի (գեպքերը խմբավորող և եզրակացություններ անող) փոխարեն՝ դեպքերի ընթացքը հանգիստ դիտելու ընդունակություն, այնքան ավելի հանգիստ էր այն բանի համար, որ ամեն ինչ կլինի այնպես, ինչպես պետք է լինի: «Նա ինքնուրույն ոշինչ չի ունենալու: Նա ոշինչ չի խորհելու, ոշինչ չի նախաձեռնելու, — մտածում էր իշխան Անդրեյը, — բայց նա ամեն բան կլսի, ամեն բան կհիշի, ամեն բան կդնի իր տեղը, չի խանգարի ոչ մի օգտակար բանի և ոչ մի վնասակար բան էլ թույլ չի տա: Նա հասկանում է, որ կա իր կամքից ինչ-որ ավելի ուժեղ ու նշանակալից բան, — դա դեպքերի անխոստափելի ընթացքն է. և նա կարողանում է այդ դեպքերը տեսնել, կարողանում է հասկանալ նրանց նշանակությունը, և, նկատի առնելով այդ նշանակությունը, կարողանում է հրաժարվել այդ դեպքերին մասնակցելուց, իր անձնական կամքից, որն ուղղված է ուրիշ բանի: Իսկ գլխավորը, — մտածում էր իշխան Անդրեյը, — թե ինչո՞ւ ես հավատում նրան, այդ այն է, որ նա ուսւ է, չնայած ժանլիսի վեպին և ֆրանսական առածներին. այդ այն է, որ նրա ձանը դողաց, երբ ասավ.

<sup>1</sup> Տարտկուսելիս, բարեկամս. ձեռնապահ եղիր:

«Թեւր հասցրին», և որ նա արտասվեց, խոսելով այն մասին, թե նա «կատիպի նրանց ձիու միս ուտելց»:

Ահա այդ զգացմունքի վրա էլ, մի զգացմունք, որ ավելի կամ պակաս աղոտ կերպով ապրում էին բոլորը, հիմնված էր այն համախոհությունն ու միակամությունը, որն ուղեկցում էր, պալատական նկատառումներին հակառակ, Կուտուզովի ժողովրդական ընտրությանը, որպես զիմավոր հրամանատար:

## XVII

Թագավորի՝ Մոսկվայից մեկնելուց հետո, Մոսկվայի կյանքն ընթացավ իր նախկին սովորական կարգով, և այդ կյանքի ընթացքն այնքան սովորական էր, որ գժվար էր հիշել նախկին հայրենասիրական օրերի խանդավառությունն ու հափշտակությունը և գժվար էր հավատալ, թե Ռուսաստանն իսկապես վտանգի մեջ է, և թե Անգլիական ակումբի անդամները դրա հետ միասին և հայրենիքի զավակներ են, պատրաստ նրա համար ամեն զոհաբերության: Միակ բանը, որ հիշեցնում էր թագավորի՝ Մոսկվայում եղած ժամանակի նախկին ընդհանուր խանդավառ հայրենասիրական տրամադրությունը, դա մարդկան դրամ նվիրելու պահանջն էր, որոնք, որքան շուտ արկեցին, օրինական, պաշտոնական ձև ստացան և թվում էին անխուսափելի:

Թշնամու՝ Մոսկվային մոտենալու հետ մոսկվացիների հայցքն իրենց դրության նկատմամբ ոչ միայն ավելի լրջացալ, այլ, ընդհակառակը, դարձավ ավելի թեթևամիտ, ինչպես այդ միշտ պատահում է այն մարդկանց, որոնք մոտալուս մեծ վտանգ են տեսնում: Վտանգը մոտենալու պահին միշտ երկու հավասարակես ուժեղ ձայն է խոսում մարդու սրտում. մեկը միշտ խելացիորեն խոսում է այն մասին, որ մարդ կշռագատի վտանգի բուն էությունը և նրանից ազատվելու միջոցները. մյուս ձայնն էլ ավելի խելացիորեն ասում է, թե անշափ ժանր ու տաժանելի է մտածել վտանգի մասին, այն ժամանակ, եւր բոլորը նախատեսել և պատերազմի ընդհանուր ընթացքուց փրկվելը մարդուց շիկախմած, ուստի և ավելի լավ է երես դա, ձնել այդ ծանր բանից մինչ այն ժամանակ, բանի դեռ նա շի եկ՝ և մտածել հաճնիրի մասին: Մենակության մեջ մարդ մեծ մա-

սամբ անձնատուր է լինում առաջին ձայնին, հասարակության մեջ, ընդհակառակը՝ երկրորդին: Այդպես պատահեց և Մոսկվայի բնակիչներին: Վաղուց այնպես չէին ուրախացել Մոսկվայում, ինչպես այդ տարի:

Ռաստոպչինի աֆիշները, որոնց վրա նկարված էր մի օղևառուն, օղեկաձառ և Մոսկվայի քաղենի կարպուշկա Զիգֆրիդը, որը աշխարհազորի ռազմիկ լինելով և մի բաժակ օդի ավլի կոնճած՝ լսում է, թե նապոլեոնն արշավում է Մոսկվայի վրա. յարկանալով՝ ամենավատ խոսերով հայեցյում է բայրությանցիներին, դուս է զալիս օդեանից, արծիվ ներկայացնող պետական գերբի ներսու խառնում է հավաքված ժողովրդի նետ: Ահա այս աֆիշները կարդացվում և բննարկվում էին Վասիլի Լվովի և Վուշինի վերջին բուրիմերին հավասար:

Ակումբում, անկունի սենյակում, հավաքվում էին այդ աֆիշները կարգալու, և ոմանց գուր էր գալիս, թե ինչպես կարպուշկան ծաղրում էր ֆրանսացիներին, ասելով, թե նըրանք կաղամբից կիրկեն, կաշայից կտրաբեն, շշից շնչասպան կլինեն, որ նրանք բոլորը բզուկներ են, և որ նրանց երեխին մը կնիկ եղանով կշպրաի: Ուսանք այդ առնը չէին հավանում, և առում էին, թե գուհիկ է և տխմար: Պատմում էին, թե ֆրանսացիներին, անգամ օտարերկրացիներին Ռաստոպչինն արտաքսել է Մոսկվայից, թե նրանց մեջ են նապոլեոնի լրտեսներն ու գործակալները. բայց դա պատմում էին առավելապես նրա համար, որ այդ առթիվ հայտնեն այն սրամիտ խոսքերը, որ ասել էր Ռաստոպչինը նրանց ճանապարհ զնելիս: Օտարերկրացիներին նիժնի են ճամփում բեռնանավակով, և Ռաստոպչինն ասում է նրանց. «Rentrez en vous-même, entrez dans la barque et n'en faites pas une barque de Charon»<sup>1</sup>: Պատմում էին թե արդեն Մոսկվայից տեղափոխել են պետական ատյանները, և այդտեղ էլ ավելացնում էին Ծինշինի կատակը, որ միայն այդ բանի համար Մոսկվան պետք է շնորհակալ լինի նապոլեոնից: Պատմում էին, թե Մամոնովին իր գունդը նստելու է 800 հազար, թե անգուխովն էլ ավելի է ծախսել իր աշխարհազորականների վրա. բայց թեզուխովի վարմունքի

<sup>1</sup> Մտեր ինքներդ ձեր մեջ (այսինքն՝ եղեք ժամանակիտ), մտեր նավա՛ր և ախտեցեք, որ այս նավը կը դդանա ծեզ համար Խարոնի նավակը:

մեց ամենից լավն այն է, որ նա ինքը մունդիր է հագնելու և ձիով գնալու է իր գնդի առջեկից և տեղի համար ոչինչ մի վերցնելու նրանցից, ո'վեբր նայելու են իրեն:

— Դուք ոչ ոքի չեք խղճում, խնայում, — ասավ Ժյուլի Դրուբեցկայան, մատանիներով ծածկված իր նուրբ մատներով հավաքելով ու կույտ դարձնելով բզկտած ծվատը:

Ժյուլին պատրաստվում էր մյուս օրը Մոսկվայից մեկնելու և հրաժեշտի երեկո էր տալիս:

— Իեզուիսովը էստ ridicule<sup>1</sup>. բայց այնպես բարի է, այնպես սիրալիր: Ի՞նչ հաճույք է լինել այդպես caustique (շարալեզու):

— Տուգա'նք, — ասավ աշխարհազորական մունդիրով երիտասարդը, որին Ժյուլին անվանում էր «mon chevalier»<sup>2</sup> և որը նրա հետ միասին մեկնում էր Նիժնի:

Ժյուլիի հասարակության մեջ, ինչպես և Մոսկվայի շատ շըրշաններում որոշված էր խոսել միայն ոռւսերեն, և նրանք, ովքեր սխալում էին, քրանսական բառեր ասելով, տուգանք էին վճարում հօգուտ նվիրատվություններ հավաքող կոմիտեի:

— Մի ուրիշ տուգանք գալլիցիզմի համար, — ասավ Հյուրաքանչում գտնվող ոուս գրողը: — «ՍՈՎՈԼՅԵ ԵՅՏԵ» ոուսերեն շի:

— Դուք ոչ ոքի չեք խղճում, — շարունակեց Ժյուլին, աշխարհազորականին դառնալով, ուշադրություն շդարձնելով հեղինակովի նկատողությանը, — caustique-ի համար մեղավոր եմ, — ասավ նա, — և կվճարեմ, բայց ճշմարտությունը ձեզ ասելու բավականության համար ես պատրաստ եմ դարձյալ վճարել. գալլիցիզմի համար պատասխանատու շեմ, — դիմեց նա գրողին, — ես ոչ փող ունեմ, ոչ ժամանակ, ինչպես Գոլիցինը, որ ուսուցիչ վարչամ և ոռւսերեն սովորեմ: Ահա և նա, — ասավ Ժյուլին: — Quand on...<sup>3</sup> Ոչ ոչ, — դարձավ նա աշխարհազորականին, — չեք բռնի: Երբ խոսեմ են արեկ մասին — տեսնում են ճառագայթները, — ասավ տանտիրուհին, սիրալիր ժպտալով Պիեռին: — Հենց այժմ ձեր մասին էինք

խոսում, — աշխարհիկ կանանց հատուկ ազատ սրախոսությամբ, ասավ Ժյուլին: — Մենք ասում էինք, որ ձեր գունդը, երեկի, Մամոնովի գնդից ավելի լավը պիտի լինի:

— Ախ, իմ գնդի մասին մի խոսեք ինձ հետ, — պատասխանեց Պիեռը, տանտիրուհու ձեռը համբուրելով ու նրա կողքին նստելով: — Դա ինձ այնպես է զգվեցրել:

— Դուք, երեկի, ինքներդ պետի հրամանատարություն անեք, չէ՞ — ասավ Ժյուլին, խորամանկորեն ու հեգնանքով հայացքներ փոխանակելով աշխարհազորականի հետ:

Աշխարհազորականը Պիեռի ներկայությամբ արդեն այնպես շարալեզու չէր, և նրա գեմքը տարակուսանք արտահայտեց այն առթիվ, թե ինչ էր նշանակում Ժյուլիի ժպտը: Չընայած իր ցրվածությանն ու բարեհոգությանը, Պիեռի անձնավորությունն իսկույն դադարեցնում էր հեգնանքի ամեն մի փորձ իր ներկայությամբ:

— Ոչ, — ծիծաղելով պատասխանեց Պիեռը, նայելով իր մեծ, գեր մարմնին: — Ֆրանսացիները հեշտությամբ կարող են խփել ինձ, և վախենում էլ եմ, որ չկարողանամ ձի նստեմ:

Ժյուլիի հասարակությունը խոսակցության առարկա դարձնելու համար, անձնավորություններ ընտրելիս, կանգ առավ Ռոստովների վրա:

— Ասում են՝ նրանց գործերը շատ վատ են, — ասավ Ժյուլին: — Եվ նա՝ կոմսն ինքը թեթևամիտ է: Ռազումովսկիներն ուզում էին նրանց տունն ու Մոսկվայի մոտի կալվածքը գնել, և այդ բոլորը ձգձգվում է: Նա ափսոսում է:

— Ոչ, կարծեմ, այս օրերս վաճառքը տեղի պիտի ունենա, — ասավ մեկը: — Թեև հիմա անմտություն է որևէ բան գնել Մոսկվայում:

— Ինչո՞ւ, — ասավ Ժյուլին: — Մի՞թե գուք կարծում եք, որ Մոսկվային վտանգ է սպառնում,

— Իսկ ինչո՞ւ եք գուք հեռանում:

— Ես: Այ քեզ տարօրինակ բան: Ես հեռանում եմ այն պատճառով, գե, այն պատճառով, որ բոլորը հեռանում են. և հետո ես ժաննա գ' Արկ շեմ և ոչ էլ ամազոնուհի:

— Ուրեմն, այո: Ինձ էլի քաթան տվեք:

<sup>1</sup> Միժաղելի է:

<sup>2</sup> Խմ ասպետ:

<sup>3</sup> Երբ...



յից հեռանում են ազնվականների ու վաճառականների կանայք և Ավելի քիչ սարսափ, ավելի քիչ նորություններ, — գրված էր ա թիշի մեջ, — բայց ես կյանքովս պատասխանատու եմ, որ շարագործը Մոսկվա չի մտնի»: Այդ խոսքերն առաջին անգամ պարզորեն ցույց տվին Պիեռին, որ ֆրանսացիները մտնելու են Մոսկվա: Երկրորդ ափիշի մեջ ասվում էր, թե մեր գլխավոր կայանը Վյազմայումն է, թե կոմս Վիտոնշտեյնը հաղթել է ֆրանսացիներին, բայց թե որովհետև շատ բնակիչներ ցանեանում են զինվել, ապա նրանց համար զինանոցում պատրաստ գենք կա: — Թրեք, փշտովներ, հրացաններ, որ բնակիչները կարող են ստանալ էժան գնով:

Ափիշների տոնն այլևս այնպես կատակային չէր, ինչպես նախկին լիգիրինյան զրուցները: Պիեռը մտածմունքի մեջ բ' կավ: Ըստ երեսութին, այն սարսափելի փոթորկաբեր ամպը, որին կանչում էր նա հոգու ամբողջ ուժով և որը դրա հետ միասին նրա մեջ ակամա սարսափ էր հարուցում, — այդ ամպն, ըստ երեսութին, մոտենում էր:

«Զինվորական ժառայության մտնել և գնալ բանակ, թե ս լասել», հարյուրերորդ անգամ Պիեռը տալիս էր իրեն այս հարցը: Նա վերցրեց իր սեղանի վրա դրված խաղաթղթերի կտապուկը և սկսեց պասյանս բաց անել:

— Եթե այս պասյանսը դուրս գա, — ասավ ինքնիրեն, թղթերը ձեռին բռնած խառնելով ու վերև նայելով, — եթե դուրս գա, նշանակում է... ի՞նչ է նշանակում...

Նա շկարողացավ որոշել, թե ինչ է նշանակում, երբ առանձնասենյակի դռան ետև լսվեց ավագ իշխանադստեր ձայնը, որ հարցնում էր, թե կարելի՞ է արդյոք ներս մտնել:

— Այն ժամանակ կնշանակի, որ ես պետք է բանակ գնամ, — լրացրեց Պիեռն ինքն իրեն: — Մտեք, մտեք, — ակելացրեց նա զիմելով իշխանադստեր:

(Մենակ երկարիքան ու բարացած դեմքով ավագ իշխանադստերն էր, որ շարունակում էր ապրել Պիեռի տանը. երկու կրտսերն ամուսնացել էին):

— Ներեցեք, տոն կոսին, որ եկա ձեզ մոտ, — ասավ նա հանդիմանական-հուզված ձայնով: — Պիեռ է, վերջապես, մի բան որոշե՞լ թե չէ: Սա ի՞նչ է լինելու: Բոլորը հեռացել են

Մոսկվայից. և ժողովուրդն ապստամբում է: Իսկ մենք ինչո՞ւ ենք մնում:

— Ընդհակառակը, ամեն ինչ, կարծես, բարեհաջողություն է, ուստի ասավ Պիեռը կատակելու այն սովորությամբ, որը նա ամաշկոտությամբ տանելով բարեգործի իր գերը իշխանադստեր հանդեպ, լուրացրել էր նրա նկատմամբ:

— Այո, սա բարեհաջողություն է... լավ բարեհաջողություն է: Պիեռ առաջ Վառվառա իվանովնան պատմեց, թե մեր զորքերն ինչպես են աշխի ընկնում: Խսկապես որ պատիվ է բերում: Բայց ժողովուրդն էլ բոլորովին անկարգացել է, էլ չեն լսում: Իմ սպասուհին ինչ է, նա էլ սկսել է կոպտություններ անել: Այդպիսով՝ շուտով մեզ էլ կսկսեն ծիծել: Փողոցներով անցնել չ' կարելի: Իսկ գլխավորը՝ Էսօր-էգուց ֆրանսացիները այստեղ կլինեն, էլ ի՞նչ ենք սպասում: Ես միայն մի բան եմ խնդրում, տոն կոսին, — ասավ իշխանադստերը, — կարգադրեք տանեն ինձ Պիեռի բուրքուրդ. ինչ էլ լինեմ ես, Բոնապարտի իշխանության տակ ապրել չեմ ուզում:

— Է, հերիք է, ու կոսին, որտեղից եք քաղում դուք ձեր տեղեկությունները: Ընդհակառակը...

— Ես ձեր նապոլեոնին չեմ հնագանդի: Ուրիշները, ինչպես ուզում են... թիվ գուք այդ ի՞ք ցանկանում անել...

— Ես կանեմ, հենց հիմա կհրամայեմ:

Իշխանադստերը, ըստ երեսութին, սրտնեղեց, որ հնարավորություն չունի մեկի վրա բարկանալ: Նա, ինչ-որ բան շշնչալով, նստեց աթոռին:

Բայց ձեզ այդ ճիշտ չեն հայտնում, — ասավ Պիեռ: — Քաղաքում ամեն ինչ հանդիմատ է, և ոչ մի վատանգ չկա: Այ, ես հիմա կարգացի... — Պիեռը ափիշը ցույց տվեց իշխանադստեր: — Կոմսը զրում է, թե կյանքով պատասխանատու է, որ թշնամին Մոսկվա չի մտնի:

— Այս ձեր այդ կոմսը, — կատաղած խոսեց իշխանադստեր, — այդ կեղծավոր, շարակործը որ ինքը ժողովրդին խոռվության է տրամադրել: Միթե նա չէր այդ հիմար ափիշների մեջ գրել, թե ով էլ լինի՝ մազերից բռնի քաշ տուր ոստիկանատուն (և ի՞նչ հիմարություն): Ով կանի, ասում է, փառք ու պատիվ նրան: Ահա ո՛ւր հասցրեց նրա քաղցր լեզուն: Վառ-

զառա իգանովնան ասում էր, թե թիշ էր մնացել ժողովուրդն սպաներ իրեն նրա համար, որ Գրանսերեն է խոսել...

— Բայց չէ որ գա այնպես... Դուք ամեն բան ձեր սրտին շատ մոտ եք ընդունում, — ասավ Պիեռը և սկսեց պայանս բանալ:

Զնայած այն բանին, որ պայանսը դուրս եկավ, Պիեռը բանակ չգնաց, այլ մնաց դատարկված Մոսկվայում, շարունակ նույն տագնապի, անվճուականության, առ ու երկուողի մեջ և դրա հետ միասին ուրախության մեջ սպասելով ինչ-որ սարսափելի մեջ բանի:

Հետեալ օրը իշխանագուատրը երեկոյան դեմ մեկնեց, և Պիեռի մոտ եկավ նրա գլխավոր կառավարիչը, լուր բերելով, թե գ. անզը զգեստավորելու համար պահանջված փողը մի ճարվում, և որ պետք է կալվածներից մեկը ծախել: Գլխավոր կառավարիչն ընդհանրապես բանը Պիեռին ներկայացնում էր այնպես, թե գնդի այդ ձեռնարկումը բայրայելու է նրան: Պիեռը կառավարիչի խոսքերը լսելով, դժվարությամբ էր թաքցնում իր ժպիաը:

— Է, ծախեցեք, — ասավ նա: — Ինչ արած. Ես հիմա էլ շեմ կարող հրաժարվել:

Որքան վատթարանում էր գործերի գրությունը, և մանավանդ իր գործերի գրությունը, այնքան Պիեռի համար ավելի հաճելի էր լինում, այնքան ավելի ալիներն էր, որ իր սպասած աղետը մոտենում է: Արդեն Պիեռի ծանոթներից ոչ ոք չկար բաղաքում: Ժյուլին մեկնել էր, իշխանագուատր Մարիան մեկնել էր: Մոտիկ ծանոթներից միայն Ռոստովներն էին մնացել, բայց Պիեռը նրանց յոտ չէր գնում:

Այդ օրը Պիեռը, ցըվելու համար, գնաց Վորոնցովո զյուղը՝ տեսնելու այն մեծ օդապարիկը, որ լեւագիխը շինում էր թրշնամուն խորտակելու համար, և փորձնական մի օդապարիկ, որ բաց էին թողնելու վաղը: Այդ օդապարիկը դեռ պատրաստ չէր, բայց, ինչպես Պիեռն իմացավ, նա շինվում էր թագավորի ցանկությամբ: Թագավորը այդ օդապարիկի մասին կամ Ռաստոպչին զրել էր հետեւյլը.

«Aussitôt que Leppich sera prêt, composez lui un équiperpage pour sa nacelle d'hommes sûrs et intelligents et dé-

— 234 —

pêchez un courrier au général Koutousoff pour l'en prévenir. Ja l'ai instruit de la chose.

Recommandez, je vous prie, à Leppich d'être bien attentif sur l'endroit, où il descendra la première fois, pour ne pas se tromper et ne pas tomber dans les mains de l'ennemi. Il est indispensable qu'il combine ses mouvements avec le général-en-chef»<sup>1</sup>.

Վորոնցովիցից տուն վերադառնալիս և Բոլոտնոյ հրապարակ վանցնելիս, Պիեռը բազմություն տեսավ Լոբնոյի մոտ, եռանդակը կանգնեցրեց և իշավ: Պարզվեց, որ պատճում էին մի Գրանսացի խոհարարի, որը մեղադրվում էր լրտեսության մեջ: Քատիժը նոր միայն վերջացել և դահճճը տախտակից արձակում էր աղիողորմ հեծեծող շիկակարմիր այտամորումներով հաստ մարդուն, որ կապույտ գուլպաներ ուներ հագին և կանաչ կամզոլ: Մյուս հանցապարտը, նիհար ու գունատ, կանգնած էր հենց այդտեղ: Երկուսն էլ, դեմքերից դատելով, ֆրանսացիներ էին: Վախեցած-հիվանդագին տեսքով, որպիսին ուներ նիհար ֆրանսացին, Պիեռը բազմության միջով առաջ գնաց: — Ի՞նչ բան է: Ո՞վ է, ինչո՞ւ համար, — հարցնում էր նա:

Բայց բազմության — շինովնիկների, մեշշանների, վաճառականների, գյուղացիների և վերաբուռ ու կիսամուշտակ հաղած կանանց ուշագրությունն այնպիսի ազահությամբ էր կենտրոնացած այն բանի վրա, կորնոյում կատարվող բանի վրա, որ ոչ ոք չպատասխանեց նրան: Հաստ մարդը վեր կացավ դեմքը խոժոռած, ուսերը թոթվեց և, բայց երևույթին, ցանկանալով հաստատակամություն ցույց տալ, սկսեց, առանց շուրջը նայելու, կամզոլը հագնել: Բայց շուրջերը դողացին, և լաց եղավ (ինքը բարկանալով իր վրա), ինչպես լաց են լինում հասակավոր տաքարյուն մարդուկ: Բազմությունը խոսեց բարձ-

<sup>1</sup> «Հենց որ կեպպիմը պատրաստ լինի, նրա օդանավի համար անձնակազմ պատրաստեցեք հուսալի և բանիցոց մարդկանցից, և սուրհանդակ ուղարկեք Կոտուողով մոտ՝ նրան նախազգուշացնելու: Ես այդ մասին հազարդ, եմ նրան, ներշնչեք, խնդրում եմ, կեպպիմն, որ նա լավ ուշագրություն դարձնի ան տեղի վրա, ուր իշնելու է առաջին անգամ, որպեսզի լուսաւիլ: Կ թշնամու ձեռը լինիչի: Անհրաժեշտ է, որ նա իր շարժումները հարմարեցնի գլխամոր հրամանս տարի շարժումներին:»

բաձայն, ինչպես Պիեռին թվաց նրա համար, որպեսզի իր մեջ խլացնի խղճահարության զգացմունքը:

— Ինչո՞ր իշխանի խոհարար է...

— Հը, մուսյո, ոռուսական սոսուսը, երևի, թթու էր ֆրանսացու համար... ատամներն առան, — ասավ Պիեռի կողքին կանգնած կնճռադեմ մի գրագիր այն ժամանակ, երբ ֆրանսացին սկսեց լաց լինել:

Գրագիրը նայեց իր շուրջը, ըստ երկույթին, սպասելով իր կատակի գնահատությանը: Ոմանք ծիծաղեցին, ոմանք վախեցած շարունակեցին նայել դահճին, որ հանում էր մի ուրիշի զգեստները:

Պիեռը փասացրեց քթով, գեմքը կնճռեց, և արագ շուր գալով, գնաց դեպի իր կառքը, շարունակելով ինչո՞ր քրթմնջալ ինքն իրեն: Ճանապարհին նա մի քանի անգամ ցնցվեց ու ճշաց այնպես բարձր, որ կառապանը հարցրեց նրան.

— Ի՞նչ եք հրամայում:

— Դու այդ ո՞ւր ես քշում, — ձայն տվեց Պիեռը կառապանին, որ քշել-մտնում էր Լուրջանկա:

— Գլխավոր հրամանատարի մոտ հրամայեցիք, — պատասխանեց կառապանը:

— Հիմա՛ր. անասո՛ւն, — բռուաց Պիեռը, ինչ որ նրա հետ հազվադեպ էր լինում, հայրոյելով իր կառապանին: — Տո՛ւն հրամայեցի. քշիր շուտով, հիմարի գլուխ: Այսօր էլ պետք է մեկնել, — ասավ Պիեռն ինքնիրեն:

Պիեռը, ի տես պատժված ֆրանսացու և կորնոյեն շրջապատող բազմության, վերջնականապես այնպես որոշեց, թե այլևս չի կարող մնալ Սոսկվայում և այսօր իսկ մեկնում է բանակ, որ նրան թվաց թե այդ մասին կամ ասել է կառապանին, կամ թե կառապանն ինքը պետք է իմանար այդ:

Տուն գալով՝ Պիեռը իր ամենագիտ, ամենակարող, ողջ Սոսկվային հայտնի կառապան Եվստաֆեկիշին հրամայեց, թե գիշերը մեկնում է Մոժայսկ՝ զորքի մոտ, և որպեսզի այնտեղ ուղարկվեն իր նստելու ձիերը: Այդ բոլորը նույն օրը չէր կարող արվել, ուստի և, Եվստաֆեկիշի առաջարկով, Պիեռը իր մեկնումը պետք է հետաձիեր մյուս օրվան, այն հաշվով, որպեսզի ժամանակ տար փոխձիերը տեղ հասցնելու:

— 236 —

Ամսի 24-ին եղանակը պարզվեց և այդ օրը ճաշից հետո Պիեռը գուրս եկավ Մոսկվայից: Գիշերը, Պիեռիուշկովում ձիերը փոխելով, Պիեռն իմացավ, որ այդ երեկո մեծ ճակատամարտ է եղել: Պատմում էին, թե այստեղ՝ Պիեռիուշկովում, թնդանոթածությունից հողը գողում էր: Պիեռի այն հարցին, թե ո՞վ է հաղթել, ոչ ոք շկարողացավ պատասխան տալ: (Այդ 24-ի ճակատամարտն էր Շեարդինի մոտ): Լուսաբացին Պիեռը մոտենում էր Մոժայսկին:

Մոժայսկի բոլոր տները բռնված էին զորքերով, և իջևանում, ուր Պիեռին հանդիպեցին նրա ձիապանն ու կառապանը, սենյակներում տեղ չկար. բոլորը լիբն էին սպաներով:

Մոժայսկում և Մոժայսկի այն կողմը՝ ամենուրեք կանգնած էին ու շարժվում էին զորքեր: Ամեն կողմ երեսում էին կազակներ, հետևակներ, հեծյալ զինվորներ, սայլեր, վառողի արլզեր, թնդանոթներ: Պիեռն շտապում էր որքան կարելի է շուր առաջ գնալ, և որքան նա հեռանում էր Մոսկվայից ու որքան խորն էր մտնում զորքերի այդ ծովը, այնքան նրան ավելի էր տիրում անհանգստության տագնապը և տակավին շապրած մի նոր ուրախ զգացում: Դա նման էր այն զգացումին, որ զգացել էր նա Սլարոդայի պալատում՝ թագավորի գալու պահին, — ինչո՞ր մի բան ձեռնարկելու անհրաժեշտության և մի բանով զոհաբերություն անելու զգացում: Նա այժմ այն հաճելի զգացումն էր ապրում, թե այն ամենը, ինչ կազմում է մարդկանց երջանկությունը, — կյանքի հարմարություններ, հարստություն, անգամ կյանքն ինքը, — դատարկ բան է, որը հաճելի կլինի մի կողմ նետել, համեմատած ինչ-որ բանի... Թե ինչ բանի՝ Պիեռը շկարողացավ պատասխանել իրեն, և չէր էլ աշխատում բացատրել իրեն, թե ո՞ւմ և ինչի՛ համար է նա ամեն ինչ զոհաբերելու մեջ առանձին քաղցրություն զգում: Նրան չէր զբաղեցնում այն, թե ինչի համար է ուզում զոհաբերություն անել, բայց զոհաբերությունն ինքնին նոր ուրախ զգացում էր նրա համար:

## XIX

24-ին ճակատամարտը տեղի ունեցավ Շեարդինոյի ամրության մոտ, 25-ին ոչ մի գնակ շարձակվեց ոչ այս և ոչ այն կողմից, 26-ին տեղի ունեցավ Բորոդինոյի ճակատամարտը

— 237 —

Ինչու և ինչպես ճակատամարտեր տրվեցին և ընդունվեցին Շևարդինոյում և Թորոգինոյում: Ի՞նչի համար տրվեց Թորոգինոյի ճակատամարտը: Ոչ ֆրանսացիների, ոչ ռուսների համար այդ ճակատամարտը ոչ մի, անգամ անհշան իմաստ շուներ: Ամենամերձավոր արդյունքը եղավ և պետք է լիներ ռուսների համար այն, որ մենք մոտեցրինք Մոսկվայի կործանումը (որից մենք աշխարհում ամեն բանից շատ էինք վախենում), իսկ ֆրանսացիների համար՝ այն, որ նրանք մոտեցրին ամբողջ բանակի կործանումը (որից նրանք աշխարհում նույնպես ամեն բանից շատ էին վախենում): Այդ արդյունքը հենց այն ժամանակ միանգամայն ակներե էր, բայց Նապոլեոնը այնուամենայնիվ տվեց, իսկ Կուտուզովն ընդունեց այդ ճակատամարտը:

Եթե գորակարները խելացի նկատառումներով առաջնորդվեին, թվում է, թե Նապոլեոնի համար պետք է պարզ լիներ, որ երկու հազար վերստ երկրի խորքը մոնիթով՝ ճակատամարտ ընդունելով բանակի  $\frac{1}{4}$ -ի կորսովան Յանուարի պատահականությամբ, նա դեպի անվիճելի կործանում էր դնում. նույնքան պարզ պետք է լիներ Կուտուզովի համար այն, որ ճակատամարտ ընդունելով և նմանապես բանակի քառորդը կորցնելու ոփսիկի հնթարկելով իրեն, նա հաստատապես կորցնում է Մոսկվան: Կուտուզովի համար այդ մաթեմատիկորեն պարզ էր, ինչպես պարզ է այն, որ եթե տամախաղում իմ մեկ տամայի քարը պակաս է և ես տամայարար փոխեմ, ես հաստատապես տահոր կտամ, ուստի և չպետք է փոխեմ:

Եթե հակառակորդս 16 տամայարար ունի, իսկ ես 14, ապա ես միայն մ'կ ութերորդով եմ նրանից թույլ. իսկ եթե ես 13 քարս փոխեմ, ապա նա ինձնից եռապատիկ ուժեղ կլինի:

Մինչ Թորոգինոյի ճակատամարտը մեր և ֆրանսական ուժերի հարաբերությունը մոտավորապես հավասար էր 5:6-ի, իսկ ճակատամարտից հետո՝ 1:2-ի, այսինքն ճակատամարտից առաջ մեր 168 հազար զորքի դիմաց ֆրանսացիներն ունեին 120 հազար, իսկ ճակատամարտից հետո այդ հարաբերությունը դարձավ 50:100: Եվ չնայած դրան խելոք ու փորձված Կուտուզովն ընդունեց ճակատամարտը: Իսկ նապոլեոնը, այդ հանձարեղ զորավարը, ինչպես անվանում են նրան, ճակատամարտը տվեց, կորցնելով բանակի քառորդը և էլ ավելի երկա-

րացնելով իր զորագիծը: Եթե ասեն, որ Մոսկվան գրավելով նա մտադրություն ուներ, ինչպես Վիեննան գրավելուց հետո, վերջացնել իր սկսած պատերազմը, ապա դրա դեմ շատ ապացուցներ կան: Իրենք՝ Նապոլեոնի պատմագիրները պատմում են, որ նա դեռ Սմոլենսկի մոտ մտադիր էր կանգ առնել, որ նա հասկանում էր իր երկարածիք զորագիծի վտանգավորությունը և գիտեր, որ Մոսկվայի գրավումով դեռ արշավանքը չի վերջանա, որովհետև դեռ Սմոլենսկից սկսած նա տեսնում էր, թե ինչ գրությամբ են նրան թողնվում ուսւական քաղաքները, և ոչ մի պատասխան չէր ստանում իր բազմիցս արած այն հայտարարություններին, որ ցանկանում էր բանակցություններ վարել:

Տալով և ընդունելով Թորոգինոյի ճակատամարտը, Կուտուզովն ու Նապոլեոնը վարվեցին ակամայորեն և անմտորեն: Իսկ պատմագետները կատարված փաստերին հետագարում հարմարեցնում են զորագրների նախատեսության ու հաճարեղության ճարպկորեն հերցուրած ապացուցներ, այն զորագարների, որոնք պատմական դեպքերի ակամա գործիք հանդիսացող գործիչներից ամենասորիկամիտ և ամենից ավելի անգիտակցորեն գործող դեմքերն են եղել:

Հները մեզ թողել են հերոսական պոեմների օրինակներ, որոնց մեջ հերոսներն են կազմում պատմության ողջ հետաքրքրությունը, և մենք էլի դեռ չենք կարողանում ընտելանալ այն բանին, որ մեր ժամանակի համար այդպիսի պատմությունն իմաստ շունի:

Մյուս հարցի մասին, — թե ինչպես են տրվել Թորոգինոյի և նրան նախորդող Շևարդինոյի ճակատամարտերը — նմանապես շատ որոշ կարծիք կա, մի կարծիք, որը նույնիրան սիալ է, որքան և հանրածանոթ: Բոլոր պատմագետները գործը ներկայացնում են հետեւյալ կերպով.

Եռուսակն, իբր թե, նահանջելով Սմոլենսկից, լավագույն դիրքեր էր որոնաւ զլիսավոր նակատամարտը տալու համար, և այդպիսի դիրքերը իբր թե գտնվել են Թորոգինոյի մոտ:

Եռուսակն, իբր թե, նախօրդ ամրացրել են այդ դիրքերը Մոսկվայից դեպի Սմոլենսկ տանող նախապարհից դեպի ձախ ուղղանկյունած դեպի նախապարհ՝ երա՝ Թորոգինոյից դեպի

Ուսիցա տանող մասը, հենց այն տեղում, ուր տեղի ունեցավ նակատամարտը:

Այդ դիրքերի առջևում, իբր թե, թշնամուն հետևելու նամար Շեարդինոյի կուրգանի վրա ամրացրած առաջավոր պոստ էին դրել: 24-ին իբր թե նապուենը հարձակում է գործել առաջավոր պոստի վրա և գրավել է այն, իսկ 26-ին հարձակում է գործել ամբողջ ուստ բանակի վրա, որ դիրքեր էր բռնել թորագինոյի գաղտում:

Այսպես է ասված պատմական գրականության մեջ. և այդ բոլորը միանգամայն արդարացի է, և դրանում հնշտությամբ կհամոզվի յուրաքանչյուր մարդ, եթե ցանկանա թափանցել գործի էության մեջ:

Ծուսները լավագույն դիրքեր չեն որոնել, այլ ընդհակառակը, իբրենց նահանջի ճանապարհին շատ այնպիսի դիրքեր են անցել, որոնք Բորոդինոյի դիրքերից ավելի լավ էին: Նրանք կանգ չեն առել այդ դիրքերից և ոչ մեկում, և այն պատճառով, որ Կուտուզովը չէր ցանկացել ընդհանություններ այն դիրքերը, որ ինքը չէր ընտրել, և այն պատճառով, որ Ժողովրդական ճակատամարտ տալու պահանջը տակավին բավականաշափ որոշակի չէր արտահայտված, և այն պատճառով, որ գեռ չէր հասել Միլորադովիչն իր աշխարհագորով, և էլ ուրիշ պատճառներով, որոնք անթիվ, անհամար են: Փաստն այն է, որ առաջվա դիրքերն ավելի ամուր էին և որ Բորոդինոյի դիրքերը (այն դիրքերը, որտեղ ճակատամարտը տրվեց) ոչ միայն ամուր չեն, այլև որպես դիրքեր բնավ ավելի հարմար չեն, քան որեէ մի այլ վայր ուսական կայսրության մեջ, մի վայր, որը գուշակելով, կարելի լիներ քարտեզի վրա քորցով ցույց տալ:

Ծուսները ոչ միայն չեն ամրացրել Բորոդինոյի գաշտի դիրքերը՝ ճանապարհից ուղղանկյունաձև դեպի ձախ (այսինքն այն տեղը, որտեղ տեղի ունեցավ ճակատամարտը), այլև մինչև 1812 թվի օգոստոսի 25-ը երբեք չեն էլ մտածել այն մասին, որ ճակատամարտը կարող էր տեղի ունենալ այդ տեղում: Դրան ապացույց կարող է ծառայել նախ այն, որ 25-ին ոչ միայն այդտեղ ամրություն չկար, այլև ամրություն ստեղծելու աշխատանքները, որ սկսվել էին 25-ին, 26-ին, գեռ չեն վերջացել: Երկրորդ, Ծեարդինոյի ամրությունների դիրքը — Ծեարդինոյի ամրությունները, գտնվելով այն դիրքերի առջևում:

— 240 —

որտեղ տրվեց ճակատամարտը, ոչ մի իմաստ շռնենությունը՝ Համար էին այդ ամրություններն ավելի լավ ամրացվում, քան մնացած բոլոր ամրությունները: Եվ ինչի՞ համար ամսի 24-ին պաշտպաննելով այդ ամրությունները մինչև ուշ գիշերը, սպառցին բոլոր ջանքերը և կորցրին վեց հազար մարդ: Թշնամուն հետեւ համար բավական էր միայն կազակներից հեծելազետ ուղարկել: Երրորդ, որպես ապացույց այն բանի, որ այն դիրքերը, որտեղ ճակատամարտը տեղի ունեցավ, նախատեսված չէին եղել և որ Ծեարդինոյի ամրոցին այն դիրքերի առաջակըռ կետը չէր, ծառայում է այն, որ Բարեկայ-դե-Տոլլին և Բագրատիոնը մինչև ամսի 25-ը այն համոզմունքին են եղել, որ Ծեվարդինոյի ամրությունները այդ դիրքերի ձախ թևն են կազմել և որ ինքը Կուտառզովն իր զեկուցագրի մեջ, որը նա գըրել էր բորբոքված վիճակում ճակատամարտից հետո՝ Ծեարդինոյի ամրությունները դիրքերի ձախ թև է անվանում: Արդեն բավական հետո, երբ ազատ պայմաններում զեկուցագրեր են գրվել Բորոդինոյի ճակատամարտի մասին, հնարել են (հավանորեն գլխավոր հրամանատարի սխալներն արդարացնելու համար, որը կարծես անսխալ պետք է լիներ) այն անարդարացի ու տարօրինակ վկայությունը, որ Ծեարդինոյի ամրոցին իբր թե ծառայել է որպես առաջվա պոստ (մինչդեռ այդ միայն ձախ թևի ամրացրած մի կետն է եղել) և իբր թե Բորոդինոյի ճակատամարտը մեր կողմից ընդունվել է ամրացրած ու նախապես ընտրած դիրքերում, մինչդեռ այն տեղի է ունեցել միանգամայն չնախատեսված ու գրեթե շամրացրած տեղում:

Իսկ գործն ըստ երևոյթին այսպես է եղել. դիրքեր են ընտրել Կոլոշա գետի ուղղությամբ, որը կտրում է մեծ ճանապարհ ոչ թե ուղղանկյունաձև, այլ սրանկյունաձև, այնպես, որ ձախ թևը եղել է Ծեարդինոյում, աշը՝ նովոյի գյուղի մոտ և կենտրոնը՝ Բորոդինոյում, որտեղ միանում են Կոլոշա և Վոյնա գետերը: Այդ դիրքը, Կոլոշա գետի պաշտպանության ներքո, մի բանակի համար, որը ճակատակ ունի կանգնեցնել Սմոլենսկի ճանապարհով դեպի Մոսկվա շարժվող թշնամուն, միանգամայն ակներև է յուրաքանչյուրի համար, ով կնայի Բորոդինոյի գաշտին, մոռանալով այն մասին, թե ինչպես է տեղի ունեցել ճակատամարտը:

— 241 —


Նապոլեոնը, 24-ին գնալով Վալուեոյի ուղղությամբ, շի տեսել ոռւսների դիրքերը՝ (ինչպես ասված է պատմության գրքերում) Ուտիցայից դեպի Բորոդինո (նա չէր կարող տեսնել այդ դիրքերը, քանի որ այդպիսիք չեն եղել) և շի տեսել ոռւս բանակի առաջավոր պոստը, այլ ոռւս վերջապահ զորքերին հետապնդելիս դեմ է առել ոռւսների դիրքերի ձախ թեին, Շեարդինոյի ամրություններին և ոռւսների համար անսպասելի կերպով զորքերն անց է կացրել Կոլոշա գետով։ Եվ ոռւսները, ժամանակ շունենալով գլխավոր ճակատամարտի բռնվելու, իրենց ձախ թեւում նահանջել են այն դիրքերից, որ նրանք մտադիր էին գրավել, և բռնել են նոր դիրքեր, որոնք նախատեսված և ամրացված չեն եղել։ Անցնելով Կոլոշայի ձախ կողմը, ճանապարհից դեպի ձախ, Նապոլեոնն ամբողջ ապագա ճակա-

տամարտը տեղափոխել է ազից դեպի ձախ (ոռւսների կողմից) — այն դաշար, որը գտնվում է Ուտիցայի, Սեմյոնովսկոյի և Բորոդինոյի միջև (այդ դաշար, որը դիրքերի համար բնավ ավելի հարմար չէր, քան որևէ մի այլ դաշար մուսաւանում), և այդ դաշտում էլ տեղի է ունեցել ամսի 26-ի ուզ ճակատամարտը։ Կոպիտ ձևով ծրագրվող ճակատամարտի և տեղի ունեցած ճակատամարտի պլանը կլինի (աե՛ս քարտեզը)։

Եթե Նապոլեոնը ամսի 24-ի երեկոյան շգնար գեպի Կոլոշա և հրաման շտար հենց նույն այդ երեկոյան հարձակում զործել ամրությունների վրա. այլ հարձակում միսեր մլուս օրս առավոտյան, արդա ոչ ոք չէր կասկածի, որ Շեարդինոյի ամրոցիկը մեր դիրքերի ձախ թեւն է եղել, և ճակատամարտը տեղի կոնենար այնպես, ինչպես այդ մենք սպասում էինք։ Այդ գեպըում մենք հավանաբար ավելի համառոքեն կաշտապահնեինք Շեարդինոյի ամրոցիկը, մեր ձախ թեւ, Նապոլեոնի վրա հարձակում կգործեինք կամ ազից, և 24-ին գլխավոր ճակատամարտը տեղի կունենար այն դիրքերում, որ ամրացրած ու նախատեսված են եղել։ Բայց քանի որ մեր ձախ թեի վրա հարձակում է կենա երեկոյան, մեր վերջապէ շորքերի նահանջելուց հետո, այսինքն՝ Գրիգորյայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից անմիջապես հետո, և որովհետեւ ուսւա զորապետները չեին ցանկացել կամ ժամանակ չեին ունեցել հենց այն ժամանակ 24-ի երեկոյան գլխավոր ճակատամարտն միսել, ապա և Բորոդինոյի ճակատամարտի առաջին և գլխավոր գործողությունը տանուլ է տրվել դեռ ամսի 24-ին, որի հետևանքով, բնականաբար, տանուլ է տրվել և այն, ինչ տեղի էր ունեցել ամսի 26-ին։

Շեարդինոյի սեղուար կորցնելուց հետո ամսի 25-ի առավոտյան մենք ձախ թեսում դրկված ենք եղել դիրքերից և ստիպված ենք եղել ընդարձակել մեր ձախ թեւ և շտապ ամրացնել այն որտեղ պատահեր

Բացի այն, որ օգոստոսի 26-ին ոռւս զորքերը գտնվում էին թույլ, գեղ վերջացրած ամրությունների պաշտպանության ներք, այդ դրության անհարմարությունն ավելանում էր նաև նրանով, որ ոռւս զորապետները, լիովին լընդունելով կատարված փաստը (ձախ թեսում դիրքերը կորցնելը և ապագա ամբողջ մարտաղաշտն աջից դեպի ձախ տեղափոխելը), շա-



րունակում էին մնալ իրենց երկարաձգված դիրքերում՝ սկսած Նովոյե գյուղից մինչև Ռւտիցա, և այդ պատճառով էլ պետք է կովի ժամանակ իրենց զորքերը տեղափոխեն աշխատ ձախ: Այսպիսով ճակատամարտի ամբողջ ընթացքում մեր ծախ թեկ դեմ ուղղված ֆրանսական ամբողջ բանակի դիմաց ոռւսներն ունեին կրկնակի թույլ ուժեր: (Պոնյատովսկու գործողություններն Ռւտիցայի դեմ և Ռւվարովոյի դեմ՝ ձեռնարկված ֆրանսացիների աջ թերում, առանձին գործողություններ էին, որոնք կապ չունեին ճակատամարտի ընթացքի հետ):

Այսպիսով, Բորոդինոյի ճակատամարտը տեղի է ունեցել բոլորովին ոչ այնպես, ինչպես (աշխատելով քողարկել մեր զորապետների սխալները և դրանով իսկ նսեմացնելով ոռւս զորքի ու ժողովրդի փառքը) նկարագրում են այն: Բորոդինոյի ժակատամարտը տեղի չի ունեցել ընտրած և ամրացրած դիրքերում՝ քիչ ավելի թույլ ոռւսական ուժերով, այլ այդ ճակատամարտը, Շեարդինոյի ուղղութը կորցնելու հետևանքով, ոռւսներն ընդունել են բաց, գրեթե շամրացրած վայրում, կրկնակի թույլ ուժերով՝ ֆրանսացիների համեմատությամբ, այսինքն այնպիսի պայմաններում, որոնցում ոչ միայն անհնարին էր տասը ժամ կովել և ճակատամարտը ոչ վճռական դարձնել, այլև անհնարին էր երեք ժամվա ընթացքում զորքը ետ պահել շախախումից ու փախուստից:

## XX

25-ի առավոտյան Պիեռը դուրս եկավ Մոժայսկից: Վիթխարի, ուղղածիք ու ծուռ սարի վայրէջք ճանապարհին, որ քաղաքից գնում էր սարի աջ կողմը կանգնած տաճարի մոտով (ուր ժամերգություն կար և զանգահարություն), Պիեռն իշակ կառքից և գնաց ոտով: Նրա հետեկց սարից իշակ մի ինչ-որ հեծյալ գունդ՝ երգողների խումբն առաջին: Նրա դիմաց դալիս, սարն էր բարձրանում սայլերի մի շարան՝ երեկվա կովի վիրավորներով: Սայլապան գյուղացիները, ձիերի վրա գոռալով ու մտրակներով խփելով, մի կողմից անցնում էին յուրաք: Սայլերը, որոնց վրա պատկած ու նստած էին երեք-երեք ու շորս-շորս վիրավոր զինվորներ, ծուլ-ծուլ էին լինում դիք ճանապարհին սալահատակի նման թափած քարերի վրայով:

Վիրավորները, լաթերով փաթաթված, գունատ, սեղմած շուրթներով ու կիտած հոնքերով, ճաղերից բռնած, վեր էին թոշում ու իրար դիպչում սայլերի մեջ: Բոլորը գրեթե մանկական մամիտ հետաքրքրությամբ նայում էին Պիեռի սպիտակ շլապային և կանաչ ֆրակին:

Պիեռի կառապանը բարկացած գոռում էր վիրավորների գումակի վրա, որ մի կողմ պահեն: Հեծգունդը երգելով, սարից իջնելով, եկավ դեմ առավ Պիեռի կառքին ու ճանապարհը նեղացրեց: Պիեռը կանգ առավ, կպչելով սարի մեջ փորված ճանապարհի եղրին: Սարի թերության պատճառով՝ ճանապարհի խոր ընկած մասն արև չէր տեսնում, այդտեղ ցուրտ էր, խոնավ. Պիեռի գլխավերն օգոստոսյան պայծառ առակուտն էր, և լսվում էր ուրախ զանգահարություն: Վիրավորներ տանող սայլերից մեկը կանգ առավ ճանապարհի եղրին հենց իր՝ Պիեռի կողքին: Տրեխավոր սայլապանը, հեալով, վազեց իր սայլի մոտ, քարեր գրեց ետին անիվների ետև և սկսեց ուղղել կանգ առած ձիու լանջափոկը:

Զեղը կապած մի տարեց վիրավոր գինվոր, որ գալիս էր սայլի ետևից, առողջ ձեռով բռնեց վիրավոր ձեռը և նայեց Պիեռին:

— Հը, հայրենակից, մեզ այստեղ են պահելո՞ւ, ինչ է: Թե՝ տանելու են մինչև Մոսկվա, — ասավ նա:

Պեռն այնպես էր խորասուզվել իր մտքերի մեջ, որ այդ հարցումը լսեց: Նա նայում էր մերթ՝ այժմ վիրավորների սայլախմբին հանդիպած հեծգնդին, մերթ այն սայլին, որի մոտ կանգնած էր ինքը և որի վրա երկու վիրավոր նստած էին, մեկը պառկած, և նրան թվում էր, որ այստեղ, նրանց մեջ է իրեն զբաղեցնող հարցի լուծումը: Սայլում նստած զինվորներից մեկը, ըստ երևույթին, վիրավորված էր այտից: Նրա գլուխն ամբողջ փաթաթված էր լաթերով, և այտի մեկը ուռել էր երեխայի գլխի շափ: Բերանն ու քիթը գնացել էին մի կողմ: Այդ զինվորը նայում էր տաճարին ու խաչակնքում երեսը: Մյուսը, մի շահել տղա, նորակոյնէ, խարտյաշ մագերով ու ճերմակ, կարծես բոլորովին անարյուն նուրբ գեմքով, սառած քարի ծպիտով նայում էր Պիեռին. Երբորդը պառկած էր փորի վրա, և նրա երեսը չէր երևում: Երգասաց հեծելակներն անցան սայլի վերկից:

— Ա՛խ, կորավ, կորավ... նրա գլուխը... Օտար երկրում ապրելով... — երգում էին նրանք զինվորական պարեղանակը:

Կարծես նրանց արձագանք տալով, բայց մի այլ ուրախությամբ, բարձունքի վրա փշրվում-չարդվում էին զանգահաշրաթյան մետաղյա հնչունները: Եվ դարձյալ մի այլ ուրախության մեջ հակառակ զառիվայրի գագաթը ողողում էին արևի տաք ճառագայթները: Բայց զառիվայրի տակ, վիրավորների այլի մոտ, հեացող ծիռ կողքին, ուր կանգնած էր Պիեռ, իտնավ էր, մոռայլ ու տխուր:

Ուստած այտով զինվորը բարկացած նայում էր երգասաց հեծելակներին:

— 0'հ, զուգվածնե՞ր, — ասավ նա հանդիմանանքով:

— Հիմա ոչ թե զինվորներ, գեղացիներ էլ տեսաւ Գեղացիներին էլ քշում են, — ասավ սայլի ետևը կանգնած զինվորը տխուր ժամփով և Պիեռին դիմելով: — Հիմի էլ շնորհում... Խոզում են ամբողջ ժողովրդով հարձակվել. մի խոսք են ասում — Մոսկվա: Ուզում են միանգամբ:

Զնայած զինվորի խոսքերի անորոշության, Պիեռը հասկացավ այն բոլորը, ինչ նա ուզում էր ասել, և գլխով հավանություն տվեց:

Ճանապարհը մաքրվեց, և Պիեռն իշավ սարի ստորոտն ու գնաց առաջ:

Պիեռը գնում էր, ճանապարհի երկու կողմը նայելով, որունելով ծանոթ գեմքեր ու ամենուրեք հանդիպելով միայն զորքի տարրեր տեսակների անծանոթ զինվորական գեմքերի, որ միատեսակ զարմանքով նայում էին նրա սպիտակ շլապային ու կանաչ ֆրակին:

Չորս վերստ գնալով՝ նա հանդիպեց առաջին ծանոթին և ուրախ-ուրախ դիմեց նրան: Այդ ծանոթը՝ բանակում վարչական պաշտոն ունեցող բժիշկներից մեկն էր: Նա կառքով գալիս էր Պիեռի գեմից, նստած մի երիտասարդ բժշկի կողքին. Պիեռին ճանաշելով՝ նա կանգնեցրեց իր կառապանին փոխարինող կազակին:

— Կո՞մս: Ձերդ պայծառափայլություն, դուք ի՞նչպես է որ այստեղ եք, — հարցրեց բժիշկը:

— Այնպես, ցանկացա նայել...

— Այո, այո, նայելու բան շատ կլինի...

Պիեռն իշավ կառքից և, կանգնելով, խոսեց բժիշկի հետ, բացատրելով նրան ճակատամարտին մասնակցելու իր մտադիպւթյունը:

Բժիշկը Բեզուխովին խորհուրդ տվեց դիմել ուղղակի գերապահին:

— Եվ աստված գիտի, թե ճակատամարտի ժամանակ որտեղ եք ընկնելու, անհայտության մեջ, — ասավ նա, հայցք փոխանակելով իր շահել ընկերոց հետ, — իսկ գերապայծար այսուամենայնիվ գիտի ձեզ և սիրով կընդունի: Այդպես էլ արեք, բարեկամս, — ասավ բժիշկը:

Բժիշկը թվում էր հոգնած է և շտապում էր:

— Այդպե՞ս եք կարծում... Իսկ ես դարձյալ ուզում էի հարցնել ձեզ, թե որտե՞ղ են բուն դիրքերը, — ասավ Պիեռը:

— Դիրքե՞րը, — ասավ բժիշկը, — գա արդեն իմ գծից գուրս է... կանցնեք Տատարինովոն, այնտեղ ինչ-որ շատ են քանդում: Այնտեղ բարձրացնք կուրգանը. այդտեղից երևում է, — ասավ բժիշկը:

— Այնտեղից էլ երևո՞ւմ է... Դուք եթե...

Բժիշկն ընդհատեց նրան ու մոտեցավ կառքին:

— Ես ձեզ կառաջնորդեի, բայց աստված վկա — ա՛յ (բժիշկը ցույց տվեց կոկորդը), շտապում եմ կորպուսի հրամանատարի մոտ: Մեզ մոտ գիտեք ինչպե՞ս է... գիտե՞ք, կոմս, վաղը ճակատամարտ է. Հարյուր հազար զորքին ամենաքիշ 20 հազար վիրավոր պետք է հաշվել, իսկ մենք ոչ պատգարակներ ունենք, ոչ մահճականեր, ոչ բուժակներ, ոչ բժիշկներ անդամ 6 հազարի համար: Կա տասը հազար սայլ, բայց հարկավոր է և ուրիշ բան: Ինչպես կուգես, այնպես էլ արա:

Այն օտարութիւն միտքը, թե այդ հաղարավոր մարդկանցից (ողջ, առողջ, շահել ու տարիքում մարդիկի, որ ուրախ զարմանքով նայում էին նրա շլապային) 20 հազարը հաստատապես դատապարտված էին վիրավորվելու և մահվան (գուցե հենց նրանք, որոնց ինքը տեսավ), — զարմացրեց Պիեռին:

«Նրանք, գուցե, վաղը մենանեն. էլ ինչո՞ւ են մտածում որեւէ ուրիշ բանի մասին, բան մահվան»: Եվ հանկարծ մտքերի ինչ-որ գաղտնի կապակցությամբ կենդանի կերպով պատկերացավ նրան Մոժայսկի սարի մարդէջքը, վիրավորներով սայ-

լերը, զանգահարությունը, արևի շեղ ճառագայթները և հեծելակների երգը:

«Հեծելակները զնում են ճակատամարտ և հանդիպում են վիրավորների և ոչ մի բոպե շեն մտածում այն մասին, թե ի՞նչ է սպասում իրենց, այլ անցնում են նրանց մոտով ու աշխով անում վիրավորներին: Իսկ դրանցից 20 հազարը դատապարտված է մահվան, և նրանք զարմանում են իմ շլյապայի վրա: Տարօրինա՞կ է», — մտածում էր Պիեռը, գնալով առաջ, դեպի Տատարինովո:

Կալվածատիրական տան առաջ, ճանապարհի ձախ կողմը, կանգնած էին կուրքեր, ֆուրգոններ, սպասյակների բազմություններ ու պահակներ: Գերապայծառն այդտեղ էր իշխանել: Բայց Պիեռի եկած ժամանակը չկար, և շտարականներից էլ գրեթե ոչ ոք չկար: Բոլորը գնացել էին մաղթանքի: Պիեռը զնաց առաջ՝ դեպի Գորկի:

Սարը բարձրանալով և գյուղի մի փոքրիկ փողոց մտնելով, Պիեռն առաջին անգամ տեսավ գյուղացի-աշխարհազորականներին՝ խաչերը փափախների վրա ու սպիտակ վերնաշապիկներով, որ բարձրածայն խոսելով ու քրքիջով, աշխուժացած ու քրտնած, ինչ-որ աշխատանք էին կատարում ճանապարհի աջ կողմը, խոտակալած ահագին կուրքանի վրա:

Ոմանք հողը քանդում էին բահերով, ոմանք ձեռնասայլակներով կրում էին այդ հողը, մյուսները կանգնել, ոչինչ չին անում:

Երկու սպա կանգնել էին կուրքանի վրա ու կարգադրություններ էին անում նրանց: Տեսնելով այդ գյուղացիներին, որ, ըստ երեսույթին, դեռ զվարճանում էին իրենց նոր զինվորական վիճակով, Պիեռը նորից հիշեց Սոծայսկի վիրավոր զինվորներին և նրան հասկանալի դարձավ այն, ինչ ուզում էր արտահայտել այն զինվորը, որ ասավ թե՝ ուզում են ամբողջ ծողովդրով հարձակվել: Ճակատամարտի դաշտում աշխատող արդ մորուքավոր գյուղացիների տեսքը, նրանց տարօրինակ ու անճունի կոշիկներով, քրոնած վիզերով և ոմանց շապիկների կոճակարձակ օձիքներով, որոնց տակից երեսում էին անրակների արևառ ոսկորները, — Պիեռի վրա ավելի խորն գդեց այն բոլորից, ինչ նա տեսել ու լսել էր մինչ այժմ՝ ներկա բռպեի հանդիսավորության ու կարեռության մասին:

Պիեռն իշավ կառքից և աշխատող աշխարհազորականների մոտով գնաց բարձրացավ այն կուրքանը, որից, ինչպես բը ժիշկն էր ասում, երեսում էր ճակատամարտի դաշտը:

Առավոտյան ժամը 11-ն էր: Սրեւ կանգնած էր Պիեռից մի փոքր ձախ ու ետեր և, մաքուր, ջինջ օդի միջով պայծառ լուսավորում էր ահագին, ամֆիթատրոնի ձեռով իր առջև բացվող պանորաման:

Այդ ամֆիթատրոնով վեր ու դեպի ձախ, այն՝ կտրելով, ձգվում էր Սմոլենսկի մեծ ճանապարհը, որ անցնում էր սպիտակ եկեղեցի ունեցող գյուղի միջով, որն ընկած էր կուրգանից 500 քայլ առաջ և նրանից ներքև (դա Բորոդինոն էր): Ճանապարհն անցնում էր գյուղի տակով, կամրջով և վայրէջքներով ու վերելքներով ձգվում-ոլորվում էր հետզհետե բարձր ու բարձր, դեպի վեց վերստի վրա երեացող Վալուեն գյուղը (այստեղ էր գտնվում այժմ Նապոլեոնը): Վալուենից դենքը ճանապարհը թաքնվում էր հորիզոնի դեղնած անտառում: Կեշու և եղևնու այդ անտառում, ճանապարհի ուղղությունից դեպի ձախ, արևի տակ փայլում էր Կոլոչայի վանքի հեռավոր խաչն ու զանգակատունը: Այդ ամբողջ կապույտ հեռվում, անտառից ու ճանապարհից դեպի աջ ու ձախ, տարբեր տեղերում երեսում էին ծխացող խարույկներ և մեր ու թշնամու զորքերի անորոշ զանգվածները: Դեպի աջ՝ Կոլոչա և Մոսկվա գետերի հոսանքով կիրճեր ու սարեր էին: Կիրճերի արանքով հեռվում երեսում էին Բեզզուրովո և Զախարինո գյուղերը: Դեպի ձախ՝ տեղը հարթ էր, կային հացահատիկի դաշտեր և երեսում էր այրված ծխացող Սեմյոնովսկոյե գյուղը:

Այն ամենը, ինչ տեսավ Պիեռը աջ և ձախ կողմերում, այնքան անորոշ էր, որ դաշտի ոչ աջ, ոչ ձախ կողմը յիսվին ըրավարարեց նրա պատկերացումին: Ամեն տեղ ոչ թե ճակատամարտի դաշտ էր, ինչպես սպասում էր նա, այլ դաշտեր էին, բացատներ, զորքեր, անտառներ, խարույկների ծուխ, գյուղեր, կուրգաններ, գետեր. և որքան էլ փնտրում-զննում էր Պիեռը, նա այդ կենդանի վայրերում չկարողացավ զիրքեր գտնել և չկարողացավ անդամ մեր զորքերը տարբերել թշնամու զորքերից:

«Պետք է իմացողից հարցնել», մտածեց նա և դիմեց սպայն, որ հետաքրքրությամբ նայում էր նրա ոչ զինվորական վիթխարի կերպարանքին:

— Թույլ տվեք հարցնել, — դիմեց Պիեռը սպային, — սա ի՞նչ գյուղ է առջևում:

— Բու'ւրդինո, թե ի՞նչ, — ասավ սպան, հարցումով դիմելով իր ընկերոջը:

— Բորոդինո, — ուղղելով պատասխանեց մյուսը:

Սպանը ըստ երեսութին, խոսելու առիթից գոհ, մոտեցավ Պիեռին:

— Այնտեղ մերո՞նք են, — հարցրեց Պիեռը:

— Այո, իսկ հրե մի քիչ հեռու ֆրանսացիներն են, — ասալ սպան: — Հրե՛ն րանք, հրե՛ն երեսում են:

— Ո՞ւր է, ո՞ւր է, — հարցրեց Պիեռը:

— Հաւարակ աշբով երեսում է: Այ հրե՛ն:

Սպան ձեռով ցույց տվեց այն ծխերը, որ երեսում էին գետի մյուս կողմը, և նրա գետին երևաց այն խիստ ու լուրջ արտահայտությունը. որ Պիեռը տեսել էր իրեն հանդիպած շատ դեմքերի վրա:

— Ա՛յ, զրանք ֆրանսացիներն են: Իսկ այնտե՞ղ... — Պիեռը ցույց տվեց դեպի ծախ՝ կուրդանը, որի մոտ զորքեր էին երեւում:

— Այդ մերոնք են:

— Ա՛յս, մերոնք են: Իսկ այնտե՞ղ... — Պիեռը ցույց տվեց մի ուրիշ հեռու կուրդան, ուր մի մեծ ծառ կար գյուղի կողքին, որ երեսում էր կիրճում, և որի մոտ նույնակես խարույկներ էին ծխում և ինչ-որ բան սկին էր տալիս:

— Այդ գարճալ նա է, — ասավ սպան (դա Շեարդինոյի ոեցուտն էր): — Երեկ մերն էր, իսկ այսօր նրանը:

— Ուրեմն ի՞նչպես են մեր դիրքերը:

— Դիրքե՞րը, — ասավ սպան բավականության ժամկետով, — ես այդ կարող եմ պատմել ձեզ պարզ, հասկանալի, որովհետեւ մեր բոլոր ամրությունները գրեթե ես եմ շինել: Այ, տեսնո՞ւմ եք, մեր կենտրոնը Բորոդինոն է, ա՛յ այստեղ: — Նա ցույց տվեց սպիտակ եկեղեցի ունեցող գյուղը, որ առջեւումն էր: — Այստեղ Կոլոշան անցնելու տեղն է: Ա՛յ այստեղ, տեսնում եք, ուր ցածրում փոփած են հնձած խոտի ծորերը,

— 250 —

ահա այդտեղ էլ կամուրջն է: Դա մեր կենտրոնն է: Մեր աջ թե՛ք ա՛յ որտեղ է (նա ցույց տվեց ուղիղ դեպի աջ, կիրճի հեռուն), այնտեղ Մոսկվա գետն է. այնտեղ մենք շինել ենք երեք ունգուտ (ամրոցիկ), շատ ամուր: Զախ թե՛ք... — սպան այստեղ կանգ առավ: — Գիտեք, դա շատ դժվար է բացատրել ձեզ... երեկ մեր ծափ կամ թե՛ք հրե՛ք՝ այստեղ էր՝ Շեարդինոյում: Հրե՛ք տեսնո՞ւմ եք կաղնի ծափը. իսկ հիմա ծափ ի՞նք մենք ետ ենք քաշել. այժմ հրե, հրե տեսնո՞ւմ եք գյուղը և ծուխը — դա Սեմյոնովսկոյին է. այ այստեղ, — նա ցույց տվեց Ռաևսկու կուրդանը: — Միայն հագիվ թե այստեղ ճակատամարտ լինի: Որ նա զորքերը փոխադրել է այստեղ, դա խարեւություն է. նա երեկ, թիկնանց շարժում կանի Մոսկվա գետի աջ կողմից. է, ուր էլ լինի, վաղը շատերը չեն լինի, — ասավ սպան:

Տարիքու ենթասպան, որ մոտեցել էր սպային՝ նրա զրույցի միջոցին, անխոս սպասեց, որ իր պետը խոսքը վերջացնի. բայց այդտեղ նա, ըստ երեսութին, սպայի խոսքերից զգո՞ւն, ընդհատեց նրան:

— Պետք է հողակողովներ բերել տալ, — ասավ նա խստությամբ:

Սպան կարծես շփոթվեց, կարծես հասկացավ, թե կարելի է մտածել, որ շատերը չեն լինի վաղը, բայց հարկավոր չի խոսել այդ մասին:

— Է, լավ, երրորդ վաշտն ուղարկիր նորից, — շտապշտապ սպավ սպան:

— Իսկ գուք ո՞վ եք, բժիշկներից եք:

— Ոչ, ես այնպես, — պատասխանեց Պիեռը:

Եվ Պիեռը նորից աշխարհագորականների մոտով իշավ սարի ստորոտը:

— Ախ, անիծյալներ, — ասավ նրան հետևող սպան, քիթը սեղմելով ու աշխատողների մոտով վազելով:

— Հրե՛ն րանք... բերում են, գալիս են... Հրե նրանք... Հիմա կմտնեն... — հանկարծ լսկեցին ձայներ ու թե՛ սպաները, թե՛ զինվորները, թե աշխարհագորականները ճանապարհով վազեցին առաջ:

Սարի տակից՝ Բորոդինոյից բարձրանում էր եկեղեցական թափոր: Բոլորի առջեկից փոշոտ ճանապարհով կանոնավոր շարքերով գալիս էր հետևակը գլխարկները վերցրած ու հրա-

ցանները ցած իշեցրած։ Հետևակի ետեից լսվում էր եկեղեցական երգեցողություն։

Պիեռից առաջ անցնելով, անգդակ՝ եկողներին ընդառաջ լին վազում գինվորներն ու աշխարհազորականները։

— Աստվածամորը բերո՞ւմ են... Հովանավորին, իվերիաի աստվածամո՞րը...  
— Սմոլենսկի աստվածամորը, — ուղղեց մի ուրիշը։

Աշխարհալորականները, թե՛ նրանք, որ գյուղումն էին, թե՛ նրանք, որ աշխատում էին մարտկոցում, թիերը շպրտելով, վաղեցին թափորին ընդառաջ։ Փոշոտ ճանապարհով եկող գումարտակի ետեից գալիս էին շուրջառ գցած քահանաները, — վեղարով մի ծերունի՝ տիրացուի ու երգիչների հետ։ Նրանց ետեից գինվորներն ու սպաները բերում էին մի մեծ, սեադեմ, մետաղե շրջանակով սրբապատկեր։ Դա Սմոլենսկից դուրս բերած սրբապատկերն էր և այն օրից տանում էին զորքի ետեից։ Սրբապատկերի ետեից, կողքերից, առջևից, ամեն կողմից գնում, վազում ու երկրպագում էին գինվորականների գլխարաց բազմությունները։

Սարը բարձրանալով, թափորը կանգ առավ. սրբապատկերը սրբիչներով բռնած մարդիկ փոխվեցին, դպիրները նորից վառեցին բուրվառները, և մաղթանքն սկսվեց։ Արևի տաք ճառագայթները շեղ ընկնում էին վերեկց։ Թույլ, զով քամին խաղում էր բաց գլուխների մազերի ու սրբապատկերը զարդարող ժապավենների հետ։ բաց երկնքի տակ հնչում էր մեղմ երգեցողությունը։ Սպաների, գինվորների, աշխարհազորականների ահազին բազմությունը գլխարաց շրջապատել էր սրբապատկերը։ Քահանայի ու տիրացուի ետեւում, մարդկանցից ազատված տեղում կանգնել էին աստիճանավոր մարդիկ։ Մի ճաղատ գեներալ Գեորգիի խաչը զգին, կանգնել էր քահանայի ուղիղ թիկունքի ետելը ու, երեսն առանց խաչակնքելու (ըստ երևութին, գերմանացի էր), համբերությամբ սպասում էր մաղթանքի վերջին, որը նա անհրաժեշտ էր համարում լսել, հավանորեն, ուու ծողովրդի հայրենասիրությունը գրգռելու համար։ Մի ուրիշ գեներալ կանգնել էր ուազմական դիրքով և ձեռը թափահարում էր կրծքի առջև, շուրջը նայելով։ Աստիճանավորների այդ խմբում Պիեռը, որ կանգնած էր գյուղացիների մեջ, ճանաշեց մի քանի ծանոթների։

բայց նա չէր նայում նրանց։ Նրա ուշադրությունն ամբողջ կլանված էր այդ բազմության մեջ եղած զինվորների և աշխարհազորականների գեմքերի լուրջ արտահայտությամբ, որ միակերպ ագահությամբ նայում էին սրբապատկերին։ Հենց որ հոգնած տիրացուները (որ քաներորդ մաղթանքն էին երգում) սկսեցին ծուլորեն ու սուլորականի պես երգել. «ապատիր աղեսներից ստրուկներին քո, աստվածամայր», և քահանան ու դպիրն էլ ձայնակցեցին, բոլորի գեմքերին վառվում էր նույն՝ առաջիկա րոպեի հանդիսավորությունը գիտակցելու արտահայտությունը, որ Պիեռը տեսել էր Մոժայսկում՝ սարի տակ և այդ առավոտ իրեն հանդիպած շառ ու շատ գեմքերի վրա. և ավելի հաճախ խոնարհվում էին գլուխները՝ մազերի թափահարումով, ավելի հաճախ լսվում էին հառաջանքներ ու խաշակնքվելու ձայններ։

Սրբապատկերը շրջապատող բազմությունը հանկարծ էտքաշեց և սեղմեց Պիեռին։ Մեկը, ըստ երևութին, մի շատ կարեռ անձնավորություն, դատելով այն շտապողականությունից, որով ետ էին քաշում նրա առաջ, մոտենում էր սրբապատկերին։

Դա կուտուղովն էր, որ շրջում էր դիրքերը։ Նա դեպի Տատարինովով վերադառնալով, մոտեցավ մաղթանքին։ Պիեռն անմիջապես ճանաշեց կուտուղովին՝ նրա առանձնահատուկ, բոլորից ջոկվող կերպարանքից։

Ահազին հաստ մարմնի վրա երկար սյուրթուկ հազած, փոքրինչ կոացած մեջքով, բաց սպիտակ գլխով, թափված սպիտակ աշբը ճարպակալած գեմքի վրա, կուտուղովն իր օրորուն քայլվածքով մտավ շրջանը և կանգ առավ քահանայի ետել։ Նա խաշակնքեց սովորական շարժումով, ձեռը մինչև գետին հասցրեց և, ծանր հոգոց արձակելով, խոնարհեց իր ալեզարդ գլուխը։ Կուտուղովի ետեր կանգնած էին Բենիկունն ու շքախումբը։ Զնայած գլխավոր հրամանատարի ներկայության, որ իր վրա էր դարձրել բոլոր բարձր աստիճանավորների ուշադրությունը, աշխարհազորականներն ու զինվորները, առանց նրան նայելու, շարունակում էին աղոթել։

Երբ մաղթանքը վերջացավ, կուտուղովը մոտեցավ սրբապատկերին, ծանրությամբ ծունկի իշավ, երկրպագելով, և երկար փորձում ու չէր կարողանում ոտի կանգնել ծանրությու-

Ն՞շ ու թուլությունից: Նրա ալեհեր գլուխը ցնցվում էր ճիշքից: Վերջապես նա վեր կացավ և պարզամիտ մանկան պես շրաբերն առաջ տանելով համբուրեց սրբապատկերն ու խոնարհվեց, ձեռը մինչև գետնին դիպցնելով: Գններալիսնետը հետեւ նրա օրինակին: Հետո սպաները, ու նրանց հտեւից, մի յանց սեղմելով, հեալով ու իրար հրհրելով, հուզված դեմքերով մոտեցան զինվորներն ու աշխարհազորականները:

## XXII

Իրեն շրջապատողների սեղմելուց օրորվելով՝ Պիեռը նայեց իր շուրջը:

— Կոմս, Պյուտր Կի'րիլիչ: Դուք ի՞նչպես է որ այստեղ եք, — ասավ ինչ-որ մեկի ձայնը

Պիեռը ետ նայեց: Բորիս Դրուեցկոյը, ձեռներով ծնկները մաքրելով, որ հողոտ էին (հավանորեն նույնպես համբուրել էր սրբապատկերը), ժամանելով մոտեցավ Պիեռին: Բորիսը հագնված էր էլեգանտ, արշավանքային ուազմականության երանդով: Հագել էր երկար սյուրթուկ և մտրակը գցել ուսով այնպես, ինչպես կուտուղովը:

Կուտուղովը մինչ այդ մոտեցավ գյուղին և նստեց մոտիկ տան ստվերում՝ նստարանի վրա, որ վազելվագ բերեց մի կազակ, իսկ մի ուրիշը հապճակ ծածկեց այն գորգով: Ահազին փայլուն շրախումբը շրջապատեց գլխավոր հրամանատարին:

Սրբապատկերը շարժվեց առաջ, բաղմության ուղեկցությամբ: Պիեռը Կուտուղովից երեսուն քայլ հեռու կանգ առավ, Բորիսի հետ խոսակցելով:

Պիեռը բացատրեց, որ ինքը մտադիր է մասնակցել ճակատամարտին և դիտել դիրքերը:

— Այ ինչպես կանեք, — ասավ Բորիսը: — Je vous ferai les honneurs du camp<sup>1</sup>: Ամեն ինչ դուք ավելի լավ կտեսնեք այնտեղից, ուր կոմս Բենիկսենն է լինում: Ես չեմ որ նրա մոտ եմ լինում: Ես նրան կգեկուցեմ: Իսկ եթե կամենում եք դիրքերը շրջել, գնանք մեզ հետ, մենք հիմա գնում ենք ձախ թեր, իսկ հետո կվերադառնանք և շնորհ կանեք ինձ մոտ գիշերելու,

ու պարտիա կկազմենք: Դուք Պիեռի Սերգեյի վին ծանոթ եք, չէ՞: Նա ա՛յ այստեղ է իշեանիլ, — Բորիսը ցույց սկսեց Պորկիի երրորդ տունը:

— Բայց ես կուզեի տեսնել այ թեր, ասում են շատ ուժեղ է, — ասավ Պիեռը: — Ես կուզեի Սոսկվա գետից սկսած անցնել դիտել բոլոր դիրքերը:

— Է՛, այդ հետո կարող եք, զինավորը — ձախ թեն է... — Այո, այո: Իսկ որտեղ է իշխան Բալկոնսկու գունդը,

շե՞ք կարող ցույց տալ ինձ, — հարցրեց Պիեռը: — Անդրիյ Նիկոլաևիչ՝ Մենք նրանց մոտով պիտի անցնենք, ես ձեզ կտանեմ նրա մոտ:

— Ի՞նչպես է ձախ թեր, — հարցրեց Պիեռը:

— Ճիշտն ասեմ ձեզ, ունեք ասում ասուված գիտի ինչ դրության մեջ է, — ասավ Բորիսը վստահությամբ ձայնը իշեցնելով, — Կոմս Բենիկսենը ամենին այդ չէր ենթագրում: Նա ենթագրում էր ա՛յ, այն կուրգանը ամրացնել բոլորովին ոչ այդպես... Բայց, Բորիսը ուսերը թօթից, — գերապայծառ լցանկացա՞վ, թե՞ շարախոսել են նրան: Զէ որ... — Եվ Բորիսը խոսքը շվերջացրեց, որովհետեւ այդ ժամանակ Պիեռին մոտեցավ Կայսարովը, Կուտուղովի աղյուտանտը: — Ա՛: Պահսի Սերգեյիշ, — ասավ Բորիսը, անբոնազբոս ժպիտով գիմելով Կայսարովին: — Իսկ ես ա՛յ աշխատում եմ կոմսին բացատրել մեր դիրքերը: — Զարմանալի է, թե զերապայծառը ինչպե՞ս կարող էր այդպես ճիշտ գուշակել ֆրանսացիների դիտավորությունները:

— Դուք ձախ թեկ մա՞սին եք ասում, — ասավ Կայսարովը:

— Այո, այո, հենց նրա մասին: Մեր ձախ թեր հիմա շատ, շատ ուժեղ է:

Զնայած այն բանին, որ Կուտուղովը շտաբից քշել էր բոլոր ավելորդ մարդկանց, Բորիսը, Կուտուղովի կատարած փոփոխություններից հետո, կարողացավ մնալ զինավոր կայսանում: Բորիսը տեղափորկեց կոմս Բենիկսենի մոտ: Կոմս Բենիկսենը, ինչպես ե բոլոր այն մարդիկ, որոնց մոտ ժառանգել էր Բորիսը, զանել իշխան Պրուբեցկոյին համարում էր անգնահատելի մարդ:

<sup>1</sup> Ես ձեզ ցույց կտամ լազերը:

Բանակի ղեկավարության մեջ կային երկու իրարից խստորեն տարբերվող պարտիաներ՝ Կուտուզովի պարտիան և շտաբի պետ Բենիկսենի պարտիան։ Բորիսը գտնվում էր այս վերջին պարտիայի մեջ և ոչ ոք այնպես, ինչպես նա, չէր կարողանում ստուկամիտ հարգանք տալով Կուտուզովին, զգացնել տալ որ ծերունին վատ է և թե ամբողջ գործը վարում է Բենիկսենը։ Հիմա հասել էր ճակատամարտի վճռական րոպեն, որը պատք է կամ ոչնչացներ Կուտուզովին և իշխանությունը հանձներ Բենիկսենին կամ, եթե անգամ Կուտուզովը շահեր ճակատամարտը, զգացնել տար, թե ամեն ինչ արել է Բենիկսենը։ Համենայն դեպքում, վաղվան օրվա համար բաժանվելու էին մեծամեծ պարգևներ և առաջ էին քաշվելու նոր մարդիկ։ Եվ այդ պատճառով Բորյան ամբողջ օրը հուզված վիճակի մեջ էր։

Կայսարովից հետո Պիեռին մոտեցան դարձյալ ուրիշները՝ իր ծանոթներից, և նա չէր կարողանում պատասխանել Մոսկվայի մասին արված բազում հարցուփորձերին, և ժամանակ շուներ լսել այն պատմությունները, որ անում էին իրեն։ Էուլոր գեմքերն աշխույժ և տագնապ էին արտահայտում։ Բայց Պիեռին թվում էր, որ մի քանի դեմքերի վրա արտահայտված գրգռվածության պատճառը թաքնված էր ավելի անձնական հաջողության վերաբերող հարցերի մեջ, և նրա մտքից շըր հեռանում գրգռվածության այն մյուս արտահայտությունը, որ տեսավնական ուրիշ գեմքերի վրա և որը խոսում էր ոչ թե անձնական խնդիրների մասին, այլ ընդհանուր, կրանքի և մահվան խնդիրների մասին։ Կուտուզովը նկատեց Պիեռի հայտարարանը և նրա շուրջը հավաքված խումբը։

— Դրան կանչեցեք ինձ մոտ, — ասավ Կուտուզովը։

Այդուտանտը հայտնեց գերապայծառի ցանկությունը, և Պիեռը գնաց զեպի նստարանը։ Բայց նրանից առաջ Կուտուզովին մոտեցավ մի շարքալին աշխարհագորական։ Դա Դուլոխովն էր։

— Սա ի՞ն, գործ ունի այստեղ, — հարցրեց Պիեռը։

— Դա մի այնպիսի՝ ծակամուտ արարած է, որ ամեն տեղ խցկում է, — պատասխանեցին Պիեռին։ — Նա չէ որ աստիճանագուրկ է արված։ Հիմա հարկադրությունը է դուրս պրծնել։ Ինչոր նախագծեր է ներկայացրել և գիշերը թշնամու զորաշղթան է սողոսկել… Բայց կտրիծ տղա է։

— 256 —

Պիեռը գլխարկը վերցնելով, հարգալիր գլուխ խոնարհեց Կուտուզովի առաջ։

— Ես որոշեցի, որ եթե զեկուցեմ ձերդ պայծառափայլությանը, զուք կարող եք քշել ինձ, կամ ասել, թե ձեզ հայտնի է այն՝ ինչ ես զեկուցում եմ, և այն ժամանակ ես չեմ լինի… — ասում էր Պոլոխովը։

— Այդպես, այդպես։

— Իսկ եթե ես իրավացի եմ, ապա օգուտ կրերեմ հայրենիքիս, որի համար պատրաստ եմ մեռնել։

— Այդպես… այդպես։

— Իսկ եթե ձերդ պայծառափայլությանը հարկավորվի իր կյանքը շխնայող մի մարդ, հաճեցեք հիշել ինձ… Թւրես, ես պետք գամ ձերդ պայծառափայլությանը։

— Այդպես… այդպես… — կրկնեց Կուտուզովը, ծիծառող ու կուշ եկող աշըռվ Պիեռին նայելով։

Այդ ժամանակ Բորիսը, իր պալատական ճարպկությամբ առաջ եկավ, կանգնեց Պիեռի կողքին՝ իշխանությանը մոռհիկ և ամենաբանական տեսքով ու ոչ բարձր ձայնով, կարծես շարունակելով սկսած զրուցը, ասավ Պիեռին։

— Աշխարհագորականները ուղղակի հագել են մաքուր, սպիտակ շապիկներ, որ պատրաստվեն մահվան։ Ի՞նչպիսի հերոսություն, կոմս։

Բորիսն այդ Պիեռին ասավ, ըստ երևույթին, նրա համար, որ գերապայծառը լսի։ Նա գիտեր, որ Կուտուզովն ուշադրություն կդարձնի այդ խոսքերին, և իսկապես գերապայծառը դարձավ նրան։

— Դու ի՞նչ ես ասում աշխարհագորի մասին, — ասավ նա Բորիսին։

— Նրանք, ձերդ պայծառափայլություն, պատրաստվելով վաղը մեռնելու, հագել են սպիտակ շապիկներ։

— Ա՛… Սքանչելի, անձման ժողովուրդ է, — ասավ Կուտուզովը և, աշքերը փակելով, գլուխն օրորեց։ — Անհման ժողովուրդ է։ — Կրկնեց նա, հոգով քաշելով։

— Յանկանում եք վառողի հոտ առնել, — ասավ նա Պիեռին։ — Այս, հաճելի հոտ ունի։ Պատիլ ունեմ ձեր կնոջ երկրութագուն լինելու, առողջ է նա։ Իմ ժամանակավոր օթևանը ձեր տրամադրության տակ է։

— 257 —

Եվ, ինչպես այդ հաճախ պատահում է ծեր մարդկանց, Կուտուզովը սկսեց ցրված շուրջը նայել, կարծես մոռանալով այն բոլորը, ինչ պետք է ասեր կամ աներ:

Հստ երևութին, հիշելով այն, ինչ փնտրում էր, նա ձեռով իր մոտ կանչեց իր աղյուտանտի եղբայր Անդրեյ Սերգեյի շամարովին:

— Ի՞նչպես էր Մարինի ոտանակորը. ի՞նչպես էր ոտանակորը, որ Գերակովի վրա գրել էր. «Կորպուսում կիխնս ուսուցիլ...»: Ասա, ասա, — ասավ Կուտուզովը, ըստ երևութին պատրաստվելով ծիծաղել:

Կայսարով կարգաց... Կուտուզովը, ժպտալով, գլխով էր անում ոտանակորի տակով:

Երբ Պիեռ հեռացավ Կուտուզովից, Դոլխովը նրան մոտենալով, մտավ նրա թեր:

— Շատ ուրախ եմ ձեզ այստեղ հանդիպելուս, կոմս, — ասավ նա Պիեռին բարձրաձայն և, կողմնակի մարդկանց ներկայությունից շրաշլելով, մի առանձին վճռականությամբ ու հանդիսավորությամբ: — Այսօր, երբ, աստված գիտե թե վաղը ո՞վ մեզնից կենդանի կմնա, ես ուրախ եմ առիթից՝ ձեզ ասելու, որ ես ցավում եմ այն թյուրիմացությունների համար, որ տեղի են ունեցել մեր մեջ, և կցանկանայի, որ դուք իմ դեմ ոշինչ շունենայիք: Խնդրում եմ ներեք ինձ:

Պիեռը, ժպտալով, նայում էր Դոլխովին, շնչանալով ինչ ասել նրան: Դոլխովն արցունքն աշքերին գրկեց և համբուրեց Պիեռին:

Բորիսին ինչ-որ բան ասավ իր գեներալին, և կոմս Բենիգսենը դարձավ Պիեռին և առաջարկեց իր հետ միասին անցնել զորագով:

— Դա ձեզ համար հետաքրքրական կլինի, — ասավ նա: — Այո, շատ հետաքրքրական, — ասավ Պիեռը:

Կես ժամ հետո Կուտուզովը մեկնեց Տատարինովո, և Բենիգսենն իր շքախմբով, որոնց թվում էր և Պիեռը, զնաց զորագծի ուղղությամբ:

### XXIII

Բենիգսենը Գորկիից մեծ ճանապարհով իջավ դեպի կամուրջը, որը կուրգանից Պիեռին ցույց տվեց սպան, որպես դիրքերի

կենտրոն, և որի ափին պառկած էին հնձած խոտի բուրմունք արձակող կանաչ ծորերը: Կամուրջով գնացին Բորոդինո գյուղը, այդտեղից թեքվեցին գեպի ձախ և անթիվ-անհամար զորքի ու թնդանոթների մոտով գնացին գեպի մի բարձր կուրգան, որի վրա աշխարհազորականները հող էին փորում: Դա մի ոեղուաւ էր (ամրոցիկ), որ տակավին անուն չուներ, հետո ստացավ Ռաబակու ոեղուաւ կամ կուրգանի մարտկոց անունը:

Պիեռն առանձին ուշագրություն շդարձրեց այդ ոեղուաւ վրա: Նա շգիտեր, որ այդ վայրը Բորոդինոյի գաշտի բոլոր վայրերից ավելի հիշելի պետք է լիներ իր համար: Ապա նըրանք ձորով գնացին Սեմյոնովսկոյե, ուր զինվորները քաշում տանում էին խրճիթների ու խրճանցների վերջին գերանները: Այնուհետև սարի ստորոտն իջնելով ու սարը բարձրանալով նրանք առաջացան կարկտահար եղած հաճարի միջով ձգված և հրետանու կողմից՝ դաշտի միջով նոր բացած ճանապարհով ու գնացին ֆլեշը (ամրության տեսակ), որ նույնպես նոր էին փորում:

Թենիգսենը կանգ առավ ֆլեշներում և սկսեց նայել առաջ (երեկ տակավին մեր ձեռին գտնվող): Շեարդինոյի ոեղուաւն, որի վրա երևում էին մի քանի ծիավորներ: Սպաններն ասում էին, որ այնտեղ է նապուենը կամ Մյուրատը: Եվ բոլորն ագահորեն նայում էին ծիավորների այդ խմբին: Պիեռը նույնպես նայում էր այն կողմը, աշխատելով գուշակել, թե այդ հազիվ երեացող մարդկանցից ո՞րն է նապուենը: Վերջապես ծիավորներն իշան կուրգանից և անհայտացան:

Թենիգսենը դարձավ իրեն մոտեցող գեներալին և սկսեց բացատրել մեր զորքերի տեղն ու դիրքը: Պիեռը լսում էր Բենիգսենի խոսքերը, լարելով իր բոլոր մտավոր ուժերը, որպեսզի հասկանա առաջիկա ճակատամարտի էլությունը, բայց ցավելով զգում էր, որ իր մտավոր ընդունակությունները դրա համար անբավարար էին: Նա ոչինչ չէր հասկանում: Թենիգսենը դադարեց խոսել և, իրեն ունկնդրող Պիեռի կերպարանքը նըրակատելով, հանկարծ դիմեց նրան:

— Ձեզ համար, կարծում եմ, հետաքրքրական չի, — ասավ նա:

— Ա'հ, ընդհակառակը, շատ հետաքրքրական է, — կըրէցնեց Պիեռը, ոչ բոլորովին ճիշտ:

Ցլեշից նրանք գնացին դեպի է՛լ ավելի ծախ մի ճանաւրաբով, որ ձգվում էր նոսր, մանրածառ կեշու անտառի միշտ։ Անտառի կիսին նրանց առաջ ճանապարհի վրա ցատկեց շագանակագույն ու ճերմակ ոտներով մի նապաստակ և, բազմաթիվ ձիերի ոտնատրովից, վախեցած, այնպես շփոթվեց, որ երկար թոշկուում էր ճանապարհին՝ նրանց առջե, հարուցանելով ընդհանուր ուշադրություն ու ծիծաղ, և միայն այն ժամանակ, երբ մի քանի ճայներ միասին բոռացին նրա վրա, նա մի կողմ նետվեց և թաքնվեց թափուում։ Երկու վերստ անտառի միջով գնալով, նրանք գուրս եկան մի բացատ, ուր կանգնել էին Տուչկովի կորպուսի գորքերը, որ պետք է պաշտպանեին ծախ թեր։

Այստեղ, ծայրահեղ ծախ թեռւմ, Բենիգսենը խոսեց երկար ու տաքացած և արավ, ինչպես Պիեռին թվաց, ուզմական տեսակետից կարևոր կարգադրություն։ Տուչկովի զորքի բանակած վայրի առջև գտնվում էր մի բարձունք, Զորքերն այդ բարձունքը չէին բռնել։ Բենիգսենը բարձրաձայն քննադատեց այդ սխալը, ասելով, թե խելագարություն էր շգրաված թողնել տեղին իշխող այդ բարձունքը և զորքը տեղավորել նրա տակ։ Մի քանի գեներալներ նույն կարծիքը հայտնեցին։ Մեկն առանձնապես զինվորականի տաքարյունությամբ խոսեց այն մասին, թե իրենց այստեղ դրել են կոտորելու համար։ Բենիգսենն իր անունից հրամայեց զորքերը տանել առաջ՝ տեղավորել բարձունքի վրա։

Չախ թեռւմ արված այդ կարգադրությունը է՛լ ավելի ստիպեց Պիեռին կասկածել ուզմական գործը հասկանալու իր ընդունակության մեջ։ Լսելով Բենիգսենին և գեներալներին, որ դատապարտում էին զորքի գիրքը սարի սոորոտում, Պիեռը լիովին հասկանում էր նրանց և համակարծիք էր, բայց հենց այդ պատճառով նա չկարողացավ հասկանալ, թե ինչպես նա, ով այդ զորքերը տեղավորել էր այդտեղ՝ սարի սոորոտում, կարող էր այդպիսի ակներն ու կոպիտ սխալ անել։

Պիեռը շղիսեր, որ այդ զորքերը տեղավորված էին այնտեղ ոչ թե զիրքեր պաշտպանելու համար, ինչպես Բենիգսենն էր կարծում, այլ ծածկված տեղում դրված էին դարանի համար, այսինքն նրա համար։ Որ աննկատելի մնան և հանկարծ խփեն առաջ շարժված թշնամուն, Բենիգսենն այդ շղիսեր և զորքերը

շարժեց առաջ հատուկ նկատառումներով, շասելով այդ մասին ըլսավոր հրամանատարին։

## XXIV

Օգոստոսի 25-ի այդ պայծառ երեկոյան իշխան Անդրեաս Ճեռին կոթնած՝ կանգնած էր Կնյազկով զյուղի մի քանդված սարայում, իր գնդի բանակած տեղի ծայրում։ Քանդված պատի բացվածքից նայում էր նա ցանկապատի երկարությամբ ծրագող ներքին ճնները կտրտած, երեսնամյա կեշիների շերտին, վարելահողին, որի վրա շարված էին վարսակի բարդեր և թրփուտին, ուր երևում էին խարույկների ծխեր, — դրանք զինվորների խոհանոցներն էին։

Որքան էլ իշխան Անդրեյին իր կյանքը թվում էր անձուկ, ամենքի համար անպետք ու ծանր, նա նույնպես, ինչպես յոթտարի առաջ Առուտերլիցում, ճակատամարտի նախօրեին իրեն զգում էր հուզված ու զրովված։

Վաղված ճակատամարտի հրամաները տրված էին և ինքն ստացել էր դրանք։ Նա այլևս անելիք չուներ։ Բայց մըտքերը ամենահասարակ, պարզ և այդ պատճառով սարսափելի մտքերը նրան հանգիստ չէին թողնում։ Նա գիտեր, որ վաղվաճակատամարտը պետք է լինի ամենասարսափելին այն բոլոր ճակատամարտերից, որոնց մասնակցել էր ինքը, և մեռնելու հնարավորությունը առաջին անգամ նրա կյանքում, անկախ այն ամենից, ինչ կենսական է, անկախ այն նկատառումներից, թե ինչպես նա կազդի ուրիշների վրա, այլ միայն իր անձի, իր հոգու առնչությամբ կենդանի կերպով, գրեթե ստուգապես, պարզորեն ու սարսափելիորեն պատկերացավ նրան։ Եվ այդ պատկերացման բարձունքից այն ամենը, ինչ առաջ տանջում ու զբաղեցնում էր նրան, հանկարծ լուսավորվեց սառը, սպիտակ մի լույսով, որ ոչ ստվեր ուներ, ոչ հեռանկար, ոչ գծերի տարրերություն։ Ամբողջ կյանքը պատկերացավ նրան որպես մի մոգական լապտեր, որին նա երկառ նայել էր ապակու միջով և արհեստական լույսով։ Այժմ նա այդ վատ նկարած պատկերները տեսնում էր հանկարծ առանց ապակու, ցերեկվա պայծառ լույսով։ «Այո, այո, ահա նրանք՝ ինձ հուզող, ինձ սքանչացնող ու տանջող կեղծ պատկերները», ասում էր նա ինքն

իրեն, իր երևակայության մեջ չովշիկիով իր կախարդական լապտեր-կյանքի գլուխոր պատկերները, նայելով նրանց այժմ այդ սառը, ցերեկվա սպիտակ լույսով, — մահվան շուրջը դարձող պայծառ մտքով: «Ահա նրանք, այդ կոպիտ նկարված կերպարները, որ պատկերանում էին մի տեսակ գեղեցիկ ու խոր-քրդավոր: Փառքը, հասարակական բարօրությունը, սերը գեղի կինը, ինքը, հայրենիքը — որքան մեծ էին թվում ինձ այս պատկերները, ինչ խորագույն իմաստով՝ տողորված: Եվ այդ բոլորը այնպես հասարակ, գունատ ու կոպիտ է սառը, սպիտակ լույսովն այն առավոտի, որը, գումար եմ, բացվում է ինձ համար»: Նրա ուշադրությունն իրենց վրա պահում էին առանձնապես նրա կյանքի երեք գլխավոր վիշտը: — Նրա սերը դեպի կինը, հոր մահը և ֆրանսական արշավանքը, որ գրավել էր Ռուսաստանի կեսը: — «Ե՞ր այդ աղջկը, որ ինձ թվում էր խորհրդավոր ուժերով լի: Ինչպես ես սիրում էի նրան, ես կազմում էի բանաստեղծական ծրագիրներ՝ սիրո, նրա հետ երջանիկ ապրելու մասին: Օ՛, սիրելի տղաս, — բարկացած ու բարձրածայն սասալ նա: — Ի՞նչպես չէ: Ես հավատում էի մի ինչ-որ իղեալական սիրո, որը նրա հավատարմությունը պետք է պահպաներ ինձ համար՝ իմ բացակայության ամբողջ տարփա ընթացքում: Ինչպես առավի քնքուշ աղավնին՝ նա պետք է հյուծվեր մեր անջատումից: Իսկ այդ ամենը շատ ավելի պարզ է... Այդ բոլորը սարսափելիորեն պարզ է, նողկալի:

Հայրս նույնպես կառուցում էր կիսին Գորիում և կարծում էր, թե այդ իր տեղն է, իր հողը, իր օդը, իր գյուղացիները: Բայց եկավ նապուենը և, շիմանալով նրա գոյության մասին, տաշեղի պես ճանապարհից մի կողմ հրեց նրան, և խորուակվեց նրա կիսին Գորին ու նրա ամբողջ կյանքը: Իսկ իշխանադուստր Մարիան ասում է, թե դա փորձություն է՝ վերուստ առաքված: Ինչո՞ւ համար է այդ փորձությունը, երբ նա այլևս չկա և չի լինելու. այլևս երբե՞ք չի լինելու: Նա չկա: Ուրեմն էլ ո՞ւմ է պետք այդ փորձությունը: Հայրենիք, Մոսկվայի կործանում: Իսկ վաղն ինձ կապանի — և անգամ ոչ ֆրանսացին, այլ յուրայինս, ինչպես երեկ զինվորը հրացանը պարպեց ականջիս մոտ: և ֆրանսացիները կգան և ոտներիցու ու զիսիցու բռնելով՝ փոսք կնեսեն ինձ, որ գարշահոտություն շարժակեմ նրանց

— 262 —

քթի տակ, և կդասավորվեն կյանքի նոր պայմաններ, որոնք նույնպես սովորական կլինեն ուրիշների համար, ես էլ չեմ իմանա նրանց մասին: Ես էլ չեմ լինի»:

Նա նայեց կեշիների շարքին, որ իրենց անշարժ գեղնությամբ կանաչով ու ճերմակ կեղեռվ փայլում էին արեի տակտ «Մեռնել... որպեսզի ինձ սպանեն, վաղը, որպեսզի ես չկինեմ... որպեսզի այս բոլորը լինեն, իսկ ես չինեմ»: Նա կենդանի պատկերացրեց իր բացակայությունն այդ կյանքից: Եվ այդ կեշիներն իրենց լույսերով ու ստվերներով, և այդ գանգուր ամպերը, և խարույների այդ ծուխը — այդ բոլորը փոխակերպվեց նրա համար ու թվաց մի ինչ-որ սարսափելի ու սպառնացող բան: Սարսուռ անցավ նրա մեջրով: Արագորեն վեր է՝ նալով, նա զուրս եկավ սարայից և սկսեց քայլել:

Սարայի ետևից ձայներ լսվեցին:

— Ո՞վ է այդտեղ, — ձայն տվեց իշխան Անդրեյը:

Կարմրագիթ կապիտան Տիմոխինը, Դոլոխովի նախկին վաշտի հրամանատարը, այժմ, սպաների պակասության պատճառով, գումարտակի հրամանատար, վեհերոտ մտավ սարայը: Նրա ետևից ներս մտան գնդի աղյուտանտն ու գանձապահը:

Իշխան Անդրեյը հապճեպ վեր կացավ, լսեց այն, ինչ ծառայության գծով ասելու էին սպաներն իրեն, հազորդեց նրանց մի քանի կարգադրություններ և ուզում էր արձակել նրանց, երբ սարայի ետևից լսվեց ծանոթ շշնչացող մի ձայն:

— Que dia ble! — ասավ մեկը, որ դիպավ ինչ-որ բանի:

Իշխան Անդրեյը, սարայից գուրս նայելով, տեսավ իրեն մոտեցող Պիեռին, որ դիպավ ընկած ձողին և քիչ մնաց ընկները: Իշխան Անդրեյին ընդհանրապես հաճելի չէր տեսնել իր շրջանի մարդկանց, մանավանդ Պիեռին, որ հիշեցնում էր իրեն այն բոլոր ծանր բուդեները, որ ապրել էր ինքը վերշին անգամ Մոսկվա եղած ժամանակի:

— Ա՛, այ թե ինչ, — ասավ նա: — Այդ ինչպես պատահեց: Բոլորովին չէի սպասում:

Այն ժամանակ, երբ նա ասում էր այդ, նրա աշքերում և գեմքի ամբողջ արտահայտության մեջ կար մի լան, որ ավելին էր, քան շորությունը, — թշնամություն կար, որ Պիեռն

<sup>1</sup> Գրողը տանի:

իսկույն նկատեց : Նա սարային մոտենում էր ամենաուրախ, աշխույժ տրամադրությամբ, բայց իշխան Անդրեյի դեմքի արտահայտությունը տեսնելով, նա իրեն ճնշված և անհարմար զգաց :

— Ես եկել եմ... այնպես... գիտեք... եկել եմ... ինձ համար հետաքրքրական է, — ասավ Պիեռը, որ այդ օրն այնքան արդեն կրկնել էր «հետաքրքրական» բառը : — Ուզեցի տեսնել ճակատամարտը :

— Այո, այո, իսկ եղբայր-մասոններն ի՞նչ են ասում պատերազմի մասին : Ինչպես խափանել այն, — ասավ իշխան Անդրեյը հեղնանքով : — Հը Մոսկվան ինչպես է : Ինչպես են իմոնք : Եկա՞ն, վերջապես, Մոսկվա, — հարցրեց նա լրջությամբ :

— Եկել են : Ինձ Ժյուլի Դրուբեցկայան ասավ, Գնացի նրանց մոտ, տանը չէին : Գնացել էին Մոսկվայի մոտի կալվածքը :

## XXV

Սպաներն ուզեցին մնաս բարե ասել, բայց իշխան Անդրեյը, կարծես չկամենալով մնալ իր բարեկամի հետ դեմառեմ, առաջարկեց նրանց նստել և թեյ խմել, Բերին նստարաններ և թեյ : Սպաները ոչ առանց զարմանքի դիտում էին Պիեռի գեր, ահազին կերպարանքը և լսում նրա պատմությունները Մոսկվայի մասին և մեր գորքերի դիրքի մասին, որ նա կարողացել էր տեսնել : Իշխան Անդրեյը լուր էր և նրա դեմքն այնպես անախորժ էր, որ Պիեռը ալվելի դիմում էր գումարտակի հրամանատար Տիմոխինին, քան Բալկոնսկուն :

— Ուրեմն դու հասկացա՞ր, թե մեր գորքերն ինչպես են տեղակրթած, — ընդհատեց նրան իշխան Անդրեյը :

— Այո, այսինքն ի՞նչպես, — ասավ Պիեռը, — որպես ոչ զինվորական մարդ շեմ կարող ասել, թե լիովին, բայց և այնպես հասկացա ընդհանուր դիրքը :

— Eh bien, vous êtes plus avancé que qui cela soit<sup>1</sup>, — ասավ իշխան Անդրեյը :

<sup>1</sup> Է՛, ուրեմն դուք ազելին գիտեք, քան որևէ մեկը :

— Ա՛, — ասավ Պիեռը տարակուսանքով, ակնոցի միջից իշխան Անդրեյին նայելով : — Է, դուք ի՞նչ կասեք կուտուզովի նշանակման մասին, — ասավ նա :

— Այդ նշանակումն ինձ շատ ուրախացրեց . ահա բոլորը, ինչ գիտեմ, — ասավ իշխան Անդրեյը :

— Հապա ասացեք ի՞նչ է ձեր կարծիքը Բարկլայ-դե Տոլլիի մասին : Մոսկվայում աստված գիտե ինչեր էին խոսում նրա մասին : Դուք ի՞նչ եք կարծում :

— Հարցրու ա'յ դրանց, — ասավ իշխան Անդրեյը, սպաներին ցույց տալով :

Պիեռը ներողամիտ հարցական ժպիտով, որով ակամա բոլորը դիմում էին Տիմոխինին, նայեց նրան :

— Օր ու արև տեսանք, ձերդ պայծառափայլություն, երբ գերապայծառն եկավ, — վեհերոտ, և անդադար իր գնդի հրամանատարին նայելով, ասավ Տիմոխինը :

— Ինչո՞ւ է այդպես, — հարցրեց Պիեռը :

— Այ թեկուզ վերցնենք, ասեմ ձեզ, փայտոն ու կիրը, Մենք Սվենցյանից նահանջեցինք չեմ, չհամարձակվեք, ասում են, մի փայտի կտորի կամ մի խոտի, կամ մի այլ բանի ձեռ տալ, Չէ որ մենք հեռանում ենք, երան է մնալու, այնպես չի, ձերդ պայծառափայլություն, — դիմեց նա իր իշխանին, — իսկ դու՝ մի՛ համարձակվի : Մեր գնդում երկու սպայի դատի տվին այդպես բաների համար : Է, հենց որ գերապայծառը գործի անցավ, այդ բաները հեշտացան : Օր ու արև տեսանք...

— Նա ինչո՞ւ էր արգելում որ:

Տիմոխինը շփոթված շուրջը նայեց, շհասկանալով ինչպես և ինչ պատասխանել այդ հարցին : Պիեռը նույն հարցով դիմեց իշխան Անդրեյին :

— Որպեսզի շքայքայնք այն երկիրը, որ թողնում էինք թշնամուն, — շարությամբ-հեղնանքով ասավ իշխան Անդրեյը : Դա շատ հիմնավոր բան է . Ճի կարելի կողոպտել երկիրը և զորքերին սովորեցնել կողոպուտի : Է, Սմոլենսկում էլ նա նույնպես ճիշտ դատեց, թե ֆրանսացիները կարող են անցնել մեր թիկունքը և թե նրանք ավելի ուժեր ունեն : Բայց նա չկարողացավ հասկանալ այն, — հանկարծ կարծես դուրս պրծած բարակ ծայնով ճշաց իշխան Անդրեյը, — բայց նա լիարողացավ հասկանալ, որ մենք առաջին անգամն էինք

Կովում այնտեղ ոռւս երկրի համար, որ զորքերի մեջ այնպիսի ողի կար, որպիսին ես երբեք չեմ տեսել, որ մենք երկու օր շարունակ ետ էինք մղում ֆրանսացիներին և որ այդ հաջողությունը տասնապատկում էր մեր ուժը։ Նա հրամայեց նահանջել, և բոլոր ջանքերն ու կորուստներն իզուր անցան։ Նա գավաճանության մասին չեր մտածում, նա աշխատում էր ամեն ինչ անել որքան կարելի է ավելի լավ, նա ամեն ինչ կը ռադատեց։ բայց հենց դրա համար էլ նա անպետք է։ Նա անպետք է այժմ հենց այն պատճառով, որ ամեն ինչ կշռադատում է շատ հիմնավորապես ու մանրակրկիտ, ինչպես և վայել է ամեն մի գերմանացու։ Ինչպես ասեմ քեզ... է, ասենք հայրդ գերմանացի լակեյ ունի, և նա հիանալի լակեյ է, և նա հորդ բոլոր կարիքները կբավարարի, ավելի լավ, քան դու, և թող ծառայի. բայց եթե հայրդ մահամերձ հիվանդ՝ դու կվոնդես լակեյին և քո անվարժ, անշնորհք ձեռներով կսկսես խնամել հորդ և ավելի լավ կհանգստացնես նրան, քան հմուտ, բայց օտար մարդը։ Այդպես էլ վարվեցին Բարկլայի հետ։ Քանի Ռուսաստանն առողջ էր, նրան կարող էր ծառայել օտարը, և հիանալի մինիստր էր. բայց երբ երկիրը վտանգի մեջ է, հարկավոր է իր, հարազատ մարդը։ Իսկ ձեր ակումբում հնարել են թե նա գավաճան է։ Այն, որ նրան զրպարտեցին դավաճան անվանելով, գրանով միայն այն կանեն, որ հետո ամաշելով իրենց սուստ մեղադրանքից, դավաճանից կդարձնեն հանկարծ հերոս կամ հանճար, որ ավելի ևս անարդարացի կլինի։ Նա ազնիվ և շատ ճշտապահ գերմանացի է...»

— Սակայն, ասում են, նա հմուտ զորավար է, — ասավ Պիեռը։

— Ես չեմ հասկանում, թե ի՞նչ է նշանակում հմուտ զորավար, — հեգնանքավ ասավ իշխան Անդրեյը։

— Հմուտ զորավար, — ասավ Պիեռը, — է, այն մարդը, որ նախատեսել է բոլոր պատհականությունները... է, ասենք գուշակել է թշնամու դիտավորությունները։

— Բայց դա անհնար է, — ասավ իշխան Անդրեյը, կարծես վաղուց վճռված հարցի մասին։

Պիեռը զարմանքով նայեց նրան։

— Սակայն, — ասավ նա, — չէ ոք ասում են պատերազմը նման է շախմատի խաղի։

— Այո, — ասավ իշխան Անդրեյը, — միայն այն փոքրիկ տարրերությամբ, որ շախմատում յուրաքանչյուր քայլի վրա դու կարող ես մտածել, որքան ուզում ես, որ դու այնտեղ ժամանակի պայմաններից դուրս ես, ինչպես նաև այն տարրերությամբ, որ ձին միշտ ուժեղ է հետեւակից և երկու հետեւակը միշտ ավելի ուժեղ են մեկից, իսկ պատերազմում մի գումարտակն երբեմն ավելի ուժեղ է դիվիզիայից, իսկ երբեմն վաշտից ավելի թուլլ։ Զորքերի հարաբերական թիվը շի կարող ոչ ոքի հայտնի լինել։ Հավատա ինձ, — ասավ նա, — որ եթե որևէ բան կախված լիներ շտաբների կարգադրություններից, ապա ես կլինեի այնտեղ և կարգադրություններ կանեի, բայց դրա փոխարեն ես պատիվ ունեմ ծառայել այստեղ, դնդում, այ այս պարուների հետ, և կարծում եմ, որ իսկապես մեզանից կախված կլինի վաղվան օրը, այլ ոչ թե նրանցից... հաջողությունը երբեք կախված շի եղել և շի լինի ո՛չ դիրքերից, ո՛չ սպառազինումից, ո՛չ անգամ քանակից։ Իսկ ավելի քիչ արդին դիրքերից։

— Բայց ինչից։

— Այն զգացումից, որ կա իմ մեջ, նրա մեջ, — նա ցույց տվեց Տիմոփինին, — յուրաքանչյուր զինվորի մեջ։

Իշխան Անդրեյը նայեց Տիմոփինին, որ վախեցած ու տարակուսելով նայում էր իր հրամանատարին։ Հակառակիր նախկին զսպված լոռության, իշխան Անդրեյն այժմ հուզված էր թվում։ Նա, ըստ երևույթին, չկարողացավ պահել իրեն՝ արտահայտելու այն մտքերը, որ անսպասելի եկել էին նրա գոլխում։

— Ճակատամարտը կշահի նա՛, ո՛վ հաստատապես որոշել է շահել այն։ Ինչո՞ւ Առւտերլիցի մոտ տանուլ տվինք ճակատամարտը։ Մեր կորուստները գրեթե հավասար էին ֆրանսացիներին, բայց մենք շատ վաղ ասացինք մեզ, որ մենք ճակատամարտը տանուլ ենք տվել, և տանուլ տվինք։ Իսկ մենք այդ ասացինք այն պատճառով, որ մենք այնտեղ կովելու կարիք չունենք, ուզում ենք որքան կարելի է շուտ հեռանալ ճակատամարտի դաշտից։ «Տանուլ ենք տվել — և ուրեմն փախչենք», մենք էլ փախանք։ Եթե մինչև երեկո մենք այդ շասինք, աստված գիտե թե ինչ կլիներ։ Իսկ վաղը մենք այդ շենք ասի։ Դու ասում ես, մեր դիրքերը, ձախ թեր թուլլ է,

աղ թել ձգված է, — շարունակեց նա, — այդ բոլորը դատարկ բան է, այդպիսի բան չկա: Իսկ վաղն ի՞նչ է սպասում մեզ. հարյուր միլիոն ամենաբազմապիսի պատահականություններ, որոնք մի ակնթարթում լուծում կտանան նրանով. որ կամ մենք կփախչենք, կամ նրանք, որ կտանեն սրան, մյուսին. իսկ այն ինչ արվում է հիմա — այդ բոլորը խաղ է: Բանն այն է, որ ոչ միայն նրանք, որոնց հետ դու գնացել ես դիրքերը, ոչ միայն չեն աջակցում գործերի ընդհանուր ընթացքին, այլ խանգարում են: Նրանք զբաղված են միայն իրենց մանրիկ շահերով:

— Այսպիսի բոպեի<sup>1</sup>, — կշտամբանքով ասավ Պիեռը:

— Այսպիսի բոպեի, — կրկնեց իշխան Անդրեյը, — նրանց համար սա այնպիսի բոպե է միայն, երբ կարելի է քանդել թշշնամու ոտի տակի հողը և ստանալ մի ավելորդ խաչիկ կամ ժապավենիկ: Ինձ համար վաղն ա՛յ ինչ է. հարյուր հազարանոց ուսական և հարյուր հազարանոց ֆրանսական զորքերը հանդիպում են կովելու, և փաստն այն է, որ այդ 200 հազարը կովում են, և ո՛վ ավելի կատաղությամբ կովի ու իրեն թիւ խնայի, նա՝ հհաղթի: Եվ կուզես ես քեզ ասեմ, որ ինչ էլ լինի այնտեղ, ի՞նչ էլ խճճեն այնտեղ՝ վերեւում մենք ճակատամարտը շահում ենք վաղը: Վաղը, ինչ էլ լինի, մենք կշահենք ճակատամարտը:

— Այս, ձերդ պայծառափայլություն, ճիշտ է. իսկական ճշմարտություն, — խոսեց Տիմոխինը, — էլ հիմա ինչը է խընայինք մեզ: Իմ գումարտակի զինվորները, կհավատա՞ր արդյոք, էլ օդի շխմեցին. Էնպես օր չի, ասում են:

Բոլորը լոեցին: Սպաները վեր կացան: Իշխան Անդրեյը նրանց հետ միասին դուրս եկավ սարայի հտեղ, տալով վերշին հրամանները ադյուտանտին: Երբ սպաները գնացին, Պիեռը մոտեցավ իշխան Անդրեյին և հենց այն է ուզում էր զրույց սկսել, երբ սարայից ոչ հեռու՝ ճանապարհին տրոփեցին երեք ձիու սմբակներ և այդ ուղղությամբ նայելով, իշխան Անդրեյը ճանաշեց Վոլցովենին Կլաուզեկիցի հետ, որոնց ուղեկցում էր մի կազակ: Նրանք անցան մոտիկից, շարունակելով զրույցել, և Պիեռն ու Անդրեյն ակամա լսեցին հետեւալ խոսքերը.

— Der Krieg muss im Raum verlegt werden. Der Ansicht kann ich nicht genug Preis geben<sup>1</sup>, — ասում էր մեկը:

— Օ, յա, — ասավ մյուս ձայնը, — der Zweck ist nur den Feind zu schwächen, so kann man gewiss nicht den Verlust der Privat-Personen in Achtung nehmen<sup>2</sup>.

— Օ, յա<sup>3</sup>, — հաստատեց առաջին ձայնը:

— Այս, իմ Ռայ վերlegen<sup>4</sup>, — կրկնեց, քթովը շարությամբ փնչացնելով, իշխան Անդրեյը, երբ նրանք անցան զրնացին: — իմ Ռայ<sup>5</sup> մնացին հայրս ու որդիս, և քույրս կիսին Գորիում: Այդ նրա համար միևնույն է: Ահավասիկ այն, ինչ քեզ ասում էի, — այդ գերմանացի պարոնները վաղը ճակատամարտ չեն շահի, այլ միայն կփշացնեն, որքան ուժ ունենան. որովհետև նրա գերմանական զլխում միայն դատողություններ կան, որ կորեկի արժեք չունեն, իսկ սրաներում շնային, ինչ միայն և պետք է վաղվան համար, — ա՛յն, ինչ կա Տիմոխինի մեջ: Դրանք ամբողջ Եվրոպան տվել են նրան և էկել են մեզ սովորեցնելու — հիանալի<sup>6</sup> ուսուցիչներ, — նորից ճղճղաց նրա ձայնը:

— Ուրեմն դուք կարծում եք, որ վաղը ճակատամարտը կշահենք, — ասավ Պիեռը:

— Այս, այս, — ցրված ասավ իշխան Անդրեյը: — Մի բան, որ ես կանեի, եթե իշխանություն ունենայի, — սկսեց նա կրկին, — այդ այն է, ես գերի չեմ վեցնի: Ի՞նչ է նշանակում գերիներ: Դա ասպետություն է: Ֆրանսացիները ավերել են իմ տունը և գնում են ավերելու Մոսկվան. վիրավորել ու վիրավորում են ինձ ամեն վայրկյան: Նրանք իմ թշնամիներն են, նրանք բոլորը ոճրագործներ են, իմ համկացողությամբ: Այսպես է մտածում թե՛ Տիմոխինը, թե՛ ամբողջ բանակը: Նրանց պետք է պատժել: Եթե նրանք իմ թշնամիներն են,

<sup>1</sup> Պատերազմը պետք է փոխադրվի բաց տարածության վրա: Ես չեմ կարող պարծենալ այդպիսի կարծիքով:

<sup>2</sup> Թ, այս, որովհետև նպատակը միայն է, որ թուրացնեն թշնամուն, ապա, իհարկե, չի կարելի ուշադրություն առնել մասնավոր անձերի կորուսը:

<sup>3</sup> Թ, այս:

<sup>4</sup> Այս, փոխադրել բաց տարածության վրա:

<sup>5</sup> Տարածության մեջ:

շեն կարող բարեկամ լինել, որքան էլ նրանք խոսեն այնտեղ  
Տիգիտում:

— Այո, այո, — խոսեց Պիեռը, փայլող աշքերով նայելով  
իշխան Անդրեյին, — ես միանդամա՛յն համաձայն եմ ձեզ:

Այն հարցը, որ Մոժայկի սարից սկսած և ամբողջ այդ օրն  
անհանգուացնում էր Պիեռին, այժմ նրան պատկերացավ բո-  
լորովին պարզ ու լիովին լուծված: Նա հիմա ըմբռնեց այս  
պատերազմի և առաջիկա ճակատամարտի բովանդակ իմաստն  
ու ամբողջ նշանակությունը: Այն ամենը, ինչ նա տեսել էր  
այդ օրով, գեմքերի այն նշանակալի, խիստ արտահայտություն-  
ները, որ նա տեսել էր անցողակի, լուսավորվեցին նրա համար  
նոր լույսով: Նա հասկացավ հայրենասիրության այն թաքուն  
(latente), ինչպես ասվում է Փիդիկայում, ջերմությունը, որ  
կար բոլոր այն մարդկանց մեջ, որոնց տեսել էր, և որը բացա-  
տրեց նրան այն, թե ինչո՞ւ այդ մարդիկ հանգիստ և կարծես  
թեթևամտորեն պատրաստվում էին մահվան:

— Գերիներ շվերցնել, — շարունակեց իշխան Անդրեյը: —  
Միայն այդ կփոխեր պատերազմի ողջ բնույթը և կդարձներ այն  
ավելի քիչ դաժան: Թե չէ մենք պատերազմ էինք խաղում —  
այ ի՞նչն է վաս. մենք մեծահոգություն ենք անում և այլն:  
Այդ մեծահոգություն անելն ու զգայնությունը նման է այն  
տիրունու մեծահոգության ու զգայնության, որ ուշաթափվում  
է, երբ մորթվող հորթ է տեսնում. նա այնքան բարի է, որ չի  
կարող արյուն տեսնել, բայց ախորժակով ուտում է այդ հորթը  
սոսուսի: Մեզ ասում-խոսում են պատերազմի իրավունք-  
ների մասին, ասպետության մասին, բանագնացության մա-  
սին, թշվառներին խնայելու և այլն: Այդ բոլորը դատարկ բան  
է: 1805 թվին ես տեսել եմ ասպետություն, բանագնացություն,  
նրանք մեզ էին խարում, մենք նրանց: Կողոպտում են ուրիշի  
տները, տպում-տարածում են կեղծ թղթագրամներ, և ամենից  
վատթարը — սպանում են երեխաներիս, հորս և խոսում են  
պատերազմի կանոնների և դեպի թշնամին մեծահոգի լինելու  
մասին: Գերիներ շվերցնել, այլ սպանել և գնալ մեռնելու:  
Ով սրան հասել է այնպես, ինչպես ե՛ս, նույն տառապանք-  
ներով...

Իշխան Անդրեյը, որ կարծում էր, թե իր համար միևնույն  
է — կվերցնեն արդյոք թե շեն վերցնի Մոսկվան այնպես,

ինչպես վերցրին Մոլենսկը, հանկարծ իր ճառի կիսին կանգ  
առավ անսպասելի ջղաձգությունից, որ բռնել էր նրա կոկորդը:  
Նա մի քանի անգամ գնաց-եկավ անխօս, բայց աշքերը փայ-  
լում էին տենդագին, և շուրթը դողում էր, երբ նորից սկսեց  
խոսել.

— Եթե մեծահոգություն անելը չիներ պատերազմում,  
ապա մենք կոկի կերթայինք միայն այն ժամանակ, երբ արժի  
գնալ ու մեռնել, ինչպես այժմ: Այն ժամանակ էլ պատերազմ  
չէր լինի այն բանի համար, թե Պավել Իվանիչը վիրավորել է  
Միխայիլ Իվանիչին: Իսկ եթե պատերազմ է, ինչպես այժմ,  
ուրեմն և պատերազմ է: Այն ժամանակ էլ զորքերի տրամադրու-  
թյունն ու եռանդն այն չէին լինի, ինչպես այժմ: Այն ժամանակ  
այդ բոլոր վեսաֆալցիներն ու հեսսենցիները, որոնց բերում է  
Նապոլեոնը, նրա ետևից Ռուսաստան չէին գա, և մենք էլ  
չէինք գնա Ավստրիա ու Պրուսիա կովելու, ինքնիրս էլ շիմա-  
նալով ինչ համար: Պատերազմը սիրալիրություն չի, այլ  
ամենազազիր գործն է կյանքում. և պետք է հասկանալ այս,  
ու պատերազմ շխաղալ: Պետք է խստությամբ ընդունել այս  
ահավոր անհրաժեշտությունը: Ամբողջ խնդիրը հետևյան է.  
դեն նետել կեղծիքը, և ասել՝ պատերազմը պատերազմ է,  
այլ ոչ թե խաղալիք: Թե չէ պատերազմը — պարապ ու թե-  
թեսմիտ մարդկանց սիրած խաղն է: Զինվորական դասը —  
ամենապատվավորն է:

— Իսկ ի՞նչ բան է պատերազմը, ի՞նչ է հարկավոր  
ուազմական գործում հաջողելու համար, ի՞նչ բարքերի տեր է  
զինվորականների հասարակությունը: Պատերազմի նպատակը՝  
սպանությունն է, պատերազմի գործիքը՝ լրտեսությունը,  
դավաճանությունը և դրա խրախուսումը, բնակիչներին ավե-  
րելը, կողոպտելը կամ բանակի պարենավորման համար գո-  
ղանակն ու հափշտակելը. խարեբայությունն ու կեղծիքը,  
որ կոչվում են ուազմական խորամանկություններ. զինվորա-  
կան դասի բարքերը — ազատուէյն բացակայության, այ-  
սինքն՝ դիսցիպլինա, պարապություն, տգիտություն, դա-  
ժանություն, անառակություն, հարեցողություն: Եվ չնա-  
յած այս բոլորին, դա — բարձրագույն դաս է, բոլորից հարգ-  
ված: Բոլոր թագավորները, բացի շինական թագավորից,

զինվորական մունդիր են Հագնում, և նրանք, ո՞վ ավելի շատ ժողովուրդ է սպանել, տալիս են ամենամծծ պարզեցը:

... Կգան հանդիպեն, ինչպես վաղը, միմյանց սպանելու համար, կկոտորեն, խեղանդամ կանեն տասնյակ հազարավոր մարդիկ, իսկ հետո գոհաբանական մաղթանք կկատարեն նրա՝ համար, որ շատ մարդ են կոտորել (որոնց թիվը դեռ ավելացնում են), և հաղթություն են հոշակում, կարծելով, թե որքան մարդ շա՛տ է սպանված, ծառայությունն այնքան ավելի մեծ է: Ինչպես է ասոված այնտեղից նայում ու լուսում դրանց, — բարակ, ծփծվան ձայնով ճշաց իշխան Անդրեյը: — Ախ, հոգիս, վերջերս կյանքը ծանրացել է ինձ համար: Տեսնում եմ, որ ակսել եմ շատ բան հասկանալ: Բայց շարժի, որ մարդ ճաշակի շարի և բարու իմացության ծառից... է՛, երկար չի տեսի, — ավելացրեց նա: — Բայց դու քնար ես, իմ էլ ժամանակն է, գնա Գորկի, — հանկարծ ասավ իշխան Անդրեյը:

— Օ, ո՞չ, — պատասխանեց Պիեռը վախեցած-ցավակից աշքերով նայելով իշխան Անդրեյին:

— Գնա, գնա, ճակատամարտից առաջ պետք է կուշտ քնել, — կրկնեց իշխան Անդրեյը:

Նա արագ մոտեցավ Պիեռին, գրկեց նրան և համբուրեց:

— Գնաս բարով, գնա՝, — ճշաց նա: — Կտեսնվե՞նք արդյոք, ոչ... — և նա, հապճեպ շուր գալով, գնաց սարայը:

Մութին էր արդեն, և Պիեռը չկարողացավ տեսնել իշխան Անդրեյի դեմքի արտահայտությունը — շա՞ր էր այն արդյոք, թե՝ քնքուշ:

Պիեռը մի քանի րոպե կանգնեց անխոս, մտածելով գնա՝ լարդյոք նրա ետևից, թե մեկնել տուն: — Ո՞չ, նրան հարկավոր չէ, — որոշեց Պիեռն ինքն իրեն, — և ես գիտեմ, որ սա մեր վերջին տեսակցությունն է»: Նա ժանր հառաջեց և գնաց ետ Գորկի:

Իշխան Անդրեյը, սարայ վերադառնալով, պառկեց գորգի վրա, բայց չկարողացավ քնել:

Նա աշքերը փակեց: Մտապատկերները հաջորդում էին մեկը մյուսին: Մեկի վրա նա երկար, ուրախությամբ կանգ առավ: Նա կենդանի կերպով հիշեց մի երեկո Պետերբուրգում: Նատաշան աշխույժ, հուզված դեմքով պատմում էր նրան, թե ինչպես

— 272 —

ինքը անցած ամառ, սունկի գնացած ժամանեակ, մորդութիւնը էր անտառում: Նա անկապ նկարագրում էր իշխան Անդրեյին և՝ անտառի խորքը, և՝ իր զգացումները, և՝ իր խոսակցությունը մեղվապահի հետ, որին հանդիպել էր, և, ամեն բոպե իր պատմությունն ընդհատելով, ասում էր. «Ոչ, չեմ կարող, ես այնպես չեմ պատմում, ոչ, դուք չեք հասկանում», չնայած որ իշխան Անդրեյը հանգստացնում էր նրան, ասելով, թե հասկանում է, և իսկապես հասկանում էր այն բոլորը, ինչ նա ուզում էր ասել: Նատաշան դժգոհ էր իր խոսքերից, — նա զգում էր, որ չի ըստացվում այն բուռն բանասեղծական զգացումը, որ ապրել էր նա այդ օրը և որը նա ուզում էր դրսեորել: «Դա մի այնպիսի սքանչելիք էր այդ ժերունին, և անտառում այնպես մութ էր... ու այնպես բարի էին նրա... ոչ, ես չեմ կարողանում պատմելու: ասում էր նրան, կարմրելով ու հուզվելով: — Իշխան Անդրեյն այժմ ժպտաց նույն այն խնդրագին ժպիտով, որով ժպտացել էր այն ժամանակ, նրա աշքերին նայելով: «Ես հասկանում էի նրան, — մտածում էր իշխան Անդրեյը: — Ոչ միայն հասկանում, այլ հենց այդ հոգեկան կորովը, այդ անկեղծությունը, այդ սրտաբացությունը հենց նրա այդ հոգին, որին կարծես կաշկանդում էր մարմինը, հենց այդ հոգին սիրեցի նրա մեջ... այնպես ուժգին, այնպես երջանկորեն սիրեցի: — Ու հանկարծ նա հիշեց, թե ինչով վերջացավ իր սերը: — Նրան ոչ մի այդպիսի բան հարկավոր չէր: Նա բնավ այդպիսի բան չէր տեսել ու չէր հասկանում: Նա նրա մեջ տեսնում էր լավիկ ու բարմ մի աղջիկ, որի հետ արժանի չէր համարում կապել իր բախտը: Իսկ ե՞ս... Ու մինչև այսօր նա կենդանի է և ուրախու:

Իշխան Անդրեյը, կարծես մեկը դաղեց նրան, վեր թռավ ու սկսեց նորից գնալ-գալ սարայի առջեւ:

## XXVI

Օգոստոսի 25-ին, Բորոդինոյի ճակատամարտի նախօրեին, ֆրանսացիների կայսեր պալատի պետքեկտ ու-ը de Beauvau և գնդապետ Բանվետ-ն եկան, առաջինը Փարիզից, երկրորդը Մադրիդից, նապոլեոն կայսեր մոտ՝ նրա կալանք, որ գտնվում էր Վալումոյի մոտ:

— 273 —

Զգեստները փոխելով ու պալատական մունդիր հագնելով  
տ-ր Ռե Beausset-ը կարգադրեց իր առջևից տանել կայսեր հա-  
մար բերած ծանրոցը և մտավ նապոլեոնի վրանի առաջին բա-  
ժինը, ուր խոսակցելով իրեն շրջապատող՝ նապոլեոնի աղյու-  
տանտների հետ, զրայվեց արկղը բանալով:

Քահնիք-ը, վրան չմտնելով, կանգ առավ մուտքի առ-  
չե, գիներալների հետ գրուցելով:

Նապոլեոն կայսրը զեր դուրս չէր եկել իր ննջարանից և  
կերչացնում էր իր առուակետը: Նա, փնջացնելով ու տնքալով,  
մերթ հաստ մեջքով, մերթ մազակալած ու ճարպուտ կրծքով  
գառնում էր խողանակի տակ, որով կամերդիները շփում էր  
նրա մարմինը: Մյուս կամերդիները, սրվակի բերանը մատով  
պահած, օդեկոլոն էր սրսկում կայսեր լավ խնամված մարմնին  
մի այնպիսի արտահայտությամբ, որն ասում էր, թե միայն  
նա կարող է իմանալ, թե որտեղ և ինչքան պետք է օդեկոլոն  
ցանել: Նապոլեոնի կարճ մագերը թաց էին և խոնված ճակատի  
վրա: Բայց նրա դեմքը, թեև ուռած ու դեղնած, արտահայտում  
էր ֆիզիկական գոհունակություն: «Allez ferme, allez tou-  
jours...»<sup>1</sup>, կուշ գալով ու տնքալով ասում էր նա շփող կամեր-  
դիներին: Աղյուտանտը, որ մտավ ննջարանը՝ կայսեր զեկու-  
ցելու, թե երեկվա կովում որքան գերիներ են վերցրել, ու հայտ-  
նելով այն, ինչ հարկավոր էր, կանգնեց դռան մոտ, գնալու թույլ-  
տության սպասելով: Նապոլեոնը, դեմքը կնճոտելով, հոն-  
քերի տակից նայեց աղյուտանտին:

— Point de prisonniers, — կրկնեց նա աղյուտանտի խոս-  
քերը: — Il se font démolir. Tant pis pour l'armée russe, —  
ասավ նա: — Allez toujours allez ferme<sup>2</sup>, — ավելացրեց նա  
կունալով ու ճարպուտ ուսերը դեմ անելով:

— C'est bien! Faites entrer m-r de Beausset, ainsi que  
Քահնիք<sup>3</sup>, — ասավ նա աղյուտանտին, գլխով անելով:

— Oui, Sire<sup>4</sup>, — և աղյուտանտը շքացավ վրանի դռան մեջ:  
Երկու կամերդիներները արագ-արագ հագցրին նորին մե-

ծությանը, և նա գվարդիական կապույտ մունդիրով, հաստա-  
տուն արագ քայլերով դուրս եկավ ընդունարանը:

Բոսսեն ալդ ժամանակ ձեռներով շտապում էր կայսրությու-  
թերած նվերը տեղավորել երկու աթոռի վրա, ուղղակի թա-  
գավորի ներս մտնելուց առաջ: Բայց կայսրն այնպես անսպա-  
սելի շուտ հագնվեց ու դուրս եկավ, որ նա չկարողացավ սյուրպ-  
րիզը լիովին պատրաստել:

Նապոլեոնն անմիջապես նկատեց այն, ինչ անում էին նը-  
րանք, և կուահեց, որ նրանք տակավին պատրաստ չէին: Նա  
շուզեց նրանց գրկել իրեն սյուրպարիզ անելու բավականությու-  
նից: Նա ձեացրեց, թե պարոն Բոսսենին չի տեսնում, ու իր մոտ  
կանչեց Ֆարվիին: Նապոլեոնը, խիստ խոժոռած ու անխոս,  
լսում էր այն, ինչ ասում էր Ֆարվիին նրա զորքերի քաշու-  
թյան ու անձնվիրության մասին, որոնք կովում էին Սալա-  
մանկայում, եկրոպացի մյուս ծայրում, և որոնք միայն մի  
մտածում ունեին — արժանի լինել իրենց կայսեր, և մի վախի —  
հանկարծ զգոհացնեն նրան: Ծակատամարտի արդյունքը տը-  
խուր էր: Նապոլեոնը հեգնական դիտողություններ էր անում  
Ֆարվիի պատմելու ժամանակ, կարծես թե նա չէր էլ կարծում,  
թե կոփը կարող էր այլ կերպ ընթանալ իր բացակայությամբ:

— Ես պետք է շտկեմ այդ Մոսկվայում, — ասավ նապո-  
լեոնը: — Ա տատօն (ցտեսություն), — ավելացրեց նա և մոտ  
կանչեց դե-Բոսսենին, որն այդ ժամանակ կարողացել էր արդեն  
սյուրպարիզը պատրաստել, զնելով ինչ-որ մի բան աթոռների  
վրա և ինչ-որ բան ծածկոցով ծածկելով:

Դե-Բոսսեն խոնարհ գլուխ տվեց ֆրանսական պալատա-  
կան այն խոնարհումով, որով կարողանում էին գլուխ տալ  
միայն Բուրբոնների հին սպասավորները, և մոտեցավ, ծրաբը  
մատուցելով:

Նապոլեոնն ուրախ դարձավ նրան և ականջը քաշեց:

— Դուք շտապել եք, շատ ուրախ եմ: Է, Փարիզն ի՞նչ է  
ասում, — ասավ նա, հանկարծ իր առաջակա խիստ արտահայ-  
տությունը դարձնելով սիրալիր:

— Sire, tout Paris regrette votre absence<sup>1</sup>, — ինչպես  
հարկն է, պատասխանեց դե-Բոսսեն:

<sup>1</sup> Շփր. լավ շփր.

<sup>2</sup> Գերիներ շպան: Նրանք մեւ ստիպում են ոչնչացնել նրանց: Ավելի զատ  
առա բանակի համար: Քսիր, պինդ բսիր:

<sup>3</sup> Լա՛վ: Ներս թուիք պ. դե-Բոսսենին և Ֆարվիին նույնպես:

<sup>4</sup> Հում եմ, ձերդ մեծություն

Բայց թեև Նապոլեոնը գիտեր, որ Բոսսեն պետք է ասեր այդ կամ դրա նման մի բան, թեև նա իր պայծառության րոպե-ներին գիտեր, որ դա ճիշտ չէ, նրան հաճելի էր լսել այդ գե-ք ոսսեից։ Նա նորից արժանացրեց նրան՝ ականջը քաշելու։

— Je suis fâché de vous avoir fait faire tant de che-  
min<sup>1</sup>, — ասավ նա։

— Sire! Je ne m'attendais pas à moins qu'à vous trou-  
ver aux portes de Moscou<sup>2</sup>, — ասավ Բոսսեն։

Նապոլեոնը ժպտաց և, ցրված՝ գլուխը բարձրացնելով, նայեց դեպի այս Աղյուսանտը սահուն քայլով մոտեցավ քը-  
թախոտի ոսկե տուփը ձեռին և մոտեցրեց նրան։ Նապոլեոնը վերցրեց այն։

— Այո, լավ եղավ ձեզ համար, — ասավ նա, քթախոտի բաց արած տուփը քիթն մոտեցնելով, — դուք ճամփորդել սի-  
րում եք, երեք օրից հետո դուք կտեսնեք Սոսկվան։ Դուք երեկի, չէիք սպասում ասիական մայրաքաղաք տեսնել։ Դուք հաճելի ճանապարհորդություն կկատարեք։

Բոսսեն շնորհակալությամբ գլուխ խոնարհեց այդ՝ դեպի իր (մինչ այժմ իրեն անհայտ) ճանապարհորդելու հակումը ցույց տված ուշագրության համար։

— Ա՛, սա ի՞նչ է, — ասավ Նապոլեոնը, նկատելով, որ բո-  
լոր պալատականները նայում են ինչ-որ բանի, որ ծածկոցի տակ էր։

Բոսսեն պալատականի ճարպկությամբ, առանց մեջքը ցույց տալու, կիսաշրջան երկու քայլ արավ դեպի ետ և միե-  
նույն ժամանակ ծածկոցը քաշելով՝ ասավ։

— Զերդ մեծությանը նվեր կայսրուհուց։

Դա վառ գուներով ժերարի կողմից նկարված պատկերն էր Նապոլեոնից և ավստրիական կայսրուհու աղջկանից ծնված տղայի, որին չգիտես ինչո՞ւ բուռը Հոռմի թագավոր էին կո-  
չում։

Հստ ամենայնի գեղեցիկ, գանգրահեր այդ փոքրիկ տղան, որի նայվածքը նման էր Սիբարինյան մաղոննայի Քրիստոնի

նայվածքին, նկարված էր բիլբոկի խաղալիս։ Գնդակը ներկա-  
յացնում էր երկրագունդը, իսկ մյուս ձեռի ձողիկը՝ գայի-  
սոնը։

Թեև բոլորովին էլ պարզ չէր, թե հատկապես ի՞նչ է ցան-  
կացել արտահայտել նկարից, ներկայացնելով այսպես ան-  
վանված Հոռմի թագավորին ձողիկով երկրագունդը ծակելիս,  
բայց այս այլաբանությունը նույնպես, ինչպես Փարիզում  
այդ պատկերը տեսնողներին, այնպես էլ Նապոլեոնին, ըստ  
երկութիւն, թվաց պարզ և շատ գուր եկավ։

— Roi de Rome<sup>1</sup> — ասավ նա, ձեռի գեղեցիկ շարժումով  
պատկերը ցույց տալով։ — Admirable!<sup>2</sup>

Իտալացիներին հատուկ դեմքի արտահայտությունը քր-  
մահաճորեն փոխելու ընդունակությամբ նա մոտեցավ պատ-  
կերին և խոհուն քնքշանքի տեսք ընդունեց։ Նա զգում էր, թե  
այն, ինչ անելու է այժմ — պատմություն է։ Եվ նրան թվում  
էր, թե լավագույնը, ինչ նա կարող է անել այժմ, — դա այն է.  
որ նա իր վեհությամբ, որի հետևանքով որդին բիլբոկի էր  
խաղում երկրագունդով, որ նա այդ վեհությանը հակառակ  
ամենապարզ հայրական քնքշանքը ցույց տա։ Նրա աշքերը  
մշուշվեցին, նա շարժվեց, ետ նայեց աթոռին (աթոռը թուավ  
նրա տակ) և նա նստեց նրա վրա՝ պատկերի դիմաց։ Նա մի  
շարժում արավ — և բոլորը ոտների ծայրերի վրա դուրս  
գնացին, թողնելով նրան՝ մեծ մարդուն՝ իր զգացումների  
հետ։

Մի որոշ ժամանակ նստելով և, ինքն էլ շիմանալով ինչ  
համար, ձեռը դիպանելով պատկերի շողուն ներկերի անհարթու-  
թյան, նա վեր կացավ և նորից կանչեց Բոսսեն ու հերթա-  
պահին։ Նա հրամայեց պատկերը դուրս տանել և դնել վրանի  
առջե, որպեսզի վրանի մոտ կանգնած հին գվարդիան շղկվի  
Հոռմի թագավորին, իր պաշտելի թագավորի որդուն ու զա-  
հաժառանգին տեսնելու երջանկությունից։

Ինչպէս և նա սպասում էր, այն ժամանակ, երբ ինքը նա-  
խաճաշում էր պարոն Բոսսենի հետ, որն արժանացել էր այդ  
պատվին, վրանի առաջ լսվում էին պատկերի մոտ հավաքված

<sup>1</sup> Ցագում եմ, որ ստիպեցի ձեզ արդքան հեռու ճանապարհ կտրել։

Խս սպասում էի գտնել ձեզ, թաղավոր, առնվազն Մոսկվայի գրների  
մոտ։

<sup>2</sup> Հոռմի թագավորը։

<sup>3</sup> Սքան, երկ է։

Հին գլարգիւայի սպաների ու զինվորների խանդակառ բացականչությունները.

— Vive l'Empereur! Vive le Roi de Rome! Vive l'Empereur!<sup>1</sup>

Նախաճաշից հետո նապոլեոնը, Բոսսեի ներկայությամբ թե. լոգրեց իր հրամանը բանակին:

— Courte et énergique<sup>2</sup>, — ասավ նապոլեոնը, երբ նա ինքը կարդաց միանգամից, առանց ուղղումների գրված թը. առցիկը: Հրամանում ասված էր.

«Ռազմիկնե՛ր, ահա մի ճակատամարտ, որ դուք այնպես ցանկանում էիք: Հաղթությունը ձեզնից է կախված: Այդ հաղթությունն անհրաժեշտ է մեզ. նա մեզ կտա այն ամենը, ինչ հարկավոր է մեզ, հարմար բնակարաններ և ջուտ վերադարձ գեպի հայրենիք: Կովեցեք այնպես, ինչպես կովեցիք Առևտերլիցի, Ֆրիդլանդի, Վիտեբսկի և Սմոլենսկի մոտ: Թող հետագա սերունդները պարծանքով հիշեն ձեր այսօրվա սիրագործությունները: Եվ ասեն յուրաքանչյուրիդ մասին. նա եղել է մեծ կովում՝ Մոսկվայի տակ»:

— De la Moskowa, --կրկնեց նապոլեոնը և, ճանապարհորդել սիրող պարոն Բոսսեին հրավիրելով իր զբոսանքին, նա վրանից դուրս եկավ՝ դեպի թամբած ձիերը:

— Votre Majesté a trop de bonté<sup>3</sup>, — ասավ Բոսսեն՝ թագավորին ուղեկցելու հրավերի առթիվ. նա ցանկանում էր քնել, և չէր կարողանում ու վախենում էր ձի նստել:

Բայց նապոլեոնը գլխով արագ ճանապարհորդին, և Բոսսեն ստիպված էր ձի նստել: Երբ նապոլեոնը դուրս եկավ վրանից, գվարդիականների բացականշությունները նրա որդու պատկերի առջև էլ ավելի սաստկացան: Նապոլեոնը հոնքերը կիտեց:

— Վերցրեք դրան, — ասավ նա, գեղեցիկ վեհ շարժումով պատկերը ցուց տալով: — Նրա համար դեռ վաղաժամ է տեսնել ճակատամարտի դաշտը:

<sup>1</sup> Կեցցե՛ կայսրը: Կեցցե՛ Հռոմի թագավորը: Կեցցե՛ կայսրը:

<sup>2</sup> Կա՛րճ և կտրուկ:

<sup>3</sup> Դուք շատ բարի եք, ձերդ մեծություն:

Բոսսեն, աչքերը փակելով ու գլուխը խոնարհելով, խոր հոգոց արձակեց, դրանով ցույց տալով, թե ինչպես նա կարողանում է գնահատել և հասկանալ կայսեր խոսքերը:

## XXVII

Օգոստոսի 25-ի այդ ամբողջ օրը, ինչպես ասում են նրա պատմագիրները, նապոլեոնն անց է կացրել ձիու վրա, դիտելով վայրը, քննելով մարշալների ներկայացրած ծրագրները և անձամբ կարգադրություններ անելով իր գեներալներին:

Ռուս զորքերի տեղավորման նախնական գիծը Կոլոչա գետի ուղղությամբ բեկվել էր և այդ զորագծի մի մասը, այն է՝ ուսւների ձախ թեր, Ծեարգինոյի ուղղուար ամսի 24-ին գրավելու պատճառով, ետ էր քաշվել: Զորագծի այդ մասն ամրացած չէր, գետով այլևս պաշտպանված չէր, և միայն նրա առաջ կար ավելի բաց ու հարթ տեղ: Յուրաքանչյուր զինվորականի և ոչ գինվորականի համար ակներեկ էր, որ ֆրանսացիները պետք է հարձակում գործեն զորագծի հենց այդ մասի վրա: Թվում էր, թե դրա համար պետք չէր երկար ու բարակ կշռադատել, պետք չէր այնքան հոգացողություն ու ջանք, որ հանդես էին բերում կայսրն ու իր մարշալները, և բնավ պետք չէ այն հատուկ բարձր ընդունակությունը, որը հանճարեղություն են անվանում և որն այնպես սիրում են վերագրել նապոլեոնին: Բայց այն պատմագիրները, որոնք հետագայում նկարագրել են այդ գետը, և այն մարդիկ, որոնք շրջապատում էին նապոլեոնին, և նա ինքն այլ կերպ են մտածել:

Նապոլեոնը ձիով շրջում էր դաշտում, խոհուն հայաց քով դիտում էր վայրը ինքն իրեն՝ մերթ հավանության, մերթ անվտանության եղանակով օրորում էր գլուխը և առանց իրեն շրջապատող գեներալներին հաղորդակից անելու այն խորախորհուրդ մտքերին, որոնք զեկավարում էին նրա որոշումները, նա միայն կարգադրության ձևով նրանց հայտնում էր իր վերջնական եզրակացությունները: Հսելով էկմյուլի դուրս կոշվող Դավուի այն առաջարկը, թե պետք է անցնել ուսւների ձախ թեր Ֆիկունը, նապոլեոնն ասավ, որ այդ շպետք է անել, առանց բացատրելու, թե ինչու չպետք է այդ անել: Իսկ գեներալ Կոմպանի (որ պետք է հարձակում գործեր ֆր-

լեզների վրա) այն առաջարկին, թե նա նպատակահարմար է գտնում իր դիվիզան անտառով տանել, նապոլեոնը տվեց իր համաձայնությունը, չնայած նրան, որ այսպես անվանյալ էլինգենի դուքսը, այն է՝ նեյր, թույլ տվեց իրեն նկատել որ զորքն անտառով անցկացնելը վտանգավոր է և կարող է կազմալուծել դիվիզիան:

Ըստ դիմուլի ու դուքսի դիմացի վայրը դիտելուց հետո նապոլեոնը որոշ ժամանակ լուր մտածեց և ցույց տվեց այն տեղերը, որտեղ պետք է հետեւյալ օրվա համար երկու մարտկոց տեղավորվեին՝ ուստական ամրությունների դեմ գործելու նըստակով, ինչպես և այն տեղերը, որտեղ նրանց կողքին պետք է տեղավորվեր դաշտային հրետանին:

Այս և այլ կարգադրություններ անելուց հետո նապոլեոնը վերադարձավ իր կայանը, և նրա թելադրությամբ գրվեց ճակատամարտի դիսպոզիցիան:

Այդ դիսպոզիցիան, որի մասին հիացմունքով են խոսում Փրանսական պատմագիրները և խորին հարգանքով՝ մյուս պատմագիրները, հետեւյալն է.

«Լուսաբացին երկու նոր մարտկոց, որ գիշերը տեղավորված էին էկմյուլի իշխանի գրաված դաշտում, կրակ կրանան թշնամու երկու հանդիպակաց մարտկոցների վրա»:

Այդ նույն ժամանակ 1-ին կորպուսի հրետանու պետ գեներալ Պերնետին՝ Կոմպանի դիվիզիայի 30 հրանոթով և Դեսսեի ու Ֆրիհանի դիվիզիաների բոլոր հառություններով առաջ կըշտածվի, կրակ կրանա և նոնակներով կլցնի թշնամու մարտկոցը, որի դեմ կգործեն»

24 հրանոթ՝ գվարդիական հրետանուց,

30 հրանոթ՝ Կոմպանի դիվիզիայից

և 8 հրանոթ՝ Ֆրիհանի և Դեսսեի դիվիզիայից:

Բնդամենը... 62 հրանոթ

3-րդ կորպուսի հրետանու պետ գեներալ Ֆուլեն պետք է 3-րդ և 8-րդ կորպուսների բոլոր հառությունները, ընդամենը 16 հատ, տեղավորի այն մարտկոցի երկու թերություն, որը պետք է գնդակոծի ձախակողմյան ամրությունը, որի դեմ այսպիսով դրված կլինի ընդամենը 40 հրանոթ:

— 280 —

Գեներալ Սորբյեն պետք է պատրաստ լինի առաջին իսկ հրամանով գվարդիական հրետանու բոլոր հառություններով դուրս գալու այս կամ այն ամրության դեմ:

Հրետակոծության ընթացքում իշխան Պոնյատովսկին կրշարժվի դեպի գյուղը, դեպի անտառը և կանցնի թշնամու դիրքերի ետևը:

Գեներալ Կոմպանը կշարժվի անտառով՝ առաջին ամրությանը տիրելու համար:

Այսպիսով կովի բռնվելով՝ կարգադրություններ կարէն թշնամու գործողությունների համեմատ:

Զախ թեում հրետակոծություն կսկսվի այն ժամանակ, հենց որ հրետակոծություն լսվի աջ թից: Մորանի դիվիզիայի և փոխարքայի դիվիզիաների հրաձիգները ուժեղ կրակ կրանան, երբ տեսնեն, որ հարձակում է սկսել աջ թից:

Փոխարքան կգրավի գյուղը<sup>1</sup> և կանցնի նրա երեք կամուրջներով, հավասար բարձրություն պահպանելով Մորանի և Ժերարի դիվիզիաների հետ, որոնք նրա առաջնորդությամբ կշարժվեն դեպի ամրությունները և բանակի մյուս գորքերի հետ միասին կմտնեն մարտագիծը:

Այդ բոլորը պետք է կատարվի կարգով (le tout se fera avec ordre et méthode), ըստ հնարավորության պահեստում գորքեր պահելով:

Կայսերական ճամբար, Մոժայսկի մոտ, 6-ն սեպտեմբերի 1812 թվից:

Այս դիսպոզիցիան, որ գրված է շատ խառն ու անորոշ, եթե թույլ տանք մեզ առանց կրոնական երկյուղածության վերաբերվելու հանճարեղ նապոլեոնի կարգադրություններին, պարունակում է շորս կետ — շորս կարգադրություն: Այդ կարգադրություններից և ոչ մեկը չէր կարող ի կատար ածվել և ի կատար չի ածվել:

Դիսպոզիցիայում ասված է, առաջինը, որ նապոլեոնի ընտրած տեղափորած մարտկոցները՝ վեցիներիս հետ իրենց գործողությունները համաձայն ցենող Պերենետի և Ֆուլենի հրանոթների հետ միասին, ընդամենը բվով 102 հրանոթ, կրակ բանան և արկերով լցնեն ուստական ֆլեշներն ու մյուս

<sup>1</sup> Բորսովինոն:

ամբուրյունները: Այդ չէր կարող արվել, քանի որ նապուենի նշանակած տեղերից արկերը չէին հասնում ոռւսական դիրքերին, և այդ 102 հրանոթը իզուր կրակեցին այնքան ժամանակ, մինչև որ ամենամերձափոր զորագետը, հակառակ նապուենի կարգադրության, հրանոթները առաջ քաշեց:

Երկրորդ կարգադրությունն այն էր, որ Պոնյատովսկիին, անտառով շարժվելով դեպի գյուղը, անցնի ոռւսների ձախ թիվ թիկունքը: Այդ չէր կաըող արվել և չի արվել այն պատճառով, որ Պոնյատովսկին անտառով դեպի գյուղ շարժվելիս հանդիպել է նրա ճանապարհը փակող Տուչկովին և չէր կարող ու չի կարողացել անցնել ոռւսների թիկունքը:

Երրորդ կարգադրությունը. գեներալ Կոմպանը կշարժվի դեպի անտառ՝ առաջին ամրությունը տիրելու համար: Կոմպանի դիվիզիան չէր տիրել ամրությանը, այլ ետ էր մղվել, որովհետև անտառից դուրս գալով, նա պետք է շարք կանգներ կարտելի կրակի տակ, մի քան որ նապուենը շգիտեր:

Չորրորդը. Փոխ-արքան կգրավի գյուղը (Բորոդինոն) և կանցնի երա երեք կամուրջներով, հավասար բարձություն պահպանելով Մորանի և Ֆրիանի դիվիզիաների հետ, որոնց մասին չի ասված, բյո՞ւ և ե՞ր պետք է շարժվեն երանք, որոնք երա առաջնորդությամբ կշարժվեն դեպի ամրությունները և մյուս զորքերի հետ կմտնեն մարտագիծը: Որքան կարելի է հասկանալ, եթե ոչ այս անհեթեթ պարբերությունից, ապա այն փորձերից, որ արել էր փոխ-արքան իրեն արլած կարգադրությունները կատարելու համար, նա պետք է Բորոդինոյի միջով ձախից իր ուժերը շարժեր դեպի ոեղուար, իսկ Մորանի և Ֆրիանի դիվիզիաները միաժամանակ պետք է շարժվեին ճակատից:

Այդ բոլորը, ինչպես և դիսպազիցիայի մյուս կետերը չեն կատարվել և չին էլ կարող կատարվել: Բորոդինոն անցնելուց հետո, փոխ-արքան ետ էր մղվել Կոլուչայի մոտ և այլևս չէր կարողացել առաջ անցնել: Իսկ Մորանի և Ֆրիանի դիվիզիաները ուղղութը չէին գրավել, այլ ետ էին մղվել, և ուղղութը ճակատամարտի վերջին գրավվել էր հեծելազորի կողմից (Հավանորեն նապուենի համար չնախատեսված ու չսպած միքան): Այսպիսով, դիսպազիցիայի ոչ մի կարգադրությունը չէր կատարվել և չէր կարող կատարվել: Բայց գիտողիցիայում

— 282 —

ասկած է, որ այսպիսով կովի բռնվելուն պես կարգադրություններ կարվեն թշնամու գործողությունների համեմատ, ուստի և կարող էր թվալ, որ ճակատամարտի ժամանակ նապուենը բոլոր անհրաժեշտ կարգադրությունները կանի: Բայց այդ չէր եղել և չէր կարող լինել, որովհետև ճակատամարտի ամբողջ ժամանակ նապուենը նրանից այնքան հեռու է գտնվել, որ (ինչպես և հետագայում պարզվեց այդ) ճակատամարտի ընթացքը նրան չէր կարող հայտնի լինել, և նրա ոչ մի կարգադրությունը ճակատամարտի ժամանակ չէր կարող կատարվել:

## XXVIII

Ճատ պատմագիրներ ասում են, թե ֆրանսացիները Բորոդինոյի ճակատամարտում չհաղթեցին այն պատճառով, որ նապուենը հարբուխ է ունեցել. որ եթե նա հարբուխ չունենար, ապա այն կարգադրությունները, որ նա արել էր թե ճակատամարտից առաջ և թե ճակատամարտի ժամանակ, ավելի հանճարեղ կլինեին, և Ծուսաստանը կկործանվեր, et la face du monde eut été changée!: Այն պատմագիրների համար, որոնք ընդունում են այն, որ Ծուսաստանը կազմվել է մի մարդու՝ Պետրոս Սեծի կամքով, և որ Ֆրանսիան հանրապետությունից միապետություն դարձավ և ֆրանսական գորքերը Ծուսաստանի վրա արշավեցին մի մարդու՝ նապուենի կամքով, այն դատողությունը, թե Ծուսաստանը հզոր մնաց այն պատճառով, որ ամսի 26-ին նապուենը սաստիկ հարբուխ ուներ, — այդպիսի դատողությունը այդպիսի պատմագիրների համար անխուսափելիորեն հետևողական է:

Եթե նապուենի կամքից կախված լիներ՝ Բորոդինոյի ճակատամարտը տալը կամ շտալը և նրա կամքից կախված լիներ այս կամ այն կարգադրությունն անելը, ապա պարզ է, որ հարբուխը, որ ազգել է նրա կամքի արտահայտման վրա, կարող էր Ծուսաստանի փրկության պատճառ լինել, և որ ուստի՝ այն կամերդիները, որը ամսի 24-ին մոռացել էր նապուենին մատուցել իր անջրանցիկ կոշիկները, Ծուսաստանի փրկին է եղել: Այդպիսի մտածելակերպից անխուսափելիորեն այդ եզրակացությունն է բխում. այդ եզրակացությունը

<sup>1</sup> Եկ աշխարհի գմբեթ կփոխվեր:

նուրբան անվիճելի է, որքան այն Լզրակացությունը, որը կատակով (ինքն էլ շիմանալով, թե ինչն է իր կատակի առարկան) արել էր Վոլտերը, ասելով, թե Բարդուղիմեոսյան գիշերը տեղի է ունեցել Կարլոս I X-ի ստամբուխի խանգարման պատճառով։ Բայց այն մարդկանց համար, որոնք չեն ընդունում, որ Ռուսաստանը կարող էր կազմվել մի մարդու՝ Պերտոս I-ի կամքով, և որ ֆրանսական կայսրությունը կարող էր կազմվել և Ռուսաստանի հետ կարող էր պատերազմը սկսել մի մարդու՝ Նապոլեոնի կամքով, այդ դատողությունը ոչ միայն ճշմարիտ ու խելացի դատողություն չէ, այլև հակառակ է մարդու բովանդակ էությանը։ Այն հարցին, թե ի՞նչն է պատճական դեպքերի պատճառը, տրվում է մի այլ պատասխան, որը կայանում է նրանում, թե համաշխարհային դեպքերի ընթացքը կանխորոշված է վերից, կախված է այն բոլոր մարդկանց կամացականությունների զուգադիպումից, մարդիկ, որոնք մասնակցում են այդ դեպքերին, և թե Նապոլեոնի ազդեցությունն այդ դեպքերի ընթացքի վրա միայն երկու թական ու կարծեցյալ է։

Որքան և տարօրինակ է թվում առաջին հայացքից այն ենթագրությունը, թե Բարդուղիմեոսյան գիշերը; որի վերաբերյալ հրաման էր տվել Կարլոս I X-ը, տեղի է ունեցել ոչ թե նրա կամքով, այլ որ նրան միայն թվացել էր, թե ինքն է կարգադրել այդ անել, և որ Բորոդինոյի՝ 80 հազար մարդկանց ջարդը տեղի է ունեցել ոչ թե Նապոլեոնի կամքով (չնայած նրան, որ Նապոլեոնը կարգադրություններ էր արել ճակատամարտը սկսելու, ինչպես նաև ճակատամարտի ընթացքի մասին), այլ որ նրան միայն թվացել է, թե ինքն է այդ կարգադրել — որքան և տարօրինակ է թվում այդ ենթագրությունը, բայց մարդկային այն ալժանապատվությունը, որն ինձ ասում է, թե մեզնից յուրաքանչյուրը, եթե ոչ ավելի, համենայն դեպս ոչ պակաս մարդ է, քան յուրաքանչյուր Նապոլեոն, թելադրում է ընդունել հարցի այս լուծումը և պատմական ուսումնասիրությունները միանգամայն հաստատում են այդ ենթագրությունը։

Բորոդինոյի ճակատամարտում Նապոլեոնը ոչ ոքի վրա լի կրակել, ոչ ոքի չի սպանել։ Այդ ամենն անում էին զինվորները։ Հետևաբար, նա մարդ չի սպանել։

Յրանսական բանակի զինվորները գնում էին՝ Բորսպինոյի<sup>1</sup> ճակատամարտում միմյանց սպանելու ոչ Նապոլեոնի կարգադրության պատճառով, այլ իրենց ցանկությամբ։ Ամբողջ բանակը՝ ֆրանսացիները, իտալացիները, գերմանացիները, լեհերը՝ քաղցուծ, պատոպուված, կովկներում հոգնած ու տանջված, տեսնելով իր առաջ մի բանակ, որը փակել էր նրա ճանապարհը դեպի Մոսկվա, զգում էր, որ լուն էր տիրե և զայլ խառն լուն էր առաջ։ Եթե Նապոլեոնն այդ ժամանակ արգելեր նըրանց կովել ուսւների հետ, նրանք նրան կսպանեին և կդրանք կովելու ոսւների դեմ, որովհետև այդ նրանց համար անհրաժշշաւ էր։

Երբ նրանք լսում էին Նապոլեոնի հրամանը, որտեղ կայսրը նրանց՝ հաշմանդամ դառնալու և մեռնելու համար իրեն մը խիթարանք ներկայացնում էր գալիք սերունդների այն խոսքերը, թե նրանք էլ, այդ զինվորներն էլ մասնակցել են Մոսկվայի տակ տեղի ունեցած կովկներին, նրանք գոշում էին. «Vive l'Empereur!» — ճիշտ այնպես ինչպես նրանք «Vive l'Empereur!» էին գոշում այն ժամանակ, երբ տեսնում էին այն պատկերը, որտեղ մի տղա բիլբոկի ծողիկով ծակում է երկրագունդը, ճիշտ այնպես, ինչպես նրանք «Vive l'Empereur!» կողէին ամեն մի անհեթեթություն լսելիս։ Նրանց այլևս ոչինչ չէր մնում անել, բայց եթե «Vive l'Empereur!» գոշել և զնալ կովելու, որպեսզի հաղթելով՝ Մոսկվայում ուտելիք ու հանգիստ գտնեն։ Հետևաբար, Նապոլեոնի կարգադրության պատճառով չէին նրանք սպանում իրենց նմաններին։

Եվ Նապոլեոնը չէր տնօրինում ճակատամարտի ընթացքը, որովհետև նրա դիսպոգիցից ոշինչ ի կատար շածկեց, և ճակատամարտի ժամանակ նա զգիտեր այն, ինչ կատարվում էր նրա առջևում։ Հետևաբար և այն, թե ինչպես այդ մարդիկ սպանում էին միմյանց, կատարվում էր ոչ թե Նապոլեոնի կամքով, այլ տեղի էր ունենում նրանից անկախ, այն հարյուր հազարավոր մարդկանց կամքով, որոնք մասնակցում էին ընդհանուր գործին։ Նապոլեոնին միան թվում էր, որ ամեն ինչ նրա կամքով է կատարվում։ Ուստի և այն հարցը, թե Նապոլեոնն արդյոք հարբուխ ունեցել է, թե ոչ, պատմության

<sup>1</sup> Գինու ամանը բաց է, գինին պետք է խմել։

Համար ավելի հետաքրություն չի ներկայացնում, քան գումակի վերջին զինվորի հարբուխ ունենալու հարցը:

Նապոլեոնի հարբուխը առավել ևս օգոստոսի 26-ին նըշանակություն չի ունեցել, և գրողների վկայություններն այն մասին, որ իբր թե նապոլեոնի դիսպոզիցիայի (ոչ այնպես լավ կազմված, ինչպես նախորդները) և ճակատամարտի ժամանակ նրա արած կարգադրությունների (ոչ այնքան լավ, ինչպես նախորդները) պատճառը նրա հարբուխն է եղել, միանգամայն անարդարացի են: Այստեղ մեջբերված դիսպոզիցիան բնավ էատ չէ, այլ նույնիսկ լավ է այն բոլոր նախորդ դիսպոզիցիաներից, որոնցով նրանք ճակատամարտերը շահում էին: Ճակատամարտի ժամանակ արված կարծեցյալ կարգադրությունները նույնպես վատ չէին նախորդներից, այլ եղել են ճիշտ այնպիսին, ինչպիսին և մի՛շտ: Բայց դիսպոզիցիան և այդ կարգադրությունները նախորդներից վատ են թվում միայն այն պատճառով, որ Բորոդինոյի ճակատամարտը առաջինն էր, որտեղ նապոլեոնը հաղթություն շտարավ: Բոլոր ամենահիանալի ու խորամիտ դիսպոզիցիաներն ու կարգադրությունները շատ վատ են թվում, և յուրաքանչյուր գիտուն զինվորական լուրջ արտահայտությամբ է քննադատում այն, եթե այդ դիսպոզիցիաների ու կարգադրությունների համաձայն տրված ճակատամարտը հաղթությամբ չի վերջացել: Եվ, ընդհակառակը, ամենավատ դիսպոզիցիաներն ու կարգադրությունները շատ լավ են թվում, և լուրջ մարդիկ մեծահատոր գորերում ապացուցում են վատ կարգադրությունների արժանիքները, եթե դրանց համաձայն տրված ճակատամարտը հաղթությամբ է վերջացել:

Այն դիսպոզիցիան, որը կազմել էր Վելյուտերը Առւտերլիցի ճակատամարտի համար, այդ կարգի գրվածքների մեջ կատարելության օրինակ է եղել, և շնայծ դրան այնուամենայնիվ այդ դիսպոզիցիան դատել ու դատապարտել են, դատապարտել են նրա կատարելության համար, շափազանց մանրամասն լինելու համար:

Նապոլեոնը Բորոդինոյի ճակատամարտում որպես իշխանության ներկայացուցչի իր գործը կատարում էր նույնպես լավ և դեռ էլ ավելի լավ, քան մյուս ճակատամարտերում: Նա ժի արել ոչ մի այնպիսի բան, որը վիճակար լիներ ճակատա-

մարտի լնթացքի համար, նա լսում էր այն խորհուրդները, որոնք ավելի բարեմիտ ու խելացի էին, նա չէր խառնում-խճում, չէր հակասում իրեն, նա շվախեցավ և կովի դաշտից, շփախավ, այլ իրեն հատուկ մեծ տակտով ու ուազմական փորձով, հանգիստ և արժանավայել կերպով կատարում էր կարծեցյալ գորավարի իր դերը:

## XXIX

Վերադառնալով դեպի զորագիծը կատարած իր երկրորդ մտահոգ ուղևորությունից, նապոլեոնն ասավ.

— Ծախմատը պատրաստ է, վաղը կսկսվի խաղը:

Կարգադրելով իրեն փունջ մատուցել և իր մատ կանչելով Բոսսեին, նա վերջինիս հետ խոսակցություն սկսեց Փարիզի մասին, այն որոշ փոփոխությունների մասին, որ նա մտադիր էր մտցնել maison de l'impérial tricé<sup>1</sup>-ում, զարմացնելով պրեֆեկտին նրանով, որ ինքը բնավ չի մոռանում արքունիքում տիրող հարաբերությունների անգամ աննշան մանրամասնությունները:

Նա հետաքրքրվում էր աննշան բաներով, կատակի էր առնում Բոսսեի սերը դեպի ճանապարհորդությունը և անհոգ կերպով շաղակրատում էր այնպես. ինչպես այդ անում է հըսցակավոր, իր ուժերի վրա վստահ, իր գործն իմացող օպերատորը այն պահին, եթե նա ձեռքբերը ծալում, գոյնոցը հագնում է, իսկ հիվանդին կապում են մահճակալին: «Գործն ամբողջովին իմ ձեռքումն է և միտքս պայծառ է ու որոշ: Եթե հարկավոր լինի գործի անցնել, ես գործը կանեմ այնպես, ինչպես չի կարող անել ոչ ոք, իսկ հիմա կարող եմ կատակել. և որքան ես ավելի շատ եմ կատակում, որքան ավելի հանգիստ եմ, այնքան գուք ավելի պետք է վստահ ու հանգիստ լինեք, այնքան ավելի պետք է զարմանաբ իմ հանճարի վրա»:

Փնջի երկրորդ բաժակը խմելուց հետո նապոլեոնը գնաց հանգստանալու, որպեսզի հետևյալ օրք, ինչպես նրան թվում էր, զբաղվի իր լուրջ գործով:

<sup>1</sup> Կայսրություն արքունական հաստիքը:

Նա այնքան էր հետաքրքրվում իրեն սպասող այդ գործով, որ չէր կարողանում քնիլ, և չնայած հարրուխին, որը իրիկվա խոնավության պատճառով սաստկացել էր, գիշերվա ժամը երեքին, բարձրածայն խնչելով, անցավ վրանի մեծ բաժանմունքը: Նա հարցրեց, թե չե՞ն հեռացել արդյոք ոռւսները: Նրան պատասխանեցին, որ թշնամու լույսերը երևում են նույն տեղերում: Նա գլխով հավանության նշան արավ:

Հերթապահ աղյուտանտը ներս մտավ վրանը:

— Eh bien, Rapp, croyez vous, que nous ferons de bonnes affaires aujourd'hui?<sup>1</sup> — դիմեց նա նրան:

— Sans aucun doute, Sire<sup>2</sup>, — պատասխանեց Ռապպը: Նապոլեոնը նրան նայեց:

— Vous rappelez-vous, Sire, ce que vous m'avez fait l'honneur de dire à Smolensk, — ասավ Ռապպը. — le vin est tiré, il faut le boire<sup>3</sup>.

Նապոլեոնը հոնքերը կիսեց և երկար ժամանակ լուռ տած էր, գլուխը կախ՝ ձեռքին հենած:

— Cette pauvre armée, — ասավ նա հանկարծ, — elle a bien diminué depuis Smolensk. La fortune est une franche courtisane, Rapp; je le disais toujours, et je commence à l'éprouver. Mais la garde, Rapp, la garde est intacte?<sup>4</sup> — հարցական եղանակով ասավ նա:

— Oui, Sire<sup>2</sup>, — պատասխանեց Ռապպը:

Նապոլեոնը վերցրեց պատեղը, դրեց բերանը և նայեց ժամացույցին: Նա քնիլ չէր ուզում, բայց մինչև առավոտ զեռ շատ ժամանակ կար. իսկ ժամանակն սպանելու համար այլևս ոչ մի կարգադրություն չէր կարելի անել, որովհետեւ բոլոր կարգադրություններն արված էին և այժմ միայն ի կատար

<sup>1</sup> Ռապպ, ի՞նչ եք կարծում, լա՞վ կլինեն մեր գործերն այսօր:

<sup>2</sup> Անկասկա՞ծ, ձերդ մեծություն:

<sup>3</sup> Հիշեցե՞ք, ձերդ մեծություն, թե ինչ հաճեցիք ասել ինձ Սմոլենսկում՝ զինու ամանը բաց է, գինին պետք է խմել:

<sup>4</sup> Այդ խե՞ղճ բանակը, ճանապարհին, Սմոլենսկից այս կողմ թվով խստ պակասեց: Ճակատագիրը պարզապես անառակ է, Ռա՛պպ: Ես այդ միշտ ասել եմ և այժմ պատասխան եմ զավալ այդ: Իսկ գվառդիան, Ռա՛պպ, գվարդիան ողջ, անվնա՞ս է:

<sup>5</sup> Այո՛, ձե՛րդ մեծություն:

— A-t-on distribué les biscuits et le riz aux régiments de la garde?<sup>1</sup> — իստ շեշտով հարցրեց Նապոլեոնը:

— Oui, Sire<sup>2</sup>.

— Mais le riz?<sup>3</sup>

Ռապպը պատասխանեց, որ ինքը հայտնել է թագավորի կարգադրությունը բրնձի մասին. բայց Նապոլեոնը դժգոհությամբ օրորեց գլուխը, կարծես թե չհավատալով, որ իր կարգադրությունը կատարված է: Մասն ներս մտավ փունջը ձեռին: Նապոլեոնը կարգադրեց մի բաժակ էլ մատուցել Ռապպին, իսկ իր բաժակն սկսեց լուռ կում-կում խմել:

— Ես ոչ ճաշակելիք և ոչ հոտառություն ունեմ, — ասավ նա բաժակից հոտ քաշելով: — Այս հարբուխը ձանձրացրել է ինձ: Նրանք բժշկականության մասին դատողություններ են տալիս: Ինչ բժշկականություն, որ հարբուխը չեն կարողանում բուժել: Կորվիզարն ինձ ավեց այդ պաստեղները, բայց դրանք չեն օգնում: Նրանք ի՞նչ կարող են բուժել: Բուժել չեն կարելի: Notre corps est une machine à vivre. Il est organisé pour cela, c'est de nature; laissez-y la vie à son aise, qu'elle s'y défende elle-même; elle fera plus que si vous la paralysez en l'encombrant de remèdes. Notre corps est comme une montre parfaite que doit aller un certain temps; l'horloger n'a pas la faculté de l'ouvrir, il ne peut la manier qu'à tâtons et les yeux bandés. Notre corps est une machine à vivre, voilà tout<sup>4</sup>.

Եվ կարծես թե բոնելով բնորոշումների, դէֆինիշների ճանապարհը, որը Նապոլեոնը սիրում էր, նա հանկարծ անսպասելի կերպով նոր բնորոշում արավ:

<sup>1</sup> Պաքսիմատն ու բրինձը բաժանված են զվարդիական գնդերին:

<sup>2</sup> Այո՛, ձերդ մեծություն:

<sup>3</sup> — Իսկ բրինձը:

<sup>4</sup> Սեր մարմինը — կյանքի մեքենս է: Նա այդպես էլ կառուցված է, որպանումն է նրա լությունը. Հանգիստ թողեք կյանքը մարմնի մեջ, և թող անիքը պաշտպանվի: Ինքը կյանքն ավելին կանի, քան եթե դուք սկսեք մարմնի մեջ անվերջ գեղեր լցնել: Սեր մարմինը նման է ժամացույցի, որը պետք է որոշ ժամանակ բանի: Ժամագործը չի կարող բանալ այն. Նա կարող է կառավարել այն միայն շշափելով և կապած չըքերով: Այո՛, մեր մարմինը — կը յանք՝ մեքենան է, և միայն այդ:

— Դուք գիտե՞ք արդյոք, Ռապա, թե ի՞նչ է ուազմական արվեստը, — Հարցրեց նա: — որոշ մոմենտների՝ թշնամուց ուժեղ լինելու արվեստ: Voilà tout:

Ռապավը ոշինչ շպատասխանեց:

— Demain nous allons avoir affaire à Koutouzoff!<sup>1</sup> — ասավ Նապոլեոնը: — Տեսնե՞նք: Հիշե՞ք, որ Բրառունառում նա բանակի հրամանատար էր և երեք շարաթվա ընթացքում ոչ մի անգամ ծի չնստեց՝ ամրությունները դիտելու համար: Տեսնե՞նք:

Նա նայեց ժամացույցին: Ժամը 4-ն էր միայն: Քունը չէր տանում, փոմզը խմել, վերջացրել էր և դարձյալ անելու բան շուներ: Նա վեր կացավ, ետ ու առաջ անցավ, հագավ տաք սերթովն ու գլխարկը և վրանից դուրս եկավ: Մութ ու խոնավ գիշեր էր. հազիկ զգացվող խոնավություն էր թափում վերեից: Մոտակա ֆրանսական զգարդիայում խառուցները թույլ էին վառվում, իսկ հեռվում, ոռւսական գործադում ծխի միշից լույսերը փայլում էին: Ամեն տեղ լուր էր, և պարզ խշոց ու դոփյուն էր լսվում, որից կարելի էր ենթադրել, թե ֆրանսական զորքերն արդեն պատրաստվում են գրավել իրենց դիրքերը:

Նապոլեոնն անցավ վրանի առջևով, նայեց լույսերին, ականջ գրեց դոփյունին և, անցնելով մազոտ գդակ դրած բարձրահասակ զգարդիականի կողքով, որը պահակ էր կանգնած նրա վրանի մոտ և որը կայսեր երևալուն պես ձգվեց, ինչպես մի սյուն, կանգ առավ նրա դիմաց:

— Ո՞ր թվից ես ծառայության մեջ, — Հարցրեց նա կոպիտ ու քննուց այն սովորական ուազմական աֆեկտացիայով, որով նա միշտ դիմում էր զինվորներին:

Զինվորը պատահանեց նրան:

— Ah! un des vieux<sup>2</sup>. Գունդը բրինձ ստացա՞վէ

— Ստացա՞նք, ձե՛րդ մեծություն:

Նապոլեոնը գլխով արավ և հեռացավ նրանից:

<sup>1</sup> Վազը գործ կունենանք Կուտո դովի հետ:

<sup>2</sup> Հա՛, մե՛րից:

Հինգ և կեսին նապոլեոնը ծիով գնում էր Շեարդինո գյուղի ուղղությամբ:

Լույսը բացվում էր, երկինքը զինջ էր, և միայն մի ամպ էր մնացել արևելքում: Թողնված խարուցիները մարում էին վաղորդյան թույլ լույսի տակ:

Աղ կողմից լսվեց թնդանոթային մի բամբ կրակոց, որն անցավ ու մարեց ընդանուր լուսիթյան մեջ: Անցավ մի քանի րոպե: Լսվեց երկրորդ, երրորդ կրակոցը. օդը տատանվեց. շորրորդ, հինգերորդ կրակոցները լսվեցին մոտերքում և հանդիսավորապես՝ ինչ-որ տեղից, աշից:

Դեռ չեն խլացել առաջին կրակոցների արձագանքները, երբ լսվեցին նոր կրակոցներ, էլի նոր ու նոր կրակոցներ, որոնք մերթ ծուլվում, մերթ ընդմիջում էին մեկը մյուսին:

Նապոլեոնն իր շքախմբով մոտեցավ Շեարդինոյի ոեղուտին և ծիուց իջավ: Խաղն սկսվեց:

### XXX

Իշխան Անդրեյի մոտից Գորկի վերադառնալով, Պիեռը ձիապանին հրամայեց ձիերը պատրաստել և առավոտյան վաղ արթնացնել իրեն, և ինքն խսկույն քնեց միշնորմի ետևում, այն անկյունում, որը նրան զիշեց Բորիսը:

Հետեւյալ առակոտ, երբ Պիեռն արթնացավ, խրճիթում արդեն ոչ ոք չկար: Փոքրիկ պատուհանների ապակիները դռուում էին: Զիապանը կանգնած՝ նրան հրհրում էր:

— Ձե՛րդ պայծառափայլություն, ձե՛րդ պայծառափայլություն... — Համառորեն, առանց Պիեռին նայելու և, ըստ երևույթին, նրան արթնացնելու հույսը կորցրած, ուսից բռնած օրորելով, կրկնում էր ձիապանը:

— Ի՞նչ է: Սկսվե՞լ է: Ժամանակն է, — ասավ Պիեռն արթնացած:

— Կհաճե՞ք հրաձգությունը լսել, — ասավ ձիապանը, որ նախկին զինվոր էր, — բոլոր պարուներն արդեն դուրս են եկել, ինքը գերապայծառ վաղուց եկել-անցել է:

Պիեռը հապճեպ հագնվեց և դուրս վազեց դեպի պատշգամբ: Ծուրսը պայծառ էր, զով, ցողավետ և ուրախ: Արեւը, որ

Հենց նոր էր դուրս պրծել իրեն ծածկող ամպի ետկից, ամպից մինչև կեսը բեկված իր ճառագայթները հանդիպակաց փողոցի տանիքների վրայով շաղ էր տվել ճանապարհի ցողապատ փոշու վրա, տների պատերի վրա, ցանկապատի, պատուանների վրա և Պիեռի ձիերի վրա, որոնք կանգնած էին խրճիթի մոտ: Թնդանոթների որոտն ավելի պարզ լսվում էր բակում: Փողոցի վարգելով անցավ աղյուտանտը մի կազակի հետ:

— Ժամանա՞ն է, կո՞մս, ժամանա՞ն է, — ձայն տվեց աղյուտանտը:

Հրամայելով ձին տանել իր ետկից, Պիեռը փողոցով գնաց դեպի այն կուրգանը, որտեղից երեկ նա դիտում էր կովի դաշտը: Այդ կուրգանի վրա կանգնած էին մի խումբ զինվորականներ, և լսվում էր շտարականների ֆրանսերեն խոսակցությունը, և երկում էր Կուտուզովի ալեքարդ գլուխը նրա՝ կարմիր բուրք ունեցող սպիտակ գլխարկով և ուսերի մեջ թաղված ալեհեր ծոծրակով: Կուտուզովը դիտափողով դիտում էր առջեր՝ մեծ ճանապարհի ուղղությամբ:

Մուտքի աստիճաններով բարձրանալով կուրգանը, Պիեռը նայեց իր առջև և զմայլվեց հիասքանչ տեսարանով: Այդ այն պանորաման էր, որով նա երեկ հիանում էր նույն այդ կուրգանի վրայից, բայց այժմ այդ ամբողջ վայրը ծածկված էր զորքերով և կրակոցների ծխով, և ետեւ, Պիեռից դեպի ձափի ձափի, բարձրացող պայծառ արեկի թեք ճառագայթները վաղորդյան շնչ օդի միջով ուսկեփայլ ու վարդագույն երանգով թափանող լույս ու երկար և ստվերներ էին նետում այդտեղ:

Պանորաման եղերող հեռակա անտառները, որոնք կարծես ինչ-որ գեղնա-կանաչ թանկագին քարից լինեին կտրած, իրենց կատարների կորացած գծով երեսում էին հորիզոնի վրա, և նրանց միջև Վալուկոյի ետևում նշմարվում էր Սմոլենսկի մեծ ճանապարհը՝ ամբողջովին զորքերով բռնված: Ավելի մոտ փայլում էին ոսկեգույն դաշտերն ու ջահել անտառակները: Սմեն տեղ — առջևից, աշխից և ձախից — զորքեր էին երեսում: Այդ բոլորը կենդանացած, վսեմ և անսպասելի էր: Բայց այն, ինչ ամենից ավելի զարմացրեց Պիեռին, — ուս իրեն՝ մարտաշաշտի տեսքն էր, թորողինոյի և Կոլոչայի վերեսում, գետի

Կոլոչայից վերև, թորողինոյում և նրա երկու կողմից, մասնավանդ ձախ կողմում, այնտեղ որտեղ Վոյնան իր ճահճոտ ափերի միջով գնում-թափվում է Կոլոչան, կանգնել էր մի մատախուղ, որը հալվում, ցըլում է և լուսաշողում պայծառ արեկի երեալուն պես ու կախարդական գույներով գունավորում և ուրգագծում այն ամենը, ինչ երեսում է նրա միջով: Այդ մառախուղին միացավ կրակոցների ծուխը, և այդ մառախուղի ու ծխի մեջ ամենուրեք փայլին էին տալիս վաղորդյան լույսի ցնցուղները մերթ զրի, մերթ ցողի երեսին, մերթ գետի ափերին ու թորողինոյում խոնվող զորքերի սվինների վրա: Այդ մառախուղի միջով երևում էր սպիտակափայլ եկեղեցին, տեղ-տեղ թորողինոյի խրճիթների տանիքները, տեղ-տեղ զինվորների ամբողջական զանգվածները, տեղ-տեղ կանաչ արկղեր, թնդանոթներ: Եվ այդ բոլորը շարժվում էր, կամ թվում էր, թե շարժվում է, որովհետեւ մառախուղն ու ծուխը բռնել էին այդ ամբողջ տարածությունը: Թե թորողինոյի մոտ գրանվող այդ ցածր տեղերում, որ մառախուղով էին պատած, և թե նրանցից դուրս, ավելի բարձր տեղերում և մանավանդ դեպի ձախ, ամբողջ գծով, անտառներում, դաշտերում, ցածրացածներում, բարձրությունների գագաթներին, ինքնաբերաբար, հենց դատարկությունից անդադար առաջանում էին թնդանոթային ծխի մերթ միայնակ, մերթ երամային, մերթ հատ-հատ, մերթ հաճախակի քուլաներ, որոնք ուոչելով, տարածվելով, քուլա-քուլա վեր բարձրանալով, ծուլվելով, երեսում էին այդ ամբողջ տարածությամբ:

Կրակոցների այդ ծուխը և, որքան էլ տարօրինակ է ասել, նրանց ձայներն էին կազմում տեսարանի գեղեցկությունը:

Փո՞ւին — հանկարծ երեսում էր բոլորակ, թանձր և բաց մանուշակագույն, գորշ ու կաթնագույն-սպիտակ գույներով խաղացող մի ծուխ, և բո՞ւմ — մի վայրկյան անց լսվում էր այդ ծխի ձայնը:

Փո՞ւհ, փո՞ւհ. — Երկու ծուխ էր բարձրանում, իրար հրելով ու ծուլվելով, և բո՞ւմ, բո՞ւմ, — ձայները հաստատում էին այն, ինչ տեսնում էր աշքը: Պիեռը շուր էր գալիս, նայում առաջին ծխին, որն առաջ կլոր, պինդ գնդակի էր նման, և նրա տեղն արդեն մի կողմ ձգվող ծխի գնդեր էին առաջացրել. և «փո՞ւհ», (ընդհատումով) փո՞ւհ, փո՞ւհ» — լսվում էին նի

երեքը, էլի շորսը, և յուրաքանչյուրից հետո նույն ընդմիջում. ներով «բ՛ւմ, բռ՛ւմ, բռ՛ւմ» — պատասխանում էին գեղեցիկ, հաստատում, ստույգ ձայներ: Մերթ թվում էր, թե այդ ծխերը վազում էին, մերթ թվում էր, որ նրանք կանգնած էին, և նըրանց մոտով վազում էին անտառներ, դաշտեր և շողջողուն սվիններ: Զախ կողմից դաշտերում ու թփերի մեջ շարունակ այդպիսի մեծ ծխեր էին երևում, որոնք հանդիսավոր արձագանք էին տալիս, իսկ ավելի մոտ ցածրաներում և անտառներում հրացանների փոքրիկ, արագորեն ցրվելու պատճառով չկլորացվող ծխեր էին բռնկվում, որոնք նույնպես իրենց փոքր արձագանքն էին տալիս: «Թրա՛խկ, թրը՛խկ, շրա՛խկ, շրը՛խկ», շաշում էին հրացանները, թեև հաճախակի, բայց անկանոն և թույլ՝ համեմատած հրանոթային կրակոցների հետ:

Պիեռի մեջ ցանկություն առաջացավ լինել այնտեղ, որտեղ այդ ծխերն էին, այդ շողջողուն սվինները, այդ շարժումը, այդ ձայնները: Նա շուր եկավ, նայեց Կուտուզովին ու նրա շրախմրին, որպեսզի ճշտի իր տպավորությունը, մյուսների հետ համեմատելով: Բոլորն էլ ճիշտ այնպես, ինչպես նա է, ինչպես նրան թվում էր, նույն զգացումով նայում էին առաջ, զեպի կովի դաշտը: Բոլորի զեմքին այժմ փայլում էր այն զգացումնքի թաքուն շերմությունը (chaleur latente), որը Պիեռը նկատել էր երեկ և որը նա ամբողջովին հասկացավ իշխան Անդրեյի հետ ունեցած խոսակցությունից հետո:

— Գնա՛, սիրելի՛ս, գնա՛, Քրիստոսը քեզ հետ, — ասում էր Կուտուզովն իր մոտ կանգնած գեներալին, առանց հեռացնելու աշքը կովի դաշտից:

Կարգադրություն ստանալուց հետո այդ գեներալը Պիեռի կողքով անցավ զեպի կուրգանի վայրէջքը:

— Դեպի՛ գետանց, — սառն ու խիստ շեշտով ասավ զեներալը ի պատասխան շտարականներից մեկի այն հարցին, թե նա ո՛ւր է գնում: «Ե՛ս էլ, ե՛ս էլ», մտածեց Պիեռը և գնաց գեներալի ետևից՝ նույն ուղղությամբ:

Գեներալը նստեց այն ձին, որ բերեց նրա համար կազակը: Պիեռը մոտեցավ իր ձիապանին, որը բռնել էր ձիերը: Հարցնելով, թե ո՛րն է ավելի հանդիսատ, Պիեռը բարձրացավ ձիու վրա, բռնեց բաշից, կրունկները սեղմեց ձիու փորին և, զգալով, որ

ակնոցն ընկնում է և որ ինքն անզոր է բաց թողնել ձիու բաշն ու սանձը, ձի՛ քշեց գեներալի ետևից, ժամանելով այն շտարականների մեջ, որոնք կուրգանի վրայից նայում էին նրան:

## XXXI

Գեներալը, որի ետևից իր ձին քշեց Պիեռը, իշավ սարի ստրոտը, միանգամբից ծռեց զեպի ձախ, և Պիեռը, նրան աշքից լորցնելով, քշեց մտավ իր առջևից գնացող հետեակ զինվորների շարքերը: Նա փորձեց այդ շարքերից դուրս գալ մերթ զեպ առաջ քշելով, մերթ զեպ ձախ, մերթ զեպ աջ բայց ամեն կողմ զինվորներ էին, միատեսակ մտահոգ զեմքերով, զրադված ինչ-որ անտես, բայց, ըստ երևույթին, կարևոր գործով: Բոլորը միատեսակ դժգոհ-հարցական հայացքով նայում էին այդ սպիտակ շլյապով գեր մարդուն, որ հայտնի չէր ինչո՛ւ համար է իրենց տրորում իր ձիով:

— Ինչո՞ւ է քշում գումարտակի միջով, — բոռաց մեկը նրա վրա:

Մյուսը հրացանի կոթով բոթեց նրա ձին, և Պիեռը, թամբի կեսին սեղմված և խրտնած ձիուն հազիվ պահելով, քշեց դուրս եկավ զինվորների առաջ, ուր ազատ էր:

Նրա առջեր կամուրջ կար, և այդ կամրջի մոտ կանգնած կրակում էին ուրիշ զինվորներ: Պիեռը ձին քշեց նրանց մոտ: Ինքն էլ այդ շիմանալով, Պիեռը ձին քշեց զեպի Կոլոչայի վրա ընկած կամուրջը, որը գտնվում էր Գորկիի և Բորոդինոյի միջև, և որը ճակատամարտի առաջին գործողությանը (Բորոդինոն բրավելով) ուրբակոծեցին ֆրանսացիները: Պիեռը տեսավ, որ էր առջեր կամուրջ կա և որ կամուրջի երկու կողմը և այն մարդագետնում, չհավաքված խոտի ծորերի մեջ, որ երեկ չէր նըկատել ծխի մեջ, զինվորներն ինչ-որ բան էին անում. բայց, չնայած շղագարող կրակոցներին, որ արձակվում էին այդտեղից, նա երբեք չէր մտածում, թե ճակատամարտի դաշտը հենց այդ էր: Նա չէր լսում գնակների ձայնը, որ վժժում էին ամեն կողմից, և ուումբերի շաշունը, որ թոշում էին իր գլխի վրայից: չէր տեսնում թշնամուն, որը գտնվում էր զետի այն կողմը, և երկար չէր նկատում սպանվածներին ու վիրա-

վորներին, շնայած շատերն ընկնում էին նրանից ոչ հեռու  
նա, դեմքից հնեղացող ժպիտով, նայում էր շուրջը:

— Ի՞նչի է սա ձին քշում դիրքերի առաջ, — նորից բոռաց  
մեկը նրա վրա:

— Քշիր ձախ կամ աջ, — ձայն էին տալիս նրան:

Պիեռը քշեց դեպի աջ և անսպասելի հանդիպեց իր դեմն  
եկող գեներալ Ռաւակու ծանոթ աղյուտանտին: Այդ աղյու-  
տանոր բարկացած նայեց Պիեռին, ըստ երկույթին, պատրաստ-  
վելով նույնպես բոռալ նրա վրա, բայց, նրան ճանաշելով,  
գլխով արավ:

— Դուք ի՞նչ ունեք այստեղ, — ասավ նա և արշավեց  
առաջ:

Պիեռը, զգալով որ ինքն իր տեղում չէ և անգործ է, վախե-  
նալով նորից խանգարել որևէ մեկին, ձին քշեց աղյուտանտի  
ետևից:

— Այստեղ, այս ի՞նչ է որ: Կարո՞ղ եմ ձեզ հետ գալ, —  
հայցրեց նա:

— Իսկույն, իսկույն, — պատասխանեց աղյուտանտը, և  
ձին քշելով դեպի մարգագետնում կանգնած հաստ գնդապետը,  
ինչ-որ բան հայտնեց նրան և այն ժամանակ արդեն դարձավ  
Պիեռին:

— Դուք ինչո՞ւ եք ընկել այստեղ, կոմս, — ասավ նա  
Պիեռին, ժպտալով, — Չարունակում եք հետաքրքրվե՞լ:

— Այո, այո, — ասավ Պիեռը:

Բայց աղյուտանտը, ծիու գլուխը թեքելով, գնաց առաջ:

— Այստեղ դեռ փառք աստծու, — ասավ աղյուտանտը, —  
բայց ձախ թեփ վրա՝ թագրատիոնի մոտ սարսափելի արյուն,  
թրաշողում է:

— Մի՞թե, — հարցրեց Պիեռը: — Իսկ այդ որտե՞ղ է:

— Այ եկեք ինձ հետ գնանք կուրգանի վրա, այնտեղից  
երևում է: Իսկ մեզ մոտ մարտկոցում դեռ տանելի է, — ասավ  
աղյուտանտը:

— Այո, գալիս եմ ձեզ հետ, — ասավ Պիեռը. շուրջը նայե-  
լով ու աշքերով իր ծիապանին փնտրելով:

Այստեղ միայն առաջին անգամ Պիեռը տեսավ վիրավոր-  
ներ, որ քարշ էին գալիս ոտքով կամ տանում էին պատգա-  
բակներով: Հենց այն բուրավետ խոտի ծորերով մարգագետ-

նում, որով նա անցավ երեկ. շարքերի լայնությամբ, գլուխն  
անհարմար ծուած, անշարժ պառկած էր մի զինվոր՝ կիվերն  
ընկած:

— Իսկ սրան ինչո՞ւ չեն վերցրել, — սկսեց Պիեռը, բայց  
տեսնելով այդ կողմը նայող աղյուտանտի լուրջ դեմքը՝ կանգ  
առավ:

Պիեռը շգտավ իր ծիապանին և աղյուտանտի հետ միասին  
ձորակով գնաց դեպի Ռաւակու կուրգանը: Պիեռի ձին ետ էր  
մնում աղյուտանտից և համաշափ թափահարում էր նրան:

— Դուք, ինչպես երեսում է, սովո՞ր շեք ծիով ման գալու,  
կոմս, — ասավ աղյուտանտը:

— Ոչ, ոչինչ. բայց սա մի տեսակ ցատկում է շատ, — տա-  
րակուտանքով ասավ Պիեռը:

— Է՞... բայց դա վիրավորված է, — ասավ աղյուտան-  
տը, — առաջին աջ ոտքը, ծնկից վերև: Գնդակ է դիպել, երեխ:  
Ծնորհավորում եմ, կոմս, — ասավ նա, — le barème de feu<sup>1</sup>.

Ծիխ միջով անցնելով վեցերորդ կորպուսով, հրետանու  
ետևից, որ առաջ քաշված կրակում էր, խլացնելով ամեն ինչ իր  
կրակոցներով, նրանք հասան մի փոքրիկ անտառ: Անտառում  
գով խաղաղություն էր և աշնան հոտ էր գալիս: Պիեռն ու աղյու-  
տանտն իշան ծիերից և ոտով սարը բարձրացան:

— Գեներալն այստե՞ղ է, — հարցրեց աղյուտանտը, կուր-  
գանին մոտենալով:

— Քիչ առաջ այստեղ էին, գնացին այս կողմը, — դեպի աջ  
ցուցյա տալով, պատասխանեցին նրան:

Աղյուտանտը նայեց Պիեռին, կարծես շիմանալով, թե հիմա  
ի՞նչ անի նրան:

— Մի անհանգստանաք, — ասավ Պիեռը: — Ես կբարձրա-  
նամ կուրգանը, կարելի՞:

— Այո, գնացեք, այնտեղից ամեն ինչ երեսում է և այնքան  
էլ վտանգավոր չէ: Իսկ ես կգամ ձեր ետևից:

Պիեռը գնաց մարտկոց, իսկ աղյուտանտը քշեց հեռացավ:  
Նրանք այլևս շտեսնվեցին, և շատ հետո արդեն Պիեռն իմացավ,  
որ այդ օրը ոռւմբը տարել էր աղյուտանտի ձեռը:

<sup>1</sup> Կրակի մկրասությունը:

Կուրգանը, ուր բարձրացավ Պիեռը, այն նշանավոր (հետու-  
գայում ուսւների մոտ հայտնի եղավ կուրգանի մարտկոց կամ  
Ռաևսկու մարտկոց անունով, իսկ ֆրանսացիների մոտ և  
grande redoute, la fatale redoute, la redoute du centre<sup>1</sup>  
անունով) վայրն էր, որի շուրջն ընկան տասնյակ հազարավոր  
մարդիկ և որը ֆրանսացիները համարում էին դիրքերի կարևո-  
րագույն կետ։

Այդ ոեղուտը կազմված էր մի կուրգանից, որի վրա երեք  
կողմից էլ փոսեր էին փորված։ Փոսերով խրամատված տեղում  
դրված էին տասը կրակող թնդանոթ, որոնց բերանները դուրս  
էին հանված պատնեշաթմբերի անցքերից։

Կուրգանի գծով — երկու կողմն էլ դրված էին թնդանոթ-  
ներ, որոնք նույնպես կրակում էին անդադար։ Թնդանոթնե-  
րից մի քիչ ետ կանգնած էին հետևակ զորքերը։ Այդ կուրգանը  
բարձրանալով՝ Պիեռը բնավ չէր կարծում, թե այդ՝ փոքրիկ  
խրավանդներով խրամատված վայրը, ուր դրված էին ու կը-  
րակում էին մի քանի թնդանոթներ, ճակատամարտի ամենա-  
կարևոր տեղն էր։

Պիեռին, ընդհակառակը, թվում էր, որ այդ տեղը (հենց այն  
պատճառով, որ ինքը գտնվում էր այնտեղ) ճակատամարտի  
ամենաաննշան տեղերից մեկն էր։

Կուրգանը բարձրանալով՝ Պիեռը նստեց մարտկոցը շրջա-  
պատող խրավանդի ծայրին և անդիտակից ուրախ ժպիտով  
նայում էր թե ի՞նչ էր կատարվում շուրջը։ Երբեմն Պիեռը  
նույն այդ ժպիտը դեմքին վեր էր կենում և, աշխատելով վ-  
խանդարել թնդանոթը լցնող ու առաջ մղող, անդադար իր մո-  
տով՝ պայուսակներն ու ոռումբերը ձեռներին վազող զինվոր-  
ներին, ման էր գալիս մարտկոցում։ Թնդանոթներն այդ  
մարտկոցից անդադար կրակում էին մեկը մյուսի ետևից, իրենց  
ձայներով ամբողջ շրջապատը խլացնելով ու սքողելով վառողի  
ծխով։

Հակառակ այն սարսափին, որ զգացվում էր պաշտպանող  
հետևակ զինվորների միջև, այստեղ՝ մարտկոցում, ուր փոք-  
րաթիվ մարդիկ՝ գործով զբաղված, սահմանափակված էին և

խրավանդով մյուսներից բաժանված, այստեղ զգացվում էր  
բոլորի համար միատեսակ ու ընդհանուր, կարծես, ընտանեկան  
եռուզեռ։

Սպիտակ շլյապով Պիեռի ոչ զինվորական կերպարանքի  
երեսումը սկզբում տհաճ զարմանք պատճառեց այդ մարդկանց։  
Զինվորները, նրա մոտից անցնելիս, զարմացած և անգամ  
վախեցած խեթ նայրում էին նրան։ Հրետանու ավագ սպան  
բարձրահասակ, երկար ոտներով, ծաղկատար դեմքով մի մարդ։  
կարծես նրա համար, որպեսզի նայի ծայրի թնդանոթի գործո-  
ղությունը, մոտեցավ Պիեռին և հետաքրքրված նայեց նրան։

Զահել կլորաղեմ մի փոքրիկ սպա, դեռ բոլորովին երեխա,  
ըստ երեսույթին հենց նոր էր ավարտել զինվորական դպրոցը,  
վերին աստիճանի զանասիրությամբ հետևելով իրեն հանձնված  
երկու թնդանոթին, խստությամբ դիմեց Պիեռին։

— Պարոն, թույլ տվեք ինդրել ձեզ՝ ճանապարհից հեռա-  
նալ, — ասավ նա, — այստեղ չի կարելի կանգնել։

Զինվորները հավանություն շտալով գլուխներն օրորթում  
էին, նայելով Պիեռին։ Բայց երբ բոլորը համոզվեցին, որ սպի-  
տակ շլյապով այդ մարդը ոչ միայն ոչ մի վատ բան չէր անում,  
այլ կամ հանգիստ նստում էր պատնեշաթմբի լանջին, կամ երկշոտ ժպիտով, զինվորների առաջ քաղաքավարությամբ մի  
կողմ քաշվելով, մարտկոցով՝ կրակոցների տակ գնում-գալիս էր  
նույնպես հանգիստ, ինչպես բուլվարում, այն ժամանակ նրա  
նկատմամբ եղած անբարյացակամ տարակուսանքի զգացմունքը  
կամաց կամաց փոխվեց սիրակատակ վերաբերմունքի, նման  
այն վերաբերմունքին, որ զինվորներն ունեն դեպի իրենց  
կենդանիները — շները, աքծերը, այծերը և ընդհանրապես  
զինվորական մասերում ապրող կենդանիները։ Այդ զինվոր-  
ներն անմիջապես մտովի Պիեռին ընդունեցին իրենց ընտանի-  
քը, յուրացրին նրան և մականուն կպցրին։ Նրան կոչեցին  
«մեր աղան» և իրար մեջ սիրալիիր ժիմաղում էին նրա վրա։

Մի ոռումբ եկավ, հողը փորեց Պիեռից երկու քայլ հեռու։  
Նա, հագուստի վրայից սրբելով ոռումբի շպրտած հողը, ժպտա-  
լով նայեց իր շուրջը։

— Էդ ոնց ա, որ դուք շեք վախենում, աղա, — գիմեց  
Պիեռին մի կարմրադեմ լայնաթիկունք զինվոր, պինդ Ընդմակ  
ատամները բանալով։

<sup>1</sup> Մեծ ոեղուտ, ճակատագրական ոեղուտ, հենարանական ոեղուտ։

— Իսկ դու մի՞թե վախենում ես, — հարցրեց Պիեռը:

— Բա ո՞նց, — պատասխանեց զինվորը: — Չէ՞ որ նա չի խնայի: Էնպես կիսի՝ աղիքներդ դուրս կթոշեն: Ոնց կարելի է շվախենալ, — ասավ նա, ծիծաղելով:

Մի քանի զինվոր ուրախ սիրալիր դեմքերով, եկան կանգնեցին Պիեռի կողքին: Նրանք չէին սպասում, թե նա կխոսի, ինչպես բոլորը և այդ հայտնությունը ուրախացրեց նրանց:

— Դե' մենք զինվոր մարդիկ ենք: Իսկ աղան՝ զարմանաւիլ է: Այս քեզ աղա:

— Տեղներդ, — բոռաց ջաճել սպան, Պիեռի շուրջը հավաքված զինվորների վրա:

Այդ ջաճել սպան, ըստ երեսլիքին, իր պաշտոնը կատարում էր առաջին կամ երկրորդ անգամը, ուստի և առանձին որոշակիությամբ ու ձեռվ էր դիմում թե' զինվորներին և թե' իր պետին:

Թնդանոթների և հրացանների որոտքնոստ բոմբյունը սաստկանում էր ամերող դաշտում, առանձնապես ձախ կողմում, այնտեղ, ուր Բագրատիոնի ֆլեշներն էին. բայց կրակոցների ծխի պատճառով, այնտեղից, ուր Պիեռն էր գտնվում, չէր կարելի գրեթե ոչինչ տեսնել: Բացի դրանից՝ Պիեռի ուշադրությունը կլանում էր այն, որ շարունակ դիտում էր մարտկոցում գտնվող այդ, կարծես թե մի ընտանիք կազմած (բոլոր մյուսներից առանձնացած) մարդկանց խումբը: Նրա առաջին անգիտակից-ուրախ հուզումը, որ առաջացել էր ճակատամարտի դաշտի տեսքից ու կրակոցներից, այժմ տեղի էր տվել, մանավանդ մարդկագետնում մենակ ընկած զինվորին տեսնելուց հետո, մի ուրիշ զգացումի: Այժմ խրամատի թեք լանջին նստած՝ նա դիտում էր իրեն շրջապատող դեմքերը:

Ժամը 10-ի մոտ արդեն քսան վիրավոր տարան մարտկոցից: Երկու թնդանոթ շարդպեցին, և հետզհետե ավելի ու ավելի գալիս մարտկոցի վրա ընկնում էին ոռումքեր, վժժալով ու սուլելով թուշում էին հեռավոր գնդակները: Եվ մարտկոցում գտնված մարդիկ կարծես չէին նկատում այդ. ամեն կողմից լսվում էին ուրախ զրուցներ ու կատակներ:

— Ռումբը, — բոռաց մի զինվոր մոտեցող ու շաշունով թոշող նոնակի վրա:

— Էստեղ չի' գալիս: Հետևակի կողմն է գնում, — քրքի-

շով ավելացրեց մյուսը, նկատելով, որ նոնակը թռավ և ընկալ պաշտպանող զորամասի շարքերը:

— Հը՞, ծանո՞թ է, — ծիծաղեց մի ուրիշ զինվոր գյուղացու վրա, որ կուացավ թոշող ուսմբի տակ:

Մի քանի զինվոր հավաքվել էին հողապատճեշի մոտ ու դիտում էին, թե ի՞նչ է կատարվում առջևում:

— Զորաշղթան էլ վերցրին, տեսար. ետ գնացին, — ասում էին նրանք, հողապատճեշի վրայից ցույց տալով:

— Քո գործին նայիր, — բոռաց նրանց վրա ենթասպան: Ետ գնացին՝ նշանակում է ետևում գործ կա:

— Եվ ենթասպան, մի զինվորի ուսից բոնելով, խփեց նրան ծնկով: Քրքիջ բարձրացավ:

— Դեպի հինգերորդ թնդանոթը, գնացեք քաշեք, — բոռում էին մի կողմից:

— Միանգամից, միասին, բուռակավարի<sup>1</sup>, — լսվում էին թնդանոթը փոխողների ուրախ կանչեր:

— Այ, քիչ մնաց մեր աղայի շլյապան թոցներ, — ատամներց ցույց տալով Պիեռի վրա ծիծաղեց կարմրադեմ կատականը: — է, անշնորհք, — կշտամբանքով ավելացրեց նա ոռումքին դիմելով, որ դիպավ անիվին ու մի զինվորի ոտի:

— է, դուք, աղվեսներ, — ծիծաղեց մյուսը կուացող աշխարհազորականների վրա, որ մտել էին մարտկոցը՝ վիրավորներ վերցնելու:

— Հը', կաշան համով չի': Ա'խ, ագռավներ, ի՞նչ եք 22մել մնացել, — բոռում էին աշխարհազորականների վրա, որ 2րդի փոթված կանգնել էին ոտը կտրված զինվորի առաջ:

— Նա ի՞նչ տղա է որ, — ծաղրում էին գյուղացիներին, — Հեշ չի սիրում:

Պիեռը նկատում էր, որ յուրաքանչյուր ընկած ոռումքից հետո, յուրաքանչյուր կորստից հետո ընդհանուր կենդանությունն ավելի ու ավելի տաքանում էր:

Ինչպես մոտեցող փոթորկաբեր ամպից, ավելի ու ավելի հաճախ, այդ բոլոր մարդկանց դեմքերին հետզհետե ավելի

<sup>1</sup> Բուռակներ կոչվում են նավը թոկերով ափ քաշող բանվորները (Վուդ դա գետի վրա):

պայծառ էին բոնկում (կարծես կատարվածին հակառակ) թար-  
նըլված, բոցավառվող կրակի կայծակները:

Պիեռը չէր նայում առաջ՝ ճակատամարտի դաշտին և չէր  
ճշտաքրքրվում իմանալ, թե ի՞նչ է կատարվում այնտեղ. նա  
ամբողջովին կլանված էր այդ հետգհետե ավելի բոնկվող կր-  
րակով, որը նույն կերպ (նա զգում էր) բոնկվել էր և իր հոգում:

Ժամը տասին հետևակ զինվորները, որ գտնվում էին մարտ-  
ելոցից առաջ՝ թփերի մեջ և Կամենկա գետի երկարությամբ,  
հաշանջեցին: Մարտկոցից երևում էր, թե ինչպես էին նրանք  
ետ վագում մարտկոցի կողքով, տանելով վիրավորներին՝  
հրացանների վրա դրած: Մի ինչ-որ գեներալ իր շքախմբով  
բարձրացավ կուրգանը և, գնդապետի հետ իսոսելով, բարկա-  
ցած նայեց Պիեռին, նորից իշավ ցած, հրամայելով մարտկոցի  
ետևը գտնվող պաշտպան հետևակին՝ պառկել, որպեսզի  
սկելի քիչ ենթարկվեն կրակոցների: Դրանից անմիջապես  
հետո հետևակի շարքերում, մարտկոցից դեպի աշ, լսվեց թրմ-  
բռնվի ձայն, հրամանի կանչեր և մարտկոցից երևում էր թե  
ինչպես հետևակի շարքերը շարժվեցին առաջ:

Պիեռը նայեց հողապատնեշին: Մի դեմք առանձնապես  
նրա աշբովն ընկավ: Դա մի սպա էր, որ գունատ ջանել դեմքով  
նաև ետ էր գալիս՝ իշեցրած թուրը ձեռին, ու անհանգիստ շուրջն  
էր նայում:

Հետևակ զինվորների շարքերն աներևութացան ծխի մեջ,  
լսվեց նրանց ձիգ կանչը և հաճախակի հրացանաձգությունը:  
Մի քանի բոպե անց վիրավորների բազմություն ու պատգա-  
րակներ եկան այնտեղից: Ավելի ևս հաճախացան մարտկոցի  
վրա ընկնող ոռումքերը: Մի քանի մարդ մնացել էին պառկած-  
ընկած: Թնդանոթների շուրջը զինվորները շարժվում էին էլ  
ավելի փութենութեած ու աշխատացած: Ոչ ոք այլևս ուշադրություն  
չէր դարձնում Պիեռի վրա: Մի երկու անգամ բարկացած բո-  
ռուացին նրա վրա, որ կանգնել էր ճանապարհին: Ավագ սպան,  
խորոռած դեմքով, մեծ արագ քայլերով անցնում էր մի թնդա-  
նոթից դեպի մյուսը: Փոքրիկ սպան, էլ ավելի կարմրած, էլ  
ավելի ջանասիրությամբ կարգադրություններ էր անում զին-  
վորներին: Զինվորները ոռումքեր էին տալիս, շուր էին գալիս,  
թնդանոթները լցնում ու իրենց գործը կատարում էին լարված

ցուցամոլությամբ: Նրանք քայլելիս ծուլ-ծուլ էին լինում,  
կարծես զապանակների վրա:

Փոթորկաբեր ամպը մոտեցավ, և բոլորի գեմքերին պայ-  
ծառորեն վառվեց այն կրակը, որի բոնկումին հետեւում էր  
Պիեռը: Նա կանգնել էր ավագ սպայի կողքին: Փոքրիկ սպան  
վագեվազ, ձեռը կիվերին դրած, եկավ ավագի մոտ:

— Պատիվ ունեմ հայտնելու, պարոն գնդապետ, մնացել է  
միայն ութ ոռւմբ. կհրամայեք արդյո՞ք շարունակել, — հարց-  
րեց նա:

— Կարտե՛՛, — առանց պատասխանելու, ճշաց ավագ ըս-  
պան, նայելով հողապատնեշից:

Հանկարծ ինչ-որ բան պատահեց. փոքրիկ սպան ա'խ արալ  
ու, կուշ գալով, նատեց գետնին, որպես թուշքի միջոցին խըփ-  
կած թռչուն: Ամեն ինչ տարօրինակ, անորոշ ու մոայլ երկաց  
Պիեռի աշբերին:

Մեկը մյուսի ետևից շաշում էին ոռւմքերը և գիպչում մարտ-  
կոցի պատվարին, զինվորներին, թնդանոթներին: Պիեռը,  
որ առաջ չէր լսել այդ ձայները, այժմ միմիայն այդ ձայներն  
էր լսում: Մարտկոցի աջ կողքով, «ուռա» կանչելով վագում  
էին զինվորները ոչ թե առաջ, այլ ետ, ինչպես թվաց Պիեռին:

Ռումբը դիպավ հողապատնեշի ծայրին, որի առջև կանգնած  
էր Պիեռը, հողը թափեց, և նրա աշքին երևաց մի սև գնդակ, և  
նույն ակնթարթին դիպավ ինչ-որ բանի: Աշխարհազորական-  
ները, որ ուզում էին մտնել մարտկոցը, ետ վագեցին:

— Շարունակ կարտե՛՛, — բոռաց սպան:

Ենթասպան վազեց ավագ սպայի մոտ և վախեցած շշուն-  
չով (ինչպես ճաշի ժամանակ սպասավորապետը զեկուցի  
տիրոջը, թե չկա այլևս պահանջվող գինուց) ասավ, թե ոռւմ-  
բեր շկան այլևս:

— Ավագակներ, ի՞նչ են անում, — ճշաց սպան, Պիեռին  
դառնալով:

Ավագ սպայի դեմքը կարմրած էր ու քրտնած, աշքերը  
փալում էին կիտած հոնքերի տակ:

— Գնա՛ դեպի պահեստները, արկդեր բեր, — ճշաց նա,  
բարկացած հայացքով զանց առնելով Պիեռին և դառնալով  
դեպի իր զինվարը:

— Ես կերթամ, — ասավ Պիեռը:

Սպան շպատասխանեց նրան, մեծ-մեծ քայլերով գնաց մյուս կողմը:

— Զկրակել... Սպասի՛ր, — բոռաց նա:

Զինվորը, որին հրամայվեց գնալ ոռումքերի ետևից, դիպավ դիեռին:

— Է, աղա, սա բու տեղը չի, — ասավ նա ու վազեց ցած: Պիեռը վազեց զինվորի ետևից, հեռու անցնելով այն տեղից, ուր նստած էր փոքրիկ սպան:

Մեկ, երկու, երեք ոռումքեր թռան նրանց գլխի վրայից, դիպան առջկից, կողքերից, ետևից: Պիեռը վազեց ցած: «Ո՞ւ եմ գնում», Հանկարծ հիշեց նա. արդեն կանաչ արկղներին մոտենալով: Նա կանգ առավ անվճռականության մեջ, առաջ գնա թե ետ: Հանկարծ մի սարսափելի հարված ետ շպրտեց նրան՝ գտտին: Նույն ակնթարթին մի մեծ կրակի փայլ լուսավորեց նրան, և նույն ակնթարթին էլ հնչեց խլացուցիչ, ականջներում զրնգացող որոտ, շաշուն ու սուլոց:

Պիեռն, սթափվելով, նստել էր ետքի վրա, ձեռներով գետնին հենված. այն արկղը, որի մոտ էր ինքը, չկար. ընկած էին կանաչ, այրված տախտակներ ու փալասներ՝ խանձված խոտերի վրա, և ձին՝ լժափայտերի կտորները թափ տալով, վագումհեռանում էր նրանից, իսկ մի ուրիշ նույնպիսի ձի, ինչպես և Պիեռը, պառկած էր գետնին և ճղճղում էր երկար ու սուր ձայնով:

## XXXII

Պիեռը, վախից իրեն մոռացած, վեր թռավ տեղից ու ետ վազեց զեպի մարտկոցը, որը նրա համար միակ ապաստանն էր այն բոլոր սարսափներից, որոնցով նա շրջապատված էր:

Այն ժամանակ, երբ Պիեռը մտնում էր խրամատը, նա նկատեց, որ մարտկոցից կրակոցներ չէին լսվում, բայց այնտեղ ինչ-որ մարդիկ ինչ-որ բան էին անում: Պիեռը չկարողացավ իմանալ այն, թե ինչ մարդիկ էին դրանք: Նա տեսավ ավագ գնդապետին, որը պառկած էր հողապատնեշի վրա՝ ետքը դարձրած դեպի Պիեռը և որը կարծես ինչ-որ բան դիտում էր ցածում, և տեսավ իր նկատած մի զինվորի, որը ձգտելով ազատվել իր ձեռքերը, և տեսավ իր նկատած մարդկանցից, «Եղբայրնե՛ր» էր գոռում, և տեսավ էլի ինչ-որ տարօրինակ բան:

Բայց նա դեռ չկարողացավ կռահել այն, որ գնդապետն սպանված էր, որ «Եղբայրներ» գոռացողը գերի էր, որ իր աշքի առաջ սպինով մեջքից խոցոտվեց մի այլ զինվոր: Հազիվ նա վագեց մտավ խրամատը, նիհար, գեղին, քրտնած գեմքով մեկը, կապույտ մունդիրով, թուրը ձեռին վազեց Պիեռի վրա, ինչ-որ բան գոռալով: Պիեռը, բնազդաբար պաշտպանվելով հարվածից, — որովհետև նրանք իրար շտեսնելով վազեցին իրար դեմ, — ձեռքերն առաջ բերեց և մի ձեռքով բռնեց այդ մարդու (դա ֆրանսական սպա էր) ուսից, մյուսով՝ կոկորդից և Սպան թուրը բաց թողնելով, բռնեց Պիեռի ձեռքից:

Մի քանի վայրկյան նրանք երկուսով էլ վախեցած աշքերով նայում էին միմյանց, մեկը մյուսի խորթ գեմքին, և երկուսն էլ տարակուսում էին, թե իրենք ինչ արին և ինչ պետք է անեն: «Ե՞ս եմ արդյոք գերի վերցված, թե՞ն նա է գերի ընկել իմ ձեռքը» մտածում էր նրանցից յուրաքանչյուրը: Բայց, ըստ երկույթին, ֆրանսական սպան ավելի էր հակամետ կարծելու, որ ինքն է գերի վերցված, որովհետև Պիեռի ուժեղ ձեռքը, որը գործում էր ակամա ահից, հետզհետե ավելի ու ավելի ամուռ էր սեղմում սպայի կոկորդը: Ֆրանսացին ուզում էր ինչ-որ բան ասել, երբ հանկարծ հենց նրանց գլխի վերևում, բավական ցած ու սոսկալի սուլեց մի ոռումք, և Պիեռին թվաց, որ ֆրանսական սպայի գլուխը պոկված է. այնպես արագ կուցրեց նա իր գլուխը: Պիեռը նույնպիս կուցրեց գլուխը և ձեռքերը թողեց: Այլևս շմտածելով, թե ո՞վ է ո՞ւմ գերի վերցրել, ֆրանսացին ետ վազեց դեպի մարտկոցը, իսկ Պիեռը՝ սարն ի վայր, դիպչելով սպանվածներին ու վիրավորներին, որոնք, ինչպես թվում էր նրան, բռնում են նրա ոտքերից: Բայց նա դեռ ցած չէր հասել, երբ նրա դեռուցի հերեցին փախչող ուսւագիների հոծ խմբեր, որոնք ընկնելով, սայթաքելով և գուալով, ուրախ և թափով վազում էին դեպի մարտկոցը: (Այդ այն հարձակումն էր, որը երմուզին իրեն էր վերագրում, ասելով, որ միայն ինքը կարող էր իր քաջությամք ու բախտով այդպիսի քաջագործություն կատարել, և այն հարձակումը, որի ժամանակ նա իրը թե գեորգյան խաչեր է նետել կուրգանի վրա, խաչեր, որ եղել են նրա գրպանում):

Մարտկողը գրաված ֆրանսացիները փախուստի դիմեցին։ Մեր զորքերը «ուռա» գոյլելով մարտկոցից այնքան հեռու թըշեցին ֆրանսացիներին, որ դժվար էր նրանց կանգնեցնել։

Մարտկոցից գիրիներին տեղափոխեցին. նրանց թվում էր մի վիրավոր ֆրանսական գեներալ, որին սպաները շրջապատեցին։ Վիրավորների հոծ խմբերը, որոնց մեջ կային և Պիեռի ծանոթներից և ոչ ծանոթներից, ոռու և ֆրանսացիներ, տանջանքից այլանդակված դեմքերով գնում էին ոտքով, սողում էին և պատգարակներով տեղափոխվում էին մարտկոցից։ Պիեռը բարձրացավ կուրգանը, որտեղ նա անցկացրեց մեկ ժամից ավելի, բայց այն ընտանեկան շրջանից, որը նրան իր մոտ էր ընդունել, նա ոչ ոքի չգտավ։ Այդուղ շատ մեռածներ կային, որոնք նրան անծանոթ էին։ Բայց մի քանիսին նա ճանաչց, Երիտասարդ սպան, դարձյալ կուշ եկած, նստել էր հողապատնեշի եղրին, արյան լճակի մեջ։ Կարմրագեմ զինվորը դեռ ցնցվում էր, բայց նրան չէին տարել։

Պիեռը վազեց ցած։

«Ո՛չ, այժմ նրանք կհրաժարվեն դրանից. այժմ նրանք կսոսկան այն բանից, ինչ արել են», մտածում էր Պիեռը, աննպատակ հետևելով այն բազմաթիվ պատգարակներին, որ տանում էին կովի դաշտից։

Բայց արեք, որի երեսը ծածկել էր ծուխը, դեռ բարձր էր, և առցելում, և մանավանդ դեպի ձախ, Սեմյոնովկոյեի մոտ, ինչոր բան եռում էր ծխի մեջ, և հրացանածգության բոմբյունն ու հրետակոծությունը ոչ միայն չէին թուլանում, այլ սաստկանում էին հուսահատության չափ, այնպես, ինչպես գոռում է գերլարվող մարդը, հավաքելով իր վերջին ուժերը։

### XXXIII

Ցորողինոյի ճակատամարտի գլխավոր գործողությունը տեղի ունեցավ 1000 սաժեն տարածության վրա՝ Ցորողինոյի և Բագրատիոնի Փլեշների միջև։ (Այդ տարածությունից դուրս՝ օրվա կեսին, մի կողմից ուստաները Ուկարովի Հեծելագործ կորացուց արին, մյուս կողմից Ուստիցայի մոտերքում ընդհարում եղավ Պոնյատովսկու և Տուչկովի միջև։ Բայց դրանք երկու առանձին ու թույլ գործողություններ էին՝ համեմա-

տած այն բանի հետ, ինչ կատարվում էր կովի դաշտի կենտրոնում։ Բորողինոյի և Փլեշների միջև գտնվող դաշտում, անտարի մոտ երկու կողմից բաց ու տեսանելի տարածության վրա, տեղի ունեցավ ճակատամարտի գլխավոր գործողությունն ամենապարզ ձևով։

Ճակատամարտն սկսվեց հրետակոծությամբ, որը տեղի էր ունենում երկու կողմից՝ մի քանի հարյուր հրանոթներից։

Հետո, երբ ծուխը ծածկեց ամբողջ դաշտը, այդ ծխի մեջ աշխից (ֆրանսացիների կողմից) Դեսսեի և Կոմանի երկու դիվիզիաները շարժվեցին հարձակում գործելու Փլեշների վրա և ճախից փոխարքայի գնդերը՝ Բորողինոյի վրա։

Շեարդինոյի ոեցուտից, որտեղ կանգնած էր Նապոլեոնը, Փլեշները գտնվում էին մեկ վերստ հեռավորության վրա, իսկ Բորողինոն ավելի քան երկու վերստ հեռավորության վրա՝ ուղիղ գծով, ուստի և նապոլեոնը չէր կարող տեսնել այն, ինչ կատարվում էր այնտեղ, մանավանդ որ ծուխը՝ խառնվելով մառախուղին ծածկում էր ամբողջ դաշտը։ Դեսսեի դիվիզիայի գինվորները, որոնք պետք է հարձակվեին Փլեշների վրա, երեսում էին միայն այնքան ժամանակ, քանի դեռ չէին իշել այն ձորակը, որ նրանց բաժանում էր Փլեշից։ Հենց որ նրանք իշան ձորակը, հրանոթային և հրացանային կրակի ծուխը Փլեշների վրա այնքան թանձրացավ, որ ծածկեց ձորակի այն կողմի ամբողջ զառիվերը։ Այնտեղ ծխի միջով հազիվ ինչ-որ բան սկին էր տալիս, հավանորեն մարդիկ էին, և երբեմն երեւում էր սվինների փայլ։ Բայց շարժվում էին արդյոք նրանք, թե՝ կանգնած էին, ֆրանսացիներ էին, թե՝ ուսւներ, այդ չէր երեսում Շեարդինոյի ոեցուտից։

Արեւ պայծառորեն ծագեց և թիք ճառագայթներով խփում էր ուղիղ նապոլեոնի երեսին, որը ձեռքը ճակատին դրած նայում էր Փլեշներին, ծուխը փովում էր Փլեշների առջև, և մերթ թվում էր, թե ծուխն է շարժվում, մերթ թվում էր, թե զորքերն էին շարժվում։ Կրակոցների միջից երբեմն մարդկանց ճիշեր էին լսվում, բայց անհնարին էր իմանալ, թե նրանք ինչ էին անում այնտեղ։

Նապոլեոնը կուրգանի վրա կանգնած դիտափողով նայում էր, և դիտափողի փոքրիկ բոլորակի մեջ ծուխ ու մարդիկ էր տեսնում, երբեմն յուրացիններին, երբեմն ուսւներին. բայց

թե որտեղ է այն, ինչ նա տեսնում էր, չեր կարողանում իմաստալ, երբ նորից հասարակ աշխով էր նայում:

Նա կուրգանից իշավ և սկսեց նրա առջև երթևեկել:

Մերթ ընդ մերթ նա կանգ էր առնում, ականջ էր դնում կրակոցներին և ուշադրությամբ նայում գեղի կովի դաշտը:

Ոչ միայն ցածում, այն տեղից, որտեղ նա կանգնած էր, ոչ միայն կուրգանի վրայից, որտեղ այժմ կանգնած էին նրա գեներալները, այլև հենց ֆլեշներից, որտեղ այժմ գտնվում էին միասին և փոխեփոխ մերթ ոռու, մերթ ֆրանսացի — մեռած, վիրավոր և կենդանի, սարսափահար կամ խելագարված — զինվորներ, չեր կարելի հասկանալ, թե ինչ էր կատարվում այդ տեղում: Մի քանի ժամ շարունակ այդտեղ, հրացանային և թնդանոթային անլոելի հրածության մեջ մերթ երեւմ էին միայն ոռու, մերթ միայն ֆրանսացի, մերթ հետեւակ, մերթ հեծելակ զինվորներ, երեւում էին, ընկնում, կրակում, ընդհարվում, շիմանալով, թե ինչ անեն իրար, գոսում էին ու ետ վագում:

Կովի դաշտից շարունակ նապոլեոնի մոտ էին գալիս նրա ուղարկած աղյուտանտները և նրա մարշալների պատվերատարները, որոնք զեկուցներ էին բերում ուազմական գործողությունների ընթացքի մասին: Բայց այդ բոլոր զեկուցներն էլ ստահող էին և այն պատճառով, որ կովի տաք ժամանակ անհնարին է ասել, թե ինչ է կատարվում տվյալ պահին. և այն պատճառով, որ աղյուտանտներից շատերը չեին հասնում ճակատամարտի իսկական վայրը, այլ հազորդում էին այն, ինչ լսել էին ուրիշներից. և մեկ էլ այն պատճառով, որ մինչև աղյուտանտն անցնում էր այն երկու-երեք վերստը, որը բաժանում էր նրան նապոլեոնից, հանգամանքերը փոխվում էին, և այն լուրը, որ նա տանում էր, արդեն անստույգ էր դառնում: Օրինակ՝ փոխարքայի մոտից եկած մի աղյուտանտ լուր էր բերել, թե Բորոդինոն գրավված է և Կոլոչայի կամուրջը ֆրանսացիների ձեռքին է: Աղյուտանտը նապոլեոնին հարցրել էր, թե կհրամայի՞ նա արդյոք գորբերին անցնել գետի մրուս կողմը: Նապոլեոնը հրամայել էր, որ օրբերը շարք կանգնեն գետի այն կողմում և սպասեն: Բայց ոչ միայն արև ժամանակ, երբ նապոլեոնը անում էր այդ կարգադրությունը, այլ հենց այն ժամանակ, երբ աղյուտանտը դեռ նոր էր հեռացել Բորո-

դինոյից, կամուրջն արդեն ոռւսները ետ էին վերցրել և այրել հենց այն ճակատամարտում, որին մասնակցել էր Պիեռը կոփվը նոր սկսվելիս:

Ֆլեշներից սրարշավ եկած գումատ, վախեցած զեմքով աղյուտանտը հայտնեց նապոլեոնին, թե հարձակումը ետ է մղված, Կոմպանը վիրավորված, է իսկ Դավուն սպանված. մինչդեռ ֆլեշները գրավել էր մի այլ զորամաս, և այն ժամանակ, երբ աղյուտանտին հայտնում էին, որ ֆրանսացիների հարձակումը ետ է մղված, և երբ Դավուն դեռ կենդանի էր ու միայն թեթև կոնտուզիա էր ստացել: Նկատի առնելով այդպիսի անխուսափելիորեն սուտ տեղեկությունները, նապոլեոնը կարգադրություններ էր անում, որոնք կամ արդեն ավելի առաջ էին կատարված, քան նա էր անում, կամ չէին կարող կատարվել և չէին կատարվում:

Այն մարշալներն ու գեներալները, որոնք կովի դաշտից ավելի փոքր հեռավորության վրա էին գտնվում, բայց որոնք նույնպես, ինչպես և նապոլեոնը անմիջականորեն չէին մասնակցում կոփվներին և միայն հազվագյուտ զեպքերում էին մտնում գնդակների կրակի տակ, առանց նապոլեոնին հարցնելու, իրենց կարգադրություններն էին անում և հրամաններ արձակում այն մասին, թե ո՞ր կողմը և ո՞րտեղից պետք է կրակել, ո՞ր կողմը պետք է քշեն հեծելակները և' ու'ր վագեն հետևակները: Բայց անգամ նրանց կարգադրությունները, ճիշտ այնպես, ինչպես նապոլեոնի կարգադրությունները, շատ աննշան շափով և հազվագյուտ զեպքերում էին ի կատար ածվում: Մեծ մասամբ կատարվում էր հակառակն այն բանի, ինչ նրանք էին կարգադրել: Այն զինվորները, որոնց կարգադրությունները էր առաջ գնալ, ընկնելով կարտեցի կրակի տակ, ետ էին գնում. իսկ այն զինվորները, որոնց կարգադրված էր մքնալ իրենց տեղում, հանկարծ իրենց առջև տեսնելով անսպասելի կերպով երեացող ոռւսներին, երբեմն առաջ էին նետվում, և հեծելազորը արշավում էր առանց փախչող ոռւսներին ռոնելու հրաման ունենալու: Այսպես հեծելազորի երկու գունդ քշեցին-անցան Սեմյոնովսկոյեի ձորակը, և հենց որ բարձրացան սարը, իւկույն ետ դարձրին ձիերի զլուխները և ամբողջ թափով քշեցին զեպի ետ: Այսպես էին շարժվում հետևակ զինվորները, երբեմն առաջ վագելով բոլորովին ոչ այն ուղ-

զությամբ, ուր նրանց կարգադրել էին: Բոլոր՝ կարգադրությունը ները այն մասին, թե ուր և երբ շարժել թնդանոթները, երբ հետևակ զինվորներին ուղարկել կրակելու, երբ հեծելակներին — ուրս հետևակներին ոտնակոխ անելու, — այդ բոլոր կարգադրությունները անում էին զորամասերի ամենամերձավոր պետերը, որոնք շարքերում էին, և այդ անում էին նրանք առանց հարցնելու ոչ միայն նապոլեոնին, այլ նույնիսկ նեյին, Դավուին և Մյուրատին: Նրանք չէին վախենում տուժանքի ենթարկվելուց՝ նրա համար, որ կարգադրությունը չեն կատարել կամ ինքնագլուխ կարգադրություն են արել, որովհետև կովի մեջ հարցը վերաբերում է մարդու համար ամենաթանկագին բանին — սեփական կյանքին: Եվ երբեմն թվում է, որ փրկությունը ետ փախչելն է, երբեմն՝ առաջ վագելը, և րոպեի տրամադրության համեմատ էլ վարվում էին այդ մարդիկ կովի ամենատաք ժամանակ, էապես այդ բոլոր առաջնաղացումներն ու ընկրումները չէին թեթևացնում և չէին փոխում զորքերի դրությունը: Հետևակ և հեծելակ զորքերի միմյանց դեմ գործած հարձակումները ոչ մի վնաս չէին հասցնում նրանց. վնաս, մահ և հաշմություն պատճառում էին ոռումքերն ու գնդակները, որոնք թռչում էին այն ամրող տարածության մեջ, ուր այդ մարդիկ այս ու այն կողմն էին նետվում: Հենց որ այդ մարդիկ դուրս էին գալիս այն տարածությունից, ուր ոռումքեր ու գնդակներ էին թռչում, ապա նրանց ետևում գտնվող զորապետները նրանց հավաքում, կազմակերպում էին, կարգապահության էին ենթարկում և այդ կարգապահության ազդեցությամբ նորից տանում էին նրանց կրակի շրջանը, որտեղ նրանք նորից (մահվան երկյուղի ազդեցության տակ) կորցնում էին կարգապահությունը և այս ու այն կողմ էին նետվում ամրոխի պատճական տրամադրությամբ:

## XXXIV

Նապոլեոնի գեներալները — Դավուն, Նեյը և Մյուրատը, որոնք գտնվում էին կրակի գծին բավական մոտ և երբեմն նույնիսկ մտնում էին այդ գիծը — մի քանի անգամ այդտեղ, կրակի այդ գիծը հսկայական թվով կանոնավոր շարքեր կար-

մած զորքեր են մտցրել: Բայց հակառակ այն բանի, ինչ անփոփոխ կերպով կատարվում էր բոլոր նախկին ճակատամարտերում, թշնամու փախուստի վերաբերյալ սպասվող լուրի փոխարեն կանոնավոր շարքերով ուղարկված զորքերն այդտեղից վերադառնում էին կազմալուծված, սարսափահար, խմբերով: Նրանք նորից վերակազմում էին նրանց, բայց մարդկանց թիվը հետզհետե ավելի և ավելի պակասում էր: Օրվա կեսին Մյուրատն իր աղյուսանտին նապոլեոնի մոտ ուղարկեց՝ օժանդակ ուժեր ուղարկելու պահանջով:

Նապոլեոնը նստած էր կորգանի տակ և փունջ էր խմում, երբ նրա մոտ եկավ Մյուրատի աղյուսանտն այն հավաստիացումներով, թե ուրսն կը կազմուի նորին մեծությունը և մեկ դիվիզիա տա:

— Օժանդակ զո՞րք, — ասավ Նապոլեոնը խիստ զարմանքով, կարծես չհասկանալով նրա խոսքերը և նայելով գեղեցիկ աղյուսանտ տղային, որը երկար, գանգուր սև մազեր ուներ (այնպես, ինչպես Սյուրատի մազերն էին):

« Օժանդակ զո՞րք» մտածեց Նապոլեոնը: « Էլ ի՞նչ օժանդակ զորք են խնդրում նրանք, երբ նրանց ձեռքին է բանակի կեսը ուղղված ուռւների թույլ, շամրացրած զորաթեր դեմ»:

— Dites au roi de Naples, — խիստ շեշտով ասավ Նապոլեոնը, — qu'il n'est pas midi et que je ne vois pas encore clair sur mon échiquier. Allez...<sup>1</sup>

Երկար մազերով գեղեցիկ աղյուսանտ տղան, առանց ձեռքը գլխարկից հեռացնելու, ծանր հառաշելով, նորից ձին քշեց այնտեղ, ուր մարդիկ էին սպանում:

Նապոլեոնը վեր կացավ և իր մոտ կանչելով Կոլենկուրին և Բերտյեն, սկսեց խոսել նրանց հետ՝ ճակատամարտին մը վերաբերող գործերի մասին:

Խոսակցության կեսին, մի խոսակցություն, որն սկսել էր Նապոլեոնին զբաղեցնել, Բերտյեի հայացքը դարձավ զեպի այն գեներալը, որը շքախմբով քրտնած ձին քշում էր զեպի կուրգանը: Դա Բելլարն էր: Նա, իշնելով ձիուց, արագ քայլերով մոտեցավ կայսրին և համարձակուրեն, բարձր ձայնով սկսեց

<sup>1</sup> Ասացեք Նետապոլի թագավորին, որ այժմ դեռ կեսօր չէ և ես դեռ պարզ չեմ տեսնում իմ շախմատի տախտակը: Գնացեք...

ապացուցել օժանդակ զորք ուղարկելու անհրաժեշտությունը; Նա պատվով էր երգվում, որ ուսւները կկործանվեն, եթե կայսրը ևս մեկ դիվիզիա տա:

Նապոլեոնը ուսերը վեր քաշեց և, ոչնչ շպատախանելով, շարունակեց իր գրոսանքը: Բելյարն սկսեց բարձրածայն և աշխուժորեն խոսել շքախմբի գեներալների հետ, որոնք շրջապատել էին նրան:

— Դուք շատ դյուրաբորբոք եք, Բելյա՛ր, — ասավ Նապոլեոնը, նորից մոտենալով եկած գեներալին: — Բորբոքված վիճակում հեշտությամբ կարելի է սխալվել: Գնացե՛ք և տեսե՛ք, և այն ժամանակ եկե՛ք ինձ մոտ:

Բելյարը գեռ աշխից չէր հեռացել, երբ մյուս կողմից եկավ կովի դաշտից ուղարկված մի նոր ձիավոր սուրհանդակ:

— Eh bien qui'est-ce qu'il y a? — ասավ Նապոլեոնը մի շեշտով, որ հատուկ է ան մարդուն, որը բորբոքված է իրեն անվերջ խանգարելուց:

— Sire, le Prince...<sup>2</sup> — սկսեց աղյուսանտը:

— Օժանդակ զո՞րք է խնդրում, — ցասկոտ շարժումով արտասանեց Նապոլեոնը:

Աղյուսանտը հաստատողաբար թեքեց գլուխը և սկսեց զեկուցել, բայց կայսրը երեսը դարձրեց նրանից, երկու քայլ արավ, կանգ առավ, ետ եկավ և Բերտյեին իր մոտ կանչեց:

— Պետք է օժանդակ ուժեր տալ, — ասավ նա ձեռքը թեթևակի տարածելով: — Ում ուղարկել այնտեղ, ի՞նչպես եք կարծում, — դիմեց նա Բերտյեին, այդ օison que j'ai fait aigle<sup>3</sup>, ինչպես նա հետագայում անվանում էր նրան:

— Թագավո՞ր, պետք է Կալապարեղի դիվիզիան ուղարկել, — ասավ Բերտյեն, որը անգիր գիտեր բոլոր դիվիզիաները, գընդերը և գումարտակները:

Նապոլեոնը գլխով դրական նշան արավ:

Աղյուսանտը ձին քեց դեպի Կալապարեղի դիվիզիան: Եվ մի քանի րոպեից հետո կուրգանի ետևում գտնվող երիտասարդ գվարդիան շարժվեց իր տեղից: Նապոլեոնը լուր նայում էր արդ ուղղությամբ:

<sup>1</sup> Է, ինչ եք ուղում:

<sup>2</sup> Զերդ մեծություն, իշխանու...

<sup>3</sup> Սադի ճուտ, որին ես արձիկ եմ դարձրել:

— Ո՛չ, — հանկարծ դիմեց նա Բերտյեին, — չեմ կարող Կալապարեղին ուղարկել: Ֆրիանի դիվիզիան ուղարկե՛ք, — ասավ նա:

Թեև ոչ մի առավելություն չկար այն բանում, որ Կալապարեղի դիվիզիայի փոխարեն Ֆրիանին ուղարկեն, և նույնիսկ ակնհայտորեն պարզ էր, որ Կալապարեղին պահելով և Ֆրիանին ուղարկելով անհարմարություն ու հապաղում կառաջանա, այնուամենայնիվ կարգադրությունը ճշտությամբ կատարվեց: Նապոլեոնը չէր տեսնում, որ ինքն իր զորքերի վերաբերմամբ կատարում էր այն բժշկի դերը, որն իր դեղերով միայն խանդակում է, — մի գեր, որը նա այնպես ճիշտ հասկանում ու դատապարտում էր:

Ֆրիանի դիվիզիան նույնպես, ինչպես և մյուսները, աներեւ գութացավ մարտադաշտի ծխի մեջ: Զանազան կողմերից զեռ աղյուսանտներ էին գալիս և բոլորը, կարծես թե նախապես համաձայնության եկած՝ միևնույն բանն էին ասում: Բոլորն էլ օժանդակ զորք էին խնդրում, բոլորն էլ ասում էին, թե ուսւներն իրենց գիրքերը պահպանում են և ո՛n feu d'enfer<sup>1</sup> են քաց անում, որից ֆրանսական զորքը հալվում է:

Նապոլեոնը մտախոհ նստած էր ծալովի աթոռի վրա:

Առավոտից գեռ քաղցած Մ. de Beausset-ն, որը սիրում էր ճանապարհորդել, մոտեցավ կայսրին և համարձակվեց հարգալիք կերպով առաջարկել նորին մեծությանը՝ նախաճաշել:

— Հույս ունեմ, որ այժմ կարող եմ ձերդ մեծությանը հաղթությամբ շնորհավորել, — ասավ նա:

Նապոլեոնը լուր քացասաբար օրորեց գլուխը: Ենթադրելով, որ բացասումը հաղթությանն է վերաբերում, և ոչ նախաճաշին, Մ. de Beausset-ն թույլ տվեց իրեն աշխուժորեն ու հարգալիք կերպով նկատել, որ աշխարհում չկան յնպիսի պատճառներ, որոնք խանգարեին նախաճաշել, երբ այդ կարելի է անել:

— Allez vous...<sup>2</sup> — հանկարծ մոայլաբար ասավ Նապոլեոնը և երեսը շուր տվեց:

<sup>1</sup> Դժոխային կրակ:

<sup>2</sup> Գնացե՛ք...

Կարեկցության, զղումի ու հիացումի երանելի ժպիտ փայլեց պարոն Բոսսեի դեմքին, և նա սահուն քայլերով հեռանալով՝ մոտեցավ մյուս գեներալներին:

Նապոլեոնը ծանր զգացում էր ապրում, նման այն զգացումին, որը միշտ ապրում է բախտավոր խաղորդը, որը խելահեղորեն նետել է իր գրամը, միշտ տարել է և հանկարծ, հենց այն ժամանակ, երբ նա հաշվի էր առել խաղի բոլոր պատահականությունները, և որն զգում է, որ որքան ավելի է մտածված իր խաղը, այնքան նա ավելի որոշակի է ատարվում:

Զորքերը նույնն էին, գեներալները նույնը, նույն պատրաստությունները, նույն դիսպոզիցիան, նույն proclamation courte et énergique<sup>1</sup>, նա ինքը նույնն էր, նա այդ գիտերը նա գիտերը, որ ինքն այժմ նույնիսկ անհամեմատ ավելի փորձված ու հմուտ էր, քան առաջ: Նույնիսկ թշնամին նույնն էր, ինչ Առևտերլիցի ու Ֆրիդլանդի տակ, բայց չնայած այդ բոլորին, նրա ձեռքի ահավոր թափը ինչ-որ կախարդական ուժի ազգեցությունից թուլանում, ընկնում էր: Նույն բոլոր նախկին ձևերը, որոնք միշտ էլ հաջողությամբ էին պահպանվում. և մարտկոցների կենտրոնացումը մի կետում, և պահեստադորի հարձակումը՝ գիծը ճեղքելու համար, և des hommes de fer<sup>2</sup> և հեծելազորի հարձակումը, — այդ բոլոր ձևերն ու հնարեն արդեն գործադրված էին, և ոչ թե միայն հաղթություն շկար, այլև ամեն կողմից ստացվում էին միևնույն լուրերը՝ սպանված ու վիրավոր գեներալների մասին, օժանդակ ուժեր ուղարկելու անհրաժեշտության մասին, ուղարկելու անհնարինության և զորքերի կազմալրուծվելու մասին:

**Առաջ**, երկու-երեք կարգադրությունից, երկու-երեք խոսքից հետո՝ շնորհավորանքներով և ուրախ դժմքերով նրա մոտ էին շտապում մարշալներն ու ադյուտանտները հայտարարելով հաղթանիշները — գերիների կորպուսներ, des faisceaux de drapeaux et d'aigles ennemis<sup>3</sup>, և թնդանոթներ, և գումակներ, — և **Մյուրատը** խնդրում էր միայն թույլ տալ, որ նա հեծելազորը բաց թողնի գումակները վերցնելու համարէ

Այդպես էր լոդիի, Մարենգոյի, Արկոլի, Ենայի, Առևտերլիցի, Վագրամի տակ, և այլ ու այլ տեղերում։ Իսկ այժմ ինչ-որ տարօրինակ բան էր կատարվում նրա զորքերի հետ։

Զնայած որ ֆլեշները գրավելու վերաբերյալ տեղեկություն էր ստացված, այնուամենայնիվ նապոլեոնը տեսնում էր, որ այդ այն չէր, բոլորովին այն չէր, ինչ եղել էր նախկին բոլոր կոփվներում: Նա տեսնում էր, որ նույն այն զգացումը, որ ապրում էր ինքը, ապրում էին և բոլոր նրան շրջապատող մարդիկ, որոնք փորձվել էին կոփվներում: Բոլորի դեմքերը տիսուր էին, բոլորը խուսափում էին միմյանց երեսի նայելուց: Միմիայն թուսսեն կարող էր հասկանալ այն բանի նշանակությունը, ինչ կատարվում էր: Իսկ նապոլեոնը իր ուզգմական երկարաժեկ փորձից լավ գիտեր, թե ինչ ասել է 8 ժամ տևող այն ճակատամարտը, որտեղ հարձակվողը չի հաղթել նույնիսկ բոլոր ջանքերը գրրծ զնելուց հետո: Նա գիտեր, որ գագրեթե տանուկ տված ճակատամարտ էր, և որ ամենաշնչին պատահականությունը կարող էր այժմ, — երբ ճակատամարտը տատանման ամենալարված կետում էր գտնվում, — կործանել և իրեն, և իր բանակը:

Երբ նա խորհում էր այդ ամբողջ տարօրինակ ոռւսական պատերազմի մասին, որտեղ նա ոչ մի կովում հաղթող շելավ, որտեղ երկու ամսվա ընթացքում չէին վերցրել ոչ դրոշակներ, ոչ թնդանոթներ, ոչ էլ կորպուսներով զորքեր. երբ նայում էր իրեն շրջապատողների թաքուն տիրություն արտահայտող գեմքերին և տեղեկություններ էր ստանում, թե ոռւսները գեռ դիմադրում են, — նրան տիրում էր մի ահավոր զգացում, նման այն զգացումին, որ մարդիկ ապրում են երազատեսության միջոցին, և նրա մտքով անցնում էին այն բոլոր գժբախտ պատահականությունները, որոնք կարող էին կործանել նրան: Ռուսները կարող էին հարձակվել նրա ձախ թիկ վրա, կարող էին ճեղքել նրա բանակի կենտրոնը, պատահական մի զբեդակ կարող էր վերջ դնել իր իսկ կյանքին: Այդ բոլորը հնարավոր էր: Նախորդ կոփիլներում նրա միտքը զբաղեցնում էին միայն հաջողության պատահականությունները. մինչեռ այժմ նրան ներկայացնում էին անթիվ ու անհամար գժբախտ պատահականություններ, որոնց բոլորին էլ նա սպասում էր: Այս, այդ բոլորը կարծես երազ լինի, մի երազ, երբ մարդ իրեն ցըս

<sup>1</sup> Կարճ է վճռական հայտարարությունը:

<sup>2</sup> Երկաթե մարդկանց :

<sup>3</sup> Թշնամու դրոշակների և արծիվների խրձեր

Հարձակվող շարագործ է տեսնում, և մարդ երազի մեջ ձեռները բարձրացնում ու հարվածում է իր շարագործին այնպիսի ահավոր ճիգ գործ դնելով, որը, նա գիտի, որ պետք է ոչնչացնի նրան, և միաժամանակ զգում է, որ իր ձեռքը թույլ ու անզոր ընկնում է որպես մի լաթ, և անխուսափելի կործանման սարսափն է տիրում անզոր մարդուն:

Այն լուրը, թե ուուները հարձակվել են ֆրանսական բանակի ձախ թևի վրա, Նապոլեոնի մեջ այդ սարսափն առաջցրեց: Նա լուս նստած էր կուրգանի տակ ծալովի աթոսի վրա, գլուխը կախ և արմունկները ծնկներին դրած: Բերտյեն մոտեցավ նրան և առաջարկեց գնալ՝ դիտելու զորագիծը, որպեսզի Նապոլեոնը համոզվի, թե ինչ դրության մեջ է կը ոիվը:

— Ի՞նչ. ի՞նչ եք ասում, — ասավ Նապոլեոնը: — Այո՛, կարգադրեցե՞ք ձիս բերեն:

Նա հեծավ ձին և քշեց գեպի Սեմյոնովսկոյեն:

Դանդաղորեն ցրվող վառողի ծխի մեջ այն ամբողջ տարածությամբ, որով ձիով անցնում էր Նապոլեոնը, արյան լճակների մեջ ընկած էին ձիեր ու մարդիկ՝ մեկ-մեկ ու կույտերով: Նման սարսափ, այդքան սպանվածներ այդպիսի փոքր տարածության վրա գեռ երթեք չէին տեսել ոչ Նապոլեոնը և ոչ էլ նրա գեներալներից որևէ մեկը: Թնդանոթների թնդունը, որ 10 ժամ շարունակ շէր դադարում և տանջագին հոգնեցրել էր բոլորի ականջը, առանձին լրջությունն էր աւալիս տեսարանին (ինչպես երածշտությունը կենդանի պատկերների ժամանակ): Նապոլեոնը ձին քշեց Սեմյոնովսկոյեի բարձունքը և ծխի միշտվ տեսավ մարդկանց շարքեր, որոնք հագել էին իր աշքին անսովոր գույնի մունդիրներ: Դրանք ուուներ էին:

Ուուները խիտ շարքերով կանգնած էին Սեմյոնովսկոյեի և կուրգանի ետևում, և նրանց հրանոթներն անդադար թնդում ու ծուխ էին արձակում նրանց գծի ուղղությամբ: Կոիվ արդեն չկար: Կար շարունակվող մարդասպանություն, որը ոչ մի արդյունք չէր տալու ոչ ուուներին և ոչ ֆրանսացիներին: Նապոլեոնը ձին կանգնեցրեց և նորից ընկավ այն մտախոհության մեջ, որից նրան դուրս էր բերել Բերտյեն: Նա չէր կարողանում դադարեցնել այն գործը, որը կատարվում էր նրա ղեկավարած և

նրանից կախված մի գործ, և այդ գործը, առաջին անգամ՝ անհաջողության պատճառով, նրան անպետք ու սարսափելի էր թվում:

Նապոլեոնին մոտեցած գեներալներից մեկը, իրեն թույլ տվեց առաջարկել նրան՝ կովի դուրս բերել հին գվարդիան: Նեյն ու Բերտյեն, որ կանգնած էին Նապոլեոնի կողքին, իրար նայեցին և արհամարհանքով ժպտացին այդ գեներալի անմիտ առաջարկի վրա:

Նապոլեոնը գլուխը կախեց և երկար ժամանակ լուս էր:

— A huit cent lieux de France je ne ferai pas démolir ma garde! — ասավ նա և ձիու գլուխը թեքելով ետ գնաց դեպի Շեարդինու:

## XXXV

Կուտուզովն՝ ալեհեր գլուխն իշեցրած՝ իր ծանր մարմնով նստել էր գորգով ծածկած նստարանին, հենց այն տեղը, ուր առավոտը տեսել էր նրան Պիեռը: Նա ոչ մի կարգադրություն չէր անում, այլ համաձայնում էր միայն կամ չէր համաձայնում այն բանին, ինչ առաջարկում էին իրեն:

«Այո, այո, արեք այդ», պատասխանում էր նա տարրեր առաջարկների առթիվ: «Այո, այո, գնա, սիրելիս, նայիր», դիմում էր նա մերթ սրան, մերթ մյուսին իր մերձավորներից: Կամ՝ «ոչ, հարկավոր չի, ավելի լավ է սպասենք», ասում էր նա: Նա լսում էր բերված զեկուցումները, տալիս էր հրամաններ, երբ այդ հարկավոր էր լինում ստորադրյալներին. բայց՝ զեկուցները լսելով, նա, թվում էր, չի հետաքրքրվում իրեն ասլող խոսքերի իմաստով, այլ նրան հետաքրքրում է ինչ-որ մի ուրիշ բան զեկուցողի զեմքի արտահայտության մեջ, նրա խոսելու տոնի մեջ: Բազմամյա ուզգմական փորձով նա գիտեր և ծերունական խելքով հասկանում էր, որ մի մարդ չի կարող ղեկավարել մահվան դեմ պայքարող հարյուր հազարավոր մարդկանց, և գիտեր, որ ճակատամարտի բախտը վճռում են ոչ թե գլխավոր հրամանատարի կարգադրությունները, ոչ թե

<sup>1</sup> Ֆրանսիայից 3500 վերստ հեռու՝ ևս թույլ չեմ տա, որ իմ զվարդիան շարդի:

այն տեղը, ուր բռնում են զորքերը, ոչ թե թնդանոթների ու սպանված մարդկանց քանակը, այլ այն անըմբռնելի ուժը, որ կոչվում է զորքի ոդի, և նա հետեւմ էր այդ ուժին ու ղեկավարում նրան, որքան նա ի վիճակի էր այդ անելու:

Կուտուզովի դեմքն արտահայտում էր կենտրոնացում, հանդարտ ուշադրություն և թույլ ու զառամ մարմնի հոգնությունը հազիվ հաղթահարող լարում:

Ժամը 11-ին նրան լուր բերին, թե ֆրանսացիների գրաված ֆլեշները նորից ետ են խլել, բայց թե իշխան Բագրատիոնը վիրավորված է: Կուտուզովը հառաջեց և գլուխն օրորեց:

— Գնա իշխան Պյոտր Իվանովիչ մոտ և մանրամասն իմացիր՝ ի՞նչ է և ինչպես, — ասավ նա աղյուտանտներից մեկին և ապա դարձավ իշխան Վիրտեմբերգսկուն, որ կանգնած էր նրա ետեւ:

— Զերդ բարձրությունը չէ՞ր հաճի արդյոք վերցնել 1-ին բանակի հրամանատարությունը:

Շուտով իշխանի մեկնելուց հետո, այնքան շուտ, որ նա դեռ չէր հասել մինչև Սեմյոնովսկոյի, իշխանի աղյուտանտը վերադարձավ նրա մոտից և զեկուցեց գերապայծառին, իր իշխանը զորք է խնդրում:

Կուտուզովը դեմքը կնճոեց և հրաման ուղարկեց Դոխտուրովին՝ վերցնել 1-ին բանակի հրամանատարությունը, իսկ իշխանին, առանց որի, ինչպես ասավ, նա չէր կարող գործ տեսնել այս կարևոր ռոպեներին, խնդրեց վերադառնալ իր մոտ: Երբ լուր բերին Մյուրատին գերի վերցնելու մասին և շտաբականները շնորհավորեցին Կուտուզովին, նա ժպտաց:

— Սպասեցեք, պարոնայք, — ասավ նա: — Ճակատամարտը շահել ենք, և Մյուրատին գերելը արտասովոր բան չէ: Բայց ավելի լավ է շտաբենք ուրախանալ:

Սակայն նա աղյուտանտին ուղարկեց այդ լուրը զորքերին հայտնելու:

Երբ ձախ թեր սրարշավ եկող Շշերբինինը լուր էր բերում ֆրանսացիների կողմից ֆլեշները և Սեմյոնովսկոյին գրավելու մասին, Կուտուզովը, ճակատամարտի գաշտի ձայններից և Շշերբինի դեմքից գուշակեց, որ լուրերը լավ չեն, վեր կացավ, կարծես ոտները բացելու համար, և Շշերբինինին թևանցուկ անելով, տարավ նրան մի կողմ:

— Գնա, սիրելիս, — ասավ նա երմոլովին, — տես չի կարելի մի բան անել:

Կուտուզովը Գորկիում էր, ոուսական զորքերի գիրքերի կենտրոնում: Նապոլեոնի՝ մեր ձախ թեր գեմ ուղղված հարձակումը ետ մղվեց մի քանի անգամ: Կենտրոնում ֆրանսացիները Բորոդինոյից առաջ շարժվեցին, Ձախ թեր Ուկարովի հեծելազորը հարկադրեց ֆրանսացիներին փախչել:

Ժամը երեքին ֆրանսացիների հարձակումները դադարեցին: Այն բոլոր մարդկանց դեմքերին, որ գալիս էին ճակատամարտի դաշտից և իրեն շրջապատղների դեմքին, Կուտուզովը կարդում էր ծայր աստիճանի հասած լարվածության արտահայտություն: Կուտուզովը գոհ էր օրվա սպասածից վեր եղած հազորությունից: Բայց ֆիզիկական ուժերը դավաճանում էին ծերունուն: Նրա գլուխը մի քանի անգամ ցած խոնարհվեց, կարծես ընկնում էր և նա ննջում էր: Նրան ճաշ մատուցեցին:

Ֆլիգել-ադյուտանտ Վոլցոգենը, նա, որը, իշխան Անդրեյի մոտով անցնելիս, ասավ, թե պատերազմը պետք է im Raum verlegen<sup>1</sup>, և որին այնպես ատում էր Բագրատիոնը, ճաշի ժամանակ եկավ Կուտուզովի մոտ: Վոլցոգենը եկել էր Բարելայի կողմից տեղեկացնելու, թե ի՞նչ ընթացքի մեջ է կոփը ձախ թեռում: Խոհեմ Բարելայ-դե-Տոլլին, տեսնելով փախչող վիրավորների բազմությունը և բանակի վերջին մասերի քայլքայումը, կշռադատելով գործի բոլոր հանգամանքները, որոշ շեց, որ ճակատամարտը տանուկ է տրված: և այդ տեղեկությամբ իր սիրեցյալին ուղարկեց գլխավոր հրամանատարի մոտ:

Կուտուզովը դժվարությամբ ծամում էր տապակած հավը և կուշ եկած ժպտուն աշքերով նայեց Վոլցոգենին:

Վոլցոգենը, թմրած ոտները անփույթ քայլքով բաց անելով, կիսապահամարհական ժպտու շուրջերին, մոտեցավ Կուտուզովին, թեթևակի ձեռը քունքին մոտեցնելով:

Վոլցոգենը գերապայծառին վերաբերվում էր որոշ բռնագրոսիկ անփությամբ, որ նպատակ ուներ ցույց տալ, թե նա որպես բարձր կրթություն ստացած զինվորական ոուսներին է թողնում կուռք դարձնել այդ ծեր, անօգուտ մարդուն, իսկ

<sup>1</sup> Տարածության մեջ տեղափոխել:

ինքը գիտի, թե ո՞ւմ հետ գործ ունի: «Der alte Herr» (ինչպես անավանում էին Կուտուզովին գերմանացիներն իրենց շրջանում) macht sieht ganz bequem<sup>1</sup>, մտածեց Վոլցողենը և խստությամբ նայելով Կուտուզովի առջև եղած ափսեներին, սկսեց զեկուցել ծեր պարոնին ձախ թեր գործերի դրությունն սկսեց զեկուցել ծեր պարոնին ձախ թեր գործերի դրությունն այնպես, ինչպես հրամայել էր նրան Բարեկայը և ինչպես նա ինքն էր տեսել ու հասկացել:

— Մեր գիրքերի բոլոր կետերը թշնամու ձեռին են և ետ խլելու հնար չկա, որովհետև զորք չկա: Զորքերը փախչում են և հնարավորություն չկա նրանց կանգնեցնելու, — զեկուցեց նա:

Կուտուզովը ծամելը դադարեցնելով, զարմացած, կարծես չհասկանալով այն, ինչ ասում են իրեն, աշքը հառեց Վոլցողենի երեսը: Վոլցոգենը նկատելով մասնաւությունը՝ կուտուզովը, ժպատական մեջ ասավ.

— Ես ինձ իրավունք չհամարեցի ձերդ պայծառափայլությունից թաքցնել այն, ինչ ես տեսել եմ: Զորքերը կատարյալ քայլայման մեջ են...

— Դուք տեսա՞ք: Դուք տեսե՞լ եք... — զեմքը խոժոռելով ճշաց Կուտուզովը արագորեն վեր կենալով ու դեպի Վոլցողենը գնալով: — Դուք ի՞նչպես... ի՞նչպես եք համարձակվում... — զողացող ձեռներով սպառնալից շարժումներ անելով և շնչասպա լինելով՝ բոռաց նա: — Դուք ինչպես եք համարձակվում, ողորմած պարոն, ինձ ասել այդ: Դուք ոչինչ չգիտեք: Իմ կողմից հայտնեցեք զեներալ Բարեկային, որ նրա տեղեկությունները ճիշտ չեն և ճակատամարտի ներկա ընթացքը հայտնի է ինձ՝ գլխավոր հրամանատարիս, ավելի՝ լավ, քան նրան:

Վոլցոգենը ուզեց առարկել ինչ-որ, բայց Կուտուզովը ընդհատեց նրան:

— Թշնամին ետ է մզված ձախ թեռում և պարտություն է կրել աշ թեր վրա: Եթե դուք վատ եք տեսել, ողորմած պարոն, ապա ձեզ թույլ մի տաք ասել այն, ինչ չեք իմանում: Հաճեցեք գնալ զեներալ Բարեկայի մոտ և հայտնել նրան իմ անխախտ

մտադրությունը՝ վաղն հարձակվել թշնամու վրա, — խստությամբ ասավ Կուտուզովը:

Բոլորը լուս էին, և լսում էր միայն հեասպառ ծեր գեներալի ծանր շնչառությունը:

— Ետ են մզված ամենուրեք, որի համար ես շնորհակալ եմ աստծուց և մեր քաջարի զորքից: Թշնամին հաղթված է և վաղ մենք նրան կրշենք ուստական սրբազն հողից, — ասավ Կուտուզովը, երեսը խաշակնքելով, և հանկարծ հեկեկաց իրեն ճնշող արցունքներից:

Վոլցոգենը, ուսերը թոթվելով և շուրթերը ծռմռելով, անխոս գնաց մի կողմ, զարմանալով über diese Eingenommenheit des alten Herrn<sup>2</sup>.

— Այո, ահա նա, իմ հերոսը, — ասավ Կուտուզովը լեցուն, գեղեցիկ, սեահեր գեներալին, որ այդ ժամանակ բարձրանում էր կուրգանը:

Դա Ռաևսկին էր, որ ամրող օրն անցրել էր Բորոդինոյի դաշտի գլխավոր ուղմակետում:

Ռաևսկին զեկուցեց, թե զորքերն ամուր կանգնած են իրենց տեղերում և թե ֆրանսացիները չեն համարձակվի այլևս հարձակում գործել:

Նրան լսելով՝ Կուտուզովն ասավ Փրանսերեն.

— Vous ne pansez donc pas comme les autres que nous sommes obligés de nous retirer?

— Au contraire, votre altesse, dans les affaires indécises, c'est toujours le plus opiniâtre qui reste victorieux, — պատասխանեց Ռաևսկին. — et mon opinion...<sup>2</sup>

— Կայսարով, — կանչեց Կուտուզովն իր ադյուտանտին: — Նստի՛ր, հրաման գրիր վաղվան համար: Իսկ դու, — դիմեց նա մյուսին, — գնա զորագծով և հայտարարիր, որ վաղը մենք հարձակում ենք գործում:

<sup>1</sup> Ծեր պարոնի այդ խենթ կամակորության վրա:

<sup>2</sup> Դուք, ուրեմն, մյուսների նման չե՞ք կարծում, թե մենք պետք է նահանջենք:

— Ընդհակառակը, ձերդ պայծառափայլություն, անվճռականության զեպքերում ճիշտ ամենահամարը մնում է չաղթող, և իմ կարծիքն է...

Մինչ Կուտուզովը գրուցում էր Ռամսկու հետ և թելազրում իր հրամանը, Վոլցոգենը վերադարձավ Բարկլայի մոտից և հայտնեց, թե գեներալ Բարկլայ-Դե-Տոլին կցանկանար ունենալ գրավոր հաստատումն այն հրամանի, որ տվել է ֆելդմարշալը:

Կուտուզովը, առանց նայելու Վոլցոգենին, հրամայեց գրեթե այդ հրամանը, որը ըստ ամենայնի հիմնավոր կերպով, անձնական պատասխանատվությունից խուսափելու համար, քանի անում էր ունենալ նախկին գլխավոր հրամանատարը:

Եվ այն անորոշելի խորհրդավոր կապը, որ ամբողջ բանակի մեջ պահպանում էր միենույն տրամադրությունը, որ կոչվում է բանակի ողի և կազմում է պատերազմի գլխավոր ներքը, Կուտուզովի խոսքերը, նրա հրամանը՝ վաղը ճակատամարտ տարւ շուրջը, — ճաղորդվել էր զորքի բոլոր մասերին, զորաշրթայի բոլոր ծայրերին:

Բնակ էլ հենց նույն խոսքերը, հենց նույն հրամանը չէր, որ հայտնվում էր այդ կապի վերջին շլթային: Անգամ բանակի տարբեր ծայրերում միմյանց հաղորդվող պատմածների մեջ ոչինչ նման չէր այն բանին, ինչ ասել էր Կուտուզովը. բայց, նրա խոսքերի իմաստը հաղորդվեց ամեն կողմ, որովհետև այն, ինչ ասավ Կուտուզովը, բխում էր ոչ թե խորամանկ, նրկատառումներից, այլ զբացմունքից, որ կար ինչպես գլխավոր հրամանատարի սրտում, նույնպես և յուրաքանչյուր ոուս մարդու սրտում:

Եվ, իմանալով, որ վաղը մենք հարձակվելու ենք թշնամու վրա, բանակի բարձր շրջաններից լսելով հաստատումն այն բանի, ինչի նրանք ուզում էին հավատալ, տանջված, տատանվող մարդիկ միշտարվում ու սրտապնդվում էին:

## XXXVI

Իշխան Անդրեյի գունդը պահեստի զորքերի մեջ էր, որոնք մինչև ժամը 2-ը կանգնած էին Սեմյոնովսկոյե գյուղի ետևը՝ անգրծության մեջ, հրետանու ուժեղ կրակի տակ: Ժամը 2-ին գունդը, կորցնելով 200-ից ավելի մարդ, առաջ շարժվեց վարսակի տրորված դաշտը, Սեմյոնովսկոյե գյուղի և կուրգանի մարտ-

րավոր մարդիկ էին սպանվել և ուր ցերեկվա ժամը երկուսին ուղղվեց թշնամու մի քանի հարյուր թնդանոթների խիւտեկնարոնացրած կրակը:

Այդտեղից շեռանալով և ոչ մի ոումբ շարձակելով, զունը դեռ այստեղ կորցրեց իր մարդկանց մի երրորդ մասը: Առջելց և մանաւանդ աջ կողմից՝ շրջովող ծխի մեջ թնդում էին թնդանոթները, և առջեկ տարածությունը ծածկող ծխի խորհրդավոր շրջանից անդադար շաշուն արագ սուլոցով՝ դուրս էին թոշում ոումբերն ու դանգաղորեն սուլող արկերը: Երբեմն, կարծես հանգստ տալով, անցնում էր քառորդ ժամ, որի միջոցին թոշում էին բոլոր ոումբերն ու հրետագնդերը, բայց երբեմն՝ մի բոպեկ ընթացքում մի քանի մարդ էր ընկնում գնդից, և անդադար մի կողմ էին քաշում սպանվածներին ու տանում վիրավորներին:

Յուրաքանչյուր նոր հարվածի հետ հետգիտեած կյանքի ավելի քիչ պատահականություններ էին մնում նրանց համար, ովքեր դեռ չին սպանվել: Գունդը կանգնած էր գումարտակային պորապուներով՝ 300 քայլ տարածության վրա, բայց չնայած դրան, բոլոր մարդիկ գտնվում էին միշտ միենույն տրամադրության ազդեցության ներքո: Գնդի բոլոր մարդիկ միատեսակ գուռ էին ու մոալլ: Նարքերի միշտ խոսակցություն հազվագեղ էր լսվում, բայց այդ խոսակցությունը լոռում էր ամեն անգամ, երբ լսվում էր դիպջով ոումբի հարվածը և «պատգարակ» կանցը: Գնդի մարդիկ մամանակի մեծմասը, զեկավարության հրամանով, նստած էին գետնին: Ո՞ր կիվերը վերցրած, խնամքով բանում և կրկին հավաքում էր փոթերը. ո՞ր շոր կավը ափերի մեջ փշշելով՝ դրանով մաքրում էր սվինը. ո՞ր սրորում էր կաշեփոկը և կապը ձգում. ո՞ր խնամքով ուղղում հարթում էր ոտի փաթաթաները և նորից հագնում: Ոմանք վարած հողի կոշտերից տնակներ էին շինում և ծղնոտից Հյուսում էին կողովներ: Բոլորը, թվում էր, ամբողջովին տարված էին այդ զրադմունքներով: Երբ գնդակը վիրավորում ու սպանում էր մարդկանց, երբ պատգարակներ էին տանում, երբ մերոնք ետ էին դառնում, երբ ծխի միշտով երևում էին թշնամու բազմությունները, ոչ ոք ոչ մի ուշադրություն չէր դարձնում այդ հանգամանքների վրա: Իսկ երբ առաջ էր անցնում հրետանին, հեծելագորը, լը երկում էին մեր հետևակի առաջխաղացումները,

ամենն կողմից լսվում էին հավանության խոսքեր: Բայց ամենամեծ ուշադրության արժանանում էին բոլորովին կողմնակի դեպքեր, որոնք ոչ մի կապ չունեին ճակատամարտի հետ: Կարծիք բարոյապես տանջված այդ մարդկանց ուշադրությունը հանգստանում էր կենցաղային այդ սովորական անցքերի վրա: Հրետանու մարտկոցն անցավ գնդի ճակատի առջեկից: Հրետարկղները տանող ձիերից մեկը՝ կողքից լծվածը, ոտքը դրավ լծափոկի վրա: — «Ե՞ս, կողքի ձին... Դրստի՛ր, կընկնի... է, չեն տեսնում», միատեսակ կանչում էին շարքերից ամբողջ գնդովը մեկ: Մի ուրիշ անգամ ընդհանուր ուշադրություն գրավեց մի փոքրիկ դարչնագույն շնիկ՝ պոչը պինդ ցցած, որը աստված գիտի, թե ո՞րտեղից հայտնվելով, հոգատար և այլերով դուրս վազեց շարքերի առաջ և հանկարծ մոտիկ զիպած ոռւմբից կլանչ-կլանչեց և, պոչը ոտներին սեղմած, նետվեց մի կողմ: Գնդովը մեկ քրքիչ ու ծիծաղ բարձրացավ: Բայց նման ուրախությունները տեսում էին բոպեներ, իսկ մարդիկ ութ ժամեց ավելի առանց ուտելու և առանց գործի եանգնած էին մահվան անանց սարսափի տակ, և նրանց գուշակ ու խոժող դեմքերը ավելի ևս գունատվում էին ու մռայլ-վում:

Իշխան Անդրեյը նույնպես, ինչպես և գնդի բոլոր մարդկի, խոժուագեմ ու գունատ, մարգագետնում, վարսակի դաշտի կողքով ետ ու առաջ էր քայլում մի միջնակից մինչև մյուսը, չենները ետեր դրած և գլուխը կախ: Նրան էլ անելու և հրամայելու բան չէր մնում: Ամեն ինչ արվում էր ինքն իրեն: Սպանվածներին քաշում-տանում էին ճակատից հեռու, վիրավորներին վերցնում էին, տանում, շարքերը միանում էին: Եթե զինվորները գնում-վազում էին մի կողմ, ապա իսկույն եթ շտապ վերադառնում էին: Ակգրում իշխան Անդրեյը, իր պարտականությունը համարելով գրգռել զինվորների արիությունը և օրինակ ցույց տալ, անցնում էր շարքերի երկարությամբ: Բայց հետո համոզվեց, որ ինքը նրանց սովորեցնելու բան չունի: Նրա հոգու ամբողջ կորովը ճիշտ այնպես, ինչպես և յուրաքանչյուր զինվորինը, անգիտակցաբար ուղղված էր այն բանին, որ շտարվեն միայն իրենց դրության սարսափը ներհայելով: Նա ոտները քարշ տալով քայլում էր մարգագետնում, խոտերը տրորելով ու նայելով այն փոշուն, որով ծածկված

էին իր կոշիկները. մերթ նա մեծ-մեծ քայլեր էր անում, աշխատելով ոտք գնել այն հետքերի վրա, որ թողել էին հնձվորները մարդագետնում. մերթ նա, իր քայլերը համբելով հաշվելով էր անում, թե քանի անգամ պիտի անցնի միջնակից միջնակ, որպեսզի մի վերստ արած լինի. մերթ փետում էր միջնակներում բուսած բարձվենյակները, և այդ ծաղիկները ափերի մեջ տրորելով հոտոտում էր նրանց բուրավետ-դառը սուր հոտը: Մտքի երեկվա ամբողջ աշխատանքից ոչինչ չը մնացել: Նա ոչնչի մասին չէր մտածում: Նա հոգնած լսողությամբ ականչ էր գնում շարունակ նոյն ձախներին, տարրերելով թոշող սումբերի սուլոցը կրակոցների որոտից, նայում էր 1-ին գումարշատակի զինվորների իրեն ձանձրացրած դեմքերին և սպասում: «Ահա նա... դարձյալ դեպի մեզ է գալիս», մտածում էր նա, ականչ գնելով ծխի փակ շրջապատից ինչ-որ մոտեցող բանի սուլոցին: «Մե՛կը, մյո՛ւսը: Դա՛րձյալ: Դիպավ...»: Նա կանգ առաջ ու նայեց շարքերին: «Ո՛չ, անցավ: Ա՛յս սա դիպավք»: Եթ նա նորից սկսում էր քայլել, աշխատելով անել մեծ-մեծ բայլեր, որ 16 քայլի վրա հասնի միջնակին: Սուլոց և գարկ: Նրանից հինգ քայլի վրա սումբը բանդեց շոր հողը և թարնվեց: Ակամա սարսուռ անցավ նրա մեջքով, նա նորից նայեց շարքերին: Հալանորեն շատերին տարավ. մեծ բազմություն էր հավաքվել 2-րդ գումարտակի մոտ:

— Պարոն աղյուսանտ, — ձայն տվեց նա, — հրամայեցեք, որ շիմբլեն:

Աղյուսանտը, հրամանը կատարելով, մոտեցավ իշխան Անդրեյին: Մյուս կողմից ծիով մոտեցավ գումարտակի հրամանատարը:

«Զգո՞ւշ», լսից զինվորի վախեցած բացականշությունը, և ինչպես արագ թոփշի ժամանակ սուլող, գետնին իշնող թոշուն, իշխան Անդրեյից երկու րայլ հեռու, գումարտակի հրամանատարի ծիու կողքին կամացուկ գետնովը դիպավ նըռնակը: Առաջինը ծիու, շարցնելով, թե սարսափ ցույց տալը լավ է կամ վատ, փնչացրեց, ծառս եղավ, բիշ մնաց վայր զըցեր մայորին, և վագեց մի կողմ: Զիու սարսափն անցավ մարդկանց:

— Պառկի՛ր, — ճշաց գետնին պառկող աղյուսանտի ձայնը:

Իշխան Անդրեյը կանգնել էր անվճռականության մեջ։ Նըռնակը, հոլի պես, ծխալով պտտվում էր նրա և պառկած աղյուտանտի միջև, վարած հողի և մարգագետնի ծայրին, բարձքնյակի թփի կողքին։

«Մի՞թե սա մահս է», մտածում էր իշխան Անդրեյը, բոլորվին նոր, նախանձու հայացքով նայելով կանաչին, բարձքնյակին և այն բարակ ծխին, որ բարձրանում էր պտտվող սև գնդակից։ «Ես չեմ կարող, ես չեմ ուզում մեռնել, ես սիրում եմ կյանքը, սիրում եմ այս խոտը, հողը, օդը...»։ Նա մտածում էր այս և, դրա հետ միասին հիշում այն, որ իրեն նայում են։

— Ամո՞թ է, պարոն սպա, — ասավ նա աղյուտանտին, — ինչ...

Նա խոսքը շվերցացրեց։ Միաժամանակ լսվեց պայթյուն, կարծես ջարդված շրջանակի կտորտանքների շաշուն, վառողի հեղձուցիշ հոտ, և իշխան Անդրեյը տեղից պոկվելով նետվեց մի կողմ և ձեռը վեր բարձրացնելով, ընկավ կրծքի վրա։

Մի քանի սպաներ վազեցին ղեպի նա, Փորի աջ կողմից կանաչի վրա գոյանում էր արյան մի մեծ բիծ։

Կանշված աշխարհագորականները պատզարակը ձեռներին կանգ առան սպաների ետև։ Իշխան Անդրեյը պառկել էր կրծքի վրա երեսը մինչև կանաչը հասցրած, և ծանրորեն խոխոացնելով շնչում էր։

— Է, ինչի կանգնեցիք, մոտեցե՛ք։

Գյուղացիները մոտեցան և վերցրին նրան՝ ուսերից ու ուսներից բռնելով, բայց նա աղիողորմ հեծեծաց, և գյուղացիները իրար նայելով, նորից ցած դրին նրան։

— Վերցրեք, դրեք, միևնույն է, — բոռաց ինչոր մեկի ձայնը։

Նրան երկրորդ անգամ վերցրին ուսերից բռնած ու դրին պատզարակի վրա։

— Ախ, աստված իմ, աստված իմ։ Սա ինչ բան է... Փորին է դիպել։ Դա մա՞հ է։ Ախ, աստված իմ, — ասում էին սպաները։

— Վժժաց ականշիցս մազաշափ հեռու, — ասում էր աղյուտանտը։

Գյուղացիները պատզարակը հարմարեցնելով իրենց սւաբի

վրա, հապճեպ շարժվեցին ղեպի վիրակապության կայանը՝ իրենց տրորած ճանապարհով։

— Համաշափ քայլեցեք... է, ուզմիկներ, — բոռաց սպանութից բռնելով ու կանգնեցնելով անհավասար քայլող և պատզարակը ցնցող գյուղացիներին։

— Հարմարվիր, Խվեղոր, այ Խվեղոր, — ասավ առջեկ գյուղացին։

— Այ, էսպես լավ է, — ասավ ետևինն ուրախացած, քայլերը հարմարեցնելով։

— Զերդ պայծառափայլություն, ա՛յ, իշխան, — դողոզուն ձայնով ասավ վազեվազ մոտեցած Տիմոխինը, նայելով պատզարակի մեջ։

Իշխան Անդրեյը աշքերը բացեց և պատզարակից (որի մեջ խոր պառկել էր նրա գլուխը) նայեց այդ խոսքերն ասողին, և աշքերը նորից փակեց։

Աշխարհագորականները իշխան Անդրեյին բերին անտառի մոտ, ուր կանգնած էին ուզմասայլերը և ուր գտնվում էր վիրակապության կայանը։ Վիրակապության կայանը կազմված էր երեք բացված, փեշերը ետ ծալած վրաններից, որ գրտնըլում էին կեշուտի պոնկին։ Կեշուտում կանգնած էին ուզմասայլերն ու ձիերը։ Ձիերը տոպրակներից վարսակ էին ուտում, և ծտերը թշում գալիս էին նրանց մոտ՝ թափված հատիկները հավաքում։ Ակռավները, արյան հոտ առնելով, անհամբեր կռնչալով, ծառից ծառից, ավելի քան երկու ղեյատին տարածության վրա պառկել, նստուել ու կանգնել էին արյունոտված մարդկեր տարբեր հագուստներով։ Վիրավորների շուրջը վհատ և ուշադիր ղեմքերով կանգնել էին պատզարակակիր-զինվորների խմբերը, որոնց այդտեղից իգուր էին քշում կարգը վերահսկող սպաները։ Սպաներին լսելով՝ զինվորները կանգնել էին պատզարակներին հնասա և սեեռուն հայացքով, կարծես աշխատելով հանգանալ եսարանի գծվարին նշանակությունը, նայում էին, թե ի՞նչ է կատարվութիրնց առջև։ Վրաններից լսվում էին մերթ բարձրածայն շարագույժ ողբագին կանշեր, մերթ աղիողում հեծեթանքներ։ Երբեմն այդ էրաններից դուրս էին վա-

բում բուժակները՝ ջուր բերելու և մատնացույց էին անում ա՛յն վիրավորներին, որոնց պետք էր ներս տանել: Վիրավորները, վրանի մոտ իրենց հերթին սպասելով, խոռացնում էին, տընքում, լաց լինում, ճշում, հայշոյում, օղի խնդրում: Ոմանք զառանցում էին: Իշխան Անդրեյին, որպես գնդի հրամանատարի, լոք տալով վերքերը չկապած վիրավորների վրայից, բերին վրաններից մեկի մոտ և կանգ առան, կարգադրության սպասելով: Իշխան Անդրեյը աշքերը բաց արավ և երկար չեր կարողանում հասկանալ, թե ի՞նչ է կատարվում իր շուրջը: Նա հիշեց մարգագետինը, բարձլենյակը, պտտվող և գնդակը և իր բուռն սերը դեպի կյանքը: Նրանից երկու քայլ հեռու, բարձրածայն խոսելով և ընդհանուրի ուշադրությունն իր վրա գարձնելով, կանգնած էր մի փայտի հենած և գլուխը կապած, բարձրահասակ, գեղեցիկ, սեահեր և նթասպա: Նա գլխից ու ոտից վիրավորված էր գնդակներով: Նրա շուրջը, ագահությամբ նրա ճառն ունկնդելով, հավաքվել էր վիրավորների և պատգարակակիրների բազմությունը:

— Մենք նրան էնտեղից հենց որ խփեցինք տեղահան արինք, նա ամեն ինչ թողեց, հենց իրան իրան թագավորին բռնեցինք, — սև, տենդագին աշքերը փայլեցնելով և իր շուրջը նայելով, ճշում էր մի զինվոր: — Էդ ժամանակ որ մեր պահեստի զորքը գար, էլ, ախպերս դու ես, նրա բանը պրծած էր, քանի, որ ճիշտ եմ ասում...

Իշխան Անդրեյը նույնպես, ինչպես և պատմողին շրջապատող բոլոր զինվորները, բոցավառ հայացքով նայեց նրան և միխթարական զգացում ունեցավ: «Բայց մի՞թե հիմա բոլորը միևնույն չեն, — մտածեց նա: — Իսկ ի՞նչ է լինելու այնտեղ և ի՞նչ կար այստեղ: Ինչո՞ւ ես այնպես ափսոսում էի բաժանվել կյանքից: Ինչո՞ր մի բան կար այս կյանքում, որ ես չէի հասկանում և չեմ հասկանում»:

## XXXVII

Քժիշկներից մեկն արյունոտված գոգնոցով և արնաթաթախու մեծ ձեռներով, որոնցից մեկով՝ ճկույթի և մեծ մատի միջն (որպեսդի չիեղտոտի այն) բռնել էր սիգարը, դուրս եկավ վրանից: Այդ բժիշկը գլուխը բարձրացրեց ու նայեց շուրջը,

բայց՝ վիրավորներից վեր: Նա ըստ երևույթին, ցանկանում էր մի փոքր հանգստանալ: Մի որոշ ժամանակ գլուխն աշ ու ձախ դարձնելով, նա հառաչեց ու աշքերը խոնարհեց:

— Լավ, իսկույն, — ասավ նա բուժակին, որ մատնացուց արավ իշխան Անդրեյին, և հրամայեց տանել նրան վրանը:

Սպասող վիրավորների բազմության մեջ տրտունջ բարձրացավ:

— Ինչպես երեսում է, էն աշխարհում էլ միայն պարոնները պիտի ապրեն, — խոսեց մեկը:

Իշխան Անդրեյին ներս տարան և դրին նոր մաքրած սեղանի վրա, որից բուժակը ջրով հեռացնում էր ինչ-որ բան: Իշխան Անդրեյը շկարողացավ առանձին-առանձին տեսնել, թե ինչ կար վրանում: Տարեր կողմերից լսվող աղիողորմ տնքոցները, ազգրի, փորի և մեջքի տանջագին ցավերն անուշադիր էին դարձնում նրան: Բոլորը ինչ տեսավ իր շուրջը, միաձուլվեց նրա համար մի ընդհանուր՝ մարդկային մերկ արյունոտված մարմնի տպավորության մեջ, մարմին, որ թըւում էր ամբողջապես լցնում էր ցածրիկ վրանը, ինչպես մի քանի շաբաթ առաջ այն շող օգոստոսյան օրը նույն այդ մարմինը լցրել էր Սմոլենսկի ճանապարհի վրա գտնվող կեղտոտ լճակը: Դա հենց նույն մարմինն էր, նույն շահ այն ժամանակ, կարծես նախագուշակելով այս օրը, սարսափ հարուցեց նրա մեջ:

Վրանում երեք սեղան կար: Երկուսը բռնված էին, երրորդի վրա պատկեցրին իշխան Անդրեյին: Որոշ ժամանակ նրան մինակ թողին, և նա ակամա տեսավ այն, ինչ անում էին մյուս երկու սեղանի վրա: Մոտիկ սեղանի վրա նստած էր մի թաթար, հավանորեն, կազակ, ինչպես երեսում էր կողքին ընկած մունդիրից: Չորս զինվոր բռնել էին նրան: Ակնոցավոր բժիշկը ինչ-որ բան էր կտրում նրա դարշնագույն, մկանուտ մեջքի վրա:

— Ուիս, ուիս, ուիս... — կարծես խոխոացնում էր թաթարը և հանկարծ իր ցից այտուկըներով, սև, կարճթանի զեմքը վեր բարձրացնելով, ճերմակ ատամները բանալով, սկսեց դուրս պոծնելու փորձեր և նել, ձիգ տալ և ճղճղալ մի սուր-

<sup>1</sup> Թնդանոթի միս:

ծղբառն, երկարատև վնասուցով։ Մյուս սեղանի վրա, որի մոտ շատ ժողովուրդ էր հավաքված, մեջքի վրա պառկած էր մի լիցուն մարդ՝ գլուխը ետ ձգած (նրա գանգուր մազերը, դրանց գույնը և գլխի ձեր տարօրինակորեն ծանոթ թվացին իշխան Անդրեյին)։ Մի քանի բուժակներ ընկել էին այդ մարդու կրծքին և բռնել նրան։ Նրա սպիտակ մեծ, լիցուն ոտք արագ ու հաճախակի անդադար ցնցվում էր տենդադին դողով։ Այդ մարդը չպածաբար հեկեկում էր ու շնչասպառ լինում։ Երկու բժիշկ աշխոս — մե՛կը դունատ էր և դողում էր — ինչ-որ բան էին անում այդ մարդու մյուս, կարմրած ոտի վրա։ Վերջացնելով գործը թաթարի հետ, որին ծածկեցին շինելով, ակնոցավոր բժիշկը, ձեռները սրբելով, մոտեցավ իշխան Անդրեյին։

Նա նայեց իշխան Անդրեյի դիմքին և արագ շուռ եկավ։

— Հանեցե՛ք հազուստր! Ի՞նչ եք կանգնել, — բարկացած բոռաց նա բուժակների վրա։

Իր հեռավոր վաղ մանկությունը հիշեց իշխան Անդրեյը, երբ բուժակը վեր քշտած շտապով ձեռներով արձակում էր նրա կոճակները և հանում զգեստը։ Բժիշկը ցած կուցավ վերքի վրա, շշակեց այն և ծանր հոգոց արձակեց։ Ապա նա նշան արավ ինչ-որ մեկին։ Փորի ներսի տանջապին ցավից իշխան Անդրեյը գիտակցությունը կորցրեց։ Երբ նա ուշքի եկավ, ազգրի փշոված ոսկորները հանված էին, մսի կտորները կըտրած և վերքը կապված էր։ Նրա դեմքին զուր ցանեցին։ Հենց որ իշխան Անդրեյը աշքերը բաց արավ, բժիշկը կուցավ նրա վրա, տանիոս համբուրնց նրա շուրթերը և արագորին հեռացավ։

Կրած տանջանքներից հետո իշխան Անդրեյը զգաց մի երանություն, որ վազուց չեր զգացել։ Նրա կրանքի լավագույն, ամենաերջանիկ քոպեները, մանավանդ ամենավաղ մասնկությունը, երբ նրա հազուստները հանում ու պամեցնում էին փոքրիկ մահճակալում։ Երբ դայակը, օրորելով, երգում էր նրա գլխավերեւ, երբ ինքը գլուխը բարձի մեջ խրած՝ իրեն երջանիկ էր զգում լոկ կյանքի գիտակցությամբ, — նրա երեւակայությանը ներկայանում էին անդամ ոչ որպես անցյալ, այլ որպես իրականություն։ Սյուն վիրավորի շուրջը, որի գլխին ձեր իշխան Անդրեյին ծանոթ թվաց, բժիշկները իրար էին անցել։ Նրան բարձրացնում և հանգստացնում էին։

— Ցուց տվեք ինձ... Օռո՞ ո՞... Օռո՞ ո՞... — լսվում էր նրա հեկեկանքներից ընդհատվող, վախեցած ու տանջանքին հնաղանդած հեծեծանքը։

Այդ հեծեծանքները լսելով՝ իշխան Անդրեյն ուզում էր լաց լինել։ Նրանից արդյոք, որ մեռնում էր առանց փառքի, նըրանից արդյոք, որ ափսոսում էր բաժանվել կյանքից։ արդո՞ք այդ մանկական անվերադարձ հիշողություններից թե այն պատճառով, որ նա տանջվում էր նրա համար, որ ուրիշներն էին տանջվում և այդ մարդին այնպես խղճալի հեծեծում էր իր առջև, — բայց նա ուզում էր լալ մանկական, բարի, գրեթե ուրախ արցունքներով։

Վիրավորին ցուց տվին նրա կտրած լերգացած արյունով ոտք կոշիկի մեջ։

— Օ՛, Օռո՞ ո՞... — հեկեկաց նա կնոջ պես։

Բժիշկը, որ կանգնած էր վիրավորի առջև ու իրենով ծածկում էր նրա դեմքը, հեռացաւ։

«Աստված իմ! Այս ի՞նչ բան է։ Սա ինչո՞ւ է այստեղ», ասավ իշխան Անդրեյն ինքն իրեն։

Եվ նա ճանաշեց այդ դժբախտ, հեկեկող, ուժասպառ մարդուն, որի ոտք հենց նոր կտրել էին։ — Դա Անատոլ Կուրագինն էր։ Անատոլին բռնել էին ձեռներով և զուր էին առաջարկում բաժակով, որի պունկը նա չէր կարողանում բռնել իր դողացող ուռած շուրթերով։ Անատոլը ծանրորեն հեծկլտում էր։ «Այս, սա նա՛ է, այս, այս մարդը ինչ-որ մի բանով մոտ է և ծանրապես կապված ինձ հետ», մտածում էր իշխան Անդրեյը, տակալին պարզ շհասկանալով այն, ինչ կար իր առջև։ «Ո՞րն է այս մարդու կապը իմ մանկության, իմ կյանքի հետ», հարցրեց նա ինքն իրեն, պատասխան չգտնելով։ Եվ հանկարծ մանկական, անարատ ու միրո աշխարհից մի նոր, անսպասիլի հիշողություն ներկայացավ իշխան Անդրեյին։ Նա հիշեց նատաշալին այնպես, ինչպես տեսել էր նրան առաջին անգամ՝ 1810 թվին՝ պարահանդեսին, նուրբ պարանոցով ու նուրբ ձեռներով, խանդավառվելու պատրաստ, վախեցած, երջանիկ դեմքով, և նրա սրտում սեր ու քնքություն զարթնեցին դեպի նատաշալին՝ էլ ավելի կենդանի և բուռն, բան երեքը։ Նա այժմ հիշեց այն կապը, որ գոյություն էր ունեցել իր և այս մարդու միջև, որը, ուռած աշքերը լցված արցունքների մի շից, պղտոր

նալում էր իրեն։ Իշխան Անդրեյ հիշեց բոլորը, և նրա երջանիկ սիրութ լցվեց խնդագին մի խղճահարությամբ ու սիրով՝ դեպի այդ մարդը։

Իշխան Անդրեյն այլևս շկարողացավ զսպել իրեն և քնքափին, կաթոգին արցունքներով լաց եղավ մարդկանց վրա, իր վրա և նրա՞նց ու իր մոլորությունների վրա։

«Կարեկցություն, սեր դեպի եղբայրները, դեպի սիրողները, սեր դեպի մեզ ատողները, սեր դեպի թշնամին, այս, այն սերը, որ քարոզում էր աստված երկրի վրա, որ ուսուցանում էր ինձ իշխանադուստր Մարիան և որին ես չէի հասկանում։ ահա ինչու համար էի ափսոսում կյանքը, ահավասիկ սա՛ է, որ դեռ մնացել է ինձ, եթե ես կենդանի մնամ։ Բայց այժմ արդեն ուշ է։ Ես այդ գիտե՞մ»։

### XXXVIII

Դիակներով ու վիրավորներով ծածկված մարտադաշտի սարսափելի տեսքը, որին միացել էին ծանր, ճնշող մոքերը և քսան սպանված ու վիրավոր ծանոթ գեներալների մասին ստացված լուրերը և իր երեխն ուժեղ ձեռքի ներկա անզորության գիտակցությունը, — այդ բոլորը միասին անսպասելի տպավորություն գործեցին նապոլեոնի վրա, որը սովորաբար սիրում էր ուշադիր դիտել սպանվածներին ու վիրավորներին և դրանով փորձել իր հոգեկան կորովը (ինչպես նա էր կարծում)։ Այդ օրը մարտադաշտի սուսկալի տեսքը հաղթահարեց հոգեկան այն կորովը, որը նրա կարծիքով կազմում էր իր արժանիքն ու մեծությունը։ Նա շտապ հեռացավ կովի դաշտից և վերադրավ դեպի Շևարդինոյի կուրգանը։ Դեղնած, ուռած, ծանրաշունչ, պղտոր աշքերով, կարմիր քթով և խոպոտ ձայնով նա նստած էր ծալովի աթոռի վրա, ակամա ունկնդեմով հրածգության ձայներին և բնավ շբարձրացնելով աշքերը դեպի վեր։ Նա հիվանդագին և թախիծով սպասում էր այն գործի վախճանին, որին նա իրեն մասնակից էր համարում, բայց որը նա անկարող էր դադարնցնել։ Կյանքի արհեստական տեսիլը, որին նա այնքան երկար ծառայել էր, պահ մի տեղի տվեց մարդկային անհատական զգացումին։ Նա մտքում իր վրա էր առնում այն տանջանքներն ու այն մահը, որը տեսել էր

կովի դաշտում։ Նրա գլխի և կրծքի ծանր վիճակը նրան հիշեցնում էին, որ տանջանքներն ու մահը հնարավոր են և՛ իր համար։ Այդ բովածին նա իր համար ո՛չ Մոսկվա էր ուզում, ո՛չ Հաղթություն, ո՛չ փառք (Էլ ինչ փառք էր հարկավոր նրան)։ Միակ բանը, որ նա ցանկանում էր այժմ, — այդ հանգստությունն էր, անդորրությունը և ազատությունը։ Բայց երբ նա գտնվում էր Սեմյոնվակոյնի բարձունքի վրա, հրետանու պետը նրան առաջարկեց մի քանի մարտկոց դնել այդ բարձրության վրա նրա համար, որ կրակն ուժեղացվի կնյազեկովի առաջ խոնլած ուսու զորքերի վրա։ Նապոլեոնը համաձայնեց և հրամայեց տեղեկություն բերել իրեն, թե ինչ տպավորություն կգործեն այդ մարտկոցները։

Այդուտանատր եկավ հայտնելու, որ կայսեր հրամանով 200 հրանոթ է ուղղված ոուսների գեմ, բայց ոուսներն այնուամենայնիվ դիմադրում են։

— Մեր կրակը շարքերով է զարդում նրանց, բայց նրանք կանգուն են, — ասավ աղյուտանտը։

— Ils en veulent encore!..<sup>1</sup> — ասավ նապոլեոնը խոպտած ձայնով։

— Sirè<sup>2</sup>, — ասավ կայսեր խոսքերը լավ լսած աղյուտանտը։

— Ils en veulent encore, — հոնքերը կիտելով ասավ նապոլեոնը կերկերուն ձայնով, — donnez leur -en<sup>3</sup>։

Եվ առանց նրա կարգադրության արկում էր այն, ինչ նա շեր ցանկանում, և նա կարգադրություն արավ միայն այն պատճառով, որ կարծում էր, թե իրենից կարգադրություն են սպասում։ Եվ նա նորից մաքով տեղափոխվեց իր ինչ-որ մեծության ցնորքների նախկին արհեստական աշխարհը, և կրկին (ինչպես այն ձին, որը փոկով պատասմ է սնիկը և երեակայում, որ ինքն ինչ-որ բան անում է իր համար) նա սկսեց հնագանդորեն կատարել այն դաժան, տիսուր ու ծանր, ոչ մարդկային գերը, որը նրան վիճակված էր։

<sup>1</sup> Դրանք էին ուզում...

<sup>2</sup> Տեր իմ...

<sup>3</sup> Դրանք էին ուզում... գե՛, ուրեմն տվե՛ք զրանց։

Եվուշին մեկ ժամ ու մեկ օր մթագնել էին այդ մարզու միտքը և սիդնը, որն ավելի ծանր կերպով, բան այդ պատերազմի մնացած բոլոր մասնակիցները կրում էր իր վրա կատարվածի ամբողջ ծանրությունը. բայց և երբեք, մինչև իր կյանքի վերջը, նա չկարողացավ հասկանալ ո՞չ բարին, ո՞չ գեղեցկությունը, ո՞չ ճշմարտությունը, ո՞չ իր արարքների նշանակությունը, — արարքներ, որոնք շափականց հակառակ էին բարվույն ու ճշմարտությանը, շատ հեռու էին ամեն մարդկայինից, որպեսզի նա կարողանար հասկանալ նրանց նշանակությունը: Նա չէր կարողանում հրաժարվել իր արարքներից, որոնք գովարձանվում էին աշխարհի կեսի կողմից, ուստի և նա պետք է հրաժարվեր ճշմարտությունից ու բարուց և այն ամենից, ինչ մարդկային է:

Ոչ միայն այդ օրը, ձիով շրջելով կովի գաշտը, որ ծածկված էր մեռած ու հաշմացած մարդկանցով (ինչպես նա էր կարծում՝ իր կամքով), նա, նայելով այդ մարդկանց, հաշվում էր, թե քանի ուստի է ընկնում յուրաքանչյուր ֆրանսացուն, և, իրեն խարելով, ուրախանալու պատճառներ էր գտնում, որ յուրաքանչյուր մեկ ֆրանսացուն հինգ ուստի էր ընկնում: Ոչ միայն այդ օրը Փարիզ ուղարկած մի նամակում էր նա գրել որ «le champ de bataille a été superbe»<sup>1</sup>, որովհետև այստեղ 50 հազար դիմակ կար, այլև Ս. Հեղինեի կղզում, լուր մենության մեջ, որտեղ նա ասում էր, թե ժողովիր է իր ազատ ժամանակը նիմիրել իր կատարած մեծ գործերի պատմությունը շարադրելուն, նա գրել է.

«La guerre de Russie a dû être la plus populaire des temps modernes: c'était celle du bon sens et des vrais intérêts, celle du repos et de la sécurité de tous; elle était purement pacifique et conservatrice».

«C'était pour la grande cause, la fin des hasards et le commencement de la sécurité. Un nouvel horizon, de nouveaux travaux allaient se dérouler, tout plein du bien-être et de la prospérité de tous. Le système européen se trouvait fondé: il n'était plus question que de l'organiser».

«Satisfait sur ces grands points et tranquille partout, j'aurais eu aussi mon congrès et ma sainte-aliance. Ce sont des idées qu'on m'a volées. Dans cette réunion de grands souverains, nous eussions traités de nos intérêts en famille et complié de clerc à maître avec les peuples».

«L'Europe n'eût bientôt fait de la sorte véritablement qu'un même peuple, et chacun, en voyageant partout, se fût trouvé toujours dans la patrie commune. J'eus demandé toutes les rivières navigables pour tous, la communauté des mers, et que les grandes armées permanentes fussent réduites désormais à la seule garde des souverains».

«De retour en France, au sein de la patrie, grande, forte, magnifique, tranquille, glorieuse, j'eusse proclamé ses limites immuables; toute guerre future, purement défensive: tout agrandissement nouveau antinational. J'eusse associé mon fils à l'empire; ma dictature eût fini, et son règne constitutionnel eût commencé...»

«Paris eût été la capitale du monde, et les français l'envie des nations!..»

«Mes loisirs ensuite et mes vieux jours eussent été consacrés, en compagnie de l'imperatrice et durant l'apprentissage royal de mon fils, à visiter lentement et en vrai couple campagnard, avec nos propres chevaux, tous les recoins de l'Empire, recevant les plaintes, redressant les torts, semant de toutes parts et partout les monuments et les bienfaits»<sup>1</sup>.

<sup>1</sup> «Մոռական պատերազմը պետք է որ լիներ ամենաժողովրդական պատերազմը նորագույն ժամանակներում: Դա առողջ բանականության և իսկական շանեթի պատերազմ էր, որորի անդորրության և անվտանգության պատերազմ: Այդ պատերազմը զուտ իսպանական և պահպանողական պատերազմ էր:

«Դա մի մեծ նպատակի համար էր, պատահականություններին վերը տալու և անդորրության սկզբունքներու համար: Նոր հորիզոն կրացվեր, նոր աշխատանքներ կասվեին, որոնք բարեկեցություն ու բարօրություն երերեխն բոլորին: Եվրոպական սիստեմի հիմքը դրված էր, հարցը միայն այդ սիստեմը կաշմակերպելուն էր վերաբերվելու:

Նա, որի համար նախախնամությունը նախորոշել էր ժողովուրդների դահճի տիսուր և ակամա գերը, իրեն հավատակը ժողովուրդների բարօրությունն է եղել և որ նա կարող էր տնօրինել միլիոնավորներ՝ բախտը և իշխանության միջոցով բարերարություն անել:

«Des 400 000 hommes qui passèrent la Vistule, — écrit նա այնուհետև սուսական պատերազմի մասին, — la moitié était autrichiens, prussiens, saxons, polonais, bavarois, württembergeois, mecklembourgeois, espagnols, italiens, napolitains. L'armée impériale, proprement dite, était pour un tiers composée de hollandais, belges, habitants des bords du Rhin, piémontais suisses, genevois, toscans, romains, habitants de la 32-e division militaire, Brême, Hambourg, etc; elle comptait à peine 140 000 hommes parlant français. L'expédition de Russie coûta moins de 50 000 hommes à la France actuelle, l'armée russe dans la retraite de Wilna à Moscou, dans les différentes batailles, a perdu quatre fois plus que l'armée française; l'incendie de Moscou

«Այդ մեծ հարցում բավարարված և ամենուրեք հանդիսաւ ես էլ կունեսայի իմ կոնյակուր և իմ սրբազն դաշինքը: Դրանք մտքեր են, որ ինձնից դողացան: Մեծ թագավորների այդ ժողովում մենք ընության կառնեինք մեր շահերն ընտանեաբար և հաշվի կառնեինք ժողովուրդներին այնպես, ինչպես գրագիրը՝ իր տիրուց:»

«Այսպիսով եկոպան իրոք շուտով կազմեր մի ժողովուրդ, և յուրաքանչյուր մարդ ամեն տեղ ձանագույնությունով միշտ էլ կդանվեր ընդհանուր հայրենիքում:»

«Ես կգտեի այն բանին, որ բայսը գետերը նախակելի լինեն բոլորի հայր, որ ծովն ընդհանուր լինի, որ մշտական, մեծ բանակները փոքրացվեն և զերածին բացառապես թագավորների գվարդիայի:»

«Վերադառնալով Ֆրանսիա՝ հայրենիք, մեծ, զոր, հոյակապ, խաղաղ, փառագոր հայրենիք, ես նրա սահմանները անփոփոխ կհատարաւեի, ամեն մի ապագա պատերազմ՝ պաշտպանողական: Ասմանների ամեն մի նոր ընդարձակում հակազգային: Ես իմ որդուն կայսրության գահակալ կնշանակեի, իմ գիլտատարաւյթաւնը կվերջանա, և կսկսէի նրա սահմանադրական կառավարումը:»

«Փարիզը կլիներ աշխարհի մայրաքաղաքը, և ֆրանսացիները՝ բոլոր ազգերի նախանձի առարկան...»

«Այսուհետև իմ ազատ ժամանակը և վերջին օրերս կայսրուհու հետ միասին և իմ որդու արքայական գաստիարակման ժամանակ կնվի, եկինք այն բանին, որ գյուղական ամուսնական զուգի կես սելական ձիերով կշրջեինք

a coûté la vie à 100 000 russes, morts de froid et de misère dans les bois; enfin dans sa marche de Moscou à l'Oder, l'armée russe fut aussi atteinte par l'intempérie de la saison; elle ne comptait à son arrivée à Wilna que 50 000 hommes, et à Kalisch moins de 18 000<sup>1</sup>.

Նա երևակայում էր, որ իր կամքով պատերազմ տեղի ունեցավ Ռուսաստանի հետ, և կատարվածի սարսափը շահնիւց նրա հոգին: Նա համարձակորեն իր վրա էր վերցնում դեպքի ամբողջ պատասխանատվությունը, և նրա մթագնած միտուր արդարացում էր գտնում այն բանում, որ հարյուր հազարավոր զոհված մարդկանց մեջ ֆրանսացիներն ավելի փոքր թիվ ևն կազմում, քան հետանցիներն ու բավարացիները:

### XXXIX

Մի քանի տասնյակ հազար սպանված մարդիկ զանազան դիրքով ու զանազան մունդիրներով լոկած էին դաշտերում ու մարգագետիններում, որոնք պատկանում էին պայյը Դավիդովներին և պետական գյուղացիներին, այն դաշտերում ու մարգագետիններում, որտեղ հարյուրավոր տարիներ միաժա-

պետության բոլոր անկյունները, գանգատներ կընդունեինք, կվերացնեինք անարգարությունները, ամեն տեղ հասարակական լինութ ուներ կլինիքը և բարերարություն կանեինք:

«Վիստան անցած 400 000 մարդկանց կեսը ավստրիացիներ էին, պրուսացիներ, սաքսոնացիներ, լեհեր, բավարացիներ, վյուրաներերոցիներ, մելենրուրցիներ, սպանացիներ, ինալացիներ և նեապոլիտիներ: Ինչպահած առած կայսերական բանակի մեկ երրորդը բազկացած էր նուանդացիներ, ից, բելգիացիներից, Հանենոսի ափերի բնակիներից, պիեմոնտցիներից, չվեցարացիներից Խնեցիներից, տոսկանացիներից, Հուամ: բնակիչներից, 32 ոդ ուազմական գրիգիալից, Բրիտնիի, Համբուրգի և այլ բնակիչներից, բանակում հազի լիներ 140 000 մարդ, որոնք ֆրանսներն էին խոսում:»

Ինչպահան արշավանքը բռն Ֆրանսիայի վրա նստեց և 50000-ից պակս չմարդ: Ինու բանակը Վիլնոյից Մոսկվա նահանելու միջոցին զանազան կալիներում կորցրեց շրու անգամ ավելի քան ֆրանսական բռնակը: Մոսկվայի հրդերը 100 000 զո՞ն խեց ոռւսներից, մարդիկ, որոնք բռնան անտառներում երացից ու բաղցից: Վերցապես Մոսկվայից գեպի Օդեր զնալիս ու բանակը նմանապես տուժեց տարգաւ եղանակի զամանույթյան պատճառով. Վիլնո գալուց հետո այլ բանակում միայն 5 : 000 մարդ կար, իսկ Կալինում՝ 18 000-ից պակաս:

մանակ թէրք են հավաքել և իրենց անասուններին արածացրել բորդիսո, Գորկի, Ծեարդինո և Սեմյոնովսկոյ գյուղերի գյուղացիները։ Վիրակապային կայաններում մի գեսյատին տարածությամբ խոտն ու հողը արյունով էին ծծված։ Վիրավոր և ոչ վիրավոր զանազան զորամասերի պատկանող մարդկանց խմբերը սարսափահար գեմքերով, մի կողմից քարշ գալով ետ էին գնում դեպի Մոժայսկ, մյուս կողմից ետ էին գնում դեպի Վալուկու Մարդկանց այլ խմբերը, հոգնատանց ու քաղցած, իրենց պետերի առաջնորդությամբ առաջ էին գնում։ Երրորդները կանգնած էին իրենց տեղերում և շարունակում էին կրակել։

Ամբողջ դաշտի վրա, որն առաջ այնքան զվարթագին գեղցիկ էր, որտեղ շողջողում էին սվինները և ծխեր էին երևում վաղորդյան արեկի լույսի մեջ, այժմ խոնավության և ծխի մշուշ էր կանգնել և բորակի ու արյան տարօրինակ թթվի հոտ էր փշում։ Ամպերը հավաքվեցին և սկսեց անձրես կաթիթէլ սպանվածների վրա, վիրավորների վրա, վախեցածների վրա, ուժասպառ եղածների վրա և տարակուսող մարդկանց վրա։ Կարծես անձրեն ասելիս լիներ, «Բավակա՞ն է, բավակա՞ն է, մարդի՞կ։ Վերջ տվե՞ք... ուշքի եկեք։ Ի՞նչ եք անում»։

Առանց սննդի և առանց հանգստի, տանջված երկու կողմի մարդկանց մեջ է սկսել էր տարակուսանք առաջանալ, թե պե՞տք է արդյոք ոչնչացնել միմյանց, և բոլորի գեմքին էլ տատանում էր նկատվում, և յուրաքանչյուրի հոգում միատեսակ հարց էր առաջանում՝ «Ինչո՞ւ, ո՞ւմ համարես մարդիկ սպանեմ և ինքս սպանվեմ։ Սպանեցե՞ք, ում ուզում եք, արե՞ք, ինչ ուզում եք, իսկ ես այլևս չեմ ցանկանում։ Այդ միտքը իրիկվա դեմ հասունացավ յուրաքանչյուրի հոգում։ Ամեն բոպե այդ մարդիկ կարող էին սարսափել այն բանից, ինչ իրենք անում էին, թողնել ամեն ինչ ու փախչել ամեն կողմ։

Բայց թեև ճակատամարտը վերջանալու պահին մարդիկ գգում էին իրենց արարքի ամբողջ սոսկումը, թեև նրանք ուրախ կլինեին դադարեցնել այն, էլի ինչ-որ անհասկանալի, խորհրդավոր ուժ գեռ շարունակում էր դեկավարել նրանց և բրտնած, վասողի ու արյան մեջ, յուրաքանչյուր երեքից մեկական մնացած հրետանավորները, հոգնածությունից սայդաբելով ու

շնչառպառ լինելով հրանոթները լցնում էին, նշան բռնում, պատրույզը դնում։ և ոռւմբերը նույնպես արագ ու դաժանորեն թռչում անցնում էին երկու կողմից և տափակացնում մարդկային մարմինը, և շարունակվում էր կատարվել այն սոսկալի գործ, որ կատարվում է ոչ թե մարդկանց կամքով, այլ նրա կամքով, ով ղեկավարում է մարդկանց և աշխարհները։

Ով էլ նայեր ոռուս բանակի կազմալուծված վերջապահին, կասեր, որ բավական է ֆրանսացիները ևս մի փոքր ճիգ գործ դնեն, և ոռու բանակը կկորշի։ Եվ նույնպես, ով նայեր ֆրանսական բանակի վերջապահին, կասեր, որ բավական է ոռւսները և մի փոքր ճիգ գործ դնեն, և ֆրանսացիները կկործանվեին։ Բայց ոչ ֆրանսացիները, ոչ ոռւսները այդ ճիգը չեին գործ դրնում, և ճակատամարտի կրակը դանդաղորեն մարտւմ էր։ Խուսներն այդպիսի ճիգ չեին գործ դնում, որովհետև նրանք չեին ֆրանսացիների վրա հարծակվողը։ Ճակատամարտի սկզբին նրանք միայն պաշտպանում էին Սոսկվա տանող ճանապարհը, փակիլով այն ֆրանսացիների առաջ, և ճիշտ նույնպես շարունակում էին մնալ այդտեղ նաև ճակատամարտի վերջին պահին։ Բայց եթե անգամ ոռւսները նպատակ ունենային վերջնական շարդ տալ ֆրանսացիներին, նրանք դարձյալ չեին կարող այդ վերջին ճիգը գործ դնել, որովհետև ոռւսների բալոր գործերը շարդ էին կրել և չկար ոչ մի զորամաս, որը տուժած ըրլիներ կոխվներում։ և ոռւսները, մնալով իրենց տեղերում, կորցրին իրենց զորքի կեսը։

Ֆրանսացիները, որոնց մեջ վառ էր 15 տարվա հաղթությունների հիշողությունը, որոնք հավատացած էին նապուլիոնի անպարտելիության մեջ, ունեին այն գիտակցությունը, որ իրենք զրայիլ են մարտադաշտի մի մասը և կորցրել են իրենց մարդկանց միայն մեկ քառորդը և բացի դրանից ունեն դեռ 20-հազարտանոց մի զվարդիա, որը բնավ կոփների չի մասնակցել, հեշտությամբ կարող էին այդ վերջին ճիգը գործ դնել։ Ֆրանսացիները, որոնք հարձակվում էին ոռու բանակի վրա, նպատակ ունենալով քշել ոռւսներին իրենց դիրքերից, պետք է որ այդ ճիգը գործ դնեին, որովհետև մինչ այն, քանի դեռ ոռւսները ճիշտ այնպես, ինչպես ճակատամարտից առաջ պաշտպանում էին Սոսկվայի ճանապարհը, ֆրանսացիներն իրենց նողատակին շնասան, և նրանց բոլոր չանքերն ու կտրուսա-

ներն իգուր անցան: Բայց Փրանսացիներն այդ ճիգը գործ չդրին: Արոշ պատմագիրներ ասում են, որ բավական էր Նապոլեոնը տար իր անձեռնամուխ հին գվարդիան, որ Փրանսացիները Հաղթեին այդ ճակատամարտում: Խոսել այն մասին, թե ինչ կլիներ, եթե նապոլեոնը տար իր գվարդիան, այդ ժենուցն է, ինչ ասել, թե ինչ կլիներ, եթե աշնանը գարուն լիներ: Այդ չէր կարող լինել: Բայց նապոլեոնն իր գվարդիան շովեց, որովհետև նա այդ շուզեց, բայց այդ չէր կարելի անել: Ֆրանսական բանակի բոլոր գեներալները, սպաներն ու գին-վորները գիտեին, որ այդ չէր կարելի անել, որովհետև այդ թուլ չէր տալիս զորքի ընկած տրամադրությունը:

Միայն Նապոլեոնը չէր, որ ապրում էր երազատեսության նմանող այն զգացումը, որ ձեռքի ահավոր թափն անգոր ընկ-նում է. բոլոր գեներալները, ֆրանսական բանակի բոլոր կո-սիվների մասնակցած և շմասնակցած զինվորները՝ նախկին կոիվների բոլոր փորձերից հետո (կոիվներ, որտեղ տասնա-պատիկ ավելի քիչ ջանքեր գործ դնելուց հետո թշնամին փախչում էր) սոսկումի նույն զգացումն էին ապրում այն թշշ-նամու հանդեպ, որը կորցնելով իր զորքի կեսը, ճակատամար-տի վերջին ջարունակում էր նույնքան ահեղործն զիմազդել, ինչպես դիմադրում էր ճակատամարտի սկզբին: Ֆրանսական Հարձակվող բանակի բարոյական ուժն սպառված էր: Բորոդինո-յի տակ ուսաները տարան ոչ այն հաղթությունը, որը որոշվում է թշնամուց խլված այն շորի կտորներով, որ ամրացվում են փայտի գլխին և դրոշակ են կոչվում, և այն տարածությամբ, որտեղ գտնվել են և գտնվում են զորքերը, այլ բարոյական հաղ-թություն, այն հաղթությունը, որ հակառակորդին համոզում է, թե իր թշնամին՝ իր անզորությամբ հանդերձ, բարոյական գերազանցում է իրեն: Ֆրանսական արշավանքը, որպես մի մոլեգնած գազան, որը մահացու վերք էր ստացել իր վազքի ժամանակ, զգում էր իր կործանումը, բայց այդ արշավան-քը չէր կարող կանգ առնել ճիշտ այնպես, ինչպես չէր կարող ետ չբաշվել կրինակի թույլ ուսւ բանակը: Տրված մղումից հետո ֆրանսական զորքը գեռ կարող էր մինչև Մոսկվա հասնել, բայց այնտեղ, առանց նոր ջանքերի ուսւ զորքի կողմից՝ նա պետք է կործանվեր, արյունաքամ լինելով այն մահացու վեր-քից, որ ստացել էր նա Բորոդինոյում: Բորոդինոյի ճակատա-

մարտի ուղղակի հետևանքն այն եղավ, որ Նապոլեոնն առանց պատճառի փախավ Մոսկվայից, վերադարձի ճանապարհը ընտրելով Մոլենսկի հին ճանապարհը, որ կործանվեց 500-հազարանոյ: բանակը, կործանվեց նապոլեոնյան ֆրանսիան, որի վրա առաջին անգամ Բորոդինոյի տակ իր ձեռքը դրեց ոգով ամենահզոր հակառակորդը:

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

### I

Մարդկային մտքի համար անհասկանալի է շարժման բացարձակ անընդհատությունը։ Ամեն մի շարժման օրենքները հասկանալի են դառնում մարդու համար միայն այն ժամանակ, երբ նա քննության է առնում այդ շարժման կամայսթար վերածուած միավորները։ Բայց դրա հետ միասին անընդհատ շարժումը կամայարար ընդհատ միավորների բաժանելու հետևանքով է։ Առաջանում է մարդկային մոլորությունների մեծ մասը։

Հայտնի է այսպես կոչված հների մի սոֆիզմը, որը կայանում է նրանում, թե Աքիլլեսը երբեք չի հասնի իր առզեից գընացող կրիային, չնայած նրան, որ Աքիլլեսը կրիայից տասն անգամ ավելի արագ է գնում։ Հենց որ Աքիլլեսն անցնի այն տարածությունը, որը նրան բաժանում է կրիայից, կրիան կանցնի այդ տարածության մեկ տասներորդը։ Աքիլլեսը կանցնի այդ մեկ տասներորդը, կրիան կանցնի մեկ հարյուրերորդը և այդպես անվերջ։ Այդ խնդիրը հներին անլուծելի էր թվում։ Լուծման անմտությունը (որ Աքիլլեսը երբեք չի հասնի կրիային) բխում էր միայն նրանից, որ մարդիկ կամայարար ընդունել էին շարժման ընդհատ միավորներ, մինչդեռ՝ թե Աքիլլեսի և թե կրիայի շարժումը կատարվում է անընդհատորեն։

Ընդունելով շարժման հետզհետև ավելի ու ավելի մանր միավորներ, մենք միայն մոտենում ենք հարցի լուծմանը, բայց երբեք չենք հասնում նրան։ Միայն ընդունելով անվերջ փոքր մեծություն և վերընթաց պրոգրեսիա այդ մեծությունից մինչև մեկ տասներորդական և վերցնելով այդ երկրաշափական պրոգրեսիայի գումարը, մենք հասնում ենք հարցի

— 342 —

լուծմանը։ Մաթեմատիկայի մի նոր ճյուղ, որը հասել է անվերջ փոքր մեծությունների հետ վարվելու արվեստին և այնուհետև շարժմանը վերաբերող մյուս ավելի բարդ խնդիրներում այժմ պատասխան է տալիս այն հարցերին, որոնք անլուծելի էին թվում։ Մաթեմատիկայի այդ նոր, հներին անհայտ ճյուղը, շարժման հարցերը քննելիս ընդունում է անվերջ փոքր մեծություններ, այսինքն այսպիսի մեծություններ, որոնց առկայությամբ վերականգնվում է շարժման գլխավոր պայմանը (բացարձակ անընդհատությունը) և հենց դրանով էլ ուղղում է այն անխուսափելի սխալը, որը չի կարողանում շանել մարդկային՝ միտքը՝ անընդհատ շարժման փոխարժեն քննության առնելով շարժման առանձին միավորները։

Բոլորովին նույնն է կատարվում պատմական շարժման օբյենքները գտնելու վերաբերմամբ։

Մարդկության շարժումը, բխելով անթիվ-անհամար մարդկային կամայականություններից, կատարվում է անընդհատորեն։

Այդ շարժման օբյենքների հայտաբերումը պատճենության նպատակն է կազմում։ Բայց մարդկանց բոլոր կամայականությունների գումարի անընդհատ շարժման օրենքները հայտաբերելու համար, մարդկային միտքն ընդունում է ինքնաբերական, ընդհատ միտքորներ։ Պատճենության առաջին պրիոմը կայանում է նրանում, որ պերցնելով անընդհատ ընթացքը ինքնաբերի ինքնաբերական մի շարք, վերջինս քննության ժն առնում դեպքերի մյուս շարքերից առանձին, մինչդեռ՝ շկա և շի հարող լինել որևէ գեպքի նկերը, այլ միշտ մի գեպքը անընդհատորեն բխում է մյուսից։ Երկրորդ պրիոմն այն է, որ մի մարդու, թագավորի կամ զորավարի գործողությունները քննության են առնում որպես մարդկանց կամայականությունների մի գումար, մինչդեռ մարդկային կամայականությունների գումարը ե՛րբեք չի արտահայտվում որեւէ մեկ պատմական անձնագորության գործունեությամբ։

Պատմական դիտությունն իր զարգացման ընթացքում միշտ պահպան ու ավելի փոքր միտքորներ է ընդունում ու քննության առնում և այդ ճանաւրահով ձգուում է մոտենալ ճշմարտությանը։ Բայց որքան էլ որ մանր են միավորները, որ պատճենությունն է ընդունում, այնուամենայնիվ մենք գգում ենք,

— 343 —

որ մեկ միավորը մյուսից զատելը, որևէ երեսութիւն սկիզբ ընդունել, ինչպես նաև այն ընդունելը, որ բոլոր մարդկանց կամայականություններն արտահայտվում են որևէ մեկ պատմական անձնավորության գործողություններով, ինքնըստինքյան սխալ է:

Պատմության ամեն եզրակացություն, առանց քննադատության կողմից որևէ, անգամ աննշան ջանք գործ դրվելու, չարդ ու փշուր է լինում և անհետ կորչում միայն այն պատճառվ, որ քննադատությունը որպես դիտողության առարկա ընտրում է ավելի մեծ կամ ավելի փոքր ընդհատ միավոր, մի քան, որը նա միշտ էլ իրավունք ունի անել, քանի որ յուրաքանչյուր առանձին վերցրած պատմական միավոր ինքնարերական է լինում:

Միայն անվերջ փոքր միավոր ընդունելով դիտողության համար — պատմության դիմերենցիալը, այն է՝ մարդկանց միատեսակ մղումները — և ինտեգրելու (այդ անվերջ փոքր մեծությունների գումարները վերցնելու) արվեստին հասուլինելով մենք կարող ենք հուսալ, որ կգտնենք պատմության օրենքները:

ХІХ դարի առաջին 15 տարին Եվրոպայում ներկայանում է որպես միլիոնավոր մարդկանց արտասովոր շարժման մի ժամանակաշրջան: Մարդիկ թողնում են իրենց սովորական գրադարձնքը, Եվրոպայի մեկ կողմից ձգում են մյուս կողմը, կողոպտում, սպանում են միջյանց, հաղթանակ են տանում և հուսահատվում: Եվ կյանքի ողջ ընթացքը մի քանի տարի շարունակ փոխվում է և ներկայացնում մի ուժեղացրած շարժում, որն սկզբում գնալով աճում է, իսկ հետո թուլանում: Ո՞րն է այդ շարժման պատճառը և ի՞նչ օրենքներով է կատարվել այն, — հարցնում է մարդկային միտքը:

Պատմագիրները, այդ հարցին պատասխանելով, շարադրում են մի քանի տասնյակ մարդու գործեր ու ճառեր, որ նրանք կատարել ու արտասանել են Փարիզ քաղաքի շնչերից մեկում և այդ գործերին ու ճառերին ունելուցիհա անունն են տալիս: Այնուհետև պատմագիրները տալիս են նապունի և նրան համակրող ու թշնամի որոշ անձանց մանրամասն կեն-

սագրությունը, պատմում են այն ազդեցության մասին, որ այդ անձանցից ոմանք ունեցել են մյուսների վրա և ասում են, ահա թե ինչո՞ւ առաջացավ այդ շարժումը, և ահա' նրա օրենքները:

Սակայն, մարդկային միտքը ոչ միայն հրաժարվում է այդ բացարությանը հավատալուց, այլև ուղղակի ասում է, որ բացարության ձեր սխալ է, որովհետև այս բացարությամբ ամենաթույլ երեսությն ընդունվում է որպես ամենահզոր երեսությի պատճառ: Մարդկային քմահաճույքների գումարն առաջարեց և ունելուցիհա, և' նապունին, և միայն այդ քմահաճույքների գումարը հանդուրժեց նրանց և ոչնչացրեց նրանց:

«Բայց ամեն անգամ, երբ նվաճումներ են եղել, եղել են և նվաճողներ, ամեն անգամ, երբ հեղաշրջումներ են կատարել պետության մեջ, եղել են և միծ մարդիկ» — ասում է պատմությունը: Հարկավ, ամեն անգամ, երբ նվաճողներ են հանդես եկել, եղել են և պատերազմներ — պատասխանում է մարդկային միտքը: Բայց այդ չի ապացուցում, թե նվաճողներն են եղել պատերազմների պատճառը և թե կարելի է պատերազմի օրինքները գտնել մեկ մարդու գործունեության մեջ: Ամեն անգամ երբ ես, նայելով իմ ժամացույցին, տեսնում եմ, որ սլաքը մոտեցել է 10-ին, ես լսում եմ, որ հարկան եկեղեցում գանգահարություն է սկսվում, բայց այն, որ ամեն անգամ սրբագր ժամը 10-ի վրա է գալիս այն ժամանակ, երբ զանգահարություն է սկսվում, ինձ իրավունք չի տալիս եզրակացնել, թե սլաքի դիրքը զանգերի շարժման պատճառն է հանդիսանում:

Ամեն անգամ, երբ ես տեսնում եմ շոգեշարժի շարժումը, ես սուլոցի ձայն եմ լսում, տեսնում եմ կափույրի բացվելը և անիվների շարժումը. Բայց ես իրավունք չունեմ դրանից եղրակացնել, թե սուլոցն ու անիվների շարժումը շոգեշարժի շարժման պատճառներ են հանդիսանում:

Գյուղացիներն ասում են, թե ուշ գարնանը սառը քամի է վշում այն պատճառը, որ կաղնու բողբջներն են բացվում, և իսկապես ամեն զարնան սառ քամի է վշում, երբ կաղնին սկսում է բացվել: Բայց չնա՞ծ որ կաղնու բացվելու ժամանակ վշու սառը քամու պատճառն ինձ անհայտ է, այնուամենայնիվ ես չեմ կարող համաձայնել գյուղացիների հետ այն

բանում, թե սաոր քամու պատճառը կաղնու բողբոշի բացվելն է, որովհետև քամու ուժը բողբոշի ազդեցությունից դուրս է գտնվում: Ես տեսնում եմ միայն այն պայմանների զուգադիպումը, որոնք լինում են ամեն մի կենսական երևույթի մեջ, և տեսնում եմ, թե ինչպես էլ և որքան մանրամասնորեն էլ դժամանույցի լրաբը, կափույրը և շոգեշարժի անխվները և կաղնու բողբոշը, ես շեմ իմանա ո՞չ զանդահարության, ո՞չ շոգեշարժի շարժման և ո՞չ էլ գարնանային քամու պատճառը: Դրա համար ես պետք է բոլորովին փոխեմ իմ դիտողության կետը և ուսումնասիրեմ շոգու, զանգի և քամու շարժման օրենքները: Նույնը պետք է անի պատմությունը, եվ այդպիսի փորձեր արդեն արված են:

Պատմության օրենքներն ուսումնասիրելու համար մենք պետք է բոլորովին փոխենք դիտողության առարկան, հանգիստ թողնենք թագավորներին, մինհստրներին և գեներալներին և ուսումնասիրենք այն միաւսեակ, անվերջ փոքր տարրերը, որոնք մասսաներն ղեկավարում են: Ոչ ոք չի կարող ասել, թե որշակի կարող կլինի մարդն այդ ճանապարհով հասու լինել պատմության օրենքներին. քայլ ակներև է, որ միայն այդ ճանապարհով հետապնդության մարդկային միտքը դեռ չի գործ գրել մեկ միջիներորդն այն շանքերի, որ գործ են զրել պատմագետները զանազան թագավորների, զորագարիների և մինհստրոների գործերը նկարագրելու և այդ գործերի առթիվիրենց նշանառությունները շարադրելու համար:

## II

Խնդրապայի տառներիու առզի մարդիկ ներխուժեցին թուսաստան: Մուս զորքը և քեակիլությունը ընդհարություն սակալով նահանջում են մինչև Սմոլենսկ և Սմոլենսկից մինչև Բորտինո: Ֆրանսական զորքը հետզհետե ավելի և ավելի արագործն արշավում էր դեպի Սոսկվա, գետի իր առաջնապահման նպատակը: Նրա արագըն թացության ուժը, մոտենալով նպատակին, ավելանում է ճիշտ այնպես, ինչպես ավելանում է վայր դեկնող մարմնի արագությունը, երբ նա մկում է մոտենալ նրկրին: Թամում՝ բարդած ու թշնամի նրկի,

հազարավոր վերստ տարածությամբ. առջեռում՝ մի քանի տասնյակ վերստ, որ բաժանում է նպատակից: Այդ զգում է նապոլեոնյան բանակի յուրաքանչյուր զինվոր, և արշավանքը շարունակվում-առաջանում է ինքնին, հննց միայն արագության ուժի շնորհիվ:

Որքան ավելի է նահանջում ոուս զորքը, այնքան նրա մեջ ավնլի և ավելի է խորանում զայրույթի ոգին ընդդեմ թշնամու. ետ նահանջելով՝ այդ տրամադրությունը կենտրոնանում և անում է: Բորոդինոյի տակ ընդհարությունը է տեղի ունենում: Ո՞չ այս և ո՞չ մյուս զորքը շեն քայլայվում, շեն կազմակուծվում, բայց ոուս զորքը ընդհարությունից անմիջապես հետո նահանջում է նույնպես անխուսափելիորեն, ինչպես անխուսափելիորեն ետ է գլորվում այն գունզը, որը ընդհարվել է մի այլ, ավելի արագործն զլորվող գնդի հետ, և նույնպիսի անխուսափելիությամբ (թեն ընդհարման մեջ իր ամբողջ ուժը կորցրած) արշավանքի արագործն զլորվող գունզը շարունակում է գլորվել ևս որոշ տարածություն:

Ռուսները նահանջում են 120 վերստ Մոսկվայից այս կողմ, իսկ ֆրանսացիները հասնում են մինչև Մոսկվա և այնտեղ կանգ առնում: Հինգ շաբաթ դրանից հետո ոչ մի ճակատամարտ չի լինում: Ֆրանսացիները շեն շարժվում: Մահացու կերպով վիրավորված գազանի պես, որ արյունաքամ լինելով իր վերքերն է լիզում, նրանք հինգ շաբաթ մնում են Մոսկվայում, ոչինչ չձեռնարկելով և հանկարծ, առանց որևէ պատճառի, ետ են փախչում: Խուճապով նետվում են Կալուգայի ճանապարհը (և հաղթությունից հետո, որովհետև կովի դաշտը Մալյարոսլավեցի մոտ նորից մնաց նրանց ձեռքին), առանց որևէ լուրջ կովի բռնվելու, ավելի արագ ետ են փախչում դեպի Սմոլենսկ, Սմոլենսկից այն կողմ, անցնում են Վիլնոն, Բերեզին և այլն:

Օգոստոսի 26-ի երեկոյան թե Կուտուզովը, թե ամբողջ ոուս բանակը հավատացած էին, թե Բորոդինոյի ճակատամարտը հաղթությամբ է վերջացել: Կուտուզովն այդպիս էլ գրել էր թագավորին: Կուտուզովը հրամայեց պատրաստվել նոր ճակատամարտի, որպեսզի այդպիսով վերջնականապես շախչախեն թշնամուն. և նա այդ արագ ոչ թե նրա համար, որ ուղում էր որևէ մեկին խարել, այլ այն պատճառով, որ նա

գիտեր, որ թշնամին հաղթված է. ճիշտ այսպես, ինչպես այդ գիտեր ճակատամարտի յուրաքանչյուր մասնակից:

Բայց նույն երեկո և հետեւյալ օրը սկսեցին մեկը մյուսի Հետեւյալ լուրեր զալ չտեսնված կորուստի մասին, այն մասին, որ իրենք կորցրել են բանակի կեսը: Եվ նոր ճակատամարտը ֆիզիկապես անհնարին դարձավ:

Չեր կարելի ճակատամարտ տալ, երբ գեռ տեղեկություններ չեին հավաքել, երբ գեռ վիրավորներին չեին հավաքել, չեին լրացվել ու լումբերի պակասը, նոր զորապետներ չեին նրանակված սպանվածների տեղ, մարդիկ դեռ չեին հակեցրել իրենց քաղցը, դեռ չեին քնել-հանգստացել: Դրա հետ միասին ճակատամարտից անմիջապես հետո, հետեւյալ առավոտ գըրանսական զորքը (նույն արագըթնաց շարժման ուժի զորությամբ, մի շարժում, որ կարծես ավելացել էր տարածության քառակուսու հակադարձ հարաբերությամբ) արդեն ինքնաբերաբար արշավում էր ոռու զորքի վրա: Կուտուզովն ուզում էր մյուս օրը հարձակում գործել. այդպես էր տրամադրված ամբողջ բանակը: Բայց հարձակում գործելու համար բավական չէ միայն ցանկանալ այդ. հարկավոր է, որ այդ անելու հնարավորություն էլ լինի, իսկ այդպիսի հնարավորություն չկար: Չեր կարելի մի անցում չնահանջել, հետո ճիշտ նույնպես չեր կարելի երկրորդ, երրորդ անգամ չնահանջել, և, վերջապես, սեպտեմբերի 1-ին, երբ բանակը մոտեցավ Մոսկվային, ըստայծ զորքի շարքերում առաջացած բարձր տրամադրությանը, իրերի դրությունն այն են պահանջում, որ զորքերը նահանջեն Մոսկվայից այս կողմ: Եվ զորքերը ևս մի վերջին անցում նահանջեցին ու Մոսկվան հանձնեցին թշնամուն:

Այն մարդիկ, որոնք սովորաբար կարծում են, թե պատերազմների և ճակատամարտերի ծրագրերը զորավարները կազմում են նույն ձեռվ, ինչպես մեզնից յուրաքանչյուրը իր առանձնասենյակում քարտեզի առաջ նստած խորհում ու կշուագատում է այն մասին, թե ինքն ինչպիսի կարգադրություններ կանեթ այս կամ այն ճակատամարտում, այսպիսի հարցեր են առաջանում. ինչո՞ւ Կուտուզովը նահանջի ժամանակ շվարվեց այսպես կամ այնպես, ինչո՞ւ նա դիրքեր շգրավեց մինչև Ֆիլի հասնելը, ինչո՞ւ նա միանգամբ չնահանջեց դեպի Կալուգայի ճանապարհը, թողնելով Մոսկվան և այլն: Այն մարդիկ, որոնք

սովոր են այդպես մտածել, մոռանում են կամ չգիտեն այն անխուսափելի պայմանները, որոնք միշտ էլ ընթացակցւում են յուրաքանչյուր գլխավոր հրամանատարի գործունեությանը: Հողավարի գործունեությունը ամեննեին նման չէ այն գործունեությանը, որը մենք երեակայում ենք ազատ պայմաններում, առանձնասենյակում նստած՝ քարտեզի վրա քննելով ու վերլուծելով որևէ պատերազմ, որոշ թվով զորքերով այս և այն կողմից և որոշ վայրում, և սկսելով մեր կշուագատումներն որևէ որոշ մոմենտից: Գլխավոր հրամանատարը երբեք չի լինում որևէ դեպքի սկզբնավորության այն պայմաններում, որոնց հետ դեպքը կապակցելով մենք այն քննության ենք առնում: Գլխավոր հրամանատարը միշտ գտնվում է դեպքերի շարժվող շարքի կենտրոնում և այնպես, որ նա երբեք, ոչ մի բոլոք ի վիճակի չի լինում կշուագատել կատարվող դեպքի ամբողջ նշանակությունը: Դեպքն աննկատելի կերպով, վայրեկան առ վայրեկան կերպում է իր նշանակությունը, և այդօրինակ հետեւողական, անընդհատ կերտման յուրաքանչյուր պահին գլխավոր հրամանատարը գտնվում է ինտրիգների, հոգսերի, կախման, իշխանության, նախագծերի, խորհուրդների, սպառնալիքների, խարեւայությունների բարդագույն խաղի կենտրոնում, շարունակ ստիպված է լինում պատասխանել իրեն առաջադրվող անթիվ-անհամար, միշտ իրար հակառող հարցերին:

Գիտուն զինվորականներն ամենալուրջ կերպով մեզ ասում են, թե Կուտուզովը Ֆիլի հասնելուց շատ առաջ պետք է շարժեր իր զորքերը դեպի Կալուգայի ճանապարհը, որ նույնիսկ մեկն այդպիսի ծրագիր առաջարկել է նրան: Բայց գլխավոր հրամանատարի առաջ, մանավանդ դժվար րոպեին, մի ծրագիր չի լինում, այլ միշտ էլ տառնյակ ծրագրեր միաժամանակ: Ելայդ ծրագրերից յուրաքանչյուրը, որը հիմնված է լինում ու ապահովության ու տակտիկայի վրա, հակասում է մյուսին: Գրլիսավոր հրամանատարի գործը, թվում է, թե կայանում է միայն նրանում, որ ընտրի եղած ծրագրերից մեկնումները: Բայց նա այդ էլ չի կարող անել: Դեպքերու ժամանակը շեն սպասում: Ենթադրենք, թե նրան առաջարկում են՝ զորքերն ամսի 28-ին տեղափոխել Կալուգայի ճանապարհը. բայց ահա այդ ժամանակ գալիս է Միլորադովիշի աղյուտանարը և հարցնում, կոիլ

Երբ երմոլովը, որը Կուտուզովի կողմից ուղարկված էր դիրքերը դիտելու, ասավ ֆելդմարշալին, թե Մոսկվայի տակ այդ դիրքերում չկարելի կովել և պետք է նահանջել, Կուտուզովը լուս նայեց նրան:

— Ապա մի ձեռդ տո՛ւր, — ասավ նա, և նրա ձեռը շուռ տալով այնպես, որ զարկերակը շոշափի, ավելացրեց. — Դու առողջ չե՞ս, սիրելի՛ս: Ապա մտածի՛ր, թե ի՞նչ ես ասում:

Կուտուզովը դեռ չէր կարողանում հասկանալ այն, թե հնարաւոր էր առանց կովի նահանջել Մոսկվայից այս կողմէ

Կուտուզովը Պոկլոննայա սարի վրա, Դորոգոմիլովյան ուղեկալից վեց գերստ հնաւալության վրա դուրս եկավ կառքից և նստեց ճանապարհի եզրին գտնվող նստարանի վրա: Գններալների մի հանգին բազմություն հավաքվեց նրա շուրջը: Կոմս Խաստոպչինը, Մոսկվայից ժամանելով, միացավ նրանց: Այդ ամբողջ փայլուն հասարակությունը, բաժանվելով մի քանի խմբակների, խոսում էր դիրքերի հարմարության և անհարմարության մասին, զորքերի դրության մասին, ենթադրելի ծրագրերի մասին, Մոսկվայի վիճակի մասին և առհասարակ ուղմական հարցերի մասին: Բոլորն զգում էին, որ թեև իրենք չեն կանչված դրա համար, որ թեև դրան այդպիսի անուն չեն տվել, բայց որ դա ուզմական խորհրդակցություն էր: Խոսակցությունը պատվում էր ընդհանուր հարցերի շուրջը: Եթե որեէ մեկը հայտնում կամ իմանում էր անձնական նորությունները, ապա այդ մասին շշուկով էին խոսում և նորից իսկույն անցնում էին ընդհանուր հարցերին: Ոչ կատակ, ոչ ծիծաղ և ոչ ծպիտ չէր նկատվում նրանց մեջ: Բոլորն ըստ երկույթին լրջորեն աշխատում էին դրության բարձրության վրա մնալ: Եվ բոլոր խմբերը, խոսելով իրար մեջ, աշխատում էին մոտ լինել գլխավոր հրամանատարին (որի նստարանը այդ խմբակների կենտրոնումն էր) և այնպես խոսել, որ նա լսի: Գլխավոր հրամանատարը լսում էր և երբեմն կրկին հարցնում էր այն, ինչ ասում էին նրա շուրջը, բայց ինքը խոսակցության չէր բռնվում և ոչ մի կարծիք չէր հայտնում: Մեծ մասամբ, որևէ խմբակի խոսակցությունը լսելուց հետո, նա հիսաթափածի արտահայտությամբ, և կարծես նրանք բոլորովին այն

սկսե՞լ հենց այժմ ֆրանսացիների հետ, թե նահանջել: Գլխավոր հրամանատարը պետք է նույն բոպեին կարգադրություն անի: Իսկ նահանջելու կարգադրություն անելով նա իր բանակը գրկելու էր դեպի Կալուգայի ճանապարհը թեքելու հնարակությունից: Աղյուսանտից անմիջապես հետո համբարձում հարցում է, թե ո՞ւր տեղափոխել մթերապաշտը, իսկ հիվանդանոցների պետը՝ թե ո՞ւր տեղափոխել վիրավորներն: Իսկ Պետերուրդից եկած սուրհանդակը նամակ է քերում թագավորից, որով հրահանդպում է ամեն կերպ պահել Մոսկվան: Իսկ գլխավոր հրամանատարի ախոյանը, նա, ով նրա տակը փորում է (այդպիսիներ միշտ կան, և ոչ թե մեկը, այլ մի քանիսը), նոր ծրագիր է առաջարկում, մի ծրագիր, որը տրամադրութեան հակառակ է Կալուգայի ճանապարհը դուրս գալու ծրագրին. իսկ իր՝ գլխավոր հրամանատարի Փիզիկական վիճակը բռնւ և հանգիստ են պահանջում. իսկ պարգև չստացած հարցելի գեներալը գալիս է գանգատի, իսկ բնակիչներն պաշտպանում է և զեկուցում միանգություն են աղկրսում: Հարկավոր վայրը նայելու ու զըննելու համար ուղարկված սպան վերադառնում է և զեկուցում միանգության հակառակն այն քանի, ինչ առել է նրանից պառագանդաման հարցամարդ սպան. իսկ զրտեալ, գերի վերցրած և հետախուզություններած գեներալը գործություն այդ անհրաժեշտ պայմանները, կարծիքը են հասկանալ կամ մոռանալ ամեն մի գլխավոր հրամանատարի գործունեության այդ անհրաժեշտ պայմանները, կարծիքը են հայտնում, օրինակ, Ֆիլիպում եղած զորքերի գրության մասին և այն ենթադրությունն անում, թե զիշտայոր հրամանատարը սեպտեմբերի 1-ին կարող էր միանգանմայն աղատորեն լուծել Մոսկվան թողնելու կամ պաշտպանելու հարցը, մինչդեռ ոռու բանակի պարմանեներում Մոսկվայից 5 վերստ հեռավորության վրա այդպիսի հարց չէր կարող լինել: Իսկ ե՞ր լուծվեց այդ հարցը: Ե՞կ Դրիսսայի մոտ, և Մոլենակի տակ, և ավելի Չոշափելի կերպով ամսի 24-ին Շեարդինոյի մոտ, և 26-ին Բորոգինոյի մոտ, և Բորոգինոյից մինչև Ֆիլի կատարած նահանջի յուրաքանչյուրը օրը, յուրաքանչյուր ժամին և յուրաքանչյուր բոպեին:

մասին շեն խոսել, ինչ նա ցանկանում էր իմանալ, — երեսը շուր էր տալիս: Ոմանք խոսում են ընտրած դիրքերի մասին, քննադատելով ող այնքան դիրքերը, որքան այն մարդկանց մտավոր ընդունակությունները, որոնք այդ դիրքերն ընտրել էին. մյուսներն ապացուցում էին, թե սխալն առաջ է եղել թե պետք էր ճակատամարտ ընդունել գեռ նախանցալ օրը. երրորդ խոսումը խոսում էր Սալամանկայի մոտ տեղի ունեցող ճակատամարտի վերաբերյալ, որի մասին պատմում էր հենց նոր եկած ֆրանսացի Կրոսարը, որ պայական մունդիր էր հազար: (Այդ ֆրանսացին ոուսական բանակում ծառայած գերմանական իշխաններից մեկի հետ քննում էր Սարագոսայի պաշտումը, նախատեսելով այն, որ նույն ձևով պաշտպանելու են նաև Մոսկվան): Չորրորդ խմբակում կոմս Ռաստոպչինը խոսում էր այն մասին, թե Մոսկվայի գուգազի (դրուժինա) հետ պատրաստ է զոհել մայրաքաղաքի պատերի տակ, բայց որ այնուամենայնիվ նա չէր կարող չափսոսալ, որ իրեն անգիտության մեջ են պահել, և որ եթե նա այդ առաջ իմանար, այլ բան կլիներ... Հինգերորդները, իրենց ոազմագիտական նկատառումների խորությունը գրսեռելով, խոսում էին այն ուղղության մասին, որ պետք է ընդունեն զորքերը: Վեց՝ սրորդները կատարյալ անհեթեթություն էին ասում: Կուտուզովի դեմքը հետզհետե ավելի մտահոգ ու տխուր էր դառնում: Այդ բոլոր խոսակցություններից կուտուզովը մի բան էր տեսնում. Մոսկվան պաշտպանելու ոչ մի ֆիզիկական հնարավություն չկար՝ այդ բառերի լիակատար նշանակությամբ, այսինքն՝ այդ այն աստիճան անհնարին էր, որ եթե որևէ խելացնոր գլխավոր հրամանատար կարգադրեր ճակատամարտ տալ, ապա խառնաշփություն կառաջանար և ճակատամարտը ալիուամենայնիվ չէր լինի. չէր լինի այն պատճառով, որ բոլոր գերագույն զորապետները ոչ միայն այդ դիրքերն անհնարին էին համարում, այլև իրենց խոսակցությունների մեջ քննության էին առնում միայն այն, ինչ որ կատարվելու է այդ դիրքերն անտարակուտաքար թողնելուց հետո: Էլ ի՞նչպես կարող էին զորապետներն իրենց զորքերին կովի դաշտ առաջնորդել, երբ այդ կովի դաշտը նրանք միանգամայն անընդունելի էին համարում: Մտորին պետերը, նույնիսկ զինվորներն (որոնք նույնպես դատում-տրամաբարանում են) ընտրած դիր-

քերը նույնպես անընդունելի էին համարում, ուստի և չէին կարող լուիվ գնալ, երբ հավատացած էին, որ պարտվելու են: Եթե Բենիգունը շարունակում էր պաշտպանել այդ դիրքերի հարմար լինելը և եթե ուրիշներն էլ գեռ քննարկում էին այն, ապա այդ հարցն ինքնը ստիճանը արդեն նշանակությունը կորցրել էր, և նշանակություն ուներ միայն որպես վեճի և ինտրիգի պատրվակ: Կուտուզովը հասկանում էր այդ:

Բենիգունը, դիրքեր ընտրելով և զերմորեն ցուցադրելով իր ոուսական հայրենասիրությունը (որին Կուտուզովը չէր կարողանում լսել առանց կնճուտվելու), պնդում էր Մոսկվան պաշտպանելու վրա: Կուտուզովը լույսի պես պարզ տեսնում էր Բենիգունի նպատակը. այն զեպքում, եթե շահողվի Մոսկվան պաշտպանելու վրա, որը զորքն առանց կովի հասցրել էր մինչև Վորոբեկի դորի. իսկ հաջողության դեպքում, հաջողությունն իրեն վերագրել. իսկ մերժում ստանալու դեպքում — իրենից հեռացնել Մոսկվան թողնելու հանցանքը: Բայց ինտրիգի այդ հարցն այժմ չէր զբաղեցնում ծերունուն: Մի սարսափելի հարց էր նրան զբաղեցնում: Եվ այդ հարցին նա ող որից սրատասխան չէր լսել: Այժմ նրա համար հարցը կայանում էր միայն հետեյալում: «Մի՞թե ես եմ նապոլեոնին մինչև Մոսկվա հասցրել, և ե՞րբ արի այդ: Ե՞րբ որոշվեց այդ: Մի՞թե երեկ, երբ ես Պլատովին նահանջելու հրաման տվի, թե՝ նախանցյալ օրը երեկոյան, երբ ես նիրհեցի և Բենիգունին հրամայեցի կարգադրություն անել: Թե՝ ավելի առաջ... բայց ե՞րբ կատարվեց այդ սոսկալի գործը: Մենք պետք է Մոսկվան թողնենք... Զորքերը պետք է նահանջին, և պետք է այդպիսի հրաման տալ»: Այդպիսի սոսկալի հրաման տալը նրան թվում էր նույնը, ինչ բանակի հրամանատարությունից հրամարվելլ: Բայց բայց կան չէր, որ նա իշխանություն էր սիրում, որ ընտելացել էր դրան (այն մեծարանքը, որ ցուց էր տրվում իշխան Պրոզորվակուն, որի մոտ նա ծառայում էր Թուրքիայում, զղայնացնում էր նրան), այլև համոզված էր, որ իրեն է վիճակուած Ռուսաստանի գրկությունը, և դրա համար էլ թագավորի կամքին հակառակ և մողողի կամքով նա զիխավոր հրամանառ արէր ընտրված: Նա համոզված էր, որ այդ դժվարին պայմաններում միայն ինքը կարող էր բանակի զլուխ լինել, որ ամ:

աշխարհում միայն ինքն էր ի վիճակի առանց սարսափի իրեն հակառակորդ ճանաշել անպարտելի նապոլեոնին, և նա սոս-կում էր մտածելով այն հրամանի մասին, որը նա պետք է արձակեր: Բայց պետք էր մի բան որոշել, պետք էր վերջ տալ իր շուրջը տեղի ունեցող խոսակցություններին, որոնք սկսում էին շափազանց ազատ բնույթ ստանալ:

Նա իր մոտ կանչեց ավագ գեներալներին:

— Ma tête, fut-elle bonne ou mauvaise, n'a qu'a s'ajuster d'elle même<sup>1</sup>, — ասավ նա, վեր կենալով նստարանի վրայից, և ձին հեծավ ու գնաց ֆիլի, որտեղ գտնվում էին իր կառքեր:

#### IV

Գյուղացի Անդրեյ Սավոստյանովի ընդարձակ, լավագույն իրմիթում ժամը երկուսին խորհուրդը հավաքվեց: Գյուղական մեծ ընտանիքի տղամարդիկ, կանայք ու երեխաները հավաքվել-սեղմէլ էին խրճիթի փոքր սենյակում, որը մեծից բաժանված էր նախասենյակով: Միայն Անդրեյի թոռնիկը, Սալաշան, վեց տարեկան մի աղջիկ, որին գերապայծառը փառքշելով թեյի ժամանակ մի կտոր շաքրո տվեց, մնացել էր խրճիթի մեծ սենյակի վառարանի վրա: Սալաշան վառարանի վրայից երկշոտությամբ և ուրախ նայում էր գեներալների տեմքերին, մունդիրներին ու խաչերին, որ իրար ետևից մըասում էին խրճիթը և նստոտում կարմիր անկյունում դրած նստաշների վրա՝ սրբապատկերների տակ: Ինքը, պապիկը, ինչ-պես Սալաշան մտքում անվանում էր Կուտուզովին, նստած իր կրանցից առանձին, մութ անկյունում՝ վառարանի ետևում և առ խորը նստած էր ծալովի բազմոցի վրա և շարունակ հառա-ռամ ու կարգի էր բերում սերթուկի օձիքը, որը թեկ կոճկված էր, բայց կարծես շարունակ սեղմում էր նրա պարանոցը: Ներս մտնողները մնելու մյուսի ետևից մոտենում էին ֆելդ-մարշալին: ոմանց ձեռն էր սեղմում նա, ոմանց գլխով էր ող-քունում: Աղյուտանտ Կայսարովն ուղեց Կուտուզովի դիմացի

պատուհանի վարագույրը ետ քաշել, բայց Կուտուզովը բար-կացած ձեռք թափահարեց, և Կայսարովը հասկացավ, որ գերա-սույծառը չի ցանկանում, որ իր զեմքը տեսնեն:

Գյուղական եղենյա փայտից շինած սեղանի շուրջը, որի վրա դրված էին քարտիզներ, ծրագրեր, մատիտներ, թղթեր, այնքան շատ մարգ հավաքվեց, որ սպասյակները մի նստա-այնքան շատ մարգ հավաքվեց: Այդ նստարանի վրա նըս-րան էլ բերին և դրին սեղանի մոտ: Այդ նստարանի վրա նըս-րան նոր եկածները՝ երմոլովը, Կայսարովը և Տոլյ: Սրբու-պատկերների տակ առաջին տեղում, Գեորգին վղին՝ նստած էր Բարկայ-դե-Տոլլին իր գունատ, Հիվանդագին դեմքով և բարձր ճակատով, որը միախառնվում, ծուլվում էր մերկ գլխի հետ: Արդեն երկրորդ օրն էր, ինչ տենգը նրան տանջում էր, և հենց այդ ժամանակ էլ նա դողում էր, նրա մարմինը ջարդ-վում էր: Նրա կողքին նստած էր Ռովարովը, որը ցածր ձայնով (ինչպես խոսում էին բոլորը), արագ շարժումներ անելով ինչ-որ բան էր հայտնում Բարկային: Փոքրամարմին ու կլորիկ դոխտուրովը, հոնքերը վեր բարձրացրած և ձեռքերը փորի վրա դրած, ուշագրությամբ ունկնդրում էր: Մյուս կողմից նստած էր կոմս Օստերման-Տոլստոյը, որը իր համարձակ դիմագծերով և փայլուն աշխերով լայն գլուխը հենել էր աբ-դունկին և այն տպավորությունն էր թողնում, թե խորասուշ-վել է իր մտքերի մեջ: Խակակին անհամբերություն արտահայ-տող դեմքով և սովորական շարժումով քունքերի սև մազելը դիպի առաջ գանգուրելով, մերթ նայում էր Կուտուզովին, մերթ մուտքի գրան: Կոնունիցինի վճռական, գեղեցիկ ու բարի դեմքը փայլում էր քնքուշ ու խորամանկ ժպիառով: Նրա հայացը հանդիպեց Մալաշյալի հայացքին և նա սկսեց աղջկան աշքով նշաններ անել, որոնք նրան ստիպում էին ժպտալ:

Բոլորն սպասում էին Բենիգսենին, որը դիրքերը կրկին դիմելու պատրիակով դեռ շարունակում էր իր համեղ ճաշը: Նրան սպասում էին ժամը շորսից մինչև վեցը և այդ ամբողջ ժամանակ խորհրդակցությունը չէին սկսում և ցածր ձայնով կողմնակի զրույց էին անում:

Միայն այն ժամանակ, երբ խրճիթ մտավ Բենիգսենը, Կու-տուզովն իր անկյունից առաջ եկավ և մոտ նստեց սեղանին, բայց այնքան, որ նրա դեռքը չէր լուսավորվում սեղանի վրա դրված մոմից:

<sup>1</sup> Լավ է, թե կատ իմ գլուխը, բայց ուրիշ բանի վրա չենք կարող հույս գտնութեան բացի իմ զլիից:

Բենիգսենը խորհրդակցությունը բաց արագ այն հարցով՝  
թե «աք”տք է արդյոք առանց կովի թողնել Խուսաստանի սըր-  
բազան ու հին մայրաքաղաքը, թե պետք է պաշտպաննել այն»։  
Տիրեց երկարատև և ընդհանուր լուսություն։ Բոլորի դեմքերը  
խոժուովեցին, և լուսության մեջ լսվում էր Կուտուզովի բարկաց-  
իոտ տնքոցն ու հազը։ Բոլորի հայցացքներն ուղղված էին նրան,  
Մալաշան նույնպես պատիկին էր նայում։ Մալաշան բոլորից  
ա՛նի մոտ էր նրան և տեսավ, թե ինչպես կնճոտվեց նրա  
դեմքը. կարծես թե նա ուզում էր լաց լինել։ Բայց այդ երկար  
շտեսց։

— Խուսաստանի սրբազան, իին մայրաքաղաքը, — հան-  
կարծ սկսեց նա, բարկացկոտ ձայնով կրկնելով Բենիգսենի  
խոսքերը և դրանով իսկ նշելով այդ խոսքերի կեղծ շեշտը։ —  
Թո՛ւզ տվեք ձեզ ասել, ձերդ պայծառափայլություն, որ այդ  
հարցն իմաստ շունի ուսւա մարդու համար։ (Նա նստած տեղն  
առաջ ընկավ իր ծանր մարմնով)։ Այդպիսի հարց չի կրելի  
դնել, և այդպիսի հարցն իմաստ շունի։ Այն հարցը, որի համար  
խնդրել եմ այս պարոններին հավաքվել, ուազմական հարց է։  
Այդ հարցը հետեւալն է, «Խուսաստանի փրկությունը բանա-  
կըն է։ Արդյո՞ք ավելի ձեռնոտու է, ճակատամարտ ընդունե-  
լով, ննթարկենք մեզ, բանակն ու Մոսկվան կորցնելու վտան-  
գին, թե՞ Մոսկվան հանձնենք առանց կովի։ Ահա թե որ հարցի  
մասին եմ ուզում իմանալ ձեր կարծիքը։ (Նա ետ ընկավ ու  
մեջք դեմ արավ բազկաթուի թիկնակին)։

Վիճաբանություններն սկսվեցին։ Բենիգսենը գլուխացը  
տանուել տված չեր համարում։ Զառարկելով Բաբկայի և ուրիշ-  
ների այն կարծիքի դեմ, թե անհնարին է պաշտպանողական  
ճակատամարտը ընդունել Ֆիլիփ տակ, նա, ուսւական հայրե-  
նասիրությամբ և, գեպի Մոսկվան սիրով տողորդելով՝ առա-  
ջարկում էր զորքերը գիշերով աջ թերից տեղափոխիլ ձախ թեր  
և հետեւալ օրը հարվածել ֆրանսացիների աջ թերին։ Կարծիք-  
ները բաժանվեցին. վեճեր եղան հօգուտ և ընդդեմ այդ կարծիքի։  
Երմոլովը, Դոխտուրովը և Ռակակին համաձայնեցին Բենիգսենի  
կարծիքին։ Արդյո՞ք առաջնորդվելով մայրաքաղաքը թողնե-  
լուց առաջ զոհեր տալու անհրաժեշտության զգացումով, թե  
ոյլ անձնական նկատառումներով, բայց այդ գեներալները,  
կարծես թե չեին հասկանում այն, որ այդ խորհրդակցությունը

— 356 —

չեր կարսդ փոխությունը իրերի անխուսափելի ընթացքը և որ Մոսկ-  
վան այժմ իսկ արդեն թողնված է։ Մյուս գեներալները հաս-  
կանում էին այդ և, մի կողմ թողնելով Մոսկվայի հարցը, խո-  
սում էին այն ուղղության մասին, որը նահանջի ժամանակ  
պետք է ընդունի զորքը։ Մալաշան, որը անթարթ աշբերով  
շարունակ նայում էր, թե ի՞նչ է կատարվում իր առջև, այդ  
խորհրդակցության նշանակությունն այլ կերպ էր հասկանում։  
Նրան թվում էր, թե գործի էությունն այլ բան չէ, բայց եթե մի  
անձնական պայքար, որ տեղի ունի «պապիկի» և «երկարափե-  
շի» միջև, ինչպես նա անվանում էր Բենիգսենին։ Նա տես-  
նում էր, թե ինչպես նրանք զայրանում էին, եթե խոսում էին  
միմյանց հետ, և իր սրտում նա պատիկի կողմն էր պաշտ-  
պանում։ Խոսակցության մեջուղում նա նկատեց, որ պապիկը  
փություն ու խորամանկ հայացք գցեց Բենիգսենի վրա, և  
դրանից հետո ուրախությամբ նկատեց, որ պապիկն ինչ-որ  
բան ասելով երկարափեշին, լոեցրեց նրան, Բենիգսենը հան-  
կարծ կարմրատակեց և զայրացած սկսեց երթևեկել խրճիթում։  
Բենիգսենի վրա այդպես ազդած խոսքերը կուտուզովի այն  
կարծիքն էր, որը նա հանգիստ ու հանդարտ ձայնով արտահայ-  
տեց Բենիգսենի առաջարկի օգտակար և ոչ օգտակար լինելու  
մասին, այն առաջարկի, որը վերաբերում էր զորքերը գիշերով  
աջ լեկից ձախ էեր տեղափոխելուն և ֆրանսացիների աջ  
թեմի վրա հարձակվելուն։

— Ես, պարոնա՛յք, — ասավ Կուտուզովը, — չեմ կարող  
հականություն տալ կոմսի ծրագրին։ Զորքերի տեղաշարժում-  
ները լշնամուն մոտ տարածության վրա՝ միշտ էլ վտանգա-  
վոր են լինում, և ուազմական պատմությունը հաստատում է  
այդ միտքը։ Այսուհետ, օրինակ... (Կուտուզովը կարծես մտած-  
մունքի մեջ ընկավ, օրինակ վնտրելով և պայծառ, նախվ հա-  
յացքով Բենիգսենին նայելով)։ Այս թեկուզ Ֆրիդլանդի ճակա-  
տամարտը, ոոը, կարծում եմ, կոմսը լավ է հիշում, այնքան լէ  
հաջող... չեր միայն այն պատճառով, որ մեր զորքերը վերա-  
կազմում էին իրենց շարքերը թշնամուն բավական մոտ տա-  
րածության վրա...  
Այսուհետև բոլորին երկարատև թվացող վայրկենական լը-  
ռություն տիրեց։

— 357 —

Վիճաբանությունները վերսկսեցին, բայց հաճախ ընդմեշումներ էին տեղի ունենում, և զգացվում էր, որ այլև խոսելու բան չկա:

Մի այդպիսի ընդմիջումի ժամանակ Կուտուզովը ծանրհառաշեց և կարծես պատրաստվում էր խոսել: Բոլորը նրան նայեցին:

— Eh bien, messieurs! Je vois que c'est moi qui rangerai les pots cassés<sup>1</sup>, — ասավ նա: Եվ դանդաղորեն վեր կենալով մոտեցավ սեղանին: — Պարոնա՛յք, ես լսեցի ձեր կարծիքները: Ոմանք համաձայն չեն լինի ինձ հետ: Բայց ես (նա կանգ առավ) իմ թագավորի և հայրենիքիս կողմից ինձ հանձնած իշխանությամբ հրամայում եմ նահանջել:

Դրանից հետո գեներալներն սկսեցին ցրվել նույն հանդիսավոր և անխոս զգուշակորությամբ, որով ցրվում են թաղումից հետո:

Գեներալներից ոմանք կամացուկ ձայնով, բոլորովին այլ դիապազոնով, քան այն ժամանակ, երբ նրանք խոսում էին խորհրդակցությանը, ինչոր քան հայտնեցին գլխավոր հրամանատարին:

Մալաշան, որին վաղուց ընթրիքի էին սպասում, զգուշությամբ ետեր պատին քսելով իշավ վառարանից, բորիկ ոտիկ-ներով կառչելով վառարանի ելուստներին, և գեներալների ոտերի արանքով ինսավ դեպի զուր:

Գեներալներին ճշնապարհ զնելուց հետո Կուտուզովը երկար ժամանակ նստած էր, սեղանին կոթնած, և շարունակ մտածում էր նույն սարսափելի հարցի մասին.

«Ապա ե՞րբ, ե՞րբ վերջապես որոշվեց այն, որ Մոսկվան թողնված է: Ե՞րբ արվեց այն, ինչը որ լուծեց հարցը, և ո՞վ է մեղավոր դրանում»:

— Այդ, այդ ես չեի սպասում, — ասավ նա արդեն ուշ գիշերը ներս մտած աղյուսանտ Ծնեյդերին, — այդ ես չեի ըստապում: Այդ ես չեի կարծում:

— Դուք պետք է հանգստանա՛ք, ձե՛րդ պայծառափայշություն, — ասավ Ծնեյդերը:

— Ո՛չ, ո՛չ: Նրանք էլ թուրքերի պես ձիու միս են լափելու, — առանց պատասխանելու գոշեց կուտուզովը, փափլիկ բունցքով խվելով սեղանին, — նրանք է՛լ են լափելու, միայն թե...

## V

Հակառակ Կուտուզովի գործելակերպի, նույն ժամանակ, մի ավելի կարևորագույն դեպքի մեջ, քան բանակի նահանջն էր առանց կուլի, այն է՝ Մոսկվան թողնելու և այրելու մեջ, Ռաստոպչինը, որ մեզ ներկայանում է որպես այդ դեպքի ղեկավար, դործում էր միանդամայն այլ եղանակով:

Այդ դեպքը — Մոսկվան թողնելը — նույնքան անխուսափելի էր, ինչպես և այն, որ Բորսովնոյի ճակատամարտից հետո զորքերն առանց կովկի նահանջեցին Մոսկվայից այս կողմէ:

Յուրաքանչյուր ոռւս մարդ, ոչ թե կշռագառումների ու եզրակացությունների հիման վրա, այլ այն զգացումի հիման վրա, որը կա մեր մեջ և եղել է մեր հայրերի մեջ, կարող էր գուշակել այն, ինչ կատարիեց:

Մոլիենսկից սկսած, ոռւս երկրի բոլոր քաղաքներում ու դյուլերում, առանց կոմս Ռաստոպչինի և նրա աֆիշների մասնակցության՝ տեղի է ունեցել նույնը, ինչ տեղի ունեցավ Մոսկվայում: Ժողովուրդն անհօգությամբ սպասում էր թշնամուն, խորհրդյան չեր դիմում, չեր հուզվում, ոչ ոքի չեր պատառոտում, այլ հանգիստ սպասում էր իր ճակատագրին, զգալով որ իր մեջ կա այն ուժը, որը կօգնի նրան ամենառժեղակար բռպեին գանել այն, ինչ պետք էր անել: Եվ հեց որ թշնամին մտտենում էր, բնակչության ամենահարուստ տարրերը հեռանում էին, թողնելով իրենց գույքը, ամենաշքավորները մքնում էին և այրում ու ոչնչացնում այն, ինչ մնացել էր:

Այն գիտակցությունը, թե այդ այդպես կլինի և միշտ այդպես կլինի, կար և կա յուրաքանչյուր ոռւս մարդու հոգում: Եվ այդ գիտակցությունը, և մահավանդ այն նախադադացումը, բն Մոսկվան կղոավիքի, կար 12 թվի Մոսկվայի ոռւս հասարակության մեջ: Նրանք, ովքեր սկսեցին Մոսկվայից հեռանալ դեռ հուլիսին և օդոսառուի սկզբին, ցույց տվին, որ իրենք սպասում

<sup>1</sup> Ուրիշն, պարոնայք, նշանակում է պատասխանավությունն ընկում է ինձ վրա:

Էին դրան։ Նրանք, ովքեր հեռանում էին իրենց հետ վերցնելով այն, ինչ կարող էին, թողնելով իրենց տունն ու գույքի կեսը, այդպես էին վարվում այն քողարկված (latent) հայրենասիրության թելադրանքով, որն արտահայտվում է ոչ թե ֆրազներով, ոչ թե երեխաներին սպանելով՝ հայրենիքի փըրկության համար և ոչ թե այլ անբնական գործողություններով, այլ որն արտահայտվում է աննկատելիորեն, պարզ կերպով, օրգանապես, ուստի և միշտ ամենազգալի արդյունքներն է աւագութ։

«Ամո՛թ է փախչել վտանգից, միայն վախկուներն են փախչում Մոսկվայից», ասում էին նրանց։ Ռաստոպչինն իր աֆիշներում այն միտքն էր ներշնչում նրանց, թե Մոսկվայից Հեռանալը խայտառակություն է։ Նրանք ամաշում էին վախկութի հորջորջում ստանալ, ամաշում էին դնալ, բայց նրանք այնուամենայիվ գնում էին, գիտենալով, որ այդպիս էր պետք ինչու էին նրանք գնում։ Զի կարելի ենթադրել, որ Ռաստոպչինը վախեցրել էր նրանց այն սարսափներով, որ նապոլեոնը գործում էր իր նվաճած երկրներում։ Հեռանում էին և առաջինը հեռանում էին հարուստները, կրթված մարդիկ, որոնք շատ լավ գիտեին, որ Վիեննան ու Բեռլինը ողջ էին մնացել և որ այնտեղ, այդ քաղաքները նապոլեոնի կողմից գրավվելուց հետո, բնակիչները շատ ուրախ ժամանակ էին անցկացրել հըմայիշ ֆրանսացիների հետ, որոնց այնպես սիրում էին այն ժամանակ ոուս տղամարդիկ և մանավանդ կանայք։

Նրանք գնում էին այն պատճառով, որ ոուս մարդկանց համար չէր կարող լինել այնպիսի հարց, թե արդյոք լա՞վ կլինի թե՞ վատ ֆրանսացիների տիրապետության տակ Մոսկվայում։ Ֆրանսացիների տիրապետության տակ չէր կարելի լինել. այդ ամենից վատթարն էր։ Նրանք Մոսկվայից հեռանում էին և հորոդինոյի ճակատամարտից առաջ, և ավելի արագ՝ այդ ճակատամարտից հետո, չնայած նրան, որ պաշտովանելու կոչ էր արգում, չնայած նրան, որ Մոսկվայի գլխավոր հրամանատարը հայտարարում էր, թե ինքը մտադիր է վերցնել իշերսկի աստվածամոր պատկերը և կովի գուրս գալ, չնայած նրան, որ հայտարարվում էր օդապարիկների մասին, որոնք պետք է կործանեին ֆրանսացիներին և չնայած այն բոլոր դաստիրկաբանություններին, որ գովում էին Ռաստոպչինի

աֆիշներում։ Նրանք գիտեին, որ զորքը պետք է կովի, և եթե զորքը չի կարող կովել, ապա օրիորդների ու սպասավորների հետ չի կարելի Տրի Գորի գնալ՝ նապոլեոնի դեմ կովելու, ուստի և պետք է հեռանալ, որքան էլ որ ցավալի է ավարի մատնել իր գույքը։ Նրանք հեռանում էին և չէին մտածում այդ վիթխարի, հարուստ մայրաքաղաքի վեմ նշանակության մասին, մի մայրաքաղաք, որ բնակիչները լքել, և, հավանաբար, այրել էին (ոուս ժողովուրդը չի կարող շայրել, շավերել դատարկ տները)։ Նրանք հեռանում էին՝ յուրաքանչյուրն իր համար, իսկ զրա հետ միասին միայն այն բանի շնորհիվ, որ նրանք հեռացան, կատարելեց այն վեմ ու մեծ զեպքը, որն առմիշտ կազմելու է ոուս ժողովորդի մեծագույն փառքը։ Այն ազնվական տիրուհին, որ զեռ հունիս ամսին իր արագների ու ծաղրածուհիների հետ Մոսկվայից տեղափոխվում էր Սարատովի զյուղերը այն աղոտ գիտակցությամբ, թե ինքը Բոնապարտի սպասուհին չէ և այն երկյուղով, որ իրեն չկանգնեցնեն կոմս Ռաստոպչինի հրամանով, պարզորեն ու ծշմարտապես կատարեց այն մեծ գործը, որը մերթ ամաշեցնում էր նրանց, ովքեր հեռանում էին. մերթ պաշտոնատները քաղաքից հանելու կարգադրություններ էր անում, մերթ միանգամայն անպետք գենք էր բաժանում հարբած խուժանին, մերթ սրբապատկերներ էր մանածել տալիս. մերթ Ավգուստինին արգելում էր մասունքներն ու սրբապատկերները հեռացնել քաղաքից։ մերթ բոնապարում էր Մոսկվայում եղած բոլոր մասնավոր սալերը, մերթ 136 սալլով տեղափոխում էր Լեպպիխի պատրաստած օդապարիկը. մերթ ակնարկ էր անում, թե Մոսկվան այրելու է. մերթ պատմում էր, թե ինչպես ինքն ալրել է իր տունը և ֆրանսացիներին ուղղված կոչ է զբւել, որսեղ նրանց կշտամբել է նրա համար, որ նրանք ավերել էին իր հայրենական տունը. մերթ իր վրա էր վերցնում Մոսկվան այրելու փառքը, մերթ հրաժարվում էր զրանից. մերթ հրամայում էր ժողովորդին՝ բոնել բոլոր լրտեսներին և իր մոտ գերել, մերթ զրա համար ժողովորդին կշտամբում էր. մերթ բոլոր ֆրանսացիներին արտաքսում էր Մոսկվայից, մերթ քաղաքում էր թողնում տիկին Օբեր-Շալմեին, որը Մոսկվայի ֆրանսացի ողջ բնակչության կենտրոնն էր կազմում, իսկ առանց որևէ լուրջ

Հանցանքի հրամայում էր բոնել և արսորել փոստի տեսուշ պատվարժան ծերունի կլուզարկին. մերթ ժողովրդին հավարում էր Տրի Գորի, որպեսզի ֆրանսացիների դեմ կռվին, մերթ այդ ժողովրդից ազատվելու նպատակով մի մարդ էր գտնում և հանձնում ժողովրդին՝ նրան սպանելու համար և ինք ենքի դռնով թողնում հեռանում էր. մերթ ասում էր, թե չի կարող տանել Մոսկվայի գլխին դալիք դժբախտությունը. մերթ ալրոմներում ֆրանսիրեն լեզվով ոտանավորներ էր գրում այդ պատերազմում ունեցած իր մասնակցության մասին<sup>1</sup>, — ահա այդ մարդը չէր հասկանում կատարվող դեպքի նշանակությունը, և միայն ցանկանում էր, որ ինքը մի բան անի, մեկին զարմացնի, որևէ հայրենասիրական-հերոսական գործ կատարի, և երեխայի պես խաղում-զվարճանում էր Մոսկվան թողնելու և այրելու վեհ և անխուսափելի դեպքի հանդեպ և աշխատում էր իր փոքրիկ ձեռքով մերթ քաջալիրել, մերթ կասեցնել ժողովրդական հեղեղի վիթխարի, նրան էլ իր հետ տանող հոսանքը:

## VI

Էլենն, արքունիքի հետ Վիլնոյից Պետերբուրգ վերադառնալով, գտնվում էր դժվարին կացության մեջ:

Պետերբուրգում էլենն օգտվում էր հատուկ հովանավորությամբ մի ալզաքանու, որ գրավում էր բարձրագույն պաշտոններից մեկը պետության մեջ: Իսկ Վիլնոյում նա մտերմացավ օտարերկրյա մի ջանել իշխանի: Երբ էլենը Պետերբուրգ վերադարձավ, իշխանն ու ավագանին՝ երկուառվ Պետերբուրգումն էին, երկուան էլ հայտնեցին իրենց իրավունքները, և էլենին ներկայացավ իր կարիքայի մեջ նրա համար մի նոր խնդիր. Հարաբերությունների իր մոտեմությունը պահպանել երկուսի հետ էլ, չվիրավորելով ոչ մեկին:

Այն, ինչ դժվար և անգամ անհնարին կթվար մի ուրիշ կնոջ համար, կոմսուհի Բեզուխովային շատիպեց մի անգամ

<sup>1</sup> Je suis né Tartare. Je voulus être Romain. Les Français m'aprelièrent barbare. Les Russes — George Dandin. Այսինքն՝ ես թաթար եմ ծնվել: Ես ուզում էի հոգմայսիրի լինել: Ֆրանսացիներն ինձ բարբարոս էին անվանում, իսկ ուստաները՝ Ժորժ Դանդին:

իսկ մտածելու, ըստ երեսութին, իզուր չէր, որ նա վայելում էր շատ խելացի կնոջ հոչակ: Եթե նա սկսեր թարցնել իր արարքները, խորամանկությամբ դուրս գար անհարմար դրությունից, նա դրանով իսկ կիշացներ իր գործը, իրեն մեղակոր ճանաշելով. բայց էլենն, ընդհակառակը, իսկույն ինչպես իսկ-կական մեծ մարդ, որ կարող է անել ամեն բան, ի՞նչ ցանկանում է, իրեն դրեց արդար վիճակում (որի արդարությանը նա անկեղծորեն հավատում էր), իսկ բոլոր մյուսներին՝ մեղավոր վիճակում:

Սուազին անգամ, երբ ջանել օտարերկրացին թույլ տվեց իրեն հանդիմանություններ ուղղել նրան, էլենը, հպարտորեն բարձրացնելով իր գեղեցիկ գլուխը, կիսով շափ շուր գալով գեպի նա, ասավ հաստատուն ձայնով.

— Voilà l'égoïsme et la cruauté des hommes! Je ne m'attendais pas à autre chose. La famine se sacrifie pour vous, elle souffre, et voilà sa récompense. Quel droit avez vous, Monseigneur, de me demander compte de mes amitiés, de mes affections? C'est un homme qui a été plus qu'un père pour moi<sup>1</sup>.

Զահել օտարերկրացին ուզեց ինչ-որ բան ասել: Էլենն ընդհատեց նրան:

— Eh bien, oui, — ասավ նա, — peut-être qu'il a pour moi d'autres sentiments que ceux d'un père, mais ce n'est pas une raison pour que je lui ferme ma porte. Je ne suis pas un homme pour être ingrate. Sachez, Monseigneur, pour tout ce qui à rapport à mes sentiments intimes, je ne rends compte qu'à Dieu et à ma conscience<sup>2</sup>, — ավար-

<sup>1</sup> Ահա սղամարդկանց եսամիրությունն ու դաժանությունը: Ես ուրիշ բան էլ չէի սպասում: Կին իրեն զնարեն ում է, ձեզ. Նա տանշվում է, և ահա նրա պարզէք: Չերդ բարձրություն դուք ինչ իրավունք ունեք ինձնից հաշիվ պահանջելու իմ կապերի և բարեկամական զգացումների մասին: Դա մի մարդ է, որն ինձ համար եղել է ավելի բան հայր:

<sup>2</sup> Է, լավ, թերևս, այն զգացումները, որ նա տածում է դեպի ինձ, այնքան էլ հայրական չեն. բայց չէ, որ դրա համար պետք չէ, որ ես նրա առաջ փակեմ իմ տունը: Ես տղամարդ չեմ, որ և պերախտությամբ հատուցեմ Թող Հայտնի մինչ ձերդ բարձրության, որ իմ արտագիր զգացումների մասին ես հաշիվ եմ տալիս միայն աստծուն և իմ խղճին:

տեղ նա, ձեռը դիպջնելով վեր բարձրացրած գեղեցիկ կրծքին և նայելով երկնքին:

- Mais écoutez-moi, au nom de Dieu.
- Epousez-moi, et je serai votre esclave.
- Mais c'est impossible.
- Vous ne daignez pas descendre jusqu'à moi.

— Vous ne daignez pas descendre jusqu'à moi, vous... ?  
**լալով սասակ էլենք :**  
 Զահել օտարերկրացին սկսեց մխիթարել նրան,  
 իսկ էլենն արցունքի միջից ասում էր (կարծես ինքամոռացու-  
 թյան մեջ), թե ոչինչ չի կարող խանգարել իրեն ամուսնա-  
 նալու, թե կան օրինակներ (այն ժամանակ գեռ քիչ օրինակներ  
 կային, բայց նա տվեց Նապոլեոնի և ուրիշ բարձր անձերի անուն-  
 ներ), թե նա երբեք իր ամուսնու կինը չի եղել, թե նրան  
 զոհաբերել են :

— Բայց օրենքները, կրոնը... — արդեն անձնատուր լինելով, ասում էր օտարերկրացին:

— Օրենքները, կրոնը... ինչի համար էին դրանք հնար-  
ված, եթե չէին կարող անել այդ բանը, — ասավ էլենը:

Կարենը անձնավորությունը զարմացավ, որ մի այդպիսի հասարակ գատողություն կարող էր իր մտքում շծագել և խորհուրդ ստանալու համար՝ դիմեց Հիսուսի միաբանության սուրբ եղբայրներին, որոնց հետ նա գտնվում էր մոտիկ հարաբերության մեջ:

Thetaνάνηργον μή ρωνήσοις ορθίαντον γρέβητον ανηκευόντοντον μέντον, οπα  
τωαλήσοις τέρατοντον γαμέτοντον θυμαρούντον γριποντον φυτοντον ήτοι αμω-  
τωανηγοποιότον, ηρωαντον έρηκαγαρούντον οτον γωνίατον, δημοτοντον άφεσοντον  
μαρακέρηποντον οτον καφαγιποντον αχρέβροποντον ημαγιήτον Μ-τ de Jobert, οπα  
γέσουτε τον τοπονοματούτον τον έρηκαρ θωμανώτον αγροποιότον, ηρω-  
ψωποποιότον ιπτυγμένορον μέντον τον έρηκαθωποποιότον ηνγιποντον έρηρον τωτον,  
φροποποιότον τέρατοντον γαμέτοντον θυμαρούντον ανηκευόντον μέντον, οπα  
αυτοτολαδωμόρον ομηροποιότον τωτοδόντον ομηρον θωμασίντον οτον γωνίατον  
ροποιότον ιπτυγμένορον μασίντον, οπα αγιόν τον αωταφωνηγαρούντον τωτον

միակ և ծշմարիտ կաթոլիկ կրոնը։ Էլենը հուզված էր, և նրա ու Մ-ր Jobert-ի աշխարում մի քանի անգամ արցունք երևացին, ու նրա ձայնը դողաց։ Պարզ, որին հրավիրելու եկավ կավալերը էլենին, խանգարեց նրա գրույցը իր ապագա *directeur de conscience*-ի<sup>1</sup> հետ, բայց մյուս օրը Մ-ր de Jobert-ը երեկոյան մենակ եկավ էլենի մոտ և այդ օրվանից սկսեց հաճախ լինել նրա տանը։

Մի օր նա կոմսուհուն տարավ կաթողիկական տաճարը, ուր էլենը ծուռկ շրբեց սեղանի առաջ, որին մոտեցրել էին նրան։ Տարիքուտ, հմայիլ ֆրանսացին իր ձեռքը դրեց նրա գլխին, և ինչպես նա ինքն էր հևտո պատմում, նա զգաց զոյլ քամու շնչի նման մի բան, որ թափանցեց իր սիրուր։ Նրան բացա-տրացին, որ դա լայցէօք է։

Ապա նրա մոտ բնրին է robe longue<sup>3</sup> արբային: Նա խոս-  
տովանեցրեց էլենին և թողություն տվեց նրա մեղքերին:  
Մյուս օրը բերին նրան մի արկղ, որի մեջ կար հաղորդություն,  
և թողին տանը նրա գործածության համար: Մի քանի օր հե-  
տո էլենը, ուրախություն իր, իմացավ, որ ինքն այժմ մտել է  
ճշմարիտ, կաթոլիկական եկեղեցու հովանու տակ և որ այս  
օրերս պատն ինքը կիմանա նրա մասին և ինչ-որ մի թուղիկ  
կուղարկի նրան:

Ամենը, ինչ այդ ժամանակամիջոցում արվում էր նրա շուրջն ու նրա հետ, այդ ամբողջ ուշադրությունը, որ գարձնում էին նրա վրա այդքան խելացի մարդիկ և որ արտահայտվում էր այնքան հաճնիլի, նուրբ ձևերով, և աղավնակերպ մաքրությունը, որի մեջ զտնվում էր նա այժմ (նա այդ ժամանակ հաղողական էր ճերմակ զգեստ՝ ճերմակ հապավեններով), — այս ամենը էլենին բավականություն էր պատճառում, բայց այս բավականության համար նա ոչ մի րոպէ աչքաթող չ'էր անուն իր նպատակը: Եվ ինչպես միշտ լինում է, որ խորամանկության գործում հիմար մարդք խարեւմ է ավելի խելքներին, էլենը, հասկանալով, որ բոլոր այդ խոսքերի ու հոգացողության նպատակը կայանում էր առավելագեալ նրանում, որպէսզի,

<sup>1</sup> Բայց լսեցիք ինձ, ի սեր աստծու— Ամուսնացիք ինձ հետ, և ես ձեր ստրկուէին կլինեմ:— Բայց դա անհնարին է:— Դուք արժանի շեք համար ում նվաստանալ... ամուսնանալ ինձ հետ, դուք...

<sup>2</sup> Պարսկական ժողովականին, կարճաքղանցք ճիզվիտին:

իրեն կաթոլիկ դարձնելով դրամ վերցնեն իրենից հօգուտ ճիշ-  
վիտական հաստատությունների (ինչի մասին և ակնարկել  
էին նրան), — էլենը, նախքան դրամ կտար, պնդում էր, որ իր  
նկատմամբ կատարեն այն զանազան գործողությունները,  
որոնք իրեն կազմակերպ ամուսնուց Նրա համացողությամբ  
ամեն մի կրոնի նշանակություն կայանում էր միայն նրանում,  
որ մարդկային ցանկությունները բավարարելիս պահպանվեն  
որոշ պատշաճավորություններ: Եվ այդ նպատակով խոստո-  
վանահոր հետ ունեցած զրույցներից մեկի ժամանակ թա-  
խանձգին պահանջեց պատասխան տալ այն հարցին, թե ո՞ր  
շահով իր ամուսնությունը կաշկանդում է իրեն:

Նրանք նստած էին հյուրասրահի լուսամուտի մոտ: Երեկոյան  
մինչաղ էր: Լուսամուտից ծաղիկների բուրմունք էր գալիս:  
Էլենը հագել էր սպիտակ զգեստ, որը թափանցիկ էր կրծքի և  
ուսերի վրա: Արբան, լավ կերած-խմած, փափիկ, հարթ ածիլ-  
ված երեսով մի մարդ, դուրեկան, պինդ բերանով և սպիտակ  
ձեռներով, որ հեգությամբ դրել էր ծնկներին, նստել էր էլենի  
մոտ և, նուրբ ժպիտը շուրթերին, նրա գեղեցկությամբ խաղա-  
ղորեն հիացած հայացքով երեմն նայում էր էլենի դեմքին ու  
բացատրում իր կարծիքը՝ իրենց զբաղեցնող խնդրի մասին: Էլենը,  
անհանգիստ, ժպտալով, նայում էր նրա գանգուր մա-  
զերին, հարթ ածիլված, սկին տվող, լեցուն այտերին և ամեն  
բոցե սպասում էր, թե զրույցը նոր ընթացք կստանա: Բայց  
արբան, թեն, ըստ երեսութիւնի, իր զրույցներունու գեղեց-  
կությունը վայելելով, տարված էր իր գործի վարպետությամբ:

Խղճի ղեկավարի դատողությունների ընթացքը հետեւյալն  
էր: Չիմանալով նշանակությունն այն բանի, որ ձեռնարկել  
եք, դուք ամուսնական հավատարմության խոստում եք տվել  
մի մարդու, որը, իր կողմից, ամուսնանալով և ամուսնության  
կոռոնական նշանակությանը չհավատալով, սրբապծություն  
է կատարել: Այդ ամուսնությունը շի ունեցել կրկնակի նը-  
շանակություն, որ պետք է ունենա: Բայց, չնայած դրան,  
ձեր խոստումը կաշկանդել է ձեզ: Դուք դրժել եք այս  
դրանով ի՞նչ եք կատարել դուք: Pêché veniel թե  
pêché mortel?<sup>1</sup> Pêché veniel, որովհետեւ դուք առանց վատ

դիտավորության մի քայլ եք արել: Եթե զուք այժմ, երեխանիր  
ունենալու նպատակով, նորից ամուսնայիք, ապա ձեր մեղ-  
քը կարող էր ներվել: Բայց ինդիրը նորից բաժանվում է երկու  
մասի: Առաջինը...

— Բայց ես կարծում եմ. — ասավ հանկարծ ձանձրացած  
էլենը իր հմայիչ ժպիտով, — որ ես, նշմարիտ կրոն ընդունե-  
լով, շիմ կարող կաշկանդված լինել նրանով, ինչ դրել է ինձ  
վրա կեղծ կրոնը:

Խղճի ղեկավարը զարմացավ, որ հարցը Կոլումբոսի ձվի  
պարզությամբ դրվեց իր առաջ: Նա հիացած էր իր աշակեր-  
տուհու անսպասելի արագ առաջադիմությամբ, բայց չէր կա-  
րող հրաժարվել իր մտքի, դժվարությամբ կառուցած, պատ-  
ճառաբանությունների շենքից:

— Entendons-nous, comtesse<sup>2</sup>, — ասավ նա ժպտալով և  
ակսեց հերքել իր հոգեոր դստեր դատողությունները:

## VII

Էլենը հասկանում էր, որ գործը շատ պարզ ու հեշտ էր  
ժողովոր տեսակետից, բայց նրա ղեկավարները դժվարացնում  
էին միայն նրա համար, որովհետև վախենում էին, թե աշ-  
խարհիկ իշխանությունն ինչպես կնայի այդ գործին:

Ու դրա հետեւանքով՝ էլենը որոշեց, թե այդ գործը պետք է  
նախապատրաստել հասարակության մեջ: Նա հարուցեց ձերու-  
նի-ավագանու խանդր և նրան էլ նույնն ասավ, ինչ-որ առաջին  
որոնողին, այսինքն հարցը դրեց այնպես, թե միակ միջոցը՝  
նրա վրա իրավունք ձեռք բերելու համար, կայանում է այն  
բանում, որ ամուսնանան իր հետ: Մերունի կարեռ անձնա-  
վորությունը առաջին վայրկյանին նույնպես զարմացավ կեն-  
դանի մարդ ունեցող կնոյց ամուսնանալու այդ առաջարկու-  
թյամբ, ինչպես և զարմացել էր առաջինը, չահել անձնավորու-  
թյունը. բայց էլենի աներեր վստահությունը, թե դա նույնիքան  
հեշտ է և բնական, ինչպես և աղջկա ամուսնությունը, աղջեց և  
նրա վրա: Եթե իր՝ էլենի մեջ նկատվեին տատանման, ամոթի  
և ծածկամտության գեթ նշին նշաններ, ապա նրա գործն,

<sup>1</sup> Հասկանանք իրար, կոմսուհի:

<sup>2</sup> Անգլիական մելք, թե մահացու մելք:

անկասկած, տանուլ կտրվեր. բայց ոչ միայն ժածկամտության ու ամոթի այդ նշանները չկային, այլ, ընդհակառակը, նա պարզ ու բարեհոգի նախլությամբ պատմում էր իր մոտիկ բարեկամներին (իսկ դա ամբողջ Պետերուրդն էր), որ իրեն առաջարկություն են արել թե իշխանը, թե՝ ավագանին, և թե ինքը սիրում է երկուսին էլ ու վախենում է վշտացնել մեկին և մյուսին:

Մի ակնթարթում Պետերուրդում լուր տարածվեց ոչ թե այն մասին, թե էլենն ուզում էր ամուսնուց բաժանվել (եթե այդպիսի լուր տարածվեր, շատ շատերը կը մրոստանային այդ տեսակ ապօրինի մտադրության դեմ), բայց ուղղակի լուր էր տարածվում, թե դժբախտ, հետաքրքրական էլենը գտնվում է տարակուսանքի մեջ, թե երկուսից ո՞րի հետ ամուսնանատ Հարցն արդեն այն չէր, թե ո՞ր աստիճան դա հնարավոր է, այլ միայն այն, թե նրանցից ո՞րն ավելի շահավետ է և թե արքունիքն ինչպես կնայի դրան: Կային իսկապես նախապաշտումների մեջ քարացած որոշ մարդիկ, որ չկարողանալով ըմբռնել Հարցի բուն էլությունը, այդ մտահղացումի մեջ տեսնում էին ամուսնության խորհրդի անարգում. բայց այդպիսիները քիչ էին, և նրանք լուսմ էին, իսկ մեծամասնությունը հետաքրքրվում էր էլենին վիճակված բախտով և թե ո՞ր ընտրությունն է ավելի լավ: Իսկ այն մասին, թե լավ էր արդյոք կամ վատ՝ կենդանի մարդ ունենալով՝ ամուսնանալ, — չէին խոսում, որովհետև այդ խնդիրն, ըստ երևույթին, վճռված էր մեզնից ու ձեզնից (ինչպես ասում էին) ավելի խելոք մարդկանց համար և կասկածել Հարցի ծիշտ լուծման մեջ, — նշանակում էր ցուցաբերել իր հիմարությունը, աշխարհում ապրելու անշնորհքությունը:

Միայն Մարիա Դմիտրիկնա Ախրոսիմովան, որ այդ ամառ եկել էր Պետերուրդ իր որդիներից մեկին տեսնելու համար, թույլ տվեց իրեն արտահայտել իր, հասարակությանը հաշառակ, կարծիքը: Հանդիպելով էլենին պարահանդեսում, Մարիա Դմիտրիկնան կանգնեցրեց նրան բահլիճի մեջտեղը, և, ընդհանուր լուռթյան մեջ իր կոպիտ ձախով ասավ նրան. «Այստեղ ձեզ մոտ կենդանի մարդ ունեցողներն սկսել են ամուսնալ: Դու, գուցե, կարծում ես, թե դո՞ւ ես հնարել այդ նորությունը: Դա վաղուց է հնարված, սիրելիս: Ամեն մի... տեղ

— 368 —

Հենց այդպես են անում: Եվ այս խոսքերով Մարիա Դմիտրիկնան իրեն հատուկ, սպանալից շարժումով, լայն թեքերը ետք տեղույղ և խստությամբ շուրջը նայելով, անցավ սենյակի միջով:

Մարիա Դմիտրիկնային (թեև վախենում էին նրանից) Պետերուրդում նայում էին որպես կատակարանի վրա, ուստի և նրա ասած խոսքերի մեջ նկատեցին միայն կոպիտ խոսքը և շշուկով կրկնեցին միջանց, ենթադրելով, թե այդ բառի մեջ էր ասածի ամբողջ աղբ:

Իշխան Վասիլին, որ վերջերս առանձնապես հաճախ էր մոռանում այն, ինչ ասել էր, և հարյուր անգամ կրկնում էր միկնույնը, — երբ առիթ էր ունենում իր աղջկանը տեսնելու, — ասում էր.

— Hélène, j'ai un mot à vous dire, — a suivi l'écriture, — c'est que je vous ai dit, — que je vous ai dit que mon père se réjouit de vous savoir... Vous avez tant souffert... Mais, chère enfant... ne consultez que votre cœur. C'est tout ce que je vous dis<sup>1</sup>.

Եվ, թաքցնելով իր միշտ միկնույն հուզումը, նա իր այտը դեմ էր անում աղջկա այտին ու հեռանում:

Բիլիթինը, որ չէր կորցրել խելացի մարդու հոշակը և լինելով էլենի անշահախնդիր բարեկամը, մեկն այն բարեկամներից, որոնք լինում են միշտ փայլուն կանանց մոտ, բարեկամտղամարդկանցից մեկը, որ երբեք չեն կարողանում սիրահարի դերի անցնել, — Բիլիթինը՝ մի անգամ, փոքրիկ մտերիմ շրջանակում, հայտնեց իր բարեկամ էլենին իր կարծիքն աւոր ամբողջ գործի մասին:

— Ecoutez, Bilibine (էլենն այնպիսի բարեկամների, ինչպիսին Բիլիթինն էր, միշտ կոչում էր իրենց ազգանունով) —

<sup>1</sup> Էլեն, ես պետք է քեզ մի բան ասեմ: Ես մի քանի որոշ բան եմ ուսել քո... դու գիտես: Դե, սիրելի զավակս, գու գիտես, որ հորդ սիրտն ուրախանում է, որ դու... Դու այնքան տանչզել ես... Բայց, սիրելի զավակս... Արա այնպես ինչպես սիրտդ է հրամայում: Ահավասիկ իմ ամբողջ խորհուրդը:

— 369 —

և նա մատանիներով զարդարված իր սպիտակ ձեռը դիպցրեց  
նրա ֆրակի թերին: — Dites-moi comme vous diriez à une  
soeur, que dois-je faire? Lequel des deux?<sup>1</sup>.

Բիլիբինը ղեմքի մաշկը հավաքեց չոնքերից վերև և ժպիտը  
շուրթերին մտածմունքի մեջ ընկալի:

— Vous ne me prenez pas en հանկարծակի, vous savez. —  
ասավ նա: — Comme véritable ami j'ai pensé et repensé à  
votre affaire. Volez-vous, si vous épousez le prince (դա մի  
երիտասարդ էր), — նա մատը ծալեց, — vous perdez pour  
toujours la chance d'épouser l'autre, et puis vous mecon-  
tentez la Cour (comme vous savez, il y a une espèce de  
parenté). Mais si vous épousez le vieux comte, vous faites  
le bonheur de ses derniers jours, et puis comme veuve du  
grand... le prince ne fait plus de mésalliance en vous épou-  
sant<sup>2</sup>, — և Բիլիբինը բաց թողլց հավաքած մաշկը:

— Voilà un véritable ami! — ասավ պայծառացած էլենը,  
մի անգամ ևս ձեռը դիպցնելով Բիլիբինի թերին: — Mais c'est  
que j'aime l'un et l'autre, je ne voudrais pas leur faire de  
chagrin. Je donnerais ma vie pour leur bonheur à tous  
deux<sup>3</sup>, — ասավ էլենը:

Բիլիբինն ուսերը թոթվեց, արտաճայտելով թե մի այդ-  
պիսի վիշտ ինքն անգամ արդեն ամորել չի կարող:

«Une maîtresse-femme! Voilà ce qui s'appelle poser

carrément la question. Elle voudrait épouser tous les  
trois à la fois»<sup>1</sup>, մռածեց Բիլիբինը:

— Բայց ասացեք, ի՞նչպես կնայի ձեր ամուսինն այդ  
դանին, — ասալ նա, իր ամուր հոչակի հետևանքով չվախե-  
նալով վարկաբեկել իրեն այդ միամիտ հարցումով: — Նա  
կհամաձայնի՝ արդյոք:

— Ah il m'aime tant! — ասավ էլենը, որին, շփիտես ին-  
չու, թվում էր, թե Պիեռն էլ է սիրում իրեն: — Il fera tout pour  
moi<sup>2</sup>.

Բիլիբինն իր մաշկը հավաքեց, որ ասի պատրաստվող  
մու-ն:

— Même le divorce<sup>3</sup>, — ասավ նա:

Էլենը ծիծաղեց:

Նախաձեռնվող ամուսնության օրինականության մեջ կաս-  
կածողների թվումն էր և էլենի մայրը՝ իշխանուհի Կուրագինը:   
Նա շարունակ տանջվում էր գեղի աղջիկն ունեցած նախան-  
ձից և այժմ, երբ այդ նախանձի առարկան իշխանուհու սրտին  
ամենամոտ էակն էր, նա չէր կարող հաշտվել այդ մտքի հետ:   
Նա խորհրդակցեց ոուս քահանայի հետ, թե ո՛ր շափով հը-  
նարավոր է ապահարզանը և կենդանի մարդ ունեցողի ամուս-  
նությունը. քահանան ասավ, որ այդ անհնարին է և, ուրախու-  
թյուն նրա, ցույց տվեց ավետարանի խոսքերը, որ ուղղակի  
մերժում են կենդանի ամուսին ունեցողի նորից ամուսնանալու  
հնարավորությունը:

Զինված այս պատճառարանություններով, որոնք նրան  
թվում էին անհերքելի, իշխանուհին վաղ առավոտյան, որպես-  
ով աղջիկը մենակ լինի, գնաց էլենի մոտ:

Լսելով մոր առարկությունները՝ էլենը հեղությամբ ու  
հեգնանքով ժամանակաց:

— Բայց պարզ ասված է, թե ո՛վ կամուսնանա ապահար-  
զանված կնոջ հետ... — ասավ պառավ կոմսուհին:

<sup>1</sup> Հսեցեց: Բիլիբին. ասացե՛ք ինձ՝ ինչպես կասեիք ձեր քրոջը, ես ի՞նչ  
անմատ: Օրկուսից ո՞րին:

<sup>2</sup> Դուք գիտեք, դուք ինձ հանկարծակի շեք թերում: Որպես իսկական բա-  
րեկամ՝ ես երկար կշագատել եմ ձեր գործը: Այս տեսնում եք. եթե իշխանին  
անեք, դուք ընդմիշտ զրկվում եք այս մուսսի կինը լինելու հնարավորությու-  
նից, և բացի դրանից, արբանիքը դժուն կլինի (դուք գիտեք, չէ որ այդտեղ  
իշխանված է նաև ազգայություն): Իսկ եթե ամուսնանաք ծեր կումսի հետ,  
ապա դուք կեազմեք նրա վերջին օրերի երջանկությունը և այնուհետև, որպես  
ավագանու այրի... իշխանն և յես անհավասար ամուսնություն արած չի  
լինի, ամուսնանալով ձեզ հետ:

<sup>3</sup> Այս իսկական բարեկամ: Բայց չէ՞ որ ես սիրում եմ թե՛ մեկին, թե՞  
մյուսին և չէի ցանկակա ոչ որի գշտացնել: Օրկուսի երջանկության համար  
էլ ես պատրաստ եմ կյանքս զնարերել:

<sup>1</sup> Կեցցես, կին: Ահա՛՝ ինչ է նշանակում հարցը սուր դնել: Նա կուզեր բա-  
րեկի կինը լինել միաժաման ակ:

<sup>2</sup> Ախ, նա ինձ այնպես է սիրում: Ինձ համար նա պատրաստ, ամեն ինը  
և ինդամ ապահարզանի:

— Ah, maman, ne dites pas de bêtises. Vous ne comprenez rien. Dans ma position j'ai des devoirs<sup>1</sup>, — *ասավ էլենը, զրույցը սուսերենից փոխելով ֆրանսերենի, որովհետեւ նրան միշտ թվում էր, թէ սուսերենում ինչոր անորոշություն կա իր գործում:*

— Բայց, բարեկամս...

— Ah, maman, comment est-ce que vous ne comprenez pas que le Saint Père qui a le droit de donner des dispenses...<sup>2</sup>

*Այդ ժամանակ էլենի մոտ ապրող կոմպանյոնուհի-տիկինը ներս մտավ էլենի սենյակը և հայտնեց, թէ նորիկն բարձրությունը դահլիճումն է և ուզում է նրան տեսնել:*

— Non, dites-lui que je ne veux pas le voir, que je suis furieuse contre lui, parce qu'il m'a manqué parole<sup>3</sup>.

— Comtesse, à tout péché miséricorde<sup>4</sup>, — *ասավ, ներս մտնելով, երկարադեմ ու երկարաքիթ խարտյաշ երիտասարդը:*

*Պառավ կոմսուհին հարգալիր վեր կացավ և ծունկը խոնարհեց։ Ներս մտնող երիտասարդը ուշ շդարձրեց նրա վրա։ Իշխանուհին դիխով արավ աղջկան ու սահեց դեպի դուռը։*

*Ո՛չ, էլենն իրավացի է, — մտածում էր պառավ իշխանուհին, որի բոլոր համոգումները փլվեցին նորին բարձրության երեսումով։ — Նա իրավացի է, բայց ինչպէ՞ս մենք մեր անվերադա երիտասարդության օրերին չգիտեինք այդ բանը։ Իսկ դա այնպես պարզ է եղել։, մտածում էր պառավ իշխանուհին, կառեթ նստելիս։*

Օգոստոսի մկրտին էլենի գործը բոլորովին որոշվեց և նա ամուսնուն (որը նրան շատ էր սիրում, ինչպես էլենն էր կարծում) գրեց մի նամակ, որի մեջ հայտնում էր նրան, թէ ինքը մտադիր էր ամուսնանալ N. N.-ի հետ, և թե ընդունել է միակ

<sup>1</sup> Ախ, մայրիկ, հիմարություններ մի ասեք։ Դուք ոչինչ չեք հասկանում։ Իմ դրության մեջ կան պարտավորություններ։

<sup>2</sup> Ա'խ, մայրիկ, դուք չեք հասկանում, որ հայր սուրբը, որ իշխանություն ունի թղթություն տալու...։

<sup>3</sup> Ո՛չ, նրան ասացեք, որ ես շեմ կամենում տեսնել նրան, նա ինձ կատագուել է, որովհետեւ իր խոսքը չկատարեց։

<sup>4</sup> Կոմսուհի, ամեն մի մեղքի թողություն կատ

ճշմարիտ կրոնը ու խնդրում է նրան՝ կատարել ապահարզանի համար այն բոլոր անհրաժեշտ ձևականությունները, որոնց մասին կհայտնի սույն նամակը բերողը։

«Sur ce je prie Dieu, mon ami, de vous avoir sous sa sainte et puissante garde. Votre amie Hélène»<sup>1</sup>.

Այս նամակը Պիեռի տունը բերին այն ժամանակ, երբ նա գտնվում էր Բորողինոյի դաշտում։

## VIII

Երկրորդ անգամ, արդեն Բորողինոյի ճակատամարտի վերջում, Խաևսկու մարտկոցից փախչելով՝ Պիեռը զինվորների բազմության հետ ձորով գնաց դեպի Կնյազկովո, հասավ վիրակապության կայանը և, արյուն տեսնելով և ճիշեր ու հածեծանքներ լսելով, հապճեպ գնաց առաջ, զինվորների բազմությանը խառնված։

Միակ բանը, որ այժմ ցանկանում էր Պիեռը հոգու ամբողջ կարողությամբ, այն էր, որ շուտ ազատվի այն սարսափելի տպավորություններից, որ նա ունեցել էր այդ օրը, վերադառնա կյանքի սովորական պայմաններին և հանգիստ քնի սենյակում՝ իր անկողնում։ Նա զգում էր, որ կյանքի սովորական պայմաններում կարող է հասկանալ ինքն իրեն և այն ամենը, ինչ տեսել էր և ապրել։ Բայց կյանքի այդ սովորական պայմանները շկային։

Թեև ուումբերն ու գնդակները չեին սուլում այստեղ՝ ճանապարհին, որով նա գնում էր, բայց ամեն կողմ նույնն էր, ինչ որ այնտեղ՝ ճակատամարտի դաշտում։ Նույն տառապարզ, տանջված և երբեմն տարօրինակորեն անտարբեր դեմքերը, նույն արյունը, նույն զինվորական շինելները, հրածգության նույն ձայնները, թեև հեռավոր, բայց տակավին սարսափ ազգող բացի դրանից՝ տոթ էր և փոշի։

Անցնելով երեք վերստ Մոժայսկի մեծ ճանապարհով, Պիեռը նստեց նրա եզրին։

<sup>1</sup> Այնուհետեւ աղոթում եմ աստծուն. որ գուք, բարեկամս, լինեք Երմ սուրբ և հզոր հովանու ներքու Զեր բառեկամուհի էլեն։

Մթնշաղն իչավ երկրի վրա, և թնդանոթների որոտը լուեց, Պիեռը, ձեռին հենված, պառկեց և այդպես երկար մնաց, նայելով իր մոտից մթության մեջ անցնող ստվերներին: Նրան շարունակ թվում էր, թե սարսափելի սուլոցով իր վրա ոռւմբ էր գալիս. նա ցնցվում էր ու տեղից բարձրանում: Նա չը հիշում, թե որքան ժամանակ մնաց այդուղից: Գիշերվա կեսին երեք զինվոր, ծառի ճղներ բարշ տալով, եկան տեղավորվեցին նրա կողքին և սկսեցին կրակ անել:

Զինվորները, Պիեռի վրա խեթելով, կրակ վառեցին, փոքրիկ դույլը դրին վրան, պարսիմատ մանրեցին՝ լցրին մեջը և յուղ դրին: Ուտելիքի և յուղու կերակրի հաճելի բույրը խառնվեց ծխի հոտին: Պիեռը տեղից վեր կացավ ու հոգոց արձակեց: Զինվորները (նրանք երեք հոգի էին) ուտում էին, առանց Պիեռի վրա ուշ դարձնելու, և խոսակցում միմյանց հնատ:

— Իսկ դու որոնցից կլնես, — հանկարծ դիմեց Պիեռին զինվորներից մեկը, ըստ երեսոյթին, այդ հարցի տակ հասկանալով այն, ինչ և Պիեռն էր կարծում, այն է. եթե ուսել ես ուզում, կտանք, միայն թե ասա, դու ազնիվ մարդ ես արդյոք:

— Ե՞ս: Ե՞ս... — ասավ Պիեռը, անհրաժեշտություն զգաւով, որքան կարելի է նսեմացնել իր հասարակական գիրքը, որպեսզի ավելի մոտ և ավելի հասկանալի լինի զինվորների համար: — Ես ճիշտը աշխարհազորական սպա եմ, բայց իմ խումբն այստեղ չի. ես եկա ճակատամարտին մասնակցելու և կրցրի իմոնց:

— Տեսնո՞ւմ ես, — ասավ զինվորներից մեկը:

Մյուս զինվորը գլուխն օրորեց:

— Եթե ուզում ես՝ կեր էս խառնապուրից, — ասավ առաջին զինվորը և, լիզելով, Պիեռին տվեց իր փայտե գդալը:

Պիեռը նստեց կրակի մոտ և սկսեց ուտել շփոթը, այն կերպը, որ կար փոքրիկ կաթսայի մեջ և որը նրան թվաց ամենահամեղը այն բոլոր կերակուրներից, որ երբեկցե կերել էր ինքը: Այն ժամանակ, երբ նա ագահությամբ, կաթսայի վրա կուցած, մեծ գդալներով վերցնում և ծամում էր, և նրա գեմքն երեռում էր կրակի լույսով, զինվորներն անխոս նայում էին նրան:

— Դու ո՞ւր պիտի գնաս: Ասա տեսնենք, — հարցրեց նրանից մեկը:

— Ես՝ Մոժայսկ:

— Դու, ուրեմն, աղա՝ ես:

— Այո:

— Իսկ ինչպես է քո անունը:

— Պյուսը Կիրիլովիչ:

— Դեհ, Պյուսը Կիրիլովիչ, գնանք. մենք քեզ կտանենք բոլորովին մթնով զինվորները Պիեռի հետ միասին գնացին դեպի Մոժայսկ:

Աքլորները կանչում էին արդեն, երբ նրանք հասան Մոժայսկ և սկսեցին բարձրանալ քաղաքի դիք սարը. Պիեռը գրնում էր զինվորների հետ միասին, բոլորովին մոռացած, որ իր իշխանը գտնվում էր ներքեւ՝ սարի տակ, և որ ինքն արգեն անցել է այն: Նա այդ մասին չէր էլ հիշի (այնպիսի ցրված վիճակի մեջ էր նա), եթե ճանապարհի կեսին, սարի վրա՝ շնանդիպեր նրան իր ձիապանը, որ գնացել էր քաղաքում նրան որոնելու և վերադառնում էր ետ՝ իր իշխանը: Զիապանը Պիեռին ճանաշեց նրա շլյապայից, որ սպիտակին էր տալիս մթան մէջ:

— Ձերդ պայծառափայլություն, — խոսեց նա, — իսկ մենք հույսներս կտրել էինք արդեն: Ինչո՞ւ եք ոտով: Իսկ ո՞ւր եք բարեհաճում:

— Ախ, այո, — ասավ Պիեռը:

Զինվորները կանգ առան:

— Հը, գտա՞՞ր քո մարդկանց, — ասավ նրանցից մեկը:

— Էյ, գնա՞ս բարով: Պյուսը Կիրիլովիչ, կարծեմ՝ այդպես է, չէ՞:

— Գնաք բարով, — ասավ Պիեռը և իր ձիապանի հետ ուղղվեց գեղի իշխանը:

«Պետք է սրանց մի բան տալ», մտածեց Պիեռը՝ ձեռը գըրպանը տանելով: «Ոչ, հարկավոր չի», ասավ նրան ինչ-որ մի ձայն:

Իշխանի սենյակներում տեղ չկար. բոլորը բռնված էին: Պիեռը գնաց բակը և, գլխից հետ ծածկվելով, պառկեց իր կառքում:

## IX

Հազիվ Պիեռը գլուխը դիեց բարձին, զգաց, որ քնում է բայց հանկարծ՝ գրեթե իրականության պայծառությամբ լըս-

վեցին կրակոցներ — բո՛ւմ, բո՛ւմ, բո՛ւմ. լսէցին տնբոցներ, ճշշեր, ոռումբերի շրպացներ. նա արյան և վասողի հոտ առավ, և սարսափի զգացումը, մահվան երկյուղը համակեց նրան։ Նա աշքերը բացեց վախեցած և գուխը բարձրացրեց շինելի տակից։ Ամեն ինչ խաղաղ էր բակում։ Միայն դարբասի մեջ, դռնապանի հետ խոսակցելով ու ցեխերի մեջ ընկնելով, քայլում էր ինչ-որ մի սպասյալ։ Պիեռի դլխավերեն, ծածկի մութ առաստաղի տակ՝ աղավնիները թառժաժ եղան այն շարժումից, որ արագ նա, տեղից բարձրանալով։ Ամբողջ բակով մեկ տարածված էր այն անդորր, այդ վայրկյանին Պիեռի համար ուրախալի, իշեանի սուր հոտը. խոտի, գոմաղբի և կուպրի հոտը։ Երկու սկ ծածկերի արանքում երևում էր պարզ, աստղալից երկինքը։

«Փառք աստծո, որ այն չկա այլնս, — մտածեց Պիեռը, նորից գլխիցը հետ ծածկվելով։ — Օ՛, որքան սարսափելի է երկյուղը և ի՞նչ խայտառակությամբ ես անձնատրու եղա նրան։ Իսկ նրանք... նրանք շարունակ մինչև վերջը կայուն էին, հանգիստ...», մտածեց նա։

Նրանք, Պիեռի հասկացողությամբ, գինվորներն էին, նրանք, որ մարտկոցումն էին, և նրանք, որ կերակրեցին իրեն, և նրանք, որ աղոթում էին սրբապատկերի առաջ։ Նրանք՝ այդ տարօրինակ, մինչ այժմ իրեն անժանոթ, նրանք — պարզ ու որոշ ջոկվում էին նրա մտքում բոլոր մյուս մարդկանցից։

«Էինել զինվոր, հասարակ գինվոր, — մտածեց Պիեռը, քնելով։ — Ամբողջ էլությամբ մտնել այդ ընդհանուր կյանքի մեջ, տողորվել այն բանով, թ'նշը նրանց դարձնում է այդպիսին։ Բայց ինչպես նետեմ վրայիցս այս բոլոր ավելորդը, սատանայականը, արտաքին մարդու այս ամբողջ բեռը։ Մի ժամանակ ես կարող էի լինել այդպես։ Ես կարող էի փախչել հորիցս, ինչպես ցանկանում էի։ Ես կարող էի գեռ Դոլոխովի հետ ունեցած մենամարտից հետո ուղարկվել գինվոր»։ — Եվ Պիեռի երեակայությանը երեաց ակումբի ճաշը, որի ժամանակ նա մենամարտի հրավիրեց Դոլոխովին, և բարերարը Տորժումում էր ահա Պիեռին պատկերանում է մասոնական ժողովարանի հանդիսավոր սեղանը սեղանում էր առաջնական պատկերը, որի մեջ Պիեռը ինքն էր մտածել։

րարն է։ «Բայց չէ՝ որ նա մեռել է, — մտածեց Պիեռը։ — Այո, մեռել է. բայց ես չգիտեի, որ նա կենդանի է։ Եվ որքան ափսոսում եմ, որ նա մեռել է, և որքան ուրախ եմ, որ նա կենդանի է նորից։ Սեղանի մի կողմը նստած էին Անատոլը, Դուլիսավը, Նեղակիցին, Պիեռիսովը և ուրիշները (այդ մարդկանց կատեգորիան պարզ որոշվեց երազում Պիեռի հոգում նույնպես, ինչպես և կատեգորիան այն մարդկանց, որոնց նա անվանում էր Երանեֆ), և այդ մարդկիկ, Անատոլը, Դուլիսավը, բարձրածայն աղաղակում էին, երգում. բայց նրանց աղաղակների միջից լսվում էր բարերարի ձայնը, որ խոսում էր անդաղար, և նրա խոսքերի հնչունը նույնպես նշանակալից էր և անընդհատ, ինչպես ճակատամարտի դաշտի դղրդյունը, բայց նա դուրեկան էր և սփոփից։ Պիեռը չէր հասկանում այն, ինչ ասում էր բարերարը, բայց նա գիտեր (մաքերի կատեգորիան նույնպես պարզ էր երազում, որ բարերարը խոսում էր բարության մասին և այն մասին, թե հնարավոր է դառնալ այն, ինչ նրանք են։ Եվ նրանք ամեն կողմից իրենց պարզ, բարի վճռական դեմքերով շրջապատել էին բարերարին։ Բայց նրանք թեև բարի էին, նըրանք Պիեռին չէին նայում, նրան չէին ճանաշում։ Պիեռն ուզեց իր վրա դարձնել նրանց ուշադրությունը և մի բան ասել։ Իսկ ու նա կիսով չափ բարձրացավ, բայց նույն ակնթարթին նրա ոտները սառան ու բացվեցին։

Նա ամաշեց, և ձեռով ծածկեց իր ոտները, որոնցից շինելն իսկապես ընկել էր։ Մի ակնթարթում Պիեռը, շինելն ուղղելով, աշբերը բաց արագ և տեսալ նույն ծածկերը, սյուները, բակը, բայց այդ բոլորն այժմ կապտավուն էր, պայծառ և ցողի թե սառնամանիրի փալլուն կետերով ծածկլած։

«Լուսանում է, — մտածեց Պիեռը։ — Բայց սա այն չի։ Ես պետք է լսեմ և հասկանամ բարերարիս խոսքերը։ Նա նորից ծածկվեց շինելով, բայց ոչ ժողովարանի սեղանատունը կարարգեն, ոչ էլ բարերարը։ Կային միայն մտքեր, բառերով արտահայտված պարզ մտքեր, որ ասել էր ինչ-որ մեկը կամ Պիեռը ինքն էր մտածել։

Պիեռը, հետո այդ մտքերը հիշելով, չնայած այն բանին, որ դրանք առաջ էին եկել այդ օրվա տպագորություններից, համոզված էր, թե ինչ-որ մեկը դրանք ասել էր իրեն։ Երբեք,

ինչպէս նրան թվում էր, ինքը արթուն ի վիճակի չէր այդպէս  
մտածել ու իր մտքերն արտահայտել:

«Ամենադժվարագույն բանը՝ մարդու զատությունը աստ-  
ծո օրենքներին ենթարկիլն է», ասում էր ձայնը: Պարզությունը՝  
հնազանդությունն է աստծուն. նրանից հեռանալ չես կարող: Եվ  
նվաճել պարզ են: Նրանք չեն խոսում, բայց գործում են:  
Ասված խոսքը — արծաթ է, իսկ շասվածը — ոսկի: Մարդ ոչ  
մի բանի չի կարող տիրանալ, բանի վախենում է մահից: Իսկ  
ո՛վ մահից չի վախենում, նրան է պատկանում ամեն ինչ: Եթե  
տանջանքներ լինեն, մարդս սահման չէր ճանաչի իրեն, չէր  
ճանաչի ինքն իրեն: Ամենադժվարն (շարունակեց երազում մը-  
տածել, թե լսել, Պիեռ) այն է, որ մարդ կարողանա իր հո-  
գում միացնել ամենի նշանակությունը: Բոլորը միացնելու,  
ասավ Պիեռն իրեն: «Ո՛չ, չմիացնել: Չի կարելի միացնել մըտ-  
քերը, այլ միափոք բոլոր այդ մտքերը, ահա ի՞նչ է հարկա-  
վոր: Այո, միափոք է հարկավոր, միափոք է հարկավոր»,  
և երբին խանդավառությամբ կրկնում էր Պիեռն ինքն իրեն,  
զգալով, թե հենց այդ, միայն այդ խոսքերովէ արտահայտվում  
այն, ինչնա կամենում է արտահայտել, և լուծվում է նրան տան-  
չող ամբողջ հարցը:

— Այո, միափոք է հարկավոր, ժամանակ է միափոքել:  
— Լծել է հարկավոր, ժամանակն է լծել, ձերդ պայծառա-  
փայլություն: Զերդ պայծառափայլություն, — կրկնեց մի ինչ-  
որ ձայն, — լծել է հարկավոր, ժամանակ է լծել...

Դա ձիապանի ձայնն էր, որ արթնացնում էր Պիեռին: Արևն  
ողիղ խփում էր Պիեռի երեսին: Նա նայեց իջևանի կեղտուտ  
բակին, որի մեջտեղը՝ զրհորի մոտ զինվորները ջրում էին  
նիհար ծիերին, և որի գարբասից դուրս էին գնում սայլերը:  
Պիեռը երեսը զզվանքով շուր տղեց, և աշբերը փակելով, հապ-  
եած փուլեց կառքի նծտատեղուտ: Ո՛չ, ես այդ չեմ ու-  
զում, ես այդ չեմ ուզում տեսնել և հասկանալ. ես ուզում եմ  
հասկանալ այն, ինչ հայտնվեց ինձ երազումս: Եվս մի վայր-  
կյան, և ես բոլորը կհասկանայի: Ի՞նչ անեմ ես հապա: Միա-  
փոքել, բայց ի՞նչպես միափոքել բոլորը: — Եվ Պիեռը սարսա-  
փու զգաց, որ բովանդակ նշանակությունն այն բանի, ինչ  
ինքը տեսիլ և խորհել էր երազում, խորտակված էր:

Զիապանը, կառապանը և դոնապանը Պիեռին պատմեցին,  
թե նոր եկած մի սպա լուր է բերել, թե ֆրանսացիները մո-  
տենում են Սուծայսկին և թե մերոնք հեռանում են:

Պիեռը վեր կացավ և, հրամայելով լծել ու հասնել իր ետեից,  
ուսով գնաց քաղաքի միջով:

Զորքերը քաղաքից դուրս էին գալիս և թողնում էին մոտ  
10 հազար վիրավորները երեսում էին բակերում  
և տների լուսամուտներում, խմբվել էին փողոցներում: Փո-  
ղոցներում՝ սայլերի մոտ, որոնք պետք է տանեին վիրավոր-  
ներին, լսում էին աղաղակներ, հայտոյանքներ ու հարված-  
ներ: Պիեռն էր ետեից հասած կառքը տվեց ծանոթ վիրավոր  
գեներալին և նրա հետ միասին գնաց Սոսկվա: Ճանապարհին  
Պիեռն իմացավ իր աներազի մահը և իշխան Անդրեյի մահը:

## X

Ամսի 30-ին Պիեռը վերադարձավ Սոսկվա: Գրեթե ուղեկալի  
մոտ հանդիպեց նրան կոմս Ռաստոպչինի աղյուտանտը:

— Իսկ մենք ձեզ որոնում ենք ամեն տեղ, — ասալ աղյու-  
տանտը: — Կոմսն ուզում է ձեզ տեսնել անողատնու: Նա ձեզ  
խնդրում է՝ անմիջապէս անցնել իր մոտ՝ մի շատ կարեւոր  
գործի համար:

Պիեռն, առանց տուն գնալու, կառք վերցրեց և գնաց գրւ-  
խավոր հրամանատարի մոտ:

Կոմս Ռաստոպչինը հենց այդ առավոտ էր եկել քաղաք՝ իր  
քաղաքամերձ ամառանցից, որ գտնվում էր Սոկոլնիկիում: Կոմսի  
տան նախասենյակն ու ընդունարանը լիքն էին ասաի-  
ճանավորներով, որ եկել էին նրա պահանջով կամ հրամաններ  
ստանալու: Վասիլչիկովն ու Պլատովն արդեն տեսնվել էին  
կոմսի հետ և նրան բացատրել, թե Սոսկվան պաշտպանել  
անկարելի է և թե նա հանձնվելու է թշնամուն: Այս լուրերը  
թեև թաքցնում էին բնակչությունից, բայց աստիճանավոր-  
ները, զանազան վարչությանց պետերը գիտեին, որ Սոսկվան  
ընկերու է թշնամու ձեռք, այնպես, ինչպես գիտեր այդ կոմս  
Ռաստոպչինը. և նրանք բոլորը, որպեսզի պատասխանատր-  
վությունը գցեն իրենցից, եկել էին գլխավոր հրամանատարի

մոտ իմանալու, թե ինչպես վարդել իրենց վստահված հիմնարկուների հետ:

Այն ժամանակ, երբ Պիեռը մտնում էր ընդունարան, բանակից եկած սուրհանդակը դուրս էր գալիս կոմսի սենյակից:

Սուրհանդակը անհույս կերպով ձեռը թափ տվեց իրեն արվող հարցումների վրա և անցավ-գնաց դահլիճի միջով:

Ընդունարանում սպասելով՝ Պիեռը հոգնած աշքերով նայում էր սենյակում գտնվող ձերերին ու երիտասարդներին, զինվորականներին ու քաղաքացիներին և կարեռ ու անկարեռ աստիճանավորներին: Բոլորը թվում էին դժո՞հ ու անհանգիսու: Պիեռը մոտեցավ մի խումբ աստիճանավորների, որոնցից մեկը նրա ծանոթն էր: Պիեռին բարեելով, նրանք շարունակեցին իրենց գրուցք:

— Արտաքսել և նորից վերադարձնել — վնաս չի լինի, իսկ այս դրությամբ ոչ մի բանի համար չի կարելի պատասխանատու լինել:

— Բայց չէ որ ահա նա գրում է, — ասում էր մյուսը ցուց տալով տպագրված թուղթը, որ բռնել էր ձեռին:

— Այդ ուրիշ բան է: Ժողովրդի համար դա հարկավոր է, — ասավ առաջինը:

— Այդ ի՞նչ բան է, — հարցրեց Պիեռը:

— Մի նոր հայտարարություն:

Պիեռը վերցրեց այն և սկսեց կարդալ:

«Գերապայծառ իշխանը, որպեսզի շուտով միանա դեպի իրեն եկող զորքերին, անցել է Մոժայսկը և բռնել ամուր մի տեղ, ուր թշնամին հանկարծորեն չի կարող գնալ նրա վրա: Այստեղից նրան ուղարկված է 48 թնդանոթ իրենց ոումբերով», և գերապայծառ ասում է, թե Մոսկվան պաշտպանելու է մինչև արյան վերջին կաթիլը և պատրաստ է թեկուց փողոցներում կովել: Դուք, եղայրներ, մի նայեք այն բանին, որ պաշտոնատները դադարեցրել են իրենց աշխատանքը. Հարկավոր է կարգի բերել իսկ մենք մեր դատաստանը կտեսնենք շարադրծի հետ: Երբ մի բան լինի՝ ինձ հարկավոր կլինեն թե քաղաքացի, թե գյուղացի կտրիճներ: Ես կոչ կանեմ երկու օր առաջ, իսկ հիմա հարկավոր չէ, և ես լուսմ եմ: Լավ է կացնով, վաստ չի լինի և տեղով, իսկ ամենից լավը եռաժանի եղաններն են. Ֆրանսացին հաճարի խուրձից ավելի ծանր չի: Վաղը,

ճաշից հետո, ես իվերիայի աստվածամորը տանում եմ Եկատերինյան հիվանդանոցը՝ վիրավորների մոտ: Այնտեղ ցուր կօրհնենք՝ նրանք շատ շուտով կառողանան: Ես էլ այժմ առողջ եմ. աշք ցավում չեմ, իսկ հիմա նայում եմ երկուսով էլ»:

— Իսկ զինվորական մարդիկ ինձ ասել են, — ասավ Պիեռը, — որ քաղաքում ոչ մի կերպ չի կարելի կովել և որ զիրքերը...

— Այո, մննք հենց այդ մասին էլ խոսում ենք, — ասավ առաջին աստիճանավորը:

— Իսկ այդ ի՞նչ է նշանակում՝ աշք ցավում էր, հիմա զույգով էլ նայում եմ, — ասավ Պիեռը:

— Կոմսի աշքի վրա գարիկ կար, — ասավ աղյուտանտը ժպտալով, — և նա շատ անհանգստացավ, երբ ես նրան ասի, որ ժողովուրդն եկել է հարցնելու, թե ի՞նչ է պատահել նրան: Այդ ի՞նչ բան է, կոմս, — ասավ հանկարծ աղյուտանտը, ժըպտալով զիմելով Պիեռին. — լսեցինք, որ ձեր ընտանիքում անհանգստություն կա, որ իբր թե կոմսուհին, ձեր կինը...

— Ես ոշինչ չեմ լսել, — անտարբեր ասավ Պիեռը: — Իսկ դուք ի՞նչ եք լսել:

— Ոչ, գիտեք, չէ որ հաճախ հնարում են: Ես ասում եմ, որ լսել եմ:

— Իսկ ի՞նչ եք լսել:

— Ասում են, — նորից նույն ժպիտով ասավ աղյուտանտը, — որ կոմսուհին, ձեր կինը, պատրաստվում է արտասահման գնալ: Հավանորեն դատարկ բան է:

— Թերևս, — ասավ Պիեռը, ցրված նայելով իր շուրջը: — Իսկ դա ո՞վ է, — հարցրեց նա, ցուց տալով մի ոչ բարձրահսանակ, մաքուր կապույտ կապա հագած ծեր մարդու, որը ձյունի պես ճերմակ խոշոր մորուք ուներ, նույնպիսի հոնքեր և կարմիր դեմք:

— Սա՞: Վաճառական է, այսինքն՝ ճաշարանատեր, վերեշշապինը. Դուք, երկի, լսել եք այդ թուղթիկի պատմությունը:

— Ա՞խ, դա ուրեմն վերեշշապինն է, — ասավ Պիեռը, զիտելով ծեր վաճառականի պիտի ու հանգիստ զեմքը և այնտեղ դավաճանության արտահայտություն որոնելով:

— Սա նա ինքը չի: Սա թսուցիկ գրողի հայրն է, — ասավ աղյուտանտը: Նա՝ շահելը բանտում նստած է, և նրա բանը, թշում է, վատ կլինի:

Մի ծերումնի՝ աստղը կոծրին, և մի ուրիշ աստիճանավոր ուրմանացի՝ խաչը վզին, մոտեցան խոսողներին:

— Գիտեք, — պատմում էր աղյուտանտը, — դա մի խճճված որատմություն է: Երկու ամիս առաջ հայտնվեց այդ թուցիկը: Կւմսին հայտնեցին: Նա հրամայեց հետաքննել: Այ, Գուշը լու իվանիը հետախուզեց. այդ թուցիկը ուղիղ 63 մարդու ձնուք է անցել: Գալիս ենք մեկի մոտ՝ դուք ումից եք ստացել: Այսինչ այնինչցից: Նա զնում է այդինչի մոտ՝ գումարում ումից... և այլն: Հասանք մինչև Վերեշշագինը... թերուս վաճառականիկ, մի փոքրիկ սիրուն վաճառական, — ժպտալով ասավ աղյուտանտը: — Նրան հարցնում են՝ «Կ է տվել քեզ: Եվ գըլի խավորն այն է, որ մենք դիտենք թե նա ումից է ստացել: Նա ուրիշ ոչ ոքից չէր կարող ստանալ, քան փոստապետից: Բայց արդեն երեսում է, նրանց միջև գաղտնի համաձայնություն է եղել: Ասում է՝ «Ո ոքից, ես ինքս եմ հորինել-գրել: Թե՛ ըստառապետինք, թե՛ խնդրեցինք՝ մնաց իր ասածին՝ ես եմ հորինել: Այդպես էլ գեկուցեցինք կոմսին: Կոմսը հրամայեց կանչել դրան: «Ո՞ւմից ես ստացել այս թուցիկը» — «Ինքս եմ հորինել»: — Դե, դուք գիտեք կոմսին, — հպարտ և ուրախ ժպտալ ասավ աղյուտանտը: — Նա սարսափելի կատաղեց և, Երեկայեցեք, այդպիսի լրբություն, սուտ և համառություն:

— Ա... կոմսին հարկավոր էք, որ նա մատնացույց անհ կլուշարյովին, հասկանում եմ, — ասավ Պիեռը:

— Բոլորովին էլ հարկավոր չէր, — վախեցած ասալ աղյուտանտը, — առանց այդ էլ կլուշարյովը մեղքեր ունի, որոնց համար և աքսորված է: Բայց բանն այն է, որ կոմսը շատ զայրացած էք: «Դու ինչպես կարող էիր հորինել-գրել, — ասում էք: Սեղանի վրայից վերցրեց Համբուրգի լրագիրը: — Ահալասիկ: Դու չես հորինել, այլ թարգմանել ես, և թարգմանել ես վատ, որովհետեւ դու ֆրանսերեն էլ, հիմար, զգատես: — Եվ ի՞նչ եք կարծում: «Ու, ասում է, ոչ մի լրագիր չեմ կարդացել, ես եմ հեղինակելու: — Ճեթե այդպես է, ապա դու դավաճան ես, և ես քեզ գատի կտամ, ու քեզ կկախեն: Ասա, ո՞ւմից ես ստացելք: — «Ես ոչ մի լրագիր չեմ տեսել, այլ հե-

ղինակել եմ»: Այդպես էլ մնաց: Կոմսը հորն էլ կանչեց. դարձյալ մնաց իր ասածին: Եվ դատի տվին ու դատապարտեցին, կարծեմ, տաժանակիր աշխատանքների: Հիմա հայրն եկել է նրա համար խնդրելու: Բայց անպիտա՞ն տղա է: Գիտեք, վաճառականի այդպիսի մի տղա, ֆրանտ-մրանտ, գայթակղիւ: Ինչոր մի տեղ դասախոսություններ է լսել և արդեն կարծում է, թե ինքն իմաստուն է: Գիտե՞ք ի՞նչ փուչն է: Հայրն այստեղ՝ կամեննի մոստի մոտ ճաշարան ունի: Այդտեղ կախված է ամենակալ աստծու մեծադիր պատկերը, և ներկայացված է այսպես — մի ծեռքում գայխոն՝ մյուսում՝ թագավորությունը. ահա այս պատկերը մի քանի օրով տանում է տուն և ի՞նչ է անում: Գտնում է մի սրիկա նկարիչ...

## XI

Այս նոր պատմության կեսին Պիեռին կանչեցին գլխավոր հրամանատարի մոտ:

Պիեռը մտավ կոմս Ռաստոպչինի առանձնասենյակը: Ռաստոպչինը, դիմքը կնճռած, ձեռքով արորում էր ճակատն ու աշքերն այն ժամանակ, երբ ներս մտավ Պիեռը: Ոչ բարձրահասակ մարդն ինչոր բան էր ասում և, հենց որ Պիեռը ներս մտավ, նա լոեց ու դուրս եկավ:

— Ա, բարե ձեզ, մեծ ռազմիկ, — ասավ Ռաստոպչինը, հենց որ այն մարդը դուրս եկավ: — Լսեցինք ձեր քուess<sup>1</sup>: Բայց բանն այդ չի: Mon cher, entre nous<sup>2</sup>, դուք մասո՞ն եք, — հարցրեց կոմս Ռաստոպչինը խիստ տոնով, կարծես ինչոր վատ բան կար դրա մեջ, բայց որը նա մտագիր էր ներիլ: Պիեռը լուր էք: — Mon cher, je suis bien informé<sup>3</sup>, բայց ես գիտեմ, որ կան մասոններ և մասոններ և, հույս ունեմ, որ դուք չեք պատկանում նրանց թվին, որոնք մարդկային ցեղը փըրկելու անվան տակ ուղում են Ռուսաստանը կործանել:

— Այո, ես մասոն եմ, — պատասխանեց Պիեռը:

<sup>1</sup> Քաշագործության մասին:

<sup>2</sup> Սիրելիս, խոսքը մեր մեջ:

<sup>3</sup> Սիրելիս, ինձ լավ հայտնի է:

— Այ, տեսնում եք, սիրելիստ ջեզ, կարծում եմ, հայտնի է, որ պարոնայք Սպերանսկին ու Մագնիցկին ուղարկված են, ուր հարկն է. նույն կերպ վարդել են պ. Կլուչարյովի հետ. նույնը և մյուսների նկատմամբ, որոնք Սողոմոնի տաճար կառուցելու անվան տակ աշխատում էին քանդել իրենց հայրենիքի տաճարը: Դուք կարող եք հասկանալ, որ դրա համար պատճառներ կան, և որ ես չեմ կարող աքսորել այստեղի փոստի զիրեկտորին, եթե նա վնասակար մարդ չլիներ: Այժմ ինձ հայտնի է, որ դուք ձեր կառքն ուղարկել եք նրան քաղաքից հեռանալու համար և անգամ նրանից թղթեր եք ընդունել՝ պահելու: Ես ձեզ սիրում եմ և վաստ բան չեմ ցանկանում ձեզ. և որովհետև դուք երկու անգամ փոքր եք ինձնից, ուստի ես, որպես հայր, խորհուրդ եմ տալիս ձեզ՝ խզել ամեն մի հարաբերություն այդ տեսակ մարդկանց հետ և ինքներդ էլ մեենցեք այստեղից, որքան կարելի է շուտ:

— Բայց ի՞նչումն է, կոմս, Կլուչարյովի մեղքը, — հարց-րեց Պիեռը:

— Դա իմ բանն է, բայց ոչ ձեր հարցնելու, — գոշեց Ռաստոպչինը:

— Եթե նրան մեղադրում են այն բանում, որ նա տարածել է Նապոլեոնի թուցիվը, բայց չէ որ դա ապացուցված չէ, — ասավ Պիեռը (չնայելով Ռաստոպչինին), — և Վերշչագինին...

— Nous y voilà!<sup>1</sup>, — հանկարծ դեմքը խոժողելով, Պիեռն ընդհատելով, առաջվանից ավելի բարձր գոռաց Ռաստոպչինը: — Վերշչագինը դավաճան է և մատնիչ, որը կստանա իր արժանի պատիժը, — ասավ Ռաստոպչինը մի բորբոքված կատաղությամբ, որով խոսում են վիրավորանքը հիշող մարդիկ: — Բայց ես ձեզ շեմ կանչել նրա՝ համար, որ իմ գործերը քննադատեք, այլ նրա՝ համար, որ ձեզ խորհուրդ տամ, կամ թե հրաման, եթե դուք այդ եք ցանկանում: Ինդրում եմ ձեզ՝ խզել ձեր հարաբերությունները այնպիսի պարոնների հետ, ինչպիսին Կլուչարյովն է, և հեռանալ քաղաքից: Իսկ ես՝ ո՛վ Տիմարություն անի խելքի կրերեմ: — Եվ, հավանորեն, գլխի թնկնելով, որ իբր թե գոռացել է Բեզուխովի վրա, որը դեռ ոչ մի բանում մեղավոր չէր, նա ավելացրեց, բարեկամաբար

<sup>1</sup> Բանն է հենց այդ է:

Պիեռի ձեռը բռնելով. — «Nous sommes à la veille d'un désastre public, et je n'ai pas le temps de dire des gentillesse à tous ceux qui ont affaire à moi. Գլուխս երբեմն շամութէ: Eh bien, mon cher, qu'est-ce que vous faites, vous personnellement?!

— Mais rien<sup>2</sup>, — պատասխանեց Պիեռը, շարունակելով աշքերը շբարձրացնել և մտախուն դեմքի արտահայտությունը շփոխել:

Կոմսը հոնքերը կիտեց:

— Un conseil d'ami, mon cher. Decampez et au plus tôt, c'est tout ce que je vous dis. A bon entendeur salut!<sup>3</sup>: Գնա՞ք բարով, սիրելիս: Ա՞խ, այո, — ձայն տվեց Պիեռին դռան միշտից, — ճի՞շտ է արդյոք, որ կոմսուհին ընկել է ծովականիկ ծանկը?

Պիեռը ոչինչ չպատասխանեց և, խոժողած ու բարկացած, ինչպես նրան երբեք չէին տեսել, դուրս եկավ Ռաստոպչինի առանձնասենյալից:

Եթե նա տուն եկավ, օրը մթնում էր արդեն: Այդ երեկո ութեատարբեր մարդիկ եղան նրա մոտ: Կոմիտեի քարտուղարը, նրա գումարտակի գնդապետը, կալվածների կառավարիչը, ըսպասավորապետը և ամեն տեսակ խնդրատուներ: Բոլորն էլ Պիեռի հետ գործեր ունեին, որոնց նա պետք է լուծում տար: Պիեռը ոչինչ չէր հասկանում, չէր հետաքրքրվում այդ գործերով և բոլոր հարցություններին տալիս էր միայն այնպիսի պատասխաններ, որոնք նրան ազատեին այդ մարդկանցից: Վերջապես, մենակ մնալով, նա բացեց ու կարդաց կնոջ նամակը:

«Նրանք — զինվորները մարտկոցի վրա են, իշխան Անդրեյն սպանված է... ծերունին... Պարզությունը հնազանդություն է աստծուն: Տանջվել է հարկավոր.... բոլորի նշանակությունը...»

<sup>1</sup> Մենք գտնվում ենք հասարակական աղետի նախօրեին, և ես ժամանակ չունեմ սիրալիք լինել այն բոլորի հետ, ովքեր գործ ունեն ինձ հետ: — Ուրեմն, սիրելիս, ինչ եք ձեռնարկում դուք, դուք անձամբ:

<sup>2</sup> Ումինք

<sup>3</sup> Ես ձեզ բարեկամ կան խորհուրդ կտամ: Քաղաքից հեռացեք, և շուտ, ինչքան կարող եք. այ, ինչ կամեմ ես ձեզ, երանի նրան, ով է արողանում եւնել:

<sup>4</sup> Հիսուսը Ընկերության սուրբ հայրերի ճանկը:

միավորել է հարկավոր... Կինս ամուսնանում է... Մոռանալ և հասկանալ է հարկավոր...»; Եվ նա, անկողնին մոտենալով, առանց հանվելու, ընկավ նրա վրա ու անմիջապես քննեց:

Երբ նա մյուս օրն առավոտյան զարթնեց, սպասավորապետն եկավ հայտնելու, թե կոմս Ռաստոպչինի կողմից գիտմամբ ուղարկված ոստիկանական մի աստիճանավոր էր եկել իմանալու՝ մեկնել է արդյոք, թե մեկնում է կոմս Բեզուխովը:

Տասը տարբեր տեսակի մարդիկ, որ գործ ունեին Պիեռի մոտ, սպասում էին նրան հյուրասորահում: Պիեռն շտապ-շտապ հագնվեց և, փոխանակ իրեն սպասողների մոտ գնալու, նա գնաց գեպի տան ետքի դուռը և այնտեղից դարբասով դուրս եկավ:

Այդ օրվանից և մինչև Մոսկվայի ավերման վերջը թեզուխովների տնեցիներից ոչ մեկը, չնայած բոլոր որոնումներին, այլևս շտեսալ Պիեռին և զգիտեր, թե նա որտե՞ղ է գտնվում:

## XII

Ռոստովները մինչև սեպտեմբերի 1-ը, այսինքն մինչև թշնամու Մոսկվա մտնելը, մնացին քաղաքում:

Այն բանից հետո, երբ Պետյան մտավ Օրոլինսկու կազակների գունդը և մեկնեց Բելայա Ցերկով, ուր կազմակերպվում էր գունդը, կոմսուհին ահ ու սարսափի մեջ ընկալվ: Այն միտքը, թե երկու որդին էլ գտնվում են պատերազմում, թե նրանք երկուսն էլ գնացել-հեռացել են իր թերի տակից, թե այսօր կամ վազը նրանցից յուրաքանչյուրը, թերևս և երկուսը միասին, ինչպես իր մի ծանօթուհու երեք որդին, կարող են սպանվել, — այդ միտքը առաջին անգամ այս ամառ դաժան պայծառությամբ պառկեց նրա ուղեղում: Նա փորձում էր պահանջել, որ նիկոլայը գա իր մոտ, ուզում էր ինքը գնալ Պետյայի մոտ, Պետերբուրգում տեղափորել նրան որևէ պաշտոնում, բայց թե մեկը և թե մյուսն անհնարին եղավ: Պետյան այլ կերպ չէր կարող վերադառնալ, բայց եթե գնդի հետ կամ որեէ այլ գործող գունդ տեղափոխվելու միջոցով: Նիկոլայը գտնվում էր ինչ-որ տեղ բանակում և իր վերջին նամակից հետո, որտեղ նա մանրամասնորեն նկարագրել էր իր հանդիպումը իշխանադուստր Մարիայի հետ, իր մատին լուր չէր տալիս: Կռմառւհին գիշեր-

ները շէր քնում և, երբ քունը տանում էր, երազում որդին երի սպանված էր տեսնում: Երկար խորհուրդներից ու հորդորներից հետո կոմսը վերջապես միջոց խորհեց կոմսուհուն հանգըտացնելու համար: Նա Պետյային Օրոլինսկու գնդից տեղափոխեց Բեզուխովի գունդը, որը կազմակերպվում էր Մոսկվայի մոտերքում: Թեև Պետյան մնում էր զինվորական ծառայության մեջ, բայց նրա տեղափոխվելով կոմսուհին այն միխթարությունն էր ունենում, որ գոնե իր մի որդուն կտեսներ իր թեկի տակ և հույս ուներ, թե կկարողանա որդուն այնպիս սեղագորել, որ նա որտեղ էլ ծառայելիս լինի, կովի մեջ շընկնի: Քանի դեռ միայն Nicolas-ն էր գտանգի մեջ, կոմսուհուն թըվում էր (նա նույնիսկ զզում էր դրա համար), որ նա մեծ որդուն ավելի է սիրում, քան մնացած բոլորին: Բայց երբ ինքը շարանձին, վատ սովորողը, տանն ամեն ինչ կոտրող-չչացնող և բոլորին ձանձրացրած Պետյան, այդ կարճթանի Պետյան, իր ուրախ սև աշքերով, թարմ կարմրություն ունեցող և այտերին նոր դուրս եկող աղվամազով Պետյան ընկավ այնտեղ, այդ մեծ, սարսափելի, դաժան մարդկանց մոտ, որոնք ինչ-որ կովում են և ինչ-որ ուրախ բան են գտնում դրա մեջ, — այն ժամանակ մորը թվաց, թե նա հենց դրան է ավելի սիրում, անհամեմատ ավելի, քան իր բոլոր մնացած որդիներին: Որքան ավելի էր մոտենում այն ժամանակը, երբ պետք է Մոսկվա վերադառնար սպասվող Պետյան, այնքան ավելանում էր կոմսուհու անհանգստությունը: Նա արգեն կարծում էր, թե երբեք չի արժանանա այդ բախտին: Ոչ միայն Սոնյայի, այլևս սիրեցյալ նատաշայի, նույնիսկ ամուսնու ներկայությունը շղախացնում էր կոմսուհուն: Ընթանիքին ինձ ի՞նչ, ինձ ոչ ոք պետք չէ', բայց Պետյայից», մտածում էր նա:

Թգուստոսի վերջերին Ռոստովները նիկոլայից ստացան երկրորդ նամակի: Նա գրում էր Վորոնեժի եանանգից, ուր նա ուզարկւած էր ծիեր ծեռք բերելու համար: Այդ նամակը շահեգըտացրեց կոմսուհուն: Գիտենալով, որ մի որդին վտանգից ազատ է, նա ավելի ևս սկսեց անհանգստանալ Պետյայի համար:

Չնայած նրան, որ գեռ օգոստոսի 20-ից սկսած Ռոստովների գրեթե բոլոր ծանօթներն արդեն հեռացել էին Մոսկվայից, չնայած նրան, որ բոլոր կոմսուհուն համարում էին որքան հարթի է շուտ հեռանալ, նա բնակ չէր ցանկանում լսել հեռա-

Նալու մասին այնքան ժամանակ, մինչև որ կվերադառնա իր գանձը, պաշտելի Պետյան։ Օգոստոսի 28-ին Պետյան եկալ։ Այն հիվանդագին ջերմ քնքությունը, որով մայրն ընդունեց նրան, դուր շեկավ 16 տարեկան սպային։ Չնայած նրան, որ մայրը որդուց թաքցրեց իր այն մտադրությունը, թե նրան այլևս բաց չի թողնելու իր թեկի տակից, Պետյան հասկացավ ո՞որ նպատակը և, բնազդաբար վախճանալով այն բանից, որ կարող է մոր քնքուշ վերաբերմունքից ազդեցի ու մեղմանալ և կնաբարո դառնալ (այդպես մտածում էր նա ինքն իրեն), նա սառը վերաբերմունք ցույց տվեց դեպի մայրը, խուսափում էր նրանից և իր Մոսկվա եղած ժամանակ բացառապես կապ էր պաշտպանում Նատաշայի շրջանի հետ, դեպի որը (Նատաշան) նա միշտ էլ առանձին, սիրահարության հասնող եղբայրական քնքուշ զգացում էր տածում։

Կոմսի սովորական անհոգությամբ՝ օգոստոսի 28-ին նըրանք դեռ ոչ մի պատրաստություն չին ուեսել՝ մեկնելու համար, և Ծյազանի ու Մոսկվայի գյուղերից սպասվող այն սայլերը, որոնցով պետք է փոխադրեին իրենց տնային գույքը, եկան միայն 30-ին։

Օգոստոսի 28-ից մինչև 31-ը ամբողջ Մոսկվան հոգսերի ու շարժման մեջ էր։ Ամեն օր Գորոգոմիլովյան ուղեկալ էին բերում և այդտեղից քաղաքի զանազան մասերը տանում հագարակոր վիրավորներ, որոնք վիրավորվել էին Բորոդինոյի ճակատամարտում, և հազարավոր սայլեր՝ բնակիչներով ու գույքով, մեկնում էին մյուս ուղեկալները։ Չնայած Ռաստոպինի աֆիշներին, կամ նրանցից անկախ, կամ նրանց շնորհիվ ամենահակասական ու տարօրինակ լուրեր էին հազորդվում քաղաքում։ Ոմանք խոսում էին, թե ոչ ոքի չի թույլ տրվում քաղաքից մեկնել. ոմանք ընդհակառակը, ասում էին, թե եկեղեցիներից վերցրել են բոլոր սրբապատկերները և թե բոլորին հարկադրաբար արտաքսում են քաղաքից. ոմանք ասում էին, թե Բորոդինոյի ճակատամարտից հետո էլի ճակատամարտ է տեղի ունեցել, որտեղ քրանսացիները ջարդվել են. ուրիշներն էլ ասում էին, թե ընդհակառակը, առու զորքն ամրողջովին ոշնչացված է. ոմանք խոսում էին Մոսկվայի աշխարհազորի մասին, որը հոգնորականության առաջնորդությամբ գնալու է Տրի Գորի. ոմանք էլ ծածուկ պատմում էին, թե Ալգուստինին

արգելված է հեռանալ, թե դավաճաններ են բռնված, գյուղացիները խոռվություն են սարքում և կողոպտում հեռացողներին և այլն, և այլն։ Բայց այդպես միայն խոսում էին, իսկ չապես և՛ նրանք, ովքեր հեռանում էին, և՛ նրանք, ովքեր մնում էին (չնայած որ դեռ խորհրդակցություն չէր եղել Ֆիլում, որտեղ որոշվեց Մոսկվան թողնել), բոլորն էլ զգում էին, թեև այդ չին արտահայտում, որ Մոսկվան անպայման պետք է հանձնվի և որ պետք է որքան կարելի է շուտ հեռանալ և իրենց գույքը փրկել։ Զգացվում էր, թե հանկարծ ամեն ինչ կանգ է առնելու և փոխվելու է. բայց մինչև ամսի 1-ը դեռ ոչինչ չէր փախում։ Ինչպես ոճրագործը, որին տանում են մահապատճի ենթարկելու, գիտե, որ ահա շուտով ինքը մեռնելու է, բայց էլի դեռ շարունակում է նայել իր շուրջը և ուղղում է իր վատ դրած գլխարկը, աւազես էլ Մոսկվան՝ ակամա շարունակում էր իր սովորական կյանքը, թեև գիտեր, որ մոտ է կործանման այն ժամը, երբ կիզգին կյանքի այն բոլոր պայմանական հարաբերությունները, որոնց մարդիկ սովորել են հնագանդվել։

Մոսկվան հանձնելուն նախորդող այդ երեք օրվա ընթացքում Խոստովների ամբողջ ընտանիքը գտնվում էր զանազան կենսական հոգսերի մեջ։ Ընտանիքի պետը՝ կոմս Լիլյա Անդրեևիչը, կառքով անդադար շրջում էր քաղաքում, ամեն կողմից լուրեր հավաքելով, և տան ընդհանուր մակերեսային ու հապճեպ կարգադրություններ էր անում մեկնելու պատրաստություններ տեսնելու վերաբերյալ։

Կոմսուհին հետևում էր իրերը հավաքելուն, ամեն բանից դժգոհ էր և անդադար հետևում էր իրենից փախչող Պետյային, խանդեռով նրան դեպի նատաշան, որի հետ Պետյան անց էր կացնում իր ամբողջ ժամանակը։ Գործի պրակտիկ կողմը — իրերը դարսելը ու կապկաելը տնօրինում էր Սոնյան մենակնեակ։ Բայց Սոնյան առանձնապես տխուր էր ու լուր վերշին ժամանակները։ Nicolas-ի նամակի առթիվ, որտեղ նա հիշում էր իշխանագուստը Մարիայի մասին, կոմսուհին Սոնյայի ներկայությամբ գոհունակ և ուրախ սրտով այն կարծիքն էր հայտնել, թե իշխանագուստը Մարիայի և Nicolas-ի հանդիպումի մեջ նա ասովածային նախախնամություն է տեսել։

— Ես այն ժամանակ երեք չեմ ուրախանում, — ասավ կոմսուհին, — երբ Բալկոնսկին նատաշայի փեսացուն էր, և

ևս միշտ ցանկացել եմ և այժմ էլ այն նախազգացումն ունեմ, թե Նիկոլենկան կամուսնանա իշխանադստեր հետ եվ այդ ինչ-քան լա՞վ կլիներ:

Սոնյան զգում էր, որ այդ ճիշտ էր, որ Ռոստովների գործերը Լարգի բերելու միակ հնարավորությունը հարուստ հարսնացուի հետ ամուսնանալն է և որ իշխանադուստրը լավ զույգ էր: Բայց Սոնյային մեծ վիշտ էր պւտճառում այդ: Զնայած իր վշտին, կամ՝ գուցե հենց այդ վշտի պատճառով, նա իր վրա վերցրեց իրերը հավաքելու և դարսելու վերաբերյալ կարգադրություններ անելու բոլոր դժվարին հոգսերը, և ամբողջ օրերով զբաղված էր: Կոմսն ու կոմսուհին նրան էին զիմում, երբ նրանց հարկավոր էր որևէ կարգադրություն անել: Պետյան ու Նատաշան, ընդհակառակը, ոչ միայն չեին օգնում ծնողներին, այլև մեծ մասամբ տանը բոլորին ձանձրացնում ու խանգարում էին: Եվ գրեթե ամբողջ օրը տանը լսելի էր նրանց վազվոցը, գոռում-գուշունը, անառիթ քրքիջը: Նրանք ծփադում և ուրախանում էին ոչ թե նրա համար, որ նրանց ծփադը որևէ պատճառ ուներ, այլ նրանց սիրտն էր ուրախ ու զվարթ, ուստի և ինչ էլ որ պատճառում էր, նրանց համար ուրախության ու ծփադի պատճառ էր լինում: Պետյան ուրախ էր այն պատճառով, որ տնից երեխա հեռանալով, նա տուն վերադարձավ (ինչպես ասում էին բոլորը) քաջ տղամարդ, ուրախ. Էր այն պատճառով, որ տանն է, այն պատճառով, որ նա թելայա Յերկովից, ուր շուտ կովի մասնակցելու հույս չկար, Մասկվա ընկավ, որտեղ մոտ օրերը պետք է կոիվ լիներ, և գլխավորը, ուրախ էր այն պատճառով, որ նատաշան, որի տրամադրությանը նա միշտ ենթարկվում էր, ուրախ էր: Իսկ նատաշան ուրախ էր այն պատճառով, որ նա շափազանց երկար ժամանակ տիտուր էր եղել, և այժմ ոչ մի բան չէր հիշեցնում նրա տըխորության պատճառը, և նա առողջ էր: Նա ուրախ էր նաև այն պատճառով, որ կար մի մարդ, որ նրանով հիանում էր (մյաւսների հիացումն այն անվայուղն էր, որն անհրաժեշտ էր նրա համար, որ նատաշայի մեքենան միանգամայն ազատ շարժվի), և Պետյան հիանում էր նրանով: Իսկ զլիսավորը, նրանք ուրախ էին այն պատճառով, որ կոիվը Մոսկվայի տակ էր, որ կովելու են ուղեկալի մոտ, որ զենք են բաժանում, որ բոլորը փախչում, գնում են ինչ-որ տեղ, որ ընդհանրապես կատարվաւ է

ինչ-որ արտասովոր բան, որը միշտ ուրախալի է լինում մարդու համար, մանավանդ ջահել մարդու:

### XIII

Օգոստոսի 31-ին, շաբաթ օրը, Ռոստովների տանն ամեն ինչ թվում էր տակն ու վրա եղած: Բոլոր գուները բաց էին, ամբողջ կահ-կարասին գուրս հանված կամ տեղափոխված, հայելիներն ու նկարները վերցված: Սենյակներում սնդուկներ էին երևում, թափթփված խոտ, փաթաթելու թուղթ և պարաները: Գյուղացիներն ու ճորտ սպասավորները, որոնք իրերն գուրս տանում, ծանր բայլերով անց ու դարձ էին անուած պարկետի վրայով: Բակում խիտ կանգնած էին գյուղացիները սայլերը, որոնց մի մասն բարձկած ու կապկաված էր, մյուս մասը դեռ դատարկէ:

Բակում և տանը լսվում էին միմյանց ձայնող հսկայաթիվ սովասակազմի և սայլերով եկած գյուղացիների ձայներն ու քայլերը: Առավոտից կոմսն ինչ-որ տեղ էր մեկնել: Կոմսուհին, որի գլուխը սաստիկ ցավում էր իրարանցումից և աղմուկից, պառհած էր նոր բազմոցարանում՝ գլուխը քացախի փաթաթանով կապած: Պետյան տանը չէր (նա գնացել էր իր այն ընկերոջ մոտ, որի հետ մտադիր էր աշխարհազորից անցնել գործող բանակը): Սոնյան դաշիճում հետեւում էր բյուրեղապակեղենի և ճենապակեղենի գարսելուն: Նատաշան նստած էր իր աղերված սենյակում հատակի վրա ցրիվ տված զգեստների, ժապավենների, շարֆերի միջև և, անշարժ նայելով հատակին, ձեռին բոնել էր հին պարահանդեսային զգեստը, հենց այն (արդեն մոդայից ընկած) զգեստը, որով նա առաջին անգամ եղել էր Պետերբուրգի պարահանդեսին:

Նատաշան ամաշում էր այն բանից, որ մինչ բոլորը խիստ զբաղված էին, իսկ ինքը ոչինչ չէր անում տանը, և նա հենց առավոտից մի բանի անգամ փորձեց գործի անցնել, բայց նրա սիրոտը չէր կաշում այդ գործին. և նա չէր կարողանում որևէ բան առանց ամբողջ սրտով, բոլոր ուժերով գործին նվիրվելու: Ճենապակին գարսելիս նա կանգնեց Սոնյայի գլխին և ուզեց նրան օգնել, բայց իսկուն թողեց-հեռացավ և գնաց իր իրերը գարսելու: Սկզբում նրան ուրախացնում էր այն, որ նա

Իո զգեստներն ու ժապավենները բաժանում էր աղախին-ն: Ին, բայց հետո, երբ այնուամենայնիվ մնացածը պետք էր դարսել, այդ նրան ձանձրալի թվաց: — Դունյաշա՞', դու կը-դարսե՞ս, սիրելի՞ս: Այո՞: Այո: — Եվ երբ Դունյաշան սիրով խոստացավ այդ ամենն անել նրա համար, Նատաշան նստեց հատակին, վերցրեց հին պարահանդեսային զգեստը և մտքերի մեջ ընկավ, մտածելով բոլորովին ոչ այն մասին, ինչ պետք է այժմ զբաղեցներ նրան: Նատաշային մտածմունքից դուրս բերեց հարևան նաժշտասենյակից լսվող խոսակցությունը և նաժշտասենյակից դեպի ետքի դուրս գնացող աղջիկների փութ-կուտ քայլերի ձայնը: Նատաշան վեր կացավ և նայեց լուսա-մուտից: Փողոցում կանգ առավ վիրավորների մի հսկայական այլախումբ:

Աղջիկները, լակեյները, մառանապետուհին, դայակը, կա-ռապանները, ֆորեյտորները, խոհարարներն ու նրանց աշա-կերտները կանգնած էին դարբասի մոտ և նայում էին վիրա-վորներին:

Նատաշան, ձեռքի սպիտակ թաշկինակը մազերին գցած և երկու ձեռքով ծայրերից բռնած, դուրս եկավ փողոց:

Նախկին մառանապետուհի, պառավ Մավրա Կուզմինիշ-նան բաժանվեց դարբասի մոտ կանգնած բազմությունից և, ուագոժե ծածկույթով սայլին մոտենալով, սկսեց խոսել այդ սայլի վրա պառկած երիտասարդ, գունատ սպայի հետ: Նա-տաշան մի քանի քայլ առաջ շարժվեց և երկշուությամբ կանգ առավ, շարունակելով ձեռներով պահել մազերին գցած թաշկի-նակը և լսելով այն, ինչ ասում էր մառանապետուհին:

— Է՛օ, ուրեմն ձեզնից ոչ ոք չկա՝ Մոսկվայում, — ասում էր Մավրա Կուզմինիշնան: — Զեզ համար ավելի հանգիստ կլինի բնակարանում...: Թեկուց և մեր տանը: Մեր աղաները գնում են:

— Զգիտեմ, թույլ կտա՞ն արդյոք, — թույլ ձայնով ասավ սպան,

— Ահա՝ պետք... հարցրե՛ք, — և նա ցուց տվեց մի հաստ մարտիր, որը վերադառնում էր սայլերի շարքի մոտով:

Նատաշան վախեցած դեմքով նայեց վիրավոր սպայի դեմքին և իսկույն գնաց մայորին ընդպառաց:

— 392 —

— Կարո՞ղ են վիրավորները մեր տանն իջևանել, — հարց-րեց Նատաշան:

Մայորը ժպտաց և ձեռը մոտեցրեց գլխարկին:

— Ո՞ւմն եք ուզում, մամզե՛լ, — ասավ նա, աշքերը նե-դացնելով ու ժպտալով:

Նատաշան հանգիստ կրկնեց իր հարցը, և նրա դեմքն ու ամբողջ շարժուձեռը, չնայած նրան, որ նա շարունակում էր երկու ձեռով բռնել թաշկինակի ծայրերից, այնքան լուրջ էին, որ մայորը դադարեց ժպտալ և մի պահ մտածմունքի մեջ լնկ-նելով, կարծես նա հարց էր տալիս իրեն, թե որչափ հնարա-վոր է այդ, դրական պատասխան տվից նատաշային.

— Օ՛, այո՛, ինչու չէ, կարելի՛ է, — ասավ նա:

Նատաշան թեթևակի խոնարհեց գլուխը և արագ քայլերով վերադարձավ Մավրա Կուզմինիշնայի մոտ, որը կանգնած էր սպայի գլխավերել և կարեկցորեն զրուցում էր նրա հետ:

— Կարելի՛ է, նա ասավ՝ կարելի՛ է, — շնչալով ասավ Նատաշան:

Մպայի ծածկույթավոր սայլը ծովեց դեպի Խոստովների բակը, և մի քանի տասնյակ սայլեր վիրավորներով սկսեցին քաղաքի բնակիչների հրավերով քշել դեպի բակերը և մոտենալ Պովարսկայա փողոցի տների շքամուտքերին: Նատաշային, ըստ երկույթին, դուրս եկան այդ, կյանքի սովորական պայմաններից դուրս եղած հարաբերությունները նոր մարդ-կանց հետ: Նա և Մավրա Կուզմինիշնան աշխատում էին որքան կարելի է շատ վիրավորների տանել իրենց տուն:

— Այնուամենայնիվ պետք է հայրեկին հայտնել, — ասավ Մավրա Կուզմինիշնան:

— Ոչի՞նչ, ոչի՞նչ, միթե միևնույն չէ: Մի օրով մենք կտե-ղափոխվենք հյուրասենյակը: Մեր ամբողջ հարկաբաժինը կարելի է նրանց տրամադրել:

— Ա՛յդ էր պակաս, դուք էլ բան կհնարեք, թեկո՞ւզ հենց՝ թեակները, դատարկ սենյակները, դայակի մոտ — էլի՛ պետք է հարցնել:

— Լա՛վ, ես կհարցնեմ:

Նատաշան տուն վագեց և ոտների մատների վրա քայլե-րով կիսաբաց գրնով ներս մտավ բազմոցարանը, որտեղից քացախի և հոֆմանյան կաթիների հոտ էր փշում:

— 393 —

— Դուք քնա՞ծ եք, մայրի՛կ։  
— Է՛՞ ի՛նչ քոն, — զարթնելով ասավ հենց նոր նիրհած կոմուհին։

— Մայրի՛կ, սիրելի՛ս, — ասավ նատաշան շոքելով մոր առաջ և դիմքը մոտեցնելով նրա գեմքին։ — Մեղավո՛ր եմ, ներե՛ք, էլ երբեք չե՛մ անի. ես արթնացրի ձեզ։ Ինձ ուղարկել է Մավրա Կուլպմինիշնան. այստեղ վիրավորներ են բերել, սպաներ։ Թույլ կտա՞ք։ Նրանք տեղ չունեն. գիտեմ, որ թույլ կը տաք... — ասում էր նա արագ, առանց շունչ քաշելու։

— Ի՞նչ սպաներ։ Ո՞ւմ են բերել։ Ոչինչ չեմ համեստում, — ասավ կոմուհին։

Նատաշան ծիծաղեց. կոմուհին նույնպես թույլ ժպտաց։

— Ես գիտեի, որ գուք թույլ կտաք... կա՛վ, ես այդպես էլ կասեմ։

Եվ նատաշան, մորն համբուրելով, վեր կացավ և գնաց դեպի դուռը։

Դահլիճում նա հանդիպեց հորը, որը տուն էր վերադարձել վատ լուրերով։

— Ծա՛նր նստեցինք, — ակամա գժգոհությամբ ասավ կոմուր. — և ակումբն է փակ, և ոստիկանությունը դուրս է դպի։

— Հայրի՛կ, ոչի՞նչ, որ ես վիրավորներ եմ հրավիրել մեր տուն, — ասավ նրան նատաշան։

— Հասկանալի է, որ ոչինչ, — ցրվածորեն ասավ կոմուր. — Բանն այդ չէ. իսկ այժմ խնդրում եմ գատարկ բաներով ձերազվել, այլ օգնել, որ իրեղը շուտ գալուն, որպեսզի գընա՛նք, հենց վաղը մեկնենք...։

Եվ կոմուր նույն կարգադրությունն արտվ սպասավորապետին և սպասավորներին։ Ճաշի ժամանակ տուն վերադարձած Պետյան պատմեց իր նորությունները։

Եա ասավ, որ այժմ ժաղովուրդը կրեմլում գննք է ստանում, որ Թաստոպչինի աֆիշում թեև ասված է, թե նա երկու օր առաջ կազդարարի, բայց արդեն կարգադրություն է արված, որ վաղն ամբողջ ժողովուրդը զենքով գնա Տրի Գորի, և որ այնտեղ մեջ ճակտամարտ է լինելու։

Կոմուհին երկշոտությամբ ու աթրսափող էր նայում իր որդու ուրախ ու տաքացած վեմքին այն ժամանակ, երբ նա

պատմում էր այդ։ Կոմսուհին գիտեր, որ եթե ինքը մի խոռոշակի, թե Պետյային խնդրում է զգնալ այդ կովին (մայրը գիտեր, որ որդին ուրախանում է այդ առաջիկա ճակատամարտի համար), ապա Պետյան կսկսի խոսել տղամարդության, պատվի, հայրենիքի մասին, որևէ անմիտ, տղամարդուն հատուկ, համառ մի բան կասի, որի դեմ չի կարելի առարկել, և ամբողջ դործը կփշանա, ուստի և հույս ունենալով գործն այնպես կազմակերպել, որ կարողանան մեկնել մինչ այդ և Պետյային իրենց հետ տանեն որպես պաշտպան ու հովանավորի, նա ոչինչ շասավ Պետյային, իսկ ճաշից հետո կանչեց կոմսին և արտառակալից աշքերով խնդրում-աղաշում էր նրան որքան կարելի է շուտ հեռացնել իրեն քաղաքից, հենց այդ գիշեր, եթե հնարավագ է։ Կնշը հատուկ սիրո ակամա խորամանկությամբ կոմսուհին, որը մինչ այդ կատարյալ անվեհերություն էր ցույց տալիս, այժմ ասում էր, թե ահից կմեռնի, եթե այսօք գիշերը չմեկնեն։ Կոմսուհին այժմ, առանց կեղծելու, վախենում էր ամեն բանից։

#### XIV

Մ-ու Schoss-ը, որը գնացել էր աղջկա մոտ, ավելի ևս մեծացրեց կոմսուհու սարսափը՝ պատմելով թե ի՞նչ էր տեսել ինքը Մյասնիցկայա փողոցում՝ օղետանը։ Փողոցով վերադառնալիս՝ նա չէր կարողացել տուն անցնել՝ հարբած ամբոխի պատճառով, որ աղմկում էր օղետան առաջ, նա կառք էր վերցրել և, նրբափողով պտույտ տալով գնացել էր տուն։ և կառապանը նրան պատմել էր, թե ծողովուրդը չարգում է օղետան տակառները, թե այդպես է հրամայված։

Ճաշից հետո Մոստովների բոլոր տնեցիները խանքավառ շտապողականներթյամբ սկսեցին իրերը զասավորել և մեկնելու պատրաստություն տեսնելու Մեր կոմսը, հանկարծ գործի ձեռնարկելով, ճաշից հետո անդագար գնում-գալիս էր բակից տուն ու ետ, անմտորեն գոռում շտապող մարդկանց վրա և է ավելի շտապեցնում նրանց։ Պետյան կարգադրությունները էր անում բակում։ Սոնյան զգիտեր, թե ի՞նչ անի կոմսի համաական կարգադրությունների ազգեցության տակ, ու բոլորովին իրեն կորցրել էր։ Մարդկի, գոռալով, վիճելով ու ազմկեցավ,

զավկում էին սենյակներում ու բակում: Նատաշան, իրեն ամեն բանում հատուկ եռանդով, հանկարծ նույնպես գործի ձեռնարկեց: Սկզբում նրա միջամտությունը իրերը դարսելու գործին՝ ընդունվեց անվատահությամբ: Բոլորը նրանից հանաքներ էին սպասում և չէին ուզում նրան լսել, բայց նա համառորեն ու կրքությամբ պահանջում էր, որ մարդիկ ենթարկվեն իրեն, բարկանում էր, քիչ էր մնում լաց լինի, որ իրեն չեն լսում եւ, վերջապես, այնպես արավ, որ նրան հավատացին: Նրա առաջին քաջագործությունը, որ մեծ շանքեր խլեց նրանից և իշխանություն տվեց նրան, գորգերի դասավորումն էր: Կոմսի տանը կային թանկագին գորելիներ և պարսկական գորգեր: Երբ նատաշան սկսեց աշխատանքը, դահլիճում կային երկու բաց արկղ.— մեկը մինչև բերանը դարսված լցված էր ճենապակով, մյուսը՝ գորգերով: Ճենապակի դեռ շատ կար սեղանների վրա դարսված, ու մի կողմից դեռ բերում էին մատանից: Պետք էր սկսել երրորդ արկղը լցնելու աշխատանքը, և սպասավորները գնացին այդ արկղը բերելու:

— Սոնյա, սպասիր. մենք բոլորն այսպես կդասավորենք, — ասավ նատաշան:

— Չի կարելի, օրիորդ, արդեն փորձել ենք, — ասավ բուժետապանը:

— Ոչ, կա'ց, խնդրեմ:

Եվ նատաշան սկսեց արագորեն արկղից հանել թղթում փաթաթած սկուտեղներն ու ափսեները:

— Սկուտեղները պետք է դնել այստեղ՝ գորգերի մեջ, — ասավ նա:

— Բայց գորգերը դեռ աստված տա երեք արկղ կլցնեն, — ասավ բուժետապանը:

— Դու կա'ց խնդրեմ: — Եվ նատաշան արագորեն, ճարպ-կությամբ սկսեց զոկչել: — Սրանք հարկավոր չեն, — ասավ նա կիեյան ափսեների մասին: — Սրանք՝ այո, — պետք է դնել գորգերի մեջ, — ասավ նա սաքտոնական սկուտեղների մասին:

— Թող, նատաշա, հե՛րիք է. մենք կդասավորենք, — հանդիմաննքով ասավ Սոնյան:

— Է՞՞, օրիորդ, — ասավ սպասավորապետը:

Բայց նատաշան անձնատուր չեղավ. նա բոլոր իրերը դուրս

թափեց արկղներից և սկսեց նորից արագորեն դասավորել, վճռելով, որ տնային վատ գորգերը և ավելորդ ամանեղենը շպետք է վերցնել: Երբ բոլորը դուրս հանվեց, սկսեցին նորից դասավորել: Եվ, իրոք դուրս թափելով գրեթե բոլոր էժանագինը, ա՛յն, ինչ շարժեր վերցնել-տանել, բոլոր արժեքավորը դասավորեցին երկու արկղում: Զէր փակվում միայն գորգերի արկղի կափարիչը: Կարելի էր մի քանի իրեր հանել, բայց նատաշան պնդեց իրենը: Նա դասավորում էր, վերադասավորում, սեղմում, ստիպում էր բուժետապանին ու Պետյային (որին նա հրապուրել-մասնակից էր դարձրել դասավորման գործին) սեղմել կափարիչը և ինքը հուսահատական ճիգեր էր գործադրում:

— Ի՞ն, հերիք է, նատաշա, — ասում էր նրան Սոնյան: — Տեսնում եմ, դու իրավացի ես, բայց վերեկից մեկը վերցրուի

— Չեմ ուզում, — գոռում էր նատաշան, մեկ ձեռով պահելով քրտնած դեմքին իշած մազերը, մյուսով սեղմելով գորգերը: — Ի՞ն, սեղմիր է, Պետկա, սեղմի՛ր: Վասիլիչ, հո՛ւպ տուր, — բոռում էր նա:

Գորգերը սեղմկեցին, և կափարիչը փակվեց: Նատաշան, ծափ զարկելով, ծաց ուրախությունից, և արցունքները ցայտեցին նրա աշխերից: Բայց դա մի վայրկյան տևեց: Նա անմիշապես ձեռնարկեց մի ուրիշ գործի, և նրան արդեն լիովին հավատում էին, և կոմսն էլ շբարկացավ, երբ նրան ասին, թե նատալիա իլինիշնան փոխել է նրա կարգադրությունը, և սպասավորները գալիս էին նատաշային հարցնելու՝ կապկան՝ իրերը սայլի վրա թե ոչ, և արդյոք լա՞վ են դրված: Նատաշայի կարգադրությունների շնորհիվ գործը հաջողվում էր. մնացել էին անպետք իրերը և ամենասեղմ կերպով դասավորվել էին և մենարժեքավորները:

Բայց որքան էլ աշխատում էին բոլոր սպասավորները, մինչեւ ուշ գիշեր դեռ բոլորը չէին կարողացել դասավորել: Կոմսուհին քնեց, և կոմսը, մեկնումը հետաձգելով մինչև առաւելու, գնաց բնելու:

Սոնյան, նատաշան, առանց հանվելու, քնեցին բազմոց արանում:

Այդ գիշեր էլի նոր վիրավոր էին տանում Պովարսկայա փողոցով և Մավրա Կուզմինիշնան, դարբասի մոտ կանգնած

լինելով, նրան բերել տվեց Բոստովների մոտ։ Այդ վիրավորը, Մավրա Կուզմինիշնալի ենթադրությամբ, շատ նշանավոր մարդ էր։ Նրան տանում էին մի կառքով, որ բոլորին ծածկված էր ծածկոցով և կառքի գլուխն էլ վրա էր բերված։ Կառապանի կողքին նստած էր մի ծերունի՝ մի պատկառելի սենեկապահ։ Ետքեց՝ սալլակով գնում էին բժիշկն ու երկու զինվոր։

— Համեցեք մեզ մոտ, համեցեք։ Աղան ընտանիքով գը-նում է, ամբողջ տունը դատարկ է, — ասաց պառավը, դիմելով ծերունի սպասավորին։

— Է, — պատասխանեց սենեկապահը, հոգոց արձակելով, — տեղ հասցնելու հույս չունենք։ Մենք էլ տուն ունենք Մոսկվայում, բայց հեռու է, և մարդ էլ չի պարում։

— Համեցեք մեզ մոտ, մեր աղան ամեն ինչ ունի, համեցեք, — ասում էր Մավրա Կուզմինիշնան։ — Ի՞նչ է, շա՞տ է տկար, — ավելացրեց նա։

Սենեկապահը ձեռք թափ տվեց։

— Հույս չունենք տեղ հասցնելու։ Պետք է բժշկին հարցնել։

Եվ սենեկապահն իջավ կառապանի կողքից ու մտտեցավ սայլակին։

— Լավ, — ասավ բժիշկը։

Սենեկապահը նորից մոտեցավ կառքին, նայեց նրա ներս, գլուխն օրորեց, կառապանին կարգադրեց կառքը քշել բակը և ինքը կանգնեց Մավրա Կուզմինիշնայի կողքին։

— Տե՛ր Հիսուս, Քրիստոս, — ասավ Մավրա Կուզմինիշնան, և առաջարկեց վիրավորին տանել տուն։

— Աղաները ոչինչ չեն ասի... — ասավ նա։

Բայց պետք էր սանդուղքով բարձրացնելուց խռուտափել, և այդ պատճառով վիրավորին տարան տան կից շնչը եւ պառկեցրին ու-ու- Տիոս-ի նախկին սենյակում։ Այդ վիրավորը իշխան Անդրեյ Բալկոնսկին էր։

## XV

Հասավ Մոսկվայի վերջին օրը։ Աշնանային պարզ, ուրախ եղանակ էր։ Օրը կիրակի էր։ Թիշպես և սովորական կիրակի օրերը, բոլոր եկեղեցիներում պատարագի զանգահարություն

էր։ Ոչ ոք, թվում էր, դեռ չեր կարողանում հասկանալ, թե ի՞նչ է սպասում Մոսկվային։

Միայն հասարակության վիճակի երկու ցուցանիշ էին արտահայտում այն զրությունը, որն ապրում էր Մոսկվան։ — ամբոխը, այսինքն՝ ալքատ մարդկանց դասը, և մթերքների գները։ Գործավորները, տան ու ճորտ սպասավորները և գյուղացիները մեծ բազմությամբ, որին խառնվել էին աստիճանավորներ, սեմինարիստներ, ազնվականներ, այդ օրը՝ վաղ առավոտ գուրս եկան գնացին Տրի Գորի։ Կանգնելով այնտեղ և տեսնելով, որ երկար սպասելուց հետո Ռաստոպչինը չեկալ ու համոզվելով, որ Մոսկվան հանձնվելու է թշնամուն, այդ բազմությունը ցրվեց Մոսկվայում՝ օղետներն ու ճաշարանները։ Այդ օրվա գները նույնպես ցուց էին տալիս իրերի զրությունը։ Զենքի, ուսուռ, սայլերի ու ձիերի գները քանի գնում էին, այնպես որ կեսօրին եղան դեպքեր, որ թանկադին ապրանքները, ինչպես մահուդը, կառապանները կիսում էին զուրս, իսկ գյուղացու մի ձիու համար վճարում էին 500 ռուբլի։ Կարասինները, հայելինները, բրոնզե իրերը տալիս էին ձրի։

Ռոստովների հանգիստ և հին տան մեջ կյանքի նախսկին պայմանների քայլայումն արտահայտվում էր շատ թույլ։ Մարդկանց նկատմամբ միայն այն եղավ, որ մեծ թվով սպասավորներից գիշերը երեք մարդ կորավ, բայց ոչինչ չեր գոլացվել, և իրերի գների նկատմամբ պարզվեց այն, որ զյուղերից եկած 30 սայլը՝ ահազին հարստություն էր, որին շատերն էին նախանձում և որոնց համար Ռոստովներին առաջարկում էին հսկայական գումարներ։ Բացի այն, որ այդ սայլերի համար հսկայական գումարներ էին առաջարկում, երեկոյան և սեպտեմբերի 1-ին, վաղ առավոտյան Ռոստովների բակն էին գամփս վիրավոր սպանների կողմից ուղարկված սպասակներն ու ֆառուաները և զալիս էին իրենք՝ Ռոստովների և հարևան տներում գտնվող վիրավորներ ու խնդրում Ռոստովների մարդկանց հոգ տանել, որ իրենց սամ տան՝ Մոսկվայից գուրս դալու։ Սպասավորապեսը, որին դիմում էին նման խնդրանքներավ, թեև խզնում էր վիրավորներին, վճռապես մերժում էր, առելով թե անգամ չի համարձակվում այլ ձասին հայտնել կոմ-

ահն: Որքան էլ խղճակի լինեին մնացող վիրավորները, ակներե էր, որ եթե մի սայլ տայիր, պատճառ չկար մի ուրիշ սայլ և բոլոր սայլերը շտալու, — տալ և իրենց կառքերը երեսուն սայլը չէին կարող բոլոր վիրավորներին փրկել, իսկ ընդհանուր ազետի մեջ չէր կարելի շմտածել իր և իր ընտանիքի մասին և Այսպես էր մտածում սպասավորապետը իր աղայի փոխարեն:

Սեպտեմբերի 1-ի առավոտյան զարթնելով, կոմս Իլյա Անդրեյիշը կամացուկ գուրս եկավ ննջարանից, որ շզարթեցնի առավոտյան դեմ միայն քնած կոմսուհուն, և իր մանիշակագույն մետաքսե խալաթը հագին գուրս եկավ պատշամբէ Սայլերը բեռնաբարձ, կապկաված-պատրաստ կանգնած էին բակում: Մուտքի առաջ կանգնած էին կառքերը: Սպասավորապետը շրամուտքի առցը կանգնած խոսակցում էր մի ծեր ըսպասյալի և մի ջահել գունատ, թեր կապած սպայի հետ: Հսպասավորապետը, կոմսին տեսնելով, սպային ու սպասյակին նշանակալից ու խիստ նշան արավ, որ նրանք հեռանան:

— Հը, ամեն ինչ պատրաստ է, Վասիլիչ, — ասավ կոմսը, ճակատը շփելով և բարեհոգությամբ նայելով սպային ու սպասյակին և նրանց զլխով անելով: (Կոմսը սիրում էր նոր դեմքեր):

— Թեկուզ հիմա կարող ենք լծել, ծերդ պայծառափայլություն:

— Դե, շատ լավ է, հիմա կոմսուհին էլ կզարթնի, աստուծով ճանապարհ կընկնենք: Դուք ի՞նչ էիք ցանկանում, պարոնայք, — դիմեց նա սպային: — Դուք իմ տա՞նն եք:

Սպան ավելի մոտեցավ: Նրա գունատ դեմքը հանկարծ շառագունեց:

— Կոմս, բարի եղեք, թույլ տալ ինձ... ի սեր աստծո... մի կերպ տեղափորվել ձեր սայլերից մեկի վրա: Ես հետո ովհնչ շունեմ... ես սայլի վրա կնստեմ, միևնույն է...

Սպան դեռ չէր վերջացրել, երբ սպասյակը նույն խնդրանքով՝ իր պարոնի համար դիմեց կոմսին:

— Ախ, այո, այո, այո, — արագ-արագ խոսեց կոմսը: — Ես շատ, շատ ուրախ եմ: Վասիլիչ, կարգադրիք, որ այնտեղ մի կամ երկու սայլ դատարկեն, այնտեղ... ինչ-որ... ինչ հարկավոր է... — Ինչ-որ անորոշ արտահայտություններով, ինչ-որ հրամայելով, ասավ կոմսը:

— 400 —

Բայց նույն վայրկյանին սպայի արտահայտած ջերմ շրջորհակալությունն արդեն հաստատեց այն, ինչ հրամայեց նատ Կոմսը նայեց իր շուրջը, բակում, դարրասում, կից շենքի լուսամուտում երեսում էին վիրավորներ ու սպասյակներ: Նրանք բոլորը նայում էին կոմսին և շարժվում էին դեպի պատշգամբը:

— Համեցեք, ծերդ պայծառափայլություն, գալլերեյան: այնտեղ ինչպես ն կհրամայեք պատկերների մասին, — ասավ սպասավորապետը:

Եվ կոմսը նրա հետ միասին մտավ տուն, կրկնելով իր կարգադրությունը, թե մեկնել խնդրող վիրավորներին շմերժի:

— Է, ինչ կա որ, կարելի է որոշ բան իշեցնել, — ավելացրեց նա կամացուկ, խորհրդավոր ձայնով, կարծես վախենալով, որ որևէ մեկը իր խոսքերը կլսի հանկարծ:

Ժամը 9-ին կոմսուհին զարթնեց, և Մատրյոնա Տիմոֆեենան, նրա նախկին սպասուհին, որ կոմսուհու նկատմամբ կատարում էր ժանդարմների շեֆի պաշտոն, եկավ իր նախկին օրիորդին հայտնելու, թե Մարիա Կառլովնան շատ վիրավորված է, և թե օրիորդների ամառային զգեստները շի կարելի այստեղ թողնել: Կոմսուհու հարց ու փորձից հետո թիտ-մե Schoss ինչո՞ւ է վիրավորված, պարզվեց, որ նրա սընդուկն իշեցրել էին սայլից, և բոլոր սայլերի բեռները արձակում իշեցնում են և տանում են վիրավորներ, որ կոմսը, իրեն հատուկ բարեհոգությամբ, կարգադրել է վերցնեն տանեն իրենց հետ: Կոմսուհին կարգադրեց ամուսնուն կանչել իր մոտ:

— Այս ի՞նչ եմ լսում, բարեկամս, իրերը նորից իշեցնո՞ւմ են:

— Գիտես, ու շերեգ<sup>1</sup>, ես այս ինչ էի ուզում ասել քեզ... ու շերեգ կոմսուհու... մի սպա էր եկել մոտս, խնդրում էր, որ մի քանի սայլ տամ վիրավորների համար: Չէ որ դա հոգեշահ գործ է, իսկ ի՞նչ կլինի, եթե նրանք մնան, մտածիր... իսկապես, մեր բակում, մենք ինքներս ենք նրանց կանչել, սպասեր կան... Գիտես, կարծում եմ, իսկապես, ու շերեգ... թող նրանց տանեն... ինչո՞ւ ենք շտապում...

Կոմսը վեհերոտ ասավ այդ, ինչպես խոսում էր միշտ, երբ բանը վերաբերում էր փողին: Իսկ կոմսուհին ընտելացել էր այդ

1 Սիրելիս:

տանին, որը միշտ նախորդում էր մի գործի, որ պիտի քայլայեր եւեխաներին, մի որևէ գալլերեայի, զերմոցի կառուցում, տը-նային թատրոնի կամ երաժշտախմբի կազմակերպում, և ընտե-լացել էր և իր պարտքն էր համարում միշտ հակառակել այն քանին, ինչ արտահայտում էր ամուսնու այդ վեհերուտ տոնը:

Կոմսուհին ընդունեց իր հնագանդ-արտասվագին տեսքը և ասավ ամուսնուն.

— Լսիր, կոմս, դու բանը հասցրիր այնտեղ, որ տան հա-մար էլ ոչինչ չեն տալիս, իսկ հիմա էլ մեր ամբողջ — երեխա-ւերի — կարողությունը ուզում ես փշացնել: Զէ որ դու ինք ես ասում, թե տանը 100 հազարի բարիք կա: Ես, բարեկամս, համաձայն շեմ և համաձայն շեմ: Կամքը քոնն է: Վիրավորներին օդնելու համար կառավարություն կա: Նրա՞նք գիտեն: Տես. Հրե՞ մեր դիմացը՝ Լոպուխինները դեռ երեք օր առաջ ամեն ինչ մաքուր կրել-տարել են: Այ ինչպես են գործ անում մարդիկ: Հիմարը մենակ մենք ենք: Եթե ինձ շես խզճում, գոնե երե-խաներիդ խղճա:

Կոմսը ձեռները թափահարեց, և առանց մի բառ ասելու, դուրս եկավ սենյակից:

— Հայրիկ, այդ ինչի՞ մասին եք խոսում, — ասավ նա-տաշան, որ ծնողների ետևից մտել էր մոր սենյակը:

— Ո՛չ մի բանի մասին: Քո ի՞նչ բանն է, — բարկացած ասավ կոմսը:

— Ոչ, ես լսեցի, — ասավ նատաշան: — Իսկ ինչո՞ւ մայ-րիկը չի ուզում:

— Քո ի՞նչ բանն է, — բոռաց կոմսը:

Նատաշան մոռեցավ լուսամուտին և մտածմունքի մեջ ընկավ:

— Հացրիկ, Բերգն եկավ մեր տան, — ասավ նա, լուսամու-տից դուքս նայելով:

## XVI

Բերգը, Ռոստովների փեսան, արգեն գնդապետ էր՝ Վլագի-միրն ու Աննան վզին և էլի նույն՝ երկրորդ կորպուսի շատրւի պիտի առաջին բաժանմունքի օգնականի հանդիսատ ու համելի պաշտոնն էր վարում:

Սեպտեմբերի 1-ին նա բանակից եկավ Մոսկվա:

Նա Մոսկվայում անելիք չուներ, բայց նկատելով, որ բո-լորս բանակից խնդրում են Մոսկվա գնալ և այնտեղ ինչ-որ բան են ասում, ինքն էլ թուլլություն խնդրեց տան և ընտանիքի գործերով մեկնելու:

Բերգն իր կուշտ, զույգ ձիերով լծած եռանդակով, ճիշտ այնպիսին, ինչպիսին ուներ մի իշխան, մոտեցավ իր աներոշ տանը: Նա ուշադիր նայեց բակում գտնվող աայլերին և, սան-դուլքները բարձրանալով, գրավանից հանեց մաքուր թաշկի-նակն ու հանգուց կապեց:

Նախասենյակից Բերգը սահուն, անհամբեր քայլերով ներս ընկավ հյուրասրահը և գրկեց կոմսին, համբուրեց նատաշայի ու Սոնյայի ձեռքը և հապճեպ հարցրեց մայրիկի առողջությունը:

— Հիմա ի՞նչ առողջություն: Դեռ, պատմիր տեսնենք, — ասավ կոմսը, — զորքերն ի՞նչ են անում: Նահանջո՞ւմ են, թե դարձալ կոփէ է լինելու:

— Մենակ նախահավիտենական աստվածը, հայրիկ, — ասավ Բերգը, — կարող է վճռել հայրենիքի բախտը: Բանակը ընկված է հերոսության ոգով, և հիմա ղեկավարներն, այս-պես ասած, հավաքվել են խորհրդակցության: Ի՞նչ է լինելու, հայտնի չէ: Բայց ես ձեզ կասեմ առհասարակ, հայրիկ, այդ-պիսի հերոսական ոգի, ուստի զորքի իսկական-հինավուրց արիու-թյունը, որ նրանք ցույց տանի կամ ի հայտ բերին շեմ-ի այդ կոլում, շկա ոչ մի արժանի խոսք, որպեսզի նկարագրես նը-րանց... Ես ձեզ կասեմ, հայրիկ (նա իր կրծքին խփեց ճիշտ այնպես, ինչպես խփել էր իր ներկայությամբ պատմություն անող մի գեներալ, թեև փոքր-ինչ ուզ, որովհետև նա կրծքին պիտի խփեր «ոռւս զորքը» խոսքերի վրա), — ես ձեզ կասեմ անկեղծորեն, որ մենք՝ պետերս ոչ միայն ստիպված չեինք զինվորներին առաջ քշել կամ նման բան, այլև մենք զուով էինք կարողանում զագել այդ, այդ... այս, արթ և հինավուրց քաշագործությունը, — ասավ նա արագախոսությամբ: — Գե-ներալ Բարկլայ-դե-Տոլլին իր կյանքը զռհաբերում էր ամեն տեղ զորքի սուաջ, կասեմ ես ձեզ: Իսկ մեր կորպուսը տեղա-վորված էր լիուն լանջին: Կարո՞ղ եք երևակայել:

Եվ այստեղ Բերգը պատմեց այն բոլորը, ինչ հիշում էր այդ ժամանակաընթացքը բուռն լանջին: Կարո՞ղ եք երևակայել:

տաշան առանց հայացքը խոնարհելու, որը շփոթում էր Բերդին, կարծես նրա դեմքին ինչ-որ մի հարցի լուծում որոնելով, նայում էր նրան:

— Այդպիսի հերոսություն առհասարակ, որ ցույց տվին ուսև մարտիկները, դժվար է պատկերացնել և ըստ արժանվույն գովել, — ասավ Բերգը, նայելով Նատաշային և, ցանկանալով կարծես նրա սիրու շահել, ժպտաց ի պատասխան նրա համար նայվածքի... — Ռուսաստանը Մոսկվայում չի, այլ նրա սրդիների սրտերում: Այդպես է հայրիկ, — ասավ Բերգը:

Այդ ժամանակ բազմոցարանից հոգնած ու դժգոհ տեսրով դուրս եկավ կոմսուհին: Բերգն արագորեն ցատկեց, համբուրեց կոմսուհու ձեռքը, հարցրեց նրա առողջությունը և, գլխի շարժումով իր կարեկցանքը հայտնելով, կանգնեց նրա կողքին:

— Այո, մայրիկ, ես ճշմարիտը կասեմ ձեզ. ծանր և տխուր ժամանակներ են ամեն մի ոռւսի համար: Բայց ինչո՞ւ անհանգստանալ այդպես: Դուք դեռ կարող եք մեկնել:

— Ես չեմ հասկանում՝ մարդիկ ինչ են անում, — ասավ կոմսուհին, դիմելով ամուսնուն, — ինձ հենց նոր հայտնեցին, թե դեռ ոչինչ պատրաստ չէ: Իսկ որևէ մեկը չէ որ պետք է կարգադրություն անի: Այ և կցավես Միտենկայի համար: Մրա վերջը շկա՞:

Կոմսն ուզեց ինչ-որ ասել, բայց, ըստ երկույթին, հրաժարվեց այդ մտքից: Նա ելավ աթոռից ու գնաց դեպի դուրս:

Բերգն այդ ժամանակ, կարծես նրա համար, որ քիթը մաքրի, թաշկինակը հանեց գրապնից և, հանգույցին նայելով, մտածեց, տխուր ու նշանակալից գլուխն օրորելով:

— Իսկ ես, հայրիկ, ձեզ մի մեծ խնդիրք եմ անելու, — ասավ նա:

— Հըմ... — ասավ կոմսը, կանգ առնելով:

— Հիմա անցնում էի Յուսուպովի տան մոտով, — ծիծաղելով ասավ Բերգը: — Կառավարիչը, որ իմ ծանոթն է, դուրս վագեց և խնդրում է, թե որևէ բան չե՞ք գնի արդյոք: Ես ներս մտա, գիտեք, հետաքրքրությունից, և մի փոքրիկ շիփոներկա ու տուալետ տեսա: Դուք գիտեք, թե Վերան ինպես էր ցանկանում այդ և ինչպես մենք վիճում էինք այդ մասին: (Բերգն ակամա անցավ իր բարեկեցությանը վերաբերող ուրախ տոսնի, երբ սկսեց խոսել շիփոներկայի և տուալետի

մասին): — Եվ ի՞նչ հիանալի բան է. առաջ է քաշվում և փակի գաղտնիք ունի, գիտե՞ք: Իսկ վերոշկան վաղուց էր փափագում: Ուզում եմ նրան այսպես մի սյուրպիզ անել: Ես տեսա այնտեղ ձեր բակում շատ գյուղացիներ կան: Մեկին, խնդրեմ, արվեք ինձ, ես նրան լավ կվարձատրեմ և...

Կոմսը գեմքը կնճռեց և հազար:

— Խնդրեցեք կոմսուհուց, ես դրանով չեմ զբաղվում:

— Եթե դժվար է, խնդրեմ, հարկավոր չէ... ասավ Բերգը: — Ես վերայի համար միայն շատ կցանկանայի:

— Այս, կորե՛ք գրողի ծոցը, գրողի ծոցը, գրողի ծոցը... — գոռաց ծեր կոմսը: — Ես գլուխս կորցրել եմ եվ նա դուրս եկավ սենյակից:

Կոմսուհին լաց եղավ:

— Այո, այո, մայրիկ, շատ ծանր ժամանակներ են, — ասավ Բերգը:

Նատաշան դուրս եկավ հոր հետ միասին և, կարծես ինչ-որ բան դժվարությամբ կշռադատելով, սկզբում գնաց նրա ետեղից, իսկ հետո վագեց ներքեւ:

Մուտքի առաջ կանգնած էր Պետյան, որ զբաղված էր Մոսկվայից հեռացող մարդկանց զինումով: Բակում առաջվա պիս կանգնած էին բեռնաբարձ սայլերը: Նրանցից երկուսի կապերն արձակված էին, և նրանցից մեկի վրա էր բարձրանում մի սպա՝ իր սպասալի օգնությամբ:

— Դու գիտե՞ս ինչի համար, — հարցրեց Պետյան Նատաշայից:

(Նատաշան հասկացավ, որ Պետյան նկատի ուներ այն, թե ինչի համար է հայրը կովել մոր հետ): Նատաշան շպատասխանեց:

— Նրա համար, որ հայրիկն ուզում էր բոլոր սայլերը տալ վիրավորներին, — ասավ Պետյան: — Ինձ Վասիլիշն ասավ: Հստ իս...

— Հստ իս, — հանկարծ գրեթե գոռաց Նատաշան, շարացած դեմքը գեպի Պետյան դարձնելով, — ըստ իս, այդ մի այնպիսի զզվելի, մի այնպիսի գարշելի բան է, այնպիսի.... ես չգիտեմ: Մի՞թե մենք ինչ-որ գերմանացիներ ենք...

Նրա կոկորդը դողաց զղաձական նեկեկանքներից, և նա, վախենալով թուլանալ և իգուր վատնել կատաղության իր

Հուզմունքը, շուր եկավ և արագությամբ բարձրացավ սանդուղքով:

Քերզը նստել էր կոմսուհու կողքին և հարազատի հարգանքով միխթարում էր նրան: Կոմսը ծխամորճը ձեռին գնում գալիս էր սենյակում, երբ նատաշան կատաղությունից այլանդակված դեմքով, փոթորկի պես, ներս ընկավ սենյակը և արագ քայլերով մոտեցավ մորը:

— Սա գարշելի՞ բան է: Սա զգվելի է, — գոռաց նա: — Զի կարող պատահել, որ դուք հրամայած լինեք:

Քերզն ու կոմսուհին տարակուսած ու վախեցած նայեցին նրան: Կոմսը կանգ առավ լուսամուտի մոտ, ականջ դնելով:

— Մայրիկ, այդ չի կարելի. տեսեք, թե բակում ի՞նչ է կատարվում, — գոռաց նա: — Նրանք մնո՞ւմ են...

— Ի՞նչ է պատահել քեզ: Ո՞վքեր են նրանք: Ի՞նչ ես ուզում:

— Վիրավորները, այս ովքերը: Դա չի կարելի, մայրիկ, գառ ոչ մի բանի նման չի... Ոչ, մայրիկ, սիրելիս, դա այն չի, ներեցեք, ինդրեմ, սիրելիս... Մայրիկ, է, մեզ ինչ մենք ի՞նչ ենք տանելու, մի տեսեք, թե բակում ի՞նչ է կատարվում... Մայրիկ... Այդ չի՝ կարող պատահել...

Կոմսը կանգնել էր լուսամուտի մոտ և, դեմքն առանց շըրջելու, լսում էր նատաշայի խոսքերը: Հանկարծ նա քթով ֆըսսացրեց և երեսը մոտեցրեց լուսամուտին:

Կոմսուհին նայեց աղջկան, տեսավ նրա՝ մոր փոխարեն ամաշած դեմքը, տեսավ նրա հուզումը, հասկացավ, թե ինչո՞ւ մարդն այժմ չեր նայում իրեն, և շփոթված տեսքով շուրջը նայեց:

— Ախ, արեք ինչպես կուզեք: Մի՞թե ես որևէ մեկին խանգարում եմ, — ասավ նա, գեռ միանգամից անձնատուր լըմինելով:

— Մայրիկ, սիրելիս, ներեցեք ինձ...

Բայց կոմսուհին հրեց աղջկան և մոտեցավ կոմսին:

— Mon cher, զու կարգադրիր ինչպես պետք է... Զէ որ ես զգիւեմ այդ, — ասավ նա, մեղավորի պես աշքերը խոնարհելով:

— Զգերը... ձգերը հավին սովորեցնում են... — երջանիկ արցանիների միջից ասավ կոմսը և գրկեց կնոջը, որն ուրախ էր նրա կրծքի վրա թարցնել իր ամոթիած դեմքը:

— 406 —

— Հայրի՞կ, մայրի՞կ: Կարելի՞ է կարգագրել: Կարելի՞ է... — Հարցրեց նատաշան: — Մնար այնուամենայնիլ ամենահարկավոր բանները կվերցնենք, — ասավ նատաշան:

Կոմսը դրականապես գլխով արագ նրան, և նատաշան այն արագ վագքով, որով նա վազում էր բոնելախաղի ժամանակ, վտղեց դաշիճով նախասենյակ և սանդուղքով բակը:

Մարդիկ հավաքվել էին նատաշայի մոտ և շին կարուչանում հավատալ նրա բերած տարօրինակ կարգադրությունը, մինչև որ ինքը կոմսը կնոջ անունից հաստատեց այդ կարգադրությունը, թե բոլոր սայլերը պետք է տալ վիրավորներին, իսկ սնդուկները տանել խորդանոցները: Կարգադրությունը հասկանալով՝ սպասավորներն ուրախությամբ ու հոգածությամբ ձեռնարկեցին այդ նոր գործին: Սպասավորներին այժմ այդ ոչ միայն տարօրինակ չէր թվում, այլ ընդհակառակը, թվում էր, թե այլ կերպ էլ չէր կարող լինել, ճիշտ այնպես ինչպես քառորդ ժամ դրանից առաջ ոչ ոքի ոչ միայն տարօրինակ չէր թվում, որ վիրավորներին թողնում են, իրերը վերցնում, այլ թվում էր, որ այլ կերպ չէր էլ կարող լինել:

Բոլոր տնեցիները, կարծես հատուցանելով այն բանի համար, որ առաջ չէին արել այդ, հոգածությամբ ձեռնարկեցին այդ նոր աշխատանքին, — վիրավորներին տեղավորելու որոշին: Վիրավորները զուրս էին սողում իրենց սենյակներից և ուրախ գունատ դեմքերով շրջապատում սայլերը: Հարեւան տներում նույնպես լուր տարածվեց, թե սայլեր կան, և մյուս տներից սկսեցին վիրավորներ գալ Ռոստովների բակը: Շատ վիրավորներ խնդրում էին՝ իրերը չինցնել և իրենց նստեցնել միայն նրանց վրա: Բայց իրերը թափելու մի անգամ արգին սկսված աշխատանքն այլևս չէր կարող կանգ առնել: Միենակն էր՝ բոլոր թողնել թե կեսը: Բակում ընկած էին չվերցրած սնդուկներ, որ լիքն էին ամանեղենով, բրոնզե իրերով, նկարներով, հայելիներով, որ այնպես խնամքով գասավորել էին անցյալ գիշեր, և բոլորը փնտրում ու հնարավոր էին համարում թողնել այս և այն և էլի ու էլի սայլեր տալ:

— Գետ շոգու հոգու կարելի է վերցնել, — ասում էր կառագարելով, — ես տալիս եմ իմ սայլակը, թե չէ ո՞ւր թողնես այս մարդկանց:

— 407 —

— Իմ հագուստեղենի սայլակն էլ տվեք, — ասում էր կոմսուհին: Դունյաշան ինձ հետ կնստի իմ կառեթը:

Տիին նաև հագուստեղենի սայլակը և ուղարկեցին այն երկու տուն հեռու ապրող վիրավորների ետևից: Բոլոր տնեցիներն ու սպասավորները ուրախ աշխույժ տրամադրության մեջ էին: Նատաշան գտնվում էր խանդավառ-երջանիկ ուրախության մեջ, որ վաղուց չէր ապրել:

— Իսկ այս որտե՞ղ կապենք, — ասում էին սպասավորները, մի սնդուկ դնելով կառեթի նեղ ետակողմը: — Գոնե մի սայլ պիտի թողնել:

— Դրա մեջ ի՞նչ կա, — հարցրեց Նատաշան:

— Կոմսի գրքերն են:

— Թողեք, Վասիլիշը կվեցնի՝ կպահի: Դա հարկավոր չէ: Կառքը լիբն էր մարդկանցով. կասկածում էին, թե Պյոտր Իսիդը որտեղ պիտի նստի:

— Կառապանի կողքին: Կառապանի կողքին չէ՝ Պետյա, — գոռում էր Նատաշան:

Սոնյան նույնպես աշխատում էր անդադար. բայց նրա հոգածության նպատակը հակադիր էր Նատաշայի նպատակին. Նա հավաքում էր այն իրերը, որոնք պիտք է մնային, ցուցակագրում էր դրանք կոմսուհու ցանկությամբ և աշխատում էր որքան կարելի է շատ բան վերցնել հետք:

## XVII

Ժամը 2-ին Ռոստովների դարսած ու բարձած շորս կառքը կանգնած էր մուտքի առաջ: Վիրավորների սայլերը մեկը մյուսի ետևից դուրս էին գալիս բակից:

Այն կառքը, որով տանում էին իշխան Անդրեյին, մուտքի առևելից անցնելիս՝ գրավեց Սոնյայի ուշադրությունը, որ մի աղջկա հետ նստելու տեղ էր պատրաստում կոմսուհու համար նրա ահագին բարձր կառեթում, որը կանգնած էր մուտքի առաջ:

— Այդ ո՞ւմ կառքն է, — հարցրեց Սոնյան, գլուխը կառեթի լուսաւից հանելով:

— Իսկ դուք մի՞թե չգիտեք, օրիորդ, — պատասխանեց սպասուհին: — Վիրավոր իշխանն է. նա գիշերել է մեզ մոտ և մեզ հետ էլ գնում է:

— Բայց դա ո՞վ է, ազգանունն ինչպե՞ս է:

— Հենց մեր նախկին փեսացուն: Իշխան Բալկոնակին, — հոգոց քաշելով պատասխանեց սպասուհին: — Ասում են՝ մահամերձ է:

Սոնյան դուրս ցատկեց կառեթից և վագեց կոմսուհու մոտ: Կոմսուհին արդեն ճանապարհորդական հագուստով, շալը վրան ու շլյապան գլխին, հոգնած գնում-գալիս էր հյուրասրահում, տնեցիներին սպասելով, որ միասին նստեն փակ դուներով սենյակում և մեկնելուց առաջ աղոթեն: Նատաշան սենյակում չէր:

— Մատոն, — ասավ Սոնյան, — իշխան Անդրեյն այստեղ է վիրավոր է, մահամերձ: Նա էլ է գալիս մեզ հետ:

Կոմսուհին աշքերը բաց արակ վախեցած և, Սոնյայի ձեռք բռնելով, ետ նայեց:

— Նատաշա՞ն, — խոսեց նա:

Թե՛ Սոնյայի, թե՛ կոմսուհու համար այդ լուրն առաջին րոպեին միայն մի նշանակություն ուներ: Նրանք գիտեին իրենց Նատաշային, և այն սարսափը, թե ի՞նչ կպատահի Նատաշային այդ լուրն առնելիս, խլացնում էր ամեն մի կարեկցություն գեպի այն մարդը, որին երկուսով էլ սիրում էին:

— Նատաշան գեռ ոչինչ շգիտի. Բայց իշխանը գալիս է մեզ հետ, — ասավ Սոնյան:

— Ասում ես՝ մահամե՞րձ է:

Սոնյան գլխով արակ:

Կոմսուհին գրկեց Սոնյային և լաց եղավ:

«Աստծո ճանապարհներն անքննելի՛ են», մտածեց նա, զգալով, որ ամեն բանում, ինչ արվում էր այժմ, սկսում էր երեան գալ մարդկանց հայացքից թաքնված ամենակարող ձևոքը:

— Դե, մամա, ամեն ինչ պատրաստ է: Դուք այդ ինչի՞ մասին եք, — հարցրեց Նատաշան աշխույժ գեմքով, վագեվազ սենյակ մտնելով:

— Ոչ մի բանի, — ասավ կոմսուհին: — Պատրաստ է, գնանք: Եվ կոմսուհին կուացավ գեպի իր ոփդիկուլը, որ հուզված գեմքը թաքցնի. Սոնյան գրկեց Նատաշային և համբուրեց նրան,

Նատաշան հարցական նայեց նրան:

— Այս ի՞նչ է: Ի՞նչ է պատահել:

— Ոչինչ.... ոչ...

— Վա՛տ բան է ինձ համար: Ի՞նչ է, — հարցրեց զգայոն Նատաշան:

Սոնյան հոգոց բաշեց և ոչինչ չպատասխանեց: Կոմսը, Պետյան, ու-ու Schoss-ը, Մավրա Կուզմինիշնան, Վասիլիս մտան հյուրասրահ և դռները զնելով, բոլորը նստուեցին և անխոս, առանց մեկը մյուսին նայելու, մնացին մի քանի վայրկյան:

Կոմսն առաջինը վեր կացավ և, բարձրածայն հոգոց արձակնով, սկսեց երեսը խաչակնքել սրբապատկերի դիմաց: Բոլորը նույն արին: Ապա կոմսն սկսեց գրկել Մավրա Կուզմինիշնային և Վասիլիչին, որոնք մնում էին Մոսկվայում, և այն ժամանակ, երբ նրանք որսում էին նրա ձեռքը և համբուրության ուսուց, կոմսը ձեռը թեթևակի խփում էր նրանց մեջքին, ինչ-որ անորոշ, շոյող հանգստացնող խոսքեր ասելով: Կոմսուհին գնաց սրբապատկերների սենյակը, և Սոնյան նրան գտավ այնտեղ պատերի վրա հատ ու կենտ մնացած սրբապատկերների առաջ ծնկաշոր (ընտանիքում ավանդաբար շատ թանկագին համարվող սրբապատկերները տանում էին իրենց հետ):

Դուան առաջ և բակում մեկնող սպասավորները՝ դաշույն ու թուր կապած ծառաները, որոնց զինել էր Պետյան, վարտիքի ծայրերը ճտկավոր կոշիկների մեջ խրած և պինդ գոտեապնդված, հրաժեշտ էին տակիս նրանց, որոնք մնում էին:

Ինչպես և միշտ մեկնումների ժամանակ, շատ բան մոռացվել էր և այնպես չեր գրվել, և երկու հայդուկ լրկար ժամանակ կանգնել էին կառեթի բաց գուան ու աստիճանների երկու կողմը, պատրաստվելով նստեցնել կոմսուհուն, այն ժամանակ, երբ աղջիկները բարձերով ու կապոցներով տնից վազում էին դեպի կառեթն ու կառքը, դեպի եռանդակիլը, և ետ:

— Իրենց կյանքում ամեն ինչ կմոռանան, — առում էր կոմսուհին, — Դու գիտես չէ՛, որ ես այսպես չեմ կարող նրանել:

Եվ Դունյաշան, ատամներն իրար սեղմած ու առանց պատասխանելու, հանդիմանության արտահայտությունը ղեմքին, նետվեց գեպի կառեթը՝ նստատեղը կարգի բերելու:

— Ա՛խ, այս մարդիկ, — խոսեց կոմսը, զլուխն օրորելով: Սեր կառապան Եֆիմը, որի հետ միայն կոմսուհին սիրու էր անում տեղ գնալ, իր բարձր տեղում նստած, անգամ զբուխը չէր դարձնում նայելու, թե ի՞նչ է կատարվում իր ետերը, երեսնամյա իր փորձով նա զիտեր, որ գեռ շուտ չեն ասի առածովք, և երբ ասեն, ապա մի երկու անգամ պիտի կանգնեցնեն իրեն և ուղարկեն մոռացված իրերի ետևից, և զրանից հետո արդեն մի անգամ էլ կկանգնեցնեն, և կոմսուհին զլուխը կհանի լուսամուտից և Հիսուս-աստծու անունով կխնդրի զգույշ քշել զառիվայր տեղերում: Նա այդ զիտեր և այդ պատճառով իր ձիերից (մանավանդ շիկակարմիր Սոկոլից, որ սար խփում էր գետին և, որոճալով, սանձը կրծում) ավելի համբերատաթյամբ սպասում էր, թե ի՞նչ է լինելու: Վերջապես, բոլորը նստեցին, աստիճանները հավաքեցին և դրին կառեթի մեջ, դուռը փակվեց, մարդ ուղարկեցին արկղիկը բերելու, կոմսուհին գլուխը հանեց լուսամուտից և ասավ, ինչ հարկավոր էր Այդ ժամանակ Եֆիմը դանդաղորեն գլխարկը վերցրեց և բակաց երեար խաչակնքել: Ֆորեյտորը՝ և բոլոր ծառաները նույն արին: — Աստուծով, — ասավ Եֆիմը, գլխարկը գնելով, — Քշի՛ր: Ֆորեյտորը ձիերը շարժեց: Լծափալտի աջ կողքին լծված ձին վիզը ձգեց անուրի մեջ, բարձր ուսուստերը ճորնշացին, և կառքի թափքը երերաց: Լակեյը գնալու ժամանակ թռավ նստեց կառապանի կողքին: Բակից գուրս գալիս կառեթը ցնցվեց անհարթ սալահատակի վրա, նույնպես ցնցվեցին և մյուս կառքերը, և կառքերի խումբը շարժվեց փողոցովն ի վեր: Կառեթում, կառքերում և եռանդակում նստածները երեսները խաչակնքեցին՝ նայելով եկեղեցուն, որ դիմացն էր: Մոսկվայում մնացող ծառաները գնում էին կառքերի երկու կողմից, ճանապարհ գնելով նրանց:

Նատաշան շատ բիշ էր զգացել այդքան ուրախություն, ինչ զգում էր այժմ, կառեթում մոր կողքին նստած և դանգաղորեն իրենց կողքով անցնող լրվող, տագնապած Մոսկվայի պարթապներին նայելով: Նա երբեմն գլուխը հանում էր կառեթի լուսամուտից նայում ետ ու առաջ՝ վիրավորների երկար սայլախմբին, որ գնում էր նրանց ացգից: Գրեթե բալորից:

1 Կառեթի ձիերի առաջին զույգը թ. ողբ:

առաջ երևում էր նրան իշխան Անդրեյի՝ գլուխը վրա բերած կառքը: Նատաշան չգիտեր ո՞վ էր նրա մեզ, և ամեն անգամ, իրենց գումակի բռնած տարածությունը հասկանալու համար, աշքերով որոնում էր այդ կառքը: Նա գիտեր, որ այդ կառքը գտնվում էր բոլորից առաջ:

Կուղբինում՝ Նիկիտսկայից, Պրեսնայից, Պողնովյանսկայից հավաքվել էին մի քանի նույնպիսի կառախմբեր, ինչպիսին Թոստովների կառախումբն էր, իսկ Սադովյա փողոցով արդեն երկշարք կառքեր ու սայլեր էին գնում:

Անցնելով Սուլիմարկի աշտարակը, Նատաշան, որ հետաքըրքը բրությամբ դիտում էր անց ու դարձող ժողովրդին, հանկարծ ուրախացած ու գարմացած բացականչեց:

— Վայ: Մամա, Սոնյա, նայեցեք, նա' է:

— Ո՞վ, ո՞վ:

— Նայեցե՛ք, աստված վկա՝ Բեզուխո՞վն է, — ասավ Նատաշան, գլուխը հանելով կառեթի լուսամուտից և նայելով բարձրահասակ, կառապանի կաֆտան հագած մի գեր մարդու, որը, դատելով նրա քայլվածքից ու կեցվածքից, ըստ երեսութին, զգեստափոխված աղա էր, որ մի դեղնած, անմորու, Փրիկ շինել հագած ծերուկի հետ մտավ Մուլիմարկի աշտարակի կամարի տակ:

— Աստված վկա, Բեզուխովն է, կաֆտան հագած, ինչոր մի ծեղ մարդու հետ: Աստված վկա, — ասում էր Նատաշան, — տեսե՛ք, տեսե՛ք:

— Զէ, դա նա չի: Կարելի՞ է այդպիսի հիմարություն:

— Մամա, — ճշաց Նատաշան, — գլուխս կտրել կտամ, որ դա նա է: Ես ծեղ հավատացնում եմ: Կա'ց, կանգնիր, — ձայն տվեց նա կառապանին:

Բայց կառապանը շկարողացավ կառքը կանգնեցնել, որովհետև Մեշշանսկյա փողոցից դուրս եկան դարձյալ սայլեր ու կառքեր, և գոռացին Ծոստովների վրա, որ շարժվեն և ուրիշների ճանապարհը շկտրեն:

Իսկապես, թեև շատ ուշ արդեն, բոլոր Ծոստովները տեսան Պիեռին կամ մի մարդու, որ շատ նման էր Պիեռին՝ կառապանի կաֆտան հագած, որ գլուխը կախ ու լուրջ դեմքով գնում էր փողոցով, հետը մի փոքրիկ անմորու ծերուկ, որ լակեյի տեսք ուներ: Այդ ծերուկը նկատեց կառքերի լուսամուտից դուրս

— 412 —

հանված, իրեն նայող դեմքը և, ձեռը հարգալիր դիպցնելով Պիեռի արմունկին, ինչ-որ բան ասավ նրան, կառեթը ցույց տալով: Պիեռը երկար ժամանակ շէր հասկանում, թե ի՞նչ է ասում նա, — այնպես էր ինքը, ըստ երեսութին, խորասուզված իր մտքերի մեջ: Վերջապես, երբ հասկացավ ծերուկին, նայեց նրա ցույց տված ուղղությամբ և, նատաշային ճանաշելով, նույն վայրկյանին, առաջին տպավորությամբ տարպելով, արագ մոտեցավ կառեթին: Բայց, մի տասը քայլ անելով, ըստ երեսութին հիշեց ինչ-որ, ու կանգ առավ:

Նատաշայի՞ կառեթից դուրս եկած դեմքը փայլում էր հեզական գգվաննուով:

— Պյոտր Կիրիլիշ, զե մոտեցեք: Մենք ճանաշեցինք: Այդ զարմանալի է, — գոշում էր Նատաշան, ձեռը նրան մեկնելով: — Այդ գուք ինչպե՞ս: Ինչո՞ւ եք այդպես:

Պիեռը բռնեց մեկնած ձեռը և քայլելով (որովհետև կառեթը շարունակում էր շարժվել) անհարմար համբուրեց այն:

— Ի՞նչ է պատահել ձեզ, կոմս, — հարցրեց կոմսուհին զարմացած ու կարեկից ձայնով:

— Ի՞նչ, Ի՞նչ: Ինչո՞ւ համար: Մի հարցնեք ինձ, — ասավ Պիեռը և նայեց Նատաշային, որի շողուն, զվարթ հայացքը (Պիեռն զգում էր այդ, առանց նրան նայելու) ողողում էր նրան իր հարպուրանքով:

— Ի՞նչ եք անում, թե՝ մնալու եք Մոսկվայում:

Պիեռը լուր էր:

— Մոսկվայո՞ւմ, — ասավ նա հարցականորեն: — Այո, Մոսկվայում: Գնաք բարով:

— Ախ, կուզեի ես էլ տղամարդ լինել և անպայման մնալ ծեղ հետ: Ախ, որքան այդ լավէ է, — ասաց Նատաշան: — Մայրիկ, թույլ տուր, ես մնում եմ:

Պիեռը ցրված նայեց Նատաշային և ուզեց ինչ-որ բան ասել, բայց կոմսուհին ընդհատեց նրան.

— Դուք եղե՞լ եք կովոմ, մնենք լսեցինք:

— Այո, եղել եմ, — պատասխանեց Պիեռը: — Վաղը նորից կոհիլ է լինելու... սկսեց նա, բայց Նատաշան ընդհատեց նրան:

— Այդ ի՞նչ է պատահել, կոմս: Դուք ծեղ նման չեք...

— Ախ, մի հարցնենք, մի հարցնեք ինձ. ես ինքս ոչինչ

— 413 —

գիտեմ: Վաղը... ո՞չ: Գնաք բարով, գնաք բարով, — ասավ նա, — սարսափելի՝ ժամանակ է:

Եվ, կառեթից ետ մնալով, անցավ մայթը:

Նատաշան դեռ երկար գլուխը հանում էր լուսամուտից, լուսավորելով նրան իր գգվալից և փոքր-ինչ հեգնական, զբարթ ժպիտով:

## XVII

Պիեռ՝ տնից անհայտանալու օրից՝ երկրորդ օրն էր արդեն ապրում էր հանգույցյալ Բաղդեկի դատարկ բնակարանում: Ահա թե այդ ինչպես պատահեց:

Մուկվա վերադառնալու և կոմս Ռաստոպչյանի հետ տեսակցելու հետեւյալ օրը զարթնելով՝ Պիեռը երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ ո՛ւր է գտնվում և ի՞նչ են ուզում իրենից: Երբ նրան հայտնեցին, թե ընդունարանում իրեն սպասող մարդկանց հետ միահն իրեն սպասում է և մի ֆրանսացի, որը նամակ է բերել կոմսուհի թլենա Վասկենայից, հանկարծ նրան տիրեց շփոթմունքի ու անհուսության այն զգացումը, որին նա ընդունակ էր ենթարկվել: Նրան հանկարծ թվաց, թե այժմ ամեն ինչ վերջացած է, ամեն ինչ խառնվել է, քայլացվել, որ էլու արդար կա, ոչ մեղավոր, որ առջևում ոչինչ չի լինելու և որ այս դրությունից ոչ մի ելք չկա: Նա անքնականողեն ժամանակով ու ինչ-ոք բրթմնչալով, մերթ անօդնական դիրքով նստում էր բազմոցի վրա, մերթ վեր կենում, մոտենում դռանը և ճեղքից նայում դեպ ընդունարանը. մերթ, ձեռները թափահարելով, ետ էր դառնում և գիրքը ձեռն առնում: Սպասում ու պարապետը երկրորդ անգամ եկավ հայտնելու, թե կոմսուհուց նամակ բերող ֆրանսացին շատ է ցանկանում գոնե մի բարեկարգություն նրան, և որ Ի. Ա. Բաղդեկի այրու կողմից մարդ է եկել, խնդրում է գրքեր ընդունել, որովհետեւ ինքը՝ տիկին Բաղդեկան մեկնել է գյուղ:

— Ախ, այո, իսկույն, սպասիր... Կամ ոչ, ոչ, գնա ասա, որ իսկույն կգամ, — ասավ Պիեռը սպասավորապետին:

Բայց հենց որ սպասավորապետը դուրս գնաց, Պիեռը վերցրեց սեղանի վրա գրված շլյապան և առանձնասենյակից դուրս

եկավ ետին դռնով: Միջանցքում ոչ ոք չկարէ Պիեռն անցած միջանցքի ամբողջ երկարությամբ մինչև սանդուղքը և, գեմբը կնճռելով ու երկու ձեռով ճակատը շփելով, իջավ մինչև առաջին հարթակը: Բարապանը կանգնած էր շքամուտքի մոտ: Այն հարթակից, ուր իջավ Պիեռը, մի ուրիշ սանդուղք տանում էր դեսպանի ետին մուտքը, Պիեռն իջավ այդ սանդուղքով և դուրս եկավ բակը: Նրան ոչ ոք շտեսավ, Բայց փողոցում, հենց որ նա դուրս եկավ դարբասից, իրենց կառքերի հետ այդտեղ կանգնած կառապանները և դռնապանը տեսան աղային և գլխարկները, վերցրին նրա առաջ: Զգալով իր վրա սեռուած հայացքները, Պիեռը վարվեց շայլամի նման, որը գլուխը թաքցնում է թիկ մեջ, որ իրեն շտեսնեն. Նա գլուխն իջեցրեց և, բայց երն արագ ացնելով, գնաց փողոցով:

Բոլոր գործերից (որ պետք է աներ Պիեռն այդ առավո՛) Խոսիֆ Ալեքսենիշի գրքերն ու թղթերը կարգի բերելու գոր ը նրան ամենից կարենոր թվաց:

Նա նստեց առաջին պատահած կառքը և հրամայեց գնալ Պատրիարշին պրուդի, ուր գտնվում էր Բաղդեկի այրու տունը:

Անդադար նայելով ամեն կողմից շարժվող, Մոսկվայից, մեկնող սայլախմբերին և իր գեր մարմինը պահելով, որ շրնկնի գորդացող հին եռանդակից, Պիեռն ուրախության զգացումով համակված, ինչպիսի զգացում ունենաւմ է զպրոցից փախած տղան, խոսակցում էր կառապանի հետ:

Կառապանը պատմեց նրան, թե այսօր զենք են բաժանում Կրեմլում, և թե վաղը ամբողջ ժողովրդին քշելու են Տրի Գորիի ուղեկալը, և թե այնտեղ մեծ կոիվ է լինելու:

Հասնելով Պատրիարշին պրուդի, Պիեռը գտավ Բաղդեկի տունը, ուր վաղուց չէր եղել: Նա մոտեցավ գոնակին: Գերասիմը, նույն այն զեղնադեմ անմորուս ծերուկը, որին Պիեռը տեսել էր հինգ տարի առաջ Տորժոկում՝ Խոսիֆ Ալեքսենիշի հետ, դուրս եկավ թիւ, ոցի վրա:

— Տա՞ն է, — հարցրեց Պիեռը:

— Ներկա հանգամանքերի պատճառով Սոֆիա Դանիլովնա՝ երեխաներով մեկնեց Տորժոկի գյուղը, ձերդ պայծառափայլություն:

— Ես այնուամենայնիվ ներս մտնեմ, պետք է գորերը կարգի բերեմ, — ասավ Պիեռը:

— Համեցեք, շնորհ արեք. հանգուցյալի — աստծու արքայությունն իրեն՝ եղբայրը՝ Մակար Ալեքսեևիչն է մնացել, նա էլ, ինչպես գիտեք, տկար է, — ասավ ծեր սպասավորը:

Մակար Ալեքսեևիչը, ինչպես Պիեռը գիտեր, իսուիֆ Ալեքսեիչի կիսախենթ, խիստ հարբեցող եղբայրն էր:

— Այո, այո, գիտեմ: Գնանք, գնանք... — ասավ Պիեռը և մտավ տուն:

Մի բարձրահասակ, ճաղատ ծեր մարդ՝ խալաթը հագին, կորմրած քթով, կրկնակոշիկները բորիկ ոտներին, կանգնած էր նախասենյակում. Պիեռին տեսնելով՝ նա բարկացած մրթմըրցաց ինչոր և գնաց միջանցքը:

— Մեծ խելքի տեր մարդ էր, իսկ հիմա, ինչպես կհաճեք տեսնել, տկարացել է, — ասավ Գերասիմը: — Կհաճեք կարինե՞տը: — Պիեռը գլխով արավ: — Կաբինետն ինչպես կնքված էր, այնպես էլ մնացել է: Սոֆիա Դանիլովնան հրամայեց, եթե ձեզանից մարդ գա, գրեք տամ:

Պիեռը մտավ հենց այն մուայլ կարինետը, ուր գեռ իր բարերարի կենդանության օրով մտել էր այնպիսի ահ ու գողով: Այդ առանձնասենյակը, որ փոշոտված էր այժմ և իսուիֆ Ալեքսեևիչի մահվան օրից անձեռնմխելի մնացած, էլ ավելի մուայլ էր:

Գերասիմը բացեց լուսամուտի մի փակոցափեղկը և ոտների ծայրերի վրա դուրս եկավ սենյակից: Պիեռը պտույտ արավ առանձնասենյակում, մոտեցավ սկանարանին, ուր դրված էին ձեռագիրները, և վերցրեց միաբանության երեխնի կարուրագույն սրբություններից մեկը: Դրանք շոտլանդական խոկական ակտերն էին՝ բարերարի ծանոթագրություններով ու բացատրություններով: Նա նստեց փոշոտված գրասեղանի առաջ և ձեռագիրն առչելով դնելով՝ բացեց, ժայից այն և, վերջապես, մի կողմ հրելով, գլուխը հենց ձեռներին ու մտածմունքի մեջ ընկավ:

Մի բանի անգամ Գերասիմն զգուշությամբ նայեց առանձնասենյակը և տեսավ, որ Պիեռը նստած էր նույն դիրքով: Անցավ երկու ժամից ավելի: Գերասիմն իրեն թույլ տվեց աղմկել դուռն մեջ, որ Պիեռի ուշադրությունը հրամիրի: Պիեռը լսեց

— Կհրամայե՞ք կառքը ճամփել:

— Ախ, այո, — սթափկելով ասավ Պիեռը, աճապարանքով վեր կենալով:

— Լսիր, — ասավ նա, բռնելով Գերասիմի սերթուկի կոճակը և իր փայլող, խոնավ, խանդավառ աշքերով վերից վար ծերուկին նայելով: — Լսիր, ոու գիտե՞ս, որ վաղը կը-սիկ է լինելու:

— Ասացին, — պատասխանեց Գերասիմը:

— Ես քեզ խնդրում եմ ոչ ոքի շասես թե ո՛վ եմ ես: Եվ արա, ինչ կասեմ...

— Լսում եմ, — ասավ Գերասիմը: — Կհրամայե՞ք ուսուելիք բերեմ:

— Ու, բայց ինձ ուրիշ բան է հարկավոր: Ինձ հարկավոր է զյուղացու հագուստ և մի փշտով, — ասավ Պիեռը, անսպասելի կարմրելով:

— Լսում եմ, — մտածելով՝ ասավ Գերասիմը:

Օրվա մնացած մասը Պիեռը մենակ անցրեց բարերարի առանձնասենյակում, անհանգիստ՝ մի անկյունից մյուսը քայլելով, ինչպես լսում էր Գերասիմը, և ինքն իր հետ ինչոր խոսելով, ու գիշերեց հենց այդտեղ պատրաստած անկողնում:

Գերասիմը սպասավորի սովորությամբ, որ շատ տարօրինակ բաներ էր տեսել իր կյանքում, Պիեռի տեղափոխությունն է մեկին ծառայել: Նա հենց նույն երեկո, անգամ ինքն իրեն է մեկին ծառայել: Նա համար է դա պետք, Պիեռի համար շաբացնելով, թե ինչո՞ւ համար է դա պետք, Պիեռի համար կափտան ու գդակ ճարեց և խոստացավ մյուս օրը ձեռք բերել պահանջված փշտովը: Մակար Ալեքսեևիչն այդ երեկո, երկու անգամ, կրկնակոշիկները ծլպացնելով, մոտեցավ դուանը և կանգ առավ, քծնանքով նայելով Պիեռին: Բայց հենց որ Պիեռը երեսը շրջում էր գեպի նա, նա՝ ամոթխած ու բարկացած՝ խաթի փեշերը վրա էր բերում իրար ու աճապարանքով հեռաւ: Այն ժամանակ, երբ Պիեռը կառապանի կաֆտան հագած (որ նրա համար գտել ու կարը քանդելով կարգի էր բերել Գերասիմը) գնում էր նրա հետ Սուլիմարեսի աշտարակի մոտ փշտով գնելու, նա հանդիպեց Ռոստովներին:

— 417 —

Սեպտեմբերի 1-ի գիշերը Կուսուլովով հրաման տվեց զորքերին՝ նաև անջել Մոսկվայի վրայով դեպի Ռյազանի ճանապարհը:

Առաջին զորագնդերը շարժվեցին գիշերը: Գիշերը ճանապարհ ընկած զորքերը լին շտապում և շարժվում էին ծանր ու դանդաղ: Բայց լուսարացին շարժվող զորքերը, մոտենալով Դորոգոմիլովյան կամուրջին, տեսան իրենց առջե, մյուս կողմում խոնվող և կամրջով շտապ անցնող զորքերի հսկայական զանգվածներ, որոնց ետևի շարժերը բարձրանալով և ամրոցովին բռնելով փողոցներն ու նրբափողոցները՝ սեղմում էին առաջի շարքերին: Եվ անառիթ փութեկոտությունն ու տագնապը տիրեցին զորքերին: Բոլորն առաջ նետվեցին դեպի կամուրջը, ոմանք կամուրջով էին անցնում գետը, ոմանք մտան ջուրը՝ ոտով անցնելու համար, ոմանք էլ նավակներ նստեցին: Կուտուզովը պատվիրեց, որ իրեն տեղափոխեն գետի մյուս ափը՝ ետևի փողոցներով:

Սեպտեմբերի 2-ին՝ առավոտյան ժամը 10-ին Դորոգոմիլովյան արվարձանում մնում էին միայն վերջապահ զորամասերը: Իսկ բանակն արդեն Մոսկվա գետի մյուս ափին էր և գետից այն կ' դմ:

Նույն այդ ժամանակ, սեպտեմբերի 2-ի առավոտյան ժամը 10-ին նապուկնը կանգնած էր իր զորքերի մեջ Պոկլոննայա Գորայի վրա և նայում էր իր առջև բացվող տեսարանին: Սկսած օգոստոսի 26-ից և մինչև սեպտեմբերի 2-ի, Բորոդինոյի ճակատամարտից մինչև թշնամու Մոսկվա մտնելը, այդ տագնապալի, այդ անմոռանալի շարաթվա բոլոր օրերն էլ աշնանային այն արտասովոր, մարդկանց միշտ զարմացնող եղանակն էր տիրում, երբ ցածր արևն ավելի բարկ է լինում, քան գարնանը. Երբ նոսր, ջինջ օդում ամեն ինչ այնպես է փայլում, որ աշք է ծակում. երբ մարդու կուրծքն ամրանում ու թարմանում է, ներշնչելով աշնանային բուրավիտ օդը. երբ գիշերները նույնիսկ տաք են լինում, և երբ այդ մութ, տաք գիշերներին երկրների անդադար, վախիցնելով և ուրախացնելով, թափում են ուկե աստղերը:

Սեպտեմբերի 2-ին՝ առավոտյան ժամը 10-ին այդպիսի եղանակ էր:

Վաղորդյան լուսափայլը կախարդական էր: Մոսկվան Պոկլոննայա Գորայից լայնարձակ փոված էր իր գետով, իր պարտեզներով ու եկեղեցիներով և թվում էր, թե ապրում էր իր կյանքով, և նրա գմբեթներն աստղերի նման թրթում էին արմի շողերի մեջ:

Այդ տարօրինակ քաղաքի տեսքն իր արտասովոր ճարտարապետության շտեսնված ձեռքով նապուկնի մեջ այն որոշ շափով նախանձագին և անհանգիստ հետաքրքրությունն էր առաջացրել, որպիսին մարդիկ ապրում են իրենց համար խորիչ և օտարութիւն կյանքի անծանոթ ձեռք տեսնելիս: Ակներն էր, «Րայդ քաղաքն ապրում էր իր կյանքի բոլոր ուժերով: Այն անորոշելի նշաններով, որոնցով հեռվից անսխալ կերպով կենդանի մարմինը զոկվում է մեռյալից, նապուկնը Պոկլոննայա Գորայից տեսնում էր կյանքի թրթումն այդ քաղաքում և կարծես զգում էր այդ մեծ ու գեղեցիկ մարմնի շունչը:»

Յուրաքանչյուր ուսւած մարդ, նայելով Մոսկվային, զգում է, որ նա մայր է. յուրաքանչյուր օտարերկրացի, նայելով Մոսկվային և շիմանալով նրա մայրական նշանակությունը, պետք է զգա այդ քաղաքի կանացի բնույթը. և նապուկնն զգում էր այդ:

— Cette ville asiatique aux innombrables églises, Moscou la sainte. La voilà donc enfin, cette fameuse ville! Il était temps<sup>1</sup>, — ussak նապուկնը և, ինչելով ձիուց, կարգադրեց փոել իր առաջ այդ Մոսկու-ի հատակագիծը և իր մոտ կանչեց թարգման Լելօմե Ժամուարամարտից մինչև թշնամու Մոսկվա մտնելը, այդ տագնապալի, այդ անմոռանալի շարաթվա բոլոր օրերն էլ աշնանային այն արտասովոր, մարդկանց միշտ զարմացնող եղանակն էր տիրում, երբ ցածր արևն ավելի բարկ է լինում, քան գարնանը. Երբ նոսր, ջինջ օդում ամեն ինչ այնպես է փայլում, որ աշք է ծակում. երբ մարդու կուրծքն ամրանում ու թարմանում է, ներշնչելով աշնանային բուրավիտ օդը. երբ գիշերները նույնիսկ տաք են լինում, և երբ այդ մութ, տաք գիշերներին երկրների անդադար, վախիցնելով և ուրախացնելով, թափում են ուկե աստղերը:

<sup>1</sup> Ահա և, վերջապես, այդ հոչակառ ասիական քաղաքը իր անթիվ եկեղեցիներով, սրբազն Մոսկվան: Վաղուց ժամանակն է:

Թշնամու կողմից զրավճած քաղաքը նման է կուսաթյունը կորցրած ազգեր:

անհրագործելի թվացով ցանկությունը, Վազորդյան պայծառ լույսի մեջ նա մերթ ևայում էր քաղաքին, մերթ հատակագրծին, ստուգելով այդ քաղաքի մանրամասնությունները և քաղաքին տիրելու վստահությունը հուզում ու սարսափեցնում էր նրան:

«Բայց մի՞թե կարող էր այլ կերպ լինել», մտածեց նա: «Ահա և նա — այդ մայրաքաղաքը ծունկի է իշել իմ առաջ՝ սպասելով իր ճակատագրին: Ո՞րտեղ է այժմ Ալեքսանդրը, և ի՞նչ է մտածում նա: Տարօրինա՛կ, գեղեցի՛կ, վեհասարա՛նը մի քաքաբ: Եվ տարօրինա՛կ ու վսե՛մ է այդ բոպեն: Ինչպես եմ ես ներկայանում նրան, — մտածում էր նա իր զորքերի մասին: — Ահա և պարզ այդ բոլոր թերահավատների համար, — մտածում էր նա, նայելով իր մերձավորներին և մոտեցող ու շարքեր կազմող զորքերին: — Բավական է իմ մի խոսքը, իմ մի ձեռի շարժումը, որպեսզի կործանվի ցարերի հինավորց մայրաքաղաքը: Mais ma clémence est toujours prompte à descendre sur les vaincus<sup>1</sup>. Ես պետք է լինեմ մեծահոգի և իսկապես մեծ... Բայց ո՛չ, այդ ճիշտ չէ, որ ես Մոսկվայում եմ (հանկարծ ծագում էր նրա մտքում): Սակայն, ահավասիկ նա ծունկի է իշել իմ առաջ, իր արևափայլ գմբեթներով ու խաչերով: Բայց ես կինայեմ նրան: Բարբարոսության ու բռնակալության հինավորց հուշարձանների վրա ես կդրեմ արդարության ու ողորմածության մեծ խոսքերը... Ալեքսանդրին ամենից ավելի շատ ցավ կպատճառի հենց այդ, ես ճանաշում եմ նրան: (Նապուլին թվում էր, որ կատարվող գեպքերի գլխավոր նշանակությունը կազմում էր հենց իր և Ալեքսանդրի անձնական պայքարը): Կրեմլի բարձունքներից — այո՛, զա Կրեմլն է, ուր՝ — ես արդարության օրևնքները կտամ նրանց, ես նըրանց ցույց կտամ իսկական քաղաքակրթության նշանակությունը, ես կստիպեմ բոյարների սերունդներին սիրով հիշել իրենց նվաճողի անունը: Ես պատգամավորությանը կասեմ, որ ես պատերազմ չեմ ցանկանում և չեմ ցանկանում. որ ես պատերազմ եմ միայն իրենց արքունիքի կեղծ քաղաքականության դեմ. որ ես սիրում ու հարգում եմ Ալեքսանդրին, և

որ հաշտություն կկիրակեմ Մոսկվայում, ինձ և իմ ժողովուրդներին արժանավայել հաշտություն: Ես չեմ ցանկանում օգտվել պատերազմի տված բախտից՝ իմ կողմից հարգված թագավորին ստորացնելու համար: Բոյարնե՛ր, կասեմ նրանց, ես պատերազմ չեմ ցանկանում, ես խաղաղություն և բարօրություն եմ ցանկանում իմ բոլոր հպատակներին: Սակայն, ես գիտեմ, որ նրանց ներկայությունը ինձ կոգնորի, և ես նրանց կասեմ, ինչպես ես միշտ ասում եմ՝ պարզ, հանդիսավոր ու նշանակալից: Բայց մի՞թե ճիշտ է այն, որ ես Մոսկվայում եմ: Այո՛, ահավասի՛կ Մոսկվան»:

— Qu'on m'amène les boyards<sup>1</sup>, — ղարձավ նա իր շքախմբին:

Մի գեներալ՝ փայլուն շքախումբը ետևից՝ ձին քշեց-գնաց՝ բոյարներին կանչելու:

Անցավ երկու ժամ՝ նապոլեոնը նախաճաշեց և կրկին կանգնեց նույն տեղում Պոկլոննայա Գորայի վրա, պատգամավորությանն սպասելով: Բոյարներին ասելիք ճառը պարզուո՞ւ կազմվեց նրա երևակայության մեջ: Այդ ճառը համակված էր արժանապատվությամբ և այն վեհությամբ, որպիսին նապոլեոնն էր հասկանում:

Մեծանողության մեջ եղանակը, որով նապոլեոնը մտադիր էր գործել Մոսկվայում, հափշտակել էր նրան: Նա իր երեսակայության մեջ նշանակում էր այն օրերը, երբ ունենալիք կայսեր պետք է ուսւա ազնվատոհմ իշխանները հանդիպեին ֆըրանսական կայսեր մեծամեծներին: Նա իր մտքում նահանգապետ էր նշանակում, և այնպիսին, որը կարողանար նվաճել բնակչության համակրանքը: Իմանալով, որ Մոսկվայում շատ աստվածահաճո հաստատություններ կան, նա իր երևակայության մեջ որոշեց, որ այդ բոլոր հաստատությունները պետք է առատորեն օգտվեն իր ողորմածությունից: Նա կարծում էր, որ ինչպես Աֆրիկայում պետք էր մզկիթում բուռնուս հագած նստել, այնպես էլ Մոսկվայում պետք էր ցարերի պես ողորմած լինել: Եվ որպեսզի վերջնականապես ազդեր ուսւաների

<sup>1</sup> Բայց ես միշտ պատրաստ եմ ողորմածություն շնորհել հաղթվածներին

<sup>1</sup> Թող բոյարներին բերեն ինձ յոտա

<sup>2</sup> Ցարերի պալատում:

դգացմունքի վրա, նա, ինչպես և ամեն ֆրանսացի, որը չի կարողանում ոչ մի զգայուն բան երևակայել առանց ուժի շերե, ու տեղայուր ուշերդի մասին հիշելով՝ որոշեց, որ այդ բոլոր հաստատությունների վրա կկարգադրի խոշոր տառերով գրել. «Etablissement dédié à ma chère Mère»: Ո՛չ, պարզապես՝ «Maison de ma Mère»<sup>2</sup>, որոշեց նա ինքն իրեն: Թայց մի՞թե ես Մոսկվայում ևմ: Այո՛, ահավասի՞կ նա իմ առաջն է: բայց ինչո՞ւ է այսքան ուշանում քաղաքի պատգամավորությունը», մտածում էր նա:

Մինչդեռ կայսեր շքախմբի ետքի շարքերում նրա գեներալներն ու մարշալները փսխսալով ու հուզված խորհրդակցում էին: Պատգամավորության ետևից գնացածները վերադրածան՝ լուր բերելով, թե Մոսկվան դատարկ է, թե բոլորը հեռացել են քաղաքից: Խորհրդակցողների գեմքերը գունատ ու հուզված էին: Նրանց վախեցնում էր ոչ այն, որ Մոսկվան բնակիչները թողել են (որքան և այդ գեպքը կարևոր էր թվում), այլ այն, թե ինչպես պետք է այդ մասին նրանք հայտնեն կայսեր, ինչպես, առանց նորին մեծությանը սարսափելի, ֆրանսացիների ասած հիճնական մեջ գնելով՝ հայտնեն նրան, թե նա իզուր էր այդքան երկար սպասում բոյարներին, թե Մոսկվայում հարրած մարդկանց խմբերից բացի այլևս ոչ չկայ: Ոմանք ասում էին, թե մի կերպ պետք էր որևէ պատգամավորություն հավաքել. մյուսներն առարկում էին դրան և պնդում, թե պետք է զգուշաբար և խուլացիրեն կայսեր նախապատրաստել և ճշմարտությունը հայտնել նրան:

— Il faudra le lui dire tout de même...<sup>4</sup> — ասում էին խմբի պարոնները: — Mais, messieurs...<sup>5</sup>

Դրությունն ավելի ծանր էր նրանով, որ կայսը, խորհեալ մեծահոգության իր ծրագրերը, համբերությամբ ետ ու առաջ էր գնում հատակագծի առաջ, երբեմն-երբեմն ձեռը Հակատին դրած նայելով Մոսկվայի ճանապարհին և ուրախ ու հպարտ ժպտում:

<sup>1</sup> Իմ սիրելի, իմ քնքուշ, իմ խեղճ մոր:

<sup>2</sup> Իմ սիրեցյալ մորը նվիրված հաստատություն: Իմ մոր տօւնք:

<sup>3</sup> Միջակելի:

<sup>4</sup> Այնուամենայինի պետք է նրան հայտնել:

<sup>5</sup> Բայց, պարոններ...

— Mais c'est impossible...!<sup>1</sup> — ուսերը թոթվելով, ասում էին շքախմբի պարոնները, շնամարձակվելով արտասանել Ենթադրելի սարսափելի խոսքը՝ լուսնությունը...

Մինչդեռ կայսրը, հոգնելով իզուր սպասելուց և իր զերասանական հոտառությամբ զգալով, որ շափազանց երկար տեսող վեհ բոպեն վերջիվերջո սկսում է կորցնել իր վեհությունը, ձեռով նշան արագ: Լսվեց ազգանշան տվող թնդանոթի մի կրակոց, և Մոսկվան զանազան կողմից շրջապատաժ զորքերը շարժվեցին դեպի Մոսկվա, դեպի Տվերսկայա, Կալուժմակայա, և Դորոգոմիլովսկայա ուղեկալիները: Հետզհետե ավելի և ավելի արագ, միմյանց առաջ տալով, վազուն բայլով ու վարդերով շարժվում էին զորքերը, ծածկվելով իրենց բարձրացրած փոշուու ամպերի մեջ և իրենց աղաղակների ձուլվող դղրդյուններու թնդացնելով օղը:

Զորքերի շարժման հոսանքով տարված նապոլեոնը զորքերի հետ միասին հասավ մինչև Գորոգոմիլովյան ուղեկալը, բայց այնտեղ կրկին կանգ առավ և, ձիուց իշնելով, երկար ժամանակ ման եկավ Կամեր-Կոլեժսկի հողապատճեղի մոտ, սպասելով պատգամավորությանը:

## XX

Մինչդեռ Մոսկվան դատարկ էր: Այնտեղ գեռ մարդիկ կային, այնտեղ մնացել էին ճամփին բնակիչների մեկ հիսուներորդական մասը, բայց քաղաքը դատարկ էր: Նա դատարկ էր, ինչպես դատարկ է լինում պարսմորից զրկված, մեռնող մեղքափեթակը:

Պարսմորից զրկված մեղքափեթակում այլևս կյանք չի լինում, չնայած որ մակերեսային հայացքից այդ փեթակը Նույնպես կենդանի է թվում, ինչպես մյուս փեթակները:

Նույնպես ուրախ ու զվարթ, միջօրեի բարկ արելի շորերի մեղունները բոլորվում են սպասմորից զրկված փեթակը շուրջը, ինչպես նրանք բոլորվում են մյուս կենդանի փեթակների շուրջը, այդպիսի փեթակից էլ հեռվից մեղրի հոտ է զալիս. նրա միջից նույնպես մեղուններ են դուրս թոշում: Բայց

<sup>1</sup> Բայց դա անկարելի է:

բավական է ուշադրությամբ դիտել այդ փեթակը, որպեսզի նկատվի, որ այդտեղ այլևս կյանք չկա: Մեղուները թուշում են ոչ այնպես, ինչպես կենդանի փեթակներում, մեղվապահը այլևս այն հոտը չի առնում, այն ձայնը չի լսում: Եթե մեղվապահը բախում է հիվանդ փեթակի պատը, ապա նա նախկին վայրկենական, համերաշխ ու միասնական պատասխանի փոխարեն, տասնյակ հաղարավոր մեղուների տժժոցի փոխարեն, մեղուներ, որոնք սպառնագին քաշում-թեքում են իրեն հոտը և իրենց թեսերի արագաբախ զարկերով այդպիսի օդային կենսական ձայներ են առաջացնում, նա լսում է անշատ բըզ-կոցներ, որոնք աղմկալից լսվում են դատարկ փեթակի զանազան տեղերում: Փեթակի անցքից առաջվա պես մեղրի ու թույնի սպիրտային անուշ բուրմոնք չի զգացվում, այնտեղից լցունության շերմություն չի փշում, այլ մեղրի հոտին միախառնվում է դատարկության ու նեխի հոտը: Անցքի մոտ այլևս շեն երևում զոնվելու պատրաստակամությամբ փեթակը պաշտպանող պահակներ, որոնք ետքերնին վեր բարձրացրած տագնապ են շեփորում: Զկա այլևս այն միակերպ ու մեղմ հնչյունը, աշխատանքի թրթուումը, որ նման է եռման հնչյունին, այլ լսվում է անկարգության անհարթ ու տարածայն ազմուկ: Երկշոտությամբ ու խորամանկորեն փեթակի մեջ են մանում և այնտեղից դուրս են գալիս սև, երկարավուն, մեղուով պատած ավարառու մեղուներ, նրանք չեն խայթում, այլ վրատանգից խուսափում են: Առաջ միայն բեռով էին մտնում փեթակը, և դուրս էին գալիս այնտեղից դատարկ մեղուներ: Այժմ փեթակից դուրս են թուշում բեռնված մեղուներ: Մեղվապահը բաց է անում ստորին կափարիչը և ուշադրությամբ դիտում է փեթակի ստորին մասը: Մինչև ստորին հատակը կան ընկած նախկին սև, աշխատանքից հնազանդ և իրարտից կախված և աշխատանքի անդադար 22նշունով մոմաթերթ պատրաստող հյութավոր մեղուների փոխարեն, քնեած և հյութաքամ մեղուները փեթակի հատակով ու պատիկներով ցրվածորեն քարշ են գալիս զանազան կողմեր: Սոսնձով պատած և թեսերի հովհարներով ավլած հատակի փոխարեն, հատակին ընկած են լինում մոմաթերթի կտորներ, մեղքի կղկղանք, հազիկ ոտները շարժող, կիսամեռ և արդեն մեռած և չալաքված մեղուներ:

Մեղվապահը բաց է անում վերին կափարիչը և դիտում է փեթակի վերին մասը: Մեղրահացի բոլոր արանքները բոնած և ձագերին տաքացնող մեղուների շարքերի փոխարեն նա տեսնում է մեղրահացի վրա կատարվող բարդ ու հմուտ աշխատանքը, բայց արդեն ոչ այն կուսական վիճակում, ինչպես եղել է առաջ: Ամեն ինչ բարձիթող արած, ապահանգած է: Ավարառու սև մեղուները արած ու գողտուկ վզդում-վխտում են, իրենց գործը տեսնելով: յուրայինները՝ հյութաքամ, կարճրիկ, ուժասպառ, կարծես ծերացած, դանդաղորեն քարշ են դալիս, առանց որևէ մեկին խանգարելու, ոչինչ շցանկանագալիս, առանց որևէ մեկին խանգարելու գիտակցությունը կորցրած: Բուերը, մողերը, թիթեսնիկները, թուած ժամանակ անմտորեն բախվում են փեթակի պատերին: Տեղ-տեղ մոմաթերթերի (մեռած ձագերով և մեղրու) միջև զանազան կողմերից զայրագին քըրթմընչյուն է լսվում: Որևէ տեղում երկու մեղու, հին սովորությամբ ու հիշողությամբ, մաքրելով փեթակի բույնը, գերագույն ճիգեր գործ զնելով դուրս են քաշում մեռած մեղվին կամ բոսին, իրենք էլ շիմանալով, թե ինչի համար են նրանք այդ անում: Մյուս անկյունում երկու այլ պառակ մեղուներ ծովորեն կովում են, կամ մաքրվում, կամ միմյանց են կերակըրում, իրենք էլ շիմանալով, թշնամաքար թե բարեկամաբար են նրանք այդ անում: Երրորդ տեղում մեղուների մի խումբ իրար սեղմելով, հարձակվում է որևէ զոհի վրա ծեծում ու խեղդում է նրան: Եվ թուլացած կամ սպանված մեղուն դանդաղորեն ու նրբափետրի պես թեթև, վերեկից ընկնում է դիակների կույցերի մեջ: Մեղվապահը քանդում, բաց է անում երկու միջին մոմաթերթը, որպեսզի սենսի բույնը: Նախկին հազարավոր, մեջք-մեջրի գեմ տված ու նստած և իրենց հարապատ գործի գերագույն զայրանիքները պահով մեղուների մ՛տապաղող սև շարքերի փոխարեն նա տեսնում է մեղուների հայուրաւոր՝ վհատ, կիսակենդան ու քնած կմախքներ: Նրանք զըրեթե բոլորը մեռն են, իրենք այդ շիմանալով, նստած այն սրբության վրա, որն իրենք պահպանել են և որն այլևս չկատ նրանցից նեխի ու մահվան հոտ է փշում: Նրանցից մի քանիսն են շարժվում, բարձրանում, ալարկու թուշում ու նստում թշնամու ծեփին, ուժ շունենալով մեռնել, նրան խայթելով: մնացածները, մեռածները ձկնաթեփուկի նման հեշ-

տությամբ ցած են թափվում։ Մեղվապահը կափարիչն իր տեղն է դնում, կազիճով նշում է անում փեթակի վրա և հարմար ժամանակ ընտրելով, կոտրատում և այրում է այն։

Այդպես դատարկ էր Մոսկվան, երբ Նապոլեոնը, Հոգնած, ահճանդիստ ու խոժողադիմ երթնեկում էր Կամեր-Կոլեժսկի հողապատնեշի մոտ, սպասելով, որ թիե արտաքին, բայց նրա հասկացողությամբ անհրաժեշտ պատշաճությունը պահպանվի. պատգամավորություն գա։

Մոսկվայի զանազան անկյուններում միայն մարդիկ դեռ անմտորեն շարժվում էին, պահպանելով հին ռովորությունները և շնասկանալով այն, ինչ անում էին։

Երբ Նապոլեոնին պատշաճ զգուշությամբ հայտնեցին, թե Մոսկվան դատարկ է, նա բարկացկոտ նայեց այդ լուրը հայտնողին և երեսը շրջելով շարունակեց լուր երթնեկել։

— Կառքը բերե՛ք, — ասավ նա։

Նա նստեց կառեթը՝ հերթապահ աղյուսանտի հետ և գընաց քաղաքի արվարձանը։ «Moscou deserte! Quel événement inavraisemblable!», ասում էր նա ինքն իրեն։

Նա քաղաք շնաց, այլ կանգ առավ Դորոգոմիլովյան արվարձանի մի իշեանում։

Le coup de théâtre avait raté<sup>1</sup>.

## XXI

Զորքերը գիշերվա ժամը երկուսից մինչև ցերեկվա ժամը երկուսը անցան Մոսկվայի միջով և իրենց հետ տարան վերշին մեկնող բնակիչներին ու վիրավորներին։

Զորքի շարժման ժամանակ ամենամեծ խռնումը աեղի ունեցավ Կամեննի, Մոսկվորեցկի և Յառլզակի կամուրջների վրա։

Այն ժամանակ, երբ, Կրեմլի շուրջը երկու մասի բաժանված, զորքերը ճնշում էին իրար Մոսկվորեցկի և Կամեննի կամուրջների վրա, մեծ թվով զինվորներ, օգտվելով կանգ առնելուց և նեղվածքությունից, կամուրջներից ետ էին դառնում և գաղտա-

գողի ու անխռու՝ Բարսեղ Երանելիի տաճարի մոտով ու Բորովիցիկի գարբասների տակով վազում էին ետ՝ գեղի բարձր, դեպի Կարմիր Հրապարակը, ուր նրանք ինչ-որ մի հոտասությամբ զգում էին, որ կարելի է առանց գծվարության ուրիշի ապրանք վերցնել։ Մարդկանց նույնափիսի մի բազմություն, ինչպես հավաքվում են էժանագին ապրանքների շուրջը։ Լցվել էր Գոստինի դպրը, նրա բոլոր անցքերն ու միջանցքները։ Բայց չկային առեստականների սիրալիք-ձեւացող, կանչող ձայնները, չկային փերեզակները և գնորդ կանանց խայտաբետ բազմությունները, — երեսում էին միայն մունդիրներն ու շինուներն անհրացան զինվորների, որոնք անխոս բեմակուրված գուրս էին զալիս կամ դատարկ մտնում էին խանութները։ Առեստականներն ու գործակատարները (սրանք բիլ էին) մոլորվածների պես, շրջում էին զինվորների արանքում, բացում ու փակում էին իրենց խանութները, և իրենք էլ այդ քաշերի հետ իրենց ապրանքները տանում էին ինչ-որ տեղ։ Հրապարակում Գոստինի դպրի մոտ կանգնել էին թմրկահարները և հավաքի ազգանշան էին տալիս։ Բայց թմրուկի ձայնը կողուտիչ զինվորներին չէր ստիպում առաջվա պես գալ այդ կանչին, այլ, ընդհակառակը, ստիպում էր նրանց թմրուկից հեռու փախչել։ Զինվորների միջն, խանութներում ու միջանցքներում երեսում էին մոխրագույն։ Կաֆտան հագած և ածիլած գլխով մարզիկ։ Երկու սպա, մեկը մունդիրի վրայից գցած շարֆով, նիհար մուգ մոխրագույն ձի նստած, մյուսը շինելով ու առանց ձի, կանգնել էին իլյինկայի անկյունում և խոսութ էին ինչ-որ բանի մասին։ Երրորդ սպան ձին քշած եկավ նրանց մոտ։

— Գեներալը հրամայեց ի՞նչ գնով էլ լինի, անմիջապես դուրս քշել բոլորին։ Սա մի բանի նման չի։ Մարդկանց կեսը փախնել է դեսուզին։

— Դու այդ ո՞ւր եմ գնում... Դուք ո՞ւր... — բոռաց նու երեք հետեւակ զինվորների վրա, որ առանց հրացանի, շինելուների վեշերը բարձրացրած, նրա կողքավ անցան խանութները։ Կանգնեցն՝ ք, անպիտաննե՛ր։

— Այ, համեցեք հավաքեցեք դրանց, — պատասխանեց մյուս սպան։ — Դրանց հավաքել չես կարող. պետք է շուտ գնաե որ վերջինները շնեռանան, ահա բոլորը։

— 427 —

<sup>1</sup> Մոսկվան դատարկ է։ Թրամախ՝ ահճանական դեպք։

<sup>2</sup> Բատրոնական ներկայացման սժումը ձախողվեց։

— Ի՞շպես գնալ, այնտեղ կանգնել սեղմվել են կամուրջի վրա և չեն շարժվում, թե՝ զորաշղթա պետք է դնել, որ վերջին ները չփախչեն:

— Գնացե՛ք ուղղակի այնտեղ: Դրանց դուրս քշեցեք, — բոռաց ալադ սպան:

Շարփով սպան իջավ ձիուց, ձայն տվեց թմրկահարներին և նրանց հետ միասին մտավ կամարի տակ: Մի քանի զինվոր փախան խմբով: Կարմիր բ տիկները քթի երկու կողմը՝ այտերի վրա, մի վաճառական, հաշվի հա գիստ անողդող: արտահայտությունը կուշտ դեմքին, շտապ-շտապ ու ցուցամոլարար, ձեռները թափահարելով, մտտեցավ սպային:

— Ձերդ բարեծնություն, — ասավ նա, — բարի, եղեք պաշտպանեցեք: Մեզ համար հաշիվ չի մի որևէ չնշին բան. մենք մեծ ուրախությամբ, համեցեք, հենց հիմա մահուդ դուրս բերեմ, ազնիվ մարդու համար թեկուզ երկու կտոր. ուրախությամբ, որովհետև մենք զգում ենք, իսկ սա ուղղակի՝ ավազակություն է: Համեցե՛ք: Պահակ պետք է դնել, ինչ է. գոնե թաղնեն փակենք...

Մի քանի վաճառական խմբեցին սպայի շուրջը:

— Է, խոսելն ավելորդ է, — ասավ նրանցից մեկը, մի երար, խիստ դեմքով մարդ: — Գլուխ կորցնողը մազերի համար լաց չի լնի: Թո՛ղ վերցնեն՝ ո՛վինչ սիրում է: — Եվ նա ենք թափ տվեց եռանդուն շարժումով և կողքը դարձրեց գեպի սպան:

— Քեզ համար, իվան Սիդորիշ, հեշտ է ասել, — բարկացած խոսեց առաջին վաճառականը: — Դուք համեցեք, ձերդ բարեծնություն:

— Ի՞նչ ասել, — գոռաց նիհարը, — ես էստեղ իմ երեք խանութում հարյուր հազարի ապրանք ունեմ: Էլ կարող ես պահել, երբ զորքը գնացել է: Է, աստծու բանն է:

— Համեցեք, ձերդ բարեծնություն, — ասավ առաջին վաճառականը, գլուխ տալով:

Սպան տարակուսանքի մեջ էր, և նրա դեմքին անվճառականություն էր երկում:

— Բայց իմ ի՞նչ բանն է, — բոռաց նա հանկարծ և արագ թայլիրով գնաց առաջ, խանութների մոտով:

Մի բաց խանութից ծեծի և հայճոյանքի ձայներ էին գալիս, և այն ժամանակ, երբ սպան մոտենում էր այդ խանութին, նրա դրան միջից հրումով դուրս լոնկավ մոխրագույն վերնագեստով ու ածիւած ոլխով մի մարդ:

Այդ մարդը, կուանալով, փախավ վաճառականների ու սպայի կողքով: Սպան հարձակվեց խանութում եղած զինվորների վրա: Բայց այդ ժամանակ լսվեց Սոսկվորեցկի կամուրջի վրա կուտակված ահաղին բազմության սարսափելի աղաղակը, և սպան դուրս վագեց հրապարակ:

— Ի՞նչ է պատահել: Ի՞նչ է պատահել, — հարցնում էր նա, բայց նրա ընկերն արդեն Բարսեղ Երանելիի տաճարի կողքով ձին րշում էր զեպի այդ աղաղակները:

Սպան հեծավ ձին ու րշեց նրա ետքից: Երբ նա մոտեցավ կամրջին, տեսավ քարշակներից վերցրած երկու թնդանոթ, հետեւակ զորք, որ անցնում էր կամրջով, մի քանի շրջված սայլեր, մի քանի վախեցած դեմքեր և զինվորների ժպտածիծաղ երեսներ: Թնդանոթների մոտ կանգնած էր զույգ ձի լծած մի սայլ: Սայլի հետեւ անիլներին կպած կուշ էին եկել շորս բարակ-շներ՝ վզակապները վզներին: Սայլի վրա զեզի շափ իրեր էին բարձել, և ամենաբարձր տեղը, երեխայի՝ ոտները գեպի վեր դրած աթոռի կողքին նստել էր մի կին, որ ճշում, ծղրտում էր հուսահատորեն: Ընկերները սպատմեցին սպային, թե բազմության աղաղակն ու կնոջ ծղրտոցն առաջացան նրանից, որ ձին բազմության վրա քշած գեներալ Երմոլովը, իմանալով, որ զինվորները ցրվում են խանութները, իսկ բնակիչների բազմությունը բնիւղ-կտրել է կամուրջը, հրամայեց թնդանոթները վերցնել բարշակներից և ձեացնել, թե նա կրակիելու է կամուրջի վրա: Բազմությունը, սայլերը շրջելով, միմյանց ձնշելով, հուսահատորեն աղաղակելով ու սեղմվելով, սպատեց կամուրջը, և զորքն առաջ շարժվեց:

## X XII

Մինչեռ քաղաքն ինքը դատարկ էր: Փողոցներում համարյաց մարդ չկար: Բոլոր գարբաններն ու խանութները փակ էին. մի երկու տեղ՝ օղետների մոտ լսվում էին մենակ մարդկանց կանչեր կամ հարրածների երգ: Ոչ մի ձիավոր, ոչ մի կառք չեր

երեսում փողոցներում, և հաղվադես էր լսվում հետիւոտն անդնդի քայլերը: Պովարսկայա փողոցը բոլորովին խաղաղ էր ու ամայի: Ծոստովների տան հսկայական բակում թափված էին խոտի կրծոնքներ, մեկնած սայլի փթիրը ու չը երեսում և ոչ մի մարդ: Ծոստովների ամբողջ բարիքով թողած տան մեծ հյուրասարանում կային երկու մարդ: Դրանք էին դռնապան Իգնատը և կազակ Միշկան, Վասիլիչի թոռը, որ պատի հետ մնացել էր Մոսկվայում: Միշան կլավիկորդը (դաշնամուր) բացած՝ մի մատով նվագում էր նրա վրա: Դռնապանը, ձեռները կանթած և ուրախ ժայռալով, կանգնել էր մեծ հայելու առաջ:

— Այ, լավ է չե, քեռի՛ Իգնատ, — ասավ տղան, հանկարծ ակսելով երկու ձեռով ստեղներին խփել:

— Սրա՛ն տես, — պատասխանեց Իգնատը, զարմանալով, թե ինչպես է հետզետե ալելի ու ավելի ժայռում իր դեմքը հայելու մեջ:

— Անամոթնե՛ր: Իսկապես, անամոթնե՛ր, — ասավ նըրանց ետևից կամացուկ ներս մտնող Մավրա Կուզմինիշնայի ձայնը: — Հաստատին ինչպես է ատամները ցցել: Ել բան ու գործ շունեք: Այնտեղ գեռ ամեն բան թափած-թափթփած է: Վասիլիչի հոգին դուրս եկավ: Սպասե՛ք:

Իգնատը, գոտին ուղղելով, այլևս շժայտալով ու աշքերը խոնարհած դուրս եկավ սենյակից:

— Մորաքույր, ես կամաց էի խփում, — ասավ տղան,  
— Ես քեզ կամաց ցո՛ւց կտամ: Զարաճճի՛, — բոռաց  
Մավրա Կուզմինիշնան, ձեռը նրա վրա թափ տալով: — Գնա՛,  
ինքնահո դիր պապիդ համար:

Մավրա Կուզմինիշնան, փոշին սրբելով, կլավիկորդը ծածկեց և՛, ծանր հոգից քաշելով, դուրս եկավ հյուրասրանից և մուշքի դուրը փակեց:

Քակը դուրս գալով՝ Մավրա Կուզմինիշնան մտածեց, թե չիմա ո՛ւր գնա: Կից շե՞նքը Վասիլիչի մոտ թեյելու, թե՞ խորդանոցը — հավաքելու այն, ինչ մնացել է անհապաք:

Խաղաղ փողոցում արագ քայլերի ձայն լսվեց: Քայլերը կանգ առան բակի դռան մոտ. լեզվակն սկսեց շնկվակալ մեկի ձեռի տակ, որ աշխատում էր բանալ այն:

Մավրա Կուզմինիշնան մոտեցավ դռնակին:  
— Ո՞ւմ եք ուղում:

— Կոմսին: Կոմս իլյա Անդրեյիլ Ռուստովին:

— Բայց գուք ո՞վ եք:

— Ես սպա եմ: Ուզում եմ նրան տեսնել, — ասավ ուղարկան մի գուրեկան ու աղայական ձայն:

Մավրա Կուզմինիշնան գոնակը բաց արավ: Եվ քակը մըտալ մի 18 տարեկան կլորագեմ սպա, արտաքինով Ծոստովների նման:

— Երեկնել են, աղաս: Երեկ մեկնեցին, — սիրալիրությամբ ասով Մավրա Կուզմինիշնան:

Զահել սպան, դռան մեջ կանգնած, կարծես անվճառականության մեջ՝ մտնի ներս թե շմտնի, լեզուն ճտացրեց:

— Ա՛խ, ակսոս, — ասավ նա: — Երեկ պիտի գայի... Ա՛խ, ափսոս...

Մինչ այդ Մավրա Կուզմինիշնան ուշադիր ու կարեկցանքով նայում էր երիտասարդի՝ Ծոստովների ցեղի ծանոթ դիմագծերին, հազի պատառութած շինելին ու մաշված կոշիկներին:

— Դուք կոմսին ինչո՞ւ համար էիք ուզում, — հարցրեց նա:

— Դե... ի՞նչ արած, — վշտացած ասավ սպան և բռնեց դռնակը, կարծես ցանկանալով գնալ:

Նա նորիր կանգ առա վ անվճառականության մեջ:

— Գիտե՞ք ինչ, — հանկարծ ասավ նա: — Ես կոմսի աղքականն եմ, և նա միշտ շատ բարի է եղել գլափի ինձ: Այ, տեսնում եք (նա մի բարի և ուրախ ժայռավագ իր վերարկուին ու կողիներին), և մաշվել են և փող բան շունեմ. ուզում էի կոմսին խնդրել...

Մավրա Կուզմինիշնան թույլ շտվեց, որ նա իր խոսքը վերջացնի:

— Մի բռակ սպասեցեք, աղաս: Մի բռակ, — ասավ նա:

Եվ հենց որ սպան ձեռը վերցրեց դռնակից, Մավրա Կուզմինիշնան շուռ եկավ ու արագ, պառավական քայլերով գնաց տան ետին բակը՝ իր թևաշենքը:

Այն ժամանակ, երբ Մավրա Կուզմինիշնան վագում էր իր սենյակը, սպան, գլուխն իջեցրած ու իր պատառութած կոշիկներին նայելավ, թեթեակի ժայռալով, սկսեց գնալ-գնալ բակում: «Որքան ցավակի է, որ քեախ այստեղ չի: Բայց ի՞նչ

Հիանալի պառակ է: Ո՞ւր գնաց ինչպես իմանամ, թե որ փողոցներով ավելի շուտ կհասնեմ գնդին, որը հիմա պիտի անցնի դեպի Ռազմակայաց», մտածում էր այդ ժամանակ երիտասարդ սպան: — Մավրա Կուզմինիշնան՝ վախեցած և դրա հետ միասին վճռական դեմքով, ձեռին ծալած գծավոր մի թաշկինակ բռնած, դուրս եկավ անկյունից: Դեռ սպային շասած, մի քանի քայլի վրա նա թաշկինակը բաց արավ, հանեց այնտեղից սպիտակ 25 ոռությանոց մի թղթադրամ և աճապարանքով տվեց սպային:

— Եթե նորին պայծառափայլությունը տանը լիներ, հայտնի բան է, նա, իհարկե, որպես ազգական... բայց հրես, գուցես հիմա...

Մավրա Կուզմինիշնան ամաշեց և շփոթվեց: Բայց սպան, չրաժարվեց և շշտապելով, վեցրեց թղթադրամը և շնորհակալություն հայտնեց Մավրա Կուզմինիշնային:

— Եթե կոմսը տանը լիներ, — ներողություն խնդրելով՝ շարունակում էր Մավրա Կուզմինիշնան: — Քրիստոսը ձեզ հետ, աղաս: Աստված փրկի ձեզ, — ասում էր Մավրա Կուզմինիշնան, սպային գլուխ տալով ու ճանապարհ զնելով:

Սպան, կարծես ինքն իր վրա ծիծաղելով, ժպտալով ու գլուխն օրորելով. գրեթե սուրալով վախեց դատարկ փողոցով՝ իր գնդին հասնելու՝ Ցւուզմակի կամւրջի մոտ:

Իսկ Մավրա Կուզմինիշնան թաց աշքերով գեռ երկար կանգնած էր փակ դռան առաջ, գլուխը մտահոգ օրորելով ու զգալով մայրական անսպասելի քնքշանք ու խղճահարություն դեպի իրեն անծանոթ այդ փոքրիկ սպան:

### XXIII

Վարվառկայում գտնվող անավարտ տնից, որի ներքեր օղետուն էր, հարբած կանչեր ու երգեր էին լսվում: Փոքրիկ, կեղտոտ սենյակում, սեղանի շուրջը դրված նստարաններին նստած էին տասը գործարանայիններ: Նրանք բոլորն էլ հարբած, քրտնած, պղտորած աշքերով, իրենց լարելով ու բերանները լայն բանալով, ինչ-որ երգ էին երգում: Նրանք երգում էին իրարից զոկ, դժվարությամբ, ճիգով, ըստ երկութին, ոչ թե նրա համար, որ ցանկանում էին երգել, այլ միայն նրա

համար, որ ցույց տան, թե իրենք հարբած են և ուրախանում են, քեզ անում: Նրանցից մեկը, մի բարձրահասակ խարտյաշ երիտասարդ՝ մաքուր կապույտ կապան հազին, կանգնել էր նրանց վերև: Բարակ ուղիղ քթով նրա գեմքը գեղեցիկ կլիներ, եթե շինեին նրա նուրբ, սեղմված, անդադար շարժվող շուրթերը, և պղտոր կիտած հոնքերով անշարժ աշբերը: Նա կանգնել էր երգողների վերել և, ըստ երկութին, իրեն ինչ-որ բան երևակայելով, հանդիսավոր ու կուպորեն թափահարում էր նրանց գլխալիքն մինչև արմունկը քշտած սպիտակ ձեռը, որի կեղտոտ մատներն անբնական կերպով աշխատում էր շուել: Նրա կապայի թկրն անդադար կախ էր ընկնում, և երիտասարդն ամենայն խնամքով ձախ ձեռով քշտում էր նորից, կարծես առանձնապես կարևոր էր, որ այդ սպիտակ, զղուտ թափահարվող ձեռը լինի անպայման մերկ: Երգի կեսին, նախասենյակում, մուտքի առաջ լսվեցին կովի ու հարվածների ձայներ:

Բարձրահասակ երիտասարդը ձեռը թափ տվեց:

— Շաբաշ, — գոշեց նա հրամայաբար: — Կովի է, տղերք, — և նա, շարունակելով թկրը քշտել, դուրս եկավ դուռք:

Գործարանայինները գնացին նրա ետևից: Գործարանայինները, որ այդ առավոտ բարձրահասակ երիտասարդի զեկավարությամբ խմում էին օղետանը, օղեվաճառի համար կաշի էին բերել գործարանից, և դրա փոխարեն նրանց օղի էր տըրփել: Հարկան դարբնացի դարբինները, լսելով օղետան թիգ և կարծելով, թե օղետունը զարդիլ են, զոռով ուղում էին ներս խուժել: Ու դռան առաջ կոփվ էր սկսվել:

Օղելաճառը դռան մեջ կովում էր դարբնի հետ, ու այն ժամանակ, եւր գործարանայինները դուրս էին գալիս, դարբինն օղեվաճառից լողկելով, երեսնիվայր ընկավ սալահատակինեւ Մյուս դարբինը խուժում էր դեպի դուռը, կրծքով սեղմերով օղեվաճառին:

Թկրերը քշտած երիտասարդը գեռ քայլելիս խփեց ներս խուժող դարբնի երեսին և ճաց վայրենաբար.

— Ծղե՛րք, մերոնց խփո՞ւմ են:

Այդ ժամանակ առաջին դարբինը վեր կացավ գետնից և շարդված դեմքի արյունը ճանկուելով, գոռաց լալկան ձայնով:

— Հավա՛ր: Սպանեցի՞ն... Մարդ սպանեցի՞ն: Եղբայրներ...

— Օ, ամա՞ն, սպանեցին, սպանեցին մարդուն, — ծղբրտաց հարեան գարբասից դուրս եկած մի կին:

Բազմությունը հավաքվեց արյունաթաթախ գարբնի շուրջը:

— Քիչ մարդ ես թալանել, տկլորացրել, — ասավ ինչոր մեկի ձայնը, օղեվաճառին դիմելով. — ինչո՞ւ ես մարդուն սպանել: Ավազակ:

Բարձրահասակ երիտասարդը, դուն առաջ կանգնած, պրդոր աշբերը մեկ դարձնում էր օղեվաճառի վրա, մերթ դարբնի վրա, կարծես կշաղատելով, թե ճիմա ո՞ւմ հետ է կովելու:

— Մարդասպաշն, — հանկարծ բղավեց նա օղեվաճառի վրա: — Կապեցեք սրան, տղերք:

— Ո՞նց չէ, ինձ նման մեկին կապել ես, — գոշեց օղեվաճառը, պաշտպանվելով իր վրա հարձակվող մարդկանցից, և գլխարկը վերցնելով՝ նետեց գետին: Այդ գործողությունը կարծես ինչոր խորհրդավոր ու սպառնալից նշանակություն ունեցավ. գործարանայինները, որ շրջապատել էին օղեվաճառին, կանգ առան անվճռականության մեջ:

— Կարգը, ախպեր ջան, ես շատ լավ գիտեմ: Թաղապետի մոտ կերթամ: Կարծո՞ւմ ես, չիմ գնաւ: Ճիմա ավազակություն անել ոչ ոքի թույլ չեն տալիս, — գոռաց օղեվաճառը, գլխարկը վերցնելով:

— Գնա՞նք, ում ես վակեցնում: Գնա՞նք... սրա՞ն տես, — կրկնեցին մեկը մյուսի ետևի օղեվաճառն ու բարձրահասակ երիտասարդը, և երկուաը միասին փողոցով շարժվեցին առաջ:

Արնաթաթախ դարբինը գնում էր նրանց հետ միասին: Պարձարանայիններն ու կողմնակի մարդիկ խոսելով ու աղաղակելով գնացին նրանց ետևից:

Մարոսեյկի անկյունում, փակափեղերը դրած մի մեծ տան առաջ, որի վրա կոշկակարի ցուցանակ կար, կանգնած էին քսան կոշկակար՝ վհատ դեմքով, նիհար, չուժված մարդիկ՝ խալաթներ ու պատառուված կապաններ հագած:

— Նա թող ժողովրդի հաշիվը փակի, ինչպես հարկն է, — ասում էր մի նիհար, ցանցառ մորուքով և հոնքերը կիտած վարպետ: — Թե չէ, ի՞նչ, նա մեր արյունը ծծեց ու պրծավ: Նա մեզ խարեց, մի ամբողջ շաբաթ խարեց: Հիմի էլ էստեղ հասցրեց ու ինքը թողեց-զնաց:

— 434 —

Ժողովրդին և արնաթաթախ մարդուն տեսնելով՝ խոսող վարպետը լսեց, և բոլոր կոշկակարները հապշտապ հետաքըրթը ությունը միացան շարժվող բազմության:

— Էս ժողովուրդն ո՞ւր է գնում:

— Պարզ է ո՞ւր, իշխանության մոտ:

— Հը, ճի՞շտ է, որ մերոնք չեն հաղթել:

— Բա դու ի՞նչ էիր կարծում: Տես հայ ժողովուրդն ի՞նչ է ասում:

Լսկեցին հարցումներ ու պատասխաններ: Օղեվաճառը օգտվելով բազմության ավելանալուց, ետ մնաց ժողովրդից և վերադարձավ իր օղետունը:

Բարձրահասակ երիտասարդ գործարանայինը, ջնկատելով իր հակառակորդ օղեվաճառի անհայտանալը, մերկ ձեռը թափահարելով, խոսում էր անդադար, դրանով բոլորի ուշադրությունը հրավիրելով իր վրա: Եվ ժողովուրդն էլ գլխավորապես մոտենում էր նրան, կարծելով թե նրանից կատանա թրեն զրադեցնող բոլոր հարցերի լուծումը:

— Նա ուզում էր կարգ ցույց տալ, օրենք ցույց տալ, դրա համար իշխանություն կա: Ճի՞շտ եմ ասում, ուղղափառներ, — ասում էր բարձրահասակ երիտասարդը, հազիվ նկատելի ժողուակ:

— Նա կարծում է, որ իշխանություն չկա՞: Մի՞թե առանց իշխանության կարելի է: Թե չէ նրանց կողոպտող շատ կլինի:

— Դատարկ խոսելու ինչ կա, — ասին բազմության մեջ, — էղպես ուրեմն թողնո՞ւմ են Մոսկվան: Քեզ հանաքով ևն ասել, իոկ դու հավատացել ես: Ի՞նչ անենք, որ մեր զորքը գնում է: Էնպես թողել են՝ գնաւ: Դրա համար իշխանություն կա: Հրե լսիր, ժողովուրդն ի՞նչ է ասում, — ասում էին բարձրահասակ երիտասարդին ցույց տալով:

Կիտայ-գորոգի պարսպի մոտ մարդկանց մի ուրիշ փորբաթիկ խումբ շրջապատել էր ֆրիզե շինել հագած մի մարդու, որ ձեսին բռնել էր մի թուղթ:

— Հրամա՞ն, հրամա՞ն են կարդում: Հրամա՞ն են կարդում, — լսկեց բազմության մեջ, և ժողովուրդը խօսեց դեպի կարդացողը:

Ֆրիզե շինել հագած մարդը կարդում էր օգոստոսի 31-ի ափիշը: Երբ բազմությունը շրջապատեց նրան, նա կարծեա

— 435 —

շփոթվեց, բայց բարձրահասսիկ երիտասարդի պահանջով, որ խցկվել էր նրա կողքը, նա ձայնի թեթև դուցով սկսեց աֆիշը կարդալ միզրից:

«Ես առավոտք վազ գնում եմ գերապայծառ իշխանի մոտ, — կարգում էր նա (գերապայծառ, — հանդիսակերպես, բերանով ժամանակ ու հոնքերը կիտելով կրկնեց բարձրահասսակ երիտասարդը), — որպեսզի նրա հետ բանալցիմ, դործեմ և զորքերին օդնեմ շարագործներին ոչնչացնելու. մնար էլ կըսկըսենք նրանց հոգին... — շարունակեց կարդացովը և կանգ առավ... (Տեսա՛ր, — հաղթական բացականշեց երիտասարդը: — Նա բու ամբողջ դիստանցիան կխորտակի...) հանել և այդ հորերին սատանայի ծոցն ուղարկել. ես ճաշին ետ կգամ և գրծի կանցնենք. կանենք, կավարտենք և շարագործների կաշին կըերթենք»:

Վերջին խոսքերը կարդացովն ընթերցեց լիակատար լրության մեջ: Բարձրահասսակ երիտասարդը տիրությամբ խոնարհեց զլուկիր: Ակներե էր, որ վերջին այդ բաները ոչ ոք չէր հասկացել: Մանավանդ «Ես վազր ճաշին կգամ» խոսքերը, ըստ երեսութին, վշտացրին անգամ թե կարդացողին, թե ունկնդիրներին: Ժողովուրդը տրամադրված էր բարձր հանգի, իսկ դա շափազանց պարզ էր և ավելորդորեն հասկանալի. դա հենց այն էր, որ նրանցից յուրաքանչյուրը կարող էր ասել և որ այդ իսկ պատճառով չէր կարող ասել բարձրագույն իշխանությունից եկած հրամանը:

Բոլորը կանգնել էին վճառ լուսության մեջ: Բարձրահասսակ երիտասարդը շուրջերը շարժում էր և երերվում:

— Նրան շարցնե՞նք... Դա ինքն է որ կա... Ոնց չե, կհարցնե՞ս... Ինչ կա որ... Նա կասի... — Հանկարծ լսվեց բազմության ետին շարքերում, և բոլորի ուշադրությունը դարձավ մի կառքի վրա, որի մեջ նստել էր ոստիկանապետը. նրան ուղեկցում էին երկու հեծյալ դրագուններ:

Ոստիկանապետը, որ այդ առավոտ, կոմսի հրամանով, վնացել էր բարաքները այրելու և այդ հանձնարարության չնորհիվ շահել էր մեծ գումար, որն այդ բոպեին գտնվում էր մոտք՝ գրանում, տեսնելով դեպ իրեն շարժվող մարդկանց բազմությունը, կառապանին հրամայեց կանգ առնել:

— Ի՞նչ մարդիկ եք, — գոռաց նա բազմության վրա, որ ցրված ու երկշու մոտենում էր նրա կառքին:

— Ի՞նչ մարդիկ եք: Չե՛զ եմ հարցնում, — կրկնեց ոստիկանապետը, պատասխան շտանալով:

— Սրանք, ձերդ ազնվություն, — ասավ ֆրիզե շինելով գրագիրը: — Սրանք, ձերդ ազնվություն, պայծառափայլ կոմսի հրամանով, իրենց կանքն ըխնայելով, ցանկանում են ծառալել, օգտակար լինել, և ոչ թե բունտ սարքել, ինչպես ասված է պայծառափայլ կոմսի...

— Կոմսը չի մեկնել, նա այստեղ է, և ձեր մասին կարգադրություն կլինի, — ասավ ոստիկանապետը: — Քշ՛ր, — ասավ նա կառապանին:

Բազմությունը կանգ առավ, խմբվելով նրանց շուրջը, ո՛վեր լսել էին այն, ինչ ասել էր իշխանությունը, և նայելով հեռացող կառքի ետևից:

Ոստիկանապետն այդ ժամանակ վախեցած ետ նայեց, ինչոր բան ասավ կառապանին, և ձիերը գնացին ավելի արագ:

— Խա՛բեց, տղերք: Գնանք իրա մոտ, — գոռաց բարձրահասսակ երիտասարդը: — Մի՛ թողնեք, աղերք: Թող հաշիվ տա մեզ: Բոնեցե՛ք, — բացականշեցին մի քանի ձայներ, և ժողովուրդը վազեց կառքի ետևից:

Բազմությունը ոստիկանապետի ետևից, բա բձրածայն խոսելով գնաց գեւի կուրյանկա:

— Ինչ է, աղաներն ու վաճառականները՝ բոլորը քաղաքից գնացել են, իսկ մենք դրա համար կորչելու ենք: Մենք շուն ենք, ի՛նչ է, — լսվում էր հաճախ բազմության միջից:

## XXIV

Սեպտեմբերի 1-ի երեկոյան, Կուտուզովի հետ ունեցած տեսակցությունից հետո, կոմս Ռաստոպչինը, վշտացած ու վիրավորված այն բանից, որ իրեն ուղամական խորհրդակցության չէին հրավիրել, որ Կուտուզովը ոչ մի ուշադրություն չէր դարձրել նրա այն առաջարկի վրա, որ ինքը մասնակցություն ունենա մայրաքաղաքի պաշտպանությանը, և զարմացած այն նոր, ճամբարում իրեն համար պարզված կարծիքից, որի համաձայն մայրաքաղաքի անդորրության և նրա հայրե-

— 437 —

նասիրական տրամադրության հարցը ոչ միայն երկրորդական, այլև ավելորդ ու չնշին հարց էր գտանում, — վշտացած, վիրավորված ու զարմացած այդ բոլորից՝ կոմս Ռաստոպչինը Մոսկվա վերադարձավ, Ընթրելուց հետո, կոմսն, առանց հանգելու պառկեց բազմոցի վրա. ժամը 1-ին նրան արթնացրեց բաները, որը Կոտուզովից նամակ էր բերել: Նամակում ասված էր, թե քանի որ զորքերը նահանջում են Մոսկվայից այս կողմ դեպի Ռյազանի ճանապարհ, ապա չի՞ հաճի արդյոք կոմսը ուստիկանական պաշտոնյաներ ուղարկել՝ գորքը բաղաքից անցկացնելու համար: Այդ լուրը նորություն չէր Ռաստոպչինի համար: Ոչ միայն երեկ Պոկլոննայա գորայի վրա Կուտուզովից հետ ունեցած տեսակցությունից, այլև Հնացարդի ճակատամարտից հետո, երբ Մոսկվա եկող բոլոր զեներալները միաբերան ասում էին, թե չի կարելի ճակատամարտ տալ, և երբ կոմսի թույլավությամբ ամեն գիշեր բաղաքից արդեն գուրս էին տանում պետական գույքը և բնակիչների կեսը հեռացել էր, կոմս Ռաստոպչինը գիտեր, որ Մոսկվան թողնելու է, բայց՝ այնուամենայնիվ, այդ լուրը, որը հայտնված էր հասարակ գրության ձևով, որի հետ միասին կար Կուտուզովի կարգադրությունը և որն ստացվել էր գիշերը, առաջին քնի միջոցին, զարմացրեց ու զայնացրեց կոմսին:

Հետագայում, բացատրելով իր այդ ժամանակաշրջանի գույնությունը, կոմս Ռաստոպչինն իր հուշերում մի բանի անգամ նշել է, թե ինքն այն ժամանակ երկու կարևոր նպատակ է ունեցել. De maintenir la tranquillité à Moscou et d'en faire partir les habitants<sup>1</sup>, եթե ընդունենք այդ կրկնակի նպատակը, ապա Ռաստոպչինը բոլոր գործողությունները կինեն անբասիր: Ինչո՞ւ գուրս չէին բերել Մոսկվայի սրբությունները, զենքը, փամփուշտը, վառողը, հացի պաշարը. Ինչո՞ւ հազարավոր բնակիչների խարել էին, թե Մոսկվան չեն հանձնի թշնամուն, և նրանց քայլայման պատճառ դարձել: — Նրա համար, որ մայրաքաղաքում անդորրություն պահպանվի, պատասխանում է կոմս Ռաստոպչինի բացատրությունը: Ինչո՞ւ էին պաշտոնատներից գուրս տարվում անպետք թղթերի

<sup>1</sup> Հանգուության պահպանել Մոսկվայում և բնակիչներին գույքս բերել շաղաթեա:

կապերը և Լեպպիխի օդապարիկն ու այլ առարկաներ: — Նրա համար որ քաղաքը դատարկ մնար, պատասխանում է կոմս Ռաստոպչինի բացատրությունը: Բավկական է միայն ընդունել, որ որևէ բան սպառնում էր ժողովրդի անդորրությանը, և ամեն մի գործողություն արդարացած կլինի:

Տեսորի բոլոր սարսափները հիմնվել են միայն ժողովրդի անդորրության նկատմամբ ունեցած հոգատարության վրա:

Իսկ ի՞նչի վրա էր հիմնված կոմս Ռաստոպչինի՝ ժողովրդի անդորրության նկատմամբ ունեցած վախը 1812 թ. Մոսկվայում: Ի՞նչ հիմք կար ենթադրելու, որ քաղաքում իր ողովություն սարքելու տրամադրություն է եղել: Բնակիչները հեռանում էին. զորքերը, նահանջելով, լցվում էին Մոսկվա Ինչո՞ւ պետք է դրա պատճառով ժողովուրդը խռովություն ապրեր:

Ոչ միայն Մոսկվայում, այլև ամբողջ Ռուսաստանում՝ թրշնամու ներս մտնելու ժամանակ խռովության նման ոչ մի բան շպատահեց: Սեպտեմբերի 1-ին և 2-ին տասը հազար մարդուց ավելի էր մնացել Մոսկվայում, և գլխավոր հրամանատարի տան առաջ հավաքված ամբոխից (որին ինքը. գլխավոր հրամանատարն էր կանչել) բացի ոչնչ չի եղել: Ակներև է, որ ավելի ևս քիչ պետք էր սպասել, որ ժողովրդի մեջ հուզում կառաջանա, եթե Բորոդինոյի ճակատամարտից հետո, երբ Մոսկվայի պարպումն ակներև կամ գոնե հավանական դարձավ, կոմս Ռաստոպչինը զենք բաժանելով և աֆիշներով ժողովրդին հուզելու փոխարեն միջոցներ ձեռք առներ՝ բոլոր սրբությունները, վառողը, արկերը և դրամը գուրս բերելու համար և ուղղակի հայտարարեք ժողովրդին, որ Մոսկվան թողնվում է:

Ռաստոպչինը, այդ դյուրաբորբոք, տաքարյուն մարդը, որը միշտ շփում ուներ վարչական բարձր շրջանների հետ, թեև հայրենասիրական զգացմունքի տեր, բայց ոչ մի գաղափար շուներ այն ժողովրդի մասին, որին նա մտադիր էր կառաջարելի թշնամու Մոլենսկ մտնելու հենց առաջին պահից Ռաստոպչինն իր երեակայության մեջ իրեն հատկացրել էր «Ռուսաստանի սրտի» ժողովրդական զգացումների զեկավարի գերցէ նրան ոչ միայն թվում էր (ինչպես այդ թվում է յուրաքանչյա բարչագետի), թե ինքն էր զեկավարում Մոսկվայի բնակիչների արտաքին գործողությունները, այլև թվում էր, թե ի՞ւշ

դեկապարում էր նրանց տրամադրությունը իր այն կոչերի և ափիշների միջոցով, որոնք գրվում էին ցինիկ լեզվով, որը ժողովուրդն իր շրջանում արհամարհում է և որը նա չի հասկանում, երբ լուսմ է այն վերից: Ժողովրդական զգացումների հեկավարի գեղեցիկ դերն այնքան գուր եկավ Ռաստոպշինին, նա այնպես ընտելացավ դրան, որ այդ գերից գուրս գալու անշրջաժեշտությունը, առանց որևէ հերոսական էֆեկտի Մոսկվան թողնելու անհրաժեշտությունը՝ անսպասելի կերպով ծառացավ նրա առաջ, և նա հանկարծ կորցրեց իր ոտքերի տակի այն հողը, որի վրա նա կանգնած էր, և բնավ զգիտեր, թե ինչ անի: Նա թեեն գիտեր, բայց մինչև վերջին րոպեն ամբողջ հոգով չէր հավատում, որ Մոսկվան կթողնվի, և ոչինչ չէր անում այդ նպատակով: Բնակիշները հեռանում էին՝ հակառակ նրա կամքի: Եթե տեղափոխում էին պաշտոնատները, ապա միայն պաշտոնյաների պահանջմամբ, որոնց հետ դժվարությամբ էր համաձայնում կոմսը: Իսկ ինքն զրադված էր միայն այն դերով, որ ինքն իր համար ստեղծել էր: Ինչպես այդ հաճախ պատահում է վառ երևակայություն ունեցող մարդկանց, նա վաղուց արգեն գիտեր, որ Մոսկվան կթողնեն, բայց գեղեր միայն դատողությամբ, մինչդեռ ամբողջ հոգով չէր հավատում դրան, չէր երևակայում այդ նոր դրությունը:

Նրա ամբողջ գործունեությունը որքան օգտակար էր և ինչպես էր անդրադառնում ժողովրդի վրա, այդ այլ հարց է), նրա ամբո՞ղջ գործունեությունն ուղղված էր այն բանին, որ բնակիշների մեջ հարուցի այն զգացումը, ինչ ինքն ուներ — հայրենասիրական ատելություն դեպի ֆրանսացիները և վստահություն իր անձի նկատմամբ:

Բայց երբ գեպքն սկսեց իր իսկական պատմական շափերն ընդունել, երբ պարզեց, որ բավական չէ միայն խոսքերով արտահայտել իր ատելությունը դեպի ֆրանսացիները, երբ անհնարին էր անգամ ճակատամարտով արտահայտել այդ ատելությունը, երբ իր անձի նկատմամբ ունեցած վստահությունն անօդտակար գտնվեց միայն Մոսկվայի խնդրի վերաբերմամբ, երբ ամբողջ բնակչությունը, մի մարդու պես, թունելով իր կայրը, հեռացավ Մոսկվայից, այդ բացասական գործողությամբ ցույց տալով իր ժողովրդական զգացումի

բովանդակ ուժը, — այդ ժամանակ Ռաստոպչինի րնտրած դերը հանկարծ անիմաստ դարձավ: Նա հանկարծ էրեն զգաց մենակ, թույլ ու ծիծաղելի, ոտքերի տակի հողը կորցրած:

Երբ Ռաստոպչինը բնից արթնանալով, ստացավ Կուտուզովի սառն ու Հրամայական գրությունը, նա իրեն այնքան ավելի զղայնացած զգաց, որքան ավելի հանցավոր էր զգում իրեն: Մոսկվայում մնում էր այն ամենը, ինչ հենց նրան լր հանձնված, այն ամբողջ պետական գույքը, որը նա պետք է գուրս բերեր քաղաքից: Իսկ այդ ամենը դուրս բերելն անհնարին էր:

«Իսկ ո՞վ է հանցավոր դրա համար, ո՞վ հասցրեց այստեղ», մտածում էր նա: «Հասկանալի է, ո՞չ ես: Ես ամեն ինչ պատրաստել էի, ես Մոսկվան պահում էի, ա՞յլ, ինչպես: Եվ ահա թե նրանք բանն ուր հասցրին: Սրիկանե՛ր, դավաճաննե՛ր», մտածում էր նա, առանց պարզորեն որոշելու այն, թե ո՞վքեր էին այդ սրիկաներն ու դավաճանները, բայց անհրաժեշտություն զգալով՝ ատել այդ ինչ-որ դավաճաններին, որոնք հանցավոր էին այդ կեղծ ու ծիծաղելի դրության համար, որի մեջ նա գտնվում էր:

Այդ ամբողջ գիշերը կոմս Ռաստոպչինը կարգադրություններ էր անում, որպիսիք ստանալու համար նրա մոտ էին գալիս Մոսկվայի բոլոր կողմերից: Մերձավորները երբեք կոմսին այդքան մոայլ ու զղայնացած չէին տեսել:

«Զե՛րդ պայծառափայլություն, ժառանդական կալւածների Դեպարտամենտից, վերատեսչի կողմից եկել են կարգադրություններ ստանալու... Կոնսիստորիայից, Սենատից, Համալսարանից, Դատատիարակչական տնից<sup>1</sup>, սրբազն փոխանորդն է ուղարկել... Հարցնում է... ի՞նչ կհրամայեք հրշեց խմբի մասին: Բանտի տեսուչը... գեղին տան տեսուչը...», — ամբողջ գիշերն անդադար զեկուցում էին կոմսին:

Այդ բոլոր հարցումներին կոմսը տալիս էր կարճ ու բարեկացկոտ պատասխաններ, որոնք ցույց էին տալիս, որ նրա կարգս: Դրություններն այժմ պետք չեն, որ իր փութաշանութեն նախապատրաստած ամբողջ գործը այժմ մեկը փշացրել

<sup>1</sup> Ապօրինի երեխաների դաստիարակության տուն:

է և որ այդ մեկը պատասխանատու կլինի այն ամենի համար, ինչ այժմ կատարվելու է:

— Է՞ս, ասա՛ այդ հիմարի գլխին, — պատասխանում էր նա ժառանգական կալվածների Դեպարտամենտից եկածին, — որ մնա իր թղթերին հսկելու է՞ս, ի՞նչ դատարկ բան ես հարցնում հրշեց խմբի վերաբերյալ, Զիեր կան, թող ճանապարհեն վլադիմիր: Հո շե՞նք թողնելու ֆրանսացիներին:

— Զե՞րդ պայծառափայլություն, եկել է գժանոցի վերակացուն, ի՞նչ կհրամայեք:

— Ի՞նչ կհրամայեմ: Թող ամենքն էլ գնա՛ն, ահա բոլորը... Խսկ գժերին բաց թողել քաղաքը: Երբ մեզ մոտ գժերը բանակներ են ղեկավարում, ապա դրանց աստված ինքն է պատվիրել:

Բանտում նստած կալանավորների վերաբերող հարցումին կոմսը զայրացած բոռաց տեսչի վրա.

— Ի՞նչ է, քեզ երկու գումարուակ ուղեկցող պահակախում, տանք, որ չունենք: Արձակե՞լ երանց, և ուրիշ ո՞շինչ:

— Զերդ պայծառափայլություն, կան քաղաքականներ Մեշկովը, Վերեշշագինը:

— Վերեշշա՞գինը: Նա դեռ շի՞ կախված, — բոռաց Ռաստոպինը: — Քերե՞նք նրան ինձ մոտ:

## XXV

Առավոտյան ժամը 9-ին, երբ զորքերն արդեն սկսեցին շարժվել Մոսկվայի միջով, այլևս ոչ ոք չէր գալիս կոմսից կարգադրություն խնդրելու բոլորը, ովքեր կարող էին հեռանալ, հեռանում էին իրենք իրենց: Նրանք, ովքեր մնում էին, իրենք իրենց որոշում էին, թե ի՞նչ պետք է անեն:

Կոմսը պատվիրեց ձիերը բերել՝ Սոկոլնիկի գնալու համար. և հոնքերը կիտած, դեղնած ու լուս, ձեռները խաչած նստել է: Իր առանձնասենյակում:

Յուրաքանչյուր վարչագետի՝ հանգիստ և անխոռվ ժամանակ թվում է, թե միայն նրա ջանքերով է շարժվում իր իրավասության ներքո գտնվող ամբողջ ազգարնակչությունը և իր անհրաժեշտության այդ գիտակցությունն է համարում իր աշխատանքի ու իր ջանքերի գլխավոր պարգեր: Հասկանալի է, որ այնքան ժամանակ, որքան տակավին հանգիստ ու իւաղաղ է.

պատմական ծովը, այն վարչագետ-կառավարչին, որն իր հին, փտած մակույկով ծովի օգնությամբ հենվել է ծողովրդի նավին և ինքն էլ շարժվում է, պետք է թվա, թե ինքն է շարժում այն նավը, որին ինքը հենված է: Բայց բավական է, որ փոթորկի բարձրանա, ծովն ալեկոծվի և ինքը նավը շարժվի, որպեսզի մուլորությունն այլևս անհարին լինի: Նավի առաջ է զնում հրակայական, անկախ ընթացքով, ծովը չի հասնում շարժվող նավին և վարչագետը, որը մինչ այդ ուժի աղբյուր էր համարում իրեն, հանկարծ իշխողի դրությունից անցնում է չնշին, անօգատակար ու թույլ մարզու դրության:

Ռաստոպիչին այդ զգում էր, և հենց այդ էլ նրան չղայնացնում էր:

Ռատիկանապետը, որին ամբոխը կանգնեցրեց, աղյուտանափակ միասին, որը եկել էր հայտնելու, թե ձիերը պատրաստ են, մտան կոմսի առանձնասենյակը: Նրանք երկուսով էլ գունատ էին, և ոստիկանապետը, զեկուցելով որ իրեն տրված հանձնարարությունը կատարված է, միաժամանակ հայտնեց, որ կոմսի բակում հսկայական բազմություն է հավաքվել, որը ցանկանում է նրան տեսնել:

Ռաստոպիչինը, ոչ մի պատասխան շտալով, վեր կացավ և արագ քայլերով գնաց իր շքեղ, լուսավոր հյուրասրահը, մատեցավ պատշգամբի զոան, ձեռը զեեց բոնակին, հետո թողեց և մոտեցավ այն պատուհանին, որիք ավելի լավ էր երեսում ամեւող բազմությունը: Բարձրահաւակ երիտասարդը կանգնած էր առաջին շարքերում և լուրջ դեմքով, ձեռը թափահարելավ, ինչոր բան էր ասում: Արյունաշաղախ մի դարբին մոռցը դեմքով կանգնած էր երիտասարդի կողքին: Փակ պատուհաններից լսվում էր ձայների որոտ:

— Կառքը պատրա՞ստ է, — հարցրեց Ռաստոպիչինը, Շառանալով պատուհանից:

— Պատրա՞ստ է, ձե՞րդ պայծառափայլություն, — ասով աղյուտանատը:

Ռաստոպիչինը կրկին մոտեցավ պատշգամբի դռան:

— Այդ ի՞նչ են ուզում նրանք, — հարցրեց նա ոստիկանապետին:

— Զե՞րդ պայծառափայլություն, նրանք ասում են, որ հավաքվել են ձեր կարգադրությամբ գնալու ֆրանսացիների

դեմ, և ինչոր հավաճանության մասին են գոռում-գոշում: Բայց անզուսպ ու մոլեգնած են դրանք, ձերդ պայծառափայլություն: Ես հազիվ պրծա ձեռներից: Ձե՛րդ պայծառափայլություն, համարձակություն ունեմ առաջարկելու...»

— Հաճեցե՛ք գնալ, ես առանց ձեզ գիտեմ, թե ինչ պետք է անեմ, — բարկացկոտ բոռաց Ծաստոպշինը:

Նա կանգնած էր պատշգամբի դռան մոտ և նայում էր բազմությանը: «Ահա՝ թե ի՞նչ արին նրանք Ծաստոպանին: Ահա՝ թե ինչ արին նրանք ինձ», մտածում էր Ծաստոպշինը, զգալով, որ իր սրտում անզուսպ զայրույթ է զարթնում ինչոր մեկի դեմ, որին կարելի էր վերագրել ամբողջ կատարվածի պատճառը: Ինչպես այդ հաճախ պատահում է տաքարյուն մարդկանց, զայրույթն արգեն տիրում էր նրան, բայց նա դեռ զայրույթի առարկա էր փնտրում: «La voilà la population, la lie du peuple», մտածում էր նա, նայելով բազմությանը. «la plèbe qui's ont soulevée par leur sottise. Il leur faut une victime!» ծագեց նրա գլխում այն ժամանակ, երբ նա նայում էր ձեռքը թափահարող բարձրահասակ երիտասարդին: Եվ այդ միտքը ծագեց նրա գլխում այն պատճառով, որ հենց իրեն էր հարկավոր այդ գոհը, իր զայրույթի համար անհրաժեշտ այդ առարկան:

— Կառքը պատրաստ է, — կրկին հարցրեց նա:

— Պատրաստ է, ձե՛րդ պայծառափայլություն: Ի՞նչ կը հրամայեք Վերեշշագինի վերաբերյալ: Նա դռան մոտ պատւմ է, — պատասխանեց աղյուսանար:

— Հա՛, — գոչեց Ծաստոպշինը, ինչպես մի անսպասելի հիշությունից շանթահար եղած մարդ:

Եվ, արագորեն բանալով դուռը, նա վճռական քայլերով դուրս եկավ պատշգամբը: Խոսոցը հանկարծ դադարեց, զրիխարկներն ու կարտուզները հանվեցին, և բոլորի հայացքներն ուղղվեցին դեպի պատշգամբ դուրս եկած կոմսը:

— Բա՛րե, տղե՛րք, — ասավ կոմսն արագութարձրածայն: — Ենորհակալ եմ, որ եկել եք: Ես հիմա կգամ ձեզ մոտ, բայց ամենից առաջ պետք է շարագործի հախիցը գալ: Մենք պետք է

ողատժենք այն շարագործին, որը Մոսկվայի կործանման պատճեան եղավ: Մասսանցե՛ք ինձ: Եվ կոմսը նույնպես արագ է երաշտակալ իր հարկաբաժինը, դուռն ամուր շրխկացնելով:

Գոհունակության ու հայւանության մումոց լսվեց բազմության մեջ: «Նա, ուրիշ՝ մն, բոլոր շարագործների զատն ու գատատանը կանի՛: Իսկ դու ասում ես, թե ֆրանսացի է... նա քեզ բոլոր կարդ ու կանոնը ցույց կտա», ասում էին բազմության մեջ, կարծես միմյանց կշտամբելով իրենց թերահավատության համար:

Մի քանի բոպեից հետո շբամուտքից շտապով դուրս եկավ մի սպա, ինչոր բան կարգադրեց, և գրագունները ձգվեցին: Բազմությունը պատշգամբի մոտից ագահորեն շարժվեց գեպի մուտքը: Ծաստոպշինը ցակուտ և արագ քայլերով դուրս եկավ աստիճանների գլուխը և շտապով նայեց իր շուրջը, կարծես մեկին որոնելով:

— Ո՞ւր է նա, — ասավ կոմսը:

Եվ հենց նույն բոպեին, երբ նա ասավ այդ, տեսավ երկու դրագունի միջև տան անկյունից դուրս եկող մի երիտասարդի: Երկար, բարակ վզով և կիսով շափ ածիլված ու մազերն արդեն եկած գլխով: Այդ երիտասարդը հազած էր աղվեսի մորթուց կարած, երբեմնի, ալճնամոլին վայել, երևսը մահուղ քաշած, տրորված մի քուրք և կեղտոտ, կանեփի թելերից գործված կաշանավորի շալվար, որը նա դրել էր իր շմաքրած, ծոմոված բարակ կոշիկների մեջ: Բարակ, թույլ ոտքերից ծանրաքաշ կախ էին ընկած զլթաները, որոնք դժվարացնում էին երիտասարդի անվննական քայլվածքը:

— Հա՛, — ասավ Ծաստոպշինը, փութկոտությամբ հևոացնելով իր հայացքը աղվեսի մորթուց քուրք հաղած երիտասարդից և ցույց տալով մուտքի ստորին աստիճանը. — զրան կանգնեցրե՛ք այստեղ:

Երիտասարդը, շղթաները զրնգացնելով ծանրաքայլ բաթձրացավ ցույց տրված աստիճանը, մատով պահելով քուրքի սեղմող օձիքը, երկու անգամ թեքեց իր երկար վիզը և, հառաշնք արձակելով, խոնարհ շարժումով իր բարակ, ոչ բանվորական ձեռները դրեց փորի վրա:

Մի քանի բոպե, մինչ երիտասարդը տեղակրովում էր ասաւիճանի վրա, լոսություն տիրեց: Միայն բազմության մեջ,

<sup>1</sup> Ահա նա՝ ժողովրդական ամբոխը. բնակության այս տականքը, որին նրանք ոտքի հն հանել իրենց հիմարությամբ: Դրանց զոհ է հարկացրեւ

գեպի մի կետ ձգտող և իրար սեղմող մարդկանց ետեհի շարքերում լսվում էր տնբոց, հեծեծանք, հրճոց և տեղափոխվող ուստի հրի ձայներ:

Ռաստոպաշինը, սպասելով որ նա կանգ առնի ցույց տրված տեղում, հոնքերը կիտած, ձեռով տրորում էր երեսը:

— Տղերք, — ասավ Ռաստոպաշինը մետաղի պես հնչուն ձայնով, — այս մարդը, Վերեշշագինը, — այն սրիկան է, որ կործանեց Մոսկվան:

Աղվեսի մորթուց քուրք հագած երիտասարդը կանգնած էր խոնարհ դիրքով, ձեռների թաթերո փորի առաջ իրար վրա դրած և քիչ կուցած: Նրա անհուսալի արտահայտություն ունեցող նիշար, ածիլված զլխի պատճառով այլանդակված շահել դեմքը խոնարհած էր ցած: Կոմսի առաջին խոսքերը լսելով, նա դանդաղորեն բարձրացրեց գլուխը և վարից նայեց կոմսին, կարծիս թե ցանկանալով ինչ-որ բան ասել նրան կամ գոնե հայացքը նրա հայացքին ուղղել: Բայց Ռաստոպաշինը չը նայում նրան: Երիտասարդի երկար, բարակ զղի մի երակը ականջի ետեւում պարանի նման լցվեց ու կտպտեց, և նրա դեմքը հանկարծ շառագունեց:

Բոլորի հայացքները նրան էին ուղղված: Նա նայեց բաղմության և, կարծիս հուսագրված այն արտահայտությունից, որը նա կարդաց մարդկանց դեմքերին, տիտուր ու երկշուտ ժրպատաց և, կրկին խոնարհելով գլուխը, ոտքերն ուղղեց-տեղավորեց աստիճանի վրա:

— Սա դավաճանե՞ց իր թագավորին ու հայրենիքին, սա հանձնվել է Բոնապարտին, բոլոր ուսուներից միայն սա խայտառակեց ուստի անունը, և սա է կործանում Մոսկվան, — ասում էր Ռաստոպաշինը միապաղաղ, սուր ձայնով. բայց հանկարծ՝ շտապով նայեց դեպի ցած՝ Վերեշշագինին, որը շարունակում էր կանգնած մնալ նույն խոնարհ դիրքով: Կարծես այդ հայացքից նա պայթեց և, ձեռքը բարձրացնելով, գրեթե գոռաց դիմելով ժողովրդին.

— Զեր գատաստանը տեսե՞ք պահ հետ: Մրան հանձնում եմ ձե՞զ:

Ժողովուրդը լուս էր և միայն ավելի ու ավելի էին սեղմում իրար: Հետզհետե անհանդուրժելի էր դառնում այն դրությունը, երբ մարդիկ իրար բոնած տակալին շարամակում էին շնչել

այդ վարակված հեղձուկ օդում և, անգամ շարժվելու ուժ շունենալով, սպասում էին ինչ-որ անհայտ, անհասկանալի ու սարսափելի մի բանի: Առջևի շարքերում կանգնած մարդիկ, որոնք տեսնում ու լսում էին այն ամենը, ինչ կատարվում էր նրանց առաջ, բոլորը վախից լայն բացած աշբերով, բաց բերաններով, իրենց բոլոր ուժերը լարելով, իրենց մեջքերով պահում էին ետևի շարքերի հնչումը:

— Տվե՛ք դրան... Թող մե՛ռնի դավաճանը և շխայտառակի ուսումի անունը, — գոռաց Ռաստոպաշինը: — Կտոր-կտոր արե՛ք դրան: Հրամայում եմ:

Լսելով Ռաստոպաշինի ոչ արդեն խոսքերը, այլ նրա ձայնի ցասկոտ հնչյունները, ամբոխը հառաջեց ու վրա հասավ, բայց նորից կանգ առավ:

— Կո՛մս... — լսելոց վերստին տիրած վայրկենական լըռության մեջ Վերեշշագինի երկշուտ ու միաժամանակ թեմական ձայնը: — Կո՛մս, վերև աստված կա՛... — ասավ Վերեշշագինը, գլուխը բարձրացնելով, և նրա բարակ պարանոցի հաստ երակը կր կրկին արյունով լցվեց, և նրա գեմքին արագորեն կարմը-րություն երևաց, որը և իսկույն շքացավ:

Նա շվերշացրեց այն, ինչ ուզում էր ասել:

— Կտոր-կտոր արե՛ք դրան: Ես հրամայում եմ... — գոռշեց մեր յուպաշինը, հանկարծ գունատվելով նույնպես ինչպես և Վերեշշագինը:

— Թրերը հանե՛ք, — հրամայեց սպան դրագուններին, ինքը թուրը հանելով:

Մի այլ աշելի հզորագույն ալիք բարձրացավ ժողովրդի մեջ և, հասնելով առջևի շարքերին, այդ ալիքը տեղից շարժեց առջևում կանգնածներին և տատանելով քշեց-տարակ մինչև մուտքի աստիճանների: Բարձրահասակ երիտասարդը դեմքի քարացած արտահայտությամբ և անշարժ բարձրացրած ձեռքով կանգնած էր Վերեշշագինի կողքին:

— Խփի՛ր, — հազիվ շնչաց սպան, դառնալով դրագուններին: Եվ հանկարծ զայրույթից աղճատված դեմքով մի պին-վոր բութ պալաշով խփեց Վերեշշագինի գլխին:

«Վա՛յ», կարծ ու զարմացած գոռաց Վերեշշագինը, վախեցած շուրջը նայելով և կարծես չհասկանալով, թե ինչո՞ւ այդպիս

վարվեցին իր հետ։ Զարմանքի ու սոսկումի նույնպիսի հեծեծանք լսվեց նաև բազմության մեջ։ «0՝, տե՛ր աստված», լսվեց մեկի տխուր բացականչությունը։

Բայց զարմանքի այն բացականշությունից հետո, որը դուրս պրծավ Վերեշշագինի կրծքից, նա ցավից աղիողորմ ճիշ արձակեց, և այդ ճիշը կործանեց նրան։ Մարդկային զգացումի այն վերին աստիճանի լարված արգելասահմանը, որը դեռ զսպում էր ամբոխին, մի ակնթարթում խորտակվեց։ Ոճրագործությունն սկսված էր, հարկավոր էր հասցնել այն մինչև վերց։ Ամբոխի ահեղ ու զայրագին գոռում-գորշունը խլացրեց կշտամբանքի աղիողորմ հեծեծանքը։ Ինչպես նավերը ջարդ ու շփոր անող վերջին յոթերորդ վիթխարի մի ալիք, բազմության վերջին շարքերից բարձրացավ այդ վերջին անզուսպ ալիքը, շարժվեց ու հասավ առշեռում կանգնածներին, ցնցեց տեղահան արավ նրանց ու կլանեց ամեն ինչ։ Հարվածող դրագունն ուզեց կրկնել իր հարվածը։ Վերեշշագինը սոսկումի ճիշ արձակելով և ձեռներով պաշտպանվելով, նետվեց դեպի ժողովուրդը։ Բարձրահասակ երիտասարդը, որին նա դեմ առավ, երկու ձեռքով բռնեց Վերեշշագինի բարակ վզից և վայրենի գոյզունով նրա հետ միասին ընկավ իրար սեղմած ու թափով առաջ շարժվող ժողովրդի ոտքերի տակ։

Ոմանք ծեծում ու պատառոտում էին Վերշշագինին, ոմանք՝ բարձրահասակ երիտասարդին։ Եվ սեղմակած ու տրորված մարդկանց ճիշերը, ինչպես և այն մարդկանց աղաղակները, որոնք աշխատում էին փրկել բարձրահասակ երիտասարդին, միայն հրահրում էին ամբոխի կատաղությունը։ Երկար ժամանակ դրագունները չէին կարողանում աղատել արյունաշաղախ, գրեթե մահացու կերպով խոշտանգված գործարանայինին։ Եվ երկար ժամանակ, չնայած այն տենդագին փութկոտությանը, որով ամբոխն աշխատում էր իր վախճանին հասցնել արդեն սկսված գործը, այն մարդիկ, որոնք ծեծում, խեղում ու պատառոտում էին Վերեշշագինին, չկարողացան սպանել նրան։ Բայց ամբոխը նրանց սեղմում էր ամեն կողմից, նրանց հետ միասին կենտրոնում, ինչպես մի զանգված, օրորվում-ալեկոծում էր մի կողմից մյուս կողմ և նրանց հնարավորություն չէր տալիս ոչ սպանել-վերջացնել նրան, և ոչ էլ թողնել։

— 448 —

«Կացնով խփի՛ր, կացնո՛վ... ջարդեցին... Դավաճա՛ն, Հիւսուսի՛ն ծախել է... կենդանի է... դեռ պիհնդ է... Գողն արժանի է այդ տանջանքին։ Կացնով, կացնո՛վ... թե կենդանի է։»

Միայն այն ժամանակ, երբ զո՞ր դադարեց պայքարել և երբ նրա ճիշերին հաջորդեց համաշափ երկարաձիգ խոխոց, ամբոխն սկսեց փութկոտությամբ տեղաշարժվել արյունաշաղախի դիակի շուրջը։ Ամեն մեկը մոտենում էր, նայում, թե ի՞նչ կատարվեց, և սոսկումով, կշտամբանքով ու զարմանքով, բազմության միջով սեղմվելով ետ էր գնում։

«0՝, տե՛ր աստված, ժողովուրդ չէ, այլ գազա՛ն. Էլ ի՞նչ-պես կենդանի մնար», լսվում էր բազմության միջից։ «Եվ ջահել է... երկի, վաճառականներից է։ Ա՛յ քեզ ժողովուրդ... Ասում են, նա չի... ինչպես ինչպես թե նա չի... 0՝, տե՛ր աստված... Մի ուրիշին էլ են ծեծել-ջարդել. ասում են, հազիվ շնչում է... Վա՛յ, ժողովուրդ... որ մեղքից չի վախենում...», ասում էին այժմ նույն մարդիկ, հիվանդագին-խղճահար արտահայտությամբ նայելով դիակի արյունով ու փոշով կեղտոտած դեմքին և կտրատված երկար, բարակ վզին։

Ոստիկանական մի փութաշան պաշտոնյա, անպատշաճ համարելով դիակի ներկայությունը նորին պայծառափայլության բակում, դրագուններին հրամայեց մարմինը դուրս տանել փողոց։ Երկու դրագուն բռնեցին դիակի այլանդակված ոտքերից և մարմինը քարշ տվին։ Արյունլվա, փոշով կեղտոտված, ածիլած գլուխը երկար վզի վրա՝ դեռ ու դեռ ընկնելով քարշ էր գալիս գետնի վրայով։ Ժողովուրդը սեղմվում, հեռանում էր դիակից։

Այն ժամանակ, երբ Վերեշշագինն ընկավ և ամբոխը վայրենի մոնշով սկսեց հավաքվել և տարուբերվել նրա գլխին, Ռաստոպագինը հանկարծ գունատվեց և փոխանակ դեպի ետևի մուտքի դուրս գնալու, ուր նրան սպասում էր կարքը, նա, ինքն էլ շիմանալով՝ թե ո՛ւր և ինչո՛ւ, գլուխը խոնարհած արագ քայլերով անցավ այն միջանցքով, որը տանում է դեպի ստորին հարկի սենյակները։ Կոմսի գեմքը գունատ էր, և նա չէր կարողանում կանգնեցնել կարծես տենդից դողացող իր ներքեւ ժնոտը։

— Զե՛րդ պայծառափայլություն, այստեղ... ո՞ւր կհա-

— 449 —

Ճեք... Այստեղ համեցե՞ք, — ասավ նրա ետևից մի դողդոջուն, վախեցած ձայն:

Կոմս Ռաստոպաշինն ի վիճակի չէր ոչինչ պատասխանել և, հնագանդորեն թեքվելով, գնաց այնտեղ, ուր մատնացուց արին։ Ետքի մուտքի մոտ կանգնած էր կառքը։ Մոլեգնած ամբոխի հեռավոր աղջաղակները լսվում էին և այստեղ։ Կոմս Ռաստոպաշինը հապճեպ նստեց կառքը և պատվիրեց քշել իր՝ քաղաքից դուրս, Սոկոլնիկիում գտնվող տունու։

<sup>1</sup> Ժողովրդական ամբոխը սարսափելի է. Նա զգվելի է: Նրանք գալլերի են նման. Նրանց ոչնչով շնորհակալութիւնը բացի մսից:

<sup>2</sup> Ես այլ պարտականություններ ունեի — հարկավոր էր ժողովրդին բավարարել։ Հանրային բարօրության համար շատ այլ զոհեր են եղել և լինում են։

<sup>3</sup> Ի՞ւ կլանքի ուղին բարորմին առ կեռա կոժիկու

Թեթևակի օրորվելով կառքի փափուկ զապանակների վրա և այլևս չմտելով ամբոխի սարսափելի ձայները, Ռաստոպշննէ փիզիկապես հանգստացավ, և, ինչպես այդ միշտ լինում է, ֆիզիկական հանգստության հետ միաժամանակ նրա միտքը նրա համար հարմարեցրեց նաև բարոյական հանգստության պատճառներ։ Ռաստոպշնին հանգստացնող այդ միտքը նոր չէր։ Այն ժամանակից ի վեր, ինչ գոյություն ունի աշխարհը և ինչ մարդիկ սպանում են միմյանց, դեռ երբեք ոչ մի մարդ իր նմանի վերաբերմամբ հանցանք չի գործել, առանց այդ իսկ մտքով իրեն հանգստացնելու։ Այդ միտքը — le bien publicue-ն՝ է, այսինքն՝ այլ մարդկանց ենթադրական բարօրությունը։ Մոլությամբ շտարված մարդուն այդ բարօրությունը երբեք հայտնի չի եղել։ Բայց հանցանք գործող մարդը միշտ էլ հաստատապես գիտի, թե ինչումն է կայանում այդ բարօրությունը։ Եվ Ռաստոպշնն այժմ այդ գիտեր։

իր դատողությունների մեջ նա ոչ միայն իրեն չէր կշամ-  
բում իր արարքի համար, այլև ինքնազո՞ւթյան պատճառներ-  
էր գտնում այն բանում, որ նա այդպիսի հաջողությամբ կա-  
րողացավ օգտագործել այդ ձրցօք-ն<sup>2</sup> — պատժել հանցա-  
գործին և դրա հետ միասին հանգստացնել ամբոխին:

«Վերեցչագինը դատված ու մահապատճի էր դատապարտված», մտածում էր Ռաստռպշինը (թեև Վերեցչագինը սենատիկողմից դատապարտված էր միայն տաժանակիր աշխատանքների): «Նա մատնիշ էր ու դավաճան. ես չէի կարող նրան անպատճիժ թողնել, և հետո je faisais d'une pierre deux coups<sup>3</sup>. Ժողովրդին հանգստացնելու համար ես նրան զո՞ր ընձեռեցի և միաժամանակ մահապատճի ենթարկեցի շարագործին»:

Գալով իր անդրքաղաքային տունը և տնային կարգադրություններով զբաղվելով, կոմսը բոլորովին հանգստացավ:

Կես ժամ անց՝ կոմսն իր արագընթաց ձիերը լծած կառուզ  
անցնում էր Սոկոլիկի դաշտով, այլև Հիշելով այն մասին,  
ինչ եղա՛վ, և մտածելով ու խորհելով միայն այն մասին, ինչ

## **1 Հանրային բարօրություն:**

## **2 Հարմար առիթ:**

**3 Մի քարով երկու հարված հասցրի**

լինելու է։ Նա այժմ ուղևորվում էր դեպի Յառագակի կամուրջը, որտեղ, ինչպես նրան ասել էին, գտնվում է Կուտուզովը։

Կոմս Ռաստոպչինն իր մտքում պատրաստում էր այն ցասկոտ ու կծու կշտամբանքները, որը նա հճայտնի Կուտուզովին՝ իրեն խաբելու համար։ Նա զգացնել կտա այդ պալատական ծեր աղվեսին, որ այն բոլոր դժբախտությունների պատասխանատվությունը, որոնք կարող են առաջանալ մայրաքաղաքը թողնելուց, Ռուսաստանի կործանումից (ինչպես կարծում էր Ռաստոպչինը), ընկնելու է միայն իր՝ խելացնոր ծերուկի վրա։ Առաջուց կշւադատելով այն, ինչ նա կասի իրեն, Ռաստոպչինը կառքի մեջ զայրացկուտ այս և այն կողմ էր դառնում և բարկացած նայում շուրջը։

Սոկոլնիկի դաշտը ամայի էր։ Միայն նրա ծայրին, անկերանոցի և գեղին տան մոտ սպիտակ հագուստով մարդկանց խմբեր էին երևում և մի քանի էլ հատ-հատ նույնպիսի մարդկի, որոնք գնում էին դաշտով, ինչ-որ բան գոչելով և ձեռքերը թափահարելով։

Նրանցից մեկը վագում էր դեպի Ռաստոպչինի կառքը։ Եվ ինքը կոմս Ռաստոպչինը, և նրա կառապանը, և դրագունները, քոլորը սարսափի ու հետաքրքրության մի շփոթ զգացումով էին նայում այդ արձակված խելագարներին և մանավանդ այն մեկին, որը վազեվազ մոտեցավ նրանց։

Իր երկար, նիշար ոտների վրա երերալով, ծածանվող խաւաթով այդ խելագարը սրբնթաց վազում էր, առանց հայացքը Ռաստոպչինից հեռացնելու, խոպոտ ձայնով բղավելով, ինչոր բան էր ասում նրան և նշաններ անում, որ նա կանգ առնի։ Խելագարի անհավասար փնջիկներով մորուքը ծածկել էր նրա մուայլ ու հանդիսավոր գեմքը, որը շատ նիշար ու գեղնած էր։ Նրա սե, ագաթե բիբերն անհանգիստ վազում էին զաֆրանադեղնագույն սպիտակուցների վրայով։

— Կանգնի՛ր! Կա'նգ առ։ Ե'ս եմ ասում, — ճշում էր նա զիլ ձայնով և կրկին ինչ-որ բան, հևալով, ասում ազդու շեշտավորումով ու շարժումներով։

Նա հավասարվեց կառքին և սկսեց վազել նրա կողքով։

— Երե՛ք անգամ սպանե՛լ են ինձ, երե՛ք անգամ հարություն եմ առել։ Նրանք քարկոծեցին, խաչեցի՛ն ինձ... Ես հարություն կառնեմ... Հարություն կառնեմ... Հարություն կառ-

նեմ։ Իմ մարմինը հոշոտեցին։ Աստծո թագավորությունը կխորտակվի՛... Երեք անգամ կբանդե՛մ այն և երեք անգամ էլ կշինե՛մ, — գոռում էր նա, հետզհետե ավելի և աւելի բարձրացնելով իր ձայնը։

Կոմս Ռաստոպչինը հանկարծ այնպես գունատվեց, ինչպես նա գունատվեց այն ժամանակ, երբ ամբոխը հարձակվեց Վերեշշագինի վրա։ Նա երեսը շրջեց։ — Ար... արագ քի՛ր, — բռուաց նա կառապանի վրա դողդոջուն ձայնով։ Կառքը սըլացավ ձիերի բայլքի ամբողջ արագությամբ. բայց իր ետևից դեռ երկար ժամանակ կոմս Ռաստոպչինը լսում էր խելագարի հեռացող հուսահատական ճիշը, իսկ աշքի առաջ տեսնում էր միայն մորթե քուրք հագած դալաճանի զարմացած, վախեցած և արյունաշաղաղաւ դիմքը։

Որքան և թարմ էր այդ հիշողությունը, բայց Ռաստոպչինն այժմ զգում էր, որ դա խորը տպավորվեց իր հոգում։ Նա այժմ պարզ զգում էր, որ այդ հիշողության արյունոտ հետքը երեք շի անցնի, այլ ընդհակառակը, հետզհետե ավելի և ավելի ծանր ու տանջագին կղանա այդ սարսափելի հիշողությունը, որ կապրի իր հոգում մինչև իր կյանքի վերջը։ Նրան այժմ թվում էր, թե ինքը լսում էր իր այս խոսքերի հնչյունները։ «Խիփե՛ք, կտոր-կտոր արեք դրան։ Դուք ձեր գլխո՛վ պատասխանատու եք»։ «Ի՞նչու ես այդ խոսքերն ասացի։ Մի տեսակ՝ հանկարծ ասի։ Ես կարող էի այդ խոսքերը շասել», — մտածում էր նա, այն ժամանակ ոչինչ չէր լինի։ Նա տեսնում էր Վերեշշագինին խփող դրագունի վախեցած և հետո հանկարծ դաժանացած դիմքը և անխոս-երկշու կշտամբանք արտահայտող այն հայցքը, որ նետեց նրա վրա այդ աղվեսի մորթուց քուրք հագած տղան։ «Բայց ես ի՛նձ համար շարի այս ես պետք է այդպես վարվեի։ La plèbe, le traitre... le bien publicue<sup>1</sup>, մտածում էր նա։

Յառագսկի կամուրջի մոտ գեռ գորքեր էր հավաքվում։ Շոգ էր, Կուտուզովը, հոնքերը կիտած, տրտում նստած էր կամուրջի մոտ նստարանի վրա և մորակով խաղում էր ավագի հետ, երբ մի կառք աղմուկով մոտեցավ նրան։ Գեներալի մունդիր հագած, ցցունքավոր գլխարկով, հարաշարժ, ոչ այնքան ցաւկու

<sup>1</sup> Խուժան, զավաճան... հանրային բարօրության

և ոչ այնքան վախեցած աշխերսվ մի մարդ մոտեցավ Կուտուզովին և սկսեց ֆբանսերն ինչ-որ բան ասել նրան, Դա կոմս Ռաստոպչինն էր: Նա Կուտուզովին ասում էր, թե ինքն այստեղ եկել է այն պատճառով, որ Մոսկվան ու մայրաքաղաքն այլև չկան և կա միայն բանակը:

— Այլ բան կլիներ, եթե ձերդ պայծառափայլությունը շատեր ինձ, թե Մոսկվան չե՞ք հանձնի, առանց նոր ճակատամարտ տալու. այս բոլորը չե՞ր լինի, — ասավ նա:

Կուտուզովը նայում էր Ռաստոպչինին և, կարծես շհասկանալով իրեն ուղղված խոսքերի նշանակությունը, լարվածութեն աշխատում էր կարդալ այն ինչ-որ հատուկ բանը, որ գրված էր այդ պահին իր հետ խոսող մարդու դեմքին: Ռաստոպչինը, շփոթվելով, լոեց: Կուտուզովը թեթևակի օրորեց գլուխը և, առանց հեռացնելու իր զննող հայացքը Ռաստոպչինի դեմքից կամցուկ ասավ.

— Եյո՛, ես Մոսկվան չե՛մ տա, առանց ճակատամարտ տալու:

Արդյո՛ք բոլորովին այլ բանի մասին էր մտածում Կուտուզովը, երբ ասավ այդ խոսքերը, թե՞ դիտմամբ, իմանալով այդ խոսքերի անմտությունը, ասավ այն, բայց կոմս Ռաստոպչինը ոչինչ շպատասիանեց և շտապով հեռացավ Կուտուզովից: Եվ — տարօրինակ մի բա՛ն — Մոսկվայի գլխավոր հրամանատարը, հպարտ կոմս Ռաստոպչինը, նագայիան (մտրակ) ձեռն առնելով, մոտեցավ կամուրջին և գույում-գոշունով սկսեց ցըրել հավաքված սայլերը:

## XXVI

Ցերեկվա ժամը 4-ին Մյուրատի գորքերը մտան Մոսկվա: Առջեկից գնում էր Վիրտեմբերգյան հուսարների շոկատը, ետեկից ձիով ու մեծ շքախմբով գնում էր ինքը նեապոլի թագավորը: Մոտավորապես Արբատի մեջտեղում, նիկոլա Յավլեննիի մոտ, Մյուրատը կանգ առավ, առաջավոր ցոկատից տեղեկություն սպասելով, թե ինչ դրության մեջ է գտնվում քաղաքային ամրոց «Տեղական»-ը:

Մյուրատի շուրջը հավաքվեց փոքրաթիվ մարդկանց մի խումբ՝ Մոսկվայում մնացած բնակիչներից: Բոլորը երկշու

տարակուսանքով էին նայում տարօրինակ, փետուրներով ու ոսկով զարդարված երկարամազ զորապետին:

— Հը՛, այդ ի՞նքն է, չէ՞ նրանց թագավորը: Ոչի՞նչ, — լսվում էին կամացուկ ձայներ:

Թարգմանը ձին քշեց, մոտեցավ խմբված մարդկանց:

— Գլխարկդ հանիր... գլխա՛րկդ, — ասացին բազմության մեջ, դիմելով միմյանց:

Թարգմանը դիմեց մի ծեր դռնապանի և հարցրեց, հոռո՞ւ է արդյոք Կրեմլը: Դոնապանը տարակուսանքով ականջ գնելով իրեն օտար լեհական առողջանության և թարգմանի խոսակցության հնչյունները լընդունելով ոռւսերենի տեղ, չե՛ր հասկանում, թե ի՞նչ են ասում իրեն, և թաքնվում էր ուրիշների ետևում:

Մյուրատն առաջ եկավ դեպի թարգմանը և պատվիրեց հարցնել, թե ո՞րտեղ են ուսւ զորքերը: Ծուս մարդկանցից մելը հասկացավ, թե ի՞նչ են հարցնում իրենից, և մի քանի ձաւն հանկարծ սկսեցին պատասխանել թարգմանին: Առաջազգի քոկատից մի ֆրանսական սպա մոտեցավ Մյուրատին և հայտնեց, որ ամրոցի դռները փակ են և որ այնտեղ, հավանորեն, դարրան են մտած: «Լա՛վ», ասավ Մյուրատը և, դիմելով իր շրքախմբի պարուններից մեկին, հրամայեց առաջ քաշել շորս թեթև հրանոթ և ուրակոծել դռները:

Հրետանին վարդելով գուրս եկավ Մյուրատի ետևից շարժվող զորասյունի թիկունքից և առաջ սլացավ Արբատով: Հասնելով Վոգդվիժենկայի ծայրը, հրետանին կանգ առավ և շարք կանգնեց հրապարակում: Մի քանի ֆրանսական սպաներ զբաղված էին թնդանոթների տեղադրումով և դիտափողով նայում էին կրեմլին:

Կրեմլում երեկոյան ժամերգության զանգահարություն էր լսվում, և զանգերի այդ զողանցյունը շփոթեցնում էր ֆրանսացիներին: Նոանք ենթադրում էին, թե դա զենք վերցնելու կոչ էր: Մի քանի հետեւակ զինվոր վազում էին դեպի Կուտաֆեյան գումերը: Դուն մեջ գրված էին գերաններ և տախտակե նրբատաշ վահաններ: Հենց որ սպան իր զորախմբով սկսեց վազեվազ մոտենալ դռներին, նրանց տակից լսվեց երկու հրացանային կրակոց: Թնդանոթների մոտ կանգնած գեներալ

սպային բարձրածայն հրաման տվեց, և սպան զինվորի հետ միասին ետ վագեց:

Դոներից լսվեց ևս երեք կրակոց:

Մի կրակոցից վիրավորվեց Փրանսական մի զինվորի ոտք, և վահանների ետևից լսվեց սակալաթիվ ձայների տարօրինակ աղաղակ: Ֆրանսական գեներալի, սպաների ու զինվորների գեմքերին միաժամանակ, կարծես ազդարարված հրամանով, ուրախության և հանգստության նախկին արտահայտությունը փոխարինվեց պայքարի ու տառապանքի պատրաստակամության համառ ու կենտրոնացած արտահայտությամբ: Նրանց բոլորի համար, սկսած մարշալից մինչև վերջին զինվորը, այդ տեղը ու թե Վոզդվիժենկա, Մոխովայա, Կուտաֆիա և Տրոֆիկի վորոտա էր, այլ մի նոր, հավանորեն, արյունահեղ ճակատամարտի նոր դաշտի մի նոր վայր էր: Եթև բոլորը պատրաստվեցին այդ ճակատամարտին: Դոների ետևից լսվող ձայները լոեցին: Հրանոթներն առաջ քաշվեցին: Հրետավորները փշեցին-թոցրին այրված պատրուզամորճերը: Սպան հրաման տվեց՝ իւն<sup>1</sup>, և լսվեց թիթեղի երկու սուլոցի ձայն՝ մեկը մյուսի ետեղից: Կարտեղի գնդակները ճթթացին, դիպչելով դուն քարին, գերաններին ու վահաններին, և ծխի երկու ամպ երերաց-տատանվեց հրավարակի վերև:

Մի քանի ակնթարթ դրանից հետո, երբ լոեց քարաշեն կը-րեմին ուղղված կրակոցների դղրդյունը, Փրանսացիների զրւ-խալքերնում տարօրինակ ձայն լսվեց: Գորշ ագռավների մի հսկայական երամ բարձրացավ պարիսպներից վեր և, կոնչա-լով ու հազարավոր թեսքով աղմկելով, սկսեց պտույտ գալ օդում: Այդ ձայների հետ միասին դուն մեջ լսվեց մարդկային մենավոր ճիշ և ծխի ետևից երեաց մի մարդու կերպարանք, որն առանց գդակի էր և կաֆտան հագած: Հրացանը ձեռքին նա նշան էր բոնել Փրանսացիներին: «Գեւ!» կրկնեց հրետավոր սպան, և միկնույն ժամանակ լսվեցին մի հրացանային և երկու հրանոթային կրակոցները: Ծուխը նորից ծածկեց դարբասը:

Վահանների ետևում այլևս ոչինչ չէր շարժվում, և Փրանսա-կան հետեւակ զինվորները սպաների հետ միասին գնացին դեպի դուռը: Դուն մեջ պառկած էին երեք վիրավոր և շորս

<sup>1</sup> Կրակում

սպանված մարդ: Երկու մարդ՝ կաֆտանով, պարիսպների տակով փախչում էին դեպի Զնամենկա:

— Enlevez-moi ça<sup>1</sup>, — ասավ սպան, ցուց տալով գերան-ներն ու զիակները և, Փրանսացիները սպանելով վիրավորնե-րին, զիակները նետեցին ցած, պարսպի ետև:

Թե ովքեր էին այդ մարդիկ, ոչ ոք չգիտեր: «Enlevez-moi ça» և միայն նրանց մասին էր ասված, և նրանց դուրս նետեցին և հետո հավաքեցին, որ գարշահոտություն շառաջանա: Միայն թիեզը նրանց հիշատակին մի քանի պերճախոս տողեր նը-վիրեց. «Ces misérables avaient envahi la citadelle sacrée, s'étaient emparés des fusils de l'arsenal, et tiraien (ces misérables) sur les français. On en sabra quelques' uns et purgea le Kremlin de leur présence»<sup>2</sup>.

Մյուրատին հայտնեցին, թե ճանապարհը բացված է: Յը-րանսացիներն անցան դարբասը և բանակեցին Սենատի հը-րապարակում: Զինվորները Սենատի պատուհաններից աթոռ-ները դուրս էին նետում հրապարակը և խարույկ վառում:

Մյուս չոկատներն անցան Կրեմլով և տեղավորվեցին Մա-րոսայիկայում, Լուբյանկայում, Պոկրովկայում: Երրորդները զեռ տեղավորվում էին Վոզդվիժենկայում, Զնամենկայում, Նի-կոլուկայա և Տվերսկայա փողոցներում: Ամեն տեղ, տեր չգրտ-նելով, Փրանսացիները տեղավորվում էին ոչ որպես քաղաքային բարաններում, այլ որպես ճամբարում, որ տեղավորված է քաղաքում:

Թեև, պատռոտված, քաղցած, տանջված և առաջված հա-մայստությամբ կիսով շափ թվով պակասած, Փրանսական զինվորները Մոսկվա մտան զեռ կանոնավոր շարքերով: Դա հոգնած ու տանջված, հյուծված ու նվազված, բայց տակավին մարտունակ և ահեղ մի զորաբանակ էր: Բայց դա զորք էր միայն մենչ այն րոպեն, քանի զեռ այդ զորաբանակի զինվորները շին ցրվել տները: Հենց որ գնդերից զինվորներն սկսեցին ցրր-էւ դատարի ու հարուստ տները, ապա առմիշտ ոչնչացալ

<sup>1</sup> Վերցրե՛ք սրանք:

<sup>2</sup> Այդ թշվառականները գրավել էին սրազան ամրոցը, ուրեմ էին զինա-րան լենքերը և կրակում էին Փրանսացիների վրա: Նրանցից մի քանիւին թիեզը կտրատեցին և Կրեմլն ազատեցին նրանց ներկայությունից:

գորքը, և առաջ եկան ոչ բնակիչներ և ոչ զինվորներ, այլ ինչ-որ միշին բան, որ հինահար (մարողյոր) է կոշվում: Երբ, հինգ շաբաթ անց, նույն մարդիկ դուրս եկան Մոսկվայից, նրանք արդեն գորք չեն կազմում: Դա մարողյորների մի բազմություն էր, մարողյորներ, որոնցից յուրաքանչյուրն իր հետ տանում էր մի կույտ իրեր, որոնք նրան արժեքավոր ու հարկավոր էին թվում: Այդ մարդկանցից յուրաքանչյուրի նպատակը՝ Մոսկվայից գուրս գալիս, առաջվա պես այն չէր, որ նվաճի, այլ այն, որ պահպանի ձեռք բերածը: Նման այն կապիկին, որ ձեռքը կոխելով կճուճի նեղ բուկը և այնտեղից մի բուռ ընկույզ վերցնելով, բունցից բաց չի անում, որ խածը չկորցնի, և դրանով կործանում է իրեն: Ֆրանսացիները Մոսկվայից դուրս գալիս, ըստ երեւոյթին պետք է կործանվի այն պատճառով, որ նրանք իրենց հետ ավար էին տանում, և իրենց կողոպտաշթողնելը նրանց համար նույնքան անհնարին էր, որքան կապիկի համար անհնարին է ընկույզով բուռը բաց անելը: Երբ ֆրանսական յուրաքանչյուր գունդ մտնում էր Մոսկվայի որևէ թաղամասը, ապա տասը բոպեից հետո այդ գնդում ոչ մի զինվոր ու սպա չէր մնում: Տների պատուհաններում երևում էին շինելով ու կիսակոշիկներով մարդիկ, որոնք ծիծաղելով անցուղարձ էին անում սենյակներում. Նկուղներում ու մասաններում նույնպիսի մարդիկ մթերքներով էին զբաղված. բակերում նույնպիսի մարդիկ բաց էին անում կամ կոտրում էին սարանների ու գոմերի դռները. խոհանոցներում կրակ էին անում, քշուած թեքերով թխում, հունցում և եփում էին, վախեցնում, ծիծաղեցնում ու փաղաքշում էին կանանց ու երեխաններին: Եվ այդ մարդիկ ամեն տեղ, թե՛ խանութներում և թե՛ տներում շատ էին. բայց գորք արդեն շկար:

Նույն օրը ֆրանսական զորապետները հրաման հրամանի ետևից էին արձակում, որ արգելեն զորքերին ցրվել քաղաքը, խստիվ արգելեն մարողյորությունը և բնակիչների վերաբերմամբ բռնություն գործ դնելը, և որ հենց այսօր երեկոյան ընդհանուր անվանակոչ անեն: Բայց շնայած ձեռք առնված բոլոր միջոցներին, այն մարդիկ, որոնք առաջ գորք էին կազմում, այժմ ցրվում էին հարուստ, հարմարություններով ու պաշարներով առատ, դատարկ քաղաքը: Ինչպիս քաղցած հոտը խումբ-խումբ է անցնում մերկ դաշտով, բայց իսկունքում ենք

անզսպորեն ցրիվ է գալիս, հենց որ հասնում է հարուստ արոտատեղի, այնպիս էլ անզսպորեն ցրիվ էր գալիս զորքը հարուստ քաղաքում:

Մոսկվայում բնակիչներ շկային, և զինվորները, ինչպիս ցուրն ավագի մեջ, ծծվում էին այնտեղ և կրեմլից, ուր նրանք ամենից առաջ ոտք դրին, անզսպորեն աստղածև ցրվում էին զանազան կողմեր: Հեծելակ զինվորները, մտնելով որևէ վաճառականի տուն, ուր թողնված էր ամեն բարիք, և այնտեղ ախոռոգտնելով ոչ միայն իրենց ծիերի համար, այլև շատ ավելորդ մսուրներ, այնուամենայնիվ մտնում էին և կողքի տները, որն ավելի լավ էր թվում: Շատերը մի քանի տուն էին գրավում և կավիճով մակագրում էին, թե ո՞վ է զբաղեցրել այն, և վիճում ու նույնիսկ կովում էին մյուս զորախմբերի հետ: Դեռ շտեղավորված, զինվորները փողոց էին վազում քաղաքը դիտելու, և լսելով, որ բնակիչներն ամեն ինչ թողել-հեռացել են, գնում էին այնտեղ, որտեղ կարելի էր ձրիաբար արժեքավոր իրեր վերցնել: Զորապետները գնում էին կանգնեցնելու զինվորներին և իրենք էլ ակամա մասնակից էին դառնում նույն գործողություններին: Կարետնի ոյազում խանութներ կային, որտեղ կառքեր էին մնացել, և գեներալները խմբված էին այնտեղ, սայլակներ ու կառեթներ ընտրելով: Քաղաքում մնացած բընակիչներն իրենց մոտ էին հրավիրում զորապետներին, որպեսզի այգիստով իրենց ապահովեն կողոպուտից: Հարստությունը ծով էր, նրան վերջ շկար. ամենուրեք՝ այն տեղի շուրջը, որը գրավել էին ֆրանսացիները, կային դեռ անժամոթ, շփորձած ու զբաղեցրած տեղեր, որտեղ, ինչպիս ֆրանսացիներին բժիշտ էր, էլ ավելի շատ հարստություն կար: Եվ Մոսկվան հետաքիւտե ավելի և ավելի խորը ծծում, ներս էր քաշում նրանց իր մեջ: Ճիշտ, այնպիս, ինչպիս առօք զուրը շոր հողի վրա բափելիս՝ անհայտանում է և զուրը, և շոր հողը, ճիշտ ալդպիս շաղցած զորքը լցվեց առատ, բայց դատարկ քաղաքը, և ոչնացած թե՛ զորք և թե՛ առատ քաղաքը: և ցեխ գոյացալ, հրդեներ առաջացան և մարողյորություն եղավ:

Ֆրանսացիները Մոսկվայի հրդենումը վերաբրում էին առաջիկությունը՝ քրանսացի-

<sup>1</sup> Թառապաշխի վայրենի հայրենասիրությանը:

ների մոլեուանդությանը: Իսկ էապես Մոսկվայի հրդեհման պատճառները՝ այն մտքով, որ հրդեհման պատասխանատվությունն ընկնի մեկ կամ մի քանի անձնավորության վրա, շկային և չին կարող լինել: Մոսկվան այրվեց այն պատճառով, որ քաղաքը դրվեց այնպիսի պայմանների մեջ, երբ ամեն մի փայտաշեն քաղաք պետք է այրվի, անկախ նրանից, կա թե չկա այդ քաղաքում 130 վատ հրշեց խողովակ: Մոսկվան պետք է այրվեր այն պատճառով, որ բնակիչները դուրս էին եկել քաղաքից, և այնպիսի անխուսափելիությամբ, ինչպես պետք է բոցավառվի այն տաշեղակույտը, որի վրա մի քանի օր շարունակ կրակի կայծեր են թափվում: Մի փայտաշեն քաղաք, որտեղ տնատեր բնակիչների և ոստիկանության առկայությամբ գրեթե ամեն օր հրդեհներ են լինում, չի կարող շայրվել, երբ այնտեղ բնակիչներ չկան, այլ ապրում են զորքեր, որոնք ժիռում են, որոնք խարույկներ են վառում Սենատի հրապարակում Սենատի իսկ աթոռներից՝ և որոնք օրական երկու անգամ կերակուր են եփում: Բավական է, որ խաղաղ ժամանակ գյուղերում զորք տեղավորվի բնակարաններում, որպեսզի հրդեհների թիվն այդ վայրում իսկույն ավելանա: Իսկ որշա՞փ պետք է ավելանա հրդեհների հավանականությունը մի դատարկ փայտաշեն քաղաքում, եթե այդտեղ օտար զորք բանակի: Le patriotisme féroce de Rastopchine և ֆրանսացիների մոլեռանդությունը բնավ այստեղ մեղք չունեն: Մոսկվան վառվեց ծխամորներից, խոհանոցներից, խարույկներից, թշնամու զինվորների, տների ոչ-տեր բնակիչների փնթիռությունից: Եթե և եղել են հրկիզումներ (մի բան, որ խիստ կասկածելի է, որուն հետև հրկիզելու ոչ մի առիթ չկար, և համենայն զեպս դա զըլխացվանք էր պատճառելու և վտանգավոր էր), ապա հրկիզումները չի կարելի պատճառ համարել, քանի որ առանց հրկիզումների էլ նույնը կիներ:

Որքան և ձեռնտու էր ֆրանսացիների համար մեղադրւ Ռաստոպչինին գաղանության մեջ, իսկ ոռւսների համար՝ մեղադրել շարագործ Բոնապարտին կամ հետո հերոսական ջահ տալ իր ժողովրդի ձեռքը, չի կարելի շտեսնել, որ հրդեհի այդպիսի անմիջական պատճառ չէր կարող լինել, որովհետև Մոսկվան պետք է այրվեր, ինչպես պետք է այրվի յուրաքանչյուր գյուղ, գործարան, ամեն մի տուն, որտեղից դուրս կդան

տերերը և ուր կթողնեն օտար մարդկանց՝ տեր ու տնօրին լինելու և իրենց համար շիլա եփելու: Մոսկվան այրել են բընակիչները, այդ ճիշտ է. բայց ոչ այն բնակիչները, որոնք մընացել էին այնտեղ, այլ այն բնակիչները, որոնք հեռացան քաղաքից: Մոսկվան թշնամու կողմից գրավվելուց հետո ողջ և անվնաս շմաց, ինչպես Բեռլինը, Վիեննան և մյուս քաղաքները, միա՛յն այն պատճառով, որ նրա բնակիչները աղ ու հաց և բանալիներ շմատուցեցին ֆրանսացիներին, այլ հեռացան քաղաքից:

## XXVII

Մոսկվայում աստղածե ցրվող, ներծծվող ֆրանսացիների հոսանքը սեպտեմբերի 2-ի միայն երեկոյան հասավ այն թաղամասը, ուր այժմ ապրում էր Պիեռը:

Առանձնության մեջ և արտասովոր կերպով անցկացրած երկու վերջին օրերից հետո Պիեռը գտնվում էր մի վիճակում, որը մոտ էր խելագարության, նրա ողջ էությանը տիրել էր դադար շտվող մի միտք: Նա ինքը զգիտեր, թե ինչպես և երբ, բայց այդ միտքն այժմ նրան այնպես է տիրել, որ նա ոչինչ չէր հիշում անցյալից, ոչինչ չէր հասկանում ներկայից, և այն ամենը, ինչ նա տեսնում ու լսում էր, նրա առաջ կատարվում էր ինչպես երազում:

Պիեռն իր տնից հեռացավ միայն նրա համար, որ ապատվի կյանքի պահանջների այն բարդ խճճանքից, որի մեջ նա բնիկ էր և որը նա այն ժամանակա վիճակում անդոր էր արձակել: Նա գնաց իսուիք Ալեքսեևիչի բնակարանը՝ հանգուց լաւի գրքերն ու թղթերը կարգի բերելու պատրվակով՝ միայն այն պատճառով, որ նա ուզում էր հանգստանալ կյանքի արգ նապակից, իսկ իսուիք Ալեքսեևիչի մասին ունեցած հիշողության հետ նրա հոգում կապվում էր մշտնշենական, անդորր ու հանդիսավոր մտքերի մի աշխարհ, որը միանգամայն հակառակ էր այն խոռվահույզ իւճճանքին, որի մեջ նա իրեն ընկած էր զգում: Նա խաղաղ հանգրվան էր որոնում և այդպիսին իրոք զտավ իսուիք Ալեքսեևիչի առանձնասենյակում: Երբ նա, առանձնասենյակի գերեզմանային լուռության մեջ նստեց, կըոթնած հանդուցյալի՝ փոշով պատաժ գրասեղանին, նրա երեա-

կայության մեջ հանգիստ ու նշանակալից, մեկը մյուսի ետևից, սկսեցին ներկայանալ վերջին օրերի հիշողությունները, մասնավանդ այն հիշողությունները, որոնք կապված էին Բորոդինոյի ճակատամարտի և այն անհաղթահարելի զգացման հետ, որ ինքը ոչնչություն ու կեղծիք է՝ համեմատած այն կարգի մարդկանց ճշմարտության, պարզության ու զորության հետ, որոնք տպավորվեցին նրա հոգում՝ նրանք անունով։ Երբ Գերասիմը նրան դուրս բերեց իր մտածմունքից, Պիեռի գուխում այն միտքը ծագեց, թե ինքը կմասնակցի Մոսկվայի ենթադրական — ինչպես նա այդ գիտեր — համաժողովրդական պաշտպանությանը։ Եվ այդ նպատակով նա իսկույն և թրնդրեց Գերասիմին կաֆտան ու փշտով ճարել իր համար և, իր անունը թաքցնելով, նրան հայտնեց Իոսիֆ Ալեքսեևիչի տանը մնալու իր մտադրությունը։ Հետո, առանձնության մեջ և պարապ անցկացրած առաջին օրվա ընթացքում (Պիեռը մի քանի անգամ փորձեց և չկարողացավ իր ուշադրությունը դարձնել մասոնական ձեռագրերի վրա) մի քանի անգամ նրան ներկայացավ նաև առաջ ծագած այն միտքը, թե Բոնապարտի անվան առնչությամբ իր անունը կարալիստական (գաղտնագիտական) նշանակություն ունի։ Բայց այդ միտքն իր այն իմաստով թե իրեն Ռ' Russe Besuհօֆ-ին վիճակված է սահման դնել գաղանի իշխանությանը, ծագում էր նրա գուխում նաև որպես մեկն այն երազանքներից, որոնք անառիթ և անհետ անցնում էին նրա երեկալյությամբ։

Երբ, կաֆտան գնելուց հետո (Մոսկվայի ժողովրդական պաշտպանությանը մասնակցելու միակ նպատակով) Պիեռը հանդիպեց Ռուսովովներին և նատաշան ասավ նրան. «Դուք մը-նո՞ւմ եք: Ա'խ, այդ ինչ լա'վ է», նրա գլխում այն միտքը ծագեց, թե իսկապես լավ կլիներ, եթե անգամ և վերցնեին Մոսկվան, և նա մնար այնտեղ ու կատարեր այն, ինչ նախորոշված էր նրա համար։

Հետեւյալ օրը, իրեն շմայելու և, նրանցից ոչ մի քանով ետ շմանալու միակ միտքը գլխում՝ նա գնաց Տրի Գորիի ուղեկալից այն կողմ՝ շրջելու Բայց երբ նա տուն վերադարձավ, համոզվելով, որ Մոսկվան պաշտպանությունը չեն, նա հանկարծ զգաց որ այն, ինչ առաջ նրան ներկայանում էր միայն որպան հետաքրություն, այժմ դարձել է անհրաժեշտություն և ան-

խուսափելիություն։ Նա պետք է, իր անունը թաքցնելով, մնար Մոսկվայում, հանդիպեր նապոլեոնին և սպաներ նրան այն հաշվով, որ կամ ինքը գոհվեր կամ վերջ տար համայն Եվրոպայի դժբախտությանը, որի պատճառը, Պիեռի կարծիքով, միայն նապոլեոնն էր։

Պիեռը զիտեր՝ Վիեննայում 1809 թ. Բոնապարտի կյանքի դիմ գերմանացի ուսանողի կողմից կատարված մահափորձի բոլոր մանրամասնությունները և զիտեր այն, որ այդ ուսանողը գնդակահարվեց։ Եվ այն վտանգը, որին նա ենթարկում էր իր կյանքը՝ իր զիտավորությունն ի կատար ածելու դեպքում, ավելի և գրգռում էր նրան։

Երկու հավասարապես ուժեղ զգացում հրամայողաբար մը-դում էին նրան դեպի իր մտադրությունը։ Սուաչինը՝ զոհաբերության պահանջի և ընդհանուր դժբախտությունը զիտակցելու հետ կապված տառապանքի զգացումն էր, այն զգացումը, որի թելադրանքով նա 25-ին Մոծայսկ գնաց և տեղ հասավ ճակատամարտի ամենատաք պահին, և այժմ փախել էր իր տը-նից, սովորական շքեղության ու կյանքի հարմարությունների փոխարեն, առանց հանվելու քում էր կոշտ բազմոցի վրա և Գերասիմի հետ միասին միկնույն կերակուրն էր ուտում։ Մյուս զգացումը՝ արհամարհանքի այն անորոշ, բացառապես ոռւսին հատուկ այն զգացումն է, որ նա ունի դեպի պայմանականը, արհեստականը, մարդկայինը, դեպի այն ամենը, ինչ մարդկանց մեծամասնությունը աշխարհի գերազույն բարիքն է համարում։ Սուաչին անգամ Պիեռն ապրեց այդ տարօրինակ ու հմայիլ զգացումը Սլաքողայի պալատում, երբ նա հանկարծ զգաց, որ թե հարստությունը, թե իշխանությունը, թե՝ կյանքը — այն ամենը, ինչ այնքան զանասիրաբար մարդիկ ձեռք են բերում և պահպանում, այդ բոլորը եթե որևէ բան էլ արժե, ապա միայն այն բավականության համեմատ, որով այդ բոլորը կարելի է դեն գցել։

Դա այն զգացումն էր, որի թելադրանքով կամավոր նորակոշիկը խմում-ծախտում է իր վերջին կոպեկը, խմած մարդը շարդում-փշում է հայելիներն ու ապակիներն առանց որևէ տեսանելի պատճառի և գիտենալով, որ դրա համար պետք է տա իր վերջին փողերը. այն զգացումը, որի պատճառով մարդիկ անմիտ գործեր (գուեհիկ մտքով) կատարելով կարծես

փորձում են իրենց անհատական իշխանությունն ու ուժը, հայուարարելով քարձրագույն մարդկային պայմաններից դուրս գոյնվող՝ կյանքի դատաստանի գոյությունը:

Սկսած հենց այն օրից, երբ Պիեռն առաջին անգամ Սլաբոդայի պալատում ապրեց այդ զգացումը՝ նա շարունակ գտնը վում էր այդ զգացման ազդեցության տակ, բայց նա միայն աչք լիակատար գոհացում գտավ դրա համար: Բացի դրանից, ներկա րոպեին Պիեռին այդ մտադրության մեջ էր պահում և այդ մտադրությունից հրաժարվելու հնարավորությունից զըրկում էր այն, ինչ նա արդեն արել էր այդ ճանապարհին: Եվ նրա փախուստը տնից, և նրա կաֆտանը, և փշտովը, և նրա հայտարարությունը Ծոստովների առաջ, թե ինքը մնում է Մոսկվայում, — այդ ամենը ոչ միայն կորցներ իր իմաստը: այլև այդ բոլորը արհամարհելի ու ծիծաղելի կլիներ (որի նըկատմամբ Պիեռն զգայուն էր), եթե նա էլայդ բոլորից հետո, ուրիշների պես հեռանար Մոսկվայից:

Պիեռի ֆիզիկական վիճակը, ինչպես այդ միշտ լինում է, գուգադիպում էր բարոյականին: Անսովոր, կոպիտ կերակուրը, օղին, որը նա խմում էր այդ օրերը, գինու և սիգարի բացակայությունը, կեղուս, շփոխվող սպիտակեղենը, կիսով շափ բազմոցի վրա՝ առանց անկողնի, — այդ բոլորը Պիեռին պահում էր այն չղագրգիռ վիճակում, որը մոտ է խելագարության:

Արդեն ցերեկվա ժամը մոտ 2-ն էր: Ֆրանսացիներն արդեն մտել էին Մոսկվա: Պիեռն այդ գիտեր, բայց փոխանակ գործելու, նա մտածում էր միայն իր ձեռնարկումի մասին, մեկ առ մեկ քննության առնելով ապագա բոլոր, անգամ աննշան մանրամասնությունները: Պիեռն իր մտածողություններում պարզորոշ չեր պատկերացնում ոչ հարված հասցնելու պրոցեսը, ոչ նապուենի մահը, բայց արտասովոր պայծառությամբ ու տիրագին հաճույքով պատկերացնում էր իր կործանումը և իր հերոսական արիությունը:

«Այո՛, մենակ բոլորի փոխարեն, ես պետք է կատարեմ այդ կամ զոհվեմ», մտածում էր նա: «Այո՛, ես կմոտենամ... և հետո հանկարծ... փշտովո՞վ, թե՞ դաշույնով», մտածում էր Պիեռը: «Ասենք՝ միենույն է: Ո՛չ թե ես, այլ նախախնամության

ձեռքն է մահապատժի ենթարկում քեզ... կասեմ ես» (մտածում էր Պիեռն այն խոսքերը, որ նա արտասանելու էր նապոլեոնին սպանելիս): «Է՛հ, ի՞նչ արած, տարի՞ք, մահապատժի ենթարկեցե՞ք ինձ», այնուհետև ինքն իրեն ասում էր Պիեռը գեմքի տիւրը, բայց վճռական արտահայտությամբ, գլուխը խոնարհելով:

Նույն այդ ժամանակ, երբ Պիեռը, սենյակի մեջտեղում կանգնած, այսպես դատում-խորհում էր, առանձնասենյակի դուռը բացվեց, և դռան շեմքին երեաց առաջ միշտ երկշուտ Մակար Ալեքսեյիշի միանգամայն փոխված կերպարանքը:

Նրա խալաթը բաց էր: Դեմքը կարմիր էր և այլանդակ: Հստ երևույթին, նա հարբած էր: Պիեռին տեսնելով, նա առաջին կայրկանին շփոթվեց, բայց շփոթություն նկատելով նաև Պիեռի գեմքին, նա խկույն սրտապնդվեց և բարակ երերուն ոտներով առաջ եկավ, կանգնեց սենյակի մեջտեղը:

— Նրանք վախեցա՞ն, — ասավ նա խռպոտ, վստահություն արտահայտող ձայնով: — Ես ասում եմ՝ անձնատուր շեմ լինի, ասում եմ... այսպես չի՝, պարո՞ն:

Նա մտածմունքի մեջ ընկավ և հանկարծ, փշտովը սեղանի վրա տեսնելով, անսպասելի կերպով արագ վերցրեց այն և դուրս վագեց միշանցքը:

Գերասիմն ու դոնապանը, որոնք գնում էին Մակար Ալեքսեյիշի ետևից, նախասենյակում նրան կանգնեցրին և ուղեցին փշտովը ձեռքից առնել: Պիեռը, դուրս գալով միշանցքը, խղճահարությամբ ու նողկանքով էր նայում այդ կիսախելագար ծերունուն: Մակար Ալեքսեյիշը, ուժ գործ դնելուց կընձբուտվելով, պահում էր փշտովը և խոպոտ ձայնով բղավում էր, ըստ երևույթին ինչ-որ հանդիսավոր բան երեակայելով:

— Ի գե՞ն: Աբորդա՞ծ: Միալվում ես, չե՛ս խլի, — գոռում էր նա:

— Ե՞րի՝ արեք, խնդրում եմ, թողե՞ք: Ողորմացե՞ք խնդրում եմ, թողե՞ք: Դե՛, ինդրում եմ, պարո՞ն... — ասում էր Գերասիմը, զգուշությամբ արմունկներից բռնած՝ աշխատելով ետ գարձնել Մակար Ալեքսեյիշին գեպի դուռը:

— Դու ո՞վ ես: Բոնապա՞րտ ես... — բռնում էր Մակար Ալեքսեյիշը:

— Արդ լավ չէ՝, սկարո՞նն է Համեցե՞ք սենյակ, հանգստացե՞ք  
Տվե՞ք փշտովը:

— Կորի՞ր, ողորմելի ատլո՞ւկ: Մի՞ դիպչիր ինձ: Տեսա՞ր: —  
բռում էր Մակար Ալեքսեևիշը, փշովը թափահարելով: —  
Դեպի աբորդած:

— Բոնի՛ր, — շնչաց Գերասիմը դռնապանին:

Մակար Ալեքսեևիչ Ճեռքերից բռնեցին և քարշ տվին գեպի դուռը:

Նախասենյակը լցվեց աղմուկի ու քաշկոտուքի այլանդակ ձայներով և հարբած մարդու հեացող ձայնի խոպոտ հնչյուններով:

Հանկարծ տան մուտքի կողմից լսվեց մի սուր կանացի ճիշ, և խոհարարուէին վագեց նախասենյակը:

— Նրա՞նք են: Զեզ մատա՞ղ... Ապովա՞ծ վկա, նրա՞նք  
են: Չորս հոգի են, ձիավոր են... — բոռում էր խոհարարութին:

Գերասիմն ու դռնապանը բաց լողին Մակար Ալեքսեևի-  
չին, և խաղաղված միջանցքում պարզ լսվում էր, թե ինչպես  
մի քանի ճեռք բախում են մուտքի դուռը:

XXVIII

Պիեռն ինքն իրեն որոշելով, թե մինչև իր մտադրությունն ի կատար ածելը, շպետք է հայտնի ոչ իր կողումը, ոչ ֆրանսերեն իմանալը, կանգնած էր միջանցքի կիսաբաց գուան մեզ, մտադրություն ունենալով՝ իսկույժն խարճնել, ևնց որ ֆրանսացիները մտնեն: Բայց ֆրանսացիները մտան, իսկ Պիեռն այնուամենայնիվ չէր հնանում դռնից. անհաղթահարեի հետաքրքրությունը պահում էր նրան:

Նրանք երկու հոգի էին: Մեկը, սպա՝ բարձրահասակ, տրիատես ու գեղեցիկ տղամարդ. մյուսը, ըստ երեսվթին, զինվոր էր կամ սպասյակ, կարճլիկ, նիշար, այրված գեմքով, ներս ընկոծ այսոերով ու գեմքի բութ արտահայտությամբ մի մարդ Սպան, ձեռնափայտին հենվելով ու կաղալով գալիս էր առջեցից: Մի քանի քայլ անելով, սպան, կարծես ինքն իրեն որոշելով, որ այդ բնակարանը լավն է, կանգ առավ, շրջկեց գեպի ետ, գեպի դռան մեջ կանգնած զինվորները և իշխանավորական բարձր ձայնով կարգադրեց ձիերը ներս քաշել: Այդ

գործը վերջացնելուց հետո, սպան խիզախ շարժումով, ձեռքի արմունկը վեր բարձրացրած, ուղղեց բեղերը և ձեռքը դիպցրեց գլխարկին:

— Bonjour la compagnie! — ուրախ ասակ նա, ժպտալով և շուրջը նայելով:

Ոչ ոք ովհնչ շպատասխանեց :

— Vous êtes le bourgeois? — դիմեց սպան գերասի-  
մին:

Գեղասիմը վախեցած հարցականորեն նայում էր լսապային։

— Quartire, quartire, logement,— ասավ սպան, վերից վար, ներողամիտ ու բարեհոգի ժպիտով նայելով փոքրիկ մարդուն։ Les français sont de bons enfants. Que Diable! Voyons! Ne nous séchons pas, mon vieux<sup>3</sup>, — ալելացրեց նա, վախեցած ու լուսկաց Գերասիմի ուսին խիելով։

— A ça! Dites donc, on ne parle donc pas français dans cette boutique<sup>4</sup>, — ավելացրեց նա, շուրջը նայելով և հայացքը Պիեռի հայացքին ուղղելով: Պիեռը մի կողմ քաշվեց դռան մոտեց:

Սպան կրկին դիմեց Գերասիմին։ Նա պահանջում էր, որ Գերասիմը ցույց տան նրան տան սենյակները։

— Պարոնս չկա, — չեմ հասկանում... ես ձեզ... — ասավ  
Գերասիմը, աշխատելով իր խոսքերն ավելի հասկանալի դարձ-  
նել նույնով, որ թարս էր ասում:

Ֆրանսական սպան, ժպտալով, ձեռքերը տարածեց Գե-  
րասիմի քթի առաջ, զգացնել տալով, որ ինքն էլ նրան չի հաս-  
կանում և կաղալով գնաց դեպի դուռը, որի մոտ կանգնած էր  
Պիեռը: Պիեռն ուզում էր հեռանալ՝ նրանից թաքնվելու համար,  
բայց հենց այդ ժամանակ նա տեսալ խոհանոցի բացվող դռնից  
դուրս եկող Մակար Ալեքսեևիչին՝ փշտովը ձեռքին: Խելաքարի  
խորամանկությամբ Մակար Ալեքսեևիչը նայեց Փրանսացուն  
և, փշտուր բարձրացնելով, նշան բռնեց:

### **1. Բարեկամություն**

## 2 Պուլք եք տերը:

<sup>3</sup> Բնակարա՞ն, բնակարա՞ն: Ֆրանսացիները լավ տղերք են, զրողք տանիք, չենք կռպիք, ծծ' բռպկ:

<sup>4</sup> Ի՞նչ է, այստեղ ոչ ո՞ք չի խոսում ֆրանսերեն:

— *Դեպի*<sup>1</sup> արորդաժ... — գոռաց հարբածը, սեղմելով փշտովի ձգանց: Ֆրանսական սպան, գոռոց լսելով, շարժվեց, և նույն ակնթարթում Պիեռը նետվեց հարբածի վրա: Այն ժամանակ, երբ Պիեռը բռնեց փշտովը և վեր բարձրացրեց այն, Սակար Ալեքսեևիչը վերջապես մատը ցցեց ձգանին, և լսկեց բոլորին խլացնող և վառողի թանձր ծուխ արձակող մի կրակոց: Ֆրանսացին գունատվեց և ետ գնաց դեպի դուռը:

Մոռանալով իր ֆրանսերեն իմանալը թաքցնելու մտադրությունը, Պիեռը, փշտովը խլելով Սակար Ալեքսեևիչը ձեռքից և մի կողմ նետելով այն, մոտ վազեց սպային և սկսեց ֆրանսերեն խոսել նրա հետ:

— Vous n'êtes pas blessé? — ասավ նա:

— Je crois que non<sup>1</sup>, — պատասխանեց սպան, իրեն շոշափելով, — mais je l'ai manqué belle cette fois-ci<sup>2</sup>, — ավելացրեց նա, ցույց տալով պատի պոկված սվաղը: — Quel est cet homme?<sup>3</sup> — խիստ հայացք ցեկով Պիեռի վրա, ասավ սպան:

— Ah, je suis vraiment au désespoir de ce qui vient d'arriver<sup>4</sup>, — արագորեն ասավ Պիեռը, բոլորովին մոռանալով իր դերը: — C'est un fou, un malheureux qui ne savait pas ce qu'il faisait<sup>5</sup>:

Սպան մոտեցավ Սակար Ալեքսեևիչին և բռնեց նրա օձիքից: Սակար Ալեքսեևիչը շուրթերը կախած, կարծես քունը տանելիս, օրորվում էր՝ պատին հենված:

— Brigand, tu me la payeras! — ասավ ֆրանսացին, ձեռքը ետ քաշելով, — Nous autres nous sommes cléments après la victoire; mais nous ne pardonnons pas aux traitres<sup>6</sup>, — ավելացրեց նա դեմքի մոռայլ հանդիսավորությամբ և գեղեցիկ եռանդուն շարժումով:

<sup>1</sup> Դուք վիրավորված չե՞ք: — Կարծում եմ, որ ո՞չ:

<sup>2</sup> Բայց այս անգամ լավ պրծաւ:

<sup>3</sup> Ո՞ւ է այս մարդը:

<sup>4</sup> ԱՌ, ճիշտն ասած, ես շատ վշտացած եմ այն բոլորից, ինչ պատահեց:

<sup>5</sup> Դա մի դժբախտ խելաքար է, որը չգիտեր, թե ինչ էր անում:

<sup>6</sup> Ավազա՛կ, ես քեզ դեռ ցույց կտամ: Մենք ողորմած ենք լինում հաղթությունից հետո, բայց դավաճաններին մենք չենք ներսաւ:

Պիեռը շարունակում էր ֆրանսերեն լեզվով համոզված լինելու, որ նա չպատժի այդ հարբած, խելազար մարդուն: Ֆրանսացին լուր լսում էր, առանց փոխելու իր մոռայլ տեսքը, և հանկարծ ժպտալով դիմեց Պիեռին: Նա մի քանի վայրկյան լուր նայեց նրան: Նրա գեղեցիկ դեմքն ընդունեց ողբերգականորեն բընքուշ արտահայտություն, և նա ձեռքը մեկնեց:

— Vuos m'avez sauvé la vie! Vous êtes français!<sup>1</sup> — ասավ նա:

Ֆրանսացու համար այդ եղակացությունն անվիճելի էր: Մեծ գործ կարող էր միայն ֆրանսացին կատարել, իսկ նրա՝ մ-ր Ramball capitaine du 13-me léger-ի կյանքը փրկելն անտարակույս, ամենամեծ գործն էր:

Բայց որքան և անվիճելի էր այդ եղակացությունը և դրա վրա հիմնված՝ սպայի համոզումը, Պիեռն անհրաժեշտ համարեց հիասթափեցնել նրան:

— Je suis russe<sup>2</sup>, — արագորեն ասավ Պիեռը:

— Ծը-ծը-ծը, այս ասավ ֆրանսացին: — Tout à l'heure vous allez me conter ça, — ասավ նա: — Charmé de rencontrer un compatriote. Eh bien! qu'allons-nous faire de cet homme?<sup>3</sup> — ավելացրեց նա, դեմքելով Պիեռին, արդեն ինչպես յուրայինի:

Եթե անգամ Պիեռը ֆրանսացի լիներ, բայց արդեն ստանալով աշխարհի այդ ամենաբարձր հորչորջումը, չը կարող այլևս հրաժարվել դրանից, — ասում էր ֆրանսական սպայի դիմքի արտահայտությունն ու տոնը: Վերջին հարցի առթիվ Պիեռը նորից բացատրեց Սակար Ալեքսեևիչի ո՛վ լինելը, բացատրեց, որ հենց գալուց առաջ այդ հարբած, խելազար մարդը գողացավ լցրած փշտովը, որը չկարողացան նրա ձեռքից առնել, և Պիեռը ինդրեց անպատճ թողնել նրա արարք:

Ֆրանսացին դուրս ցցեց կուրծքը և ձեռքով թագավորական շարժում արավ:

<sup>1</sup> Դուք վիրավորված իմ կյանքը: Դուք ֆրանսացի՞ եք:

<sup>2</sup> Ես ուսւ եմ:

<sup>3</sup> Այժմ գույք ինձ այդ բոլորը կպատմեի: Շատ ուզախ եմ հայրենակցի պատահելուաւ: Է՛ս, ինչպես վարվենք այդ մարդու հետ:

— Vous m'avez sauvé la vie! Vous êtes français. Vous me demandez sa grâce? Je vous l'accorde. Qu'on emmène cet homme!<sup>1</sup>, — arbeq ou եռանդագին ասավ ֆրանսական սպան, թևանցուկ անելով իր կյանքը փրկելու համար իր կողմից ֆրանսացի դարձրած Պիեռին և նրա հետ միասին տուն գնաց:

Բակում եղած զինվորները, կրակոց լսելով, մտան նախասենյալը, հարցնելով թե ի՞նչ է պատահել և հանցավորներին պատճելու պատրաստակամություն հայտնելով. բայց սպան խստիվ կանգնեցրեց նրանց.

— On vous demandera quand on aura besoin de vous<sup>2</sup>, — ասավ նա:

Զինվորները դաւրս եկան: Սպասյակը, որ կարողացավ մինչ մտնել խոհանոցը, մոտեցավ սպային,

— Capitaine, ils ont de la soupe et du gigot de mouton dans la cuisine, — ասավ նա: — Faut-il vous l'apporter?

— Oui, et le vin<sup>3</sup>, — ասավ կապիտանը:

## XXIX

Երբ ֆրանսական սպան Պիեռի հետ միասին մտավ տուն, Պիեռը պարտք համարեց կրկին հավատացնել կապիտանին, թե նա ֆրանսացի չի և ցանկանում էր հեռանալ, բայց ֆրանսական սպան լսել անգամ շուրջեց այդ մասին: Նա այն աստիճան քաղաքավարի, սիրալիք, բարեհոգի և իսկապես շնորհակալ էր իր կյանքը փրկելու համար, որ Պիեռը շկարողացավ նրան մերժել և նրա հետ միասին նստեցին դաշլիճում, առաջին սենյակում, ուր մտան նրանք: Պիեռի այն պնդումին, թե ինքը ֆրանսացի չէ, կապիտանը ըստ երևոյթին շնասկանալով, թե ինչպես կարելի էր հրաժարվել այդպիսի շոյիշ կոշումից, ուսերը թոթվեց և ասավ, որ եթե նա անպատճառ ուզում է ոռու համարվել, ապա թող այդպես լինի, բայց որ նա այնու-

<sup>1</sup> Դուք փրկեցիք իմ կյանքը, դուք ֆրանսացի եք: Դուք ցանկանում եք, որ ես ներեմ նրան: Ներռան եմ: Տարեք այդ մարդուն:

<sup>2</sup> Երբ հարկավոր լինի, ձեզ կկանչեն:

<sup>3</sup> Կապիտան՝ նրանց խահանգում սուակ և ոշխարի միս կատ Կարամալե՛ք թերեւլ: Այս՝ և՛ գինի:

ամենայնիվ, շնայած դրան, իր կյանքը փրկելու համար երախտագիտության զգացումով իրեն առհավետ կաւոված է զգում նրա հետ:

Եթե այդ մարդն ուրիշների զգացումները հասկանալու քիչ թե շատ ընդունակություն ունենար և կուահեր Պիեռի ապրումները, Պիեռը հավանորեն կհեռանար նրանից. բայց այդ մարդու աշխայիժ անտարբերությունը այն ամենի հանդեպ, ինչ իրենից դուրս էր, հաղթեց Պիեռին:

— Français ou prince russe incognito<sup>1</sup>, — ասավ ֆրանսացին, նայելով Պիեռի թեկ կեղտուտ, բայց նուրբ սպիտակեղնին և ձեռի մատանուն: — Je vous dois la vie et je vous offre mon amitié. Un français n'oublie jamais ni une insulte ni un service. Je vous offre mon amitié. Je ne vous dis que ça<sup>2</sup>.

Այդ սպայի ձայնի հնչյուններում, նրա գեմքի արտահայտության մեջ, նրա շարժումներում այնքան բարեհոգություն ու ազնվություն (ֆրանսական մտքով) կար, որ Պիեռը, անգիտակից ժպիտով պատասխանելով ֆրանսացու ժպիտին, աեղմեց իրեն մեկնած ձեռը:

— Capitaine Ramball du 13-me léger, décoré pour l'affaire du sept<sup>3</sup> — հանձնարեց նա իր՝ ինքնագոհ, անզուսպ ժպիտով, որ կնճոռում էր նրա շուրթերը բեղերի տակ: — Voudrez-vous bien me dire à présent, à qui j'ai l'honneur de parler aussi agréablement au lieu de rester à l'ambulance avec la balle de ce fou dans le corps<sup>4</sup>.

Պիեռը պատասխանեց, որ չի կարող հայտնել իր անունը, կարմբելով ու փորձելով կեղծել անունը, սկսեց խոսել այն

<sup>1</sup> Ֆրանսացի կամ ծպտյալ ոռու իշխան:

<sup>2</sup> Ես իմ կյանքով ձեզ եմ պարտական և ես ձեզ առաջարկում եմ իմ բարեկամությունը: Ֆրանսացին երբեք չի մոռանում ո՛չ վիրավորանք, ո՛չ ծառայություն: Ես ձեզ առաջարկում եմ իմ բարեկամությունը: Ահա և այն ամենը, ինչ կարող եմ ձեզ ասել:

<sup>3</sup> 13-րդ թթեթ զնի կապիտան Խամբայլ, պատվագոր լեգիոնի ասպետ՝ ամսահ 7-ի կովի համար:

<sup>4</sup> Բարի կինե՞ք արյուք այժմ ասել ինձ, թե ո՞ւմ հետ պատիվ ունեմ ես խոսակցել այդպես հաճելի, փոխանակ լինելու վիրակապության կայանում այդ խելազարի գնդակը մարմնիս մեր:

պատճառների մասին, որոնք թույլ չեն տալիս նրան Հայտնել այդ, բայց ֆրանսացին նրան ընդմիջեց:

— De grâce, — ասավ նա: — Je comprends vos raisons, vous êtes officier... officier supérieur, peut-être. Vous avez porté les armes contre nous... Ce n'est pas mon affaire. Je vous dois la vie. Cela me suffit. Je suis tout à vous. Vous êtes gentilhomme?<sup>1</sup> — ավելացրեց նա հարցման երանգով: (*Պիեռը գլուխը խոնարհեց*): — Votre nom de baptême, s'il vous plaît? Je ne demande pas davantage. M-r Pierre, dites-vous... Parfait. C'est tout ce que je désiré savoir<sup>2</sup>.

Երբ բերվեց ոշխարի միսը, ձկածեղը, ինքնաեռը, օղին ու գինին՝ ուսւական մառանից, որն իրենց հետ բերել էին ֆրանսացիները, Ռամբայը Պիեռին խնդրեց մասնակցել այդ ճաշին և ինքն իսկույն ագահորեն ու շտապով, ինչպես առողջ ու քաղցած մարդ, սկսեց ուտել, արագորեն ծամելով իր ուժեղ ատամներով և անդադար շմշմացնելով ու հարակցելով. excellent, exquis!<sup>3</sup> Նրա զեմքը կաս-կարմիր կտրեց ու քրտինքով ծածկվեց: Պիեռը քաղցած էր և համույքով մասնակցեց ճաշին: Մորելը, սպասյակը՝ մի կաթսա գոլ շուր բերեց, և մի շիշ կարմիր գինի դրեց նրա մեջ: Բացի գրանից նա մի շիշ կվաս բերեց, որը փորձելու համար վերցրել էր խոհանոցից: Այդ խմիչքը ֆրանսացիներին արդեն ծանոթ էր, և իր անունն էր ստացել: Նրանք կվասին limonade de cochon (խողի լիմոնադ) անունն էին տվել, և Մորելը գովում էր այդ limonade de cochon-ը, որը նա գտել էր խոհանոցում: Բայց որովհետև կապիտանը գինի ուներ, որը նա ձեռք էր բերել Մոսկվայի միջով անցնելիս, ուստի և նա կվասը տրամադրեց Մորելին, իսկ ինքը վերցրեց բորդոյի շիշը: Նա շիշը մինչև բուկը փաթաթեց անձեռոցիկ մեջ և իր ու Պիեռի համար գինի լցրեց: Հագեց-

<sup>1</sup> Բավակա՞ն է: Ես հասկանում եմ ձեր պատճառները, գուք սպա՞ եք... գուցեք և բարձրաստիճան սպա: Դուք կովել եք մեր գմբ: Դա իմ գործը չէ: Ես ձեզ պարտական եմ իմ կյանքով: Այդ էլ ինձ բավական է: Ես ձեր տրամադրության տակ եմ: Դուք աղնվակա՞ն եք:

<sup>2</sup> Զիր անո՞ւնը, պարտավորեցք ինձ. այլևս ոշինչ չեմ հարցնում: Պարոն Պիեռ, ասացիս: Գեղեղի՛կ: Ահա այն բոլորը, ինչ ինձ հարկավոր է:

<sup>3</sup> Հիանալի՞ է, զերավանց է:

բած քաղցն ու գինին է՛լ ավելի աշխուժացրին կապիտանին, և նա ճաշի ժամանակ անդադար խոսում էր:

— Oui, mon cher m-r Pierre, je vous dois une fière chandelle de m'avoir sauvé... de cet enragé... J'en ai assez, voyez-vous, de balles dans le corps. En voilà une (նա ցույց տվեց կողմ) à Wagram et de deux à Smolensk,— նա ցույց տվեց այսի վրայի սպին: — Et cette jambe, comme vous voyez, qui ne veut pas marcher. C'est à la grande bataille du 7 à la Moskowa que j'ai reçu ça. Sacré Dieu, c'était beau! Il fallait voir ça, c'était un déluge de feu. Vous nous avez taillé une rude besogne; vous pouvez vous en vanter, nom d'un petit bon homme. Et, ma parole, malgré la toux que j'y ai gagné, je serais prêt à recommencer. Je plains ceux qui n'ont pas vu ça<sup>1</sup>.

— J'y ai été, — ասավ Պիեռը:

— Bah, vraiment? Eh bien, tant mieux, — ասավ ֆրանսացին: — Vous êtes de fiers ennemis, tout de même. La grande redoute a été tenace, nom d'une pipe. Et vous nous l'avez fait crânement payer. J'y suis allé trois fois, tel que vous me voyez. Trois fois nous étions sur les canons et trois fois on nous a culbuté et comme des capucins de cartes. Oh! c'était beau, m-r Pierre. Vos grenadiers ont été superbés, tonnerre de Dieu. Je les ai vu six fois de suite: serrer les rangs et marcher comme à une revue. Les beaux hommes! Notre roi de Naples qui s'y connaît a crié: bravo! — Ah! ah! soldat comme nous autres! — ասավ նա ժպտալով վայրկնական լոռոթյունից հետո: — Tant mieux, tant mieux, m-r Pierre. Terribles un bataille... galants... — նա ժպտա-

<sup>1</sup> Այո՛, իմ սիրելի պարոն Պիեռ, ես պարտավոր եմ մոռ վառել, որ զուքինձ փրկեցիք այդ կատաղածից: Կարծում եմ, որ ինձ բավական են այն գրնակները, որ կան մարմիս մեջ: Ահա մեկը ստացել եմ վագրամում, մյուսը՝ Մոլոխնակում: Խսկ այս ոտու, տեսնում եք, չի ուզում շարժվել: Այդ էլ վաստակեցի՞ թի՞ Մոսկվայի տակ տեղի ունեցած ճակատամարտում: Է՛հ, զա լուսնակած մի բան էր: Պետք էլ տեսնել, դա կրակի հեղեղ՝ լ էր: Դուք մեն ձանր գործի դրիք, կարող եք պարծենալ, աստված՝ վկա, ճշմարիտ: Եվ աղնիք խօսք, ճնայած որ այնտեղ մրսեցի, դարձյալ պատրաստ եմ ամեն ինչ նորից սկսել:

զավակ արակ,— avec les belles, voilà les français, m-t Pierre, n'est-ce pas?

Կապիտանն այն աստիճան նախվորեն ու բարեսրտորեն ուրախ էր ու զվարթ, և գոհ իրենից, որ Պիեռը քիչ էր մնում ինքն աշքով անի, ուրախ նայելով նրան: Հավանորեն «galant» բառը կապիտանին ստիպեց մտածել Մուկվայի դրության մասին:

— A propos, dites donc, est-ce vrai que toutes les femmes ont quitté Moscou? Une drôle d'idée! Qu'avaient-elles à craindre?

— Est-ce que les dames françaises ne quitteraient pas Paris, si les russes y entraient?<sup>2</sup> — ասավ Պիեռը:

— Ah, ah, ah!.. — Ֆրանսացին ուրախ ու շերմ քրքրաց, Պիեռի ուսին խփելով: — Ah! elle est forte, celle-là, — ավելացրեց նա: — Paris?.. Paris, Paris, Paris...

— Paris, la capitale du monde...<sup>3</sup> — ասավ Պիեռը, վերջացնելով նրա խոսքը:

Կապիտանը նայեց Պիեռին: Նա սովորություն ուներ խոսակցության կեսին կանգ առնել և ուշադրությամբ նայել ծիծաղուն, շոյող հայացքով:

<sup>1</sup> — նս այստեղ էի:

Հա, իսկապե՞ս Ավելի լավ! Դուք այնուամենայնիվ քաջ թշնամիներ եք: Մեծ սեղուար լավ գիւացավ, երդուամ եմ ծխամորնուամ: Եզ բավական թանկ նստացրիթ մեզ վրա այդ: Ես այնտեղ երեք անգամ եմ եղել: Գա նույնքան ծիշտ է, որքան այն, որ ինձ տեսնուամ եք: Երեք անգամ եղել ենք թնդանոթների վրա, երեք անգամ տապալեցիթ մեզ, ինչպես թղթի զինվորիկների: Դա գեղեցիկ էր, պարոն Պիեռ: Չեր գրենազերները հիանալի՛ էին, աստված վկա: Ես տեսա, թե ինչպես նրանց շարքերը վեց անգամ միացան, և նրանք կարծես զորահանդեսուամ լինեին: Հիանա՞լի ժողովուրդ է: Սեր նեապոլի Քագավորը, որն այդ գործը գիտի իր հինգ մատի պես, նրանց հասցեին սկիցցե՞» էր բացականշում: Հա՛, Հա՛, այ՛ ինչպես է մեր եղբայր զինվորը: Ավելի լա՞վ, ավելի լա՞վ, պարոն Պիեռ Սարսափելի կոիվներում, սիրալիր գեղեցիւհների հետ, ահա՝ ֆրանսացիները, պարո՞ն Պիեռ: Ծիշտ չէ:

<sup>2</sup> — Ի դեպ ասացե՞ք ինդրեմ, ճի՛շտ է արդյոք, որ բոլոր կանայք հեռացել են Մոսկվայից: Տարօրինակ միտք: Ինչի՞ց էին նրանք վախենուամ:

— Իսկ մի՞թե ֆրանսացի կանայք չէին լիք Փարիզը, եթե ուսւները մտանեին:

<sup>3</sup> է, ասացի՞ք, Փարիզը... Բայց նս Փարիզ է... Փարիզ...

— Փարիզը — աշխարհի մայրաքաղաքը...

— Eh bien, si vous ne m'aviez pas dit que vous êtes russe, j'aurai parié que vous êtes parisien. Vous avez ce je ne sais quoi, ce...<sup>1</sup> — և, այդպիս հաճոյախոսելով, նա նորից լուս նայեց:

— J'ai été à Paris, j'y ai passé des années,<sup>2</sup> — ասավ Պիեռը:

— Oh, ça se voit bien. Paris!.. Un homme qui ne connaît pas Paris, est un sauvage. Un parisien, ça se sent à deux lieux. Paris, c'est Talma, la Duschénois, Potier, la Sorbonne, les boulevards,<sup>3</sup> — և, նկատելով, որ եղրակացությունը նախորդ ասածից ավելի թույլ է, նա շտապով ամեւացրեց. — il n'y a qu'un Paris au monde. Vous avez été à Paris et vous êtes resté russe. Eh bien, je ne vous en estime pas moins<sup>4</sup>.

Խմած զինու ազգեցության տակ և առանձնության մեջ իր մուայլ մտքերի հետ անցրած օրերից հետո, Պիեռն ակամա հաճույք էր զգում, խոսակցելով այդ ուրախ ու բարեհոնչի մարդու հետ:

— Pour en revenir à vos dames, on les dit bien belles. Quelle fichue idée d'aller s'enterrer dans les steppes, quand l'armée française est à Moscou. Quelle chance elles ont manqué, celles-la. Vos moujiks, c'est autre chose, mais, vous autres gens civilisés, vous devriez nous connaître mieux que ça. Nous avons pris Vienne, Berlin, Madrid, Naples, Rome, Varsovie, toutes les capitales du monde... On nous craint, mais on nous aime. Nous sommes bons à con-

<sup>1</sup> Է՛, եթե դուք ինձ շտաբիք, որ դուք ուսւն եք, ես գրագ կաշի, որ դուք փարիզոցի եք: Չեր մեջ ինչ-որ բան կա, այդ...

<sup>2</sup> Ես Փարիզում եղել եմ. Ես այնտեղ ամբողջ տարիներ եմ անցրել:

<sup>3</sup> — Օ՛, այդ երեսում է: Փարի՞զ... Այս մարդը, որը շգիստ Փարիզը, գայլինի է: Փարիզեցին հանաչվում է երես մզոն հնապորությունից: Փարիզը — այդ Տայլման է, Դյուշենուան, Պարին, Սորբոնը, բուլվարները:

<sup>4</sup> Ամբողջ աշխարհում գոյություն ունի միայն մի Փարիզ: Դուք Փարիզում եղել եք և ուսւն եք մնացել: Է՛, ինչ արած, դրա համար ես ձեզ պակաս չեմ ճարգում:

naître. Et puis l'Empereur...<sup>1</sup> — սկսեց նա, բայց Պիեռը նրան ընդմիջեց:

— L'Empereur, — կրկնեց Պիեռը, և նրա դեմքը հանկարծ բողոքնեց տիսուր ու շփոթված արտահայտություն: — Est-ce que l'Empereur...<sup>2</sup>

— L'Empereur? C'est la générosité, la clémence, la justice, l'ordre, le génie, voilà l'Empereur! C'est moi, Ramball, qui vous le dit... Tel que vous me voyez, j'étais, son ennemi il y a encore huit ans. Mon père a été comte émigré.. Mais il m'a vaincu, cet homme. Il m'a empoigné. Je n'ai pas pu résister au spectacle de grandeur et de gloire dont il couvrait la France. Quand j'ai compris ce qu'il voulait, quand j'ai vu qu'il nous faisait une litière de lauriers, voyez-vous, je me suis dit: voilà un souverain, et je me suis donné à lui. Eh voilà! Oh, oui, mon cher, c'est le plus grand homme des siècles passés et à venir<sup>3</sup>.

— Est-il à Moscou<sup>4</sup>, — կմկմալով և հանցավոր դեմքով ասավ Պիեռը:

Ֆրանսացին նայեց Պիեռի հանցավոր դեմքին և ծիծաղեց՝

<sup>1</sup> Բայց դառնա՛նք ձեր տիկիններին, Ասում են, որ նրանք շատ գեղեցիկ են, եվ ինչ հիմար բան են մտածել՝ գնալ-թաղվել տափաստանում այն ժամանակ, երբ ֆրանսական բանակը Մուվկայում է: Նրանք հիանալի առիթ բաց թողին: Զեր զյուղացիների վարմումքը — զեր հասկանալի է: Բայց դուք կրթված մարդիկ եք և պետք է մեզ ավելի լավ ճանաչեք: Մենք վերցիւ ենք Վիեննան, Բեռլինը, Մագդեբուրգը, Նեսապոլը, Հռոմը, Վարչական, աշխարհի վիեննան, եթելինը, Մագդեբուրգը, Նեսապոլը, Հռոմը, մայրաքանությունը: Մեզնից վախենում են, բայց մեզ սիրում են: Վնաս չի լին, եթե մեզ ավելի մոտ ճանաչեք: Եվ հետո կա՞յսրը...

<sup>2</sup> Միթք կայսր...

<sup>3</sup> Կա՞յսրը, Դա մեծանողություն է, գրասրություն, արդարամտություն, կարգ, հանճար — ահա՞ թե ինչ է կայսրը: Այդ ե՞ս, Ռամբա՛լս եմ ասում ձեզ: Հավատացնում եմ ձեզ, որ ութ տարի առաջ ես նրա թշնամին էի: Իմ հայրը եղել է կոմս ու վտարանդի: Բայց նա, այդ մարդը, հաղթեց ինձ: Նա ինձ տիրեց: Ես շկարողաց դիմանալ տեսարանի առաջ այն փառքի ու մեծության, որով նա պատում էր Ֆրանսիան: Երբ ես հասկաց, թե նա ինչ էր ցանկանում, երբ ես տեսա, որ նա մեր ոտքերի տակ դափնիներ էր փռում, ես ինձ ասի: ահա՞ քեզ թագավոր, և ես նվիրվեցի նրան: Եվ ահա՛: Օ՛, այս՛. սիրելի՛ս, դա ամենամեծ մարդն է բոլո անդահ ու գալիք դարերիւ

<sup>4</sup> — Ինչ, նա Մուվկայո՞ւմ է:

— Non, il fera son entrée demain<sup>1</sup>, — ասավ նա և շաբունակեց իր պատմությունները:

Նրանց խոսակցությունն ընդհատվեց դարբասի մոտից հասնող ձայների աղաղակով և Մորելի գալով, որը եկավ կապիտանին հայտնելու, թե եկել են Վիրտսեմբերգի հուսարներ և ուղում են ձիերը տեղավորել նույն բակում, որտեղ գտնվում էին կապիտանի ձիերը: Դժվարությունն առաջանում էր առավելապես նրանից, որ հուսարները չեին հասկանում այն, ինչ նրանց ասում էին:

Կապիտանը կարգադրեց իր մոտ կանչել ավագ ենթասպային և իիստ ձայնով նրան հարցրեց, թե նա ո՞ր գնդից է, ո՞գ է նրանց պետք և ի՞նչ հիմունքով նա թույլ է տալիս իրեն գրավել այն բնակարանը, որն արդեն զրալեցված է: Ի պատասխան առաջին երկու հարցի՝ գերմանացին, որը ֆրանսերեն վատ էր հասկանում, հայտնեց իր գնդի և իր պետի անունը. բայց վերջին հարցին նա, չհասկանալով այն, գերմաններեն խոսակցությանը կոտրատված ֆրանսերեն բառեր խառնելով, պատասխանեց, թե ինքը գնդի բնակարանորդն է և թե պետի կողմից իրեն կարգադրված է շարքով գրավել բոլոր տները, գերմանացին այն էր կապիտանի համար թարգմանեց այն, ինչ ասավ գերմանացին, և կապիտանի պատասխանը գերմաններեն հաղորդեց վիրտսեմբերգյան հուսարին: Երբ գերմանացին հասկացավ, թե ի՞նչ էին ասում իրեն, նա այլևս չպնդեց և իր մարդկանց հետ հեռացավ: Կապիտանը դուրս եկավ սանդուղքների գլուխս և բարձր ձայնով ինչո՞ր կարգադրություններ արավ:

Երբ նա վերադարձավ սենյակը, Պիեռը նստած էր նույն տեղում, որտեղ նա նստած էր առաջ՝ գլուխս ափերի մեջ առած: Նրա գեմքը տանջանք էր արտահայտում: Նա իսկապես տանջվում էր այդ րոպեին: Երբ կապիտանը դուրս եկավ և Պիեռը, մնաց մենակ, նա հանկարծ ուշքի եկավ և գիտակցեց այն զբուռությունը, որի մեջ ինքը գտնվում էր: Ոչ թե այն, որ Մուվկան վերցված էր, և ոչ այն, որ այդ երջանիկ հաղթողները քաղաքի

<sup>1</sup> — Ո՛չ, նա կգա վազը:

տեր-տիբականն էին դարձել և հովանավորում էին Պիեռին, որքան և ծանրորեն էր նա այդ գգում, այդ չէր նրան տանջում ներկա բռպեին։ Նրան տանջում էր իր թուլության գիտակցությունը։ Մի քանի բաժակ գինին, այդ բարեսիրտ մարդու հետ ունեցած խռակցությունը ոչնչացրին այն կենտրոնացած ու մուայլ տրամադրությունը, որի մեջ գտնվում էր նա այդ վերջին օրերը և որն անհրաժեշտ էր նրան՝ իր մտադրությունն իրագործելու համար։ Փշտովը, դաշույնը և արմյակը (վերնազգեստ) պատրաստ էին, նապոլեոնը վաղը պետք է քաղաք մտներ։ Պիեռը ճիշտ նույնպես օգտակար և արժանի էր համարում սպանել շարագործին։ բայց նա գգում էր, որ այժմ այդ չի անի։ Թե ինչո՞ւ — նա չգիտեր, բայց կարծես նախագգում էր, որ իր մտադրությունը չի իրագործի։ Նա պայքարում էր իր թուլության գիտակցության դեմ, բայց անորոշաբար գգում էր, որ ինքը չի կարողանալու հաղթահարել այն, որ նախկին՝ վրեժինդրության, սպանության և ինքնագոհության վերաբերյալ մտքերը առաջին իսկ մարդու հպումից փոշու նման հօգս ցնդցին։

Կապիտանը, թեթևակի կաղալով ու ինչ-որ եղանակ ոււելով, մաավ սենյակ։

Առաջ Պիեռին զվարճացնող ֆրանսացու շաղակրատությունն այժմ զզկելի թվաց երան։ Եվ սուլած երգը, և քայլվածքը, և քեզերը ոլորելու շարժումը — ամեն ինչ այժմ վիրավորական էր թվում Պիեռին։

«Ես հիմա կհեռանա՛մ, ես այլևս ոչ մի բառ չեմ փոխանակի երա հետ», մտածում էր Պիեռը։ Նա այդ մտածում էր, բայց շարունակում էր նստած մնալ միենույն տեղում։ Թուլության ինչ-որ տարօրինակ զգացում նրան գամել էր իր տեղին։ Նա ուզում էր վեր կենալ ու գնալ, բայց չէր կարողանում։

Կապիտանն, ընդհակառակը, շատ ուրախ էր երևում։ Նա երկու անգամ անցուղարձ արավ սենյակում։ Նրա աշքերը փայլում էին, և բեղերը թեթևակի ցնցվում, կարծես նա ժպտում էր ինքն իրեն, ինչ-որ զվարճալի հնարած բանի վրա։

— Charmant, — ասավ նա հանկարծ, — le colonel de ces wurtembergeois! C'est un allemand; mais brave garçon,

s'il en fut. Mais allemand<sup>1</sup>. — (Նա նստեց Պիեռի դիմաց)։ A propos, vous savez donc l'allemand, vous<sup>2</sup>։

Պիեռը լուռ նայում էր նրան։

— Comment dites-vous asile en allemand?<sup>3</sup>

— Asile? — կրկնեց Պիեռը։ — Asile en allemand — Unterterkunft<sup>4</sup>.

— Comment dites-vous?<sup>5</sup> — անվստահությամբ և արագ կրկնեց կապիտանը։

— Unterkunft, — կրկնեց Պիեռը։

— Onterkoff, — ասավ կապիտանը և մի քանի վայրկյան ծիծաղկոտ աշբերով նայեց Պիեռին։ — Les allemands sont de fières bêtes. N'est-ce pas, m-r Pierre?<sup>6</sup> — եղբափակեց նա։

— Eh bien, encore une bouteille de ce bordeau moscovite. n'est-ce pas? Morel va nous chauffer encore une petite bouteille, Morel!<sup>7</sup> — ուրախ գոյեց կապիտանը։

Սորելը բերեց մոմեր և մի շիշ գինի։ Կապիտանը նայեց Պիեռին լույսի տակ, և նրան, ըստ երևութին, զարմացրեց իր խոսակցի տիսուր դեմքը։ Ծամբայն անկեղծ վշտակցություն ու համակրանք արտահայտող դեմքով մոտեցավ Պիեռին և կոացավ նրա վրա։

— Eh bien, nous sommes tristes,<sup>8</sup> — ասավ նա, դիպչելով նրա ձեռին։ — Vous aurai-je fait de la peine? Non, vraiment, avez-vous quelque chose contre moi? — նորից հարցրեց նա։ — Peut-être, rapport à la situation?<sup>9</sup>

<sup>1</sup> Սքանչելի է այդ վիւտեմբերդյիների գնդապետը։ Նա գերմանացի է, բայց չնայած դրան, լավ սղ չէ։ Բայց գերմանացի է։

<sup>2</sup> Ի զեպ, ուրեմն, գերմաներեն գիտե՞ք։

<sup>3</sup> Ի՞նչպես ասել գերմաներեն՝ ապաստարան։

<sup>4</sup> Ապաստարան։ Գերմաներեն ապաստարան՝ Unterkunft.

<sup>5</sup> Ի՞նչ ասացիք։

<sup>6</sup> Գերմանացիները մեծ հիմարներ են։ Ճիշտ չէ, պ-ն Պիեռ։

<sup>7</sup> Դե, մի շիշ էլ այդ Սոսկովյան բորդոյից, այնպես չէ։ Սորել, գնա՛մ շիշ էլ տաքացրո՛ւ մեզ համար։ Սորել։

<sup>8</sup> Ի՞նչ է, տիսուր ենք։

<sup>9</sup> Գուցե ե՞ս վշտացրի ձեզ, հսկապես, իմ զեմ ոչինչ լո՛մեք։ Գո՞ւցե ձեր վիշտը կապ ունի իրերի գրության հետ։

Պիեռը ոչինչ շպատախմանեց, բայց գգվալից հայացքով նայեց ֆրանսացու աշբերին։ Կարեկցանքի այդ արտահայտությունը հաճելի էր նրան։

— Parole d'honneur, sans parler de ce que je vous dois, j'ai de l'amitié pour vous. Puis-je faire quelque chose pour vous? Disposez de moi. C'est à la vie et à la mort. C'est la main sur le coeur que je vous le dis<sup>1</sup>, — *ասակ նա, կուրծքը ձեզինդ:*

— Merci. — ասակ Պիեռ:

Կապիտանը ուշադրությամբ նայեց Պիեռին, այնպես, ինչ-պես նա նայեց այն ժամանակ, երբ իմացավ, թե ինչպես է գերմաներեն կոչվում ապաստարանը, և նրա գեմքը հանկարծ փայլեց:

— Ah! dans ce cas je bois à notre amitié<sup>2</sup>, — ուրախ գո-  
յեց նա, երկու բաժակ գինի լցնելով:

Պիեռլ վերցրեց լցրած բաժակը և խմեց։ Ռամբայլը խմեց իր բաժակը, մի անգամ էլ սեղմեց Պիեռի ձեռք և մտածկոտ-մելա-մաղձուռ դիրքով կոթնեց սեղանին։

— Oui, mon cher ami, voilà les caprices de la fortune, —  
սկսեց նա: — Qui m'aurait dit que je serai soldat et capitaine de dragons au service de Bonaparte, comme nous l'appellions jadis. Et cependant me voilà à Moscou avec lui. Il faut vous dire, mon cher<sup>3</sup>, — շարունակեց նա տիտուր ու շափմած ձայնով՝ հատուկ այն մարդկանց, որոնք պատրաստվում են երկար պատմություն անել, — que notre nom est l'un des plus anciens de la France<sup>4</sup>.

<sup>1</sup> Աղինի՛կ խոսք, խոսելով արդեն այն մասին, թե ինչով եմ ես ձեզ պարտական, ես բարեկամական զգացում ունեմ ձեր նկատմամբ։ Ձեմ կարող արդյոք որևէ բան անել ձեզ համար։ Ես ձեր տրամադրության տակ։ Եվ այդ կլինի հափիտյան։ Ես այդ ասում եմ ձեզ, ձեռք խղճիս դրած։

Համար, այդ գեպօւմ ես խմում եմ մեր բարեկամության համար։  
Այս, բա, եկա՞մս, ահա ճակատագրի քմահաճությունները։ Ող ինձ  
կասեր, որ ես զինվոր ու դրագունների կապիտան կլինեմ Թօնապարտի մոտ,  
ինչպես մենք երրեմն անվանում էինք նրան։ Մինչդեռ ահա ես նրա հոգ Մոսկ-  
վայում եմ։ Պետք է ձեզ ասե՛մ, սիրելի՛ս։

<sup>4</sup> Որ մեր անունը հնագույններից մեկն է Թրանսիայում:

Եվ Քրանսացուն հատուկ զյուրիին ու նախվ անկեղծությամբ կապիտանը Պիեռին պատմեց իր նախնիների պատմությունը, իր մանկությունը, պատանեկությունն ու շափահասությունը, իր բոլոր ազգակցական, ունեցվածքային և ընտանեկան հարաբերությունները: «Մա րաւուց»-ն, իհարկե, կարևոր դեր էր կատարում այդ պատմության մեջ:

— Mais tout ça ce n'est que la mise en scène de la vie, le fond c'est l'amour! L'amour! N'est-ce pas, m-r Pierre? —  
ասավ նա աշխուժանայով: — Encore un verre<sup>1</sup>.

Պիեռը նորից խմեց և լցրեց երրորդը:

— Oh! les femmes, les femmes!<sup>12</sup> — և կապիտանը, յուղոտված աշխերով նայելով Պիեռին, սկսեց խոսել սիրո և իր սիրային արկածների մասին:

Այդ արկածները շատ էին, և դրան կարելի էր հեշտությամբ հավատալ, նայելով սպայի ինքնազո՞հ, գեղեցիկ գեմքին և այն խանդավառ աշխույժին, որով նա խոսում էր կանանց մասին։ Չնայած նրան, որ Խամբայի բոլոր սիրային պատմությունները գարշանքի այն բնույթն ունեին, որի մեջ ֆրանսացիները տեսնում են սիրո բացառիկ հրապույրն ու պոեզիան, կապիտանն իր պատմությունն անում էր այնպիսի անկեղծ համոզումով, որ միայն ինքն է ապրել ու հասկացել սիրո բովանդակ քաղցրությունը, և այնպես գրավչորեն էր նկարագրում կանանց, որ Պիեռ Հետաքրքրությամբ էր լսում նրան։

Ակներկ էր, որ լ'ամօց-ը, որ այնպիս սիրում էր ֆրանսացին, ոչ այն ստորին ու հասարակ կարգի սերն էր, որը երբեմն Պիեռը տածել էր զեպի իր կինը, ոչ այն իր իսկ շափազանցրած ոռմանտիկական սերը, որը նա տածում էր զեպի նատաշան (այդ սիրո երկու տեսակն էլ հավասարապիս արհամարհում էր Ռամբայլը — մեկը լ'ամօռ des charretiers, մյուսը լ'ամօռ des nigauds)<sup>3</sup>, լ'ամօց-ը որին երկրպագում էր ֆրանսացին՝ առավելապիս կայանում էր զեպի կինն ունեցած վերաբերմունքի այն անբնականության մեջ, որ զուգակցվում է այլանդա-

<sup>1</sup> Բայց այդ բոլորը միայն կտանքի պայմաններ են, մինչդեռ սրա էություն նրանք են, անդամական պահանջման մեջ:

0°, կանա՛լք, կանա՛լք:

Սայլապանի սեր, մյուսը՝ հիմարների սեր:

կության հետ և որը կազմում է զգացմունքի գլխավոր հրապուրը:

Այսպես, կապիտանն արագ իր այն սիրո հուզիլ պատմությունը, որը նա ունեցել է դեպի մի 35 տարեկան կախարդիշ մարդիկուհին և մինույն ժամանակ դեպի այդ մարդիկուհու 17 տարեկան հիասքանչ և անմեղ աղջիկը։ Մեծահոգության այն պայքարը, որը տեղի է ունեցել մոր և աղջկա միջն և որը վերջացել է նրանով, որ մայրը իրեն զոհաբերելով, իր աղջկան որպես կին առաջարկել է իր սիրականին, դեռ մինչև այժմ էլ; թեև վաղուց արգեն անցած մի հիշողություն էր, հուզում էր կապիտանին։ Հետո նա պատմեց մի դեպք, որտեղ ամուսինը սիրականի դեր է կատարել, իսկ նա՝ (սիրականը) ամուսնու դեր, և մի քանի կոմիկական միջադեպեր սունենց d'Allemagne, որտեղ ասile նշանակում է Unterkunft, որտեղ լես մարտիս մանեն ծառ շուշ շուշ և որտեղ լես յանձնական անդամնություն էր ամուսինը այս պատմությանը, որը դեռ թարմ էր կապիտանի հիշողության մեջ և որը նա պատմեց արագ շարժումներով ու հուզված դեմքով, այն էր, որ նա փրկել էր մի լեհացու կյանք (ընդհանրապես, կապիտանի պատմությունների մեջ կյանք փրկելու միջադեպերն անվերջ էին), և այդ լեհացին իր կախարդիշ կնոջը (Parisienne de coeur<sup>2</sup>) վստահել էր կապիտանին այն ժամանակ, եթե ինքը մտել էր ֆրանսական ծառայության մեջ։ Կապիտանը երջանիկ էր, կախարդիշ լեհուհին ուզում էր նրա հետ փախչել, բայց մեծահոգությունից դրդված կապիտանը վերադարձրել է կնոջն ամուսնուն, ասելով նրան. «je vous ai sauvé la vie, et je sauve votre honneur!»<sup>3</sup>. Այդ խոսքերը կրկնելով, կապիտանը տրուեց աշքերը և թափ տվեց իրեն, կարծես վանելով իրենից այն թուլությունը, որը տիրել էր նրան այդ սրտառուշ հիշողության աղդեցության տակ։

<sup>1</sup> Գերմանիայի մասին ունեցած հիշողություններից, որտեղ ամուսինները կազմությ արգանակ են ուսում և որտեղ շահել աղջիկները շափական իսրայել են։

<sup>2</sup> Սրտով փարիզուհի։

<sup>3</sup> Ես փրկեցի ձեր կյանքը, փրկում եմ և ձեր պատիվը։

Կապիտանի պատմությունները լսելով, ինչպես այդ հաճախ լինում է երեկոյան ուշ պահին և գինու ազդեցության տակ, Պիեռ հետևում էր այն ամենին, ինչ ասում էր կապիտանը, ամեն ինչ հասկանում էր և դրա հետ միասին հետևում էր այն մի շարք անձնական հուշերին, որոնք ինչ-որ պատճառով հանկարծ ներկայացան նրա երևակայությանը։ Եթե նա լսում էր սիրո այդ պատմությունները, հանկարծ անսպասելի կերպովնա հիշեց իր սեփական սերը դեպի նատաշան և, իր երևակայության մեջ մի առ մի հիշելով այդ սիրո պատկերները, նա մտքում այն համեմատում էր Ռամբայիլի պատմությունների հետ։ Հետեւելով այն պատմությանը, որը վերաբերում էր պարտքի գիտակցության պայքարին ընդդեմ սիրո, Պիեռն իր առաջ տեսնում էր բոլոր աննշան մանրամասնություններն այն վերջին հանդիպումի, որ նա ունեցել էր իր սիրո առարկայի հետ Սուլիմարկի աշտարակի մոտ։ Այն ժամանակ այդ հանդիպումը նրա վրա ազդեցություն շգրծեց։ Նա նույնիսկ ոչ մի անգամ շիշեց դրա մասին։ Բայց այժմ նրան թվում էր, ինչ այդ հանդիպումն ինչ-որ շատ նշանակալից ու բանաստեղծական բան ուներ։

«Պյուտր Կիրիլի՛, եկե՛ք այստեղ, ես ճանաշեցի», լսում էր նա այժմ նատաշայի ասած խոսքերը, իր առջև տեսնում էր նրա աշքերը, ժափտը, ճամփորդական շամշկը, նրա տակից դուրս ցցված մազերի փունջը... և այդ բոլորի մեջ նա ինչ-որ հուզիլ, գթաշարժ բան էր տեսնում։

Վերջացնելով իր պատմությունը՝ կախարդիշ լեհուհու մասին, կապիտանը դիմեց Պիեռին այն հարցով, թե ապրե՞լ է նա արդյոք սիրո անձնագության նման զգացում և խանդիպացում դեպի օրինական ամուսինը։

Արձագանքելով այդ հարցին, Պիեռը զլուխը բարձրացրեց և իրեն զբաղեցնող մտքերն արտահայտելու անհրաժեշտություն զգաց։ Նա սկսեց բացատրել, թե ինքը մի քիչ այլ կերպ է հասկանում սերը դեպի կինը։ Նա ասավ, որ ինքն իր ամբողջ կյանքում սիրել է և սիրում է միայն մի կնոջ և որ այդ կինը երբեք չի կարող պատկանել իրեն։

— Tiens! — ասավ կապիտանը։

<sup>1</sup> Այ թե ինչ։

— 463 —

Պիեռը հետո բացատրեց, թե նա այդ կնոջը սիրել է պատանեկան հասակից. բայց չի համարձակվել նրա մասին մտածել այն պատճառով, որ նա շատ շահել է եղել, իսկ ինքն ապօրինի զավակ՝ առանց անվան: Հետո, երբ անուն ու հարստություն է ուտացել, նա չի համարձակվել նրա մասին մտածել այն պատճառով, որ շափազանց սիրել է այդ աղջկան, շափազանց բարձր է դասել նրան ամբողջ աշխարհից, առավել ևս իրենից:

Հասնելով իր պատմության այդ տեղը, Պիեռը դարձավ կապիտանին այն հարցով, թե հասկանո՞ւմ է արդյոք նա այդ:

Կապիտանը մի շարժում արագ, որն արտահայտում էր այն, որ եթե ինքը չի էլ հասկացել, ապա այնուամենայնիվ խնդրում է շարունակել:

— L'amour platonique, les nuages...<sup>1</sup> — քրթմըն-ջաց նա:

Արդյո՞ք խմած զինին, թե՝ անկեղծության պահանջը, թե՝ այն միտքը, որ այդ մարդը չի ճանաչում և չի ճանաչի իր պատմության գործող անձերից ոչ մեկին, թե՝ այդ բոլորը միասին՝ բաց արին Պիեռի լեզուն: Եվ նա բերանով շպացնելով և յուրոտ աշբերով ուր-որ հեռուն նայելով, պատմեց իր ամբողջ պատմությունը. և իր ամուսնությունը, և նատաշայի՝ դեպ իր լավագույն բարեկամը ունեցած սիրո պատմությունը, և նատաշայի դավաճանությունը և իր բոլոր պարզ հարաբերությունները նրա հետ: Պատասխանելով Ռամբայլի հարցերին, նա պատմեց և այն, ինչ առաջ թաքցնում էր — իր գիրքը հասարակության մեջ, և նույնիսկ հայտնեց նրան իր անունը:

Պիեռի պատմածից կապիտանին ամենից ավելի զարմացրեց այն, որ Պիեռը շատ հարուստ է եղել. որ նա Մոսկվայում երկու պալատ է ունեցել և որ ամեն ինչ թողել է և Մոսկվայից ոչ հեռացնել, այլ մնացել է քաղաքում, թաքցնելով իր անունը և կոչումը:

Արգեն ուշ գիշեր էր, երբ նրանք միասին դուրս եկան վողոց: Տաք ու պայծառ գիշեր էր: Տնից գեպի ձախ, Պետրովկայում, փայլ էր տալիս Մոսկվայում սկսված առաջին հրդեհից: Աջ կողմում բարձր կանգնած էր լուսնի նորած մանգաղը, և լուսնի հակառակ կողմում կախ էր ընկած այն պայծառ զի-

սավորը, որը Պիեռի հոգում կապվում էր նրա սիրո հետ: Դարբասի մոտ կանգնած էին Գերասիմը, խոհարարուհին և երկու ֆրանսացի: Լսվում էր նրանց ծիծաղը և միմյանց համար անհասկանալի լեզվով տեղի ունեցող խոսակցությունը: Նրանք նայում էին քաղաքում երևացող հրդեհի ցոլքերին:

Ոչ մի սարսափելի բան չկար հսկայական քաղաքում ծագած հեռավոր ոչ այնքան մեծ հրդեհում:

Նայելով բարձր աստղագարդ երկնքին, լուսնին, գիսավորին ու ցոլքին, Պիեռը բերկրալից խանդաղատանքի զգացում էր ապրում: «Ա՛յ, ինչ լավ է. էլ ի՞նչ է հարկավոր», մտածեց նա: Եվ հանկարծ, երբ նա հիշեց իր մտադրությունը, նրա գլուխը պտույտ եկավ, նա իրեն վատ զգաց, այնպես որ հենվեց ցանկապատին, որ շընկնի:

Հրաժեշտ շտալով իր նոր բարեկամին Պիեռն, անհաստատ քայլերով հեռացավ դարբասից և, վերադառնալով իր սենյակը, պառկեց բազմոցի վրա և իսկույն քնեց:

### XXX

Սեպտեմբերի 2-ին բռնկած առաջին հրդեհին տարբեր ճանապարհներից և տարբեր զգացումներով էին նայում փախչող ու հեռացող բնակիչները և նահանջող զորքերը:

Ծոստովների կառախումբն այդ գիշեր կանգ էր առել Միտիշչում, Մոսկվայից 20 վերստ հեռու: Սեպտեմբերի 1-ին նրանք այնքան ուշ դուրս եկան, ճանապարհը այնպես էր բռնված սայլերով ու զորքով, մոռացված էին այնքան իրեր (որոնց ետևից մարդիկ ուղարկվեցին), որ որոշվեց այդ օրը գիշերել Մոսկվայից հինգ վերստի վրա: Մյուս օրն առավոտ ուշ զարթնեցին, և նորից այնքան տեղեր կանգ առան, որ կարողացան հասնել միայն Բոլշիե Միտիշչի: Ժամը 10-ին Ծոստովները և նրանց հետ գնացող վիրավորները, բոլորը տեղավորվեցին մեծ գյուղի բակերում ու Խրճիթներում: Ծոստովների ծառաները, կառապանները և վիրավորների սպասյակները, տերերին հարմարորեն տեղավորելով, ընթրեցին, ձիերին կերտվին և դուրս եկան դռների առաջ:

Հարեան խրճիթում պառկած էր Ծաևակու վիրավոր աղյուտանտը. նրա ձեռի դաստակը կոտրված էր, և սարսափելի

<sup>1</sup> Պլատոնական սեր, ամպեր...

ցավը, որ զգում էր նա, ստիպում էր նրան անդադար տնքալ, հեծեծալ աղիողորմ, և այդ հեծեծանքը սարսափելի էր Հնչում աշնանային գիշերվա խավարում։ Առաջին օրը այդ ադյուտանտը գիշերեց նույն բակում, որ կանգ էին առել Ռոստով-ները։ Կոմսուհին ասում էր, թե չի կարողացել աչք փակել այդ տնքոցներից, և Միտիշչում կոմսուհին տեղափոխվեց մի ավելի վատ խրճիթ միա՛յն նրա համար, որ հեռու լինի այդ վիրավորից։

Մառաներից մեկը գիշերը մթության մեջ տան մուտքի առաջ կանգնած՝ կառեթի ետևից նկատեց մի ուրիշ ոչ մեծ հրդեհի բոց։ Մի հրդեհ վաղուց էր երևում արդեն, և բոլորը գիտեին, թե այդ Մալիի Միտիշչին է վառվում, որ կրակ էին տվել Մամոնովի կազակները։

— Է՛ս էլ, ախպերներ, ուրիշ հրդեհ է, — ասավ սպասյակը։ Եվ բոլորն իրենց ուշադրությունը դարձրին դեպի հրացոլքը։

— Բա ասում էին՝ Մալիի Միտիշչին է, Մամոնովի կազակներն են վառել։

— Նրա՞նք Բայց սա Միտիշչին չի. սա դենն է։

— Տես, կարծես Մոսկվայում լինի։

Մառաներից երկուսը տան առաջի սանդուղքներից իշան, անցան կառեթի մյուս կողմը և նստեցին նրա ոտնատեղի վրա։

— Սա ձախ կողմի վրա է, իսկ Միտիշչին հրե որտեղ է. սա բոլորովին ուրիշ կողմ է։

Մի քանի ծառաներ միացան առաջիններին։

— Տես, բոց է տալիս, — ասավ մեկը, — էս հրդեհը Մոսկվայումն է կամ Սուշչևսկայայում կամ թե չէ Ռագոժսկայայում։

Ոչ ոք չպատասխանեց այդ դիտողությանը։ Եվ բավական երկար ժամանակ այդ մարդիկ լուր նայում էին հեռվում բըռնըկած նոր հրդեհի բոցերին։

Կոմսի սենեկապահ ծերունին (ինչպես նրան անվանում էին)՝ Դանիլո Տերենտիչը մոտեցավ այդ խմբին և բոռաց Միշկայի վրա։

— Ի՞նչ ես նայում, հիմա՛ր... Կոմսը հարցնի, այնտեղ ոչ ոք չկա. գնա շորերը հավաքի։

— Ես հենց նոր ջրի վագեցի, — ասավ Միշկան։

— Դուք ի՞նչ եք կարծում, Դանիլո Տերենտիչ, է՛տ կրակի լույսը կարծես Մոսկվայումն է, չէ՞ — ասավ լակեյներից մեկը։

Դանիլո Տերենտիչը ոչինչ չպատասխանեց, և նորից բոլոր երկար ժամանակ լուր էին։ Հրացոլքը տարածվում ու ալեկոծվում էր հետզհետե ավելի ու ավելի հեռու։

— Աստվա՛ծ ողորմի... քամի է ու շորություն... — նորից ասավ մի ձայն։

— Տես, տես, ո՞նց է լուսավորվում։ Օ՛, տեր աստված, մինչև անգամ ագռավները երևում են. տեր, ողորմիր մեղավորներիս։

— Կհանգցնեն, մի՛ վախի։

— Ո՞վ պիտի հանգցնի, — լսվեց Դանիլո Տերենտիչի ձայնը, որ մինչ այդ լուր էր։ Նրա ձայնը հանգիստ էր և դանդաղ, կոտ։ — Մոսկվան է, որ կա, եղբայրներ, — ասավ նա, — նա է, մեր սպիտակա ... մայրը ... — նրա ձայնը կտրվեց, և հանկարծ հեկեկաց ծերունու իր հեկեկանքով։

Եվ կարծես բոլորը հենց դրան էին սպասում, որ հասկանան այն նշանակությունը, ինչ ուներ նրանց համար երևացող հըրգեհը։ Լսվեցին հառաջանքներ, աղոթքի բառեր և կոմսի ծեր անեկապետի հեծկլտանքը։

### XXXI

Սենեկապահը, վերադառնալով, կոմսին հայտնեց, թե Մոսկվան վառվում է։ Կոմսը խալաթը հագավ և դուրս եկավ նայելու։ Նրա հետ դուրս եկան և հագուստը դեռ շնանած Սոնյան, և մադամ Շոչս-ը։ Մենակ նատաշան ու կոմսուհին մնացին սենյակում։ (Պետյան այլևս ընտանիքի հետ չէր, նա անցել էր առաջ իր գնդի հետ, որը գնում էր զեպի Ծրոյից)։

Կոմսուհին լաց եղակ՝ Մոսկվայի հրդեհի լուրը լսելով, նատաշան, որ գունատ, կանգ առած աշքերով, նստել էր սըրբապատկերների ներքեւ դրված նստարանին (այն տեղը, ուր նստել էր գալու ժամկից) ոչ մի ուշ շղարձրեց հոր խոսքերին։ Նա ականջ էր դնում ադյուտանտի անլոելի տնքոցներին, որ գալիս էր երեք տուն հեռվից։

— Ախ, ի՞նչ սարսափելի է, — ասավ, բակից վերադառնալով, մրսած ու վախեցած Սոնյան։ — Ես կարծում եմ՝ ամբողջ

**Սոսկվան կայրվի.** սարսափելի բոցեր են երևում: Նատաշա,  
նայիր, այժմ այստեղից, լուսամուտից, երեւմ է,— ասավ  
Սոնյան, ըստ երևոյթին ցանկանալով մի բանով զբաղեցնել,  
գրել նրան:

Բայց Նատաշան նայեց նրան, կարծես չհասկանալով այն, թե ի՞նչ են հարցնում իրենից, և նորից աշքերը սկսենց վառարանի անկյունին։ Նատաշան այդ քարացած վիճակում էր գրտ-նըվում այս առավոտից, հենց այն ժամանակից, երբ Սոնյան ի զարմանք և ի զայրույթ կոմսուհու, զգիտես ինչո՞ւ համար, հարկավոր համարեց Նատաշային հայտնել իշխան Անդրեյի վերքի մասին և այն, թե նա իրենց հետ է, կոմսուհին բարկացավ Սոնյայի վրա, ինչպես շատ քիչ էր բարկանում։ Սոնյան լաց եղավ և ներողություն խնդրեց, և այժմ, կարծես իր հանցանքը քավելու համար, անդադար խնամում, հոգ էր տանում քրոջ մասին։

— Տես, Նատաշա, ինչպես սարսափելի է վառվում, —  
ասակ Սոնյան:

— Ի՞նչն է վառվում, — հարցրեց Նատաշան: — Ախ հա,  
Մոսկվան:

Եվ կարծես նրա համար, որ Սոնյային չվիրավորի իր մերժումով ու ազատվի նրանից, նա գլուխը տարավ դեպի լուսամուտը, նայեց այնպես, որ, ըստ երևույթին, ոչինչ չէր կարող տեսնել, ու նորից նստեց իր առաջվա տեղը:

— Բայց դու չտեսա՞ր:

— Զէ, ճիշտ, տեսա, — հանգստություն աղերսող ձայնով ասավ նա:

Թե՛ կոմսուհու, թե՛ Սոնյայի համար հասկանալի էր, որ Մոսկվան, Մոսկվայի հրդեշը, ինչ էլ լիներ, իհարկե, չէր կարող նշանակություն ունենալ նատաշայի համար։

Կոմսը նորից անցավ միջնորմի ետև ու պառկեց։ Կոմսուհին մոտեցավ Նատաշային, ձեռը շրջած մոտեցրեց նրա գլխին, ինչպես անում էր նա, երբ աղջկը հիվանդ էր լինում, ապա շուրջերը մոտեցրեց նրա ճակատին, կարծես նրա համար, որ իմանա տաքություն ունի թե չէ, ու համբուրեց նրան։

— Դու սառե՞լ ես: Դողո՞ւմ ես: Լավ կանեիր պառկեիր, —  
ասավ նա:

Պառկե՞լ: Այս, լավ, կպառկեմ: Խսկույն կպառկեմ, —  
առավ Նատաշան:

Այն պահից, երբ այս առավոտ նատաշաշին հայտնեցին, թե  
իշխան Անդրեյը ծանր վիրավորված է և գալիս է իրենց հետ,  
նա միայն առաջին բռպեին հարցուվորձեց. որտեղից՝ ի՞նչ-  
պես, վտանգավո՞ր է արդյոք վերքը և կարելի՞ է արդյոք նրան  
տեսնել: Բայց հետո, երբ ասին, թե նա իշխան Անդրեյին չի  
կարող տեսնել, որ նա ծանր վիրավոր է, բայց կյանքը վտանգի  
մեջ չէ, Նատաշան, ըստ երևույթին, հավատարկ այն բանին,  
ինչ իրեն ասում էին, բայց համոզվելով, թե որքան էլ ինքը  
խոսի, իրեն պատասխանելու են միենալով, էլ ոչ հարցու-  
փորձ արավ, ոչ խոսեց: Ամբողջ ճանապարհին, աշքերը խոշո-  
րացրած, որոնք այնպես ծանոթ էին կոմսուհուն և որոնց  
արտահայտությունից նա այնպես վախենում էր, Նատաշան  
անշարժ նստել էր կառեթի անկյունում, և այդպես էլ նստել էր  
նստարանին, ուր նստեց եկած բռպեին: Ինչ-որ մի բան էր  
մտածում նա, ինչ-որ բան էր որոշում՝ թե այժմ արդեն որո-  
շել էր մտքում, — այդ գիտեր կոմսուհին. բայց թե ի՞նչ բան էր  
այդ — կոմսուհին շգիտեր, և այդ էր որ սարսափեցնում ո-  
տանցում էր նրան:

— Նատաշա, հանվիր, սիրելիս. պառկիր Ի՞ս առողջութեան կոմսուհու համար էր անկողին գցված մահակալի վրա (Միայն կոմսուհու համար էր անկողին գցված մահակալի վրա, ու-ու Schoss-ը և երկու օրիորդը պետք է պառկեին հատակին, խոտի վրա):

— Զէ, մայրիկ, ես կպառկեմ այստեղ, ճատավրու, — բար կացած ասակ նատաշան, մոտեցավ լուսամուտին ու բացեց ան։

Աղյուսանտի տնքոցները բաց լուսամուտից լսկուս չըս  
ավելի որոշ։ Նա գլուխը զուրս հանեց գիշերլա խոնավ օդի  
մեջ, և կոմսուհին տեսավ, թե նրա բարակ վիզն ինչպես էր  
ցնցվում հեկեկանքից ու դիպչում լուսամուտի շրջանակին։  
Նատաշան գիտեր, որ տնքացողը իշխան Անդրեյը չէ։ Նա գիտեր  
որ իշխան Անդրեյը պառկած էր տների այն շարքում, ուր իրենք  
էին, մյուս խրծիթում։ Նախասենյակի այն կողմը, բայց այդ  
սարսափելի շգաղարող հեծեծանքը ստիպեց նրան հեկեկալ։  
Կուբուճեն ու Առնան իրար նալիցին։

— Պառկիր, աղաղնյակս, ատոկիր, սիրելիս, — ասավ կոմ-

առևին, ձեռը թեթեակի գիպսնելով նատաշայի ուսին: — Դ դրբիկ բորիկ ոտը, որ դուրս էր եկել վերմակի տակից, մրսում դե, պառկիր:

— Ախ, այո... Ես իսկույն կպառկեմ, — ասավ նատաշան հապճեապ հանելով ու շրջազգեստի կապերը կտրտելով:

Նա զգեստը հանեց և կոֆտան հագավ, ու ոտները ծափ լով, նստեց հատակին պատրաստած անկողնու վրա և, իր երկար հյուսը թիկունքից առաջ զցելով, սկսեց հյուսել այս թարակ, երկար, ընտել մատներն արագորեն ու ճարպկորե քանդում, հյուսում ու կապում էին հյուսքը: Նատաշան զլուկ սովորական շարժումով գարձնում էր մերթ մեկ, մերթ մյու կողմը, բայց նրա հիվանդագին կերպով լայն բացված աշքեր անշարժ նայում էին առաջ: Երբ գիշերային զգեստը հագա վերջացրեց, նատաշան կամացուկ պառկեց խոտին փոռ սավանի վրա՝ դեպի դռան կողմը:

— Նատաշա, դու մեջտեղը պառկիր, — ասավ Սոնյան:

— Ես այստեղ կպառկեմ, — խոսեց նատաշան: — Դե, պառկեցք էլի, — ավելացրեց նա դժգոհ: Եղ ինքը երեսը թաղէ բարձի մեջ:

Կոմսուհին, ո-ո Շոսս-ը և Սոնյան հապճեապ հանկեցի պառկեցին: Սենյակում միայն կանթեղը մնաց: Բայց բակ լուսավորվում էր երկու վերստ հեռու գտնվող Մալիե Միտիշչի հրդեհից, և լսվում էին ծողովրդի գիշերային աղաղակներ օղետան մեջ, որ զարդել էին Մամոնովի կազակները, զափ վայրում, փողոցում, և շարունակ լսվում էր այդուտանսի շդադարդ հեծեծանքը:

Նատաշան երկար ականջ էր դնում ներքին և արտաքին ձայ ներին, որ հասնում էին իրեն, ու չէր շարժվում: Նա սկզբու լսեց մոր աղոթքն ու հոգոցները, նրա մահճակալի ճոհնը ո-ո Շոսս-ի ծանոթ սուլոցախառն խոմփոցը, Սոնյան հանդարտ շնչառությունը: Հետո կոմսուհին ձայն տվեց նատաշային: Նատաշան շպատասխանեց նրան:

— Կարծես, քնած է, մամա, — կամացուկ պատասխանեց Սոնյան:

Կոմսուհին, մի փորր լոելով, նորից ձայն տվեց, բայց ո՞ք արդեն նրան շպատասխանեց:

Շուտով դրանից հետո նատաշան լսեց մոր հանդարտ-հա վասար շնչառությունը: Նատաշան չէր շարժվում, չնայած ո՞ք

մորբիկ բորիկ ոտը, որ դուրս էր եկել վերմակի տակից, մրսում էր մերկ հատակին:

Կարծես բոլորի նկատմամբ մի հաղթանակ տոնելով՝ ծրբութ երգեց իր ճեղքում: Հեռվում կանչեց մի աքաղաղ, նրան ծրագանք տվեց մի ուրիշ մոտիկից: Օղետան աղմուկը լոեց. արձագանք էր միայն աղյուտանտի նույն հեծեծանքը: Նատաշան լուսում էր միայն աղյուտանտի նույն հեծեծանքը:

— Սոնյա, քնած ես: Մայրիկ, — շնչաց նա:

Ոչ-ոք շպատասխանեց: Նատաշան դանդաղորեն ու զգու շությամբ ելավ, երեսը խաշակնքեց և զգուշորեն իր նեղ ու շությամբ բորիկ ոտնաթաթը դրեց կեղտոտ սառը հատակին: Ճիռն բորիկ ուսուաթակները ճոռացին: Նա, արագորեն ոտները փոխելով, Տաթուակները ճոռացին: Նա, արագորեն ոտները փոխելով, վագֆ կատվի ձագի նման մի բանի քայլ և բռնեց դռան սառը բրնձակը:

Նրան թվում էր, թե ինչ-որ մի բան, հավասարաշափ գար կելով, թանկում է խրճիթի բոլոր պատերը. այդ նրա՝ վախից, սարսափից, սիրուց մարող ու պայթող սիրուն էր:

Նա դուռը բաց արակ, լոր տվեց շեմքից և ոտք դրեց նախասենյակի խոնավ, սառը գետնի վրա: Ցուրտը թարմացրեց սենյակի խոնավ, սառը գետնի վրա: Ցուրտը թարմացրեց նրան: Նա բորիկ ոտով շոշափեց մի քնած մարդու, լոր տվեց նրան: Նա բորիկ ոտով շոշափեց մի քնած մարդու, ուր պառկած նրա գրայից ու բաց արակ այն խրճիթի դուռը, ուր պառկած նրա գրայից ու բաց արակ այն խրճիթի մութն էր: Ետին անկյուն էր Խշան Անդրեյը: Այդ խրճիթում մութն էր: Ետին անկյուն մահճակալի մոտ, ուր ինչ-որ մի բան էր պառկած, նըսնում մահճակալի մոտ, ուր ինչ-որ մի բան էր պառկած, նըսնում մահճակալի մոտ, ուր ինչ-որ մի բան էր պառկած, նըսնում մահճակալի մոտ, ուր այդ անհրաժեշտ է:

Նատաշան դեռ առավոտից, երբ նրան հայտնեցին իշխան Անդրեյի վերքի ու ներկայության մասին, որոշեց, որ ինքը Անդրեյի նրան: Բայց այժմ, երբ հասել էր այդ բոպեն, նրան պա կամենի նրան: Բայց այժմ, երբ հասել էր այդ բոպեն, նրան պարագաները այն սարսափը, թե ի՞նչ կտեսնի: Ինչպես է նա այլան շարժած: Ի՞նչ է մնացել նրանից: Արդյոք այնպես էր, ինչպիսին էր աղյուտանտի շդադանքը: Այո, նա ամբողջովին էր աղյուտանտի նատաշայի երևակայության մեջ այդ սարսափելի այրում: Նա նատաշայի երևակայության մեջ այդ սարսափելի այրում: Եթե մարմնացումն էր: Երբ նա տեսավ անորոշ զանգ հանձնաժքի մարմնացումն էր:

‘սամն անկյունում և նրա՝ վերմակի տակ բարձրացրած ծնկներն ընդունեց նրա ուսերի տեղ՝ Նատաշան պատկերացրեց մի սարսափելի մարմին և սարսափած կանգ առավ: Բայց անդի մաղրելի մի ուժ նրան առաջ էր մղում: Նա զգուշությամբ մի երկու քայլ արավ և իրեն տեսավ փոքրիկ լեփլեցուն խրճիթի մեջտեղը, Խրճիթում սրբապատկերների ներքո դրված նըստարանին պառկած էր մի ուրիշ մարդ (դա Տիմոթիինն էր), և Հատակին էլ պառկած էին դարձյալ երկու ինչ-որ մարդ/կ (դրանք բժիշկն ու սենեկապահն էին):

Սենեկապահը վեր կացավ ու ինչ-որ շնչաց։ Տիմոխինը, վիրավոր ոտի ցավից տանջվելով, քնած չէր և աշքերը բաց նայում էր օտարոտի կերպով երևացած սպիտակ շապկով, կոֆտայով և գիշերային շամշկով աղջկան։ Քնատ ու վախեցած սենեկապահի «ի՞նչ եք ուզում, ինչո՞ւ համար» խոսքերը ստիպեցին միայն Նատաշային ավելի շուտ մոտենալ նրան, որը պառկած էր անկյունում։ Որքան էլ այդ մարմինը սարսաթիելիրեն նման չէր մարդու, նա պետք է նրան տեսներ։ Նատաշան անցավ սենեկապահի կողքով։ մոմի այրված սունկն ընկավ, և նա պարզ տեսավ ձեռները վերմակի վրա դրած պառկած իշխան Անդրեյին այնպես, ինչպես միշտ տեսել էր նրան։

Նա նույն էր, ինչպես միշտ. բայց բորբոքուն դեմքը, փայ-  
լուն աշքերը, որ հիացագին հառել էր նրան, մանավանդ ման-  
կական քննուշ վիզը, որ դուրս էր ընկնում շապկի ծալած  
օձիքից, նրան տալիս էին մի առանձին անմեղ, երեխայական  
տեսք, որը, սակայն, Նատաշան երբեք չէր տեսել իշխան Անդ-  
րեյի մեջ; Նատաշան մոտեցավ նրան և արագ, ճկուն ու զահել  
շարժումով ծունկի եկավ:

Իշխան Անդրեյը ժպտաց և ձեռք մեկնեց Նատաշային:

XXXII

Իշխան Անդրեյի համար յոթ օր էր անցել այն օրից, երբ  
նա ուշքի եկավ Բորոդինոյի դաշտի վիրակապության կայա-  
նում։ Այդ ամբողջ ժամանակը նա գտնվում էր համարյա մըշ-  
տական ուշակորույս դրության մեջ։ Զերմը և աղիքների բոր-  
բոքումը, որոնք վիրավորի հետ եկող բժշկի կարծիքով վր-  
նասված էին, մաս էին բերելու նրան։ Բայց 7-րդ օրը նա բա-

վականությամբ մի կտոր հաց կերավ թեյի հետ, և թիշկը նը-  
կատեց, որ տաքությունն ընդհանուր առմամբ պակասել է:  
Իշխան Անդրեյն առավոտյան գեմ ուշքի եկավ: Մոսկվայից  
գուրս գալուց հետո առաջին գիշերը բավականին տաք էր, և  
իշխան Անդրեյին թողին կառքում գիշերելու. բայց Միտիշ-  
չում վիրավորն ինքը պահանջեց., որ իրեն ներս տանեն և  
թեյ տան: Խրծիթ տեղափոխելուց առաջացած ցավն ստիպեց  
իշխան Անդրեյին բարձրածայն տնքալ և նա ուշակորույս եղավ:  
Երբ նրան զրին շարժական մահճակալի վրա՝ նա երկար ժա-  
մանակ աշքերը փակ պառկած էր անշարժ, հետո նա աշքերը  
բացեց և կամացուկ շշնչաց. «Թեյն ի՞նչ եղավ»: Կյանքի մանր  
բաների այդ հիշողությունը զարմացրեց բժշկին: Նա շոշափեց  
զարկերակը և զարմանքով ու անբավականությամբ նկատեց,  
որ զարկերակն ավելի լավ էր: Բժշկին այդ անբավականությամբ  
նկատեց նրա համար, որովհետև նա փորձով համոզված էր, որ  
իշխան Անդրեյն ապրել չի կարող, և որ նա եթե հիմա շմեռնի,  
ապա ավելի մեծ տանջանքներով մեռնելու է որոշ ժամանա-  
կից հետո: Իշխան Անդրեյի հետ տանում էին Մոսկվայում նը-  
րանց միացած նրա գնդի մայոր կարմրաքիթ Տիմոֆինին, որ  
ոտից վիրավորվել էր նոյն Բորոդինոյի ճակատամարտում: Նը-  
րանց ուղեկցում էին բժիշկը, իշխանի սեննեկապահը, նրա կա-  
ռապանն ու երկու սպասակը:

— էլ չեմ ուզում: Տիմոխինն այստեղ դ է, — արցի՛ Տիմոխինը նստարանի վրայով սողաց դեպի նա:

— Ես այստեղ եմ, ձերդ պայծառափայլություն

— Վերքի ի՞նչպես է:

— Ի՞մ մաս Ոչինչ Այ, դուքք ինչպես եք:

Եղիսաբետ Անդրեյը նորից մտածմունքի մեջ ընկալ, կարուս

## ինչոր բան հիշելով:

— Զի՞ կարելի արդյոք գիրք գտնել, — ասավ սա:

— *h'uz q'hup:*

— Ավետարանը : Ես շունեմ :

ԲԺԻՇԱ ԽՈՍՏԱԳՎԱԿ ճարել և սկսեց թշնամու աւրագու է  
ՃԵԼ, թե նա ի՞նչ է զգում: Իշխան Անդրեյը դժկամ, շատ բա-  
ձել, թե

Նական կերպով պատասխանեց թժկի բոլոր հարցումներին և հետո ասավ, թե իր տակը պետք է փոքրիկ գլանիկ զնել, թե չ անհարմար է դիրքը և սաստիկ ցավ է զգում: Թժշկն ու սէնն. կապահը բարձրացրին նրա վրայի շինելը և, դեմքները կընճ. ռելով հոտած մսի ծանր հոտից, որ տարածվում էր վերքից, սկսեցին դիտել այդ սարսափելի տեղը: Թժշկն ինչ-որ բանից շատ դժգոհ մնաց, ինչ-որ բան փոխեց, վիրավորին շրջեց այնպես, որ նա նորից հեծեծաց և շրջելու միջոցին, ցավից, նորից գիտակցությունը կորցրեց ու սկսեց զառանցել: Նա շարունակ խոսում էր այն մասին, որ այդ դիրքը գտնեն բերեն շուտով և դնեն այստեղ:

— Դա դժվար բան չի ձեզ համար, — ասում էր նա: — Ես այդ դիրքը շունեմ. գտեք, խնդրում եմ, դրեք մի բոպե, — ասում էր նա խղճալի ձայնով:

Թժշկը դուրս եկավ նախասենյակ՝ ձեռները լվալու:

— Ախ, անխիղճներ, իսկապես, — ասում էր թժշկը սենեկապահին, որ ջուր էր լցնում նրա ձեռներին: — Միայն մի բոպե չնայեցի: Դա մի այնպիսի ցավ է, որ ես զարմանում եմ, թե նա ինչպես է դիմանում:

— Մենք, կարծեմ, բան դրինք, տեր Հիսուս Քրիստոս, — ասում էր սենեկապահը:

Առաջին անգամ իշխան Անդրեյը հասկացավ, թե որտեղ էր ինքը և ի՞նչ էր պատահել իրեն, ու հիշեց, որ վիրավորված էր և ինչպես այն բոպեին, երբ կառքը կանգ առավ Միտիշչիում, նա խնդրեց իրեն խրճիթ տեղափոխեն: Ցավից իրեն կորցնելով՝ նա մյուս անգամ ուշիքի եկավ խրճիթում, երբ թեյ էր խմում, և այստեղ նորից, հիշողության մեջ կրկնելով այն բոլորը, ինչ պատահել էր իրեն, նա ամենից ավելի կենդանի կերպով պատեհացրեց այն վայրկյանը վիրակապության կայանում, երբ իր շիրած մարդու տանջանքները տեսնելով, նրա գլխում ծագեցին այդ նոր, իրեն երջանկություն խոստացող մտքերը: Եվ այդ մտքերը, թեև ոչ պարզ ու որոշ, նորից տիրեցին նրա հոգուն: Նա հիշեց, որ ինքը հիմա նոր երջանկություն ունի, և որ այդ երջանկությունը ինչ-որ ընդհանուր բան ուներ Ավետարանի հետ: Դրա համար էլ նա խնդրեց ավետարանը: Բայց վատ դիրքը, որ տվին նրա վերքին, նոր տեղաշրջումը նորից խառնեցին նրա մտքերը, և նա երրորդ անգամ աշք բացեց

— 494 —

արդեն գիշերային լիակատար անդրբության մեջ: Բոլորը քը-նած էին նրա շուրջը: Ծղրիզը կանչում էր նախասենյակի այն կողմից, փողոցում ինչ-որ մեկը գոռում էր ու երգում, ուստիճ-ները շրջում էին սեղանի, սրբապատկերների և պատերի վրա, մի մեծ ճանճ դեսուլեն էր անում նրա գլխավերեն ու այրված մոմի շուրջը, որ դրված էր իր կողքին:

Նրա հոգին նորմալ վիճակի մեջ չէր: Առողջ մարդը սովորա-րար խորհում, զգում և հիշում է միաժամանակ անթիվ-ան-համար առարկաների մասին, բայց իշխանություն և ուժ ունի մի շարք մտքեր կամ երկութներ չոկել, ու այդ մի շարք երկութների վրա կինտրոնացնել իր ուշադրությունը: Առողջ մարդը խորագույն խորհրդածության բոպեին իր մտքերի թևը կտրում է, որ մի քաղաքավարի խոսք ասի ներս մտնող մարդուն, և նորից գառնում է իր խոհերին: Իսկ իշխան Անդրեյի հոգին այդ տեսակետից նորմալ դրության մեջ չէր: Նրա հոգեկան բո-լոր ուժերն ավելի գործուն էին, ավելի պայծառ, քան երբեմե, և նրանք գործում էին նրա կամքից դուրս: Ամենաբազմազան խօհերն ու մտապատկերները միաժամանակ տիրում էին նր-րան: Երբեմն նրա միտքը հանկարծ սկսում էր աշխատել, և այնպիսի ուժով, պայծառությամբ ու խորությամբ, ինչպես երբեք ի վիճակի չէր եղել գործել առողջ վիճակում: Բայց հան-կարծ, աշխատանքի կեսին, նրա միտքը կտրվում էր, փոխարի-նում էր ինչ-որ անսպասելի մտապատկերով, և էլ ուժ չէր լի-նում նրան դառնալու:

«Այսուհետեւ, ինձ համար բացվեց նոր երջանկություն, մարդու անկապտելի երջանկությունը, — մտածում էր նա, կիսախավար լուս խրճիթում պառկած և տեղնդագին-շոված, կանգ առած աշքերով առշեր նայելով: — Երջանկություն, որ գտնվում է նյութական ուժերից դուրս, մարդու վրա եղած նյութական արտաքին ազդեցություններից դուրս, երջանկությունը մի սիրու: Նրան հասկանալ կարող է ամեն մարդ, բայց իմանալ և հրահանգել կարող է աստված միայն: Բայց ի՞նչպես է աստված հրահանգել այդ օրենքը: Ինչու որդին...»:

Եվ հանկարծ այդ մտքերի ընթացքը կտրվեց, և իշխան Անդրեյը լսեց (շիմանալով՝ զառանցանքի թե իրականության մեջ է լսում այդ) ինչ-որ կամացուկ շնչացող մի ձայն, որ

— 495 —

անլոելի տակտ էր խփում. «Ա պիտի-պիտի-պիտի» և հետո «ե-տի-տի», ու դարձյալ «Ա պիտի-պիտի-պիտի» և էլի «Ա տի-տի»: Դրա հետ միասին, այդ շնչող հնչունների ներքո, իշխան Անդրեյն զգում էր, որ իր դեմքի վերեր, հենց մեջտեղում բարձրանում էր ինչ-որ մի տարօրինակ օդային շենք՝ մանր ասեղներից թե մարխի ծեղերից: Նա զգում էր (այդ թեև ծանր էր նրա համար), որ ինքը խնամքով պետք է հավասարակշռություն պահի նրա համար, որ կառուցվող այդ շենքը չփոխի. բայց նա այնուամենայնիվ փլվում էր և նորից դանդաղորդն բարձրանում շշնչող երաժշտության համաշափ հնչունների ներքո: «Զգվո՞ւմ է, ձգվո՞ւմ. երկարում է ու էլի ձգվում», ասում էր իշխան Անդրեյն իրեն: Շշունչին ականջ դնելու և այդ ձգկող ու բարձրացող՝ ասեղներից շինվող շենքն զգալու հետ միասին իշխան Անդրեյն ընդհատումներով տեսնում էր և մոմի կարմիր շրջան կազմած լույսը և լսում էր ուստի ճների շրջյունն ու շըրշը ճանճի, որ դիպչում էր իր բարձին ու իր դեմքին: Եվ ամեն անգամ, երբ ճանճը դիպչում էր նրա դեմքին, առաջանում էր այրող զգացում. բայց դրա հետ միասին նրան զարմացնում էր այն, որ դիպչելով հենց երեսին բարձրացող շենքի տեղին, ճանճը չէր քանդում շենքը: Բայց, դրանից բացի կար մի կարևոր բան ևս: Դա դրան մոտի սպիտակն էր, դա սֆինքսի արձան էր, որ նույնպես ճնշում էր նրան:

«Բայց դա գուցե իմ շապիկն է սեղանի վրա, — մտածում էր իշխան Անդրեյը, իսկ սրանք իմ ոտներն են, իսկ սա դրան է. բայց ինչո՞ւ է շարունակ ձգվում ու բարձրանում, և պիտի-պիտի-պիտի, և տի-տի — և պիտի-պիտի-պիտի... Բավական է դադարիր, խնդրեմ, թո՞ղ», ծանրությամբ խնդրեց մեկին իշխան Անդրեյը: Եվ հանկարծ նորից մի միտք ու զգացմունք ըլուրս սոլաց անսովոր պայծառությամբ և ուժով:

«Այո, սերը (մտածեց նա կրկին կատարյալ պարզությամբ), բայց ոչ այն սերը, որ լինում է մի որևէ բանի համար, ինչ-որ բանի համար կամ որևէ պատճառով, այլ այն սերը, որ ես զգացի աւաշին անգամ, երբ, մեռնելիս, ես տեսա իմ թշնամուն և այնուամենայնիվ սիրեցի նրան: Ես ապրեցի սիրո այն զգացումը. որը կազմում է հոգու իսկական էությունը, և որի համար հառկավոր չէ առարկա: Ես այժմ էլ ապրում եմ այդ երանակետ զգացումը: Միրել մերձավորին, սիրել իր թշնամուն: Միրել

— 496 —

ամեն ինչ — սիրել աստծուն բոլոր արտահայտությունների մեջ: Թանկագին մարդուն կարելի է սիրել մարդկային սիրով, բայց թշնամուն միայն կարելի է սիրել աստվածային սիրով: Եվ դրանից էր, որ ես այնպիսի ուրախություն ապրեցի, երբ եվ գրանից էր, որ ես այն մարդուն, ի՞նչ եղավ նա: Կենդանի՝ զգացի, որ սիրում եմ այն մարդուն: Ի՞նչ եղավ նա: Կենդանի՝ է արդյոք...

Մարդկային սիրով սիրելով, սիրուց կարելի է անցնել ատելության. բայց աստվածային սերը չի կարող փոխվել: Ոչ մի լուսահամար, ոչինչ չի կարող խորտակել այն: Նա էությունն բան, ոչ էլ մահը, ոչինչ չի կարող խորտակել այն: Նա էությունն է հոգու: Եվ որքան շատ մարդ եմ ատել ես իմ կյանքում: Ու բոլոր մարդկանցից ոչ ոքի ավելի շեմ սիրել ես ու ատել, քան երանակներից իրեն նատաշային ոչ նրան: Եվ նա կենդանի պատկերացրեց իրեն նրան առաջ. միայն նրա այնպես, ինչպես պատկերացնում էր նրան առաջ. միայն նրա ամայքներով, որ ուրախություն էին պատճառում իրեն. ու առաջին անգամ պատկերացրեց իրեն նրա հոգին: Եվ նա հասառացալ նրա զգացմունքը, նրա տանջանքները, ամոթն ու զրդկացալ նրա զգացմունքը, նրա առաջանքները, ամոթն ու զրդման զումը: Նա այժմ առաջին անգամ հասկացավ իր մերժման զումը: Նա այժմ առաջին անգամ հասկացավ իր կապերը խզելու դաբավանդակ դաժանությունը, տեսավ իր կապերը խզելու դաբավանդակ դաժանությունը: «Եթե ես հանրավորություն ունենայի գեթ մի ժամանակ և սիրել նատաշային անգամ սիրել նրան: Մի անգամ, ու նրա աշքերին նայելով ասել...»:

Եվ պիտի-պիտի-պիտի, և տի-տի, և պիտի-պիտի — բում... պիտակ ճանճը... Եվ նրա ուշագրությունը հանկարծ փոխադրողիպակ ճանճը... Եվ նրա ուշագրությունը հանկարծ փոխադրության ու զառանցանքի մի այլ աշխարհ, ուր ինչ-վեց իրականության ու զառանցանքի մի այլ աշխարհում էլ որ առանձնահատուկ բան էր կատարվում: Այդ աշխարհում էլ իր առանձնահատուկ բան էր շարունակ բարձրանում շինվում էր շենքն առանց նույնպես շարունակ նույնպես ձգվում էր ինչ-որ մի բան, քանդվելու, շարունակ նույնպես ձգվում էր ինչ-որ մոմը, նույն նույնպես կարմիր շրջան բոլորած վառվում էր մոմը, ուրիշ շապիկ-սֆինքսը ընկած էր դուռն մոտ. բայց այդ բոլորից շապիկ-սֆինքսը զարմանաբար կատարվում էր այլ սպիտակ բացի ինչ-որ բան ճոնչաց. զով քամի եկավ, և մի նոր սպիտակ սֆինքս, կանգնածը, երևաց դուռն առաջ: Եվ այդ սֆինքսի գլուխն ուներ գունատ գեմքն ու փայլուն աշքերը հենց այն աստաշայի, որի մասին մտածում էր այժմ:

«Օ», որքան ծանր է այս շդաղարող զառանցանքը», մըտածեց իշխան Անդրեյը, աշխատելով վառել այդ գեմքն իր սարդեց իշխան Անդրեյը, աշխատելով վառել այդ գեմքն իր երեակայությունից: Բայց այդ գեմքը կանգնած էր նրա առջև որպես իրականություն, և այդ գեմքը մոտենում էր: Իշխան

— 497 —

Անդրեյը ուզեց վերադասնալ իր մտքերի աշխարհը, բայց յու կարողացավ, ու զառանցանքը քաշում էր նրան իր ոլորտը։ Կամացուկ շշնչացող ձայնը շարունակում էր իր համս շափ թոթովանքը, ինչ-որ մի բան ճնշում էր, ձգում, ու տարօրինակ դեմքը կանգնած էր նրա առաջ։ Իշխան Անդրեյը հավաքեց իր բոլոր ուժերը, որ սթափվի. նա շարժվեց, և հանկարծ նրա ականջները խշշացին, աշքերը մթնեցին, և նա ինչպես շուրջ սուզված մարդ, գիտակցությունը կորցրեց։ Երբ նա ուշքի եկավ, նատաշան, հենց նույն կենդանի նատաշան, որին նա աշխարհի բոլոր մարդկանցից ավելի էր ցանկանում սիրել այն նոր անարատ աստվածային սիրով, որ հիմա էր հայտնվել իրեն, այդ նատաշան ծնկաշոք կանգնած էր իր առաջ։ Նա հասկացավ, որ դա կենդանի, իսկական նատաշան էր, և շզարմացավ, այլ լույսայն ուրախացավ։ Նատաշան, ծնկաշոք, վախեցած, բայց քարացած (նա չէր կարողանում շարժվել) նայում էր նրան, հեկեկանքը զսպելով։ Նատաշայի դեմքը գունատ էր և անշարժ։ Նրա ներքին մասում միայն դողում էր ինչ-որ մի բան։

Իշխան Անդրեյը թեթևացած շունչ քաշեց, ժպտաց և ձեռը մեկնեց։

— Դո՞ւք եք, — ասավ նա։ — Ինչ բախտավորություն։ Նատաշան արագ, բայց զգույշ շարժումներով ծնկաշոք գնաց դեպի նա, և զգուշությամբ նրա ձեռքը բռնելով, դեմքով խոնարհվեց նրա վրա ու սկսեց համբուրել այն, շուրթերը հագիվ հակելով։

— Ներեցե՞ք, — ասավ նատաշան շշուկով, գլուխը բարձրացնելով ու նրան նայելով։ — Ներեցե՞ք ինձ։

— Ես ձեզ սիրում եմ, — ասավ իշխան Անդրեյը։

— Ներեցե՞ք...

— Ի՞նչը ներել, — հարցրեց իշխան Անդրեյը։

— Ներեցեք ինձ նրա համար, ինչ ես... արի, — հազիվ լսելի ընդհատվող շշուկով ասավ նատաշան և սկսեց ավելի հաճախ, շուրթերը հազիվ դիպանելով, համբուրել նրա ձեռը։

— Ես քեզ սիրում եմ ավելի, ավելի շատ, բան առաջ, — ասավ իշխան Անդրեյը, ձեռով նրա դեմքը բարձրացնելով այնպես, որ ինքը կարողանար նայել նրա աշքերին։

Այդ աշքերը երջանկության արցունքներով լեցուն, երկշոտությամբ, կարեկցարար և խնդում սիրով նայում էին նրան՝ իշխան Անդրեյին։ Նատաշայի նիշար ու գումատ գեմքը՝ ուտած շուրթերով, ավելի քան տգեղ էր, սարսափելի էր։ Բայց իշխան Անդրեյն այդ դեմքը չէր տեսնում, նա տեսնում էր փայլող աշքերը, որ հիասքանչ էին։ Նրանց ետև խոսոց լրացվեց։

Պյատրը, սենեկապահը, այժմ քնից բոլորովին սթափված, արթնացրեց բժշկին։ Տիմոֆեյնը, որ ամբողջ գիշերը չէր քնել ոտի ցավից, վաղուց արդեն տեսնում էր բոլորը, ինչ կատարվում էր, և, մերկ մարմինը խնամքով ծածկելով սավանով, կուշ էր եկել նստարանի վրա։

— Սա ի՞նչ բան է, — ասավ բժիշկը, տեղից վեր կենալով։ — Բարեհաճեցեք գնալ, տիրուհի։

Հենց այդ ժամանակ էլ գուտը ծեծեց մի աղջիկ, որին ուղարկել էր աղջկա անհայտացումը նկատած կոմսուհին։

Ինչպես մի լուսնոտ, որին արթնացրել էին իր քնի կեսին, նատաշան զուրս եկավ սենյակից և, խրճիթ վերադառնալով, հեկեկալով ընկավ իր անկողնու վրա։

Այդ օրվանից նուստովների հետագա ճանապարհորդության ամբողջ ընթացքում, բոլոր հանգիստներին ու գիշերելու վայրերում, նատաշան վիրավոր Բալկոնսկուց չէր հեռանում, և բժիշկն ստիպված էր խոստվանել, որ նա չէր սպասում թե մի աղջիկ ունենա այդպիսի հաստատակամություն և վիրավոր խնամելու այգիպիսի հմտություն։

Որքան էլ կոմսուհու համար սարսափելի էր թվում այն միտքը, թե իշխան Անդրեյը կարող է (ամենայն հավանականությամբ, բժշկի ասելով) մեռնել ճանապարհին՝ աղջկա ձեռների վրա, նա շկարողացավ հակառակել նատաշային։ Թեև արդեն վիրավոր իշխան Անդրեյի ու նատաշայի միջև հաստատված մերձեցման հետևանքով մտածում էին, թե ապաքինման դեպքում փեսացուի և հարսնացուի նախկին հարաբերությունները կնորոգվեն, ոչ ոք սակայն, մանավանդ նատաշան ու իշխան Անդրեյը, չէր խոսում այդ մասին։ Ոչ միայն իշխան Անդրեյի, այլև նուսաստանի զլիսին կախված կյանքի և մահու լուծված խնդիրը ծածկում էր մյուս բոլոր ենթադրությունները։

XXXIII

Սեպտեմբերի 3-ին Պիեռը զարթնեց ուշ։ Նրա գլուխը ցավում էր. զգեստները, որոնց մեջ պառկել էր առանց հանվելու, ճնշում էին մարմինը. Հոգու վրա ծանրացել էր նախօրեին կատարած ինչ-որ ամոթալի բանի գիտակցությունը. Այդ ամոթալին երեքվա զրույցն էր կապիտան Ռամբայի

Ժամկ 11-ն էր, բայց դուրսն առանձնապես մառախլապատ էր: Պիեռը վեր կացավ, աշքերը տրորեց և տեսավ կտրած ագուստով ատրճանակը, որ Գերասիմը նորից դրել էր սեղանի վրա. Պիեռը հիշեց, թե որտե՞ղ է գտնվում, և թե ի՞նչ անելիք ունի հենց այսօր:

«Արդեն չեմ ուշացել արդյոք, — մտածեց Պիեռը: — Ու նա. Հայանորեն, Մոսկվա կմտնի 12-ից ոչ շուտու»:

Պիեռն իրեն էլ թույլ չտվեց խորհրդածելու, թե ինչ անելիք ունի, բայց շտապեց շուտափուզիթ գործ տեսնել:

Հագուստը վրան ուղղելով՝ Պիեռն ատրճանակը ձեռն առավել պատրաստվեց արդեն գնալ: Բայց այստեղ առաջին անգամ միտք ծագեց նրա գլխում, թե ինչպես (ոչ ձեռին բռնած իհարկե) փողոցով տանի այդ գինքը: Անգամ լայն կաֆտանի տակ գժվար էր թաքցնել այդ մեծ ատրճանակը: Ոչ գոտու հտեւը, ոչ թևատակին չէր կարելի տեղավորել աննկատելի: Բացի զրանից, փշտովը դատարկ էր, իսկ Պիեռը դեռ չէր կարողացել լցնել: «Միւնույն է, դաշույնը կվեցցնեմ», ասավ Պիեռն իրեն, թեև նա մեկից ավելի անգամ, իր մտադրության իրագործումը քննելով, ինքն իր մեջ գնուել էր, թե ուսանողի գլխավոր սրխալը 1809 թվին եղել է այն, որ նա ցանկացել էր Նապոլեոնին սպանել դաշույնով: Բայց Պիեռի գլխավոր նպատակը կարծես լ ոյանում էր ոչ թե նրանում, որ կատարի մտադրած գործը, այլ այն բանում, որ ինքն իրեն ցուց տա թե նա չի հրաժարվում իր մտադրությունից և ամեն ինչ անում է այն իրագործելու համար. Պիեռը հապշտապ վեցրեց Սուլիարեկի աշտարակի մոտ փշտովի հնտ գնած բռութ ատամնավոր, կանաչ պատրանով դաշույնը և թաքցրեց ժիշտի տակ:

Կաֆտանը գոտեալիով և զլիարկն աշքերին իշեցնելով՝  
Պիեռը, աշխատելով շաղմկել և կապիտանին չհանդիպել, ան-  
ցավ միջանցքով ու դուրս եկավ փողոց։

Այն հրդեհը, որին նա անտարբեր նայում էր նախորդ երեսոյին, գիշերն զգալի շափով մեծացել էր: Մոսկվան այժմ վառ վում էր զանազան կողմերից: Միաժամանակ վառվում էին կառեթնի Ռյազը, Զամոսկվորեչիեն, Գոստինի Դվորը, Պուշակայան, բեռնանավերը Մոսկվա գետի վրա և փայտի շուշան՝ Դորոգոմիլովսկի կամուրջի մոտ:

Պիեռը նրբափողոցներով պիտի գուրս գար պովարսկայա փողոցը և այնտեղից Արբատ՝ Նիկոլա Յավլեննիի մոտ, ուր նա իր մտքում վաղուց որոշել էր այն տեղը, ուր կատարելու էր իր գործը: Տների մեծ մասի դարբասները փակ էին և փակափեղերը գրած: Փողոցներն ու նրբափողոցները դատարկ էին: Պիեռը այրվածքի ու ծխի հոտ էր գալիս: Երեմն պատահում էին անհանգիստ-երկշոտ դեմքերով ուսւներ և քաղաքաբնակին ոչ հատուկ ճամբարային տեսքով ֆրանսացիներ, որ քայլում էին փողոցի մեջտեղով: Թե՛ նրանք և թե՛ մյուսները զարմացած նայում էին Պիեռին: Բացի բարձր հասակից ու հաստությունից, բացի դեմքի ու կերպարանքի տարօրինակորեն մոռայլ ու տանջագին արտահայտությունից, ուսւների ուշագրությունը Պիեռը զրավում էր այն պատճառով, որ չէին հասկանում, թե ո՞ր դասին կարող է պատկանել այդ մարդը: Իսկ ֆրանսացիները զարմացած աշքերով նրան ուղեկցում էին մանավանդ նրա համար, որ Պիեռը հակառակ բոլոր մյուս ուսւների, որոնք վախեցած ու հետաքրքրությամբ էին նաև յում ֆրանսացիներին, ոչ մի ուշ չէր դարձնում իրենց վրա: Մի տան մուտքի առաջ երեք ֆրանսացի, որ ինչ-որ բան էին ասում իրենց լեզուն հասկացող ուսւներին, Պիեռին կանգնեցրին, հարցնելով, թե նա ֆրանսերեն չգիտի արդյոք:

Պիեռ գլուխը շարժեց բացասաբար ու գնաց առաջ; Սյուն  
նրբափողում նրան ձայն տվեց պահակը, որ կանգնած էր  
կանաչ արկդի մոտ, և Պիեռ միայն նրանից, որ պահակը  
կրկնեց իր աճարկու կանչը և հրացանը շրմկացրեց ձեռն առ-  
նելով, հասկացավ, որ պետք է փողոցի մյուս կողմից անցներ:  
Նա ոչինչ չէր լսում և ոչինչ չէր տեսնում իր շուրջը: Նա, ինչ-  
պես մի աճարկու և իրեն խորթ մի բան, փութաջանորեն ու  
սարսափով իր մեջ կրում էր իր մտադրությունը, վախենալով, —  
անցած գիշերվա փորձից խրատված, — թե հանկարծ մի  
կերպ չկորցնի նրան: Բայց Պիեռին վիճակված չէր իր մը-

րամադրությունն ամբողջությամբ հասցնել այն տեղը, ուր գնում էր: Բացի գրանից, եթե ոչ մի բան էլ շպատահեր նրան ճանապարհին, նրա մտադրությունը չէր կարող իրագործվել հենց այն պատճառով, որ նապոլեոնը շորս ժամ առաջ արդւն Դորոգոմիլովսկի արվարձանից Արքատով անցել էր Կրեմլ և այժմ ամենամույլ տրամադրությամբ նստած էր Կրեմլի պալատի թագավորական կարինետում և հանգամանորեն, մանրամասն կարգադրություններ էր անում այն միջոցների մասին, որ անմիջապես պիտի ձեռք առնվեին Հրդեհը հանգցենելու, կողոպուտները կանխելու և բնակիչներին հանգստացնելու համար: Բայց Պիեռն այդ զգիտեր. նա, իր անելիքով ամբողջապես կլանված, տանջվում էր, ինչպես տանջվում են համառությամբ անհնարին գործ ձեռնարկած մարդիկ, — անհնարին ոչ թե գժվարությունների պատճառով, այլ իր բնագործությանը ոչ հատուկ լինելու պատճառով, — նա տանջվում էր այն բանի սարսափից, թե նա կթուլանա վճռական վայրից նին և դրա հետեանքով կկորցնի իր նկատմամբ ունեցած հարգանքը:

Նա թեև ոչինչ չէր տեսնում ու չէր լսում իր շուրջը, բայց բնազդաբար որոշում էր ճանապարհը և չէր սխալվում նրբափողցների մեջ, որոնք տանելու էին նրան Պովարսկայա:

Որքան Պիեռն ավելի էր մոտենում Պովարսկայային՝ ծուխն այնքան ավելի ուժեղանում և ուժեղանում էր. մինչև իսկ մարդ տաքություն էր զգում հրդեհի կրակից: Երբեմն տների տանիքներից հրեղեն լեզուներ էին բարձրանում: Ավելի շատ ժողովուրդ էր պատահում փառցոցներում, և այդ ժողովուրդը շատ տագնապած էր: Բայց Պիեռը թեև զգում էր էլ, որ ինչ-որ անսովոր բան է կատարվում իր շուրջը, իրեն հաշիվ չէր տալիս այն մասին, թե հրդեհի է մոտենում: Գնալով մի շավիղով, որը տանում էր մի դատարկ, շենքեր շոնեցող տարածություն, որը մի կողմով միանում էր Պովարսկային, մյուսով իշխան Գրուգինակու տան այգիներին, Պիեռը հանկարծ հենց իր կողքին լսեց մի կնոջ հուսահատական լաց: Նա կանգ առավ, կարծես քնից արթնացած, և գլուխը բարձրացրեց:

Շավիղից հեռու, շորացած փոշոտ խոտի վրա կիտված էին տնային իրեր. փետրե ներքնակներ, ինքնաեռ, սրբապատճերներ և սնդուկներ: Սնդուկների կողքին գետնին նստել էր մի ոչ

շահել նիհար կին, երկար դուրս ցցված վերին ատամներով, ու վերաբկու հագած և շամշիկ դրած: Այդ կինը, օրորվելով ու ինչ-որ ասելով, սրտապատառ լաց էր լինում: Երկու աղջիկ, 10-ից մինչև 12 տարեկան, կարճ, կեղտոտ գետնիներ ու վերաբկուներ հագած, տարակուանքի արտահայտությունը գումատ, վախեցած դեմքերին, նայում էին իրենց մորք: Փոքրիկ յոթ տարեկան տղան, կապա հագած և ուրիշի ահագին գլխարկը դրած, լաց էր լինում պառավ դայակի ձեռների վրա: Բորիկ, դրած, կունք էր լինում պառավ դայակի վրա և, սպիտակավուն կեղտոտ մի աղջիկ նստել էր սնդուկի վրա և, սպիտակավուն մազերն արձակած, պղկում էր վառված մազերը, դրանցից հոտ քաշելով: Կնոջ ամուսինը, ոչ բարձրահասակ կորամեջք մի մարդ՝ վիցմունդիրը հագին, անվածն այտամորուսներով, և հարթ քունքերով, որոնք երեսում էին ուղիղ դրած կարտուզի տակից, անշարժ դեմքով իրար վրա դրած սնդուկները հեռացնում էր միմյանցից և նրանց տակից ինչ-որ գետնիներ էր հանում:

Կինը գրեթե ընկավ Պիեռի ստները, երբ նրան տեսավ:

— Հարազատ եղբայրներ, ուղղափառ քրիստոնյաներ, — Քիրկեցիք, օգնեցիք, սիրելիս.... ո'վ էլ լինեք՝ օգնեցիք, — ասավ նա հեկեկալով: — Աղջկա՞ս... աղջկա՞ս... փոքր աղջկաս թողել ենք.... Այրվեց, Օո՞ո: Դրա համար ես քեզ... Օո՞ո... թողել ենք.... Այրվեց,

— Հերիփէ է, Մարիա նիկոլաևնա, — կամացուկ ձայնով ասավ մարդը կնոջը, ըստ երեսութին միայն նրա համար, որպես պեսդի արդարանա կողմնակի մարդու առաջ: — Երկի, քույրիկը տարել է, թե չէ ուրիշ էլ ո՞ւր պիտի լինի, — ավելացրեց նա:

— Քա՞ր, շարագո՞րծ, — զայրացած բոռաց կինը, հանկարծ լացն ընդհատելով: — Դու սիրտ շունես, երեխայիդ շես խոճում: Մի ուրիշը լիներ՝ կրակից հաներ: Իսկ սա քարե արձան է, ոչ թե մարդ, ոչ թե հայր: Դուք ազնիվ մարդ եք, — արագախսոսությամբ, հեկեկալով դիմեց կինը Պիեռին: — Մեր կողքի տունը վառվեց, հետո կրակը նետվեց մեր կողմը: Աղկողքի մասունք վառվեց, հավաքաբել: Ինչպես շիկս գոռաց. «վառվում է»: Սկսեցինք հավաքաբել: Ինչպես կայինք, ինչ ունեինք հագներիս — էնպես էլ դուրս վազեցինք... Ա՛յ ինչ ենք վերցրել... Աստծու օրհնությունը և բաժինքիս անկողինը, իսկ ամբողջ մնացածը կորավ... Երեխաներս վերի կատարիկան շկա: Օո՞ո: Օ՛, տեր աստված... — և նա բի, կատարիկան շկա: Օո՞ո: Օ՛, տեր աստված... — և նա նորից հեկեկաց: — Իմ սիրուն մանկիկ, այրվեց, այրվեց:

— Բայց որտե՞ղ, որտե՞ղ է նա մնացել, — ասավ Պիեռը  
Պիեռի կենդանացած դեմքի արտահայտությունից կինը  
հասկացավ, որ այդ մարդը կարող է իրեն օգնել:

— Ի սեր աստծո, եղբայր, — ճշաց նա, Պիեռի ոտները  
բռնելով: — Բարեհարս, գոնք սիրու հանգստացրու... Անիսկա,  
արի, անպիտան, առաջնորդիր, — ձայն տվեց նա աղջկան,  
բարկությամբ բերանը բանալով և այդ շարժումով իր երկար  
ատամներն ավելի ցույց տալով:

— Տար, տար ցույց տուր, ես... ես... կանեմ, — շնչա-  
սպառ ձայնով արագությամբ ասավ Պիեռը:

Կեղտուտ աղջիկը դուրս եկավ մնդուկի ետևից, մազերը  
հավաքեց և, հոգոց քաշելով, բութ, բորիկ ոտներով առաջ  
ընկավ գնաց շավլով: Պիեռը հանկարծ կարծես սթափվեց ծանր  
ուշաթափությունից հետո: Նա գլուխն ալիևի բարձրացրեց,  
աշքեղը փայլեցին կյանքի փայլով, և նա արագ բայլերով գնաց  
աղջկա ետևից, նրանից առաջ անցավ ու դուրս եկավ Պովար-  
սկայա: Ամբողջ փողոցը ծածկված էր սև ծխի ամպով: Տեղ-տեղ  
այդ ամպից դուրս էին գալիս բոցել լեզուները: Ժողովուրդն  
ահագին բազմությամբ խմբվել էր հրդեհի առաջ: Փողոցի  
մեջտեղը կանգնել էր մի ֆրանսացի գեներալ և ինչ-որ բան էր  
ասում իրեն շրջապատողներին: Պիեռն, աղջկա ուղեկցությամբ,  
մոտենում էր արդեն այն տեղին, ուր կանգնած էր գեներալը,  
բայց ֆրանսական զինվորները կանգնեցրին նրան:

— On ne passe pas!<sup>1</sup> — գոչեց մի ձայն:

— Դե՛սն արի, քեռի, — կանչեց աղջիկը, — մենք նեղ փո-  
ղոցով՝ նիկուլիների բակով կանցնենք:

Պիեռը ետ դարձավ և գնաց, երեմն ցատկելով, որ հասնի  
աղջկա ետևից: Աղջիկը վագեկավ անցավ փողոցը, թերվեց ձախ՝  
նրափողոցը ու, երեք տուն անցնելով, գնաց դեպի աղ՝ մի  
դարրաս:

— Ա՛յ հրես այստեղ է, — ասավ աղջիկը:

Եվ, բակով վագելով, նա բաց արավ տաշած տախտակե  
ցանկապատի դոնակը և, կանգ առնելով, Պիեռին ցույց տվեց մի  
փոքրիկ փայտաշեն թևակ, որ բռնկված վառվում էր, զերմու-  
թյուն ու լույս տարածելով: Նրա մի կողմը քանդվել էր, մյուսը

վառվում էր, և պայծառ բոցը դուրս էր գալիս լուսամուտներից  
ու տանիքի տակից:

Պիեռից ներս մտնելով՝ Պիեռի երեսովը տաքություն դի-  
պավ, և նա ակամա կանգ առավ:

— Ո՞րն է, ո՞րն է ձեր տունը, — հարցրեց նա:

— Օոո՞հ, — բղավելով լաց եղավ աղջիկը, թեակը ցույց  
տալով: — Հենց դա է, դա էր մեր բնակարանը: Այրվեցիր,  
մեր անգին: Կատիչա, իմ աննման օրիորդ, օ՞՞հ, — կոծում էր  
Անիսկան հրդեհի առաջ, անհրաժեշտություն գգալով արտահայ-  
տել և իր զգացումները:

Պիեռը գնաց դեպի թեակը, բայց կրակի տաքությունն այն-  
քան ուժեղ էր, որ նա ակամա մի աղեղնաձև պտույտ գործեց և  
դուրս եկավ մի մեծ տան մոտ, որը վառվում էր գեռ միայն մի  
կողմից՝ տանիքից, և տան շուրջը վխտում էր ֆրանսացիների  
մի բազմություն: Պիեռն սկզբում շասկացավ, թե ինչ էին  
անում այդ ֆրանսացիները, որոնք ինչ-որ բան էին տանում.  
բայց իր առջև տեսնելով մի ֆրանսացի, որը բութ կարճ թրով  
խիում էր մի գյուղացու, խլելով նրանից աղվեսի մորթուց  
մուշտակը, Պիեռն աղոտ կերպով հասկացավ, որ այստեղ  
կողոպտում են, բայց նա ժամանակ շունեցավ այդ մտքի վրա  
կանգ առնելու:

Քանդվող պատերի ու առաստաղի ճռնշունն ու դղրդյունը,  
բոցերի սուլոցն ու ֆշշոցը և բազմության եռանդուն աղաղակ-  
ների ձայնը երերվող, մերթ մթագնող թանձր սև, մերթ վեր  
մազլցող լուսավորվող ծխի ամպերը, իրենց փայլատակող  
կայծերով, որ մի տեղ առատ էին, խրճանման, կարմիր, մի այլ  
տեղ ուկե թեփուկներով, որ անցնում էին բոցեղեն պատերի  
վրայով, տաքության, ծխի և շարժման արագության զգա-  
ցումը — Պիեռի վրա ունեցան հրդեհների սովորական գրգոիչ  
աղդեցությունը: Այդ աղդեցությունը Պիեռի վրա առանձնապես  
ուժեղ էր այն պատճառով, որ Պիեռը հանկարծ, ի տես ա; Դ  
հրդեհի, ազատ զգաց իրեն ճնշող մտքերից: Նա իրեն զգաց  
շահել, ուրախ, ճարպիկ ու վճռական: Նա տան կողմից անցավ  
թեակը և արդեն ուղում էր անցնել նրա այն մասը, որ գեռ  
կանգուն էր, երբ ուղիղ նրա գլխավերն լսվեցին մի քանի մարդ-  
կանց աղաղակներ և դրա ետևից՝ իր մոտ ընկած մի ինչ-որ  
ծանր բանի թրխկոց ու զրնդոց:

<sup>1</sup> Այստեղ անցնելու տեղ չի:

Պիեռը ետ նայեց և տան լուսամուտներում տեսավ ֆրանսացիներ, որ մետաղի ինչ-որ իրերով լի մի արկդ էին նետել։ Մյուս ֆրանսացի զինվորները, որ կանգնած էին ներքե, մոտեցան արկդին։

— Eh bien, qu'est-ce qu'il veut celui-là<sup>1</sup>, — բզավեց ֆրանսացիներից մեկը Պիեռի վրա։

— Un enfant dans cette maison. N'avez-vous pas vu un enfant?<sup>2</sup>, — ասավ Պիեռը։

— Tiens, qu'est-ce qu'il chante celui-là? Va te promener<sup>3</sup>, — լսվեցին ձայներ, և զինվորներից մեկը, ըստ երեսութիւն, վախենալով, որ Պիեռը կարող է խլել իրենց արծաթն ու բըրոնզը, որ գտնվում էին արկդում, սպառնալից գնաց դեպի նա։

— Un enfant? — կանչեց վերևից մի ֆրանսացի, — j'ai entendu piailler quelque chose au jardin. Peut-être c'est son moutard au bonhomme. Faut être humain, voyez-vous...<sup>4</sup>

— Ou est-il? Où est il?<sup>5</sup> — հարցրեց Պիեռը։

— Par icil par icil<sup>6</sup> — ձայն տվեց նրան ֆրանսացին լուսամուտից, տան ետևի պարտեզը ցույց տալով։ — Attendez, je vais descendre<sup>7</sup>.

Եվ, իսկապես, մի բոպեից հետո ֆրանսացին, սևաշ մի երիտասարդ՝ այտի վրա ինչ-որ մի բիծ, միայն շապկանց, դուրս թռավ ներքին հարկի լուսամուտից և, Պիեռի թիկունքին լսկելով, վազեց նրա հետ պարտեզ։

— Dépêchez-vous, vous autres, — ձայն տվեց նա իր ընկերներին, — commence à faire chaud<sup>8</sup>.

Տնից դուրս վազելով ավագ ցանած ճանապարհի վրա, ֆրանսացին թափ տվեց Պիեռի թեւ և ցույց տվեց շրջանը։

1 Սա ի՞նչ է ուզում։

2 Այս տանը երեխա է մնացել։ Ձե՞ք տեսել արդյոք երեխային։

3 Դա ի՞նչ է խոսում, կորիր, հեռացիր։

4 Երեխա։ Ես լսեցի, որ ինչ-որ բան նվում էր պարտեզում։ Գուցե երիտասարդն իր երեխային է որոնում։ Պետք է մարդկային վերաբերմունք։

5 Ո՞ւր է նա։ Ո՞ւր է նա։

6 Այստե՛ղ։ Այստե՛ղ։

7 Սպասեցիք, ես հիմա կզամ։

8 Է՛, դուք, շտապեցիք, տարանում է։

Նստարանի տակ պառկած էր երեք տարեկան մի աղջիկ՝ վարդագույն զգեստով։

— Voilà votre moutard. Ah, une petite, tant mieux, — ասավ ֆրանսացին։ — Au revoir mon gros. Faut être humain. Nous sommes tous mortels, voyez-vous<sup>1</sup>, — և այտի վրա բիծ ունեցող ֆրանսացին վազեց ետ՝ իր ընկերների մոտ։

Պիեռն ուրախությունից շնչառառ լինելով, վազեց դեպի աղջիկը և ուզեց իր ձեռների վրա առնել նրան։ Բայց, օտար մարդ տեսնելով, այդ գեղձախտավոր-հիվանդու, մորը նըմանող, անդուրեկան տեսքով աղջիկը ճշաց ու սկսեց փախչել։ Պիեռը սակայն, բռնեց նրան և բարձրացրեց ձեռների վրա. նա ճղճաց հուսահատ-կատաղի ձայնով և իր փոքրիկ թաթիկներով սկսեց պոկել իրենից Պիեռի ձեռները և փսլնքու բերանով կծել։ Պիեռին համակեց սարսափի և նողկանքի մի զգացում, նման այն զգացումին, որ զգում էր նա՝ որևէ փոքրիկ կենդանու զիացիլիս։ Բայց նա ճիգ գործ դրեց, որ երեխային շցի և նրա հետ վազեց ետ՝ դեպի մեծ տունը։ Բայց այլևս չէր կարելի նույն ճանապարհով ետ գնալ. Անիսկան արդեն չկար, և Պիեռը խլճահարության ու զզվանքի զգացումով որքան կարելի է մեղմ սեղմելով կրծքին այդ տառապագին հեկելող ու թաց աղջկան, պարտեզի միջով վազեց ուրիշ ելք որոնելու։

## XXXIV

Երբ Պիեռը, բակեր ու նրբափողոցներ անցնելով, իր բեռով դուրս եկավ ետ՝ դեպի Գրուզինսկու պարտեզը՝ Պովարսկայայի անկյունում, նա առաջին վայրկյանին շճանաշեց այն տեղը, որտեղից գնացել էր երեխային փնտրելու. այնպես էր այդ տեղը լիցված ժողովրդով և տներից դուրս բերված իրերով։ Բացի ուսւ ընտանիքներից, որ իրենց իրերով փրկվել-ապաստանել էին այստեղ, այդտեղ կային և մի քանի ֆրանսացի զինվորներ տարրեր հագուստներով։ Պիեռն ուշ շդարձրեց նրանց վրա։ Նա շտապում էր գտնել աստիճանավորի ընտանիքը, որպեսզի աղջիկը մորը հանձնի և գնա նորից որևէ մեկին փրկելու։ Պիեռին

1 Ահա ձեր տղան։ Ա՞, աղջիկ է, ավելի լավ։ Ցտեսություն։ Պետք է մարդագյուղին վերաբերմունք։ Զէ որ մենք բոլորս մահկանացու ենք։

թվում էր, թե ինքը դեռ ինչ-որ շատ բան ու շուտ պետք է անի; Կրակի շերմությունից և վազգվելուց տաքանալով, Պիեսն այդ րոպեին էլ ավելի խորն էր ապրում երիտասարդության, աշխառոյժի և վճռականության զգացումը, որ համակել էր նրան այն ժամանակ, երբ նա վազում էր երեխային փրկելու։ Փոքրիկ աղջկը հանգստացել էր այժմ և, թաթիկներով Պիեսի կաֆտանը բռնած, նստել էր նրա թեկին ու, ինչպես վայրի մի գազանիկ, շուրջն էր նայում։ Պիեսը երբեմն նայում էր նրան և թեթեակի ժպտում։ Նրան թվում էր, թե ինչ-որ հուզիշ-անմեղ բան կա այդ վախեցած ու հիվանդագին փոքրիկ դեմքի վրա։

Առաջական աստիճանավոր կար այլևս, ոչ կինը, Պիեսն արագ քալերով անցավ ժողովրդի միջով, նայելով իրեն հանդիպող բոլոր դեմքերին։ Նա ակամա նկատեց վրացական թե հայկական մի ընտանիք, որը կազմված էր մի գեղեցիկ, արեւլյան տիպի դեմք ունեցող շատ ծեր մարդուց, որը հագել էր նոր երես քաշած մուշտակ ու նոր կոշիկներ, նույն տիպի մի պառավից և մի շահել կնոջից։ Այդ շատ շահել կինը Պիեսին թվաց արեւլյան գեղեցկության կատարելատիպ՝ իր որոշակի, աղեղածե գծված, սև հոնքերով և երկար, անսովոր քնքուշ-կարմիր ու սիրուն դեմքով՝ առանց որևէ արտահայտության։ Թափթփած իրեղենների մեջ, բազմության շրջապատում, հրապարակում այդ շահել կինն իր հարուստ ատլասե վերարկուով և վառ-մանիշակագույն գլխաշորով հիշեց-նում էր ձյունի երեսը նետված զերմոցի մի քնքուշ բույս։ Նա նստել էր կապոցների վրա, պառավից մի քիչ ետ և անշարժ-խոշոր, սև, երկար թարթիչներ ունեցող երկարավուն աշքերով նայում էր գետնին։ Հավանորեն նա գիտեր իր գեղեցկությունը և վախենում էր նրա համար։ Այդ գեմքը Պիեսին զարմացրեց, և նա, իր շտապողականության մեջ, ցանկապատի երկարությամբ անցնելիս, մի քանի անգամ ետ նայեց նրան։ Հասնելով պարսպին և այնուամենայինիվ շգտնելով նրանց, ում փնտրում էր, Պիեսը կանգ առավ շուրջը նայելով։

Երեխան գրկած Պիեսի կերպարանքն այժմ ավելի և աշքի էր ընկնում, քան առաջ, և նրա շուրջը հավաքվեցին մի քանի սուսներ՝ տղամարդիկ ու կանայք։

— Ով գիտի մարդ ես կորցրե՞լ, բարեկամ։ Դուք ազնվականներից եք, ինչ Ո՞ւմ երեխան է, — հարցնում էին նրան։

Պիեսը պատասխանեց, թե երեխան պատկանում էր սև վերարկու հագած կնոջը, որը երեխաներով նստած էր այստեղ, և հարցրեց, թե արդյոք մեկը չի ճանաշում նրան, և ո՞ւր է գնացել նա։

— Դա, երեկի, Անֆերովներն են, — ասավ ծեր սարկավագը, դիմելով ծաղկատար դեմքով կնոջը, — ողորմյա տեր, ողորմյա տեր, — ավելացրեց նա սովորական թավ ձայնով։

— Անֆերովները որտե՞ղ են, — ասավ կինը, — Անֆերովները դեռ առավոտից գնացել են։ Իսկ սա կա'մ Մարիա Նիկոլականայի երեխան է, կա'մ իվանովների։

— Նա ասում է՝ կին, իսկ Մարիա Նիկոլական՝ տիրուհի է, — ասավ տան ծառայողը։

— Գիտեք, դա ատամները երկար մի կին է, նիհար, — ասավ Պիեսը։

— Հենց Մարիա Նիկոլական է։ Նրանք գնացին ալգին, հենց որ էդ գայլերը վրա տվին, — ասավ կինը, ֆրանսացի գինվորներին ցույց տալով։

— Օ, տե՛ր, ողորմի՛ր, — կրկնեց նորից սարկավագը։

— Դուք անցեք ա՛յ էն կողմը, նրանք էնտեղ են։ Զեր ասած կինն ինքն է։ Շարունակ իրեն ուտում էր, լաց լինում, — ասավ նորից կինը։ Նա ինքն է որ կա։ Այ էս կողմը։

Բայց Պիեսը չէր լսում այդ կնոջը։ Նա մի քանի վայրկյան արդեն, աշք չենացնելով, նայում էր ի՞նչ է կատարվում մի քանի քայլ իրենից դենք։ Նա նայում էր հայ ընտանիքին և երկու ֆրանսացի զինվորների, որ մոտեցել էին հայերին։ Այդ զինվորներից մեկը, մի փոքրիկ արագաշարժ մարդ, հագլ էր կապույտ շինել և գոտեպնդվել պարանով։ Նրա զլիմինը Պիեսը գրիգ կապուտ էր, իսկ ոտները բորիկ էին։ Մյուսը, որ ավելի զարմացրեց Պիեսին, երկարահասակ, կուցած, խարտյաշ, նիհար մարդ էր՝ գանդաղ շարժումներով և դեմքի ապուշ արտահայտությանը։ Դրա հագինը ֆրիզ կապուտ էր, կապույտ շալվար և մեծ սատրոտված բոտֆորտներ։ Փոքրիկ, անկոշիկ, կապույտ շինելով ֆրանսացին, հայերին մոտենալով, իսկույն ևեթ, ինչ-որ բան ասելով, բռնեց ծերունու ոտները, և ծերունին իսկույն ևեթ աճապարանքով սկսեց կոշիկները հանել։ Մյուսը, կապուտ հագած զինվորը, կանգ առավ գեղեցկուհի հայուհու դիմուց և անխոս, անշարժ, ձեռները գրպանը դրած նայեց նրան։

— Ա՛ռ, ա՛ռ երեխան, — ասավ Պիեռը, փոքրիկ աղջկանը տալով և հրամայաբար ու շտապ զիմելով կնոջը: — Դու տար իրենց տուր, տա՛ր, — գրեթե բոռաց նա կնոջ վրա, գրկի ճրշացող աղջկան դնելով գետնին, և նորից նայեց ֆրանսացիներին և հայ ընտանիքին:

Ծերունին արդեն մնացել էր բորիկ նստած: Փոքրիկ ֆրանսացին հանեց նրա վերջին կոշիկը և կոշիկներն իրար խփեց: Ծերունին, հեկեկալով, ինչ-որ բան էր ասում, բայց Պիեռը միայն անցողակի էր տեսնում այդ. նրա ուշն ու միտքը ամբողջովին կապու հագած ֆրանսացու վրա էր, որն այդ ժամանակ, գենգազ երերալով, մոտեցավ շահել կնոջը, և ձեռները գրաններից հանելով, բռնեց նրա վիզը:

Գեղեցկուհի-հայուհին շարունակում էր մնալ նույն անշարժ դիրքով՝ երկար թարթիշները խոնարհած և կարծես չլու տեսնում ու շէր զգում այն, ինչ անում էր զինվորն իր հետ:

Մինչև Պիեռը վազելով կաներ այն մի քանի քայլը, որոնք իրեն բաժանում էին ֆրանսացիներից, կապու հագած երկար մարդոյորը պոկում էր արդեն հայուհու վզի մանյակը, և շահել կինը, ձեռներով վիզը բռնած, ճշաց ծղրտուն ձայնով:

— Laissez cette femme!<sup>1</sup> — մոնշաց Պիեռը կատաղի ձայնով, բռնելով երկարահասակ կորամեջք զինվորի ուսերից ու նետելով նրան:

Զինվորն ընկավ, վեր կացավ ու փախավ հեռու: Բայց նրա ընկերը, կոշիկները շպրտելով, կարճ թուրը հանեց և սպառնամբ գնաց դեպի Պիեռը:

— Voyons, pas de bêtises!<sup>2</sup> — բղավեց նա:

Պիեռը կատաղության այն բռնկման մեջ էր, երբ էլ ոչինչ շէր հիշում, երբ իր ուժերը տասնապատկվել էին: Նա հարձակվեց բորիկ ֆրանսացու վրա և մինչև նա իր թուրը կհաներ, արդեն գետին տապալեց նրան և սկսեց բռնցքահարել: Լսվեցին շրջապատող բազմության հավանություն տվող բացականչությունները, և նույն այդ ժամանակ, անկյունից երեաց ֆրանսական ուլանների հեծելադեսը (բազեզ): Ուլանները վարդելով մոտեցան Պիեռին ու ֆրանսացիներին և շրջապատեցին

նրանց: Պիեռն էլ ոչինչ շէր հիշում, թե ինչ եղավ այնուհետեւ նա հիշում էր, որ ինքը խփում էին և իրեն, և որ վերջն զգաց, որ իր ձեռները կապված են, որ ֆրանսական զինվորների բազմությունը շրջապատել է իրեն և խուզարկում են իր զգեստները:

— Il a un poignard, lieutenant<sup>1</sup>, — սրանք առաջին խոսքերն էին, որ հասկացավ Պիեռը:

— Ah, une arme!<sup>2</sup> — ասավ սպան և դարձավ բորիկ զինվորին, որին տարան Պիեռի հետ միասին: — C'est bon, vous direz tout cela au conseil de guerre<sup>3</sup>, — ասավ սպան: Եվ անմիշապես դարձավ Պիեռին. — Parlez-vous français, vous?<sup>4</sup>

Պիեռն արյունակալած աշբերով շուրջը նայեց և շպատասխանեց: Նրա գեմքը հավանորեն շատ սարսափելի թվաց, որովհետև սպան ինչ-որ բան ասավ շշուկով, և շորս ուլան դարձալու բաժանվեցին խմբից և բռնեցին Պիեռի երկու կողմը:

— Parlez-vous français? — կրկնեց իր հարցը սպան, իրեն հեռու պահելով նրանից: — Faites venir l'interprète<sup>5</sup>.

Շարքերից գուրս եկավ մի փոքրիկ մարդուկ՝ ուսւ բազացու շորերով: Պիեռը նրա հագուստից և խոսելու եղանակից անմիշապես ճանաչեց Սոսկվայի մի խանութի ֆրանսացու:

— Il n'a pas l'air d'un homme du peuple<sup>6</sup>, — ասավ թարգմանը, Պիեռին նայելով:

— Oh, oh! ça m'a bien l'air d'un des incendiaires, — ասաց սպան: — Demandez-lui ce qu'il est?<sup>7</sup>, — ավելացրեց սպան:

— Դու ո՞վ ես, — հարցրեց թարգմանը: — Դու պետք է պատասխանես իշխանության, — ասավ նա:

— Je ne vous dirai pas qui je suis. Je suis votre prisonnier. Emmenez-moi!<sup>8</sup>, — հանկարծ ֆրանսերեն ասավ Պիեռը:

<sup>1</sup> Սա դաշույն ոմնի, լեյտենանտ:

<sup>2</sup> Ա՛, զենք:

<sup>3</sup> Էավ, դուք այդ բոլորը կասեք ուազմական դատարանում:

<sup>4</sup> Դուք խոսո՞ւմ եք ֆրանսերեն:

<sup>5</sup> Կանելեցեք թարգմանին:

<sup>6</sup> Սա ժողովրդից գուրս եկած մարզու նման չի:

<sup>7</sup> Օ՛, օ՛, զա շատ նման է հրձիգի: Պրան հարցրեք, թե ո՞վ է իւրը:

<sup>8</sup> Ես ձեզ չեմ ասի, թե ո՞վ եմ: Իսկ զերին եմ: Տարեք ինձ:

— Ah! Ah! — խոսեց սպան, հոնքերը կիտելով — Մարչոնս!<sup>1</sup>

Ուշանների շուրջը բազմություն հավաքվեց: Պիեռին ամենից ավելի մոտիկ կանգնած էր ծաղկատար դեմքով կինը՝ աղջիկը գրկին. երբ ձիավոր շրջիկ խումբը շարժվեց, կինն առաջ եկավ:

— Էդ քեզ ո՞ւր են տանում, սիրելիս, — ասավ նա: — Իսկ էս աղջկանը, աղջկանն ո՞ւր տանեմ, եթե նրանցը Ահնի, — ասավ կինը:

— Qu'est-ce qu'elle veut, cette femme?<sup>2</sup> — Հարցրեց սպան:

Պիեռը հարբածի պես էր: Պիեռն ավելի ևս հուզվեց, իր փրկած աղջկանը նկատելով:


— Ce qu'elle dit? — ասավ նա: — Elle m'apporte ma fille que je viens de sauver des flammes<sup>3</sup>, — խոսեց նա: — Մնաս բարով, — և նա, ինքն էլ շիմանալով, ինչպես դուրս եկավ իր բերանից այդ աննպատակ սուտը, վճռական, հանդիսավոր քայլերով անցավ ֆրանսացիների միջով:

Ֆրանսական այդ հեծելադետը մեկն էր նրանցից, որոնք դյուրոնելի կարգադրությամբ ուղարկված էին Սոսկվայի զանազան փողոցները՝ կողոպուտների (մարողյորության) առաջն առնելու համար և մանավանդ հրձիգներին բռնելու, որոնք, ֆրանսական բարձր պաշտոնեության այդ օրը հայտնած քննհանուր կարծիքով, հրդիհների պատճառն էին: Մի քանի փողոց անցնելով՝ հեծելադետ խումբը բռնեց դարձյալ հինգ կասկածելի ոռւսների, — մի խանութպան, երկու սեմինարիստ (հոգեոր դպրոցի սաներ), մի գյուղացի և մի տանու ծառա, — և մի քանի մարողյոր: Բայց կասկածելի բոլոր մարդկանցից ամենից ավելի կասկածելի էր թվում Պիեռը: Երբ դրանց բռնորդին գիշերելու բերին ջուրովսկի Վալի մոտ գտնվող մեծ տունը, ուր հարմարեցված էր կալանատունը, ապա Պիեռին խիստ հսկողության տակ տեղավորեցին առանձին:

<sup>1</sup> Գնանք:

<sup>2</sup> Ի՞նչ է ուզում գա, այդ կինը:

<sup>3</sup> Ի՞նչ է ասում: Նա բերում է իմ իմ աղջկան, որին ես քիչ առաջ ազատեած կրակից:



## Ա Ռ Ա Զ Ի Ն Ս Ա Ս

### I

Էջ 5. Կանքինենալ օփառեմ: Անգլիայի գեմ մզած իր պայքարի միջոցներից յեկը Նապոլեոնը դարձրեց ան, որ 1806թ. դեկտեմբերի Ֆրանսիայում արգեւեց ամեն տեսակի առևտուր Անգլիայի հատ: Նապոլեոնը միաժամանակ ստիպում էր իր բոլոր դաշնակիցներին հետևել այդ սիստեմին:

Էջ 6. Թագուտ: Այսպես էին կոչվում աշխարհիկ ժողովներն առանց ճաշի ու պարերի:

Էջ 6. Թալիերան — որպես ճարպիկ ու խորամանկ դիվանագետ, ոչ պահապանի ֆրանսիական քաղաքական գործիչ Նապոլեոնի բարձրացման շոշանում Թալիերանը դարձավ նրա մինիստրը և նրա վստահությունը վայեցանում էր մինչև 1809թ.: Ռուսաստանի գեմ մզած պայքարի ժամանակ նա աշխած էր, բայց Բուրբոնների օրոք նորից շատ աղդեցիկ դարձավ նկրոպայում:

### III

Էջ 16. Ռուսական երե՞ւ բանակները: Դրանք էին՝ 1-ին արևմտյան բանակը Թարկայ-Ղե-Տուլիի հրամանատարությամբ, 2-ը՝ Բագրատիոնի հրամանատարությամբ և 3-ը՝ պահեստի բանակը (գեն. Տորմանյան):

### IV

Էջ 21. Բալաշիկ ուղևորությունը Նապոլեոնի մոտ՝ իր հիմնական գծերով շարադրված է ըստ Միխայանիկու և Թիեռի:

Էջ 23. Մյոււատի բնութագիրը և Բալաշիկ ընդունելությունը նրա կողմից տրված են մի բանի աղբյուրների հիման վրա. պատմելու լնդհանուր եղածաւ իր սեղմ կերպով ուրվածված է Թիեռի կողմից, բայց ծոլսոյն ուժեղացրել է Մյոււատի բնավորության կոմիկական գծերը:

### V

Էջ 29. Մամելյուկ թասան: Մամելյուկները եղել են Բուրբա-հղիպատական հեծելազորը. XVIII դարի վերջերին նրանք տիրեցին Եգիպտոսը:

### X—XI

Էջ 61. Մազմական խօրհղակցությունը: Դրիմսայի ճամբարի բնականությունը, Պֆուլի բնութագիրը, Աւեսանգրին ուղղված թախանձան-

ներո՞ւ բանակից հեռանալու վերաբերյալ, — այդ գլուխներում նկարագրված այս շատ մանրամասնությունները տալու համար Տոլստոյը, բացի Միհու Դամիկակու աշխատությունից օգտվել է Երմոլովի հիշատակարանից և այլ աղբյուրներից:

## XVIII

Էջ 97. Կառավարիչ Սինոյ: Բարձրաստիճան հոգնորականներից կազմված հաստատություն, որը տնօրինում էր նկեղեցական վարչության գործերը:

## XIX

Էջ 101. Պիեռի նաշվումներն ըստ Հայտնության (Հովհաննես) բնորոշ են յասոնության համար, որը հաճախ նշանակություն էր տալիս թվերի ժիորժը ըրդավոր զուգալիպմանը. ամբողջ արարողության մեջ 3 և 7 թվանշանները հատուկ իմաստ ունեին: Նապոլեոնի վերաբերմամբ Հայոնությունը կիրառելու և նրան որպես նեռ ճանաչելու փորձեր եղել են դեռ 1809 թվին: Այդպիսի մի փորձի մասին պատմվում է Ս. Գլինկայի հիշատակարանում:

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

### I

Էջ 128. Այդ ամբողջ գլուխը նվիրված է պատերազմի ընթացքի ընդհանուր տեսությանը:

### IV

Էջ 154. «Ձեմսկի».— ճորտատիրության ժամանակ այդպես կուվում էր կարվածատիրական գրասենյակի ավագ գրագիրը:

Էջ 150. «Մատվեյ Իվանիչ Պլատով»— կազակ զորքի ատամանը, որը շատ ժողովրդական անձնավորություն էր (մանավանդ 12 թվի պատերազմից հետո), որի անվան ու գործունեության շուրջը հյուսվել էին մի շարք զրուցներ:

Էջ 151. Ռմոլենսկի ոմքակածման մանրամասնությունները շատ ճշտությամբ համաձայնեցված են ուղղական պատմագիրների պատմության հետ:

### VI

Էջ 169. «Կարեմատական» ինչպես մի օրիուրդ, որի նամար եթե կարգային ժակօնդրությունների բաց, անվայել բովանդակություն ունեցող և ոտանակորի ձևով գրված հերթափակ անունն է:

## VIII

Էջ 176. «Լարվածահար ծեր իշխան երեխ շաբար պառկած էր Բողությառվոյսում: Դա, թվում է, միակ գեպքն է վեպում, երբ Տոլստոյը սիսա, է հաշվում ժամանակը: Օգոստոսի 5-ին Սմոլենսկը մըրակութելու օրը նա զեռ առողջ էր, հետագա շարադրանքից երեսում է, որ նա մեռավ օւսուսուսի 15-ին: Հետեաբար, նա կարող էր պարակիչով հիվանդ պառկել միայն մի քանի սր, մեկ շաբաթից ոչ ավելի:

## XV

Էջ 216. «Ենիսիովի պարտիզանական պատերազմի ծրագիրը:— Դ Դավիդովը՝ «Պարտիզանական գործողությունների օրագրում» պատմում էր, որ նա իր պլանն առաջարկել է Բարկլային, բայց վերջինս անհետանք է թողել, իսկ շուրջ օգոստոսի 20-ին դիմել է Բագրատիոնին, որը համակրելով այդ գաղափարին, զեկուցել է Կուտուզովին, որը և Դավիդովին թուլլ է տվել պարտիզանական գործողություններ սկսել 13-ի հուսարներից ու կազակներից բաղացած մի խմբով: Այդ արքեն Բորոդինոյի տակ էր. և Դավիդովը միան գոստոսի 26-ի ճակատամարտից հետո սկսեց պարտիզանական գործողությունները:»

## XVII

Էջ 227. «Եաւրօնի նավակը»: Հին հունական ավանդության համաձայն հարոնն ստորեկրյա աշխարհում Ստիքս գետից անց էր կացնում մեռելների ուղղականներին:

## XIX

Էջ 237. Ամբողջ գլուխը նվիրված է Բորոդինոյի դիրքերի քննադատությանը, որ արված է Տոլստոյի պատմական թեորիայի հիմնական գաղափարի առնչությամբ: Գործի այդ կողմը թողնելով առանց մեկնարանման՝ նկատի առնելով նրա հատուկ բնույթը, նշենք, որ Տոլստոյը ձեռնարկելով Բորոդինոյի ճակատամարտի նկարագրությանն ու շարադրմանը, շի սահմանափակվել պատմական աշխատություններ կարգալով և բարտեղներ ու ծրագրեր ուսումնասիրելով, այլ անհրաժեշտ է համարել անձամբ տեսնել ճակատամարտի վայրը: 1867 թ. նա գնացել էր Բորոդինո, երկու օր մնացել էր այնտեղ, դիմել էր վայրը և փորձել էր (առանց հաջողության) գտնել ճակատամարտի ծերունի ականատեսներին: Նա անձամբ գծել է նաև ճակատամարտի զաշտի հատակագիծը և կցել վեպին:

## XXI

Էջ 249. Բօրօդինոյի գիրքի ընդհանուր տեսքը, որ դիտում էր Պիեռ Բնարկե Տոլստոյը կարող էր նկարագրել միայն անձամբ տեսնելուց հետո,

բայց, անկասկած, այստեղ նրան օգնել է Ռադյոֆիկու հիշատակարանը, ուստեղ ականատեսն ու ճակատամարտի մասնակիցը հակատամարտի միքանի որ առաջ դիմում է դիրքերը բարձր տեղից և նշում ուսւ զորքերի տեղափոխման դիրքերը:

### XXIII

Էջ 253. Պիեռի դերը, որն առաջին անդամ էր ընկել պատերազմական միջավայրը, որն ամեն ինչով հետաքրքր վում էր և ոչնչ չեր հասկանում, անվեհեր ու նախկի ինչպիս երեխա, Տոլստոյը վերցրել է Պ. Ա. Վլազեմսկու հիշատակարանից, որը թորողինո էր ընկել մոտավորապես այդպիսի դրությամբ և նկարագրել էր այն:

### XXVI

Էջ 275. Հուլիսի 2-ին Խսպանիայի Սալամանկա քաղաքի մոտ մարդակ Մարմոնց մի լուրջ ճակատամարտ տանուու տվեց անգլո-խսպանական զորքերին, որոնք գործում էին Վելինգտոնի հրամանատարությամբ:

### XXXIV

Էջ 315 ուսողի, Մարենգո, Վագրամ—Լոդին և Մարենգոն — Հյուսիսային Խտալիայի այն վայրերն են, որտեղ 1800 թ. Նապոլեոնը մի շարք կորիներում շարդ տվեց ավստրիացիներին: Վագրամը — գյուղ է, Վիեննայի մոտ, որտեղ 1809 թ. վճռական ճակատամարտ տվեց ավստրիացիներին: Նապոլեոնի տարած այդ հաղթությունից մի շարք հետո պատերազմը վերջացավ:

### XXXV

Էջ 318. Մյուրատին գերի վեցներու լուրը:—Այդ լուրը սուս դուրս եկավ. գերի էր ընկել զեներալ Բոնամին, որը տեսնելով ուսւ գրենադերի սպինի իր կրծքի մոտ, գոչել էր սես թագավորն եմ» և կենդանի ներկայացվել էր Կուտուզովին:

### ԵՐԵՐԾՈՒՅՈՒՆ

#### III

Էջ 352. «Մարտագուայի պաշարումը»—իսկանական Սարագոսա ամրոցը 1808 թ. հունվարից իր հերոսական պաշտպանությամբ ընդդեմ ֆրանսացիների: Վերջիններս երկու ամիս պատրի էին ամրոցը և չէին կարողանում դա ավել: Ամրոցը գրավելու նոր փորձ եղավ զեկտեմբերին, որ տեսց նույնիք ամամակ, մինչեւ որ ամրոցը վերդապես անձնատուր եղավ. քաղաքն ստիպված էին մաս-մաս գրավել, համարյա գրոհելով յուրաքանչյաւ տունն առանձին:

### XIV

Էջ 394. Նորկենին — ֆրանսական գորգեր, որոնք այնպես են գործում: որ իրենցից ամրացնեան լուսավոր նկառներ են ներկայացնում:

### XIX

Էջ 414 Պոկաննեայա Գորա — բարձր մի կետ է Մուսկայից մի քանի վերսու հեռագորության վրա՝ Դորոզովիլովյան ուղեկալից այն կողմ, որտեղ վայրէշը է սկսվում ցեսի բաղաբեց, հիանալի տեսարան է բացվում:

### XXV

Էջ 444. Վերեշշագինի պահօքայան տեսարանին իրավայր մեծ նշանակություն է տալիս: Այդ տեսարանը զեղարվեստորեն խորը մշակված է և հոգեբանորեն հիանալի կերպով լրացնում է Ռաստոպի վնի ինութապիցից կա վկայությունը մի ժամանակակիցի, որ անուղղակի ժամանակությունը է ռանեցել այն աշխատանքի մեջ, որ Տոլստոյը կատարել է այդ միջազեսի վրա: 1868 թ. Ն. Պետերսոնը, որ ժամանակ էր Գերտկովի բաղաքարին գրաւդարանում, Տոլստոյին օգնել է տպագրվող վեպի սրբագրության մեջ ու Միջարանում, Տոլստոյին օգնել է տպագրվող վեպի սրբագրության մեջ ու Միջարանում, գրում է նա, — Տոլստոյն ինձ խնդրեց գտնել այն ամենց, ինչ աղքան գրվել է Վերեշշագինի ժաման: Հիշեալ եմ, ես հավաքեցի բազմաթիվ լրագրական և այլ պատմվածքներ այդ դեպքի ժամանին, այնպես որ նույնիկ կարեք եղագ առանձին սեղան հատկացնել այդ ամբողջ գրականության համար: Տոլստոյն ինչ-որ պատճառով երկար ժամանակ չըր գա իս, իսկ երբ եկաց և ես երան ցուց տվի Վերեշշագինի ժաման եղած ամբողջ գրականությունը, նա ինձ ասաց, թե այդ գրականությունը չի կարդալու, որովհետեւ զանուցում ինչ-որ ծերունու կ պատճեն, որն այդ դեպքին ականատես է եղել և ուն իրեն պատճեն է, թե ինչպես է այդ կատարվէ ս. Այդ ամենը, հավանորեն, այդպիս էլ եղել է, բայց Պետերսոնի վկայությունը ճիշտ գնահատելու համար պետք է նկատի ունենալ, որ նրա խոսքելից ժաման չի բնում ոչ այն, թե Տոլստոյն իրոք հիմնվել է խելագարի պատճաճի վրա, և ոչ այն, թե նա ոյնը չի արդացել Վերեշշագինի ժամանի: Խելոր ականատես ծերունու հիշողության մեջ անշուշտ մնացել են անպիսի մանրամասնություններ, որոնք և պետք էին Տոլստոյին, որ շաբաթ նա խնդրել էր գրականություն հավաքել իր համար: Իսկ որ նա լավ ծանոթ էր Վերեշշագինի ժաման եղած ամբողջ գործին, աւու երևամ է Խ գլխից:

### XXVII

Էջ 463. «Ենապի աբորդա՛մ»: Սովորին ուղամական տերմին է, որով կոչ է արվում ուղղակի զրահներ թշնամու նավը:

Ա ՆԻԿՈԼԱԵԽ ՏԱՂԹՈՅ  
ԴԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՐԱԴՐՈՅՑՈՒՆ

Խմբագիր՝ Ե. Ս. Ջ ա ր ե հ յ ա ն  
Սուպերշապիկը՝ Ռ. Ս. Ջ ո ւ լ հ ա կ յ ա ն  
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Ա. Ա. Գ ա ս պ ա ր յ ա  
Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Ս ա ր գ ո յ ա ն  
Վերսուվող սրբագրիչ՝ Հ. Ա. Կ ա ր ա պ ե տ յ ա ն

Лев Николаевич Толстой

ВОЙНА И МИР

(Роман)

ТОМ III

(На армянском языке)

Издательство «Айастан», ул. Теряна, 91.

Ереван—1976

Հանձնված է արտադրության 29/IV 1975 թ.:  
Սառագրված է տպագրության 14/I 1976 թ.:  
Թուղթ № 1,  $84 \times 108^{1/32}$ , տպագ. 16,25 մամ. = 27,3 պայմ.  
մամ., հրատ. 23,2 մամ.:  
Պատվեր 1148: Տպաքանակ 50.000: Գինը՝ 91 կ.։  
«Հայաստան» հրատարակություն, Երևան—9, Տեղյան 91:  
ՀՍՍՀ Մինիստրների Սովետի Հրատարակությունների, պոլի-  
գրաֆիայի և գրքի առևտությունների գործերի պետական կոմիտեի Հա-  
կոք Մեղապարտի անվան պոլիգրաֆիկոմբինատ, Երևան—9,  
Տեղյան 91:

Госкомитета Совета Министров Арм. ССР по делам издательств,  
полиграфии и книжной торговли. Ереван—9, ул. Теряна, 91.